339
(075.8)
Հ-84

Ա. Մ. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԷԿՈՆՈՄԻԿԱ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԵՐԵՎԱՆ 2013

339(075.8)
Հ-84

Ա. Մ. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԷԿՈՆՈՄԻԿԱ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուսումնական ձեռնարկ
Երրորդ լրամշակված հրատարակություն

ԵՐԵՎԱՆ 2013
«ՎԷԼԱՍ Պրինտ» ՍՊԸ

ՀՏԴ 339 (07)
ԳՄԴ 65.5 g 7
Հ 843

Դասագիրքը հրատարակության է երաշխավորել
Հայաստանի ազգային ագրարային համալսարանի
գիտական խորհրդի 13.06.2012 թ. թիվ 18 նիստը

Գրախոսողներ՝
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, տ. գ. դ., պրոֆեսոր ՅՈՒ. Մ. ՍՈՒՎԱՐՅԱՆ
Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Գ. Ե. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Ա. Հ. ԲԱՅԱԴՅԱՆ
Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Գ. Վ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

1070017
ՀԱԱՀ ԳՐԱԴԱՐԱՆ
БИБЛИОТЕКА НАУА

Գլխավոր խմբագիր՝ Ն. Ա. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ
Խորհրդատու՝ Հ. Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Սրբագրիչ՝ Ա. Մ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Հովակիմյան Ա. Մ.
Հ 843 Համաշխարհային էկոնոմիկա և միջազգային տնտեսական հարաբերություններ: Ուսումնական ձեռնարկ (դասագիրք ՀԱԱՀ ուսանողների համար), Երևան:
Հեղինակային հրատարակություն, 2013, 398 էջ

Ձեռնարկում լուսաբանվում են համաշխարհային տնտեսության տնտեսական գործընթացները, ուսումնասիրվում՝ միջպետական տնտեսական գործունեության բոլոր ձևերը, ոլորտները, համակողմանի բնութագրվում՝ միջազգային առևտրային, գնային, ծառայությունների, գիտատեխնիկական նվաճումների, գլոբալացման, միջազգային ֆինանսական հարաբերությունների և մյուս գործընթացները, ինչպես նաև ՀՀ տնտեսության բոլոր ոլորտները: Գիրքը նախատեսված է տնտեսագիտական մասնագիտություններ ուսումնասիրողների, ասպիրանտների, ձեռնարկատիրությամբ զբաղվողների և տարբեր ոլորտներում աշխատողների համար:

ՀՏԴ 339 (07)
ԳՄԴ 65.5 g 7

ISBN 978-9939-0-0475-4

© ՀՈՎԱԿԻՄՅԱՆ Ա. Մ., 2013

ԱՌԱՋԱԲԱՆ

Միջազգային տնտեսական հարաբերությունները (ՄՏՀ) աշխատանքի միջազգային բաժանման (ԱՄԲ) խորացման և տնտեսական կապերի միջազգայնացման արդյունք են: Տնտեսական հարաբերությունները վաղուց դուրս են եկել առանձին երկրների սահմաններից և դարձել են համաշխարհային տնտեսության զարգացման նախապայման: Ներկա փուլում համաշխարհային տնտեսության առաջընթացը կապված է ՄՏՀ-ի դինամիկ զարգացման հետ, ինչը հանգեցնում է արտադրության, միջազգային առևտրի և ֆինանսների, կապիտալի և տեխնոլոգիաների զարգացման: ՄՏՀ-ը փոխադարձ գործունեություն է առանձին պետությունների միջև:

Դասագիրքը բաղկացած է երկու բաժնից՝ «Համաշխարհային տնտեսություն» և «Միջազգային տնտեսական հարաբերություններ»: Առաջին բաժնում բնութագրվում է համաշխարհային տնտեսությունը, նշվում դրա զարգացման փուլերը, երկրների տիպայնության սկզբունքները, ներկայացվում հիմնական տեսությունները, ժամանակակից միտումները:

Երկրորդ բաժնում բնութագրվում են համաշխարհային տնտեսության ռեսուրսային ապահովումը, սուբյեկտները, առանձին երկրների և երկրների խմբերի դասակարգումը:

Պետք է տարբերակել «Համաշխարհային տնտեսություն» և «Միջազգային տնտեսություն» հասկացությունները: Վերջինս ընդգրկում է միջազգային տնտեսական հարաբերությունների տեսությունները:

Համաշխարհային տնտեսության զարգացման վրա ազդող կարևոր գործոն է ազգային արտադրությունների և մարդու կենսագործունեության հիմնական ձևերի միջազգայնացումը: Յուրաքանչյուր երկրի միջազգային ճանաչումը պայմանավորված է նրա տնտեսական ներուժով, համաշխարհային տնտեսության համակարգում ապրանքների արտադրությամբ, տեխնոլոգիաների, կապիտալի արտահանման քանակով, տնտեսության զարգացման դինամիկայով:

ՄՏՀ-ի և նրա խորացման արդյունքում ձևավորվում են նոր հարաբերություններ, որոնցով կարգավորվում են պետությունների տնտեսական կապերը: Արդի փուլում այդ հարաբերությունները դառնում են ավելի լայն, վճռական ազդեցություն են թողնում ոչ միայն առանձին երկրների, այլև համաշխարհային տնտեսության զարգացման վրա:

Շուկայական հարաբերությունների անցման փուլում ավելի է կարևորվում ՄՏՀ-ի դերը, հետևաբար նրա խորը և բազմակողմանի ուսումնասիրումը հետաքրքիր է և անհրաժեշտ: Դասընթացում ուսումնասիրվում են ՄՏՀ էությունը, զարգացման ուղղությունները, մակարդակները: Հնարավորություն է տրվում կանխատեսելու երկրների տնտեսության հեռանկարային զարգացման միտումները, հետևողականորեն ուսումնասիրելու ինչպես արտադրական, փոխանակման,

բախշման ու սպառման, այնպես էլ միջպետական առևտրային, վարկային, ֆինանսական ու մյուս հարաբերությունները, հասարակության միասնական տնտեսական համակարգն ամբողջապես:

ՄՏՀ-ը միջազգային բազմաճյուղ տնտեսական գործունեություն է: Այն իրենից ներկայացնում է տարբեր տնտեսական համակարգերի (գիտատեխնիկական, արտադրական, կոմերցիոն, արժութա-ֆինանսական, վարկա-դրամական, տեղեկատվական) համագործակցություն տարբեր երկրների ազգային տնտեսություններում՝ հիմնված ԱՄԲ-ի վրա: Տնտեսական համագործակցությունն իրականացվում է ոչ միայն տնտեսական, այլև շրջակա միջավայրի պահպանության, սոցիալական, հաշվողական, էլեկտրոնային տեխնիկայի, փոքր ու միջին ձեռնարկությունների բնագավառներում: ՄՏՀ-ը ստեղծվում է որոշակի պայմաններում տարբեր գործոնների ազդեցությամբ և գործում է որոշակի տնտեսական միջավայրերում:

Ներկայացված աշխատանքի ***նպատակը*** միջպետական տնտեսական գործունեության հիմնական ձևերի և առաջնահերթ հարցերի լուսաբանումն է: Ուսումնասիրման ***խնդիրը*** ՄՏՀ-ի տնտեսական հիմքերը, սկզբունքները և յուրահատկությունները հասկանալն է, առարկայի հետագա ավելի խորն ուսումնասիրության անհրաժեշտ հիմքեր ապահովելը համապատասխան հիմնախնդիրների տիրապետման և գործնականում հաջող կիրառման համար:

ՄՏՀ-ի ներկա ձևերի բնութագրման հիմնական ***բովանդակությունը*** կազմում են.

- ապրանքների և ծառայությունների միջազգային առևտուրը,
- արտաքին առևտրային քաղաքականությունը,
- միջազգային առևտրի կարգավորումն Առևտրի համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) կանոններով,
- կապիտալի և աշխատուժի միջազգային շարժը,
- արժութա-վարկային համակարգի ինտելեկտուալ փոխանակումները,
- տնտեսական ինտեգրացիան,
- միջազգային տնտեսական կազմակերպությունները:

Տարբեր հիմնախնդիրների պարզաբանումների ընթացքում օգտագործվել են տնտեսագիտական գրականություն, առանձին հեղինակների մենագրություններ, պետական օրենքներ, կանոնակարգեր, օրենսդրական ակտեր, վիճակագրական տեղեկություններ: Գրքում հստակ և մանրամասն դիտարկվում են ՀՏ-ը և ՄՏՀ-ը՝ տեսականորեն և գործնականում: Ուսումնական ձեռնարկը 2002 և 2007 թթ. հրատարակված «Միջազգային տնտեսական հարաբերություններ» աշխատության վերահրատարակումն է: Ձեռնարկի նոր (երրորդ) հրատարակությունում կատարվել են բազմաթիվ լրացումներ, ճշտումներ, ավելացվել են առանձին գլուխներ, թարմացվել՝ փաստաթղթային նյութերը և վիճակագրական տեղեկությունները, զարգացած, զարգացող, ԵՄ, ԱՊՀ և մյուս երկրների տնտեսությունների մանրամասն բնութագրումները: Ներկայացվում են ՄՏՀ ժամանակակից բոլոր ձևերը, տնտեսական հարաբերությունների իրականացման ուղիները՝ հաշվի առնելով երկրների տնտեսական զարգացման մակարդակները և նրանց առանձնահատկությունները համաշխարհային տնտեսության մեջ:

Ներկայում աշխարհում ավելի ուժեղանում են գլոբալացումը և ազգային տնտեսությունների, պետությունների, տնտեսական սուբյեկտների փոխադարձ գործունեությունը, իսկ համաշխարհային տնտեսությունը դառնում է միասնական տնտեսական ամբողջականություն և ընդունում բացարձակ նոր ձև: Աճում են ապրանքների, ծառայությունների, կապիտալի, մտավոր ունակությունների, աշխատուժի միջազգային շարժի ծավալները: Միջազգային կյանքում տեղի են ունենում մի շարք կարևոր իրադարձություններ, ահաբեկչություններ, ռազմական կոնֆլիկտներ, բնական աղետներ, տնտեսական-ֆինանսական ճգնաժամեր, որոնք լուրջ տնտեսական և քաղաքական ազդեցություն են ունենում ՄՏՀ-ի վրա:

ԲԱԺԻՆ I
ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԷԿՈՆՈՄԻԿԱ

ԳԼՈՒԽ 1
ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ, ՉԵՎԱՎՈՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1.1 Դասընթացի ուսումնասիրման առարկան և խնդիրները

Համաշխարհային տնտեսությունը (ՀՏ) աշխարհի բոլոր երկրների ազգային տնտեսությունների պատմականորեն ձևավորված ամբողջությունն է: Աշխարհի բոլոր երկրները, որոնք միմյանց կապված են համաշխարհային տնտեսական հարաբերություններով, ենթարկվում են միջազգային տնտեսական օրենքներին, ինչի արդյունքում ձևավորվում է համաշխարհային տնտեսական համակարգը: Համաշխարհային տնտեսությունն Աշխատանքի միջազգային բաժանման (ԱՄԲ) և տարբեր երկրների առևտրատնտեսական, ֆինանսական, գիտատեխնիկական փոխհարաբերությունների ամբողջությունն է՝ բաղկացած ներքին և արտաքին կապեր ունեցող օղակներից և բազմաթիվ ոլորտներից, որոնք են.

1. *Նյութական արտադրության ոլորտ* (արդյունաբերություն, շինարարություն, գյուղատնտեսություն, բեռնատար տրանսպորտ, հասարակական սնունդ, մթերումներ):
2. *Ոչ նյութական արտադրություն*, որը պայմաններ է ստեղծում արտադրության, առողջության, կրթության, գիտության, հոգևոր պահանջմունքների բավարարման համար:

Համաշխարհային տնտեսությունը բաժանվում է երեք հատվածների՝ *արդյունաբերության, գյուղատնտեսության* և *սպասարկող* (տրանսպորտ, ծառայություններ ու այն բոլոր ճյուղերն ու ենթաճյուղերը, որոնք պատկանում են ոչ նյութական արտադրությանը):

Արդյունաբերության հատվածի մեջ մտնում են արդյունաբերության բոլոր ճյուղերը, *գյուղատնտեսության հատվածի* մեջ՝ ամբողջ գյուղատնտեսությունը, գյուղմթերքների մշակման ու վերամշակման ճյուղերը:

ՀՏ պատմական, քաղաքական, տնտեսական և աշխարհագրական գործունեությունը գիտնականները բաժանել են երեք կատեգորիայի՝ *մինչ ինդուստրիալ* (ագրարային), *ինդուստրիալ* և *հետինդուստրիալ*: Այսպիսով, ՀՏ-ն ազգային տնտեսությունների ամբողջություն է, որում յուրաքանչյուրը զարգանում է իրեն հատուկ ծրագրերով:

Համակարգը հիմնվում է շուկայական տնտեսության վրա՝ կիրառելով միջազգային հաշվառում, ֆինանսներ, հսկողություն: Արտադրողական ուժերի մակարդակը, ֆինանսական կապիտալի աճը, հաղորդակցության դերը և ազդեցությունը պայմանավորում են շուկայական

էկոնոմիկայի տեղը և դերը ՀՏ մեջ: Ելնելով դրանից՝ ՀՏ-ը կարելի է դիտել որպես ամբողջական ազգային տնտեսության, դրա մասերի (տարածքային, ճյուղային, սեկտորային) փոխգործունեություն և դրանց փոփոխությունների վրա ազդող գործոնների համագործակցում: Այդ գործընթացը պայմանավորում են հետևյալ հիմնական գործոնները.

- *արտադրատեխնիկական*՝ արտադրական մասշտաբների կտրուկ աճ, տրանսպորտի և կապի միջոցների որակական նոր մակարդակ,
- *տնտեսական*՝ կապիտալի համակենտրոնացում և կենտրոնացում, ֆերմերների գործունեություն, որը դուրս է գալիս ազգային սահմաններից,
- *տեղեկատվական*՝ ռադիկալ, տնտեսական, ֆինանսական, տեղեկատվական փոփոխություններ, որոնք լուծում են արտադրական, ԳՏ, կոմերցիոն խնդիրներ,
- *կազմակերպական*՝ կառավարման՝ կապված նոր տեղեկատվական տեխնոլոգիաների, ձևերի, գործոնային հաղորդակցման հետ,
- *գիտատեխնոքաղաքական,* որն օգտագործում է առաջավոր ԳՏ, տեխնոլոգիական միջոցները տնտեսական նպատակահարմարության համար,
- *սոցիալական,* որի նպատակն է բարձրացնել հասարակության ակտիվությունը՝ տարածքային, հասարակական, հոգևոր, հոգեբանական հարաբերությունները,
- *քաղաքական*, որի նպատակն է հեշտացնել ապրանքային փոխադրումները, կապիտալի տեղաշարժերը, թեթևացնել պետական սահմանների խստությունը, քաղաքացիների, գործարարների միջպետական կապերը:

Նշված գործոններով համաշխարհային տնտեսության էական բնութագիրը կազմում են.

- *արտադրության միջազգային տեղաշարժը* կապիտալի, տեխնոլոգիաների, աշխատանքային, տեղեկատվության, հաղորդակցության և տրանսպորտային միջոցների ոլորտներում,
- ապրանքների, ծառայությունների առևտրի պետական և միջազգային համակարգի ձևավորումը, այն է՝ երկրների միջև արտադրության գործոնների տեղաշարժի իրականացումը:

Համաշխարհային տնտեսության *տեսության առարկա* համարվում են.

- միջազգային մասշտաբով տնտեսական կյանքի օրինաչափ զարգացումը,
- ապրանքների ամբողջական առաջարկի և պահանջարկի տեսական ձևավորումը,
- միջազգային ֆինանսական շուկայի և ֆինանսական մեխանիզմի զարգացումը:

Համաշխարհային տնտեսության ***սուբյեկտներն*** են տնտեսվարող և տարածքային ինտեգրացիոն միավորումները, միջազգային տնտեսական կազմակերպությունները: Հիմնական սուբյեկտը պետությունն է, որպես հասարակության, պետության շահերի պաշտպան:

1.2 Համաշխարհային տնտեսության ձևավորումը և փուլերը

Համաշխարհային տնտեսությունը (ՀՏ) պատմական կատեգորիա է, հետևաբար նրա ձևավորումը պատմական երկարատև գործընթացի արդյունք է: Դրա ձևավորման համար ***նախադրյալներ*** ստեղծվել են դեռևս ֆեոդալական ժամանակներում, կապիտալի նախասկզբնական կուտակման ժամանակաշրջանում: Սակայն հիմնականում զարգացել է խոշոր ինդուստրիայի պայմաններում: ՀՏ-ն ուսումնասիրվում է որպես մեկ միասնական օբյեկտ, որպես տնտեսական առանձին ոլորտներ և ճյուղեր, խոշոր տարածաշրջաններ և առանձին երկրներ: Այն զարգացել է մի քանի փուլերով.

Առաջին. 20-րդ դարի 20-40-ական թթ. (նոր տնտեսության ձևավորում):

Երկրորդ. 40-90-ական թթ., որոնք բնորոշվում են կապիտալի տեղաշարժերով, երբ զարգանում են աշխատանքի միջազգային բաժանումը (ԱՄԲ), անդրազգային ընկերությունները: Այս փուլին բնորոշ են նաև 1950-1970, 1970-1990 թթ. և հետագա ժամանակաշրջանի ենթափուլերը:

Ժամանակակից ՀՏ-ին բնորոշ են գիտատեխնիկական առաջընթացը (ԳՏԱ), երկրների սոցիալական կառուցվածքների փոփոխությունը, արդյունաբերության և տնտեսական մյուս ոլորտների մակարդակը, միջազգային տնտեսական հարաբերությունների մասշտաբները և ձևերի բազմազանությունը: Որքան զարգանում է ՀՏ-ը, այնքան խորանում և զարգանում են միջազգային տնտեսական հարաբերությունները: ՀՏ ձևավորման համար պատմական նախադրյալ են դարձել 15-16-րդ դդ. աշխարհագրական հայտնագործությունները, 19-րդ դարի երկրորդ կեսին և 20-րդ դարի սկզբին կատարված արդյունաբերական հեղաշրջումը, երբ զարգացած երկրների կապիտալի կենտրոնացումն ու համակենտրոնացումը հասել են բարձր մակարդակի: 20-րդ դարի վերջին ՀՏ-ը բնութագրվեց որպես արտադրողական ուժերի ձևավորման, աշխարհագրական տարածքների փոփոխման, նոր պետությունների ստեղծման ժամանակաշրջան: ՀՏ ձևավորումը և զարգացումը պայմանավորված են Աշխատանքի միջազգային բաժանումով (ԱԱԲ) և արդյունաբերության զարգացման օրինաչափություններով, ՀՏ մեջ ավելի շատ երկրների ներգրավումով, ԱՏՀ ընդլայնումով, երբ առաջանում են նոր արդյունաբերական ճյուղեր, որոնք նպաստում են ոչ միայն ներքին, այլև արտաքին շուկայի ձևավորմանն ու զարգացմանը և միմյանց կապվում են ԳՏ, առևտրային, ֆինանսական հարաբերություններով, տրանսպորտի, կապի, հաղորդակցության միջոցների համակարգով: Միջազգային առևտրի զարգացումն էլ իր հերթին նպաստում է ՀՏ զարգացմանը:

Երկրների տնտեսական անհամաչափ զարգացումը, արտադրողական ուժերի զարգացման առանձնահատկությունները, զբաղվածության հիմնահարցերի սրումը, կապիտալի, աշխատուժի միջազգային տեղաշարժերը ստեղծեցին ապրանքների, ծառայությունների, կապիտալի, աշխատուժի շուկաներ: Համաշխարհային շուկայի զարգացմանը զուգահեռ առաջացան ՄՏՀ-ի ձևերը՝ արտաքին առևտուրը, կապիտալի արտահանումը, միջազգային արժութային հարաբերությունները, աշխատուժի միջազգային միգրացիան, միջազգային տնտեսական ինտեգրացիան և այլն:

Տնտեսական կյանքի նման փոխկապվածությունը ներառում է.

1. Ժամանակակից գլոբալ հիմնախնդիրները (բնապահպանական, վառելիքաէներգետիկ, հումքային, պարենային):

2. Ապրանքների և ծառայությունների միջազգային առևտրի զարգացումը:

3. Աշխատուժի համաշխարհային շուկայի ձևավորումը:

4. ԱՄԲ-ի, արտադրության միջազգային մասնագիտացման և կոոպերացման գործընթացների խորացումը:

5. Տրանսպորտի և կապի ենթակառուցվածքների զարգացումը:

6. Համաշխարհային միասնական տեղեկատվական տեխնիկայի տարածումն աշխարհի բոլոր երկրներում և դրանց զարգացումը:

7. Ամբողջական ֆինանսական համակարգի ստեղծումը, որն իր հետ բերում է արժութավարկային ոլորտի ինտեգրացման գործընթացների կատարելագործում:

Տնտեսական կյանքի ընդլայնումը վերափոխում է համաշխարհային տնտեսության ազգային, պետական, անդրազգային կառուցվածքը, բազմաշերտ ու բազմաքանակ տնտեսությունները, որոնց շրջանակներում օբյեկտիվ տնտեսական օրինաչափությունների հիման վրա իրականացվում է տարբեր տնտեսական սուբյեկտների ինտերնացիոնալացումը: Այսպիսով, ՀՏ-ը բնորոշվում է հետևյալ հիմնական ***գծերով.***

1. Համաշխարհային տնտեսությունը բազմաշերտ է և բազմաքանակ: Նրա շրջանակներում փոխհամագործակցում են տարբեր մակարդակների տնտեսական սուբյեկտներ, փոքր բիզնեսից մինչև գլոբալ մասշտաբի անդրազգային կորպորացիաներ:

2. Բազմաթիվ սուբյեկտներ փոխազդում են միմյանց վրա՝ ելնելով սեփական տնտեսական շահերից:

Համաշխարհային տնտեսության ուսումնասիրության ***խնդիրն*** է.

- բացահայտել երկրների պատմական զարգացման ընթացքը,

• կատարել համեմատական պարզաբանումներ և դիտարկել դրանց ազդեցությունն առանձին երկրների, միավորումների, տարածքների զարգացման վրա,

• բացահայտել առանձին երկրների դերը, ճանաչումը մյուս երկրների կողմից և ազդեցությունը տնտեսությունների վրա:

1.3 Համաշխարհային տնտեսության ներուժը

Համաշխարհային տնտեսության հարստությունը պայմանավորված է բնական ռեսուրսներով, որոնք են.

1. Բնառեսուրսները, որոնք ընդգրկում են այն ամենը, ինչը մարդն ուղղակի կամ իր ձեռքով վերափոխված օգտագործում է իր գոյության պահպանման, հասարակական արտադրողական ուժերի գործունեության բոլոր ձևերի զարգացման համար: Դրանք բաժանվում են ըստ ***տարածքային ռեսուրսների, ռելիեֆային*** և ***կլիմայական պայմանների, օգտակար հանածոների, ագրոկլիմայական ռեսուրսների*** (արևի, քամու էներգիա, մթնոլորտային տեղումներ), ***ջրային պաշարների*** (գետեր, լճեր, ստորերկրյա ջրեր), ***հողային, բուսական, կենդանական, ռեկրեացիոն*** (հանգստի), ***զբոսաշրջության գոտիների, պատմաճարտարապետական հուշարձանների*** և այլն: Բնական ռեսուրսները լինում են ***հանքային*** և ***կենսոլորտի*** (կենսաբանական), ***սպառվող*** (չվերականգնվող) և ***անսպառ*** (վերականգնվող՝ օդ, ջուր, տիեզերք): Տնտեսական ոլորտում հանածոները լինում են ***հանքային, ոչ հանքային, վառելիքային, մետաղային, վառելիքաէներգետիկ, քիմիական, շինարարական:***

2. ***Հողային ռեսուրսները*** համաշխարհային հողային ֆոնդի այն մասն են, որը հարմար է տնտեսության մեջ օգտագործման համար (արդյունաբերություն, հաղորդակցության ուղիներ, գյուղատնտեսություն, շինարարություն): Քաղաքային բնակավայրերի, արդյունաբերության, ճանապարհաշինության կառուցումները կրճատում են գյուղատնտեսության հողատարածքները:

3. ***Ջրային ռեսուրսներն*** անսպառ են: Տնտեսության զարգացման համար վերջին երեք տասնամյակում ջրամբարների թիվն ավելացել է 4-5 անգամ: Ներկայում կարևոր խնդիր է քաղցրահամ ջրերի խնայողությունը: Համաշխարհային օվկիանոսի ռեսուրսներն են ջրային, հանքա-հումքային, էներգետիկ, կենսաբանական, ֆոսֆորների նստվածքները, ջրում լուծված հանքային աղերը, ծովային բույսերը, կենդանիները:

4. ***Կենսաբանական ռեսուրսները*** կազմում են կենդանիները, բուսական զանգվածը, անտառային տարածքները, որոնք նպաստում են տնտեսական ճյուղերի զարգացմանը:

5. ***Կլիմայական ռեսուրսները*** երկրի վրա կյանքի գոյության հիմքն են: Դրանք ագրոկլիմայական ռեսուրսներն են (ջերմություն, խոնավություն, լույս):

1.4 Համաշխարհային տնտեսության մեխանիզմները և բաղադրիչ մասերը

Համաշխարհային տնտեսությունը պատկանում է բոլոր երկրներին և ապահովում է մասնակից երկրների տնտեսական շահերը: Ժամանակակից ՀՏ-ն իրենից ներկայացնում է բոլոր պետությունների տնտեսական հարաբերությունները, որոնք ուսումնասիրվում են տարբեր ուղղություններով և տնտեսական սուբյեկտների օրինաչափություններով: Այն ունի ԱՏՀ-ի պետական և միջպետական կարգավորումների, կառավարումների կոնկրետ ձևեր:

20-րդ դարի կեսերին ՀՏ-ի մեջ առաջացավ տնտեսական հարաբերությունների ամրապնդման գաղափար, առանց որի հնարավոր չէր կոորդինացնել առանձին երկրների տնտեսական մեխանիզմները և կառավարումը: Միկրոմակարդակով կազմավորվեցին վերարտադրության գործընթացի ընկերություններ, մասնաճյուղեր: Աստիճանաբար ձևավորվեցին անդրազգային ընկերություններ (ԱԱԿ): Կարճ ժամանակում ստեղծվեց միջպետական տնտեսական և ֆինանսական կազմակերպությունների ամբողջական համակարգ: Ստեղծվեցին նաև Միջազգային արժութային հիմնադրամը (ՄԱՀ), Համաշխարհային բանկը (ՀԲ), Առևտրի համաշխարհային կազմակերպությունը (ԱՀԿ), ՄԱԿ-ը, ԵՄ-ը, աշխարհագրական բոլոր տարածքներում բազմաթիվ միավորումներ, ընկերություններ, բանկեր:

Անդրազգային կազմակերպությունների գործընթացն արդյունաբերական ձեռնարկությունների, ֆինանսական և ծառայությունների ոլորտի միջազգային գործունեության ընդլայնումն է: Անդրազգային տնտեսությանը բնորոշ են կապիտալի միահյուսումը մյուս երկրների կապիտալների հետ, համատեղ ընկերությունների ստեղծումը, օտարերկրյա ֆինանսական միջոցների ներգրավումը:

1950-ական թթ. գաղութային և 90-ական թթ. սոցիալիստական համակարգերի փլուզումը նախադրյալներ ստեղծեց համաշխարհային տնտեսության տնտեսական մակարդակի զարգացման համար: Գաղութային և սոցիալիստական երկրներն ակտիվ մասնակցեցին ոչ միայն համաշխարհային շուկայի գործընթացներին, այլև միջպետական տնտեսական բոլոր հարաբերություններին և կոորդինացմանը: Այդ պայմաններում համաշխարհային շուկան մտավ նոր, ավելի բարձր՝ ***միջազգային փուլ***:

Համաշխարհային տնտեսության ***հատկանիշներն են.***

- Նյութական արտադրության ոլորտը՝ նյութական արժեքներ արտադրող ճյուղերով (արդյունաբերություն, գյուղատնտեսություն, շինարարություն, բեռնատար և մարդատար տրանսպորտ, սննդարդյունաբերություն, արտադրական այլ ճյուղեր),
- ոչ նյութական ճյուղերը (ծառայություններ, կրթություն, առողջապահություն, հոգևոր պահանջների բավարարում, զբոսաշրջություն, արվեստի, մշակույթի, գիտատեխնիկական և այլ ճյուղեր:

Այլ ոլորտներում իրականացվող ***գործընթացներն*** են.

- ապրանքների միջազգային իրացումը, փոխանակումը միջազգային կանոններով, համագործակցության ձևերով,
- միջազգային ոլորտների զարգացումն արտադրական գործոնների՝ կապիտալի արտահանման, տեխնոլոգիաների, աշխատուժի փոխանակման, աջակցման միջոցով,
- պետությունների տնտեսական քաղաքականության կանոնների, օրենքների կիրառումը՝ ելնելով բաց տնտեսության սկզբունքներից:

Համաշխարհային տնտեսության պայմանական կառուցվածքը կարելի է ներկայացնել.

- համաշխարհային շուկայի և ՀՏ կանոններով, ԱՄԲ-ի և արտադրության մյուս գործոններով,
- տնտեսական քաղաքականության միջոցով, որով կարգավորվում է տնտեսական մեխանիզմը (արտահանում-ներմուծում, կապիտալի, աշխատուժի, տեխնոլոգիաների շարժ, պետության ներսում արժութային և ֆինանսական կարգավորում, տարիֆներ, գներ և այլն):

ԳԼՈՒԽ 2
ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

2.1 Համաշխարհային տնտեսության կառուցվածքը

Համաշխարհային տնտեսությունը պատմականորեն ձևավորված ազգային տնտեսությունների համակարգ է: Երկրները կապված են առևտրական, ֆինանսական, ԳՏ համագործակցության, տրանսպորտի, կապի, աշխատուժի միգրացիայի, տնտեսական, քաղաքական և այլ հարաբերություններով: ՀՏ ձևավորման համար նախադրյալներ ստեղծվել են դեռևս կապիտալի կուտակման նախասկզբնական շրջանում, սակայն այն հիմնականում զարգացել է 19-րդ դարի երկրորդ կեսին խոշոր մեքենայական արդյունաբերության ժամանակ՝ հասնելով մինչև 20-րդ դարի կեսերը:

ՀՏ-ը քաղաքական, տնտեսական կատեգորիա է, որը կապված է աշխատանքի միջազգային բաժանման, երկրների տնտեսական կյանքի միջազգայնացման և միջազգային տնտեսական ինտեգրացիայի հետ, որոնք կանխատեսում են միջազգային քաղաքական և տնտեսական հարաբերությունների նոր մակարդակ: ՀՏ-ը միատարր չէ: Այն ընդգրկում է զարգացման տարբեր մակարդակ և կառուցվածք ունեցող երկրներ՝ ազգային տնտեսություններով, դրանց բազմաթիվ ճյուղերով և ենթաճյուղերով: ՀՏ-ը բնութագրվում է տարածքային կառուցվածքով, որի հիմքը համաշխարհային շուկան է, որը և ապահովում է բոլոր երկրների միջև աշխատանքի արդյունքի փոխանակումը:

Սոցիալիստական համակարգի ստեղծումով և գաղութատիրության վերացումով փոխվեց ՀՏ կառուցվածքը: Առաջացան համաշխարհային կապիտալիստական և համաշխարհային սոցիալիստական համակարգեր, որոնք դարձան հակադիր կողմեր: Զարգացող երկրները համարվում էին այս համակարգերի բաղկացուցիչ մասեր՝ կախված սոցիալական կողմնորոշումից: Աշխարհի պետությունները բաժանվում են երեք հիմնական խմբի:

1. Զարգացած շուկայական տնտեսությամբ երկրներ: Զարգացած երկրների խմբում ընդգրկված են շուկայական տնտեսության և սոցիալ-տնտեսական զարգացման բարձր մակարդակ ունեցող երկրները: Այս խումբն ընդգրկում է 30, այդ թվում՝ զարգացած արդյունաբերական 8 խոշոր (ԱՄՆ, Կանադա, Ֆրանսիա, Գերմանիա, Մեծ Բրիտանիա, Իտալիա, Ճապոնիա, Ռուսաստան) երկրներ[1], որոնց բնակ-

[1] Չինաստանը զարգացած խոշոր արդյունաբերական երկրների իններորդ անդամը չէ: Այն աշխարհի չորրորդ խոշոր տերությունն է: 5 անգամ ավելի հզոր է, քան Կանադան, Իտալիան, Ռուսաստանը: 2011 թ. Չինաստանի ՀՆԱ-ն աճել է 12.0 տոկոսով: Պեկինը մի քանի անգամ հայտարարել է, որ Չինաստանը շահագրգիռ չէ մեծ տերություններին

չության թիվը կազմում է աշխարհի բնակչության 18-20, իսկ թողարկած արտադրանքը՝ համաշխարհային արտադրության ընդհանուր ծավալի 60 տոկոսը: Զարգացման միջին մակարդակ ունեցող երկրները տնտեսության զարգացման մակարդակով մոտենում են Արևմտյան Եվրոպայի, Ասիայի և Արևմտյան կիսագնդի շատ երկրների:

2. Անցումային երկրներ: Անցումային տնտեսության երկրների խմբում ընդգրկվել են այն պետությունները, որոնք իրականացնում են անցումը վարչական միտումից շուկայական տնտեսության: Սրանք հիմնականում նախկին սոցիալիստական համակարգի երկրներն են՝ Ալբանիան, Բուլղարիան, Հունգարիան, Լեհաստանը, Ռումինիան, Չեխիան, Սլովակիան, Հարավսլավիայի բաժանված երկրները, ինչպես նաև Սովետական նախկին հանրապետությունները՝ Ռուսաստանը, Ուկրաինան, Բելառուսը, Լատվիան, Լիտվան, Էստոնիան, Ղազախստանը, Ուզբեկստանը, Հայաստանը, Վրաստանը, Ադրբեջանը, Մոլդովան, Թուրքմենիան, Ղրղզստանը, Տաջիկստանը:

3. Զարգացող ավելի քան 130 երկիր: Այս խմբում ընդգրկված են սոցիալ-տնտեսական ցածր մակարդակ ունեցող երկրները: Այստեղ ապրում է մոտ 2 մլրդ մարդ: Այս երկրները համաշխարհային արտադրության մեջ ունեն 15 տոկոսից պակաս բաժին: Նրանց մեջ համեմատաբար առաջատար դիրքեր են գրավում Հոնկոնգը, Սինգապուրը, Թայվանը, Հարավային Կորեան, Արգենտինան, Բրազիլիան, Մեքսիկան և այլ երկրներ: Զարգացող երկրների մյուս խումբը կազմում են Հնդկաստանը, Ինդոնեզիան, Մալայզիան, Պերուն, Վենեսուելան, Կոլումբիան, Չիլին և այլն: Իրենց տեղն ունեն Արևելքի նավթարդյունահանող երկրները՝ Ալժիրը, Միացյալ Արաբական էմիրությունները, Քուվեյթը, Լիբանանը, Իրաքը: Տնտեսական այլ բնութագիր ունի Աֆրիկայի, Կարիբյան ավազանի թույլ զարգացած երկրների խումբը, որի կազմում են Զաիրը, Հայիթին, Տանզանիան, Սալվադորը և այլն:

4. Նոր ինդուստրիալ երկրներ: Սրանք այն երկրներն են, որոնք վերջին 20 տարում արձանագրել են տնտեսության վերելք՝ կրճատելով իրենց և զարգացած երկրների տնտեսությունների տարբերությունը:

5. Թույլ զարգացած (աղքատ) երկրներ: Սրանք այն երկրներն են, որոնք ունեն մեծ պարտքեր: Այս խմբում հիմնականում ընդգրկված են 31 երկիր, որոնցից 26-ն Աֆրիկայում են, 5-ը՝ Լատինական Ամերիկայում (տե՛ս աղ. 2.1):

անդամակցել: «Միանալով այդ խմբին՝ Չինաստանը կկորցնի ինքնուրույնությունը: Մեզ կարող են ստիպել վերարժևորել մեր արժույթը կամ գնալ ժողովրդավարացման»,- ասել է Չինաստանի ղեկավարը:

Աղյուսակ 2.1

Համաշխարհային տնտեսության կառուցվածքն
ըստ պետությունների տնտեսական զարգացման մակարդակի

Երկրների խմբեր	Երկրների ենթախմբեր	Երկրներ
1. Բարձր զարգացած երկրներ	1. Մեծ ութնյակի երկրներ	ԱՄՆ, Ճապոնիա, Ֆրանսիա, Կանադա, Մեծ Բրիտանիա, Իտալիա, ԳԴՀ, Ռուսաստան[2]
	2. Արևմտյան Եվրոպայի զարգացած երկրներ	Ավստրիա, Բելգիա, Իռլանդիա, Շվեդիա, Իսպանիա, Շվեյցարիա, Հունաստան, Նիդեռլանդներ, Պորտուգալիա, Նորվեգիա, Դանիա, Ֆինլանդիա և այլն
	3. Նոր արդյունաբերական երկրներ	Կորեայի Հանրապետություն, Սինգապուր, Թայվան և այլն
2. Զարգացման միջին մակարդակի երկրներ	1. Համեմատաբար զարգացած երկրներ	Ավստրալիա, Իսրայել, Չիլի, ՀԱՀ, Նոր Զելանդիա, Թուրքիա, Արգենտինա, Կիպրոս, Իրան, Բրազիլիա, Մեքսիկա, Վենեսուելա, Ուրուգվայ
	2. Անցումային տնտեսություն ունեցող երկրներ	ԱՊՀ անդամ երկրներ, ԿԺԴՀ, Լատվիա, Բուլղարիա, Էստոնիա, Չինաստան, Հունգարիա, Ռումինիա, Սլովակիա, Չեխիա,
3. Նոր զարգացող կամ թույլ զարգացած երկրներ	1. Նավթ արդյունահանող և արտահանող երկրներ՝ բնակչության մեկ շնչին բաժին ընկնող եկամտի բարձր ցուցանիշներով	Սաուդյան Արաբիա, Քուվեյթ, ԱՄԷ, Կատար, Իրաք, Օման, Բրունեյ, Լիբանան (16 երկիր)
	2. Տարածքով փոքր, բայց բնակչության մեկ շնչին բաժին ընկնող եկամտի բարձր ցուցանիշներով երկրներ	Բահամյան, Բերմուդյան կղզիներ, Բարբադոս (13 երկիր)
	3. Զարգացման միջին և ցածր մակարդակի երկրների միջև միջանկյալ դիրք գրավող երկրներ	Հնդկաստան, Պակիստան, Շրի-Լանկա, Ինդոնեզիա, Մալայզիա, Սիրիա, Ալժիր, Թունիս, Եգիպտոս, Յամայկա, Էկվադոր, Գվատեմալա, Ֆիլիպիններ, Թաիլանդ, Մարոկկո (65 երկիր)
	4. Առավել թույլ զարգացած երկրներ	Բանգլադեշ, Աֆղանստան, Եմեն, Սոմալի, Տանզանիա (46 երկիր)

---

[2] Ռուսաստանն իր զարգացման մակարդակով դեռևս զիջում է մյուս յոթ երկրներին և համարվում է «անցումային տնտեսություն» ունեցող երկիր:

Ըստ զարգացման աստիճանի՝ զարգացող երկրների խմբերը տարբերվում են.

- զարգացած երկրների համեմատ արտադրողական ուժերի ցածր մակարդակով և համաշխարհային շուկայից կախվածությամբ,
- ներմուծման համեմատ քիչ արտահանմամբ,
- արտահանման կառուցվածքում կիսաֆաբրիկատների, հումքային ապրանքների գերակշռումով:

Մինչև 1991 թ. համաշխարհային սոցիալիստական համակարգի մեջ մտնող երկրների բնակչությունը կազմում էր աշխարհի բնակչության 10 տոկոսը: Այս երկրները նույնպես ունեին սոցիալ-տնտեսական զարգացման տարբեր մակարդակներ: Առավել զարգացած էին ԽՍՀՄ-ը, Հարավսլավիան և այլն: Թույլ էին զարգացած Մոնղոլիան, Կուբան, Վիետնամը: Միջանկյալ տեղում էր Չինաստանը: Համակարգի բաժանումից հետո եվրոպական մի քանի երկրներ ինտեգրացման ակտիվ կուրս վերցրին: Կուբան պահպանեց տնտեսավարման սոցիալիստական կուրսը, ԳԴՀ-ն միացավ ԳՖՀ-ին:

ՀՏ կառուցվածքում այս փոփոխությունները տնտեսության և քաղաքականության ոլորտում առաջ բերեցին ուժերի վերադասավորում: Տնտեսական գործընթացների կարգավորման գործում ուժեղացավ ՄԱՀ-ի դերը: Տեղաշարժեր նկատվեցին նաև արտադրողական ուժերի զարգացման բնագավառում, որի որակական փոփոխությունները հիմնականում տեղի են ունենում ԳՏԱ-ի ազդեցությամբ: Առավել քիչ զարգացած են մոտ 50 պետություններ:

2.2 Միացյալ ազգերի կազմակերպություն (ՄԱԿ)

1942 թ. հունվարի 1-ին «Միավորված ազգերի հռչակագրում» 26 պետությունների ներկայացուցիչներ պարտավորվեցին և համատեղ պայքար մղեցին ֆաշիստական դաշինքի երկրների դեմ: 1945 թ. 51 պետությունների ներկայացուցիչներ հավաքվեցին Սան Ֆրանցիսկոյում՝ ՄԱԿ-ի համաժողովում մշակելու ՄԱԿ-ի Կանոնադրությունը, որը 51 պետությունների ներկայացուցիչների կողմից ստորագրվեց 1945 թ. հուլիսի 26-ին: ՄԱԿ-ը պաշտոնապես հանդես եկավ 1945 թ. հոկտեմբերի 24-ին, երբ վավերացվեց Կանոնադրությունը: 2012 թ. ապրիլի 1-ի դրությամբ ՄԱԿ-ի անդամ են 193 երկիր (ՀՀ-ն ՄԱԿ-ին անդամագրվել է 1992 թ. մարտի 2-ին):

ՄԱԿ-ն ունի չորս նպատակ, որոնք են.

1. Պահպանել աշխարհի խաղաղությունը:
2. Ստեղծել բարեկամական հարաբերություններ ազգերի միջև:
3. Օգնել բարելավել մարդկանց կենսապայմանները, հաղթահարել սովը, հիվանդությունները:
4. Օգնել ազգերին հասնել այս նպատակներին:

ՄԱԿ-ը գործունեություն ծավալում է 6 հիմնական մարմինների միջոցով: Դրանք են.

1. Գլխավոր ասամբլեան:
2. Անվտանգության խորհուրդը:
3. Տնտեսական և սոցիալական խորհուրդը:
4. Հոգաբարձուների (խնամակալության) խորհուրդը:
5. Միջազգային դատարանը:
6. Քարտուղարությունը:

ՄԱԿ-ը ներառում է նաև 15 գործակալություններ: Բոլոր այս մարմինները գտնվում են Նյու Յորքի Կենտրոնական գրասենյակում, բացառությամբ Միջազգային դատարանի, որը գտնվում է Հաագայում (Նիդեռլանդներ): ՄԱԿ-ին կից կան 14 այլ մասնագիտացած կազմակերպություններ:

ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարները նշանակվում են 5 տարի ժամկետով: ՄԱԿ-ի անդամ 193 երկրներն իրենք են վճարում պահանջվող գումարները, քանի որ ՄԱԿ-ը եկամտի աղբյուր չունի: Անդամները վճարում են՝ համաձայն ընդունված սանդղակի: Օրինակ, ԱՄՆ-ը վճարում է 25, Ճապոնիան՝ 15,6, Գերմանիան՝ 9, Ֆրանսիան՝ 6.4, Մեծ Բրիտանիան 5.3, Իտալիան՝ 5.2 և ՌԴ-ը՝ 4.3 տոկոս: Այս բոլորը կազմում է ՄԱԿ-ի բյուջեի 66 տոկոսը: ՄԱԿ-ի պաշտոնական լեզուներն են անգլերենը, արաբերենը, իսպաներենը, չինարենը, ռուսերենը, ֆրանսերենը, գործնական լեզուները՝ անգլերենն ու ֆրանսերենը: Ամեն մի ազգ մեկ ձայն ունի: Կարևոր հարցերը լուծվում են ձայների 2/3 մեծամասնությամբ: ***Գլխավոր ասամբլեան*** գումարվում է տարին մեկ անգամ:

Անվտանգության խորհուրդ: Սա ունի 15 անդամ երկիր, որոնցից 5-ը՝ Չինաստանը, Ֆրանսիան, Ռուսաստանի Դաշնությունը, Մեծ Բրիտանիայի Միացյալ Թագավորությունը և ԱՄՆ-ը, մշտական անդամներ են: Մնացած 10-ը ոչ մշտական անդամներ են, որոնք ընտրվում են Գլխավոր ասամբլեայի կողմից 2 տարի ժամկետով՝ ելնելով աշխարհագրական դիրքից:

Հոգաբարձուների խորհուրդ: ՄԱԿ-ի հիմնադրման ժամանակ աշխարհում կային երկրներ, որոնք ազատ չէին: Այդ տարածքներն ընդգրկվեցին ՄԱԿ-ի հատուկ պաշտպանության ներքո և կոչվեցին ենթակա տարածքներ: Հոգաբարձուների խորհուրդը վերահսկում էր այդ տարածքներում բնակվող ժողովրդի սոցիալական առաջընթացը (հիմնականում Աֆրիկայում և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում):

Միջազգային դատարան: Սա ՄԱԿ-ի իրավական դատավճիռներ կայացնող գլխավոր մարմինն է: Այստեղ կարող են գործ հարուցել միայն պետությունները: Դատարանը գտնվում է Հաագայում (Նիդեռլանդներ): Ունի 15 դատավոր, որոնք ընտրվում են Գլխավոր ասամբլեայի և Անվտանգության խորհրդի կողմից: Երկու դատավոր միևնույն

107001
ՀԱԱՀ ԳՐԱԴԱՐԱՆ
БИБЛИОТЕКА НАУА

երկրից ընտրվել չեն կարող: Որոշումը կայացվում է նվազագույնը 9 դատավորի համաձայնությամբ:

Քարտուղարություն: ՄԱԿ-ի բոլոր աշխատակիցները քարտուղարության անդամ են: ՄԱԿ-ը գլխավորում է Գլխավոր քարտուղարը: Նրան օժանդակում է աշխատակազմը: Քարտուղարությունը պատասխանատու է ՄԱԿ-ի բոլոր մարմինների աշխատանքի համար:

ՄԱԿ-ն ունի սեփական դրոշ: Խորհրդանիշը պատկերում է աշխարհի քարտեզը: Դրոշն ընդունվել է 1947 թ. հոկտեմբերի 20-ին:

ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարներ եղել են.

1. Տրիգվե Լիի (Նորվեգիա), 1946 թ. ապրիլից մինչև 1952 թ. իր հրաժարականը:

2. Դագ Համարշելդը (Շվեդիա), 1953 թ. ապրիլից մինչև 1961 թ. ապրիլ, մինչև Աֆրիկայում օդային վթարից զոհվելը:

3. Ու Թանը (Բիրմա, այժմ՝ Սյանմար), 1961 թ. նոյեմբերին նշանակվել է Գլխավոր քարտուղարի պաշտոնակատար, իսկ 1962 թ. նոյեմբերից մինչև 1971 թ. դեկտեմբերը եղել է Գլխավոր քարտուղար:

4. Կուրտ Վալդհայմը (Ավստրիա), 1972 թ. հունվարից մինչև 1981 թ. դեկտեմբեր:

5. Խավիեր Պերես դե Կուելյարը (Պերու)՝ 1982 թ. հունվարից մինչև 1991 թ. դեկտեմբեր:

6. Բուտրոս Ղալին (Եգիպտոս)՝ 1992 թ. հունվարից մինչև 1996 թ. դեկտեմբեր:

7. Քոֆի Անանը (Գանա), 1997 թ. հունվարից մինչև 2006 թ. դեկտեմբեր:

8. Պան Գի Մունը (Հարավային Կորեա), 2007 թ. հունվարից մինչև օրս:

Աշխարհում ՄԱԿ-ի գրասենյակները 18-ն են, որոնք գտնվում են Նյու Յորքում, Վաշինգտոնում, Մոնրեալում, Լոնդոնում, Հաագայում, Բեռնում, Վիեննայում, Հռոմում, Բեյրութում, Գազայում (Ամման), Տոկիոյում, Ժնևում, Փարիզում, Բանգկոկում, Ադիս Աբեբայում, Նայրոբիում, Սանտյագոյում, Սանտ Դոմինգոյում:

1997թ. հունիսին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի նստաշրջանում քննարկվեց երկրների կայուն տնտեսական գործունեության ազգային և միջազգային զարգացման 21-րդ դարի ռազմավարության պլանը: Գլոբալ հարցերի, տնտեսական գործընթացների լուծմանն ու կարգավորմանն էին նվիրված 1999 թ. հոկտեմբերի 8-ի Գլխավոր ասամբլեայի 54-րդ, 2006 թ. սեպտեմբերի 6-ի 55-րդ, ինչպես նաև 2005 թ. ՄԱԿ-ի 60-ամյակի «Հազարամյակի գագաթնաժողով» նստաշրջանները: 2011 թ. հոկտեմբերին տեղի ունեցավ ՄԱԿ-ի 64-րդ նստաշրջանը, որում անդամ երկրների թիվը հասավ 193-ի, իսկ նոյեմբերի 28-ին Վիեննայում մեկնարկեց ՄԱԿ-ի Արդյունաբերության զարգացման կազմակերպության (ԱԶԿ) 14-րդ կոնֆերանսը, որը գումարվում է 2 տարին մեկ անգամ: Գլխավոր կոնֆերանսը կազմակերպության գերագույն օրենսդիր մարմինն է՝ կազմված 174 անդամ երկրներից:

ՄՏՀ գլոբալացման, միջազգային առևտրային գործունեության կառավարման, կարգավորման հարցերում մեծ դեր ունեն ՄԱԿ-ի համակարգի հիմնարկությունները:

ՄԱԿ առևտրի և զարգացման կոնֆերանսը (ՅՈՒՆԿՏԱԴ) միջկառավարական մշտական գործող օրգան է, ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի առևտրի, ֆինանսների, տեխնոլոգիաների, ինվեստիցիաների և զարգացման կոորդինացիոն կենտրոն: Շտաբ-բնակատեղը գործում է Ժնևում, կապի բաժանմունքը՝ Նյու Յորքում: Ստեղծվել է 1964 թ. ՄԱԿ-ի Ժնևի կոնֆերանսում, իսկ ***ՅՈՒՆԿՏԱԴ***-ի հետագա նստաշրջաններն անցկացվել են 1968 թ. (Դելի), 1972 թ. (Սանտյագո), 1976 թ. (Նայրոբի), 1979 թ. (Մանիլա), 1983 թ. (Բելգրադ), 1989 թ. (Ժնև), 1992 թ. (Կոլումբիա), 1996 թ. (Մադրիդ), 2000 թ. (Բանգկոկ), 2004 թ. (Սաո Պաուլո): Վերջինին մասնակցում էին ՄԱԿ-ի բոլոր 191 անդամ երկրները:

Այս կազմակերպության հիմնական խնդիրներն են.

- միջազգային առևտրի զարգացման և իրավահավասար փոխշահավետ համագործակցության ապահովումը,
- տնտեսական գործունեության մեխանիզմների մշակումը, կոորդինացումը և տնտեսական կապերի կարգավորումը:

ՅՈՒՆԿՏԱԴ-ը կառավարում է միջազգային առևտրի, պատրաստի արտադրանքների և կիսաֆաբրիկատների, հումքի, տրանսպորտի, ապահովագրության, արտաքին առևտրի վարկավորման, ԳՏ նվաճումների փոխանակումների և այլ լայն շրջանակների հարցերը: Առևտրի դիվանագիտության նպատակով նա կատարել է 172 միջոցառում միջազգային հարաբերությունների զարգացման գծով, որից 81-ը՝ խորհրդատվական, 91-ը՝ աշխատանքային ծառայությունների:

ՅՈՒՆԿՏԱԴ-ի պարենային և գյուղատնտեսության կազմակերպությունը ստեղծվել է 1945 թ. Հռոմում, Տնտեսական հանձնաժողովը՝ 1958 թ. Մարոկկոյում: Արևմտյան Աֆրիկայի համար տնտեսական հանձնաժողով ստեղծվել է Նիգերիայի Նիամե, Կենտրոնական Աֆրիկայի համար՝ Զաիրի Կինսաշե քաղաքներում, Լատինական Ամերիկայի և Կարիբյան ավազանի համար՝ 1948 թ. Սանտյագոյում (Չիլի):

Տնտեսական և սոցիոլոգիական հանձնաժողով Ասիայի և Խաղաղօվկիանոսյան երկրների համար ստեղծվել է 1947 թ. Բանգկոկում, իսկ Արևելյան Ասիայի երկրների համար՝ 1974 թ. և տեղաբաշխված է Բաղդադում (Իրաք):

ՅՈՒՆԿՏԱԴ-ի բարձրագույն օրգանը ***Կոնֆերանսն*** է, որը հրավիրվում է 4 տարին մեկ անգամ՝ նախարարների մակարդակով: Կոնֆերանսը ղեկավարում է քարտուղարը, որն ունի ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի տեղակալի կարգավիճակ: Կոնֆերանսն իրականացնում է հետևյալ միջոցառումները.

- ապրանքների, ծառայությունների, հումքի միջազգային առևտրի կազմակերպում,
- ինվեստիցիաների, տեխնոլոգիաների գլոբալացում և ռազմավարություն,
- օգնություն թույլ զարգացած երկրներին:

ՅՈՒՆԿՏԱԴ-ն ունի հանձնաժողովներ, որոնք համագործակցում են այլ կազմակերպությունների հետ, իսկ ֆինանսավորումն իրականացվում է ՀԲ-ի, Եվրոպական հանձնաժողովների, Զարգացման միջազգային բանկի, ֆինանսավորման ֆոնդերի, առանձին երկիր-դոնորների և ՄԱԿ-ի զարգացման ծրագրի միջոցների հաշվին:

Արդյունաբերության զարգացման գծով ՄԱԿ-ն ունի զարգացող երկրներին աջակցելու համար ***Մասնագիտացած հիմնարկություն (ՅՈՒՆԻԴՕ)***: Այն ստեղծվել է 1966 թ.: Շտաբ-բնակատեղը Վիեննայում է: 1979 թ. ՄԱԿ-ի կոնֆերանսում ընդունվել է ՅՈՒՆԻԴՕ-ի Կանոնադրությունը: Ղեկավար օրգաններն են Կոնֆերանսը, Արդյունաբերության զարգացման խորհուրդը և Քարտուղարությունը: ՅՈՒՆԻԴՕ-ն ունի նաև ծրագրային և բյուջետային հարցերի Կոմիտե:

ՄԱԿ Տնտեսական և սոցիալական խորհուրդը (ԷԿՕՍՕՍ) ստեղծվել է 1946 թ. և իրականացնում է ՄԱԿ-ի գործունեության բոլոր սոցիալ-տնտեսական ծրագրերը: Նրա կազմում ընդգրկված են հանձնաժողովներ 3 տարի ժամկետով 54 անդամ երկրներից, որոնցից 5-ն անփոփոխ անդամներ են: ՄԱԿ-ի Կանոնադրության N1 հոդվածում ձևակերպվում են համագործակցության նպատակները, տարբեր ոլորտների միջազգային հիմնախնդիրները:

ԷԿՕՍՕՍ-ին ենթարկվում են ՄԱԿ-ի տարածաշրջանային հետևյալ 5 հանձնաժողովները.

- Եվրոպական տնտեսական,
- Ասիայի և Խաղաղ օվկիանոսի տնտեսական և սոցիալական,
- Աֆրիկայի տնտեսական,
- Լատինական Ամերիկայի և Կարիբյան ավազանի տնտեսական,
- Արևմտյան Ասիայի տնտեսական և սոցիալական:

ՄԱԿ Եվրոպական տնտեսական հանձնաժողովը (ԵՏՀ) կազմավորվել է 1947 թ.: Գրասենյակը Ժնևում է (Շվեյցարիա): Համախմբում է Հյուսիսային Ամերիկայի, Եվրոպայի և Ասիայի 55 երկրների: Հանձնաժողովի հիմնական նպատակն է անհրաժեշտ պայմաններ ստեղծել երկրների տնտեսական քաղաքականության և կոլեկտիվ գործունեության փոխհամագործակցությունն ապահովելու համար: ԵՏՀ-ի բոլոր ենթակառուցվածքները մշտապես կազմակերպում են աշխատանքային խորհրդակցություններ, կոնֆերանսներ, սեմինարներ, ՄԱԿ-ի և տարածաշրջանային կազմակերպությունների, միավորումների միջև

ստեղծում են փոխադարձ կապ: ԵՏՀ հիմնական օրգանը ***Եվրոպական վիճակագրական կոնֆերանսն*** է, որը միավորում է.

- Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ),
- Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ),
- Եվրոպական խմբակցական հանձնաժողովի (ԵՀԺ),
- Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ),
- Վերակառուցման և զարգացման Եվրոբանկի (ՎԶԵԲ) և մյուսների գործունեությունը:

Ներկայում ԵՏՀ-ը հովանավորում և գործընկերային հարաբերություններ է զարգացնում ԵՄ, ԱՊՀ երկրների, Ալծովյան տնտեսական համագործակցության և այլ տնտեսական կազմակերպությունների հետ:

Ասիայի և Խաղաղ օվկիանոսի տնտեսական և սոցիալական հանձնաժողովը (ԱԽՏՍՀ) հիմնվել է 1947 թ.: Բոլոր երկրների միակ միջկառավարական ֆորումն է: Հանձնաժողովի 51 և 9 ասոցիացված անդամներն ընդգրկում են աշխարհի բնակչության 60 տոկոսը: Կենտրոնական գրասենյակը Բանգկոկում է (Թաիլանդ):

Աֆրիկայի տնտեսական հանձնաժողովը հիմնվել է 1958 թ.: Նպատակն է նպաստել մայր ցամաքի տնտեսական և սոցիալական սեկտորների զարգացմանը: Հանձնաժողովը խթանում է մայր ցամաքի 53 պետությունների տնտեսական համագործակցությունը և ինտեգրացման զարգացմանն ուղղված քաղաքականության ու ռազմավարության մշակումը մասնավոր արտադրության, առևտրի, դրամական ենթակառուցվածքային և ինստիտուցիոնալ բնագավառներում: Կենտրոնական գրասենյակն Ադիս Աբեբայում է (Եթովպիա):

Լատինական Ամերիկայի և Կարիբյան ավազանի տնտեսական հանձնաժողովը կազմավորվել է 1948 թ.: Հանձնաժողովում ընդգրկված են 41 երկրներ և 7 ասոցիացված անդամներ: Երկու ենթաշրջանային կենտրոնները գտնվում են Մեխիկոյում և Տրինդադում (Կարիբյան ավազանի կենտրոն), իսկ Կենտրոնական գրասենյակը՝ Սանտյագոյում (Չիլի):

Արևմտյան Ասիայի տնտեսական և սոցիալական հանձնաժողովը հիմնվել է 1973 թ.: 13 անդամից բաղկացած հանձնաժողովը ծառայում է որպես ՄԱԿ-ի համակարգում տարածաշրջանի տնտեսական և սոցիալական զարգացման հիմնական ընդհանուր ֆորում: Ծրագիրն առնչվում է տնտեսությունների բոլոր ոլորտներին: Կենտրոնական գրասենյակը Բեյրութում է (Լիբանան): ՄԱԿ-ի տարածաշրջանային հանձնաժողովները ենթարկվում են Տնտեսական և սոցիալական խորհրդին և գործում են Գլխավոր քարտուղարի հովանու ներքո: Անդամ երկրները ֆինանսավորվում են ՄԱԿ-ի ընդհանուր բյուջեից:

ՄԱԿ-ն ունի 18 մասնագիտացած գործակալություն իր անդամներով և գրասենյակներով (տե՛ս աղ. 2.2):

Գոյություն ունեն նաև առանձին 2 գործակալություններ.

1. -LAEA- Միջազգային ատոմային էներգիայի գործակալություն,
2. WTO - Առևտրի համաշխարհային կազմակերպություն:

ՄԱԿ առևտրի զարգացման կոնֆերանսն իր նստաշրջանն անցկացնում է 4 տարին մեկ անգամ: Առևտրի և զարգացման խորհուրդը (CTP) համարվում է կոնֆերանսի մշտական օրգան և հավաքում է ամենամյա հերթական նստաշրջան: Գործադիր հավաք հրավիրվում է տարեկան մի քանի անգամ:

ՄԱԿ Առևտրի և զարգացման ժողովն աջակցում է զարգացող երկրներին բանակցել առևտրային համաձայնագրերի շուրջ՝ արտահանման արտոնյալ պայմաններ տրամադրելու համար: Միջազգային ապրանքային պայմանագրերի շրջանակներում առևտրի զարգացման ժողովը վարել է բանակցություններ գնային պայմանների ապահովման, երկրների առևտրի արդյունավետության համար:

ՄԱԿ միջազգային առևտրային իրավունքի հանձնաժողովը ստեղծվել է 1966 թ.: 36 անդամ պետություններից գործող մարմին է: Մշակում է համաշխարհային առևտրի կոնվենցիաներ, մոդելային օրենքներ, կանոններ, իրավական ուղեցույցներ:

Համաշխարհային բանկը (ՀԲ) և Արժույթի միջազգային հիմնադրամը (ԱՄՀ) օգնել են բազմաթիվ երկրների բարելավել տնտեսական կառավարման ոլորտը, տրամադրել ժամանակավոր ֆինանսական աջակցություն՝ հաղթահարելու հաշվեկշռի կարգավորումը, դժվարությունները: ՀԲ-ը տարեկան 18-20 միլիարդ դոլարի փոխառություններ և դրամաշնորհներ է տրամադրում զարգացող երկրներին և, 1947 թվականից սկսած, աջակցել է ավելի քան 9500 զարգացման ծրագրերի[3]:

ՄԱԿ Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպությունը (ԶՀԿ, WTO) հիմնվել է 1925 թ.: Անդամակցվել է ՄԱԿ-ին 1947 թ.: Ներկայացնում է տեղական իշխանությունները, զբոսաշրջության ասոցիացիաները, մասնավոր ընկերությունները, այդ թվում՝ ավիաուղիները, հյուրանոցային համալիրները և գործակալությունները: ԶՀԿ-ի ղեկավար մարմինը Գործադիր խորհուրդն է: Աֆրիկայի, Ամերիկայի, Արևելյան Ասիայի և Խաղաղ օվկիանոսի ավազանի, Եվրոպայի, Միջին Արևելքի և Հարավային Ասիայի տարածքներում ձևավորվում են տարածքային խմբեր: Կենտրոնական գրասենյակը Մադրիդում (Իսպանիա) է:

ՄԱԿ Գլխավոր ասամբլեայի կողմից 1950 թ. ստեղծվել է ***Փախստականների համաշխարհային պաշտպանության և նրանց խնդիրների լուծման համակարգ***: 120-ից ավել երկրներում գործում են մոտ 300 գրասենյակներ: Ավելի քան 5000 աշխատողների միջոցով գործակալությունն աշխատում է ավելի քան 30 միլիոն մարդու հետ, որոնց թվում կան հայրենադարձներ, փախստականներ, տեղահանվածներ:

[3] ՅՈՒՆԿՏԱԴ-ի տարեկան հաշվետվություն, 2005, Նյու Յորք, 2006, ժնև:

Աղյուսակ 2.2

ՄԱԿ-ի մասնագիտացած հիմնարկությունները[4]

Անվանումներ	Ստեղծման տարեթիվը	Կենտրոն
Աշխատանքի միջազգային կազմակերպություն, МОТ	1919	Ժնև
Պարենի և գյուղատնտեսության կազմակերպություն, ПСО	1945	Հռոմ
Կրթության, գիտության, մշակույթի գծով կազմակերպություն, ЮНЕСКО	1945	Փարիզ
Առողջապահության համաշխարհային կազմակերպություն, ВОЗ	1948	Ժնև
Համաշխարհային բանկի խումբ, Վերակառուցման և զարգացման միջազգային բանկ, МБРР	1946	Վաշինգտոն
Զարգացման միջազգային ասոցիացիա, МАР	1960	Վաշինգտոն
Միջազգային ֆինանսական կորպորացիա, МФК	1956	Վաշինգտոն
Ինվեստիցիաների երաշխավորման բազմակողմ գործակալություն, МИГА	1988	Վաշինգտոն
Ինվեստիցիոն վեճերի կարգավորման միջազգային կենտրոն, МЦУИС	1966	Վաշինգտոն
Միջազգային արժութային հիմնադրամ, МВФ	1945	Վաշինգտոն
Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպություն, ИКАО	1944	Մոնրեալ
Համաշխարհային փոստային միություն, ВПС	1874	Բեռն
Էլեկտրակապի միջազգային միություն, МСЭ	1865	Ժնև
Համաշխարհային չափագիտական կազմակերպություն, ВМО	1951	Ժնև
Միջազգային ծովային կազմակերպություն, ИМО	1959	Լոնդոն
Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպություն, ВОИС	1970	Ժնև
Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամ, МФСР	1977	Հռոմ
Արդյունաբերության զարգացման կազմակերպություն, ЮНИДО	1966	Վիեննա

[4] Международные экономические отношения, уч. под ред. Смитиенко Б. М., М., ИНФРА, 2005, стр. 445. Աղյուսակից երևում է, որ մի քանի կազմակերպություններ ավելի վաղ են կազմավորվել, քան ՄԱԿ-ը: Դրանք հետագայում ստացել են ՄԱԿ-ի մասնագիտացած հիմնարկության կարգավիճակ (МОТ, ВПС, МСЭ):

Մարդու իրավունքների նոր կոնվենցիա է ընդունվել *միգրանտ* աշխատողների հանդեպ խտրականությունը կանխելու համար: 1990 թ., 10 տարվա բանակցություններից հետո, Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունվել է «Բոլոր միգրանտ աշխատողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության մասին միջազգային կոնվենցիան»: Կենտրոնական գրասենյակը գտնվում է Ժնևում (Շվեյցարիա): ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթներով պայքար է ծավալվում միջազգային հանցագործության, անօրինական թմրամիջոցների մատակարարման կրճատման համար:

Համաշխարհային փոստային ծառայությունները կազմակերպում է ՄԱԿ-ի փոստային համընդհանուր միությունը (ՓՀՄ): Միությունը սահմանում է միջազգային փոստային գործունեության կանոններ և անում առաջարկություններ՝ բարելավելու համար մատուցվող ծառայությունների որակը: ՄԱԿ 193 անդամ պետությունների փոստային ծառայությունները կազմում են աշխարհի խոշոր փոստային ցանցը, որի տարեկան շրջանառությունը կազմում է 430 մլրդ դոլար:

Հեռահաղորդակցության միջազգային միությունը (ՀՄՄ) միավորում է պետություններ-հեռահաղորդակցության ոլորտը: ՀՄՄ-ը կոորդինացրել է ռադիոտիրույթի հավասարաչափ օգտագործման գործընթացը՝ համացանցից մինչև նորագույն ռադիոտեխնոլոգիաներ, օդագնացությունից և ծովագնացությունից մինչև ռադիոաստղագիտական և արբանյակային օդերևութաբանություն, հեռախոսային և ֆաքսային ծառայությունից մինչև հեռուստատեսություն:

ՄԱԿ-ն աշխատում է լուծել ***բնապահպանական*** հիմնախնդիրներ, զբաղվում է բնակլիմայական փոփոխության, օզոնի շերտի քայքայման, թունավոր արտանետումների, օդի և ջրի աղտոտվածության, անտառների և կենսաբանական հիմնախնդիրներով:

Ամեն տարի ***Պարենի համաշխարհային ծրագիրը (ՊՀԾ)***՝ մարդասիրական օգնությամբ զբաղվող կազմակերպությունը, օգնում է 80 երկրների շուրջ 90 մլն սովյալների: Վերջին 4 տասնամյակների ընթացքում այս ծրագիրը 78.3 մլն տոննա պարենային օգնություն է հասցրել աշխարհի ամենաչքավոր երկրների շուրջ 1.4 մլրդ բնակիչների, ինչը կազմում է մոտ 33.5 մլրդ դոլարի ներդրում:

ՄԱԿ գործակալությունները պատասխանատու են ***ծովային*** և ***օդային*** երթևեկության անվտանգության չափորոշիչների սահմանման համար:

Ծովային միջազգային կազմակերպությունը (ԾՄԿ) հիմնադրվել է 1959 թ.: Պատասխանատու է ծովային միջազգային անվտանգության համար: ԾՄԿ-ն ընդունել է 40-ից ավելի կոնվենցիաներ և հռչակագրեր: Առաջնային խնդիրը ծովի աղտոտման կանխարգելմանն առնչվող միջազգային համաձայնագրերի և օրենսդրության մշակումն է: 1970 թ. նախաձեռնվեց գլոբալ որոնման և փրկարարության համակարգը: 1979 թ. հիմնված ծովային արբանյակային միջազգային կազմակերպությունը նշանակալի կերպով բարելավեց ռադիո և այլ հաղորդակցությունների առաքումը նավերին: ԾՄԿ համաշխարհային համալսարանը հիմնադրվել է 1963 թ. Մալմոյում (Շվեդիա): Այն ծովային կրթության և կառավարման խորացված դասընթացներ է վարում՝ պատրաստելով վարչական աշխատողների: 1989 թ. հիմնվել է Միջազգային ծովային իրավունքի ինստիտուտը Վալետայում (Մալթա): ԾՄԿ Կենտրոնական գրասենյակը Ժնևում է (Շվեյցարիա):

ՄԱԿ-ի քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպությունը (ՔԱՄԿ, ИКАО) ստեղծվել է 1944 թ. Չիկագոյի կոնվենցիայի հիման վրա և գործում է 1947-ից: Մշակում է օդային տրանսպորտի անվտանգության, ապահովության կանոնները: Ունի իր ասամբլեան՝ ինքնավար մարմին, որին անդամակցում են բոլոր մասնակից կողմերի ներկայացուցիչները և կազմված խորհուրդը: Գրասենյակը գտնվում է Մոնրեալում (Կանադա): Միջազգային ավիացիայի միջոցով տարեկան տեղափոխվում են մոտ 30 մլն տոննա բեռներ և միլիոնավոր ճանապարհորդներ: Ներկայում ՔԱՄԿ-ում զարգանում է արբանյակային համակարգ, որպեսզի բավարարի քաղաքացիական ավիացիայի հաղորդակցման, օդային ուղիների կառավարման կարիքները[5]:

2.3 Եվրոպական միությունը (ԵՄ) համաշխարհային տնտեսության համակարգում

Միջազգային տնտեսական ինտեգրման (ՄՏԻ) գործընթացի զարգացումը Եվրոպայում դիտվում է որպես օբյեկտիվ գործընթացների գիտակցական մոտեցում, փոխադարձ կապերի ստեղծում, ազգային տնտեսական համակարգի զարգացում: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Եվրոպայում ինտեգրացման գործընթացները պայմանավորվեցին տնտեսական զարգացման օրինաչափություններով, քաղաքական որոշումներով: Կարևոր դեր խաղաց «Մարշալի պլանը», որի շրջանակում 1951 թ. ապրիլին Փարիզյան պայմանագրի ստորագրմամբ ստեղծվեց ածխի, պողպատի Եվրոմիավորումը (ԵՕՄՀ), որի կազմում ընդգրկվեցին Բելգիան, ԳՖՀ-ը, Իտալիան, Լյուքսեմբուրգը, Նիդեռլանդները, Ֆրանսիան (6 երկիր): Պայմանագիրն ուժի մեջ մտավ 1952 թ.: 1957 թ. նույն երկրների կողմից ստորագրվեց Եվրոպական տնտեսական համագործակցության (ԵՏՀ) «Ընդհանուր շուկա» ստեղծելու Հռոմի պայմանագիրը և որոշվեց.

- հանել մաքսային միության կապիտալի, ապրանքների ծառայությունների սահմանափակումներն անդամ երկրների միջև,
- սահմանել ընդհանուր մաքսային սակագներ և «ընդհանուր շուկայի» մրցակցության պայմաններ:

---

[5] ՄԱԿ-ի մասին հիմնական փաստեր, Երևան, 2002:

1958 թ. հունվարի 1-ին ուժի մեջ մտավ ատոմային էներգիայի եվրախմբավորման (Եվրատոմ) մասին պայմանագիրը: 1960 թ. մայիսի 3-ին ստորագրվեց Եվրոպայի ազատ առևտրի ասոցիացիայի (EACT) փաստաթուղթը: 1973 թ. ԵՏՀ անդամ դարձան Դանիան, Մեծ Բրիտանիան, Իռլանդիան (9 երկիր):

1991 թ. հոկտեմբերին ԵՏՀ և EACT-ի միջև համաձայնություն ստորագրվեց Եվրոպական տնտեսական տարածքների ստեղծման մասին: Մինչ այդ, 1970 թ., ստեղծվել էր Եվրոպական քաղաքական համագործակցություն՝ արտաքին քաղաքականության կոորդինացման ինստիտուտ: Կարևոր քայլ դարձավ 1979 թ. Եվրոպական արժութային համակարգի ստեղծումը, որպես արժույթի կայուն գոտի, իսկ 1978 թ. ստեղծվեց եվրոարժույթի միավորը՝ էքյուն: 1981 թ. անդամագրվեցին Հունաստանը (10 երկիր), 1986 թ.՝ Իսպանիան և Պորտուգալիան (12 երկիր), 1995 թ.՝ Ավստրիան, Ֆինլանդիան, Շվեդիան (15 երկիր):

Աղյուսակ 2.3

Եվրամիության անդամ երկրները

Տարեթվեր	Անդամների թիվը	Անվանումը	Ինտեգրացիայի փուլերը	Արժութային ինտեգրացիա
1957	6 երկիր (Բելգիա, ԳՖՀ, Իտալիա, Լյուքսեմբուրգ, Նիդեռլանդներ, Ֆրանսիա)	Եվրոպական տնտեսական համագործակցություն	Ազատ առևտրի գոտի	
1958				
1959				
1960				
1961				
1962				
1963				
1964				
1965				
1966				
1967				
1968				
1969			Մաքսային միություն (1968 թ. հուլիսի 1-ից)	
1970				
1971				
1972				Եվրոպական «արժութային օձ» (24. 04.1972)
1973	9 երկիր (ընդգրկվել են նաև Մեծ Բրիտանիան, Դանիան, Իռլանդիան, (01.01.1973))			
1974				
1975				
1976				
1977				Եվրոարժութային համակարգ (13.03.1979)
1978				
1979				
1980				

Տարեթվեր	Անդամների թիվը	Անվանումը	Ինտեգրացիայի փուլերը	Արժութային ինտեգրացիա
1981	10 երկիր (ընդգրկվել է նաև Հունաստանը (28.05.1979))	Եվրոպական տնտեսական համագործակցություն	Մաքսային միություն	Եվրոպական արժութային համակարգ
1982				
1983				
1984				
1985				
1986	12 երկիր (ընդգրկվել են նաև Իսպանիան և Պորտուգալիան (01.01.1986))		Ընդհանուր շուկա	
1987				
1988				
1989				
1990				
1991				
1992				
1993		Եվրոպական միություն	Տնտեսական միություն	Եվրոպական արժութային ինստիտուտ
1994				
1995	15 երկիր (ընդգրկվել են նաև Ավստրիան, Ֆինլանդիան, Շվեդիան (01. 01.1995))			
1996				
1997				
1998				Միասնական արժույթ
1999				
2000				
2004	25 երկիր (ընդգրկվել են նաև Չեխիան, Հունգարիան, Լեհաստանը, Սլովակիան, Սլովենիան, Լատվիան, Լիտվան, Էստոնիան, Մալթան, Կիպրոսը (11.05.2004))			
2007	27 երկիր (ընդգրկվել են նաև Ռումինիան, Բուլղարիան (01.01.2007))			

2004 թ. ԵՄ-ը համալրվեց ևս 10 երկրներով՝ 8-ը եվրոպական՝ Հունգարիա, Լեհաստան, Սլովակիա, Չեխիա, Սլովենիա, Լատվիա, Լիտվա, Էստոնիա, և 2-ը՝ Միջերկրական ծովի՝ Մալթա, Կիպրոս (Հունական մասը): 2007 թ. հունվարի 1-ին անդամագրվեցին Ռումինիան և

Բուլղարիան: Այսօր ԵՄ անդամ պետությունները 27-ն են (տե՛ս աղ. 2.3): Բնակչության թիվը մոտ 490 մլն է (աշխարհի բնակչության 8 տոկոսը): ԵՄ երկրներին բաժին է ընկնում համաշխարհային ՀՆԱ 40 տոկոսը: ԵՄ հատուկ տեղ է զբաղեցնում համաշխարհային տնտեսության մեջ:

1986 թ. ԵՏՀ անդամ երկրների միջև ստորագրվել է միասնական ակտ, որի համաձայն ընդլայնվել է համագործակցության տնտեսական գործունեությունը: Գործընթացների զարգացման կարևոր գործոն է դարձել անդրազգային ընկերությունների և բանկերի արագ աճը, ազգային կապիտալների միաձուլումը:

Շենգենյան համաձայնագիրը կնքվել է 1985 թ. հունիսի 14-ին Լյուքսեմբուրգի Շենգեն գյուղում եվրոպական 5 պետությունների (Գերմանիա, Ֆրանսիա, Բելգիա, Նիդեռլանդներ և Լյուքսեմբուրգ) միջև: 1995 թ. մարտի 26-ին դրանց միացել են նաև Իսպանիան և Պորտուգալիան: Համաձայնագրի նպատակը պետությունների միջև ներքին սահմանների հսկողության փոփոխումն էր: 1990 թ. հունիսին ստորագրվել է Շենգենյան համաձայնագրի կատարման Կոնվենցիան:

Եվրոպական երկրների ինտեգրման խնդիրը որոշվել է ԵՄ ***Մաաստրիխյան նստաշրջանում*** 1991 թ. դեկտեմբերի 9-10-ը: Նստաշրջանը որոշել է չափորոշիչներ, որոնց համաձայն պետք է ընդունվեին նոր անդամներ, այդ թվում՝ ԵՄ Արևելյան դաշինքի երկրները, խնդիր է առաջադրել ստեղծելու միասնական դրամա-արժութային միավոր Տնտեսական և արժութային միության (ՏԱՄ) բազայի վրա, պաշտոնապես հայտարարել է Եվրոպական ընկերության նոր փուլի ձևավորման և նրա զարգացման հիմնական խնդրի ավարտի մասին:

Ավելի ուշ համաձայնագրին միացան Ավստրիան, Իտալիան, Հունաստանը, Սկանդինավյան անձնագրային միությունը (Դանիա, Ֆինլանդիա, Շվեյցարիա, Իսլանդիա և Նորվեգիա): 1909 թ. մայիսի 1-ին Շենգենյան համաձայնագրում ուժի մեջ մտավ 1997 թ. հոկտեմբերի 2-ի Ամստերդամի ընդունած պայմանագիրը, որին համաեվրոպական իրավունքների համաձայնություն տրվեց: ԵՄ-ում հանդես եկող բոլոր երկրները (ոչ անդամները) պարտավոր էին ընդունել շենգենյան կանոնները: ԵՏՄ-ը ստացավ Եվրամիություն (ԵՄ) նոր անվանումը: ԵՄ գլխավոր խնդիրն է թույլ զարգացած երկրների տնտեսական ցուցանիշները հասցնել ավելի զարգացած անդամ երկրների մակարդակին: Ստեղծվեց նաև միության նոր մարմին՝ ***Եվրոպական արժութային ինստիտուտ***, որը զբաղվում է արժութային, ֆինանսական, կառավարման և ինստիտուցիոնալ շրջանակների մշակման գործերով: 1998 թ. ԵՄ երկրները ստեղծեցին Եվրոպական Կենտրոնական բանկ, 2001 թ. անցան ընդհանուր տնտեսական, դրամավարկային քաղաքականության, և 2002 թ. հունվարի 1-ից սկսվեց եվրո դրամի շրջանառությունը:

ԵՄ օղակներն են.

1. ԵՄ ինստիտուտները՝ Եվրոպառլամենտ, Եվրոհանձնաժողով, Նախարարների խորհուրդ, Եվրոդատարան, Աուդիտորների պալատ, Եվրոպական օմբուդսմեն:

2. Ֆինանսական օրգանները՝ Կենտրոնական և Ինվեստիցիոն բանկեր:

3. Խորհրդատվական օրգանները՝ Եվրոպական տնտեսական, սոցիալական և տարածքային կոմիտեներ:

4. Ինստիտուցիոնալ օրգանը՝ Եվրոընկերության պաշտոնական հրապարակումների բաժինը:

5. Գործակալությունը՝ Եվրոպական ընկերության Գործակալություն 16 միավոր կազմով, Գործակալություն ընդհանուր միջազգային և անվտանգության քաղաքականության գծով (2 միավոր), Գործակալության ոստիկանական օրգանների համագործակցություն:

ԵՄ իրավական ***կառույցներն*** են.

1. ԵՄ նախարարների խորհուրդը, որը գործում է Բրյուսելում (Բելգիա): ԵՄ Գլխավոր օրենսդիր օրգանն է իրականացնում ընդհանուր տնտեսական քաղաքականությունը, ղեկավարում բյուջեն, կնքում միջազգային համաձայնագրեր: Նախարարների խորհրդում գործում է ռոտացիայի համակարգը, որի համաձայն յուրաքանչյուր պետության ներկայացուցիչ 6 ամիս ժամկետով զբաղեցնում է նախագահողի պաշտոնը:

2. Եվրոպական խորհուրդը, որի կազմում ընդգրկվում են ԵՄ անդամ պետությունների ղեկավարները: Նրանք տարին երկու անգամ հրավիրում են նիստ՝ սկզբունքային քաղաքական հարցեր լուծելու: Եվրոխորհուրդը գործում է 1974 թ.-ից, սակայն պաշտոնական կարգավիճակ ստացել է 1986 թ. Միասնական եվրոպական ակտով:

3. Եվրոպական ընկերության հանձնաժողովը, որը Նախարարների խորհրդի օրենքների նախագծերը հաստատման ներկայացնող գործադիր օրգանն է: Կազմված է 20 անդամից (մեկ նախագահ և 19 փոխնախագահ), որոնք նշանակվում են ազգային կառավարությունների կողմից 5 տարի ժամկետով: Հանձնաժողովն իրականացնում է մաքսային ռեժիմի պահպանման, հարկային քաղաքականության, ագրարային շուկայի կարգավորման, ֆունկցիաների կատարման հսկողություն: Կարող է կիրառել սանկցիաներ, դիմել Եվրոդատարան:

4. Եվրոինվեստիցիոն բանկը (ԵԻԲ), որն ստեղծվել է անդամ երկրների տրամադրած միջոցներով: Վարկավորում է անդամ երկրների պետական կառույցներին:

5. Եվրոպական սոցիալական հիմնադրամը (ԵՍՀ), որն ապահովում է աշխատուժի միգրացիան և պրոֆեսիոնալ ուսուցումը:

6. Տարածաշրջանային զարգացման Եվրոպական հիմնադրամը, որն ստեղծված է ԵՄ թույլ զարգացած շրջաններին ինվեստիցիաներ, դրամական օժանդակություն տրամադրելու նպատակով:

7. Եվրոպառլամենտը, որն ունի 626 պատգամավոր: 1979 թ.-ից ընտրությունները կատարվում են անդամ երկրների ներկայացուցիչներից ընդհանուր ընտրակարգով, ուղղակի քվեարկությամբ, 5 տարի ժամկետով:

8. Եվրոդատարանն ապահովում է ԵՄ օրենքների, համաձայնագրերի, պարտավորությունների կատարումը: 2004 թ.-ից դատարանի կազմում ընդգրկված են յուրաքանչյուր երկրից մեկ ներկայացուցիչ և մեկ լրացուցիչ դատավոր: Ունի նաև 9 իրավաբան-խորհրդատու: Դատարանը որոշում է տուգանքների չափը, վճռում վիճելի գործեր, պատժում ԵՄ որոշումները չկատարող անդամ երկրներին, ապահովում պայմանագրերի, համաձայնագրերի կատարումը:

Գործում են նաև *Եվրոպական կենտրոնական բանկը* (ստեղծվել է 1999 թ.), *հաշվիչ պալատը:* Բյուջեի եկամուտները գոյանում են տուրքերից, արտահանման և ներքին շուկայի գների տարբերությունից, մաքսատուրքերից, հարկերից, ինչպես նաև անդամ երկրների ՀՆԱ-ի 1.2-1.3 տոկոս փոխանցումներից: ԵՄ ծախսերը բաշխվում են հետևյալ կերպ՝ վարչատնտեսական՝ 4.5, գյուղատնտեսական՝ 6.6, տարածաշրջանային՝ 7.5, սոցիալական՝ 6.6, փոխանցում ԵՄ անդամ երկրներին՝ 8.4, ԳՏ՝ 3.5, զարգացող երկրներին օգնություն՝ 2.1 տոկոս և այլն:

2.4 Եվրոպայի երկրների տնտեսությունները

Եվրոպան (առանց ԱՊՀ 4 երկրների) եվրոպական աշխարհամասի 39 երկրների համագործակցություն է, 5,1 մլն քառ. կմ տարածքով, 520 մլն բնակչությամբ: Պետությունների տնտեսություններն ըստ ոլորտների ուսումնասիրվում են ոչ թե ըստ սոցիալ-տնտեսական խմբերի և քաղաքական պատկանելության, այլ ըստ համագործակցության, տնտեսական առանձնահատկությունների, զարգացման մակարդակների, աշխարհագրական դիրքերի և ցուցանիշների:

Աշխարհագրական, բնական և տնտեսական տարբերություններից ելնելով՝ Եվրոպան բաժանվում է Արևմտյան և Արևելյան մասերի: *Արևմտյան Եվրոպան* բաժանվում է Հյուսիսային, Միջին և Հարավային շրջանների: Առավել հզոր է *Միջին Եվրոպան*, որի կազմում են Ավստրիան, Բելգիան, ԳԴՀ-ը, Լյուքսեմբուրգը, Լիխտենշտեյնը, Մեծ Բրիտանիան, Նիդեռլանդները, Ֆրանսիան, Շվեյցարիան: Տարածաշրջանը կարևոր դեր է խաղում համաշխարհային տնտեսության քաղաքական, գիտական, մշակութային կյանքում: Ամբողջ տարածքն աչքի է ընկնում շուկայական հարաբերությունների բարձր մակարդակով: Եվրոպայի արդյունաբերությունը կենտրոնացած է ԳԴՀ-ում, Ֆրանսիայում, Մեծ Բրիտանիայում, Իտալիայում և մյուս զարգացած երկրներում: Եվրոպայում են տեղաբաշխված ինչպես ՄԱԿ-ին առընթեր, այնպես էլ մի շարք միջազգային կազմակերպություններ[6]:

Երկրներն ունեն բնառեսուրսային ոչ մեծ ներուժ (պահանջարկի 10 տոկոսը), քիչ են վառելիքի պաշարները, նավթի և գազի հանույթը: Եվրոպան մեծ հաջողությունների է հասել գիտությունների, ճարտարապետության, մշակույթի, կրթության, արդյունաբերության ոլորտներում: Տարածքին բնորոշ է մեքենաշինությունը, որի 50-60 տոկոսն արտահանվում է: Զարգացած են քիմիական, թեթև և սննդի արդյունաբերությունները, գյուղատնտեսությունը, բուսաբուծությունը, տրանսպորտի միջոցները, հանգստի և զբոսաշրջության ցանցը:

Արտաքին տնտեսական կապերը բազմազան են: Միայն Նիդեռլանդների արտաքին առևտուրը գերազանցում է ամբողջ Աֆրիկայի երկրների առևտուրը (բացի ՀԱՀ-ից): Գերակշռում են պատրաստի արտադրանքը, մեքենաները, սարքավորումները, պահեստամասերը:

Ներմուծման մեջ գերակշռում են արդյունաբերության և գյուղատնտեսության հումքը, կիսաֆաբրիկատները, պարենամթերքը, մասամբ նաև՝ սարքավորումները: Բոլոր երկրները կապի մեջ են միմյանց հետ:

Արևմտյան Եվրոպային բնորոշ է շուկայական հարաբերությունների բարձր մակարդակը: Այս տարածքում արտադրվում է համաշխարհային արտադրանքի 1/3-ը, գյուղատնտեսական արտադրանքի 1/5-ը: Զարգացած են արտաքին տնտեսական, գիտատեխնիկական, ֆինանսական կապիտալի, ծառայությունների հարաբերությունները, զբոսաշրջությունը:

Արևելյան Եվրոպայի երկրները տնտեսական, ֆինանսական, գիտական ներուժով զիջում են Արևմտյան Եվրոպային: Այս երկրների մի մասը գտնվում է անցումային փուլում (նախկին դեմոկրատական երկրներ):

Հյուսիսային Եվրոպայի 8 երկրներն են Շվեդիան, Նորվեգիան, Դանիան, Ֆինլանդիան, Լատվիան, Լիտվան, Էստոնիան, Իսլանդիան: Սրանք հարուստ են բնական ռեսուրսներով, բայց կարիք ունեն վառելիքային ռեսուրսների, բացի Նորվեգիայից, որն ունի նավթ, գազ: Ունեն անտառային ռեսուրսներ: Ենթաշրջանին բաժին է ընկնում համաշ-

---

[6] Օրինակ՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ՄԱԿ-ի կրթության և մշակույթի կազմակերպություն (Փարիզ, Ֆրանսիա),
ՊԳԿ-Պարենամթերքի և գյուղատնտեսական կազմակերպություն (Հռոմ, Իտալիա),
ԱՀԿ-Առողջապահության համաշխարհային կազմակերպություն (Ժնև, Շվեյցարիա),
ԱՄԿ-Աշխատանքի միջազգային կազմակերպություն (Ժնև, Շվեյցարիա),
ՄԱԳԱՏԵ-Ատոմային էներգիայի միջազգային կազմակերպություն (Վիեննա, Ավստրիա),
ՄԴ-Միջազգային դատարան (Հաագա, Նիդեռլանդներ),
ՄՕԿ-Միջազգային օլիմպիական կոմիտե (Լոզան, Շվեյցարիա),
ՄԱՊ-Միջազգային առևտրի պալատ (Փարիզ, Ֆրանսիա),
ՄԻԱ-Միջազգային իրավունքի ասոցիացիա (Բրյուսել, Բելգիա),
ՄՀԲ-Միջազգային հաշվարկների բանկ (Բազել, Շվեյցարիա) և այլն:

խարհային արդյունաբերության 7, ծովային նավատորմիղի 12, արտաքին առևտրի 4 տոկոսը: Այս երկրները կապված են Միջին Եվրոպայի, ԱՄՆ-ի, Կանադայի հետ: Այստեղ զարգացած են վերամշակող, էլեկտրաէներգետիկայի, հանքահումքային, անտառանյութի մշակման, ձկնարդյունաբերության և այլ արդյունաբերական ճյուղերը: Բնակչության մեկ շնչի հաշվով էլեկտրաէներգիայի սպառմամբ Նորվեգիան աշխարհում գրավում է առաջին տեղը (29 հազար կվտ): Նրան հաջորդում են Կանադան՝ 21, Շվեդիան՝ 17.5, Իսլանդիան՝ 17, ԱՄՆ-ը՝ 16, Ֆինլանդիան՝ 11 հազար կվտ սպառմամբ: Տարածքի երկրները հարուստ են գունավոր մետալուրգիայով, մեքենաշինությամբ (բացի Իսլանդիայից), քիմիական, փայտամշակման, ցելյուլոզի, թղթի արդյունաբերությամբ, սննդարդյունաբերությամբ: Զարգացած են գյուղատնտեսությունը, անասնապահությունը, բուսաբուծությունը: Բոլոր երկրները միմյանց հետ ունեն տրանսպորտային կապ:

Արտաքին առևտուրը զարգացած է: Շվեդիան, Նորվեգիան, Դանիան արտահանում են նավեր, մեքենաներ, հանքաքար, գունավոր մետաղ, սարքավորումներ, փայտանյութ, պահածոներ, սննդամթերք և այլն, ներմուծում՝ նավթ, արդյունաբերական հումք, մեքենասարքավորումներ, պարարտանյութ, հացահատիկ, միրգ, բանջարեղեն:

Հարավային Եվրոպայի 9 երկրներն են Իտալիան, Հունաստանը, Մալթան, Պորտուգալիան, Իսպանիան, Սան Մարինոն, Անդորան, Մոնակոն, Վատիկանը: Այս երկրներն ունեն հանքային պաշարներ, զարգացած գյուղատնտեսություն, զբոսաշրջություն: Հարավային Եվրոպայի արդյունաբերության բաժինը համաշխարհային արդյունաբերության մեջ կազմում է 6.5 տոկոս, որի հիմնական մասը պատկանում է Իտալիային, Իսպանիային, Պորտուգալիային, Հունաստանին: Էլեկտրաէներգիան ստանում են ՋԷԿ-ից, իսկ Իսպանիայում և Իտալիայում՝ նաև ԱԷԿ-ից: Իտալիայում, Իսպանիայում զարգացած են մեքենաշինությունը, տրանսպորտային շարժակազմերը, քիմիական, թեթև արդյունաբերությունները: Հարավային Եվրոպայի երկրներն ունեն հանգստի և զբոսաշրջության լայն ցանց: Արտահանում են գյուղատնտեսական մթերք, սննդի և թեթև արդյունաբերական ապրանքներ, ավտոմեքենաներ, նավեր, ներմուծում՝ նավթամթերք, երկաթի հանքաքար, հացահատիկ, վառելիք:

2.5 Անկախ Պետությունների Համագործակցություն (ԱՊՀ)

20-րդ դարի վերջին փլուզվեց սոցիալիստական համակարգը: 30 տարվա գոյությունից հետո վերացավ Տնտեսական փոխօգնության խորհուրդը (ՏՓԽ), որին անդամակցում էր 10 երկիր: Սոցիալիստական երկրներին բաժին էր ընկնում աշխարհում արտադրվող ազգային եկամտի 25, գյուղատնտեսական արտադրանքի՝ 20 տոկոսը, արդյունաբերական արտադրանքի՝ 1/3-ը: Մեծ դժվարությունների առջև

կանգնեցին երկրների արդյունաբերությունները, ֆինանսական համակարգը, մյուս ճյուղերը: Բաժանումից հետո խորհրդային հանրապետությունները և սոցիալիստական երկրները ձևավորվեցին որպես նոր, անկախ պետություններ, սակայն անհրաժեշտ էր պահպանել տնտեսական կապերը: Նախկին հանրապետությունների համագործակցություն կազմակերպելու համար հիմք դարձան 1991 թ. դեկտեմբերի 8-ին Մինսկում, 1992 թ. մարտին Մոսկվայում, հոկտեմբերին Բիշքեքում կայացած՝ պետությունների ղեկավարների պաշտոնական հանդիպումները: Դեկտեմբերի 21-ի արձանագրությամբ կազմավորվեց Անկախ Պետությունների Համագործակցությունը (ԱՊՀ), որի կազմում ընդգրկվեցին Ռուսաստանը, Բելառուսը, Ուկրաինան, Ղրղզստանը, Հայաստանը, Ղազախստանը, Մոլդովան, Ուզբեկստանը, Թուրքմենիան, Տաջիկստանը, Ադրբեջանը, իսկ 1993 թ.՝ նաև Վրաստանը: Համագործակցության կենտրոնը Մինսկն է, որտեղ գործում են համագործակցության գործադիր քարտուղարությունը, Արտաքին գործերի նախարարների խորհուրդը, ԱՊՀ երկրների պաշտպանության նախարարների խորհուրդը, Միջկառավարական խորհուրդը, ճյուղային գործունեության խորհուրդը: ԱՊՀ տնտեսական ինտեգրացիան լիազորություններ չունի: Նա չի կարող որևէ երկրի ստիպել մասնակցել իրեն չհետաքրքրող միջոցառումների: ԱՊՀ-ն միայն պետությունների միավորում է, համատեղ գործունեության ոլորտ, որտեղ բնորոշ են ընդհանուր նպատակը, սկզբունքները, կառուցվածքը, փոխադարձ կապերը և ընդհանուր շահեր ունենալը պայմանագրային հիմունքներով: Ընդունվել են կանոնակարգ, բազմակողմ ակտեր (պայմանագրեր, համաձայնագրեր, որոշումներ): ԱՊՀ համագործակցության խնդիրներն են.

- ստեղծել խորհրդային հանրապետությունների հիմքի վրա տնտեսական, ԳՏ, տեղեկատվական պետություններ,
- վերացնել նախկին համակարգի նեգատիվ երևույթները, ձևափոխել տնտեսությունները շուկայական հարաբերությունների անցնելու համար,
- ձեռք բերել ինքնուրույնություն և միջազգային ճանաչում:

1993 թ. սեպտեմբերին Մոսկվայում ԱՊՀ երկրների ղեկավարների մակարդակով ստորագրվեց տնտեսական միություն ստեղծելու մասին պայմանագիր, որով նախատեսվում էր, որ ԱՊՀ պետություններն ինտեգրացման պետք է հասնեն փուլերով՝ ստեղծելով ազատ առևտրի գոտի, մաքսային, վճարային և արժութային միություն, ապրանքների, ծառայությունների կապիտալի ընդհանուր շուկա: Ազատ առևտրի գոտի ստեղծելու մասին Համաձայնագիրն ընդունվեց 1994 թ. ապրիլի 15-ին և ստորագրվեց ԱՊՀ բոլոր 12 պետությունների ղեկավարների կողմից: Դրան զուգահեռ ԱՊՀ երկրների միջև գոյություն ունեն ինտեգրացումն արգելակող մի շարք գործոններ:

1. Երկրներն իրարից տարբերվում են տնտեսական ներուժով, կառուցվածքով, զարգացման մակարդակով: Այսպես, համագործակցության ՀՆԱ 80 տոկոսը կազմում է Ռուսաստանի, 8-ը՝ Ուկրաինայի, 3.7-ը՝ Ղազախստանի, 2.3-ը՝ Բելառուսի, 2.6-ը՝ Ուզբեկստանի բաժինը: Մյուս հանրապետությունների բաժինը կազմում է տասնորդական տոկոսներ:

2. ԱՊՀ երկրներում ինտեգրացիան իրականացվում է խորը տնտեսական ճգնաժամի պայմաններում, ինչն ստեղծում է նյութական և ֆինանսական ռեսուրսների դեֆիցիտ, բնակչության կենսամակարդակների տարբերություններ:

3. ԱՊՀ երկրներում շուկաները դեռևս լրիվ ձևավորված չեն, ինչն արգելակում է միասնական շուկայական հարաբերությունների ձևավորումը:

4. Ինտեգրացման գործընթացի վրա որոշակի հակազդեցություն ունեն առաջավոր տերությունները: Կան նաև օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններ՝ ազգային անջատողականություն, տնտեսական շահեր, տնտեսական և քաղաքական հակասություններ:

Աղյուսակ 2.4

ԱՊՀ երկրների միջև փոխադարձ առևտրի ծավալը, արտահանումը և ներմուծումն այլ երկրների հետ, 2010 թ. (մլն դոլար)[7]

Երկրներ	ԱՊՀ երկրների փոխադարձ առևտուրը		Այլ երկրների հետ	
	Արտահանում	Ներմուծում	Արտահանում	Ներմուծում
Հայաստան	122.8	275.9	564.2	972.4
Բելառուս	5202.7	7745.6	6440.3	3900.2
Ղազախստան	3089.8	5828.2	17370.8	6715.8
Ղրղզստան	213.8	470.9	273.8	295.5
Մոլդովա	393.4	635.4	381.3	928.5
Ռուսաստան	24438.3	13807.5	150223.9	54836.6
Վրաստան	270.8	650.9	328.8	959.8
Տաջիկստան	109.3	602.1	534.0	343.9
Ուկրաինա	7779.4	12587,9	17488.9	13428.5
Ադրբեջան	680.5	1059.9	1818.6	2159.5

1995 թ. կազմակերպվեց Ռուսաստան-Բելառուս-Ղազախստան-Ղրղզստան մաքսային միությունը, որը շատ օգնեց փոխադարձ առևտրի ռեժիմի կարգավորմանը: Այս երկրները 1997 թ. ընդունեցին մաքսային միասնական սակագներ:

1997 թ. ապրիլին կազմավորվեց Ռուսաստան-Բելառուս «Երկուսի միությունը»: Բելառուսի արտաքին առևտրի շրջանառության 50 տոկոսից ավելին կատարվում էր Ռուսաստանի հետ:

Համագործակցության երկրների ինտեգրացիոն զարգացման գործոն կարող է դառնալ անդրազգային կորպորացիաների ստեղծումը, ինչը նաև ինտեգրացիոն գործընթացի կարևոր օղակ է: 1998 թ. մարտին ԱՊՀ ղեկավարների խորհուրդը հաստատեց անդրազգային կորպորացիաների մասին Կոնվենցիան: 1998 թ. ապրիլին Ռուսաստանի ֆոնդային շուկաների, Ուկրաինայի ինվեստիցիոն բիզնեսի և Ղազախստանի արժեթղթերի շուկայի ազգային ընկերությունները ստորագրեցին հուշագիր «ԱՊՀ երկրների ֆոնդային շուկաների միություն» ստեղծելու մասին: 2000 թ. հոկտեմբերին պայմանագիր ստորագրվեց Եվրասիական տնտեսական ընկերություն հիմնելու մասին: Աստիճանաբար կարգավորվեց ԱՊՀ և միջազգային ինտեգրացիոն մյուս խմբավորումների համագործակցությունը: ԵՄ-ն ԱՊՀ երկրների հետ իրականացնում է խորհրդային հանրապետությունների շուկաների ձևավորման ՏԱՍԻՍ ծրագիրը:

Համագործակցության երկրների միջև ապրանքաշրջանառությունը կրճատվել է: Պատճառը համագործակցության թույլ զարգացումն է: ԱՊՀ երկրներ արտահանմամբ առաջնային դիրքում Ռուսաստանն է: Գերակշռում են պարենային, հումքային, տեքստիլ, վառելիքա-էներգետիկ ապրանքները: ՌԴ-ն ԱՊՀ երկրներին ֆինանսավորում է ***կոմերցիոն*** հիմունքներով: 2010 թ. ԱՊՀ երկրները ՌԴ-ին պարտք էին 6.6 մլրդ դոլար: Համեմատաբար դինամիկ զարգացում ունեն Ղազախստանի, Հայաստանի, Տաջիկստանի տնտեսությունները, որոնց ՀՆԱ տարեկան աճի տեմպերը կազմում են 8-10 տոկոս:

Վերջին շրջանում ստեղծվել են տարածքային հետևյալ միավորումները.

- Ռուսաստան, Բելառուս, Ղազախստան (Եվրասիական տնտեսական միություն)[8],
- Ուզբեկստան, Ղազախստան, Ղրղզստան, Տաջիկստան (Ասիական տնտեսական ընկերություն),
- Ուկրաինա, Մոլդովա, Վրաստան, Ադրբեջան:

[7] ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը, 2010 թ.:

[8] 2011 թ. նոյեմբերի 18-ին Կրեմլում ՌԴ Բելառուսի և Ղազախստանի նախագահները ստորագրեցին Եվրասիական տնտեսական միություն ստեղծելու փաստաթղթերը, որոնք են.

- Եվրասիական տնտեսական ինտեգրացիայի հռչակագիրը,
- Եվրասիական տնտեսական հանձնաժողովի պայմանագիրը,
- Հանձնաժողովի աշխատանքի կանոնակարգը:

ԳԼՈՒԽ 3
ԱՇԽԱՐՀԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ

3.1 Աշխարհի առաջատար զարգացած երկրները

Զարգացած շուկայական տնտեսությամբ երկրները ՀՏ մեջ ունեն առաջատար դիրք: Դրանք աշխարհի 28-30 պետություններն են, որոնք հիմնականում Եվրոպայի երկրներն են՝ բացի ԱՄՆ-ից, Կանադայից, Հարավային Կորեայից, Ճապոնիայից, զբաղեցնում են մայր ցամաքի 20-22, բնակչության 18-20, համաշխարհային ՀՆԱ-ի 55, արտահանման մոտ 70 տոկոսը: Առավել առաջնային են ***«Մեծ ութնյակի» անդամ երկրները*** (ԱՄՆ, Կանադա, Մեծ Բրիտանիա, Գերմանիա, Ֆրանսիա, Իտալիա, Ճապոնիա, Ռուսաստանի Դաշնություն[9]), որոնց բաժին է ընկնում համաշխարհային արդյունաբերական արտադրանքի 1/2-ը, գյուղատնտեսական արտադրանքի՝ 1/4-ը, իսկ ԱՄՆ-ին՝ «Մեծ ութնյակի» երկրների ՀՆԱ-ի 30 տոկոսը: Այս երկրներն իրարից տարբերվում են իրենց զարգացման մակարդակով, պատմական առանձնահատկություններով, տնտեսական հզորությամբ, թողարկած արտադրանքի ծավալներով, բնակչության թվով, իսկ մյուս երկրներից՝ պետական և մոնոպոլիստական կապիտալի ուժեղ զարգացումով: Ութնյակի երկրներին են պատկանում ՀՏ գիտատեխնիկական, քաղաքական, ռազմական որոշիչ դերերը:

Զարգացած երկրների մյուս ենթախմբերն ընդգրկում են Արևմտյան Եվրոպայի այն երկրները, որոնց բնորոշ են կապիտալի լայնամասշտաբ օգտագործումը, ինժեներատեխնիկական բարձրորակ կադրերը, արտադրողական ուժերի զարգացման մակարդակը, արտադրանքի արտահանման մեծ մասը: Հաջորդ ենթախումբը կազմում են ասիական նոր ինդուստրիալ երկրները՝ Կորեական Հանրապետությունը, Թայվանը, Սինգապուրը, Նոր Զելանդիան, Իսրայելը, ՀԱՀ-ը (Աֆրիկա):

Արդյունաբերական զարգացման երկրները ՄՏՀ-ում ստեղծում են փոխկախվածություն և տնտեսական ազատականացման ***բացություն***, այսինքն՝ արտաքին առևտրի (արտահանում+ներմուծում) շրջանառության հարաբերություն ՀՆԱ-ի նկատմամբ:

Կապիտալի շարժը կարևոր տեղ է գրավում հզոր երկրներում՝ ԱՄՆ-ում, Մեծ Բրիտանիայում, Ճապոնիայում: ԱՄՆ-ի և Ճապոնիայի միջև կապիտալի փոխադարձ հոսքերը տարեկան կազմում են 80 մլրդ դոլար (համաշխարհային հոսքերի 1/3-ը): Զարգացած երկրների կապիտալի արտահոսքի 11 տոկոսը կազմում են ***տնտեսական օգնություն՝ զարգացող երկրներին տրամադրել է 9-13 մլրդ դոլար (տարեկան): Այդ հարցում առաջատարներ են նաև ԱՄՆ-ը, Սկանդինավյան երկրները: Արտաքին առևտրում խոշոր ***արտահանողներ*** են ԱՄՆ-ը, Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, Նիդեռլանդները, ***ներմուծողներ***՝ Գերմանիան, Իտալիան, Ճապոնիան: Բոլոր պայմանները պահանջում են երկրների տնտեսական ռազմավարության ուժեղացում:

[9] Թեև Չինաստանը զարգացած երկրների 9-րդ անդամը չէ, բայց աշխարհի 4-րդ տերությունն է: 5 անգամ ավելի հզոր է, քան Կանադան, Իտալիան, ՌԴ-ը: Չինաստանի տարեկան ՀՆԱ և տնտեսական աճը կազմում է 11-12 տոկոս:

3.2 ԱՄՆ-ը համաշխարհային տնտեսությունում

ԱՄՆ-ը ՀՏ մեջ գերիշխող երկիր է: 2010 թ. համաշխարհային համախառն արտադրանքի 28.7 տոկոսը պատկանում էր ԱՄՆ-ին: Առանձին տնտեսագետների կարծիքով՝ ամերիկյան կապիտալն ավելի արդյունավետ է օգտագործվում, քան Գերմանիայինը և Ճապոնիայինը: ԱՄՆ տնտեսությունում տեխնիկան, տեխնոլոգիան, տեղեկատվությունն ապահովվում են ԳՏ բարձր մակարդակով: Տարեկան երկրի զարգացման ծախսերի 45 տոկոսը կազմում են ԳՏ աշխատանքները: Տնտեսական զարգացմանը նպաստում են ***աշխատանքի որակի բարձրացումը, գործազրկության կրճատումը***:

Համաշխարհային ավիակոսմիկական արդյունաբերության արտադրանքի վաճառքի 55 տոկոսը պատկանում է ԱՄՆ-ին, 3-ը՝ Գերմանիային, 2-ը՝ Ճապոնիային: Համակարգչային սարքավորումների վաճառքի 34 տոկոսը պատկանում է ԱՄՆ-ին, 27-ը՝ Ճապոնիային, 4-ը՝ Գերմանիային: ԱՄՆ-ում գործում են գյուղատնտեսական խոշոր արտադրողներ, որոնք արտադրում են եգիպտացորենի համաշխարհային ծավալի 1/3-ը, հացահատիկի 12, բամբակի 21, բուսական յուղերի 18, մսի 17 տոկոսը:

Կապիտալի կենտրոնացումն ուղղված է խոշոր ընկերությունների ստեղծմանը: Բանկային ոլորտի 50 ընկերությունների մոտ 12 հազար բանկերում կենտրոնացած է ակտիվների 1/3-ը: Պետությունը, որպես արտադրության միջոցների և ձեռնարկատիրության տեր, երկրի տնտեսության մեջ նշանակալի դեր չի խաղում: Պետական սեկտորի բաժինը ՀՆԱ-ի մեջ կազմում է 4 տոկոս, որտեղ զբաղված է աշխատուժի 14-15 տոկոսը: Աշխատուժի և կապիտալի հարաբերությունը պայմանավորված է աշխատուժի առաջարկով և պահանջարկով, իսկ աշխատանքի վճարումը՝ աշխատողի մասնագիտական մակարդակով: Աշխատողի իրավունքների պահպանման գործում մեծ դեր ունի արհմիությունը:

Ապրանքների և ծառայությունների գծով ԱՄՆ-ը համաշխարհային առևտրում գրավում է առաջին տեղը: Ավտոմեքենաների ներմուծումը կազմում է վաճառքի 30 տոկոսը: Հաստոցների, սարքավորումների վաճառքն աճել է 50, իսկ կոշկեղենի, կենցաղային, էլեկտրոնային և

այլ ապրանքներինը՝ 80 տոկոսով: ***Միջազգային կապիտալի*** շարժը մեծ մասամբ կապված է արտասահմանում ներդրումների հետ, որն արագ աճում է: Ուղղակի ինվեստիցիաների 50 տոկոսն ուղղված է ԵՄ երկրներին: ԱՄՆ-ի ազդեցության հիմնական ***գործոններն*** են.

- ԱՄՆ տնտեսության փոփոխությունը, շուկայի վերակառուցումը,
- գիտատար արտադրանքի խոշոր արտահանող լինելը,
- զարգացող և անցումային երկրներում կատարած ներդրումները և օգնությունները,
- երկրի աշխատուժի հզոր շուկան և ԳՏ նվաճումները,
- գյուղմթերքների խոշոր արտահանող լինելը (ապահովում է համաշխարհային արտահանման 35 տոկոսը):

Ունենալով զարգացած մեքենաշինություն (ապահովում է համաշխարհային արտահանման 20 տոկոսը)՝ ԱՄՆ-ը միաժամանակ ներմուծում է մեքենա-տեխնիկական սարքավորումներ Կանադայից, Գերմանիայից, Ճապոնիայից: Նաև ներմուծում է Մեքսիկայի ամբողջ արտահանման 90 տոկոսը, Մալայզիայի, Ֆիլիպինների, Բրազիլիայի և այլ երկրների արտահանման մեծ մասը: ԱՄՆ կապիտալի արտահանման շուկաներն են Կանադան, Մեքսիկան, Արևմտյան Եվրոպան, Հարավային Ամերիկան, Ինդոնեզիան, Կորեան և այլ երկրներ:

3.3 Ճապոնիան համաշխարհային տնտեսությունում

Ճապոնիան աշխարհի տնտեսապես զարգացած հզոր տերություններից է: Բնակչության թիվը կազմում է աշխարհի բնակչության 2.2 տոկոսը: Թողարկում է համաշխարհային համախառն արտադրանքի 14 տոկոսը: 1938 թ. այս ցուցանիշը կազմում էր 3 տոկոս: Շնորհիվ աշխատանքի բարձր արտադրողականության՝ աչքի է ընկնում տնտեսական աճի բարձր տեմպերով:

Ճապոնիայի տնտեսական կառուցվածքը տարբերվում է զարգացած այլ երկրների տնտեսություններից: Արտադրության 24 տոկոսը բաժին է ընկնում վերամշակող արդյունաբերությանը, 13 տոկոսը՝ շինարարությանը և մետալուրգիային: Եթե 1970-1980 թթ. կապիտալ ներդրումներում գերակշռում էին օտարերկրյա ներդրումները, ապա 1990-ական թթ. հետո օտարերկրյա կապիտալը կազմեց 0.3 տոկոս: Գիտահետազոտական ծախսերը կազմեցին ՀՆԱ-ի մոտ 3 տոկոսը, որը 2 անգամ գերազանցեց Գերմանիայի ծախսերին: Բարձր տեխնոլոգիաներին բաժին էր ընկնում ծախսերի 3.7 տոկոսը (Մեծ Բրիտանիայում այս թիվը կազմում էր 3.3, ԱՄՆ-ում՝ 3 տոկոս):

Գիտատար ծյուղերի արտադրությամբ Ճապոնիան զիջում է միայն ԱՄՆ-ին, իսկ վերամշակող արդյունաբերությամբ՝ Գերմանիային և Շվեյցարիային: Գյուղատնտեսության ոլորտում Ճապոնիան մնում է

աշխատատար երկիր՝ ցածր արտադրողականությամբ, բարձր ծախսերով:

Ճապոնիայի տնտեսության զարգացումը կատարվել է ***փուլերով***.

- տնտեսական և քաղաքական ռեֆորմ՝ 2-րդ համաշխարհային պատերազմից հետո,
- աշխատատար ծյուղերի զարգացում՝ 1960-1970-ական թթ.,
- տնտեսության զարգացման գիտական փուլ՝ 1970-ական թթ.-ից հետո:

Տնտեսական մոդելը մանր և միջին ընկերություններից խոշոր ընկերությունների կազմավորումն է:

Ճապոնիային հատուկ է պետական ***միասնական կառավարման ապարատը:*** Երկրում կիրառվում է համապետական, տարածքային, ծյուղային, ներֆիրմային պլանավորում:

Ճապոնիային բաժին է ընկնում արտաքին ուղղակի կապիտալ ներդրումների համաշխարհային ծավալի 7.2, արտահանման 6.2 տոկոսը, ինչով զիջում է միայն ԱՄՆ-ին և Գերմանիային: Արտասահմանում իրացումը կազմում է ՀՆԱ 10-14 տոկոսը: Առանձին արտադրանքների մեծ մասը արտահանվում է, մասնավորապես՝ ժամացույցների, մագնիտոֆոնների 90, դրամարկղային ապարատների 83, պատճենահանման սարքերի 77, մեքենաշինական արտադրանքի 25, գիտատար ծյուղերի արտադրանքի 38, նավերի 25.6, մարդատար ավտոմեքենաների 18.3, էլեկտրամեքենաշինության 17.5, պողպատի 17.4, կիսահաղորդիչների 16.3 տոկոսը:

Տնտեսական ռազմավարությունը հիմնվում է.

- էներգետիկ ռեսուրսների տնտեսման և կուտակման,
- արտադրանքի մրցունակության մակարդակի,
- գիտական հետազոտությունների և մշակումների արդյունավետության վրա:

Երկիրը մեծ ուշադրություն է դարձնում ***ավիացիոն և տիեզերական տեխնիկայի, ինտեգրալ սխեմաների, արդյունաբերական ռոբոտների, բժշկական էլեկտրոնային սարքավորումների, լրատվական համակարգերի, նոր մետաղների, ճշգրիտ մեքենաշինության, կենսատեխնոլոգիայի, դեղանյութերի, օպտիկական մանրաթելերի արտադրության վրա:*** Այս բոլորն իրականացվում է գիտության աննախադեպ զարգացման շնորհիվ:

Տնտեսության բոլոր ծյուղերում մեծ դեր ունեն անդրազգային մոնոպոլիաները (ԱԱՄ): Սինգապուրում, Ինդոնեզիայում Հարավարևելյան Ասիայի երկրներում, Ֆիլիպիններում մետալուրգիական գործարաններն աշխատում են Ճապոնիայի կապիտալով: ***Մեքենաշինությունը*** արդյունաբերության մեջ կազմում է 37 և արտահանման մեջ՝ 64 տոկոս (աշխարհում ամենաբարձրն է), մետաղահատ հաստոցները՝ համաշխարհային արտադրանքի 20, արդյունաբերական ռո-

բոտները՝ 40, լուսանկարչական ապարատները՝ 32 տոկոսը: Տարեկան թողարկվում է 11-12 մլն ավտոմեքենա (ԱՄՆ-ին հավասար), ինչը կազմում է ավտոմեքենաների համաշխարհային արտադրանքի 20 տոկոսը: Խոշոր մոնոպոլիաներ են «Տոյոտան», «Նիսանը», «Հոնդան», «Մազդան»:

Ճապոնիան աշխարհում առաջնակարգ դիրք է գրավում էլեկտրոնային հաշվողական տեխնիկայի և համակարգիչների, ռոբոտների, լրատվության և կապի միջոցների, ավտոմատ կառավարման սարքերի արտադրությամբ, տալիս է պլաստմասսայի համաշխարհային արտադրանքի 12-13 (15 մլն տոննա), սինթետիկ կաուչուկի 17 տոկոսը (1.6 մլն տոննա): Կարևոր նշանակություն ունեն տրիկոտաժի, կաշվի, հովհարների, անձրևանոցների, ապակու և այլ արտադրությունները:

Երկրի էներգետիկ ռեսուրսները կիսով չափ են բավարարում ***էներգետիկայի արտադրության*** պահանջները: Նավթավերամշակման գործարաններն աշխատում են ներկրվող նավթով, որը կազմում է տարեկան 250-300 մլն տոննա և ներկրվում է հիմնականում Պարսից ծոցի ավազանի երկրներից, Իրանից, Ինդոնեզիայից: Էլեկտրաէներգիայի արտադրությամբ Ճապոնիան զիջում է միայն ԱՄՆ-ին և Չինաստանին:

Ճապոնիան տարեկան արտադրում է 110-115 մլն տոննա պողպատ և 80-85 մլն տոննա չուգուն (երկրորդը՝ Չինաստանից հետո), արտահանում՝ 20-30 մլն տոննա պողպատ և գլանվածք: Ավստրալիայից, Հնդկաստանից, Բրազիլիայից, Չիլիից, Պերուից տարեկան ներկրում է մոտ 130 մլն տոննա երկաթի հանքանյութ, մետաղի ջարդոն:

Գյուղատնտեսությունը բավարարում է երկրի բնակչության սպառման 70 տոկոսը: Մշակվող ցանքատարածություններն անցնում են 6 մլն հեկտարից: Առանձին տարածքներ մշակվում են տարեկան 2-3 անգամ: Մեկ տրակտորին բաժին է ընկնում 3 հա վարելահող (ԱՄՆ-ում՝ 33, Ավստրալիայում՝ 120 հա): Բրնձի բերքատվությունն ամենաբարձրերից է՝ 54 գ/հա, տարեկան մոտ 15 մլն տոննա: Տարեկան ներմուծվում է 30 մլն տոննա հացահատիկ: Աշխարհում առաջնային տեղ է գրավում մանդարինի բերքատվությամբ: Մսատու անասնապահությունից առաջնային են խոզաբուծությունը, թռչնաբուծությունը:

Սննդարդյունաբերության մեջ կարևոր դեր ունեն մթերքների վերամշակումը, պահածոների, ծխախոտի, շաքարի, գարեջրի արտադրությունը, կանաչ թեյի, սոյայի, ցիտրուսների մշակումը: Ձկնորսությունը տարեկան կազմում է 6-8 մլն տոննա:

Ճապոնիայի արտաքին առևտրային հաշվեկշիռը դրական է, բայց տարբերվում է ներկրման և արտահանման կառուցվածքը: Ներկրման 70 տոկոսը բաժին է ընկնում հումքին, վառելիքին: Ներքին առևտուրը զարգացած է: Եթե Ճապոնիայում 10 հազար բնակչի հաշվով մանրածախ առևտրով զբաղված են 650 մարդ, ապա ԱՄՆ-ում այդ թիվը կազմում է 590, Գերմանիայում՝ 410, Մեծ Բրիտանիայում՝ 400, Ֆրանսիայում՝ 350 մարդ:

Առաջատար դեր ունի ***ֆինանսավարկային*** ոլորտը: Աշխարհի 15 խոշոր բանկերից 3-ը Ճապոնիայում են: Երկիրը համարվում է նաև խոշոր օգնություն տրամադրող: Օգնությունների 60 տոկոսը տրամադրվում է Չինաստանին, Հնդկաստանին, Ինդոնեզիային, Ֆիլիպիններին, նաև Աֆրիկայի, Լատինական Ամերիկայի երկրներին: Օգնությունների 12 տոկոսը կազմում է տեխնիկական աջակցությունը:

Ճապոնիայի ***ծառայությունների*** ոլորտն ունի զարգացման բարձր մակարդակ: Նրանում զբաղված են ակտիվ բնակչության 2/3-ը, իսկ ՀՆԱ-ում նրա բաժինը կազմում է 70 տոկոս: Տարեկան մատուցվում է ավելի քան 3.2 տրլն դոլարի ծառայություն: Զբոսաշրջությունը մի քանի միլիոն մարդու ապահովում է աշխատանքով: Երկիր են գալիս տարին 6-7 մլն զբոսաշրջիկ՝ բերելով 11-12 մլրդ դոլար եկամուտ:

Տրանսպորտը հասել է զարգացման բարձր աստիճանի (բացի գետային և խողովակային փոխադրումներից): Ներքին փոխադրումների զգալի մասը կատարվում է մերձափնյա ծովային նավարկությամբ: Դատարկ ուղերթներից խուսափելու համար օգտագործվում են կոմբինացված նավատեսակներ:

Օդային տրանսպորտի փոխադրումները հիմնականում կատարում են Հանեդա օդանավակայանը՝ տարեկան 40, Նարետան՝ 20, Տոկիոյի և Օսակայի օդանավակայանները՝ 32 մլն ուղևորի:

Երկաթուղիների երկարությունը 28 հազար կմ է, որի 40 տոկոսը էլեկտրիֆիկացված է և հռչակված է արագընթացով (200-250 կմ/ժ):

Ավտոմայրուղիների երկարությունը 1150 հազար կմ է (աշխարհում գրավում է 5-րդ տեղը):

Խողովակաշարային փոխադրումները թույլ են զարգացած, քանի որ ներկրվող նավթն ու գազը հասնում են նավահանգստային քաղաքներ և վերամշակվում:

Յուրահատուկ զարգացում ունեն ***կրթությունը, գիտությունը, առողջապահությունը:*** Գրագետ է բնակչության 99 տոկոսը: Երկիրն ունի մոտ 500 համալսարան: Առողջապահության ծախսերը կազմում են ՀՆԱ 8-9 տոկոսը:

3.4 Գերմանիայի Դաշնությունը համաշխարհային տնտեսությունում

Գերմանիան Արևմտյան Եվրոպայի խոշոր երկրներից է: Տարածությունը 357 հազար քառ. կմ է, բնակչությունը՝ 82 մլն մարդ: 1990 թ. երկու մասերի միավորումով երկիրն ավելի հզորացավ: Համախառն արտադրանքը կազմում է ԱՄՆ-ի 22, Ճապոնիայի 60 տոկոսը: ՀՆԱ միջին տարեկան աճը բարձր չէ՝ 1.5 տոկոս:

Գերմանիայի հիմնական կապիտալ ներդրումները 3 անգամ գիջում են ԵՄ-ին և ԱՄՆ-ին: Բնառեսուրսային ներուժը փոքր է: Երկիրն ունի հանքային ռեսուրսների պահանջ: Վառելիքային ռեսուրսներից ունի ածուխ, նավթ, բնական գազ: Տարածքի 30 տոկոսն ***անտառներ են:***

Գյուղատնտեսության զարգացման բնական պայմանները բարենպաստ են: Տարածքն ունի ***հանգստի և զբոսաշրջության*** ռեսուրսներ:

Գերմանիան աշխարհում առաջին երկիրն է, որ 70-ական թթ. ունեցավ ***բնակչության բնական*** աճի անկում և զգում է աշխատուժի պակաս, ինչը լրացվում է օտարերկրացիների ներհոսքով: Գերմանիան քաղաքակիրթ երկիր է, ունի գիտություն, տեխնիկա, մշակույթ:

Տնտեսական քաղաքականության հիմնական ուղղություններն են.

- կապիտալ ներդրումների աճը հարկերի փոփոխման միջոցով,
- պետության ձեռնարկատիրական գործառույթների կրճատումը, ինչը չհանգեցրեց պետական ծախսերի կրճատման ՀՆԱ-ի մեջ (1987 թ.՝ 47, 1992 թ.՝ 50.5, 1998 թ.՝ 46.9 տոկոս),
- պետական պարտքերի աճի կանխումը,
- աշխատուժի և սոցապահովման ծախսերի կրճատումը:

Փոփոխվում է ՀՆԱ կառուցվածքը, կրճատվում՝ նյութական արտադրությունը, ավելանում՝ ծառայության բաժինը: Կրճատվում են սև մետալուրգիայի, մեքենաշինության, նավաշինության, տեքստիլ արդյունաբերության, աճում՝ ավիակոսմիկական արդյունաբերության, էլեկտրատեխնիկական սարքավորումների, ավտոմոբիլաշինության ծավալները:

Գերմանիայի տնտեսությունն աշխարհում երրորդն է ԱՄՆ-ից և Ճապոնիայից հետո, առաջինը՝ Եվրոպայում: Գերմանիան տալիս է համաշխարհային արդյունաբերական արտադրանքի 9, արտահանման 12, ներմուծման 10 տոկոսը: Վերամշակման արդյունաբերության 100 խոշոր ընկերություններում կենտրոնացած են ընդհանուր շրջանառության 60, զբաղվածների 50 տոկոսը: Արտահանման 55 տոկոսը բաժին է ընկնում ավտոմոբիլաշինությանը, մեքենաշինությանը, քիմիական և էլեկտրատեխնիկական ապրանքներին: Երկիրը գյուղատնտեսական արտադրանքի արտահանումով աշխարհում չորրորդն է ԱՄՆ-ից, Ֆրանսիայից, Նիդեռլանդներից հետո:

Արտասահմանյան ուղղակի կապիտալ ներդրումների գծով Գերմանիան երրորդն է ԱՄՆ-ից և Մեծ Բրիտանիայից հետո (8.8 տոկոս): Ապրանքների և ծառայությունների թողարկման մեջ արտասահմանյան արտադրանքը կազմում է 27 տոկոս: Գերմանիան համարվում է ԵՄ առաջատար երկիրը և ապահովում է Միության բյուջեի 26.4 տոկոսը (Ֆրանսիան՝ 17.2, Իտալիան՝ 13, Մեծ Բրիտանիան՝ 13.5 տոկոս):

Ներկայում Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը (ԳԴՀ) Եվրոպայի ամենահզոր պետությունն է՝ «Մեծ ութնյակից» մեկը: Արդյունաբերության մեջ խիստ մեծացել է վերամշակող ճյուղերի դերը և նվազել՝ արդյունահանող ճյուղերի բաժինը: Արտաքին առևտրի կառուցվածքում մեծ է ծանր արդյունաբերության, մասնավորապես՝ վերամշակող ճյուղերի դերը: Գերմանիան ավելի շատ մեքենաներ է արտահանում, քան Ֆրանսիան, Մեծ Բրիտանիան, Իտալիան միասին:

ԳԴՀ-ը մեքենաշինական արտադրանքի արտահանմամբ աշխարհում գրավում է առաջին տեղը:

ԳԴՀ տարածքը հագեցած է հաղորդակցության ուղիների տարբեր տեսակներով: Տրանսպորտային խոշոր հանգույցներ են Բեռլինը, Համբուրգը, Մայնի Ֆրանկֆուրտը, Քյոլնը, Հաննովերը: ԳԴՀ տարեկան այցելում են 15 մլն օտարերկրյա զբոսաշրջիկներ:

Գերմանիան արտաքին տնտեսական կապերի մեջ է աշխարհի բոլոր երկրների հետ: Արտաքին առևտրի 3/4-ը բաժին է ընկնում զարգացած երկրներին՝ ԵՄ անդամ երկրներին, ԱՄՆ-ին, Ճապոնիային և այլն: Ներմուծում է գլխավորապես հումք, պարենամթերքի որոշ տեսակներ:

3.5 Ֆրանսիան համաշխարհային տնտեսությունում

Ֆրանսիան «Մեծ ութնյակի» առաջատար պետություններից է: Տարածությամբ Եվրոպայի երկրորդ երկիրն է Ուկրաինայից հետո (552 հազար քառ. կմ), բնակչությունը կազմում է մոտ 60 մլն մարդ: Տնտեսության մեջ առաջին լուրջ տեղաշարժերը կատարվել են 19-րդ դարի կեսերին, արդյունաբերության հեղաշրջման շնորհիվ, երբ սկսեցին զարգանալ արդյունահանող և վերամշակող բազմաթիվ ճյուղեր: Արտադրության ներդրումներն աճեցին 2-րդ համաշխարհային պատերազմից հետո: Երկրում հիմնական սեփականատերը պետությունն է, որին պատկանում է արդյունաբերական արտադրանքի 25 տոկոսը: Պետության ձեռքում են նաև էլեկտրակայանները, ածխահանքերը, երկաթուղիները: Պետական բանկերն ապահովում են վարկային գործառնությունների 3/4-ը:

Բնական պայմանները բարենպաստ են: Բավարար են հանքային ռեսուրսները: Երկիրն ապահովված է երկաթի, բոքսիտների, աղի, ուրանի պաշարներով: Անտառները կազմում են երկրի տարածքի 1/4-ը: Տարածքի 32 տոկոսը վարելահողեր են, 23-ը՝ արտեր, արոտավայրեր, 3.5-ը՝ այգիներ: Բուսաբուծությունը բազմաճյուղ է: Ֆրանսիան համաշխարհային ճանաչում ունի ***թեթև արդյունաբերության*** մեջ (գործվածք, հագուստ, կոշկեղեն, կոսմետիկական արտադրանք, ոսկերչական զարդեր և այլն):

Արդյունաբերության գլխավոր ճյուղերն են մետաղածուլությունը, մեքենաշինությունը, քիմիական, թեթև, սննդի արդյունաբերությունները, նավթամշակման ճյուղերը: Ֆրանսիայի տնտեսությունում գլխավոր դերակատարում ունեն նավթային, ավտոմոբիլաշինության, ավիացիոն, էլեկտրատեխնիկական, էլեկտրոնային, ալյումինի, ռետինատեխնիկական մոնոպոլիաները:

Էլեկտրաէներգիայի արտադրությամբ Ֆրանսիան զիջում է միայն Գերմանիային: Էլեկտրաէներգիայի արտադրությունը 2009 թ. կազմել է 540 մլրդ կվտ/ժ: ԱԷԿ-ի արտադրած էներգիան կազմում է ամբողջ էներգիայի 72 տոկոսը (աշխարհում առաջին տեղում է): Ջրային էներ-

գիան կազմում է 20, ՋԷԿ-ի արտադրածը՝ 8 տոկոս: Էներգետիկայի հումքը քարածուխն է, ներմուծվող նավթը, գազը: Երկրում առկա է պահանջվող գազի 2/3-ը:

Մեքենաշինությունը Ֆրանսիայում արդյունաբերության առաջատար ճյուղն է և տալիս է արդյունաբերական արտադրանքի 1/3-ը: Միջազգային շուկայում զգալի դիրք են գրավում ֆրանսիական ավտոմեքենաները, ինքնաթիռները, էլեկտրատեխնիկական, գյուղտեխնիկական և այլ արտադրանքները, որոնք արտահանվում են տասնյակ երկրներ: Ֆրանսիան արտահանման գծով չորրորդն է աշխարհում՝ ԱՄՆ-ից, Գերմանիայից, Ճապոնիայից, հետո:

Բազմատեսակ խոշորամասշտաբ արտադրանքներով աչքի է ընկնում ***սննդի արդյունաբերությունը:*** Ֆրանսիան աշխարհում առաջին տեղն է գրավում շամպայն գինիների, կոնյակի, պանրի, կաթնաանասնապահական մթերքների արտադրությամբ, ինչպես նաև շաքարի, պահածոների արտադրությամբ ու արտահանմամբ: Հարուստ է ցիտրուսներով, ձիթապտղով, ծաղկամշակմամբ: Ֆրանսիան Արևմտյան Եվրոպայի գյուղատնտեսական մթերքների խոշորագույն արտադրողն ու արտահանողն է:

Ֆրանսիան Եվրոպայում առաջին տեղում է ավտոճանապարհների երկարությամբ, զարգացած են ավտոտրանսպորտը, ներքին ջրային ցանցը, ծովային փոխադրումները, օդային թռիչքները: Օդային փոխադրումները կազմում են 60 մլն մարդ տարեկան: Երկրում հաշվվում են 26 մլն մարդատար ավտոմեքենաներ: Երկիր տարեկան այցելում է շուրջ 40 մլն զբոսաշրջիկ, ունի բավարար չափով հանգստի և զբոսաշրջության ռեսուրսներ (միջերկրյա լողափեր, Ալպերի լեռնային առողջարաններ, պատմաճարտարագիտական հուշարձաններ, թանգարաններ, այլ տեսարժան վայրեր), որոնք բերում են մեծ եկամուտներ:

Արտաքին տնտեսական կապերով Ֆրանսիան աշխարհում 4-րդ տեղում է ԱՄՆ-ից, ԳԴՀ-ից, Ճապոնիայից հետո:

ԳԴՀ-ի, Մեծ Բրիտանիայի համեմատ Ֆրանսիան ավելի քիչ պատրաստի արտադրանք է թողարկում: Արտաքին առևտրի շրջանառության 1/2-ը կատարվում է ԵՄ անդամ և նոր զարգացող երկրների հետ: Բոլոր հիմնական երկաթուղագծերը, ավտոմայրուղիները, խողովակաշարերը, օդային և ներքին ջրային ուղիները հատվում են մայրաքաղաքում: Բեռնափոխադրումների հիմնական մասը կատարվում է երկաթուղային և ավտոմոբիլային տրանսպորտով: Երկրում հաշվվում է մոտ 30 մլն մարդատար ավտոմեքենա: Ներքին ջրային ուղիների երկարությունը 9000 կմ է (հիմնական մասը կազմում են Սենա գետի ջրային ուղիները): Ծովային տրանսպորտը հիմնականում ներմուծման և արտահանման համար է ու իր տոննաժով 2 անգամ գիջում է Մեծ Բրիտանիային:

3.6 Մեծ Բրիտանիան համաշխարհային տնտեսությունում

Մեծ Բրիտանիան Եվրոպայի խոշոր պետություններից է: Տարածությունը 244 հազար քառ. կմ է, բնակչությունը՝ մոտ 60 մլն մարդ: Նրա կազմի մեջ մտնում են Անգլիան, Շոտլանդիան, Հյուսիսային Իռլանդիան, Ուելսը: Մեծ Բրիտանիան «Մեծ ութնյակի» երկրների մեջ գրավում է 6-րդ տեղը և 5 անգամ գիջում է ԱՄՆ-ին: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո խիստ մեծացել է արդյունաբերությունը, համեմատաբար պակասել՝ գյուղատնտեսության տեսակարար կշիռը: Արդյունաբերության մեջ աճել են վերամշակող ճյուղերը: Բարձր մակարդակով, արտադրողականությամբ և որակով աչքի են ընկնում մեքենաշինությունը, քիմիական արդյունաբերությունը, նորագույն ճյուղերը, վերամշակող արդյունաբերությունը: Մեքենաշինության առաջատար ճյուղերն են ավիահրթիռաշինությունը, ինքնաթիռների, ավտոմոբիլների, շարժիչների, էլեկտրատեխնիկական արտադրանքների թողարկումը, նավաշինությունը և այլն: Երկրի բնառեսուրսային ներուժը կազմում են ածուխը, նավթը, գազը, որոնցով բավարարվում են սեփական պահանջները: Կան երկաթահանքեր, քիչ գունավոր մետաղներ, հետևաբար երկիրը հանքահումքային ապրանքներ ներմուծող է:

Էներգետիկայի 65 տոկոսը ստացվում է ՋԷԿ-ի և ԱԷԿ-ի արտադրած էլեկտրահոսանքից, որով 10 անգամ գիջում է ԱՄՆ-ին, 2,5 անգամ՝ Ճապոնիային, 2 անգամ՝ Գերմանիային, նաև՝ Ֆրանսիային:

Գյուղատնտեսության գծով Մեծ Բրիտանիան աշխարհի առաջատար երկրների թվում է, բայց ապահովված չէ կերային բազայով, ուստի ներմուծում է: Գյուղատնտեսության գլխավոր ճյուղը բարձր ***ապրանքային*** անասնապահությունն է (արտադրության 3/4-ը): Զարգացած են խոզաբուծությունը, ոչխարաբուծությունը, նաև ձկնարդյունաբերությունը: Աճեցնում են ցորեն, շաքարի ճակնդեղ, մրգեր, կարտոֆիլ: Մեծ Բրիտանիան աղքատ է անտառային տարածքներով (երկրի տարածքի 8 տոկոսը) և մեծապես կախված է արտաքին տնտեսական կապերից: ***Ներմուծման*** մոտ 90 տոկոսը բաժին է ընկնում հումքին, կիսաֆաբրիկատներին և պարենամթերքին: ***Արտահանման*** մեջ գերակշռում են մեքենասարքավորումները, նավաշինական սարքավորումները, երկաթուղային միջոցները, լայն սպառման ապրանքները: Մեծ Բրիտանիան ունի ***որակյալ աշխատուժ,*** գիտական բարձր ներուժ:

Տրանսպորտային ներքին փոխադրումների 2/3-ը բաժին է ընկնում ավտոտրանսպորտին: Ավտոճանապարհների խտությունը 100 քառ. կմ վրա կազմում է 160 կմ (աշխարհում առաջիններից մեկը): Ծովային տրանսպորտով առաջատար է, բայց գիջում է շատ առաջատար երկրների: Լոնդոնն օդային տրանսպորտի աշխարհի խոշորագույն հանգույցն է, տարեկան փոխադրում է ավելի քան 60 մլն ուղևորների:

Մեծ Բրիտանիան ***կապիտալ*** արտահանող խոշոր երկիր է: Բանկային մասնաճյուղեր ունի աշխարհի տասնյակ երկրներում: Հայաստանում գործում է «Միդլենդ Արմենիա» բանկը:

3.7 Իտալիան համաշխարհային տնտեսությունում

Իտալիան «Մեծ ութնյակի» առաջատար երկրներից է: Տարածությունը 301 հազար քառ. կմ է, բնակչությունը՝ 60 մլն մարդ: Երկրի կազմում կան երկու քաղաք-պետություններ՝ Վատիկանը և Սան Մարինոն: Արդյունաբերական արտադրանքի ծավալով ութնյակի երկրների մեջ յոթերորդն է, կենցաղային սառնարանների, մոտոցիկլետների արտադրությամբ՝ երրորդն աշխարհում ԱՄՆ-ից, Ճապոնիայից հետո: Իտալիան տալիս է ԱՄՆ ՀՆԱ 1/5-ը, Ճապոնիայի ՀՆԱ-ի 1/3-ը, Գերմանիայի ՀՆԱ 70 տոկոսը, Կանադային գերազանցում է 2 անգամ: Մեքենաշինությունը երկրի առաջատար ճյուղն է: Թողարկվում են մարդատար մեքենաներ, կենցաղային էլեկտրասարքավորումներ, հաշվիչ մեքենաներ, գրամեքենաներ, տարբեր տոննաժի նավեր: Բարդ և ճշգրիտ հաստոցների, գյուղատնտեսական մեքենաների արտադրությամբ Իտալիան հետ է մնում ԱՄՆ-ից, ԳԴՀ-ից, Անգլիայից, Ֆրանսիայից, Ռուսաստանից: Քիմիական արդյունաբերությամբ զիջում է միայն Ճապոնիային: Զարգացած է նավթաքիմիական, պլաստմասսաների, սինթետիկ մանրաթելերի արտադրությունը: Ճանաչում ունի սպիտակ մարմարով, շինանյութերով, կոշկեղենի և կարի արտադրանքով: Արդյունաբերության զարգացման բնառեսուրսային բազան աղքատ է: Պակաս են հանքային հանածոները: Երկիրը համարվում է բնակչության ցածր աճ ունեցող տարածք:

Գյուղատնտեսությունը զարգացած չէ, քանի որ ունի մանր, տրոհված տնտեսություններ, սակայն առաջնային տեղ է գրավում բրնձի, շաքարի ճակնդեղի, խաղողի, ձիթենու, նուշի, ցիտրուսների գծով: Բնակչության մեկ շնչին բաժին է ընկնում 0.2 հա հողատարածք:

Էներգետիկ բազան ջրաէներգառեսուրսներն են: 80 տոկոսը բաժին է ընկնում ՋԷԿ-ին, ունի 6 ԱԷԿ: Տարածքի 20 տոկոսն անտառ է:

Սննդի ճյուղերից են կաթնային, շաքարի, ծխախոտի, մակարոնի, գինիների և այլնի արտադրությունը, ձկնարդյունաբերությունը:

Իտալիան ունի ***հանգստի, զբոսաշրջության*** ռեսուրսներ, սպասարկման և ծառայությունների ցանց, սպասարկման բարձր մակարդակ, համարվում է վերածննդի երկիր, քաղաքակրթության կենտրոն, մարդկությանը տվել է մշակութային գանձեր:

Ներմուծման մեջ գերակշռում են վառելիքը, նավթը, ածուխը, գազը, արդյունաբերական հումքը, մետաղը, բամբակը, մեքենաները, պարենամթերքը: ***Արտահանման*** մեջ գերակշռողը պատրաստի արտադրանքն է՝ մեքենաներ, սարքավորումներ, գործվածք, կոշկեղեն, մրգեր, մակարոնեղեն: Արտաքին կապերում մեծացել են ԳՏ նվաճումները, արտադրական կապերը, միջազգային ծառայությունները, կապիտալի արտահանումը:

Տրանսպորտի հիմնական մասը կազմում են երկաթուղին և ավտոփոխադրումը: Ծովային տրանսպորտին բաժին է ընկնում արտաքին առևտրի 80 տոկոսը: Օդային տրանսպորտի հիմնական ուղևորաշրջանառությունը զբոսաշրջությունն է:

3.8 Կանադան համաշխարհային տնտեսությունում

Կանադան «Մեծ ութնյակի» անդամ երկրներից է: Ընդհանուր արդյունաբերության ծավալով ութնյակում զբաղեցնում է ոչ առաջատար դիրք:

Կանադայի տնտեսությունը 2009-2010 թթ. վերամշակման, արտադրության սեկտորներում ունեցել է աճի անկում: 2009 թ. արտադրանքի աճի ծավալը պակասել է միջինը 17,4 տոկոսով (ամենամեծ անկումը վերջին տասնամյակում): Արտադրանքի թողարկումը կրճատվել է 18 ճյուղերում (21-ից): Ամենախորն անկումը գրանցվել է գունավոր և սև մետալուրգիայի, նավթաքիմիայի, էլեկտրատեխնիկական սարքավորումների արտադրության, ավտոմեքենաների, պլաստմասսայի արտադրության և դրանց արտադրանքների, փայտամշակման արդյունաբերության ոլորտներում: 2010 թ. այդ ճյուղերում արտադրանքների վաճառքի ծավալը խիստ նվազել է, և դեկտեմբերին վերամշակող սեկտորների վաճառքի ընդհանուր ծավալը կազմել է մինչ ճգնաժամի ցուցանիշի 70 տոկոսը:

2009 թ. օգոստոսին գործազուրկների թիվը տնտեսական ակտիվ բնակչության մեջ աստիճանաբար պակասել է: 2009 թ. ընթացքում գործազրկության մակարդակը կազմել է 8.4, 2010 թ.՝ 8 տոկոս, իսկ 2011 թ. սկզբին հասել է 7.6 տոկոսի: Ըստ Կանադայի Վիճակագրական վարչության տվյալների՝ նոր աշխատատեղերի 2/3-ը ստեղծվել է հասարակական սեկտորում, և, ըստ ենթադրությունների, Կանադայի գործազուրկների մակարդակը 2012 թ. կլինի 7.2-7.4 տոկոս:

Կանադան ունի պարենային ինքնապահովման բարձր մակարդակ: Երկրի գյուղատնտեսությունը չի տուժել բնակլիմայական աղետներից, որոնցից տուժել են հացարտադրող և գյուղատնտեսական արտադրանք մշակող շատ երկրներ (Ավստրալիա, ՌԴ, Ուկրաինա, Հնդկաստան, Նոր Զելանդիա):

1995 թ.-ից Կանադան իրականացրել է պետական պարտքերի մարում և մինչև 2000 թ. այդ նպատակով ամեն տարի ծախսել է ՀՆԱ 0.2 տոկոսը: Դրա արդյունքում երկրի ֆեդերալ պարտքը ՀՆԱ 64 տոկոսից 2008 թ. հասել է 30 տոկոսի:

Կանադան ***արդյունաբերական*** զարգացած երկիր է: Օնտարիան և Քվեբեկն արտադրում են ամբողջ արդյունաբերական արտադրանքի 75 տոկոսը, իսկ Տորոնտոն և Մոնրեալը համարվում են երկրի արդյու-

նաբերության՝ վերամշակման հիմնական կենտրոնները: Հիմնական արտադրանքն են ավտոմեքենաները՝ բեռնատարներ, ավտո և ավիացիոն պահեստամասեր, որոնք մտնում են համախառն շուկայական արժեքի արտադրանքների մեջ: Բայց Կանադան չունի ավտոմեքենաների և բեռնատարների արտադրության ազգային ձեռնարկություններ, հետևաբար Կանադայի մեքենաներն արտադրվում են ամերիկյան և ճապոնական ավտոձեռնարկություններում, որոնք հիմնականում տեղաբաշխված են Օնտարիայում, բացի Քվեբեկում իրականացվող շվեդական Volvo և ամերիկյան Paccar մեքենաների արտադրություններից:

Հանքարդյունաբերությունը Կանադայում բազմազան է: Կանադան համարվում է ալյումինի, պղնձի, երկաթի, նիկելի, ոսկու, ուրանի և ցինկի խոշոր արտադրող: Օնտարիայում են գտնվում ալյումինի, պղնձի, նիկելի, արծաթի, ցինկի և տիտանի խոշոր պաշարները: Սակայն բնական հիմնական ռեսուրսը նավթը և գազն են:

Տորոնտոն և Մոնրեալը Կանադայի գլխավոր ***ֆինանսական կենտրոններն*** են: Տորոնտոյում է գտնվում երկրի գլխավոր ֆոնդային բորսան: Իր ակտիվությամբ երկրորդն է Ամերիկայում և վեցերորդը՝ աշխարհում: Մոնրեալում և Վանկուվերում նույնպես կան ֆոնդային բորսաներ, բայց ոչ խոշոր:

Կանադան ԱՄՆ խոշոր ***առևտրային ընկերն*** է: Երկու երկրների միջև օրական առևտուրը կազմում է 1.4 մլրդ կանադական դոլար, որը հավասար է ԱՄՆ-Լատինական Ամերիկայի երկրների առևտրին: Կանադան ԱՄՆ սահմանի ամենամոտ պետությունն է և համարվում է ԱՄՆ սպառման հիմնական մատակարարը: Արտադրում է աշխարհի սոսնձանյութի 78 տոկոսը հիմնականում ԱՄՆ-ի համար: Երկկողմանի առևտուրն ավելացել է 1994 թ.-ից, երբ գործողության մեջ է մտել ***ՀԱՓԹԱ***-ն և փոխարինել 1989 թ. պայմանագրին: Դրանից հետո Կանադայի միջազգային առևտուրն ավելացել է 40 տոկոսով: ***ՀԱՓԹԱ***-ն Կանադա-ԱՄՆ-Մեքսիկա երկրների ազատ առևտրի համագործակցությունն է գյուղատնտեսության, ծառայությունների, էլեկտրաէներգետիկայի, ֆինանսական և ինվեստիցիաների ոլորտում համագործակցության 440 մլն բնակչության համար:

Կանադան համարվում է աշխարհում ***գյուղատնտեսական*** արտադրանքի խոշոր մատակարար: Տարածքի 40 տոկոսն անտառածածկ է, ինչը նպաստում է անտառանյութի արտահանմանը: Թուղթ արտահանող առաջատար երկիր է:

ԱՄՆ-ի և Կանադայի միջև առևտրային հարաբերություններն ունեն որոշակի առանձնահատկություններ:

1. Արտահանման և ներմուծման գերակշռող մասը մթերքներ են՝ արտադրված Կանադայում ամերիկյան ընկերությունների կողմից կամ Կանադայում՝ ընկերությունների միջև:

2. Կանադայի արդյունաբերությունը որոշակի աստիճանում կարելի է դիտարկել որպես Ամերիկայի արդյունաբերության բնական շարունակություն:

Ինտեգրացիոն մատակարարումները ծախսում են նաև վառելիք՝ նավթ, որը մատակարարում են ԱՄՆ արևելյան շրջանները՝ տեղաբաշխված սահմանի մոտ: Տարածքային այսպիսի մասնագիտացումը երկու կողմերին էլ ձեռնտու է:

Զբոսաշրջությունը Կանադայի եկամտի կարևոր աղբյուրն է: Օտարերկրյա զբոսաշրջիկների թվով Կանադան 5-րդն է և զիջում է Ֆրանսիային, Իսպանիային, ԱՄՆ-ին, Իտալիային: Զբոսաշրջության հիմնական կենտրոններն են Տորոնտոն, Մոնրեալը և Վանկուվերը:

Երկաթուղային ցանցը Կանադայում հաշվարկվում է 80 հազար կմ: Այս ցանցը չորրորդն է աշխարհում ԱՄՆ-ից, Ռուսաստանից և Չինաստանից հետո: Զարգացած են օդային և ջրային տրանսպորտի միջոցները՝ կապված երկրի աշխարհագրական դիրքի հետ:

3.9 Ռուսաստանի Դաշնությունը համաշխարհային տնտեսությունում

Ռուսաստանի Դաշնությունը (ՌԴ) խոշոր տերություն է, որին բաժին է ընկնում աշխարհի տարածքի 17.07 մլն քառ. կմ-ը և հանքային ռեսուրսների 20 տոկոսը: ՌԴ-ը «Մեծ ութնյակի» և զարգացած երկրների անդամ է, հզոր ներուժ ունեցող պետություն: 20-րդ դարում ՌԴ-ի տնտեսությունն ունեցել է խոշոր ձեռքբերումներ: Ներկա փուլում Ռուսաստանը հզոր ինդուստրիալ-ագրարային երկիր է՝ բնակչության ոչ բարձր կենսամակարդակով: Վճռական դեր է խաղում տարածքային, բնառեսուրսային, տնտեսաաշխարհագրական դիրքը:

ՌԴ ***արդյունաբերությունն*** արտադրության առաջատար ճյուղն է, որն ունի բարդ կառուցվածք և որին բաժին է ընկնում ՀՆԱ 35 տոկոսը: ՌԴ-ը տալիս է համաշխարհային արդյունաբերական արտադրանքի 6-7 տոկոսը: Տնտեսությունն ամբողջովին հիմնվում է սեփական ***վառելիքաէներգետիկ*** պաշարների վրա, որոնց բազայի վրա ձևավորվում են խոշոր տարածքային-արտադրական համալիրներ:

Էլեկտրառեսուրսների կառուցվածքում առաջնայինը բնական գազն է (50 տոկոս), այնուհետև՝ նավթն ու ածուխը: ***Բնական գազի*** պաշարներով և հանույթով ՌԴ-ն աշխարհում առաջինն է՝ 650 մլրդ խմ (համաշխարհային գազի 25 տոկոսը): Հանույթն իրականացնում են Արևմտասիբիրյան, Մերձվոլգյան շրջաններում, Տյումենի, Սարատովի, Թաթարստանի տարածքներում և այլ վայրերում: Սպառողներին հասցնելու համար կառուցվել են 150 հազար կմ երկարությամբ գազամուղներ: Ռուսաստանը բնական գազ արտահանող առաջատար երկիր է (տարեկան 220 մլրդ խմ), որի 25 տոկոսն արտահանվում է

Ուկրաինա, Բելառուս, Վրաստան, Հայաստան, Սլովակիա, Սլովենիա, Հունգարիա, Ավստրիա, Սերբիա, Իտալիա, Գերմանիա, Ֆրանսիա:

Ռուսաստանն աշխարհի ***նավթարդյունահանող*** խոշոր պետություններից է (աշխարհի նավթի 11 տոկոսը): Նավթի 70 տոկոսն արդյունահանում են Արևմտյան Սիբիրը՝ Տյումենի, Տոմսկի մարզերը, Վոլգա-Ուրալյան շրջանը, Կոմի Հանրապետությունը, Կալինինգրադի մարզը, Սախալինը: Նավթամուղների երկարությունը կազմում է 65 հազար կմ: Տարեկան արդյունահանվում է 460-470 մլն տոննա նավթ, ինչով մի փոքր զիջում է Սաուդյան Արաբիային:

Վառելիքային արդյունաբերության առաջատար ճյուղ է ***ածխարդյունաբերությունը***: Ռուսաստանն արդյունահանում է համաշխարհային ածխի 14 տոկոսը: Հիմնական մասն արդյունահանում են Կուզնեցկի ավազանը, Սիբիրի, Ուրալի, Պովոլժիեի տարածքները, Իրկուտսկի, Չիտայի, Ամուրի, Մագադանի մարզերը: Ածխի հանույթը տարեկան կազմում է 260-270 մլն տոննա, որի 1/3-ն արտահանվում է: Ապրանքային կառուցվածքում հանքարդյունաբերության արտադրությունն ունի 44 տոկոս բաժին:

Ներկայում Ռուսաստանն արտադրում է մեկ տրիլիոն կվտ/ժ ***էլեկտրաէներգիա:*** Այս ցուցանիշով չորս անգամ զիջում է ԱՄՆ-ին (նաև Չինաստանին, Ճապոնիային): Արտադրանքի 2/3-ը բաժին է ընկնում ջերմային, 1/5-ը՝ ջրային, մնացածը՝ ատոմային էլեկտրակայաններին: Ներկայում Ռուսաստանում գործում են 9 ԱԷԿ-ներ (ամենախոշորը Սանկտ Պետերբուրգի, Կուրսկի, Եկատերինբուրգի ԱԷԿ-երն են):

Մետալուրգիական համալիրը կազմում են սև և գունավոր մետալուրգիական ձեռնարկությունները: Երկաթի պաշարներով ՌԴ-ը աշխարհի առաջատար երկիրն է (56 մլրդ տոննա կամ համաշխարհային պաշարի 37 տոկոսը): ***Գունավոր մետալուրգիայի*** արտադրանքներն են պլատինը, ոսկին, պղինձը, անագը, ալյումինը, ցինկը, նիկելը, տիտանը, սնդիկը և այլ մետաղներ: Ալյումինի արտադրությամբ (3.8 մլն տոննա) ՌԴ-ը զիջում է միայն ԱՄՆ-ին:

Բազմաճյուղ է Ռուսաստանի ***մեքենաշինությունը***, որը կազմված է 70-ից ավելի ենթաճյուղերից՝ տրանսպորտային, էլեկտրոնային, էլեկտրատեխնիկական, մեքենաշինության, ինքնաթիռաշինության, տիեզերական տեխնիկայի, գյուղատնտեսական և այլն:

Ռուսաստանն ունի սեփական հումքի վրա զարգացող հզոր ***թեթև, քիմիական արդյունաբերություններ, սննդարդյունաբերություն, անտառարդյունաբերություն*** և այլ ճյուղեր:

Արտաքին առևտուրը կազմում է ՀՆԱ 44 տոկոսը, որից նավթի արտահանումը կազմում է 45, նավթամթերքներինը՝ 36, բնական գազինը՝ 37, պարարտանյութերինը՝ 72, սև մետաղներինը՝ 72-80, ցելյուլոզայինը՝ 85, ալյումինինը՝ 90 տոկոս: Պարենամթերքի պահանջարկի 35-37 տոկոսը ներմուծվում է, այդ թվում՝ միսը կազմում է 60,

բուսական յուղը՝ 50 տոկոս: Կապիտալի շարժի ցուցանիշները կազմել են 11 մլրդ դոլար, որից ուղղակի ինվեստիցիաները՝ 4,5 մլրդ դոլար:

ԽՍՀՄ փլուզումից հետո Ռուսաստանի սահմաններից դուրս մնացին մեծ քանակով գունավոր մետաղների հանքեր, հումքային, էներգետիկ ռեսուրսների աղբյուրներ, մեքենաշինական, մետալուրգիական և քիմիական արդյունաբերություններ, սահմանային անցումներ, նավահանգիստներ, խողովակաշարեր և այլ ենթակառուցվածքներ:

3.10 Չինաստանը համաշխարհային տնտեսությունում

Չինաստանն աշխարհի խոշոր՝ երկրներից է: Տարածությունը 9.6 մլն քառ. կմ է, որը կազմում է աշխարհի ցամաքային տարածքի 7.2 տոկոսը: Բնակչության թիվը հավասար է մոլորակի բնակչության 21 տոկոսին: Տնտեսությունը թողարկում է համաշխարհային համախառն արտադրանքի մոտ 4.5 տոկոսը: 1949 թ. հեղափոխությունից հետո Չինաստանում ազգայնացվեց ամբողջ տնտեսությունը՝ արդյունաբերությունը, բանկերը, տրանսպորտը, արտաքին առևտուրը: 1980-90 թթ. բնութագրվեցին տնտեսական աճի բարձր տեմպերով, որակական փոփոխություններով, արդյունաբերության բարձր ծավալներով:

Տնտեսության զարգացման հիմնական ուղղություններն էին.

- արտադրության բարձր տեմպերի ապահովումը,
- գիտատեխնիկական նվաճումները,
- տնտեսության ճյուղային կառուցվածքի փոփոխությունները,
- ռազմական ծախսերի կրճատումը:

Չինաստանն ունի բազմակացութաձև տնտեսություն: Աստիճանաբար նվազում է պետական սեկտորը և ավելանում՝ մասնավորը: 21-րդ դարի սկզբին Չինաստանը տալիս էր աշխարհի ՀՆԱ 4.7 տոկոսը՝ զիջելով ԱՄՆ-ին, Ճապոնիային, Գերմանիային, Մեծ Բրիտանիային և Ֆրանսիային: Արդյունաբերական արտադրանքի ծավալով 3-րդն էր ԱՄՆ-ից և Ճապոնիայից հետո: Այժմ էլեկտրաէներգիայի, պողպատի, թուջի, քիմիական մանրաթելերի, թղթի, բամբակի, գործվածքի արտադրությամբ, ավտոճանապարհների, նավթամուղների երկարությամբ աշխարհի առաջատար երկրների շարքում է: Չինաստանի արդյունաբերության ճյուղային կառուցվածքում առաջատար տեղ են գրավում ածխի, սև մետալուրգիայի, մեքենաշինության, քիմիական և ծանր արդյունաբերության ոլորտները: Էներգետիկայի հումքը վառելիքային արտադրանքն է: Եթե 1960 թ. նավթի հանույթը կազմում էր 5, 1980 թ.՝ 105 մլն տոննա, ապա 2005 թ. այս ցուցանիշը հասավ 173-ի:

Չինաստանի ***էլեկտրաէներգիայի*** արտադրությունը 2006 թ. կազմել է 1700 մլրդ կվտ/ժ՝ լինելով աշխարհում 2-րդը, մինչդեռ

բնակչության մեկ շնչի հաշվով զիջում է շատ երկրների: Էլեկտրաէներգիայի արտադրության 80 տոկոսը բաժին է ընկնում ՋԷԿ-ին, 20-ը՝ ՋրԷԿ-ին:

Սև մետալուրգիան Չինաստանի հանքարդյունաբերության ամենահզոր ճյուղերից է: 2008 թ. արտադրվել է 220 մլն տոննա պողպատ և 80 մլն տոննա թուջ: Այս ցուցանիշներով Չինաստանն աշխարհում գրավում է առաջին տեղը: Համեմատաբար թույլ է զարգացած գունավոր մետալուրգիան:

Չինաստանի ***մեքենաշինությունը*** ձևավորվել է 1950-ական թթ., ինչից հետո ճյուղային կառուցվածքը զարգացել է: Արագ աճել են էլեկտրատեխնիկական, տրանսպորտային մեքենաշինության ճյուղերը: Այժմ գերակշռում է մետաղածուլական, լեռնահանքային, ծանր հաստոցների, երկաթուղային շարժակազմի, էլեկտրասարքավորումների, ավտոմեքենաների, գյուղատնտեսական մեքենաշինության, նավաշինության արտադրությունը:

Արդյունաբերության մեջ սև մետալուրգիան կազմում է 10.6, քիմիական արդյունաբերությունը՝ 10.0, մեքենաշինության ճյուղերը՝ 24.5, կերամիկա-հախճապակին՝ 7.7, տեքստիլ արդյունաբերությունը՝ 9.0 տոկոս: 1980-2000 թ. ինդուստրացումը զարգացել է շուկայական հարաբերությունների հիման վրա:

Հաստոցաշինությամբ Չինաստանը 5 առաջատար երկրների շարքում է:

Քիմիական արդյունաբերության մեջ առանձնահատուկ է հանքային պարարտանյութերի (30 մլն տոննա), քիմիական մանրաթելերի (11 մլն տոննա) տարեկան արտադրությունը, որով երկիրն առաջատար դիրքում է:

Չինաստանն առաջնային տեղ է գրավում ***բամբակյա գործվածքների*** արտադրությամբ՝ 34 մլրդ քմ (տեքստիլ արտադրանքի 80 տոկոսը, համաշխարհային արտադրանքի 40 տոկոսը), բրդյա գործվածքով՝ 395 մլն քմ: Նա նաև ***մետաքսագործության*** երկիր է: Տարեկան արտադրում է 1.5 մլրդ քմ մետաքսյա գործվածք (երրորդն է ԱՄՆ-ից և Ճապոնիայից հետո):

Սննդարդյունաբերության բնագավառում առաջնակարգ տեղ են գրավում հացահատիկի, յուղատու մշակաբույսերի մշակումը, մսի (տարեկան 75 մլն տոննա), կաթնամթերքի արտադրությունը: Լայնորեն տարածված են գինու, օղու, ծխախոտի արտադրությունները: Կարևոր դեր ունի ձկնարդյունաբերությունը (տարեկան 42 մլն տոննա): Երկիրը ճանաչվում է ապակեգործությամբ, խեցեգործությամբ, ճենապակու և հախճապակու, գեղարվեստական իրերի, խաղալիքների արտադրությամբ:

Տնտեսական մեխանիզմում առաջատար դերը պատկանում է կոլեկտիվ (39 տոկոս) և մասնավոր (37 տոկոս) սեկտորներին, իսկ ան-

հատական և համատեղ ձեռնարկություններն ապահովում են արտադրության 19 տոկոսը:

Բուսաբուծությանը բաժին է ընկնում ցանքատարածքների 80 և արտադրանքի 75 տոկոսը, ինչը կազմում է տարեկան մոտ 415 մլն տոննա, իսկ հեկտարից՝ միջինը 40 ցենտներ: Չինաստանը ծիթատուների, սոյայի, թեյի երկիր է: Տարեկան արտադրվում է 780-800 հազար տոննա թեյ (երկրորդը՝ Հնդկաստանից հետո): Այստեղ գյուղատնտեսությունը հիմնված է ձեռքի աշխատանքի վրա: Հողագործությամբ զբաղված է բնակչության մոտ կեսը: Չինաստանում հաշվարկվում են 470 մլն գլուխ խոզ, 240 մլն գլուխ ոչխար և այծ, 105 մլն գլուխ խոշոր եղջյուրավոր անասուն, բայց մեկ շնչի հաշվով անասնամթերքի բաժինն աշխարհում վերջին տեղերից է: Չինաստանը նաև շերամապահության երկիր է:

Վերջին տասնամյակներում արագ աճել են ***հաղորդակցության ուղիները:*** Փոխադրումների 40 տոկոսը բաժին է ընկնում երկաթուղուն (60 հազար կմ): Ներքին ջրային փոխադրումները կազմում են բեռնաշրջանառության 40 տոկոսը: Ծովային փոխադրումների ընդհանուր բաժինը տարեկան 42-45 մլն տոննա է, ավտոճանապարհների երկարությունը՝ մոտ 2 մլն կմ:

Երկրում ***ծառայությունների ոլորտը*** դանդաղ է զարգանում: Դրանում զբաղված է աշխատուժի 1/3-ը: Արագ աճում են ֆինանսավարկային, առևտրի, կապի, առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի, բնակչության կենցաղային սպասարկման և այլ ծառայությունները:

1985-2000 թթ. Չինաստանի ***արտաքին առևտուրը*** ՀՆԱ-ի մեջ 23-ից հասել է 46 տոկոսի: 1980-2000 թթ. ապրանքաշրջանառությունն ավելացել է 8.5, արտահանումը՝ 10 անգամ: Փոփոխվել է արտահանման ապրանքային կառուցվածքը: Պակասել են հումքային ապրանքները՝ 50.3 տոկոսից հասնելով 11.2-ի, ավելացել՝ պատրաստի արտադրանքը՝ 49.7 տոկոսից հասնելով 88.8-ի: Փոխվել է ներմուծման կառուցվածքը, կրճատվել՝ հումքի և կիսաֆաբրիկատների բաժինը, ավելացել են մեքենասարքավորումները, սև մետաղը, հանքային պարարտանյութերը:

Արտահանման շուկաներ են դարձել ԱՄՆ-ը, Ճապոնիան, Ռուսաստանը: Արտահանման մեջ ավելացել են կաշվի արտադրանքը, հագուստը, կոշկեղենը, տրիկոտաժը և այլն: Չինաստանը առևտուր է իրականացնում աշխարհի գրեթե բոլոր երկրների հետ, ինչը կազմում է համաշխարհային ապրանքաշրջանառության 7.5-8 տոկոսը (տարեկան մոտ 1.2 տրիլիոն դոլար): Արտաքին առևտրի 60 տոկոսը կատարվում է ԱՄՆ-ի, Ճապոնիայի և ԵՄ երկրների, 20-ը՝ զարգացող երկրների հետ: ԱՄՆ գնումները 2 անգամ շատ են ԵՄ երկրների գնումներից:

Արտահանման ծավալի 1/3-ը կազմում են արդյունաբերական և գյուղատնտեսական հումքը, պարենը, 1/3-ը՝ մեքենասարքավորում-

ները, նավթը, տեքստիլ ապրանքները, թեյը, ցիտրուսները, տնայնագործական, անտառային, ձկնային արտադրանքները:

Ներմուծման մեջ կարևոր մաս են կազմում մեքենասարքավորումները, տեխնիկական և տրանսպորտի միջոցները, արդյունաբերական հումքը, պարարտանյութը, ռազմական տեխնիկան, պարենամթերքը:

Չինաստանը ***կապիտալ արտահանող և ներկրող*** երկիր է: Հոնկոնգը, Շանհայը համարվում են խոշոր ֆինանսական կենտրոններ: Մեծանում են բանկերի կարողությունները: Միջազգային կապիտալի շարժը փոխատվական կապիտալի ձևով կազմում է շրջանառության 37 տոկոսը: Երկիրը զգալի վարկեր է վերցնում Միջազգային արժութային հիմնադրամից, տնտեսական օգնություններից:

Օտարերկրյա ներդրումների ծավալն անցնում է 150 մլրդ դոլարից: Կապիտալի ներդրմանը նպաստել են ԱՏԳ-ի ստեղծումը, արտադրանքի աճը, ազատ ձեռներեցության ավելացումը: 1990 թ.-ից հետո Չինաստանը դարձել է արտասահմանյան ուղղակի կապիտալ ներդրումների կենտրոն:

3.11 Զարգացող երկրները համաշխարհային տնտեսությունում

Զարգացող երկրներն ընդգրկում են աշխարհի պետությունների 4/5 մասը և աշխարհի բնակչության ավելի քան 77 տոկոսը: Դրանք Ասիական (բացի Ճապոնիայից, Հարավային Կորեայից, Թայվանից, Սինգապուրից և Իսրայելից), Աֆրիկայի (բացի ՀԱՀ-ից) և Լատինական Ամերիկայի երկրներն են: Զարգացող երկրների հիմնական հատկանիշներն են.

- նախկին գաղութային և կիսագաղութային վիճակը, պատմական զարգացման մակարդակը, ազատագրման տարբեր ժամանակները,
- մինչև այժմ գոյություն ունեցող արտադրողական ուժերի տարբեր մակարդակները,
- տնտեսության տարբեր սեկտորներում գործող տարբեր կացութաձևերը,
- երկրների թույլ զարգացումը և հետ մնալը,
- երկրների կախվածությունն արդյունաբերական զարգացած երկրներից,
- հասարակության սոցիալական կառուցվածքը (կրոնական, էթնիկական):

Զարգացող երկրները դասակարգվում են հետևյալ կերպ:

1. Նոր ինդուստրիալ երկրներ, որոնց թվում են տնտեսական համեմատաբար բարձր մակարդակ ունեցող, բազմաճյուղ արդյունաբերությամբ երկրները: Նման մոտ 15 երկրներում արտահանումը կազ-

մում է սեփական արտադրանքի 50 տոկոսից ավելին: Դրանցից են ՀԱՀ-ը, Հունաստանը, Պորտուգալիան, Լեհաստանը, Ռուսաստանը, Չինաստանը և այլ երկրներ, որոնք մոտ են զարգացած երկրներին:

2. Տնտեսապես զարգացած երկրներ, որոնք բաժանվում են 3 խմբի՝ ***բարձր, միջին*** և ***ցածր*** մակարդակի: Մեկ շնչի հաշվով բարձր եկամուտներ ունեն Քուվեյթը, Թաիլանդը, Արգենտինան, Բրազիլիան և մյուսները:

Համաշխարհային տնտեսությունում զարգացող երկրների արդյունաբերությունը զարգանում է ***էքստենսիվ*** ճանապարհով: Գիտատեխնիկական աշխատանքի ծախսերը չեն գերազանցում եկամտի 8 տոկոսը: Այս երկրներում գործազրկությունը պարտադիր երևույթ է: 2000-2012 թթ. զարգացող երկրների մեծ մասի առևտրային հաշվեկշիռը ***դեֆիցիտ*** էր: Նրանց արդյունաբերությունը ՀՏ մեջ կազմում էր 18-20 տոկոս: Բարձր է փոխատվական կապիտալի և ուղղակի ինվեստիցիաների բաժինը: Կապիտալի արտահոսքը զարգացող երկրներից 2000-2010 թթ. կազմել է 56 մլրդ դոլար:

Զգալի առաջընթաց կա բազային ապրանքների ***արտահանման*** մեջ՝ սև մետաղներ՝ 17.0, քիմիկատներ՝ 13.3, նավթամթերքներ՝ 40 տոկոս, առանձին տարածաշրջաններում՝ ավելի ցածր: ***Ներմուծում են*** տեխնոլոգիաներ, սարքավորումներ, մեքենաներ, կապիտալ:

Տնտեսապես աղքատ երկրներում կապիտալի մուտքը կազմում է պահանջարկի 80 տոկոսը: Աղքատ երկրներ են Հոնդուրասը, Նիկարագուան, Նեպալը, Աֆղանստանը, Մադագասկարը, Նիգերիան և այլն:

Զարգացող երկրների ռազմավարության հիմնական ուղղություններն են.

- տնտեսական անկախության ամրապնդումը, սոցիալ-տնտեսական վերափոխումները,
- զարգացման ինդուստրացումը, տնտեսական հետամնացության վերացումը, նոր արտադրողական ուժերի ձևավորումը,
- պետության ձեռնարկատիրական դերի փոփոխությունը, որը կհանգեցնի արտահանման և ներմուծման զարգացման:

Տնտեսական քաղաքականության հիմնական ուղղություններն են.

- տնտեսական աճի արագացումը,
- ազգային ձեռնարկատիրության ամրապնդումը,
- միջազգային տնտեսության նոր կարգի կազմակերպումը,
- տարածաշրջանային ինտեգրացիայի միտումները:

3. Զարգացման միջին մակարդակի երկրներ (60 երկիր), որոնք բաժանվում են ենթախմբերի.

Ա. Անցումային երկրներ, որոնց մեջ մտնում են ԽՍՀՄ նախկին հանրապետությունները՝ ՌԴ-ն, Ուկրաինան, Բելառուսը, Լատվիան, Լիտվան, Էստոնիան, Ղազախստանը, Ուզբեկստանը, Թուրքմենիան, Ղրղզստանը, Տաջիկստանը, Հայաստանը, Վրաստանը, Ադրբեջանը,

Մոլդովան, նախկին սոցիալիստական համակարգի երկրները՝ Ալբանիան, Բուլղարիան, Հունգարիան, Լեհաստանը, Ռումինիան, Չեխիան, Սլովակիան, Հարավսլավիայի բաժանված երկրները: Համակարգի բաժանումից հետո Լատվիան, Լիտվան, Էստոնիան ինտեգրման ակտիվ կուրս վերցրին, Կուբան պահպանեց տնտեսվարման սոցիալիստական կուրսը, ԳԴՀ-ը միացավ ԳՖՀ-ին:

ՀՏ կառուցվածքում տնտեսական և քաղաքական փոփոխությունները առաջ բերեցին ուժերի վերադասավորում:

Բ. Նոր զարգացող կամ թույլ զարգացած երկրներ (56 երկիր), որոնց բնորոշ են նեղ շուկայական հարաբերությունները, տնտեսական կախվածությունը հզոր երկրներից: Դրանք են.

- նավթ արտահանող երկրները, որոնք ունեն բարձր ՀՆԱ (14 երկիր), փոքր տարածք, բայց բնակչության մեկ շնչի հաշվով՝ բարձր ցուցանիշներ և եկամուտ (15 երկիր),
- զարգացման միջին և ցածր մակարդակի երկրները (մոտ 30 երկիր), որտեղ բավարար չեն արտադրությունը, զբաղվածությունը, եկամուտները,
- Աֆրիկայի, Ասիայի, Լատինական Ամերիկայի և Օվկիանիայի առավել թույլ և հետամնաց երկրները, որոնք ունեն ցածր տնտեսական ցուցանիշներ, բնակչության 90 տոկոսը բնակվում է գյուղական բնակավայրերում:

Բոլոր խմբավորումների համար ցուցանիշներ են ծառայում.

- բնակչության մեկ շնչին բաժին ընկնող ցուցանիշները,
- տնտեսական ներուժը,
- երկրի բաժինը համաշխարհային արտադրանքում,
- տնտեսական զարգացման մակարդակը:

ՀՏ-ի մեջ աշխարհի բոլոր պետությունների խմբավորումները ենթակա են զարգացման և խմբային կազմերի փոփոխությունների:

ԳԼՈՒԽ 4
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆՏԵԳՐԱՑԻԱ

4.1 Տնտեսական ինտեգրացման նախադրյալները, էությունը և զարգացման ուղղությունները

Միջազգային տնտեսական ինտեգրումը (ՄՏԻ) ազգային տնտեսությունների միջև տարածքային մակարդակով աշխատանքի միջազգային բաժանման, տնտեսական կյանքի միջազգայնացման նոր ձև է: Միջազգային մակարդակով այն իրականացվում է ազգային տնտեսությունների համաձայնեցված քաղաքականության հիմքի վրա: Միջազգային մասնագիտացման խորացումը հանգեցրել է մի շարք երկրների ազգային տնտեսությունների սերտ համագործակցության, ինչի արդյունքում առաջացել է ԱՄԲ նոր, բարձրագույն աստիճանը՝ միջազգային տնտեսական ինտեգրացումը: ***Միջազգային տնտեսական ինտեգրումը երկրների առանձին խմբերի խորը և կայուն փոխադարձ կապերի զարգացման օբյեկտիվ գործընթացն է՝ հիմնված նրանց կողմից տարվող միջազգային համաձայնեցված քաղաքականության վրա:*** Տնտեսական ինտեգրացիան պատմական երևույթ է, երկրների միավորման գործընթաց:

Ներկայում արտադրողական ուժերի միջազգայնացումը, ազատ տնտեսական գոտիների ստեղծումը, տարբեր ընկերությունների կազմակերպումը, շուկաների բաց լինելը պայմաններ են ստեղծում, որ երկրներն ընդգրկվեն տնտեսական ինտեգրացման համակարգում, քանի որ ոչ մի երկիր չի կարող ապահովել կայուն տնտեսություն առանց համագործակցելու այլ երկրների հետ:

20-րդ դարի երկրորդ կեսին առաջավոր երկրների ինդուստրիալ զարգացումը, միջազգային տրանսպորտի միջոցների կատարելագործումը նպաստել են ապրանքների և ծառայությունների միջազգային առևտրի իրականացմանը, ինչպես նաև կապիտալի, աշխատուժի, տեխնոլոգիաների տեղաշարժին: Հետևաբար, տնտեսական ինտեգրումը ՄՏՀ օրինաչափ զարգացման արդյունք է, որի ***նախադրյալներն*** են.

- երկրների տնտեսական զարգացման մակարդակը և շուկայական հարաբերությունների հասունացումը,
- ինտեգրվող երկրների աշխարհագրական դիրքը, մասնավորապես՝ ընդհանուր սահման ունենալը, առևտրական, մշակութային կապերը, էթնիկ-մշակութային, լեզվային, ազգային սովորույթների նմանությունը, տնտեսական ռեսուրսային հնարավորությունները,
- երկրների առջև ծառացած տարբեր տնտեսական, ֆինանսական, քաղաքական հիմնախնդիրների լուծումը:

Ինտեգրացման նպատակները, սոցիալ-տնտեսական բնույթը, իրականացման մեթոդները պայմանավորված են այն հասարակարգով, որի պայմաններում իրականացվում են: Ինտեգրացիայի ***նպատակն*** է.

- վերացնել ապրանքների, ծառայությունների, կապիտալի միջազգային սահմանափակումները,
- ընդլայնել միջազգային շուկայի ծավալները, կրճատել տրանսպորտային ծառայությունները, օգտագործել տնտեսության առավելությունները,
- ստեղծել արտաքին տնտեսական բարենպաստ միջավայր քաղաքական, սոցիալական, մշակութային և տնտեսական ծառայությունների համար,
- կատարել տնտեսական կառուցվածքային վերափոխումներ, կնքել համաձայնագրեր, ծավալել միջազգային գիտատեխնիկական տեղեկատվության գործունեություն, համատեղ մշակել կարևոր հիմնախնդիրներ տնտեսության զարգացման համար,
- վարել ազգային տնտեսությունների համաձայնեցված միջպետական տնտեսական քաղաքականություն, կենտրոնացնել արտադրությունը և կապիտալը:

Ներկա պայմաններում ինտեգրացիան իրականացվում է.

- երկրների մասնավոր մոնոպոլիաների համագործակցության,
- միմյանց և երրորդ երկրների նկատմամբ պետական մենատիրական համաձայնեցված քաղաքականություն վարելու ուղիներով:

Ինտեգրացիոն միավորումները պայմանականորեն կարելի է բաժանել 5 հիմնական տեսակի.

1. Ազատ առևտրի գոտիներ (ԱԱԳ), որտեղ մասնակից երկրներն իրականացնում են փոխադարձ առևտուր և հանում են մաքսային արգելքները: 1960 թ. Մեծ Բրիտանիան 7 երկրով (Ավստրիա, Դանիա, Նորվեգիա, Պորտուգալիա, Շվեդիա, Շվեյցարիա, Մեծ Բրիտանիա) ստեղծել է ԱԱԳ, որը հաստատվել է Ստոկհոլմի հռչակագրով: ԱԱԳ-ն ինտեգրացման համագործակցության առաջին փուլն է, որով մասնակից երկրները հանում են փոխադարձ առևտրային արգելքները և պահպանում գործունեության լրիվ ազատությունն իրենց տնտեսական կապերում:

2. Մաքսային միություններ, որոնց անդամ երկրների միջև կատարվում են ապրանքների և ծառայությունների ազատ փոխանակումներ (ԵՄ, ԱՊՀ 5 պետություն (ՌԴ, Բելառուս, Ղազախստան, Ղրղզստան, Տաջիկստան)): Մաքսային միության ինտեգրացիոն համագործակցության փուլում միության անդամ պետությունները պայմանավորվում են ոչ միայն վերացնել փոխադարձ առևտրային արգելքները, այլև հիմնել արտաքին առևտրի միասնական համակարգ:

3. Ընդհանուր շուկա, որի անդամ երկրների միջև վերացվում են առևտրի, ծառայությունների, աշխատուժի, կապիտալի տեղաշարժի

արգելքները, վարվում է համաձայնեցված տնտեսական քաղաքականություն:

4. Տնտեսական միություններ, որոնց անդամ երկրները վարում են միասնական տնտեսական արժութաֆինանսական, հարկային, հակաարժեզրկման քաղաքականություն, կատարում այլ միջոցառումների կոորդինացում (գյուղատնտեսական, արդյունաբերական, ԳՏ, էներգետիկական, տրանսպորտային) (տե՛ս աղ. 4.1):

5. Քաղաքական միություններ, որոնք վարում են միասնական աշխարհատնտեսական և քաղաքական հարաբերություններ:

Զարգացած երկրներին տնտեսական ինտեգրացիան հնարավորություն է տալիս կիրառելու տեխնոլոգիաներ, ձեռք բերելու շուկաներ: Զարգացող և անցումային երկրների համար այն հնարավոր է դարձնում ներդրումներ կատարելը, ապահովում է տնտեսական աճ: Երկիրը դուրս է գալիս միջազգային շուկա:

Ինտեգրացիան իրականացվում է.

- արտադրողական ուժերի, ԱՄԲ-ի, արտադրության միջոցների և տեխնոլոգիական գիտելիքների փոխանակումների, միջազգային մասնագիտացման և կոոպերացման,
- ֆինանսների, արտադրական ռեսուրսների, առևտրի և ծառայությունների միջազգային տեղաշարժերի,
- ԳՏ գիտելիքների և աշխատուժի միջազգային փոխանակումների,
- գլոբալ հիմնախնդիրների (բնապահպանություն, Համաշխարհային օվկիանոսի և տիեզերքի յուրացում, զարգացող, աղքատ երկրներին օգնություն) լուծման միջոցով:

Ինտեգրացիոն համագործակցության բարձրագույն փուլը ենթադրում է, որ պետությունները պայմանավորվում են իրականացնել մաքսային, փոխադարձ վճարումների փոփոխություններ և զարգացնել համատեղ առևտուր: Ինտեգրացիոն միավորումների խնդիրներն են շուկաների բաժանումը և վերաբաժանումը, տնտեսական դաշինքների ստեղծումը, ինչը կնպաստի երկրների միջև նոր հարաբերությունների զարգացմանը: Այսօր աշխարհում հաշվարկվում են բազմաթիվ միավորումներ, որոնք ունեն բնորոշ առանձնահատկություններ և աշխարհագրական տեղաբաշխումներ: Ինտեգրացվող երկրները պիտի ունենան տնտեսական զարգացման մակարդակ և հատկանիշներ:

Բ. Բալաշշիի աշխատանքում ներկայացված տարածքային և ինտեգրացիայի սխեման ընդգրկում է Ազատ առևտրի գոտիները (ԱԱԳ), Մաքսային միությունները (ՄՄ), Տնտեսական և արժութային միությունները (ՏԱՄ): ԵՄ տարածքը ԵՄ կողմից 1992 թ. ընդունվել է որպես Տնտեսական տարածաշրջանային մոդել (SSM)[10]:

[10] Мировая экономика и международные отношения, журнал, М., 2011, N 1.

Աղյուսակ 4.1

Միջազգային տնտեսական ինտեգրացիոն միավորումները

Ինտեգրացման խմբեր	Անվանումը, ստեղծման տարեթիվը	Անդամ երկրներ և կազմակերպություններ
Տնտեսական և քաղաքական առևտրային համագործակցության մասին համաձայնագրեր	Եվրամիության և ԽՍՀՄ երկրների միջև համագործակցության և գործընկերության մասին համաձայնագիր (1994)	Եվրամիություն, Բելառուս, Ղազախստան, Ռուսաստան, Ուկրաինա
	Եվրամիության հետ ընկերակցության (ասոցիացիա) մասին համաձայնագիր (1991-1995)	Բուլղարիա, Չեխիա, Հունգարիա, Լեհաստան, Ռումինիա, Սլովենիա, Սլովակիա, Էստոնիա, Լատվիա, Լիտվա
	«Ձեռնարկություն ամբողջ Ամերիկայի համար» նախաձեռնություն (1990)	ԱՄՆ, լատինաամերիկյան և կենտրոնա-ամերիկյան պետությունների մեծ մասը
Ազատ առևտրի գոտիներ	Ազատ առևտրի եվրոպական ընկերակցություն (ասոցիացիա) (1960)	Ավստրիա, Շվեդիա, Ֆինլանդիա, Իսլանդիա, Նորվեգիա, Լիխտենշտեյն
	Եվրոպական տնտեսական գոտի (1994)	Եվրամիության երկրներ, Իսլանդիա, Լիխտենշտեյն
	Բալթյան ազատ առևտրի գոտի (1993)	Էստոնիա, Լատվիա, Լիտվա
	Կենտրոնաեվրոպական ազատ առևտրի գոտի (1992)	Չեխիա, Հունգարիա, Լեհաստան, Սլովակիա
	Հյուսիսամերիկյան ազատ առևտրի գոտի (1994)	Կանադա, Մեքսիկա, ԱՄՆ
	Հարավասիական (ԱՍԵԱՆ) երկրների ազատ առևտրի մասին համաձայնագիր (1992)	Բրունեյ, Ինդոնեզիա, Մալայզիա, Ֆիլիպիններ, Սինգապուր, Թաիլանդ
	Տնտեսական կապերի խորացման մասին ավստրա-լա-նորզելանդական առևտ-րական համաձայնագիր (1983)	Ավստրալիա, Նոր Զելանդիա
	Բանգկոկյան համաձայնագիր (1993)	Բանգլադեշ, Լաոս, Հնդկաստան, Կորեայի Հանրապետություն, Շրի-Լանկա
	Թուրքիայի հետ Եվրամիության ընկերակցություն (ասոցիացիա) (1963)	Եվրամիություն, Թուրքիա
	Արաբական ընդհանուր շուկա (1964)	Եգիպտոս, Իրաք, Հորդանան, Եմեն, Լիբանան, Մավրիտանիա, Սիրիա

Մաքսային միություններ	Կենտրոնաամերիկյան ընդհանուր շուկա (1961)	Կոստա-Ռիկա, Սալվադոր, Գվատեմալա, Նիկարագուա, Հոնդուրաս
	Կոլումբիայի, Էկվադորի և Վենեսուելայի միջև ազատ առևտրի գոտի (1992)	Կոլումբիա, Էկվադոր, Վենեսուելա
	Արևելակարիբյան պետությունների կազմակերպություն (1991)	Անտիգուա և Բարբուդա, Դոմինիկա, Գրենադա, Մոնտսերատ, Սենթ Քիթս և Նևիս, Սենթ Լյուսիա, Սենթ Վինսենթ և Գրենադիններ
	Պարսից ծոցի արաբական երկրների համագործակցության խորհուրդ (1981)	Բահրեյն, Քուվեյթ, Օման, Քաթար, Սաուդյան Արաբիա, Միավորված Արաբական Էմիրություններ
Ընդհանուր շուկա	Անդյան ընդհանուր շուկա (1960)	Բոլիվիա, Կոլումբիա, Էկվադոր, Պերու, Վենեսուելա
	Լատինաամերիկյան ինտեգրման ընկերակցություն (ասոցիացիա) (1960)	Արգենտինա, Բրազիլիա, Բոլիվիա, Չիլի, Մեքսիկա, Ուրուգվայ, Կոլումբիա, Էկվադոր, Պերու, Վենեսուելա
	Հարավային կոնի (կոնուս) ընդհանուր շուկա (1991)	Արգենտինա, Բրազիլիա, Պարագվայ, Ուրուգվայ
	Կարիբյան համընկերակցություն և Կարիբյան ընդհանուր շուկա (1973)	Անտիգուա և Բարբուդա, Գայանա, Բելիզ, Բագամյան կղզիներ, Բարբադոս, Դոմինիկա, Գրենադա, Յամայկա, Մոնտսերատ, Սենթ Քիթս և Նևիս, Սենթ Լյուսիա, Սենթ Վինսենթ և Գրենադիններ, Տրինիդադ և Տոբագո
	Եվրոպական միություն (1993) (մինչև այդ՝ Եվրոպական համընկերակցություն (1957))	Ավստրիա, Բելգիա, Ֆրանսիա, Մեծ Բրիտանիա, Դանիա, Գերմանիա, Հունաստան, Շվեդիա Իռլանդիա, Իսպանիա, Իտալիա, Լյուքսեմբուրգ, Նիդեռլանդներ, Պորտուգալիա, Ֆինլանդիա

Տնտեսական միություններ	Տնտեսական միություն Բենիլյուքս (1948)	Բելգիա, Նիդեռլանդներ, Լյուքսեմբուրգ
	Անկախ պետությունների համագործակցություն (1992)	Հայաստան, Ադրբեջան, Բելառուս, Վրաստան, Ղազախստան, Ղրղզստան, Մոլդովա, Ուկրաինա, Ռուսաստան, Տաջիկստան, Թուրքմենստան, Ուզբեկստան
	Արաբական Մաղրիբի միություն (1989)	Ալժիր, Լիբանան, Մավրիտանիա, Մարոկկո, Թունիս
	Միջերկրային նախաձեռնություն (1993)	Բուրունդի, Կանարյան կղզիներ, Քենիա, Մադագասկար, Մալավի, Մավրիտանիա, Նամիբիա, Ռուանդա, Սեյշելյան կղզիներ, Տանզանիա, Ուգանդա, Զամբիա, Զիմբաբվե
	Լագոսյան գործունեության ծրագիր (1973)	Աֆրիկայի բոլոր երկրները՝ Սահարայից դեպի հարավ
	Մանու գետի միություն (1973)	Գվինեա, Լիբերիա, Սիեռա-Լեոնե
	Արևմտաաֆրիկյան տնտեսական և արժութային միություն (1944)	Բենին, Բուրկինա-Ֆասո, Սենեգալ, Նիգեր, Տոգո, Կոտ դ'Իվուար, Մալի

Համաշխարհային տնտեսության գլոբալացումն ուղեկցվում է տնտեսությունների տարածքային գլոբալացումով, որը ոչ միայն աշխարհագրական բնույթ ունի, այլև երկրների տնտեսական մոտեցում տարածքային սկզբունքով, իրեն բնորոշ տնտեսական համակարգ, ժողովրդագրական կառուցվածք: Տասնամյակների ընթացքում տարածքային տնտեսական ինտեգրացիան համարվել է տնտեսական հարաբերությունների արտակարգ երևույթ, ընդարձակվել են դրանց մասշտաբները, կատարելագործվել՝ կառավարման ձևերը, այդ գործընթացներում աճել է երկրների ակտիվ մասնակցությունը, հետևաբար, ինտեգրացիոն հարաբերություններն ակտիվ ազդեցություն են գործում գլոբալացման վրա: Այսօր ինտեգրացիոն գործընթացն ընդգրկում է աշխարհի բոլոր երկրները, և խմբավորումների, համաձայնագրերի շրջանակներում իրականացվում է միջազգային առևտրի 60 տոկոսը: Ստեղծվում են տնտեսական օրգաններ, քաղաքական իշխանություններ: Համաշխարհային տնտեսությունն ընդգրկում է տասնյակ հազարավոր անդրազգային ընկերությունների, միությունների մասնաճյուղեր: 2008 թ. հաշվարկվում էին արդեն 80 հազար

անդրազգային կազմակերպություններ (ԹՀԿ), որոնց մասնաճյուղերը երկրագնդի վրա հասնում էին մոտ 800 հազարի:

Վերջին 25 տարում համաշխարհային արտադրանքն ավելացել է՝ 676 մլրդ դոլարից հասնելով 6029 մլրդ դոլարի և կազմելով գլոբալ համախառն արտադրանքի 11 տոկոսը, իսկ դրանց ակտիվներն ավելացել են 34 անգամ՝ հասնելով 68.7 տրիլիոն դոլարի[11]:

Տնտեսական համագործակցությունն իրականացվում է.

- արտադրության միջոցների, տեխնիկական գիտելիքների փոխանակման, միջազգային մասնագիտացման և կոոպերացման, արտադրական և գիտական համակարգը մեկ միասնական համալիրի մեջ ընդգրկելու,
- արտադրական համագործակցության, արտադրողական ուժերի միջազգային միգրացիայի,
- նյութերի, տեղեկատվության, տնտեսական ենթակառուցվածքների միջազգային փոխանակումների և մարդկանց համագործակցությունն ապահովելու միջոցով:

Ինտեգրացիոն խմբավորումների ստեղծումը սերտորեն կապված է երկրների ուժերի դասավորության հետ: 1950-ական թվականներին, երբ միջազգային ասպարեզում առաջնային էր ԱՄՆ դերը, Արևմտյան Եվրոպայի երկրները միավորվեցին՝ համաշխարհային տնտեսության մեջ վերականգնելու իրենց տնտեսական ինքնուրույնությունը: Նրանք համախմբեցին իրենց ուժերը՝ ԱՄՆ-ի, Ճապոնիայի նկատմամբ առաջատար դիրքեր գրավելու համար: Միջազգային կապիտալի երեք կենտրոնների (ԱՄՆ, Արևմտյան Եվրոպա, Ճապոնիա) գոյությունն առաջ բերեց նոր հակասություններ, խորացավ տնտեսական պայքարը:

4.2 Տնտեսական ինտեգրացիայի փուլերը

Ինտեգրացիոն առաջին քայլերն արվել են 1951 թ., երբ արևմտաեվրոպական առաջավոր երկրների խումբը (Բելգիա, ԳՖՀ, Իտալիա, Լյուքսեմբուրգ, Նիդեռլանդներ, Ֆրանսիա) ստեղծել է.

- ածխի և պողպատի եվրոպական միավորում (պայմանագիրն ուժի մեջ է մտել 1952 թ.),
- Եվրոպական տնտեսական համագործակցություն (ԵՏՀ) («Ընդհանուր շուկա» ստեղծելու մասին Հռոմի պայմանագիրը ստորագրվել է 1957 թ.՝ նույն երկրների կողմից),
- Ատոմային էներգիայի եվրոպական խմբավորում (Եվրատոմ), որի մասին պայմանագիրն ուժի մեջ է մտել 1958 թ. հունվարի 1-ին՝ դարձյալ նույն երկրների կողմից:

[11] Мировая экономика и международные отношения, журнал, М., 2010, N 1, стр. 8, 9.

Տնտեսական ինտեգրացիան իրականացվել է փուլերով: Յուրաքանչյուր փուլին բնորոշ է զարգացման իր առանձնահատկությունը:

Առաջին փուլն ընդգրկում է 1950-1970-ական թվականների վերջը և կապված է երկրների միջազգային մասնագիտացման, ԱՄԲ-ի հետ: Այս փուլին բնորոշ է կապիտալի արտահանումը: ԱՄՆ-ի կողմից կատարվել են տասնյակ միլիարդ դոլարի հատկացումներ: Հսկայական միջոցներ են հոսել Արևմտյան Եվրոպա, Լատինական Ամերիկա, Կանադա, Ճապոնիա և այլ երկրներ: 1960-ական թվականներին ԱՄՆ դիրքորոշումը փոխվել է, երբ միջազգային ասպարեզում ընդլայնվել են Արևմտյան Եվրոպայի հնարավորությունները: Գլխավոր պատճառը 1958 թ. Հռոմի պայմանագրի հիման վրա «Ընդհանուր շուկայի» ստեղծումն էր, ինչը հնարավորություն է տվել, որ կապիտալը, ապրանքները և աշխատուժն անարգել մուտք գործեն ընդհանուր շուկայի անդամ երկրներ: Իր տնտեսական գործունեությունն առավել արդյունավետ վարելու նպատակով «Ընդհանուր շուկան» ստեղծել է Զարգացման եվրոպական հիմնադրամ (1959 թ.), Եվրոպական սոցիալական հիմնադրամ (1960 թ.), որոնք ֆինանսավորում էին «Ընդհանուր շուկայի» անդամ երկրներին:

Եվրոպական համագործակցությունը հնարավորություն է տվել.

- վերացնելու մասնակից երկրների միջև առևտրական սահմանափակումները,
- սահմանելու երրորդ երկրների հետ ընդհանուր մաքսային սակագներ,
- կազմակերպելու աշխատուժի, կապիտալի, ծառայությունների ազատ տեղաշարժեր,
- մշակելու և գյուղատնտեսության ու տրանսպորտի ոլորտներում կիրառելու ընդհանուր քաղաքականություն:

Երկրորդ փուլն ընդգրկում է 1971-1980-ական թվականները: Կապված նյութական արտադրության ճյուղային կառուցվածքի դիֆերենցման հետ՝ այս փուլը բնութագրվում է աշխատանքի մասնակի բաժանման խորացմամբ, միջճյուղային մասնագիտացման արդյունավետ զարգացմամբ: Համագործակցության անդամ երկրներին հաջողվեց կիրառել ընդհանուր եվրարժույթ:

Արևմտյան Եվրոպայում, ԱՄՆ-ում, Կանադայում, Ճապոնիայում ձևավորված ինտեգրացման կենտրոնների ծավալած գործունեությունը և նրանց միջև պայքարը հանգեցրել են ազդեցության ոլորտների փոփոխման: Եթե 1950-ական թվականներին զարգացած երկրների ապրանքաշրջանառության մեջ ԱՄՆ-ի բաժինը կազմում էր 45, Արևմտյան Եվրոպայինը՝ 43, Ճապոնիայինը՝ 2.5 տոկոս, ապա 1970-ականներին այն համապատասխանաբար կազմեց 34.5, 46 և 11.5, իսկ 1980-ականներին՝ 33.5, 44.5 և 14.5 տոկոս: Ճապոնիայի ցուցանիշներն աճել են ի հաշիվ ԱՄՆ-ի և Արևմտյան Եվրոպայի տեսակարար

կշիռների նվազման: 1985 թ. ԱՄՆ անդրազգային 15 ընկերությունները կատարում էին 632 մլն դոլարի շրջանառություն, որը կազմում էր զարգացած երկրների ընդհանուր ապրանքաշրջանառության 67 տոկոսը: Մինչդեռ Մեծ Բրիտանիայի բաժինը 17, Ճապոնիայինը՝ 7, Իտալիայինը՝ 5 և Ֆրանսիայինը՝ 4 տոկոս էր: Արևմտաեվրոպական խմբավորումը վերածվեց պետությունների տնտեսական և քաղաքական սերտ միավորման: ԵՀ բաժինը կազմեց համաշխարհային առևտրի ավելի քան 1/3-ը, գիտահետազոտական և մշակումների ծախսերի՝ 1/5-ը, արժույթի պահուստների՝ 1/3-ը: Արևմտյան Եվրոպայի երկրների արտադրական համագործակցությունը 1970-1980-ական թվականներին նպաստեց նաև ԳՏՀ զարգացմանը, ինչը պայմանավորված էր տնտեսության կառուցվածքային փոփոխություններով: 1979 թ. ձևավորվեց Եվրոարժույթի համակարգը (ԵԱՀ):

Երրորդ փուլն ընդգրկում է 1980-ական թվականների երկրորդ կեսից մինչև 1990-ականների սկիզբը: Այդ փուլում դրվել է եվրոհամագործակցության սկիզբը: 1986 թ. Իսպանիայի և Պորտուգալիայի միացումով ԵՀ ինտեգրացումը ստացել է նոր որակ: Եվրոպական միասնական ակտի ընդունմամբ անդամ պետությունների նպատակը Եվրոհամայնքի ստեղծումն էր, ինչով կուժեղանար համագործակցության գործընթացը միկրո և մակրոտնտեսության, քաղաքականության և իրավունքի, գիտության և բնապահպանության, սոցիալական զարգացման բնագավառներում: 1990-ական թվականներին ԵՀ անդամ պետություններն իրականում ավարտեցին միացյալ շուկայի ստեղծումը: Նույն ժամանակում մեծացավ զարգացած երկրների միջև փոխադարձ կապիտալ ներդրումների աճը: Ուղղակի կապիտալ ներդրումների 95 տոկոսը կատարվում էր զարգացած երկրների կողմից, որից 75 տոկոսը՝ միմյանց միջև:

Ինտեգրացիոն գործընթացին ակտիվ մասնակցություն ունեցան նաև զարգացող երկրները, որոնց կապիտալ ներդրումների միջին տարեկան աճը 1960-1970 թթ. 11.7 տոկոսից 1981-1985 թթ. հասավ 16.4 տոկոսի:

Չորրորդ փուլը (1990-ական թվականներից 2000 թ.) բնորոշվում է նրանով, որ ԵՄ-ը խորն ազդեցություն ունեցավ անցումային երկրների տնտեսության վրա: Այս փուլում համաձայնագիր ստորագրվեց ԵՄ և Կենտրոնական ու Արևմտյան Եվրոպայի 6 (Բուլղարիա, Լեհաստան, Հունգարիա, Չեխիա, Սլովակիա, Ռումինիա), ինչպես նաև բալթյան երկրների միջև: Համաձայնագրի միացյալ ծրագրում ընդգրկվեցին ֆինանսական, տնտեսական, առևտրական, օրենսդրական հարցեր: Եվրոպական ակտի համաձայն՝ 1993 թ. հունվարի 1-ից ԵՀ սահմաններում առաջացավ միացյալ տնտեսական տարածք:

1992 թ. փետրվարին Մաաստրիխտում (Նիդեռլանդներ) ստորագրվեց օրենք Եվրամիության մասին, որն ուժի մեջ մտավ 1993 թ. նոյեմբերի 1-ից: Մաաստրիխտյան պայմանագրի հիման վրա 1994 թ. հուն-

վարի 1-ից ԵՏՀ-ը վերափոխվեց Եվրոպական Միության (ԵՄ), մտցվեց «Եվրո» միասնական արժույթը, ստեղծվեց Կենտրոնական բանկ և ԱՄՆ ֆեդերալ համակարգի տիպի Եվրոպական կենտրոնական բանկային համակարգ: Ընդունվեց «Մաաստրիխտյան ստանդարտները», ըստ որի.

- ԵԱՀ երկրների պետբյուջեի դեֆիցիտը չպետք է գերազանցեր իրենց ՀՆԱ 3 տոկոսը,
- պետական կուտակված պարտքերը չպետք է գերազանցեն ՀՆԱ 60 տոկոսը:

1997 թ. հոկտեմբերին Ամստերդամի պայմանագրով լրացումներ մտցվեցին Մաաստրիխտյան պայմանագրում: 1999 թ. սկսեց գործել Եվրոպական կենտրոնական բանկի համակարգը, և օգտագործվեց եվրոարժույթը: 2002 թ. հուլիսի 1-ից անդամ երկրների ազգային արժույթները հանվեցին շրջանառությունից և շրջանառությունն իրականացվեց եվրոյով: 2004 թ. Մեծ Բրիտանիան չմիացավ եվրագոտուն և համաշխարհային ֆինանսական կենտրոնի դերը Լոնդոնից անցավ Մայնի Ֆրանկֆուրտին և Փարիզին:

4.3 Աշխարհի ինտեգրացիոն գլխավոր միավորումները

ՄՏՀ-ն իրականացվում է պայմանագրային հիմունքներով պետությունների փոխհամաձայնությամբ: Այն բխում է երկրների տնտեսական քաղաքականությունից, սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակից: Ինտեգրացիոն միավորումների խնդիրը շուկաների բաժանումը և վերաբաժանումն է, որոնք նպաստում են երկրների միջև նոր հարաբերությունների և միջազգային ընկերությունների աճին:

Ներկայում աշխարհում հաշվվում է միջազգային տնտեսական մոտ 20 միավորում, որոնք ունեն բնորոշ առանձնահատկություններ և աշխարհագրական տեղաբաշխում: ՀՏ գլխավոր խմբավորումն ընդգրկում է «Մեծ ությակի» երկրները, որոնց բաժին է ընկնում համաշխարհային արտադրանքի և ԱՀԱ կեսից ավելին, գյուղատնտեսական արտադրանքի 25 տոկոսը: Առավել խոշորներից է Եվրոպական համագործակցությունը, որի բաժինը համաշխարհային ՀՆԱ-ի մեջ կազմում է 40 տոկոս: 1960 թ. Մեծ Բրիտանիայի նախաձեռնությամբ Ստոկհոլմում ստորագրված կոնվենցիայի հիման վրա ստեղծվեց ***Ազատ առևտրի Եվրոպական համագործակցությունը (ԱԱԵՀ),*** որն առևտրատնտեսական միավորում է, ազատ առևտրի գոտի: Արդյունաբերական ապրանքների համար այն գործում է առանց մաքսերի: Ի տարբերություն Եվրամիության, չունի անդրազգային ֆունկցիաներ և միջպետական կոորդինացնող ինստիտուտներ: Սկզբում ԱԱԵՀ կազմում ընդգրկվեցին Ավստրիան, Մեծ Բրիտանիան, Դանիան, Նորվեգիան, Պորտուգալիան, Շվեդիան, Շվեյցարիան: 1961 թ. անդամագրվեց Ֆինլանդիան, 1970 թ.՝ Իսլանդիան: 1973 թ. ԱԱԵՀ-ի կազմից դուրս եկան Մեծ Բրիտանիան, Դանիան, 1986 թ.՝ Պուրտուգալիան: Ներկայում ԱԱԵՀ անդամ են Ավստրիան, Շվեդիան, Ֆինլանդիան, Իսլանդիան, Նորվեգիան, Շվեյցարիան: Գրասենյակը գտնվում է Ժնևում: Ընկերակցության գործունեությունը ղեկավարում է Խորհուրդը, որը սերտ կապեր ունի ԵՄ-ի հետ: 1991 թ. հունվարի 1-ին ԱԱԵՀ երկրներն իրենց ազգային օրենսդրության մեջ ընդգրկել են ԵՄ օրենսդրական ակտեր ապրանքների, կապիտալի և ծառայությունների ազատ տեղաշարժերի վերաբերյալ:

Ազատ առևտրի հյուսիսամերիկյան ընկերությունը (ՀԱՓԹԱ) առաջին պաշտոնական քայլերն արել է 1947 թ.: 1959 թ. ԱՄՆ-ը և Կանադան համաձայնագիր ստորագրեցին համատեղ ռազմական արտադրություն կազմակերպելու մասին: 1970-ական թվականներին նրանց միացավ Մեքսիկան: 1992 թ. եռյակն ստորագրեց ***Հյուսիսամերիկյան ազատ առևտրի համաձայնագիր (ՀԱՓԹԱ),*** որն սկսեց գործել 1994 թ. հունվարի 1-ից: Համաձայնագրի նպատակն էր.

- ավելացնել անդամ երկրների ինվեստիցիաները,
- պահպանել ինտելեկտուալ սեփականությունը:

Երեք երկրի միջև նախատեսվել է ապրանքների, ծառայությունների և կապիտալի շարժի ազատականացում: Ընկերությունն այսօր միավորում է ավելի քան 450 մլն բնակչությամբ հզոր տնտեսական ներուժ ունեցող տարածաշրջան, որին բաժին է ընկնում համաշխարհային առևտրի ծավալի 20 և ՀՆԱ 30 տոկոսը: Կանադայի արտաքին առևտրի 70 տոկոսն արտահանվում է ԱՄՆ: Ավելի քան 1500 կանադական ձեռնարկություններ կապի մեջ են ամերիկյան ձեռնարկությունների հետ:

Համաձայնության հիմնական դրույթներում նախատեսվում է.

- ԱՄՆ-ի, Կանադայի, Մեքսիկայի միջև վաճառվող ապրանքների մաքսատուրքերի վերացում,
- հյուսիսամերիկյան շուկայի պաշտպանություն օտարերկրյա ընկերությունների էքսպանսիայից, որպեսզի վերջիններս իրենց ապրանքները Մեքսիկայով ԱՄՆ չտեղափոխեն՝ խուսափելով մաքսատուրքերից:

Ասիական-խաղաղօվկիանոսյան տնտեսական միությունը **(ԱԽՏՄ)** ստեղծվել է 1989 թ. Ավստրալիայի նախաձեռնությամբ՝ նպատակ ունենալով համախմբել խաղաղօվկիանոսյան տարածաշրջանը: ԱԽՏՄ-ն ընդգրկում է Ասիայի, Հյուսիսային և Հարավային Ամերիկայի 18 պետություն (Կանադա, ԱՄՆ, Մեքսիկա, Ավստրալիա, Նոր Զելանդիա, Նոր Գվինեա, Ինդոնեզիա, Մալայզիա, Սինգապուր, Թաիլանդ, Թայվան, Ֆիլիպիններ, Հարավային Կորեա, Հոնկոնգ, ԿԺՀ, Ճապոնիա, Չիլի, Բրունեյ): 1998 թ. անդամագրվել են նաև Ռուսաստանը, Հնդկաստանը, Չինաստանը, Վիետնամը, Մոնղոլիան, Պակիստանը, Կոլում-

բիան, Էկվադորը, Պերուն: Համագործակցությունը կարելի է գնահատել որպես «բաց տնտեսական ինտեգրացիայի» խմբավորում:

Տնտեսագիտական տեսակետից միության առանձնահատկությունն այն է, որ նրանում ընդգրկվել են ինչպես խոշոր արդյունաբերական զարգացած (ԱՄՆ, Կանադա, Ճապոնիա, Ավստրալիա), այնպես էլ դրանց զիջող երկրներ: ԱԽՏՄ-ին բաժին է ընկնում աշխարհի բնակչության ավելի քան 40, համաշխարհային ՀՆԱ 55 տոկոսը (ԵՄ նույն ցուցանիշները կազմում են 7 և 20 տոկոս), այդ թվում՝ նավթի, ավտոմեքենաների, հեռուստացույցների արտադրության 70, պլաստմասսայի 60, ալյումինի 50 տոկոսը:

Հարավ-Արևելյան Ասիայի պետությունների ազատ առևտրի ընկերությունը (ACEAH) ստեղծվել է 1980-ական թվականներին և ընդգրկում է 12 երկրներ՝ Հարավային Կորեան, Ճապոնիան, Ավստրալիան, Նոր Զելանդիան, Ինդոնեզիան, Մալայզիան, Ֆիլիպինները, Թաիլանդը, Սինգապուրը, Թայվանը, ինչպես նաև ԱՄՆ-ը և Կանադան: 1995 թ. ընդգրկվել է նաև Վիետնամը: Ընկերության պաշտոնական նպատակն է ապահովել անդամ երկրների տնտեսական աճը, աջակցել սոցիալական առաջընթացին և մշակութային զարգացմանը: Կառավարման համակարգի բարձրագույն օրգանը երկրների արտաքին գործերի նախարարների խորհուրդն է և մշտական գործող քարտուղարությունը: Կենտրոնը գտնվում է Ջակարտայում: Ընկերության անդամները միաժամանակ նաև այլ ընկերությունների անդամներ են: 2005 թ. դեկտեմբերի 13-ին Մալայզիայի մայրաքաղաք Կուալա-Լումպուրում տեղի ունեցավ ACEAH անդամ երկրների ամենամյա գագաթաժողովը, որտեղ քննարկվեցին տարածաշրջանի տնտեսական ինտեգրմանը վերաբերող հարցեր (հիմնականում ազատ առևտրի գոտի ստեղծելու հարցը): Իրար մեջ մաքսային տուրքերը սահմանվեցին 0.5 տոկոս:

ACEAH-ն առաջատար տարածքային կազմակերպություն է: 2009 թ. Հարավարևելյան Ասիայի երկրները համաձայնության եկան 120 մլրդ դոլար տարածքային արժութային ֆոնդ ստեղծելու համար, որի նպատակն էր տարածքի երկրներին տնտեսական օգնություն ցույց տալը ոչ միայն ՄԱՖ շրջանակում: Ֆոնդի 80 տոկոսը կազմում էին Չինաստանի, Ճապոնիայի և Կորեայի Հանրապետության միջոցները: ԱՄՆ-ը ձգտում էր կրճատել Չինաստանի ազդեցությունը տարածքի վրա՝ սերտ կապեր ստեղծելով Ճապոնիայի հետ:

ACEAH առաջատար երկրներն իրականացնում են հետևյալ գործունեությունները.

- շինարարական, ինժեներական, շինանյութերի արտադրություն (13 ընկերություն),
- հեռահաղորդակցություն (11 ընկերություն),

- կիսահաղորդիչների և համակարգիչների արտադրություն (13 ընկերություն),
- տրանսպորտի կազմակերպում (14 ընկերություն)[12]:

Լատինական Ամերիկայի ինտեգրման ընկերակցությունը (ԼԱԻԸ) առևտրատնտեսական կազմակերպություն է: Ստեղծվել է 1981 թ. «Մոնտեվիդեո 80» պայմանագրի համաձայն, 1961 թ.-ից գործող Ազատ առևտրի լատինաամերիկյան ընկերակցության հետ միասին: ԼԱԻԸ անդամ են 11 երկիր՝ Արգենտինան, Բոլիվիան, Բրազիլիան, Վենեսուելան, Կոլումբիան, Մեքսիկան, Պարագվայը, Չիլին, Ուրուգվայը, Պերուն, Էկվադորը: Կառավարման համակարգի բարձրագույն օրգանը Նախարարների խորհուրդն է: Շտաբ-բնակատեղը գտնվում է Մոնտեվիդեո քաղաքում (Ուրուգվայ): Տնտեսական հարաբերություններն ընդգրկում են առևտուրը, արդյունաբերությունը, գյուղատնտեսության ոլորտը, արտադրությունը, տրանսպորտային, արժութաֆինանսական գործարքները:

Ինտեգրացիոն գործընթացն Աֆրիկայում սկսվել է 1960-ական թվականներին: Սկզբնական շրջանում ինտեգրացիան սկսվել է Զամբիա, Սենեգալ գետերի օգտագործման համար «գետային պրոֆիլով» (7 կազմակերպություն), իսկ ***Արևմտյան Աֆրիկայի պետությունների տնտեսական ինտեգրացիոն միավորումը (ЭКОВАС)*** հիմնվել է 1975 թ.: Անդամներն են Բենին, Գանան, Գվինեան, Նիգերիան, Սենեգալը և այլ երկրներ: Վարչական օրգանը Գործադիր քարտուղարությունն է: Կենտրոնը գտնվում է Նիգերիայում (Լոգոս): Նպատակն է.

- զարգացնել բազմակողմ տնտեսական համագործակցություն,
- մոբիլիզացնել բնական ռեսուրսների օգտագործումը,
- վարել համատեղ տնտեսական քաղաքականություն և ստեղծել (փուլերով) աֆրիկյան ընդհանուր շուկա:

Տնտեսական ինտեգրացիայի տարածաշրջանային համագործակցության ձև է ***մաքսային միությունը***, երբ անդամ երկրները վերացնում են միմյանց միջև գոյություն ունեցող առևտրային արգելքները և նախատեսում են միասնական առևտրական սահմանափակումներ այլ երկրների նկատմամբ:

Կենտրոնական Աֆրիկայի մաքսային և տնտեսական միությունը (ЮДЕАК) ստեղծվել է 1964 թ. Բրազավիլում (Կոնգո) և սկսել է գործել 1966 թ.: Անդամ երկրներն են Գաբոն, Կամերունը, Կոնգոն, Կենտրոնական Աֆրիկյան Հանրապետությունը (ԿԱՀ), Չադը և այլն: Շտաբ-բնակարանը գտնվում է ԿԱՀ-ում (Բանգի): Նպատակն է.

- ստեղծել ընդհանուր շուկա՝ աստիճանաբար հանելով փոխադարձ առևտրի սահմանափակումները,
- կառուցել համատեղ ձեռնարկություններ:

[12] Мировая экономика и международные отношения, журнал Наука, М., 2011, N 1, 9.

Այս օղակում գործում են նաև վարկային համագործակցության օրգանները՝ ***Կենտրոնական Աֆրիկայի զարգացման բանկը*** և ***Համերաշխության հիմնադրամը:***

Աֆրիկյան և արաբական երկրների ինտեգրացիոն համագործակցությունը (Արաբական Մաղրիբի միություն) կազմակերպվել է 1989 թ. Ալժիրի, Լիբանանի, Մավրիտանիայի, Մարոկկոյի և Թունիսի մասնակցությամբ: Միության ծրագրում նախատեսվում է լայնամասշտաբ տնտեսական համագործակցություն տարածաշրջանի ինտեգրացման նպատակով:

1981 թ. ստեղծվել և գործում է ***Պարսից ծոցի արաբական պետությունների համագործակցության խորհուրդը,*** որն ընդգրկում է Սաուդյան Արաբիան, Քուվեյթը, Կատարը, Արաբական Միացյալ Էմիրությունները, Օմանը, Բահրեյնը: Համագործակցության նպատակն է տնտեսությունները, նավթարդյունաբերությունը զարգացնելը, միասնական շուկա ստեղծելը:

Ստեղծվել են նաև ***աֆրիկյան անտառամշակման արդյունաբերական կազմակերպություն, կակաոյի արտադրության միջազգային միություն, բրնձի մշակման, զարգացման ասոցիացիա:*** 1990 թ. չորս տասնյակ երկրներից, որոնք պատկանում էին թույլ զարգացածների թվին, 25-ը գտնվում էին Աֆրիկայի տարածքում: Ինտեգրացիոն միավորումները պետք է նպաստեին այդ երկրների տնտեսական զարգացմանը: 1993 թ. Կամպալայում (Ուգանդա) ստորագրվեց Արևելյան և Հարավային Աֆրիկայի երկրների ***Արտոնյալ առևտրի գոտի*** և ***ընդհանուր շուկա*** կազմավորելու պայմանագիրը, որն ընդգրկում էր 21 երկիր:

Արաբական պետությունների լիգան համախմբում է արաբական 22 պետություններ և Պաղեստինի ազատագրական կազմակերպությունը: Ստեղծվել է 1945 թ. Կահիրեում (Եգիպտոս): Հիմնադիր անդամներն են Եգիպտոսը, Սիրիան, Իրաքը, Լիբանանը, Սաուդյան Արաբիան, Հորդանանը:

Նավթարդյունահանման պետությունների միությունը (ՕՊԵԿ) ստեղծվել է 1960 թ.: Անդամներն են 14 պետություններ (Ալժիր, ԱՄԷ, Գաբոն, Էկվադոր, Լիբանան, Իրաք, Իրան, Սաուդյան Արաբիա, Նիգերիա, Քուվեյթ, Կատար, Օման, Բրունեյ, Ինդոնեզիա) 3 աշխարհամասերից: Գրասենյակը գտնվում է Վիեննայում: 2007 թ. հետո նավթի քվոտաները չեն բարձրացել: 2011 թ. հունիսի 8-ին ՕՊԵԿ-ը Վիեննայում կայացած նիստի ընթացքում նորից չբարձրացրեց քվոտաները: Նավթարդյունահանման ծավալների օգտին (1.5 մլն բարել/օր) հանդես է եկել Սաուդյան Արաբիան, սակայն Իրանը պահանջում էր անփոփոխ թողնել քվոտաները: Նախատեսվում էր մինչև 2011 թ. վերջը նավթի աճն ավելացնել 1.7 մլն բարել/օրով և հասցնել 88.43 մլն բարել/օրվա: Պահանջարկի բարձրացումը պայմանավորված է Ճապոնիայի, Չինաստանի, Մերձավոր Արևելքի երկրների պահանջարկի աճով:

Ներկայում ՕՊԵԿ-ի նավթի արդյունահանման քվոտան կազմում է 24.845 մլն բարել/օր[13]:

1991 թ. ստեղծվեց ***Սևծովյան տնտեսական համագործակցությունը,*** որի կազմում ընդգրկվեցին Հայաստանը, Ռուսաստանը, Թուրքիան, Հունաստանը, Բուլղարիան, Ռումինիան, Մոլդովան, Ուկրաինան, Վրաստանը, Ադրբեջանը, Ալբանիան:

Եղել են նաև միջազգային կազմակերպություններ, որոնք դադարել են գործելուց: ՄԱԿ-ին նախորդել է ***Ազգերի լիգան,*** որը հիմնադրվել էր 1919 թ. Վերսալի պայմանագրով Փարիզի հաշտության կոնֆերանսում: Գործել սկսել է 1920 թ. հունվարի 10-ից: Ղեկավար մարմիններն էին Ասամբլեան, Խորհուրդը, Քարտուղարությունը: Նպատակն էր կանխել պատերազմը, պահպանել խաղաղությունը: Աշխատատեղը ժնևն էր: Ազգերի լիգան դադարեց գործելուց, երբ նրան չհաջողվեց կանխել երկրորդ համաշխարհային պատերազմը: Կազմակերպությունը պաշտոնապես լուծարվեց 1946 թ. ապրիլի 18-ին:

Տնտեսական փոխօգնության խորհուրդը (ՏՓԽ) գործել է 1949-1991 թթ. ԽՍՀՄ գլխավորությամբ: Անդամներ էին նաև 7 դեմոկրատական և 5 սոցիալիստական պետություններ՝ Մոնղոլիան, Վիետնամը, Հյուսիսային Կորեան, Լաոսը և Կուբան: Կենտրոնը Մոսկվան էր: Դադարեց գործելուց ԽՍՀՄ փլուզման պատճառով: 1990 թ. ՏՓԽ անդամ երկրները կազմակերպեցին ինտեգրացիոն խմբավորում, որի կազմում ընդգրկվեցին Հունգարիան, Լեհաստանը և Չեխոսլովակիան: Վերջինիս բաժանումից հետո խմբում հանդես եկան Չեխիան և Սլովակիան առանձին-առանձին:

1993 թ. մարտի 1-ին խմբավորման շրջանակներում ուժի մեջ մտավ Ազատ առևտրի մասին Կենտրոնական եվրոպական համաձայնագիրը, որով նախատեսվում է վերացնել բոլոր մաքսային արգելքները Չեխիայի, Հունգարիայի, Լեհաստանի, Սլովակիայի միջև:

Այսպիսով, աշխարհի ինտեգրացիոն խմբավորումները տեղաբաշխվել են աշխարհագրական բոլոր տարածաշրջաններում, և նրանց միջև տնտեսական պայքարը հանգեցնում է ազդեցության ոլորտների փոփոխությունների, քանի որ ինտեգրացիոն գործընթացների նպատակն ազգային տնտեսությունների, կապիտալի շուկաների, արտաքին առևտրի արդյունավետության բարձրացումն է (մյուս միությունները և ընկերությունները նշված են աղ. 4.1-ում):

4.4. Անդրազգային կազմակերպությունները ՄՏՀ-ում

Ժամանակակից ԱԱԿ զարգացումն անբաժան է ՄՏՀ-ից, ինչը համաշխարհային տնտեսության կարևորագույն միտումներից մեկն է: ԱԱԿ-ն իրականացնում է կապիտալի շարժ երկու կամ մի քանի երկր-

[13] Օրաթերթ, Կապիտալ, 09.06.11 թ. և 11.06.11 թ., N 107,108:

ների միջև, որոնց նպատակը ներդրումներն են: Այն հանդես է գալիս կորպորացիայի, ձեռնարկությունների, ֆիրմաների, անդրազգային ընկերությունների և այլ ձևերով: Գլխամասային ընկերությունը և օբյեկտները կարող են տեղաբաշխվել տարբեր երկրներում:

ԱԱԿ-ը ձևավորվել են 1960-ական թվականներին, երբ ստեղծվել է ՄԱԿ անդրազգային ընկերությունների Հանձնաժողովը: 1974 թ. ՄԱԿ-ի տնտեսական և սոցիալական խորհրդին առընթեր ստեղծվել են ԱԱԿ-ն ուսումնասիրող Հանձնաժողով և Կենտրոն: Հետագայում հանձնաժողովը ներառվել է ՄԱԿ Առևտրի և զարգացման կոմիտեի (ՅՈՒՆԿՏԱԴ) կազմում:

Առաջին ԱԱԿ-ը ստեղծվել են 20-րդ դարի կեսերին և անցել մի քանի փուլ: ***ԱԱԿ առաջին սերնդի*** գործունեությունը կապված էր հումքային ռեսուրսների վերամշակման հետ: Այնուհետև ասպարեզ են իջել ռազմատեխնիկական արտադրանքի հետ կապված տրեստային տիպի ***երկրորդ սերնդի ԱԱԿ-ը,*** որոնց գործունեությունը հիմնվում էր նույն ռեսուրսների վերամշակման վրա: 1960-ականներին նշանակալից դեր խաղացին ***երրորդ սերնդի ԱԱԿ-ը,*** որոնց գործունեությունը ևս հիմնվում էր ռեսուրսների վերամշակման վրա: 1980-ական թվականներին ի հայտ եկան ***չորրորդ սերնդի գլոբալ ԱԱԿ-ը***: Սկսվեցին լայնորեն կիրառվել ներդրումների այնպիսի ձևեր, ինչպիսիք են ռազմավարական միավորումները, ալյանսները: ***ԱԱԿ հինգերորդ սերնդի*** գործունեությունը պայմանավորված է ժամանակակից գլոբալ տնտեսական և քաղաքական պայմաններով: 1990-ական թվականներին ԱԱԿ-ին բնորոշ էին կապիտալ ներդրումները ծառայությունների ոլորտում:

ՄԱԿ Առևտրի և զարգացման միջազգային կոմիտեն (ՅՈՒՆԿՏԱԴ) 1997 թ. մշակեց ԱԱԿ-ի մասին կոնվենցիա, որով սահմանվեցին.

- կորպորացիաների ստեղծման և գրանցման կարգը,
- պետական հովանավորումը և գործունեության խրախուսումը,
- գործունեության մասնակիցների պատասխանատվությունը, հաշվետվությունը և հսկողությունը:

1999 թ. ԱԱԿ-ի համար աշխարհում ընդունվել է 136 օրենսդրական ակտ: Անհրաժեշտություն է առաջացել խոշորացնելու ԱԱԿ-ը: Եղած տվյալների համաձայն ներկայում դրանց թիվը կազմում է մոտ 85 հազար, գործում են մոտ 850 հազար մասնաճյուղեր, ձեռնարկություններ, որոնք կազմում են համաշխարհային արդյունաբերության մոտ կեսը, արտաքին առևտրի մոտ 63.0 տոկոսը, որից ներֆիրմային առևտրին բաժին է ընկնում 35 տոկոսը: 2008 թ. ԱԱԿ-ում զբաղվածների թիվը 64 մլն մարդ էր՝ 1990 թ.-ի 24 մլնի փոխարեն: Վաճառքի ընդհանուր ծավալը կազմում է 19 տրլն դոլար: ԱԱԿ-ը ոչ միայն ազդում են երկրների ազգային տնտեսական քաղաքականության վրա, այլև միջազգային գործունեության ոլորտում կարգավորում են առևտրական

կանոնները, նորմերը, համարվում են կապիտալի արտահանման հիմնական սուբյեկտներ ուղղակի ինվեստիցիաների ձևով:

Անդրազգային կապիտալը ստեղծել է ֆինանսական ինստիտուտներ, անդրազգային բանկեր, որոնք իրականացնում են անդրազգային կապիտալի շարժի համար անհրաժեշտ ֆինանսական գործառույթներ: Ներկայում միջազգային բանկերը կենտրոնացած են երեք հիմնական տարածաշրջաններում (ԱՄՆ, Արևմտյան Եվրոպա, Հարավարևելյան Ասիա)՝ Նյու Յորք, Լոնդոն, Ցյուրիխ, Լյուքսեմբուրգ, Մայնի Ֆրանկֆուրտ, Հոնկոնգ, Տոկիո և այլ քաղաքներում (ընդամենը 13 ֆինանսական կենտրոն՝ մոտ 100 մասնաճյուղերով, բաժանմունքներով):

Լայն տարածում ունեն օֆֆշորային բանկերը, որոնք հիմնադրվում են նույն նպատակներով, ինչ օֆֆշորային կորպորացիաներն այն տարբերությամբ, որ.

- օֆֆշորային բանկն իրավունք չունի աշխատելու երկրի ռեզիդենտների հետ,
- գրանցման համար վճարվող կապիտալը փոքր է,
- բանկերն ազատված են բոլոր հարկերից:

Օտարերկրյա կապիտալով ձեռնարկությունները կարող են ունենալ մասնաճյուղ՝ ամբողջությամբ ոչ ռեզիդենտին պատկանող ընկերություն, դուստր ընկերություն, որտեղ ռեզիդենտը տիրապետում է կապիտալի 50 տոկոսից ոչ ավելիին, և ասոցացված ընկերություններ, որտեղ ներդրողը տիրապետում է կապիտալի 10-50 տոկոսին:

2000 թ. ՅՈՒՆԿՏԱԴ-ը հրապարակել է ԱԱԿ ցանկը: ԱԱԿ-ը բազավորվել են հիմնականում ինդուստրիալ երկրներում՝ Հոնկոնգում, Մեքսիկայում, Հարավային Կորեայում և այլն: Համաշխարհային հայտնի ԱԱԿ է ИТТ-ը (Интернэйшнл Телефон энд Телеграф): Ռուսաստանում գործող 80 խոշոր ԱԱԿ-ից 21-ը մտադիր են իրականացնել 52-54 մլրդ դոլարի ինվեստիցիա Ռուսաստանի արդյունաբերության 6 ճյուղերում (նավթի, գազի արդյունահանում, ծխախոտագործություն, հանրային սնունդ, ավտոմոբիլային, մեքենաշինություն):

Այսպիսով, ԱԱԿ-ն ընդգրկում են բոլոր այն ընկերությունները, որոնք երկու-երեք երկրներում ունեն մասնաճյուղեր՝ անկախ գործունեության ոլորտից:

4.5 Միջազգային համատեղ ձեռնարկությունները որպես Անդրազգային կազմակերպությունների բաղկացուցիչ մաս

Հասարակության տնտեսական զարգացման համար առաջանում են բազմաթիվ հիմնախնդիրներ՝ կապված արտադրության կատարելագործման, արդյունքի իրացման, տրանսպորտի, կապի և կառավարման մյուս ենթակառուցվածքների հետ: Անհրաժեշտություն է առաջանում ներմուծելու հումք, ապրանք, արտադրության միջոցներ, ներդնե-

լու ինվեստիցիաներ, ԳՏ ներուժ: Սա իրականացվում է ԱՄԲ-ի միջոցով, որը փոփոխություններ է մտցնում միջազգային տնտեսական գործունեության կոնկրետ ձևերում: Սովորական ապրանքափոխանակության հարաբերությունները փոխարինվում են արտադրական համագործակցությամբ, ինչը պայմաններ է ստեղծում համատեղ արտադրության կազմակերպման, մասնագիտացման և կոոպերացման համար:

Նյութական արտադրության ոլորտում միջազգային տնտեսական համագործակցությունը զարգանում է չորս ուղղություններով:

1. Արտադրության միջազգային մասնագիտացում և կոոպերացում:
2. Արտադրանքի համատեղ թողարկում:
3. Համագործակցություն կապիտալ շինարարության բնագավառում:
4. Համատեղ ձեռնարկությունների կազմակերպում:

Միջազգային արտադրական համագործակցությունն իրականացվում է գիտատեխնիկական միջոցների համատեղ օգտագործման, միջազգային տնտեսական միավորումների, խառն ընկերությունների ստեղծման միջոցով: Այս ամենը կազմակերպվում է անդամության սկզբունքով, իսկ մասնակից կարող են լինել ինչպես ազգային, այնպես էլ արտասահմանյան իրավաբանական անձինք: Կոլեկտիվ կազմավորումները ստեղծվում են փոխադարձ պայմանագրերի կնքման հիման վրա, ինչը կողմերին թույլ է տալիս հանդես գալու որպես իրավունքի ինքնուրույն սուբյեկտներ:

Միջազգային արտադրական կապերը հիմնականում իրականացնում են համատեղ ձեռնարկությունները (ՀՁ), որոնք իրենցից ներկայացնում են երկու կամ ավելի երկրների արտադրատնտեսական գործունեություն, որի նպատակն է արտադրության կոոպերացումը՝ արտադրության, շրջանառության, գիտատեխնիկական և ծառայությունների ոլորտում ինվեստիցիաների ներդրման միջոցով: Այս գործունեության հիմքում ֆինանսական միջոցների, նյութական ռեսուրսների միավորումն է, արտադրանքի իրացման երաշխիքը, արտադրատեսակների հաճախակի նորացումը, շահույթի բաշխումը և այլն: Համագործակցության այս ձևը նպաստում է արտադրական հումքի, նյութերի և ֆինանսական ռեսուրսների մատակարարմանը: Համատեղ կազմակերպությունները ստեղծում են կոոպերացիայի զարգացման միջազգային հիմնադրամ, որը հնարավորություն է տալիս կատարելու տեխնոլոգիական սարքավորումների, արտադրության միջոցների ձեռք բերման և այլ կազմակերպչական ծախսեր: ՀՁ-ը կազմակերպվում է երկրների կառավարությունների մակարդակով: Դա հնարավորություն է տալիս ռացիոնալ օգտագործելու տվյալ երկրի բնական և աշխատանքային ռեսուրսները, գիտատեխնիկական ներուժը, շուկաներ թափանցելու «ներսից», շրջանցելով մաքսային արգելքները՝

հաղթահարելու առանձին երկրների ներքին շուկայի սահմանափակումները, հասնելու թողարկվող արտադրանքի տեսականու ավելացմանը, ընդլայնելու երկրի ապրանքադրամական հարաբերությունների ոլորտը, ուժեղացնելու կապը շուկաների միջև: Ազգային միավորումները համաձայնության են գալիս տվյալ երկրում արտադրություն կազմակերպելու համար, եթե դա պահանջում է արտադրական քիչ ծախսեր, էժան հումք և աշխատուժ:

Համատեղ ձեռնարկությունների կազմակերպման ***նպատակը*** բարձր պահանջարկ վայելող ապրանքների թողարկումն է, սեփական արտադրանքի արտահանումը, նույնատեսակ ապրանքների ներմուծման կրճատումը, դեֆիցիտ ապրանքների քանակի ավելացումը, հայրենական արտադրանքի, հումքի, պարենամթերքի որոշ տեսակների պահանջարկի բավարարումը, նոր տեխնոլոգիաների, սարքավորումների ներդրումը, տնտեսական գործունեությունից շահույթի ստացումը: ՀՁ-ը հնարավորություն են տալիս ձեռք բերելու տեխնոլոգիաներ, որոնք հնարավոր չէ գնել այլ ճանապարհով: Արտասահմանյան ընկերությունները ձգտում են նման ձեռնարկություններ կազմակերպել այնպիսի տնտեսական շրջաններում, որտեղ կան մասնագետների համար բավարար սոցիալական պայմաններ:

ՀՁ ստեղծումն իրավիճակի խնդիր չէ, այլ երկարաժամկետ գործունեություն, որը նպաստում է երկրի տնտեսության զարգացմանը: Արտասահմանյան արտադրական, բանկային, գիտատեխնիկական, շինարարական, տրանսպորտի ծառայությունների ներկայացուցիչները համատեղ գործունեություն ծավալելու համար տեխնիկատնտեսական հիմնավորումներով և նախագծային փաստաթղթերով ներկայանում են տվյալ երկրի կառավարող օրգաններին: Կառավարության որոշմամբ գործունեություն իրականացնող տեղական կազմակերպիչներն օտարերկրյա գործընկերների հետ սկսում են համատեղ ձեռնարկությունների կազմակերպումը: Գործարքը երկկողմանի բնույթ ունի: Որպես տնտեսական գործունեության սուբյեկտ, ՀՁ-ն ինքնուրույն կազմակերպություն է՝ հիմնված համատեղ սեփականության վրա, և իրավունք ունի ինքնուրույն հաշվեկշռով, տնտեսական հաշվարկի սկզբունքով մասնաճյուղեր ստեղծելու: Արտադրանքի թողարկման ընտրությունը նախատեսվում է ՀՁ ***կանոնադրությամբ,*** որը կազմվում և հաստատվում է մասնակիցների կողմից: Կանոնադրությամբ որոշվում են ձեռնարկության գործունեության նպատակը, հիմնադրամի գումարը, բաժնային մասնակցության չափը, կառավարման օրգանների կառուցվածքը և կազմը, իրավասությունը, որոշումների ընդունման և ձեռնարկության լուծարման կարգը: Գործունեության ժամկետները սահմանվում են պայմանագրով՝ կողմերի համաձայնությամբ: Սահմանվում են նաև ֆոնդերի տեսակները և գումարները (պահուստային, ամորտիզացիոն, արտադրության ընդլայնման, գիտության և

տեխնիկայի, աշխատավարձի, սոցիալական զարգացման և այլն): Կողմերը մշակում և հաստատում են գործունեության ծրագիր:

Կանոնակարգով նախատեսվում է, որ արտասահմանյան մասնակիցների բաժնային մասնակցությունը չպետք է գերազանցի 49, իսկ տեղի կազմակերպությանը՝ ոչ պակաս 51 տոկոսը, որը գնահատվում է արժույթով՝ միջազգային կուրսով արտահայտված: Նրանք իրավունք ունեն իրենց անհրաժեշտ հումքի, նյութերի ապրանքների գնումներ կատարելու ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շուկաներից, իսկ արտաքին շուկաներում՝ իրացնելու միայն սեփական արտադրանքը:

ՀՁ գործունեության արդյունավետությունը կախված է երկու կողմերի վրա դրված ***պարտականությունների*** կատարումից: Դրանք են ձեռնարկության կառավարման գործընթացին, գույքի ձեռք բերմանը, եկամուտների և ծախսերի բաշխմանը մասնակցելը, գործունեության մասին անհրաժեշտ տվյալներ ստանալը և որոշումներ կայացնելիս առաջարկություններ, փոփոխություններ անելը: Պայմանագրում նշվում է ***միակողմ*** և ***երկկողմ*** պարտավորությունների մասին: ***Միակողմ*** պարտավորություն կարելի է համարել արտասահմանից սարքավորումներ և գույք բերելիս մաքսակետի հետ տեղի կազմակերպության համաձայնեցումը, ՀՁ-ին օգնելու նպատակով տեղական հիմնարկների և կազմակերպությունների հետ տարբեր գործնական քայլեր կատարելը, արտասահմանյան մասնագետների համար կանչեր ձևակերպելը և այլն: ***Երկկողմ*** պարտավորություններ են համարվում կանոնադիր ֆոնդին ներդրումներ կատարելը, ՀՁ կառավարմանը մասնակցելը և այլն:

ՀՁ ֆինանսական միջոցները գոյանում են կողմերի ներդրումներից: Հիմնադրումը, ըստ պայմանավորվածության, գնահատվում է ինչպես օտարերկրյա, այնպես էլ տվյալ երկրի արժույթով, հաշվի առնելով համաշխարհային շուկայական գները: ՀՁ-ն առաջին երկու տարում ազատվում է հարկեր վճարելուց: Ընդհանուր շահույթի մի մասը հատկացվում է ձեռնարկության զարգացման ֆոնդին, մյուսը բաշխվում է կողմերի միջև՝ ըստ նրանց բաժնային մասնակցության հարաբերության:

Սեփականության իրավունքը պայմանագրում չի նշվում՝ բացի կողմերից մեկի հայտնագործությունը կամ առաջարկությունն արտադրությունում ներդնելու ժամանակ տրվող գույքային իրավունքից:

Ձեռնարկությունների գործունեության ընթացքում կազմվում են տարբեր փաստաթղթեր.

- ***պարտադիր*** փաստաթղթեր՝ համատեղ ձեռնարկության մասին պայմանագիր, կանոնադրություն, կոնտրակտներ (սարքավորումների, հումքի, լիցենզիաների, շինմոնտաժային աշխատանքների, առք ու վաճառքի),

- ***ոչ պարտադիր*** փաստաթղթեր (նամակներ, արձանագրություններ, հարցումներ, գրություններ, ծրագրային նյութեր և այլն):

Կառավարման ***բարձրագույն օրգանը*** վարչությունն է և ստուգող հանձնաժողովը՝ ընտրված կողմերի ներկայացուցիչներից:

Համատեղ ձեռնարկությունները կարող են լուծարվել վարչության որոշմամբ կամ Կանոնադրության համաձայն՝ գործունեության սահմանված ժամկետը լրանալուց հետո: Լուծարման դեպքում վարչությունը կողմերից ընտրում է լուծարման հանձնաժողով, որը շուկայի ընթացիկ գներով հաշվում է դեբիտորական և կրեդիտորական պարտքերը, անշարժ և շարժական գույքը, կազմում լուծարման հաշվեկշիռ և ներկայացնում վարչության հաստատմանը: Դեբիտորական և կրեդիտորական պարտքերի մարումից և այլ պարտականությունների կատարումից հետո ձեռնարկության ունեցվածքը բաժանվում է կողմերի միջև: Յուրաքանչյուրը դրամի կամ ապրանքի ձևով ստանում է իր բաժինը՝ կանոնադիր հիմնադրամում իր բաժնային մասնակցության չափով, լուծարման պահի մնացորդային արժեքով:

Տնտեսական համագործակցության մեջ իր տեղն ունի ***գիտատեխնիկական համագործակցությունը,*** որն իրականացվում է գիտահետազոտական և նախագծա-կոնստրուկտորական համատեղ ծրագրերի մշակման, գիտական, ֆինանսական և նյութական ռեսուրսների միավորման, մասնագետների համատեղ օգտագործման միջոցով: Համագործակցության առավել ռացիոնալ և արդյունավետ ձևերից են.

- տեխնիկատնտեսական հաշվարկների ընդհանուր գիտական կենտրոնների, բյուրոների, լաբորատորիաների կազմակերպումը,
- գործող տեխնիկայի և տեխնոլոգիայի կատարելագործումը,
- արտասահմանյան փորձի համատեղ ուսումնասիրումը և ներդրումը:

Խառը ձեռնարկությունների կազմակերպման դեպքում արտասահմանյան մասնակիցների ներդրումները կատարվում են սարքավորումների, տեխնոլոգիաների, անհրաժեշտ կոմպլեկտավորող ապրանքների մատակարարման կամ արժութային վճարումների ձևերով:

Երկրի տնտեսության զարգացման, պահանջների բավարարման, տնտեսական և սոցիալական հարցերի լուծման նպատակով համագործակցության առավել առաջնային ուղղություններ համարվում են.

- արտերկրի գիտահետազոտական, կոնստրուկտորական և տեխնոլոգիական մշակումների բազայի վրա ժամանակակից արտադրական նոր ճյուղերի ստեղծումը,
- տեղական և արտասահմանյան գիտատեխնիկական ներուժի և բնական ռեսուրսների համալիր օգտագործման հիման վրա նոր արտադրությունների կազմակերպումը:

ԽՍՀՄ հանրապետություններում արտասահմանի հետ համատեղ գործունեության մասին առաջին նորմատիվ ակտը ձևակերպվել է

1987 թ. հունվարի 13-ին: Դա խորհրդահունգարական Литтара-Волан-пек համատեղ ձեռնարկությունն էր: Մինչև նույն տարվա վերջը կազմակերպվեցին ևս 23-ը: 1988 թ. նրանց թիվը հասավ 168-ի: 1989 թ. մայիսի 1-ի դրությամբ երկրում գործում էր նման 416 ձեռնարկություն:

ԳՖՀ ընկերությունների հետ կազմակերպվեցին 64, ֆիննական ընկերությունների հետ՝ 55, ԱՄՆ-ի հետ՝ 37, Իտալիայի հետ՝ 32, Մեծ Բրիտանիայի հետ՝ 29, Ավստրիայի հետ՝ 26, Ֆրանսիայի հետ՝ 20 համատեղ ձեռնարկություն և այլն: Բոլոր ձեռնարկությունների հիմնադրամի ծավալը կազմեց 1425 մլն ռուբլի (փոխարկելի կուրսով), որից 60 տոկոսը խորհրդային կողմի բաժինն էր, 40-ը՝ արտասահմանյան գործընկերների:

Ռուսաստանում տեղաբաշխված էին 301 (որից Մոսկվայում՝ 196, Սանկտ Պետերբուրգում՝ 31), Էստոնիայում՝ 33, Ուկրաինայում՝ 28, Վրաստանում՝ 14, Լատվիայում՝ 10, Լիտվայում՝ 7, Հայաստանում՝ 5, Բելառուսում, Ուզբեկստանում, Մոլդովայում և Ադրբեջանում՝ 4-ական, Ղազախստանում՝ 2 ձեռնարկություն: Համագործակցությունն իրականացնում էր նաև գյուղատնտեսական հումքի և երկրորդական ռեսուրսների վերամշակում, իրավաբանական, տնտեսագիտական կադրերի վերապատրաստում, տեղեկատվական ծառայությունների կազմակերպում:

Տնտեսական համագործակցության միջազգային կազմակերպություններից են ***Միջազգային տնտեսական միավորումները (ՄՏՄ)***, որոնց միջոցով լուծվում են գլոբալ հիմնախնդիրներ: Միջազգային միավորումները համատեղ սեփականություն չեն ստեղծում: Դրանց հիմնական խնդիրն է կոորդինացնել արտադրական, գիտական և տնտեսական գործունեությունը՝ ավելի բարձր արդյունք ստանալու համար: Միավորումների միջոցով կարող են ստեղծվել նախագծա-կոնստրուկտորական, գիտահետազոտական աշխատանքներ իրականացնող բաժիններ, ինստիտուտներ, որոնց մոտ 60 տոկոսը գործում է արդյունաբերական ճյուղերում, 20-ը՝ տրանսպորտում, 10-ը ԳՏ կազմակերպություններն են: Նման կազմակերպություններ կան նաև կապի, արտաքին առևտրի, վարկաֆինանսական հարաբերությունների ոլորտում: Օրինակ, տիեզերական կապի ասպարեզում գործում են միջպետական «Ինտերսպուտնիկ», սև մետալուրգիայի «Ինտերմետալ», ագրոարդյունաբերական համալիրում՝ «Ագրոմաշ», էլեկտրատեխնիկական արդյունաբերության մեջ՝ «Ինտերէլեկտրո», քիմիական արդյունաբերության մեջ՝ «Ինտերքիմ», «Ինտերքիմվոլոկնա», միջուկային մեքենաշինության բնագավառում՝ «Ինտերատոմինստրումենտ», ատոմակայանների համար սարքավորումների մատակարարման և տեխնիկական աջակցության նպատակով (կենտրոնը՝ Մոսկվա)՝ «Ինտերատոմէներգո», տեքստիլ արդյունաբերության տեխնոլոգիական սարքավորումներ արտադրելու համար՝ «Ինտերտեքստիլմաշ» միջազգային արտադրական միավորումները[14]:

Բազմակողմ գործող կազմակերպություն է Диалог համատեղ ձեռնարկությունը, որի կազմում մի կողմից ընդգրկված են КамАЗ արտադրական միավորումը, Տիեզերագնացության հետազոտության և Կենտրոնական էկոնոմիկա-մաթեմատիկայի ինստիտուտները, ԺՏՆՑ գլխավոր տեղեկատվական հաշվողական կենտրոնը, «Վնեշտեխնիկա» միավորումը, մյուս կողմից՝ ամերիկյան «Մենեջմենթ Պարտնյորշիփս Ինտերնեշն ինկ» ընկերությունը: Սրանց համատեղ գործունեության նպատակն է ծրագրային արտադրանքի թողարկումը (производство программного продукта), անհատական համակարգիչների հավաքումը, արտադրանքի իրացումը և տարբեր ծառայությունների կատարումը:

Ներկա պայմաններում սեփականության միջազգայնացումն ԱԱԿ-ին հնարավորություն է տալիս կենտրոնացնելու արտադրության ամբողջ գործընթացը, արտասահմանում ստեղծելու բաժանմունքներ, մասնաճյուղեր, կատարելու կապիտալ ներդրումներ:

[14] Совместные предприятия, международные объединения и организации на территории СССР, 1993, стр. 4.

ԳԼՈՒԽ 5
ԳԼՈԲԱԼԱՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԳԼԽԱՎՈՐ ՄԻՏՈՒՄ

5.1 Գլոբալացման գործընթացի էությունը, հիմնախնդիրները և տնտեսական տեսակետները

Գլոբալացումը ՀՏ ժամանակակից գլխավոր առանձնահատկությունն է: Այն համաշխարհային բնույթի գործընթաց է: Այս տերմինը ստեղծվել է 1980 թ. և միջազգային կիրառում ստացել 1990-ականներին: Գլոբալացումը բազմագործոնային երևույթ է, որը վերաբերում է տնտեսական և հասարակական կյանքին: Ժամանակակից գլոբալացումը կատարել է զանգվածային միջոցների հեղաշրջում՝ ՀՏ-ում դառնալով բազմաթիվ փոփոխությունների պատճառ:

Ներկայում միջազգային հարաբերությունների ամբողջ համակարգում տեղի են ունենում խորը փոփոխություններ: Գլոբալացումը կատարվում է տնտեսական քաղաքական, սոցիալական, իրավական, ռազմական, բնապահպանական և այլ ձևերով: Այն մեկօրյա երևույթ չէ: Շատ մասնագետների կարծիքով՝ գլոբալացումը ստեղծվել, գործել և վաղուց արդեն գործում է նոր մասշտաբներով: Այն աստիճանաբար ընդլայնվել է և այժմ արտահայտում է տնտեսական կյանքի ինտերնացիոնալացման մակարդակը նոր գծերով:

Գործունեության ցանկացած ոլորտ զարգացման ընթացքում բախվում է ընդհանուր կամ մասնակի խնդիրների և հիմնախնդիրների: Բացառված չէ նաև մարդկային տնտեսական գործունեությունը: Նման հիմնախնդիրները տարբեր են և տնտեսության մեջ հայտնվում են տարբեր ձևերով: Եթե գլոբալացումը կրում է համընդհանուր բնույթ, ապա սկզբունքային հիմնախնդիրները կոչվում են ***գլոբալային:*** Գլոբալացումը պահանջում է երկարաժամկետ, հսկայածավալ ուժ և միջոցներ, որոնք առանձին երկրներ կարող են նաև չունենալ: Սրա համար անհրաժեշտ է ունենալ տարբեր ռեսուրսներ (նյութական, ֆինանսական, տեխնոլոգիական, հոգևոր, ինտելեկտուալ, տեղեկատվական): Համաշխարհային տնտեսական հարաբերությունների ներկա փուլում առաջարկվում են գլոբալացման 5 հիմնախնդիրներ.

- բնապահպանական,
- ժողովրդագրական,
- բնական ռեսուրսների (հումքային, էներգետիկ, պարենային),
- զինաթափման,
- ահաբեկչության դեմ պայքարի:

Առանձին գլոբալ հիմնախնդիրների տեղը, դերը և մասշտաբները անփոփոխ չեն: Երկրագնդի բնակչության աճը, բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործումը, բնական հարստությունների արդյունահանումը, բնության աղտոտումը հանգեցնում են մարդկության կենսապայմանների արմատական փոփոխման: 20-րդ դարը մարդկությանը բերեց մշակվող հողերի 1/4-ի և անտառների 2/3-ի կորուստ: Մասնագետների կարծիքով՝ 2005 թ. արդյունաբերական թափոնների ծավալը գերազանցել է 12 մլրդ տոննան, 30 տարում այն ավելացել է 63 անգամ: Մթնոլորտում ածխաթթու գազի ավելացումը մարդկանց կյանքին և առողջությանը սպառնացող վտանգ է:

Համաշխարհային գլոբալ հիմնախնդիրների մեջ ***պարենայինը*** կարևորներից մեկն է: Ըստ ՄԱԿ-ի տվյալների՝ նոր հարյուրամյակի սկզբում աշխարհում սովյալ էր 850 մլն մարդ: Երկու տասնամյակ անց այդ թիվը կարող է հասնել 1.5 մլրդի: Աղքատությունը հաշվարկվում է ըստ Հռոմի հայտնի համաձայնագրի, որն առաջարկում է ցանկացած երկրի պարենային անվտանգության հիմնական արգելքների վերացման ուղիները: ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի (գագաթաժողով) կողմից ընդունված պարենային անվտանգության բանաձևում որոշված է, թե ինչպես պետք է ապահովել պարենային ռեսուրսների մատչելիության անհրաժեշտ ծավալները երկրագնդի բնակչության ակտիվ և առողջ կենսապայմանների բարելավման համար:

Գլոբալացումը վերափոխում է աշխարհը: Այն իր հետ բերում է մի շարք օգուտներ՝ արագ աճ, ավելի բարձր կենսամակարդակ, նոր հնարավորություններ: Մեծ են նաև գլոբալացման վնասները, քանի որ այդ օգուտները բաշխվում են անհավասարաչափ, և համաշխարհային շուկայում դեռևս չեն արմատավորվել այն արժեքներն ու կանոնները, որոնք կարող են լուծել այնպիսի սոցիալական խնդիրներ, ինչպիսիք են մարդու իրավունքների պաշտպանությունը, աշխատանքային չափանիշները և շրջակա միջավայրի պաշտպանությունը:

Գլոբալացումն ակամա հեշտացրել է հանցագործության, հիվանդությունների, ահաբեկչության, թմրադեղերի ու զենքի ապօրինի փոխադրումների շարժը սահմաններից դուրս: «Այսօր մարդկության առջև,- նշում է ՄԱԿ-ը,- խնդիր է ծառացել գլոբալացումը դարձնելու այն շարժիչ ուժը, որը մարդկանց դուրս կբերի զրկանքներից ու թշվառությունից և ոչ թե կդառնա չարիքներ ծնող ուժ»: Նախորդ կես-դարյա ժամանակահատվածում աննախադեպ տնտեսական նվաճումներ են արձանագրվել, բայց զրկանքներն ու հուսահատությունը նույնպես համատարած են: Զանգվածային ոչնչացման զենքերը շարունակում են սարսափ տարածել:

5.2 Էկոնոմիկայի գլոբալացում

Էկոնոմիկայի գլոբալացումը ՀՏ վերափոխումն է ապրանքների, ծառայությունների, կապիտալի, աշխատուժի և գիտելիքների միասնական շուկայի: ***Գլոբալացման արդյունքը*** երկրների տնտեսական

աճի առաջընթացն է, որն ուժեղացնում է ՀՏ մասնակից երկրների կախվածությունը գլոբալացումից:

Էկոնոմիկայի գլոբալացման մասին խոսել նշանակում է խոսել տնտեսական կյանքի ինտերնացիոնալացմանը նվիրված տնտեսական գործընթացի, նրա զարգացման որոշակի փուլի մասին: ***Էկոնոմիկայի համաշխարհային գլոբալացումը 20-րդ դարի 90-ական թթ. լայնածավալ ակտիվացման, նոր հազարամյակում շարունակվող համաշխարհային բնույթի տնտեսական կյանքի ինտերնացիոնալացման և միաժամանակ արտակարգ իրավիճակների գործընթաց է:***

Բոլոր հետազոտությունները ցույց են տալիս, որ տնտեսության գլոբալացումը հակադիր է արտակարգ երևույթներին: Այն բարձրացնում է համաշխարհային տնտեսության արդյունավետությունը, արագացնում գիտատեխնիկական, տնտեսական և սոցիալական առաջընթացը. գլոբալացման դարաշրջանում արձանագրվել են վիճակագրական դիտարկումներ, որոնց արդյունքում համաշխարհային ՀՆԱ տեմպերն ավելացել են: Եթե գլոբալացումը չկանգնի կամ չնահանջի, ապա 2030 թ. հավանական է, որ աշխարհը կլինի բազմաբնույթ, անհամաչափ և երկրների միջև կառաջանա փոխկախվածություն:

Գլոբալացումը երկրների, ձեռնարկությունների և մարդկանց փոխկապակցությունն է ֆինանսա-տնտեսական, հասարակական-քաղաքական և մշակութային կապերի բաց համակարգի շրջանակներում՝ ժամանակակից հաղորդակցության, տեղեկատվության տեխնոլոգիաների բազայի վրա: Այն արտադրողական ուժերի մակարդակ է արտադրության մեջ, ժամանակակից տեխնոլոգիաներից բխող օբյեկտիվ գործընթաց:

Էկոնոմիկայի գլոբալացման համար պատմական նախադրյալ է հանդիսացել համաշխարհային սոցիալիստական համակարգի փլուզումը՝ աշխարհում երկու հակամարտ դասակարգերի վերացումը: Համաշխարհային տնտեսությունը դարձել է ընդհանուր շուկայական տնտեսություն, որի գլոբալացումը կապված է արտաքին տնտեսական կապերի ազատականացման հետ: Էկոնոմիկայի գլոբալացումը բազմաբնույթ հասկացություն է:

Վերջին երկու տասնամյակում գլոբալացումը և տնտեսական ինտեգրացումը դարձել են երկրների տնտեսությունների զարգացման հիմնական գործոններ: Եթե ***տնտեսական ինտեգրացումն*** ԱՄԲ-ի վրա հիմնված տնտեսությունների միավորում է, ապա ***տնտեսական գլոբալացումն*** ապրանքների, ծառայությունների, կապիտալի, տեխնոլոգիաների, գլոբալ շուկաների ձևավորման գործընթաց է:

ՍՏՀ զարգացման, կարգավորման գործում մեծ դեր ունի ***տնտեսական կյանքի գլոբալացումը:*** ՍՏՀ-ի, ԱԱԿ-ի և կապիտալի տեղաշարժի մասին բրիտանական հայտնի մասնագետ Ջ. Դաննինգը նշում է. «Գլոբալ տնտեսությունը բնութագրում է առաջատար երկրների փոխկախվածությունն առևտրի, ինվեստիցիաների և այլ ոլորտներում»:

Առանձնացվում են տնտեսության գլոբալացման ***օբյեկտիվ*** և ***սուբյեկտիվ*** պատճառներ, ըստ որոնց տնտեսության գլոբալացումն օրինաչափ, օբյեկտիվ երևույթ է, որակապես նոր, ավելի բարձր տնտեսական փուլ: Մյուս կողմից համաշխարհային տնտեսությունը հանդես է գալիս որպես որոշակի տնտեսական քաղաքականության ձև, որն իրականացնում են առաջատար երկրները: Գլոբալացումը կապված է համամարդկային հիմնախնդիրների առաջացման հետ: Դրանցից են.

- ռազմաքաղաքական հիմնախնդիրները՝ կապված զենքերի տարածման, զանգվածային ոչնչացման, միջազգային ահաբեկչության վերացման, ռազմական ծախսերի տնտեսման հետ (այս ամենը կծառայեցվի երկրների տնտեսությունների զարգացմանը),
- տիեզերքի, Համաշխարհային օվկիանոսի, Անտարկտիդայի ուսումնասիրումը և յուրացումը,
- աշխատուժի զանգվածային տեղաշարժերի կրճատումը՝ կապված ռազմական բախումների, երկրների տնտեսությունների զարգացման հետ,
- պարենի ավելացումը, աղքատության, սովի, մահացության դեմ պայքարն աշխարհի շատ երկրներում,
- բնապահպանության, օզոնային շերտի կարգավորման, շրջակա միջավայրի աղտոտման, միջուկային էներգետիկայի հրատապ հարցերի լուծումը:

Պարենի արտադրության աճը համարյա համապատասխանում է բնակչության աճին: Վերջին 30 տարում հացամթերքի արտադրությունն ավելացել է 2, իսկ աշխարհի բնակչությունը՝ 1.8 անգամ: Հետագայում կարող է այդ հարաբերությունը խախտվել: Պարենամթերքի արտադրության մակարդակն Արևմտյան Եվրոպայում, ԱՊՀ և մերձբալթյան երկրներում չի համապատասխանում տեղական պահանջներին: ԱՊՀ երկրների տնտեսական ռեֆորմը կրճատել է շատ սննդամթերքների արտադրությունը: Վերջին հարյուրամյակի ընթացքում աշխարհում ցանքատարածությունների մոտ 25, անտառների 30 տոկոսից ավելին շարքից դուրս են եկել: Յուրաքանչյուր 10 տարում աշխարհը կորցնում է բարեբեր հողերի 7 տոկոսը: Գնալով ավելանում է «բնապահպանության բյուջեն»: 1970 թ. բնապահպանության համար ծախսվել է 40, 1980 թ.՝ մոտ 75, 1990 թ.՝ 150 և 2005 թ.՝ մոտ 250 միլիարդ դոլար: 1968 թ. զարգացած արդյունաբերական երկրները ստեղծեցին Հռոմի ակումբը, 1972 թ. Ստոկհոլմում հրավիրվեց բնապահպանության հիմնախնդիրներին նվիրված կոնֆերանս, որտեղ մշակվեց միջոցառումների պլան: Ձևավորվել են նաև ինստիտուտներ, որոնք մշակում են բնապահպանության ծրագրեր: 1984 թ. ԱՄՆ-ում ձևավորվել է էլեկտրատեխնիկական միջազգային ինստիտուտը: 1992 թ. Ռիո դե Ժանեյրոյում հրավիրվել է ՄԱԿ-ի բնապահպանական հիմնախնդիրներին նվիրված կոնֆերանս, մշակվել ծրագիր: Գլոբալ հիմ-

նախնդիրներին է վերաբերում Ռուսաստանի «Միր» տիեզերականյանի համատեղ օգտագործումն ԱՄՆ-ի, ՌԴ-ի, Ֆրանսիայի կողմից: Սա հնարավորություն է տալիս այլ երկրների հետ տիեզերագնացների պատրաստելու, տեխնիկական, կենսաբանական հետազոտություններ իրականացնելու:

Գլոբալացման *շարժիչ ուժերն* են.

- արտադրության ոլորտում փոփոխությունները,
- տրանսպորտի, կապի, առևտրի, կրթության, տեղեկատվության առաջընթացը,
- կենսամակարդակի բարձրացումը,
- շուկայի գլոբալացումը՝ առևտրի և ծառայությունների ազատականացումը, ֆինանսական շուկայում արժութային կուրսերի, վարկային շուկայի փոխատվության տոկոսների կարգավորումը,
- համաշխարհային տնտեսության մեջ նոր ներդրումները (ռիսկերը):

Գլոբալացման շարժիչ ուժն արտաքին առևտրի վերաբաշխման սպառազինությունն է, ռազմական արդյունաբերության ինվեստիցիաների փոփոխությունը, զինծառայողների պատրաստման և սպառման ծախսերը, ռազմական բյուջեի ծախսերի փոփոխությունը:

Գլոբալացումն իր հետ բերում է հակամարտ գործընթացներ, քանի որ մասնակից սուբյեկտներն ունեն իրենց տնտեսական շահերը, որոնք են.

- հակասությունները երկրների կամ երկրների խմբերի միջև,
- հակասությունները երկրների և համապատասխան միջազգային ինստիտուտների, օրինակ՝ ՄԱՖ-ի, Համաշխարհային բանկի, ԱՀԿ-ի միջև, հակասություններն առանձին երկրների, անդրազգային կազմակերպությունների, բանկերի, ֆինանսական կենտրոնների միջև:

1980-ական թթ. կեսերին համաշխարհային տնտեսությունը գրանցեց միջազգային առևտրի և այլ ապրանքային ծառայությունների, կապիտալի, ինֆորմատիկայի և այլ փոխանակումների բարձր տեմպեր: 1986-1995 թթ. համաշխարհային ապրանքաշրջանառության ամբողջական ծավալն աճեց տարեկան 6.5 տոկոսով: Տասը տարում այն ավելացավ 1.9, ծառայությունների միջազգային առևտուրը՝ 2.4 անգամ: 2000 թ. միջազգային առևտրի բաժինը կազմում էր համաշխարհային ՀՆԱ մոտ 1/3-ը:

1999 թ. Դավոսի (Շվեյցարիա) Համաշխարհային տնտեսական համաժողովում Գլխավոր քարտուղարն առաջ քաշեց ՄԱԿ-ի և գործարար աշխարհի միջև «Գլոբալ պայմանագրի» գաղափարը: Պայմանագրի նպատակն էր աշխարհի ժողովուրդներին հնարավորություն տալ բաժին ունենալու գլոբալացման բարիքներից և միջազգային շուկան դարձնելու սոցիալ-տնտեսական պահանջները բավարարելու հիմնարար արժեքների և սկզբունքների անբաժանելի մաս:

Գլոբալացման գործընթացը երևում է ՄՏՀ բոլոր ոլորտներում՝ արտաքին առևտուր, կապիտալի շարժ, աշխատանքային ռեսուրսների տեղաշարժ, արտադրություն, գիտատեխնիկական ոլորտներ: Գլոբալացման կարևոր դրսևորում է կապիտալի դերի փոփոխությունը ժամանակակից համաշխարհային տնտեսությունում: Այդ պայմաններում սրվում է մրցակցությունը տարբեր ռեսուրսների համար:

Արտաքին տնտեսական անվտանգությունը պետության տնտեսական համակարգի այնպիսի վիճակ է, երբ ապահովվում են ազգային տնտեսության շահերի անխոցելիությունը և զերծ լինելն արտաքին վտանգների ազդեցությունից: Այն տնտեսական անվտանգության բաղկացուցիչ մասն է: Բաց տնտեսության պայմաններում տնտեսական անվտանգությունը պահանջում է, որ.

- երկրների մասնակցությունը ստեղծի ավելի բարենպաստ պայմաններ ազգային արտադրության զարգացման համար,
- ազգային տնտեսությունն ինչպես տնտեսական, այնպես էլ քաղաքական բնագավառում քիչ զգա զարգացման անբարենպաստ դեպքերն աշխարհում:

Ազգային տնտեսական անվտանգությունն ընդգրկում է մի շարք փոխկապակցված գործառույթներ՝ ***արտաքին տնտեսական անվտանգության ապահովման կոնցեպցիա, արտաքին տնտեսական գործունեության ոլորտում ազգային շահեր*** և այլն:

Մթնոլորտային աղտոտվածության և գլոբալ տաքացման հիմնախնդիրներով պայմանավորված՝ վառելիքի սպառման ծավալների նվազումը դարձել է պետությունների, հասարակությունների, ավտոարտադրողների մտահոգության առարկան: Մթնոլորտ արտանետվող ածխածնի երկօքսիդի (CO_2) զգալի քանակի պատճառը տրանսպորտային միջոցներն են: Ընդունվել է Գործունեության 15-ամյա ծրագիր, որի նպատակն ածխածնի արտանետումները մինչև 120 գ/կմ նվազեցնելն է:

Էկոնոմիկայի գլոբալացմանը խոչընդոտող հանգամանք է նաև թմրամոլությունը, որի դեմ պայքարին նվիրված միջազգային ֆորումը, որ կազմակերպվել էր 2010 թ. հունիսին Մոսկվայում, հնարավորություն տվեց նոր պայմաններ առաջադրելու թմրադեղերի արտադրության, մատակարարման, սպառման հիմնահարցերի վերաբերյալ: Այս երևույթից աշխարհում տարեկան տուժում են հազարավոր մարդիկ, փոխոխվում է համաշխարհային գենոֆոնդը: Պահանջվում են հսկայական ֆինանսական ծախսեր ուժային կառույցների ամրապնդման, թմրամոլների բուժման և այլ նպատակների համար: Այդ աղետի համար չկան պետական սահմաններ: Թմրադեղերի արտադրությունը և առևտուրը, որպես հատուկ գլոբալ հիմնախնդիր, պահանջում է անհետաձգելի գործունեություն համաշխարհային մակարդակով:

Թմրաբիզնեսը բացառիկ եկամտաբեր գործ է: Դրանով զբաղվողների տարեկան եկամուտն աշխարհում կազմում է 50 մլրդ դոլար, որը հավասար է ՄԱԿ անդամ երկրների ազգային համախառն արտադրանքի գումարի 2/3-ին: Ըստ ՄԱԿ փորձագետների՝ 2006 թ. թմրադեղերը սպառել է աշխարհի բնակչության 5.5 տոկոսը (15-64 տարեկան)[15], իսկ ըստ ՄԱԿ Կառավարման տվյալների՝ թմրադեղերից և ամենատարբեր հանցագործություններից տարեկան մեռնում է մոտ 200 հազար մարդ:

Կոլումբիան կոկաինի արտադրությամբ մնում է որպես առաջատար երկիր: 2008 թ. այստեղ պատրաստվել է 430, Պերուում՝ 302, Բոլիվիայում՝ 113 տոննա թմրանյութ: Գլխավոր տարածքային մաս է Մեքսիկան, որն ունի հզոր թմրամիջոցներ: Գլխավոր մատակարար է նաև Աֆղանստանը: 1999 թ. այդ երկրում ստացել են 456 տոննա ափիոնի բերք, որի ծավալները 2001 թ. կրճատվել են՝ հասնելով 185 տոննայի: 2007 թ. թմրանյութեր պատրաստում էին արդեն 60 երկրներում: Այսպիսով, ամբողջ աշխարհը դարձել է թմրադեղերի միջազգային առևտրի ցանց:

Գլոբալացումը տարբեր պետությունների վրա ազդում է տարբեր ձևերով և մակարդակներով, ուստի ընդհանուր եզրակացություն անել, որոշումներ կայացնել անվտանգության կարգավորման վերաբերյալ հնարավոր չէ, քանի որ տարբեր պետությունների վրա գլոբալ ազդեցությունները տարբեր են:

Ըստ ՄԱԿ-ի՝ Շրջակա միջավայրի ծրագրի տնօրեն գերմանացի Քլաուս Թյոֆֆերի պաշտոնական հայտարարության՝ երկրագնդին սպառնում են 10 խոշոր աղետներ:

1. Հողերի վատթարացում: Սա ենթադրում է ոռոգելի հողերի արգավանդության նվազում, անտառածածկույթի անհետացում դաշտերի գերշահագործման հետևանքով:

2. Կլիմայի փոփոխություններ և էներգետիկ վտանգներ: Սա ենթադրում է ծովի մակարդակի բարձրացում, ինչի հետևանքով հնարավոր է, որ ջրի տակ մնան գերբնակեցված շատ շրջաններ՝ ծովափնյա Չինաստանի, Իտալիայի, ԱՄՆ-ի, ինչպես նաև օվկիանոսների կղզիների մեծ մասը:

3. Բուսական և կենդանական տեսակների կրճատում: Քաղաքաշինության, անտառահատման և միջավայրի աղտոտման հետևանքով աստիճանաբար վերանում են բուսական և կենդանական աշխարհի բազմաթիվ տեսակներ:

4. Անտառահատումներ: Վերջին 20 տարում Հարավային և Հյուսիսային Ամերիկաներում, Աֆրիկայում, Ասիայում, Եվրոպայում հատվել է 150 միլիոն հեկտար արևադարձային անտառ:

[15] Газета RU, 2010, февраль, март, стр. 4-7.

5. Խմելու ջրի պակաս: Բոլոր հիվանդությունների 80-90 տոկոսը և մահվան դեպքերի մեկ երրորդը կապվում են անմաքուր կամ քիմիապես աղտոտված ջրի օգտագործման հետ: Պարարտանյութերն աղտոտում են վերգետնյա և ստորգետնյա ջրերը: Ջրի պակասից անապատներն ընդարձակվում են աշխարհագրական համարյա բոլոր տարածքներում:

6. Քիմիական աղտոտում: Արդյունաբերության զարգացմանը զուգահեռ քիմիական վնասակար տարբեր նյութեր հայտնվում են օդում, ջրում, հողում, բույսերի, մարդու և կենդանիների օրգանիզմներում՝ առաջացնելով մի շարք հիվանդություններ:

7. Հախուռն քաղաքաշինություն: Միլիոնավոր մարդիկ ձգտում են դեպի քաղաքներ, բնակություն հաստատում արվարձաններում, ավաններում: Զարգանում են քաղաքները, բարդանում՝ կառավարման, առողջապահության պայմանները, իսկ ամեն տեսակի թափոնները վնասում են շրջակա միջավայրը:

8. Ծովերի գերշահագործում և ափերի աղտոտում: Ձկնորսության անվերահսկելիությունը հանգեցնում է ծովամթերքի կրճատման: Ծովափնյա շրջաններն աղտոտվում են, թունանյութերը՝ կուտակվում ձկների ու մարդկանց օրգանիզմներում:

9. Օդի աղտոտում: Գործարանների, փոխադրամիջոցների, ջեռուցման և նմանատիպ մյուս արտանետումներն աղտոտում են օդը, ինչը հանգեցնում է կլիմայական փոփոխությունների և վնասում միլիոնավոր մարդկանց առողջությունը:

10. Օզոնային անցքեր: Ամեն գարուն երկու բևեռներում գոյանում է օզոնային անցք՝ ավելի ու ավելի վնասելով օզոնային շերտը[16]:

Այսպիսով, տնտեսության գլոբալացումը և նրա լուսավոր և ստվերային կողմերը դառնում են ավելի հակասական, վտանգավոր, կործանիչ, թեև մինչև այժմ ՀՏ զարգացման գործում գլոբալացումը գնահատվում է որպես դրական երևույթ:

[16] Փարսադանյան Ա. Ի., Գիտելիքների շտեմարան, Երևան, 2003, էջ 205:

ԲԱԺԻՆ II
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳԼՈՒԽ 1
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

1.1 Միջազգային տնտեսական հարաբերությունների ուսումնասիրման առարկան, էությունը, փուլերը

Միջազգային տնտեսական հարաբերություններն (ՄՏՀ) իրենից ներկայացնում է միջազգային տնտեսական կապերի համակարգ առանձին երկրների ազգային տնտեսությունների միջև, առևտրաքաղաքական հարաբերություններ, որոնք ընդգրկում են ապրանքափոխանակությունը, արտադրության մասնագիտացումը և կոոպերացումը, ԳՏ համագործակցությունը, տնտեսական և տեխնիկական աջակցությունը և տնտեսական այլ միջոցառումների իրականացումը: Միջպետական հարաբերությունները պատմական զարգացման ընթացքում հարթել են տնտեսական կյանքի ինտերնացիոնալացման ուղիներ, ձեռք բերել հատկանիշներ, որոնք արտահայտվում են երկրների, տարածաշրջանների միջազգային փոխադարձ կապերով: Արդյունքում՝ 21-րդ դարասկզբին չկա մի երկիր, որ տնտեսական հարաբերություններ չունենա այլ երկրների հետ:

ՄՏՀ-ը միջպետական տնտեսական գործունեության տարբեր ոլորտների, ձևերի ամբողջություն է, որը նպաստում է պետությունների միջև նյութական, աշխատանքային, ֆինանսական ռեսուրսների, ապրանքների և ծառայությունների միջպետական տեղաշարժերին:

«Միջազգային հարաբերություններ» առարկայի բնորոշումը նախկինում ձևակերպվել է ֆրանսիացի հայտնի սոցիոլոգ Ռ. Արոնի կողմից. ***«Միջազգային հարաբերությունները պետությունների միջև հարաբերություններ են, որոնք ձևակերպվում են միջպետական պայմանագրերով»:*** Իսկ ըստ հետազոտող Ջ. Ռոզենաուի՝ համաշխարհային տնտեսական հարաբերությունների մեջ գլխավոր գործող անձինք դառնում են ոչ թե պետությունները, այլ միմյանց հետ հանդես եկող կոնկրետ ուժերը[17]:

ՄՏՀ-ը, որպես գիտություն, ուսումնասիրում է ոչ թե առանձին երկրների տնտեսությունները, այլ նրանց տնտեսական հարաբերությունների առանձնահատկությունները, դրանց իրականացման մեխանիզմը, ինտեգրացիոն միավորումների, միջազգային կորպորացիաների, առանձին ձեռնարկությունների հարաբերությունները, երկրների նյութական բարիքների և ծառայությունների բաշխումը, փոխանակումը, սպառումը միջազգային մասշտաբով: ՄՏՀ մեխանիզմն ընդգրկում է ՄՏՀ զարգացմանը նպատակաուղղված իրավական նորմերը և դրանց իրականացման համար համապատասխան միջոցները:

ՄՏՀ-ը ***պատմական*** և ***տնտեսական*** կատեգորիա է: Որպես ***պատմական*** կատեգորիա, այն քաղաքակրթության զարգացման արդյունք է, իսկ որպես ***տնտեսական*** կատեգորիա՝ տնտեսական հարաբերությունների համակարգ, որն ստեղծվել է պետությունների և տնտեսական սուբյեկտների միջև: Որպես տնտեսական կատեգորիա, ՄՏՀ-ը կարևորվում է նաև նրանով, որ շուկայական հարաբերությունների պայմաններում նրա դերն ավելի է մեծանում: ՄՏՀ զարգացման նյութական հիմքը հասարակական արտադրությունն է՝ նրա իրականացման վրա ազդող քաղաքական, իրավական, սոցիալ-տնտեսական և այլ գործոններով: Իսկ զարգացման խթան են աշխատուժի, բնական ռեսուրսների, գիտատեխնիկական ներուժի անհամաչափ տեղաբաշխումը երկրների միջև, վերջիններիս աշխարհագրական, բնակլիմայական, պատմական և էթնիկական առանձնահատկությունները:

ՄՏՀ-ն ուսումնասիրում է երկրների միջև ապրանքների, կապիտալի, ծառայությունների հոսքերը, ազգերի փոխադարձ տնտեսական կապերը: ՄՏՀ կուրսն ընդգրկում է այդ հոսքերի, կիրառվող մեթոդների կարգավորումը, դրանց արդյունքների ազդեցությունը կոնկրետ երկրի բարեկեցության վրա: ՄՏՀ-ը դիտարկվում է որպես ուսումնասիրման ինքնուրույն օբյեկտ, տնտեսական հարաբերությունների ձևեր: Նրա սոցիալ-տնտեսական բովանդակությունը, կառուցվածքն ու ձևերը կախված են արտադրողական ուժերի զարգացման մակարդակից, արտադրական հարաբերությունների բնույթից:

ՄՏՀ-ը դիտվում է ոչ թե որպես նեղ մասնագիտական առարկա, այլ որպես հիմնարար գիտություն, քանի որ ուսումնասիրում է ոչ թե անհատ ձեռնարկությունների և կազմակերպությունների, այլ երկրների գործունեությունը պետությունների մակարդակով: Միաժամանակ այն դիտվում է որպես ինքնուրույն ոլորտ՝ բնորոշ առանձնահատկություններով: Դրանք արտահայտվում են միջազգային առանձին հարաբերությունների, տնտեսական օրենքների կիրառման ձևերի, ինչպես նաև տնտեսական կատեգորիաների (համաշխարհային տնտեսություն, համաշխարհային շուկա, միջազգային գին, արժութային համակարգ և այլն) երևան գալու հետ: Հետևաբար, ՄՏՀ ***առարկան*** տնտեսական օրենքները և օրինաչափություններն ուսումնասիրում է միջազգային մակարդակով՝ հաշվի առնելով դրանց առանձնահատկությունները: Գործող տնտեսական օրենքների պահանջների կատարման աստիճանը որոշում է տվյալ երկրի տնտեսական քաղաքականությունը:

ՄՏՀ ձևավորման և կիրառման գործում ***պետության արտաքին տնտեսական քաղաքականությունը*** նպաստում է սեփական ներուժը (քա-

[17] Мировая экономика и международные отношения, под. ред. Хасбулатова Р. И., ч. I, 2006, стр. 57.

ղաքական, տնտեսական, ռազմական, սոցիալական, բնապահպանական և այլն) ամրապնդելուն և համաշխարհային տնտեսության գործընթացին ակտիվ մասնակցելուն: Պետության արտաքին տնտեսական քաղաքականությունը, կապված ՄՏՀ-ի հետ, ընդգրկում է.

- արտաքին տնտեսական քաղաքականությունը,
- արտաքին ինվեստիցիոն քաղաքականությունը,
- արժութային քաղաքականությունը,
- մաքսային քաղաքականությունը:

Այս պայմաններում ձևավորվում է համաշխարհային ապրանքային շուկա, որտեղ իրականացվում է ապրանքների առք ու վաճառք:

ՄՏՀ առարկան ուսումնասիրելիս՝ կարևոր տեղ է հատկացվում տնտեսական, ֆինանսական, արժութային հարաբերությունների, դրամաշրջանառության, միջազգային տնտեսական և ֆինանսական կազմակերպությունների գործունեությանը, տնտեսագիտական այլ հիմնախնդիրների լուսաբանմանը: Ուսումնասիրվում է զարգացած և զարգացող երկրների քաղաքական, տնտեսական պայքարը, և վերջիններիս վրա առաջինների ազդեցության հարցերը: Մեծ տեղ է հատկացվում տնտեսական ինտեգրացիային, երկրների համագործակցությանը և կոորդինացմանը, գիտատեխնիկական առաջընթացի, աշխատանքի միջազգային բաժանման խնդիրներին: ՄՏՀ-ը գտնվում է պետությունների միջև քաղաքական, սոցիալական, մշակութային, ռազմական փոխհարաբերությունների ազդեցության տակ: Հետևաբար, ՄՏՀ դասընթացն ***ուսումնասիրում է*** ազգերի տնտեսական փոխհարաբերությունները, ապրանքների, կապիտալի, ծառայությունների շրջանառությունը կոնկրետ պետությունների միջև: ՄՏՀ-ը հնարավորություն է տալիս լուծելու երկրի համար օպտիմալ խնդիրներ:

Լուսաբանվում են Արևմտյան Եվրոպայի, Ասիայի, ԱՄՆ-ի և մյուս երկրների տնտեսական համագործակցությունը և մրցակցությունը, ՄՏՀ-ում նրանց տնտեսական դերերի փոփոխությունները: Այսպիսով, ***ՄՏՀ-ն աշխատանքի միջազգային բաժանման վրա հիմնված առանձին կամ մի խումբ երկրների միջև օբյեկտիվորեն գոյություն ունեցող կայուն և զարգացող հարաբերություններ են:***

Առարկան ուսումնասիրվում է առանձին թեմաներով, որոնք ընդգրկում են առևտրական, արտադրական, ֆինանսական, ինվեստիցիոն, կապիտալի միջազգային տեղաշարժի, գիտատեխնիկական նվաճումներ տրամադրելու, արտադրական և իրացման օբյեկտների մասնագիտացման, տնտեսական օգնություններ ցուցաբերելու, խառն ընկերություններ ստեղծելու հարաբերությունները: Միջազգային համագործակցության ձևեր են նաև երկրների կողմից համատեղ ներդրումների միջոցով արտադրության մասնագիտացումն ու կոոպերացումը:

ՄՏՀ ուսումնասիրման հիմնական բաժիններն են.



Միջպետական հարաբերություններում կարևոր տեղ են գրավում տարբեր մասշտաբների շինարարական օբյեկտների նախագծերի կազմումը և տրամադրումը, սարքավորումների, տեխնոլոգիաների տեղադրումն ու շահագործումը: Այս դեպքում հաշվի են առնվում.

- համագործակցող երկրների տնտեսական զարգացման աստիճանը, սոցիալ-տնտեսական պայմանները և համագործակցության օբյեկտների կարևորությունը,
- համագործակցության պայմանագրային ժամկետները,
- կողմերի բաժնեմասային պարտականությունների կատարումը:

ՄՏՀ բոլոր ձևերն ունեն իրենց ***տեղն*** ու ***դերը*** տնտեսական համակարգում և գործնականում միջնորդավորվում են միջազգային առևտրի միջոցով: ՄՏՀ առանձին ճյուղերի, տարածքների, արտադրության ***տեղի*** և ***դերի*** գնահատման համար կիրառվում են մի շարք տնտեսական, վիճակագրական ցուցանիշներ, որոնք են.

- ներքին արտադրության և արտահանման հարաբերությունը,
- արտաքին առևտրի ծավալը մեկ շնչի հաշվով,
- արտահանման և ներմուծման քվոտաները:

ՄՏՀ ***նպատակը*** պետությունների միջև տնտեսության բոլոր ոլորտներում համատեղ գործունեության ծավալումն է:

Տնտեսական հարաբերությունների բոլոր ձևերը միմյանց հետ գտնվում են սերտ կապի մեջ, և համագործակցող երկրներն ընդհանուր ուժերով լուծում են տնտեսական ինտեգրացման, տնտեսության տարբեր ճյուղերի ռացիոնալ տեղաբաշխման, հումքային, աշխատանքային ռեսուրսների համատեղ օգտագործման, գիտահետազոտական աշխատանքների կոորդինացման տարբեր խնդիրներ և ծրագրեր: Համագործակցությունը գործընկեր երկրներին հնարավորություն է տալիս իրենց տնտեսություններն ապահովելու կիսաֆաբրիկատներով, կոմպլեկտավորող սարքավորումներով, սպառման ապրանքներով, էներգետիկ և աշխատանքային ռեսուրսներով, անհրաժեշտ շինարարական և կոնստրուկտորական նախագծերով, մասնագետներով: Կատարվում են գիտական նվաճումների փոխանակումներ: Այսպիսով, կարգավորվում է երկրների արդյունաբերության նորմալ ռիթմը՝ հնարավորություն ստեղծելով տնտեսական աճի, բնակչության զբաղվածության կարգավորման, գների կայունացման, միջազգային առևտրի և ֆինանսական գործարքների ակտիվ հաշվեկշռի համար:

ՄՏՀ օբյեկտները և սուբյեկտները միմյանցից չեն առանձնացվում: ՄՏՀ ***օբյեկտներ***ը համարվում են.

- նյութական ապրանքները՝ հումքային, պարենային, պատրաստի ապրանքներ, մեքենատեխնիկա, արդյունաբերական վերամշակման արտադրանքներ, տեխնոլոգիաներ,

- ծառայությունները՝ միջազգային ինժինիրինգ, կոնսալտինգ, լիզինգ, տրանսպորտ, զբոսաշրջություն և այլն,
- կապիտալը՝ ուղղակի և պորտֆելային ինվեստիցիաներ, միջազգային վարկերը, հիմնադրամներ, օգնություններ,
- գիտատեխնիկական նվաճումները՝ տեխնոլոգիաների պատենտային և առանց պատենտի (արտոնագիր) գործարքներ, ապրանքային ստանդարտներ, նշաններ,
- աշխատուժը:

Այսպիսով, ՄՏՀ հիմնական ***օբյեկտը*** համաշխարհային շուկայում հարաբերությունների կազմակերպումը և իրականացումն է:

ՄՏՀ ***սուբյեկտներն*** են.

1. Պետությունների կառավարությունները և նրանց մակրոտնտեսական օղակները, ապրանքներ և ծառայություններ արտահանող ու ներմուծող, արժեթղթեր, արժույթ թողարկող, փոխանակող օրգանները:

2. Միջազգային կազմակերպությունները և միջազգային ֆինանսական կենտրոնները՝ ՄԱԿ-ը և նրա ինստիտուտները, Համաշխարհային բանկը, ԱՄՀ-ը, Վերակառուցման և զարգացման միջազգային բանկը (ՎԶՄԲ), Առևտրի համաշխարհային կազմակերպությունը (ԱՀԿ), տարածաշրջանային միջազգային կազմակերպությունները (ԵՄ, Եվրոբանկ, ՆԱՖՏԱ, ԱՊՀ և այլն), միջազգային տնտեսական, ինտեգրացիոն խմբավորումները, միջկառավարական և ոչ պետական միությունները, Համաշխարհային կապի միությունը և տնտեսությունների տարբեր ճյուղեր:

3. Ազգային ձեռնարկությունները (ֆիրմաներ), առևտրի, ներդրումային, տեղեկատվական, ԳՏ, արտադրական օղակները, անդրազգային կազմակերպությունները (ԱԱԿ):

4. Իրավաբանական և ֆիզիկական անձինք, որոնք արտադրում, արտահանում և սպառում են արտասահմանյան ապրանքներ, ծառայություններ, աշխատում այլ երկրի պատկանող ձեռնարկություններում:

5. Ռեզիդենտներ (օտարերկրյա լիազոր ներկայացուցիչներ), որոնք գտնվում են տվյալ երկրում՝ անկախ ազգային պատկանելությունից:

6. Ոչ ռեզիդենտներ, որոնք գտնվում են օտար երկրում, բայց մասնակցում են իրենց երկրի գործընթացներին:

Հասարակության տնտեսական զարգացմանը զուգընթաց փոխվում են նաև ՄՏՀ բովանդակությունը և բնույթը: Տնտեսական հարաբերությունների համակարգն ունի դինամիկ բնույթ, քանի որ անընդհատ փոփոխվում և զարգանում է: Մշտապես աճում են հասարակական արտադրության ծավալները, կատարելագործվում՝ արտադ-

ության միջոցները, խորանում՝ աշխատանքի միջազգային բաժանումը:

Համաշխարհային տնտեսությունը և ՄՏՀ զարգացումն անցել են երկարատև ուղի, որը պայմանականորեն կարելի է բաժանել մի քանի *փուլերի.*

Առաջին փուլին վերաբերում են ապրանքափոխանակման սկզբնական շրջանը, հացահատիկի, այլ բարիքների փոխանակման գործընթացները, որոնցով սկիզբ են առել միջազգային առևտուրը, փոխանակումները:

Երկրորդ փուլի հիմք դարձել է ֆեոդալական հասարակարգի ընթացքում կատարվող ապրանքադրամական հարաբերությունների զարգացումը:

Երրորդ փուլն ընդգրկում է 18-19-րդ դդ. տեղի ունեցած համաշխարհային կապիտալիստական շուկայի ձևավորումը, աշխատանքի միջազգային բաժանումը: Այս շրջանում սկսել են խորանալ միջազգային մասնագիտացումը, արտադրության ինտերնացիոնալացումը: Զարգացել են արդյունաբերությունը, տրանսպորտը, կապը, մշակույթը, այլ հարաբերություններ:

Չորրորդ փուլը բնութագրվում է 19-րդ դարի վերջի և 20-րդ դարակեսի միջազգային առևտրային կենտրոնների, համաշխարհային շուկայի զարգացումով, տնտեսության համաշխարհային համակարգի ձևավորումով: Այս շրջանում ուժեղացել են կապիտալի արտահանումը, միջազգային լայն փոխանակումները, ստեղծվել՝ միջազգային մոնոպոլիաներ: Առաջին համաշխարհային պատերազմը, հեղափոխությունը Ռուսաստանում, 20-րդ դարի 30-ականների ճգնաժամը, երկրորդ համաշխարհային պատերազմը ձևավորել են ՀՏ նոր կառուցվածք:

Հինգերորդ փուլ համարվել է ՀՏ զարգացումը 1945-1990-ականներին: Այս փուլում երկրների միջև ձևավորվել և արագ զարգացել են ՄՏՀ-ը, ստեղծվել միջազգային միություններ, ֆինանսական կազմակերպություններ՝ ՄԱԿ, ՀԲ, Միջազգային արժութային ֆոնդ: 1970-ական թթ. արագ թափով զարգացում են ապրել տեղեկատվական տեխնոլոգիաները՝ փոխելով ՄՏՀ բովանդակությունը:

Վեցերորդ փուլը միջազգային տնտեսության ներկա շրջանն է, որը սկսվել է 1991 թ., ԽՍՀՄ փլուզումից հետո, երբ սոցիալիստական հանրապետություններն անցել են շուկայական նոր հարաբերությունների, և առաջ է եկել ինտեգրացիոն գործընթացների նոր, ավելի արագընթաց զարգացման ժամանակաշրջան:

1.2 Միջազգային տնտեսական հարաբերությունների կառավարման մեթոդները, խնդիրները, գործառույթները, միտումները

ՄՏՀ կառավարման համար կիրառվում են տարբեր ***մեթոդներ.***

Պետական մեթոդներ

- մաքսային ռեժիմի, տարիֆների սահմանում,
- ապրանքների արտահանման, ներմուծման կանոնների պահպանում,
- մաքսանենգության դեմ պայքարի միջոցառումների ձեռնարկում:

1. Վարչական մեթոդներ

- միջազգային առևտրական պայմանագրերի կնքում,
- գնային արտոնությունների կիրառում,
- տեխնիկական արգելքների վերացում,
- արտահանման ձևերի կատարելագործում:

2. Տնտեսական մեթոդներ

- ուղղակի և անուղղակի ֆինանսավորում, վարկավորում,
- հարկերի իջեցում, արտահանման ապահովագրում:

3. Օպերատիվ մեթոդներ

- ապրանքների և ծառայությունների արտոնագրում և քվոտավորում,
- մաքսային ռեժիմի և տարիֆների կիրառում,
- ապրանքների անվանացանկի օգտագործում,
- արժութային կարգավորում:

4. Միջազգային մեթոդներ

- միջազգային արգելքների հաղթահարում,
- միջազգային նորմերի, օրենքների իրականացում:

Բոլոր մեթոդների գործառույթները տարբեր են և տարբեր չափով են ազդում գործընթացի արդյունավետության վրա: Դրանք միմյանց չեն հակասում և դիտվում են համընդհանուր փոխկապակցության պայմաններում:

ՄՏՀ ***խնդիրն է.***

- ուսումնասիրել տնտեսական գործընթացների կազմակերպման ձևերը և մեթոդները, դրանց կարգավորող, կառավարող օրգանների գործունեությունը,
- բացահայտել երկրների պատմական զարգացման ընթացքը և տեղը ՄՏՀ-ում,
- բացահայտել զարգացման հիմնական օրինաչափությունները և կիրառել ՄՏՀ-ում,
- ուսումնասիրել համաշխարհային շուկայի գործունեության մեխանիզմը և դրանց ներդրման հնարավորությունները տնտեսական գործունեության մեջ:

ՄՏՀ-ը, որպես տնտեսական կատեգորիա, կատարում է տարբեր ***գործառույթներ.***

- կազմակերպում է ռեսուրսների, աշխատանքի արդյունքի առարկայական և արժեքային փոխանակումներ ու մատակարարումներ,

• իրականացնում է գիտական ճանաչողություն՝ հիմնվելով բոլոր ժամանակների տնտեսական գործունեության միասնության սկզբունքների վրա:

ՄՏՀ-ում գուշակություններ, ենթադրություններ չեն արվում, և գործընթացը հիմնվում է միայն տնտեսական ընդհանրությունների, տեղեկությունների, փաստացի տվյալների վրա: Որպես ինքնուրույն գիտություն, ՄՏՀ-ը կապի մեջ է արդյունաբերության, գյուղատնտեսության, տրանսպորտի, շինարարության, կապի ճյուղերի, տնտեսական աշխարհագրության, ժողովրդագրության, ֆինանսների, վիճակագրության և այլ ճյուղային գիտությունների հետ:

ՄՏՀ զարգացման ներկա համակարգի ***միտումներն են.***

1. ՄՏՀ բոլոր ձևերը ցուցաբերում են զարգացման առաջընթաց (համաշխարհային առևտրի աճի տեմպերը գերազանցում են ներքին արտադրության տեմպերին):

2. Երկրների միջև զարգանում են շփման նոր մեթոդներ (օրինակ՝ էլեկտրոնային առևտուր, միջազգային առևտրային կոնտրակտների կնքումը համացանցի միջոցով):

3. ՄՏՀ-ը ստեղծել են ապրանքների, ծառայությունների, տեխնոլոգիաների, կապիտալի, աշխատուժի գլոբալացում:

4. ՄՏՀ աշխարհագրական ուրվագիծը նույնպես որոշակի փոփոխվել է, ինչը հատկապես բնորոշ է Հարավարևելյան Ասիայի երկրներին: Չինաստանում, Հնդկաստանում ձևավորվում են տնտեսական նոր կենտրոններ:

Այս միտումներին զուգահեռ ՀՏ զարգացմանը բնորոշ են մի շարք ***հիմնախնդիրներ.***

1. Զարգացած շուկայական տնտեսություն ունեցող երկրները հանդես են գալիս փակ տնտեսական համակարգում: Այսօր փոխադարձ առևտրում զարգացած երկրներին բաժին է ընկնում համաշխարհային առևտրի 75, համաշխարհային ուղղակի ինվեստիցիաների 60 տոկոսը:

2. Ավելանում է հարուստ և աղքատ երկրների կտրվածքը (խզումը): Այսօր զարգացած երկրներին, որտեղ ապրում է աշխարհի բնակչության 20-22 տոկոսը, բաժին է ընկնում համաշխարհային ՀՆԱ 86, իսկ աղքատ-զարգացող երկրներին՝ ընդամենը 1 տոկոսը:

1.3 Միջազգային տնտեսական հարաբերությունների զարգացման հիմնական գծերը և գործոնները

ՄՏՀ զարգացումը սերտորեն կապված է արտադրողական ուժերի զարգացման հետ: Այն պատմական գործընթաց է, որ ձևավորվել է Հին Արևելքում, Հին Հռոմում ու Հին Հունաստանում: Անընդհատ զարգանալով միջին դարերից հասել է մինչև նոր ժամանակներ:

ՄՏՀ ներկա մակարդակը բնութագրվում է.

• համաշխարհային տնտեսության մեջ ԱՄԲ խորացման աստիճանով, արտադրության միջազգային մասնագիտացումով և կոոպերացումով,

• աշխարհատնտեսական կապերի դինամիկ զարգացումով և դրանց ծավալների աստիճանական ընդլայնումով,

• միջազգային առևտրի մասշտաբների աճով և որակական բնույթի փոփոխություններով,

• ֆինանսական կապիտալի աճով և արտահանման բնույթով,

• երկրների և տարածաշրջանների տնտեսական ինտեգրացման գործընթացի արագացմամբ,

• երկրների կողմից թողարկվող և իրացվող ապրանքների միջազգային մրցակցությամբ:

Հասարակության զարգացման ներկա փուլում համաշխարհային տնտեսությունը հիմնվում է շուկայական տնտեսության, ԱՄԲ-ի, օբյեկտիվ օրինաչափությունների, արտադրության և կապիտալի միջազգայնացման սկզբունքների վրա: Համաշխարհային տնտեսությունն իր էությամբ դառնում է միջազգային՝ ընդգրկելով.

• աշխատուժի, տեխնոլոգիաների, տեղեկատվության միջազգային շարժը,

• միջազգային ապրանքափոխանակությունը,

• կապիտալի, արտադրության, միջազգային ֆինանսների ոլորտը:

ՄՏՀ բնորոշ գիծ են համագործակցությունը և փոխըմբռնումը, իսկ զարգացումը կախված է մի շարք ***գործոններից,*** որոնք են.

1. Բնական գործոնները (բնական պայմաններ, կլիմայի տարբերություն, գեոպոլիտիկ, ժողովրդագրական):

2. Տնտեսական զարգացման գործոնները (արտադրական, ԳՏ, սոցիալական, մշակութային):

3. Գլոբալ հիմնախնդիրները (տնտեսական, հումքային, էներգետիկ, պարենային, ժողովրդագրական, միջազգային համագործակցության ակտիվացում, գլոբալ տեղեկատվական):

4. Երկրի տեղը և ***դերը*** ԱՄԲ-ի մեջ:

5. Երկրի ընդգրկվածությունը համաշխարհային տնտեսության մեջ, տրանսպորտում:

6. Կապի և տեղեկատվության միջոցները:

7. Քաղաքական հիմնախնդիրները, զարգացող երկրների դերը ՀՏ-ում:

8. ԳՏԱ զարգացումը, արտադրության, առևտրի, ֆինանսների, տեղեկատվության մեջ նոր տեխնոլոգիաների ներդրումը:

9. Համաշխարհային տեղեկատվության վերափոխումը, համացանցի տեղեկատվության ստեղծումը:

10. Էներգահումքային, պարենային և բնապահպանության հիմնախնդիրների լուծումը:

11. Միգրացիայի հիմնախնդիրները՝ թույլ զարգացած երկրներից զարգացած երկրներ մեծ թվով աշխատուժի ներգաղթը:

ՄՏՀ ***հեռանկարային զարգացման*** գործոններից են ԳՏ առաջընթացը, շրջակա միջավայրի գլոբալ փոփոխությունները, ազգաբնակչության աճը և միգրացիայի կրճատումը, հարուստ և աղքատ երկրների կապերի զարգացումը, տնտեսական աճը, միջազգային տնտեսական կապերի ուժեղացումը և այլն:

1.4 Միջազգային տնտեսական հարաբերությունների դերը երկրների սոցիալ-տնտեսական զարգացման գործում

ՄՏՀ-ը երկրի տնտեսական աճի և բնակչության պահանջարկի բավարարման հիմնական աղբյուրներից է: Այն կարևոր նշանակություն ունի տնտեսության առանձին ճյուղերի և նրանց միջև օպտիմալ կապեր ստեղծելու համար: ՄՏՀ-ի միջոցով երկրների միջև իրականացվում են միջազգային առևտուր, կապիտալի արտահանում, միջազգային վարկերի ստացում, արժութային հարաբերությունների կազմակերպում, ԳՏ համագործակցում, ՀՏ համակարգում երկրների ինտեգրում: ՀՏ մեջ ընդգրկվում են նոր երկրներ, ազատականացման շնորհիվ ավելանում են տնտեսական հարաբերությունները: 1950 թ. ամբողջ աշխարհի արտահանման բաժինը ՀՆԱ-ի մեջ կազմել է 11.8, 1980 թ.՝ 15.3, 2000 թ.՝ 17.8 տոկոս:

Էկոնոմիկայի ինտերնացիոնալացման արդյունքում տեղի են ունենում ՄՏՀ ձևերի, դինամիկայի, կառուցվածքի էական փոփոխություններ: Ժամանակակից ՄՏՀ-ը զարգանում են տարբեր ձևերով՝ փոխվում են ՀՏ աշխարհաքաղաքական վեկտորները, ԳՏՀ ազդեցությունը, արտադրության և կապիտալի, աշխատանքային ռեսուրսների միավորումը: Եթե 1920-1940 թթ. համաշխարհային առևտուրն աճել է 2 անգամ, ապա պատերազմից հետո 50 տարում այս ցուցանիշը հասել է 30-ի: 1980-2004 թթ. համաշխարհային առևտուրն ավելացել է 2 տրիլիոն դոլարով և կազմել 9123.5, իսկ 2007 թ.՝ 11762 տրիլիոն դոլար: Արտահանման ծավալը 1980 թ. համեմատ աճել է 70, իսկ 2000 թ. համեմատ՝ 33 տոկոսով: Տեղի է ունեցել արտադրության և ապրանքների վաճառքի ինտերնացիոնալացում: 2005 թ. աշխարհում հաշվարկվում էին անդրազգային համալիրների մոտ 850 հազար մասնաճյուղեր, երբ 1960 թ. դրանց քանակը 3500 էր:

Միջազգային առևտրի ընդլայնումը նպաստում է արտադրանքի որակի բարելավմանը, ավելացնում մեքենասարքավորումների, վառելիքաէներգետիկ ռեսուրսների, արտադրության հումքի ծավալները, նպաստում արժույթի ավելացմանը, խթանում երկրի ԳՏԱ և գիտական նոր նվաճումների ներդրումը:

ՄՏՀ-ն առանձին երկրների հնարավորություն է տալիս լրացնելու սեփական արտադրանքի պակասը, բարելավելու բնակչության սպառողական պահանջարկը: Այն պայմաններ է ստեղծում կապիտալ ներդրումների համակենտրոնացման և արդյունավետ օգտագործման համար: Եթե 1914-1945 թթ. կապիտալ ներդրումներն ավելացել են 1/3-ով, ապա յուրաքանչյուր 10 տարվա, հետո՝ յուրաքանչյուր 6-7 տարիների, իսկ 1960-1985 թթ. ընթացքում դրանք աճել են 4 անգամ: 1996 թ. օտարերկրյա ուղղակի կապիտալ ներդրումները հասել են 2.7, 1999 թ.՝ 4.8, 2001 թ.՝ 6.8 տրիլիոն դոլարի[18]:

ՄՏՀ-ն ունի ***քաղաքական նշանակություն***: Միջազգային շուկայում երկրները հանդես են գալիս որպես իրավահավասար սուբյեկտներ, և ազգային արտադրանքը ձեռք է բերում միջազգային ճանաչում: Արտահանման միջոցով երկրները հնարավորություն են ստանում բարելավելու իրենց տնտեսական և քաղաքական պայմանները: Փոխադարձ առևտուրը, որպես ինտեգրացումն իրականացնելու միջոց, խորացնում է երկրների տնտեսական և գիտատեխնիկական համագործակցությունը, գիտական նվաճումների մշակումը և օգտագործումը, խնայում հումք, նյութեր, էներգետիկ և աշխատանքային ռեսուրսներ:

Երկրների միջև տնտեսական կապերի ստեղծումն ապահովում է զարգացման ավելի բարձր մակարդակ, կայուն տնտեսական աճ, ԱՄԲ համակարգում բարելավվում է այդ երկրների տնտեսական վիճակը, ընդլայնում իրացման շուկաները:

ՄՏՀ-ը երկրի ազգային հարստության ավելացման, տնտեսության կառուցվածքային փոփոխության և վերակառուցման կարևոր աղբյուր է: Յուրաքանչյուր երկրի արտաքին տնտեսական գործունեության զարգացումը լուծում է տարբեր ռազմավարական հարցեր: Դրանք են.

- արտահանման ծավալների ավելացումը, ներմուծման կառուցվածքի բարելավումը,
- համաշխարհային շուկայում երկրի մրցունակության ապահովումը:

Արտաքին տնտեսական գործունեության ***հետագա կատարելագործումը*** պահանջում է.

- արտաքին առևտրի կարգավորում, որը կնպաստի արտահանվող ապրանքների ավելացմանը,
- ներքին և համաշխարհային շուկայի գների մակարդակների մոտեցում,
- ԱՄԲ-ին մասնակցող երկրների թվի ավելացում ՀՏ մեջ,

[18] Международные экономические отношения, под ред. Архипова А. Ю. и Пузаковой Е. П., Ростов-на-Дону, 2009, стр. 152.

- ԳՏԱ ընդլայնում, բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործում, արտադրական նոր ճյուղերի ստեղծում, որպեսզի արտադրանքի մի մասը դուրս գա համաշխարհային շուկա,
- կենսակերպի բարելավում, ապրանքների և ծառայությունների ավելացում, աշխատանքի, զբոսաշրջության, կրթության, առողջապահության բարելավում, տեխնիկայի, տրանսպորտի, հեռահաղորդակցության միջոցների օգտագործում,
- բանկերի, ֆինանսական հիմնարկների, արժույթի և արժեթղթերի շուկաների ձևավորում, կապիտալի տեղաշարժերի ավելացում, միջազգային տնտեսությունների մասնագիտացում և կոոպերացում:

Որպես ՀՏ անմիջական մաս, ՄՏՀ-ը 21-րդ դարի սկզբին էապես տարբերվում է 1990-ական թթ. ցուցանիշներից: Բայց կան նաև առանձնահատուկ երևույթներ, որոնք են.

- արտադրության աճի դանդաղումը,
- ակտիվ բնակչության գործազրկության ավելացումը,
- պետական պարտքերի և ռազմական ծախսերի աճը,
- գլոբալացման գործընթացների ավելացումը,
- ստվերային տնտեսության ընդլայնումը,
- բնակչության ոչ լեգալ միգրացիայի ավելացումը և այլն:

Ժամանակակից ՄՏՀ զարգացման կարևոր առանձնահատկություն է նրա ***միջազգային կարգավորումը***, որը երկրների ընդունած կամավոր ամբողջական պարտավորությունների և ՀՏ կապերի ոլորտում գործունեության ընդհանուր կանոնների կատարումն է: Միջազգային կարգավորումը պահանջում է.

- համաշխարհային տնտեսության և արժութային ոլորտի զարգացման կայունության ապահովում,
- երկրների միջև տնտեսական համագործակցության զարգացում,
- ճգնաժամից դուրս գալու կոնկրետ միջոցների ընդունում,
- շրջակա միջավայրի պաշտպանություն և այլն:

ՄՏՀ կարգավորման ***ազգային մեխանիզմը*** ենթադրում է ոչ միայն պետության կողմից մասնակից պետություններին ռեսուրսներով և շուկայական մատակարարումներով ապահովում, այլև ակտիվորեն մասնակցություն արտաքին տնտեսական գործունեությանը: Կարգավորման ազգային մեխանիզմը լինում է ***տնտեսական*** և ***վարչական:***

Տնտեսական միջոցները մաքսային տուրքերն են, տարիֆային հարկերը, օտարերկրյա դեպոզիտները և այլն:

Վարչական միջոցներին վերաբերում են լիմիտները, լիցենզիաները, արտահանման և ներմուծման սահմանները կողմերի միջև և այլն:

1.5 Միջազգային տնտեսական հարաբերությունների տեսությունները

Պատմականորեն տնտեսական հարաբերությունները սկիզբ են առել առևտրային հարաբերություններից: Տեսության առաջին ուղղությունը մերկանտիլիզմն էր, որի գաղափարի քարոզողներն էին Թոմաս Մանը, Ժան Բատիս Կոլբերը: ***Մերկանտիլիզմի*** գլխավոր արժանիքն արտաքին առևտրի և արտահանման խրախուսման մոդելի մշակումն է պրոտեկցիոնիզմի և հայրենական մոնոպոլիաների աջակցման հիման վրա: Հետագայում առևտրի, ԱՄԲ հարցերին անդրադարձել են դասական տնտեսագետները: Ադամ Սմիթը «Հետազոտություն ազգերի հարստության բնույթի և պատճառների մասին» աշխատության մեջ անդրադարձել է արդյունքի արտադրության մեջ երկրների մասնագիտացմանը, մրցակցությանը: Ըստ նրա՝ երկիրը պետք է մասնագիտանա այն ապրանքների արտադրության մեջ, որոնց արտադրության համար ունի բացարձակ առավելություններ: Սմիթի գաղափարներն ընդունվել են և հետագա զարգացում ստացել Դ. Ռիկարդոյի, Ջ. Ս. Միլլի աշխատություններում: Վերջիններս իրենց տեսությունը կառուցել են արտադրության ծախքերի համեմատության վրա՝ ասելով, որ երկիրը պետք է մասնագիտանա հասարակական պահանջմունք ձևավորող այն ապրանքների արտադրության մեջ, որոնց արդյունքն առավելագույնն է, ծախսը՝ նվազագույնը: Մնացած ապրանքները երկիրը կարող է ներմուծել: Դ. Ռիկարդոյի գիտական համակարգի տարբերիչ գիծն արժեքի աշխատանքային օրենքի ճանաչումն էր:

Վերլուծելով ԱՄԲ-ը՝ Ա. Սմիթն իր աշխատությունում (1776 թ.) ապացուցում է առևտրի և ձեռնարկատիրության ազատության անհրաժեշտությունը, քանի որ, ըստ նրա, առևտրի ազատության սահմանափակումներն արգելակում են աշխատանքի բաժանման հետագա խորացումն առանձին տարածաշրջանների և երկրների միջև: Այդ արգելքների վերացումը և միջազգային փոխանակումների դաշտի ընդլայնումը պետք է տարվեն ազգային տնտեսությունների մասնագիտացման և դրանց փոխկախվածության, համաշխարհային տնտեսության կազմակերպման ուղղությամբ: Ա. Սմիթը ենթադրում էր, որ պետության համար շահավետ կարող է լինել ոչ միայն արտահանումը, այլև ներմուծումը: Նա նաև փորձում է հիմնավորել, թե հատկապես որ ապրանքներն են շահավետ արտահանման, որոնք՝ ներմուծման համար: Համաձայն Ա. Սմիթի՝ անհրաժեշտ է ապրանքների ներմուծում կատարել այն երկրներից, որտեղ արտադրական ծախսերը բացարձակ ցածր են, և արտահանել այն ապրանքները, որոնց արտադրության ծախսերը ցածր են, քան պարտնյորինը: Այս դեպքում առևտուրը կլինի արդյունավետ: Սմիթի տեսությունը ստացել է ***բացարձակ առավելությունների տեսություն*** անվանումը: Սմիթն առաջ է քաշում ազատ առևտրի կարգախոսը:

Դ. Ռիկարդոն (1772-1823 թթ.) նշել է, որ եթե երկիրը բացարձակ առավելություն էլ չունենա, արտաքին առևտուրը կմնա որպես շահութաբեր գործարք: Նա հայտնագործել է ***համեմատական առավելության օրենքը***՝ ըստ որի յուրաքանչյուր երկրի ձեռնտու է արտադրել և արտահանել այնպիսի ապրանք, որի արտադրական ծախսերն ավելի ցածր են, քան ներմուծման: Ըստ Ռիկարդոյի՝ ցանկացած երկրում էլ կգտնվի այնպիսի ապրանքների արտադրությունը կլինի ձեռնտու և որը նաև կարտահանվի: Ազատ առևտրի դեպքում երկրների մասնագիտացումը պետք է ընթանա աշխատանքային և կապիտալի ծախսումների խնայողություններին համապատասխան: Այսպիսով, ***միջազգային առևտրի ձևավորման համար կարող է հիմք դառնալ ապրանքների համեմատական ծախքերի տարբերությունը՝ անկախ այդ ծախքերի բացարձակ մեծությունից:***

Դ. Ռիկարդոյի հայացքների մեկնաբանման մեջ իր տեղն ունի Ջ. Հաբերլերի մոդելը, որտեղ դիտարկվում է միևնույն ապրանքն արտադրող երկրների օրինակը: Դ. Ռիկարդոյի աշխատանքներում կարևոր ներդրում է արել անգլիական տնտեսագետ Ջ. Միլլը, որը 19-րդ դարի կեսերին իր «Քաղաքատնտեսության հիմունքները» աշխատության մեջ ապացուցում է, որ ***փոխանակման գինը սահմանվում է պահանջարկի և առաջարկի օրենքով այնպես, որ արտահանման արժեքը երկրին հնարավորություն տալիս վճարելու ներմուծման ծախսերն ամբողջությամբ:***

Դասականների գաղափարները 20-րդ դարի 30-ական թվականներին զարգացրել են շվեդ տնտեսագետներ Է. Հեկշերը և Բ. Օլինը, ամերիկյան տնտեսագետներ Վ. Լեոնտևը, Փ. Սամուելսոնը և այլք: Հեկշերի և Օլինի կողմից մշակվել է նոր մոդել, արտադրության գործոնների կոնցեպցիա, իսկ ավելի ուշ Սամուելսոնը մշակել է մաթեմատիկական ապարատ, որը 60-ականներին կիրառվել է տնտեսագիտական գրականության մեջ: Հեկշեր-Օլինի մոդելում միջազգային մասնագիտացումը չէր կապվում առանձին երկրների առանձնահատկությունների հետ, այլ առաջին հերթին կոչված էր պարզաբանելու արդյունաբերության վերամշակող ապրանքների արտահանման պատճառները: Առանձին երկրների միջազգային առևտրի մասնագիտացման նոր դասական մոտեցումը պայմանավորված էր պատմական և աշխարհագրական պատճառներով, երկրների միջև նյութական և աշխատանքային ռեսուրսների անհավասար բաժանումով: Միջազգային առևտրի այդ մոդելին համապատասխան տեղի է ունենում արտադրության գործոնների (աշխատանք, փոխատվական տոկոս, ռենտա) չափերի հարթեցում: Եթե այդ գործոններն առկա են, դրանց չափերը ցածր են, եթե սահմանափակեն և ներքին պահանջները՝ տարբեր, չափերը բարձրանում են: Հետևաբար, միջազգային առևտրում երկրները մասնագիտանում են այն ապրանքների արտահանման գծով, որոնք ապահովում են անհրաժեշտ արտադրական ծախսերը: Սակայն պե-

տությունը, ունենալով ***հարաբերական դեֆիցիտային ապահովում***, կարող է արտահանել նաև ապրանքներ սուղ հնարավորությունների պայմաններում: Այս մոդելն ավելի ձեռնտու էր մայր երկրներին և գաղութներին, երբ առաջինները հանդես էին գալիս որպես ինդուստրիալ զարգացած երկրներ, իսկ վերջինները՝ որպես ագրարային, հումքային ապրանքներ արտահանողներ:

Ամերիկյան հայտնի տնտեսագետ, Նոբելյան մրցանակի դափնեկիր Վ. Լեոնտևը, ուսումնասիրելով ԱՄՆ արտահանման և ներմուծման կառուցվածքը, բացահայտել է, որ ի հակակշիռ Հեկշեր-Օլինի տեսության, արտահանման մեջ համեմատաբար գերակշռում են աշխատատար, իսկ ներմուծման մեջ՝ կապիտալատար ապրանքները: Այս դրույթը հայտնի է ***Վ. Լեոնտևի պարադոքս*** անվամբ: ԱՄՆ-ում պարադոքսը չի դրսևորվել՝ կապված այդ տարիներին կուտակված տեղի աշխատանքային ռեսուրսների ավելցուկի հետ:

Միջազգային առևտրի ապրանքների «կյանքի փուլ» տեսության հեղինակներ Ջ. Կանդելբերգերը, Ռ. Վերնոն, Լ. Ուելսն առանձնացնում են զարգացած երկրների ապրանքային էքսպանսիայի հիմնական փուլերը: 1960-ական թվականների կեսերին ամերիկյան տնտեսագետ Ռ. Վերնոն առաջ է քաշել մթերքների կենսական փուլի տեսությունը, որով փորձում էր բացահայտել համաշխարհային առևտրի զարգացումը պատրաստի արտադրանքով կենսափուլի հիման վրա:

1991 թ. ամերիկյան տնտեսագետ Մ. Պորտերը հրատարակել է «Երկրի մրցակցության առավելությունը» գիրքը (ռուսերեն թարգմանությամբ գիրքը տպվել է «Միջազգային մրցակցություն» անունով)՝ հիմնվելով այն հանգամանքի վրա, որ համաշխարհային շուկայում մրցակցում են ընկերությունները և ոչ թե երկրները:

Գլոբալացման տեսությունները ընդհանուր առմամբ ունեն բազմակողմանի բնույթ և ընդգրկում են ոչ միայն տնտեսության, այլև հասարակական կյանքի բոլոր ոլորտները: Բոլոր գործընթացներն իրենց արտացոլումն են գտնում համաշխարհային տնտեսության զարգացման մեջ:

Էկոնոմիկայի գլոբալացումը տնտեսական և քաղաքական տարբեր մոտեցումներով պայմանականորեն կարելի է բաժանել ***հիպերգլոբալացման*** և ***կասկածելի (սկեպտիկ)*** ուղղությունների: ***Հիպերգլոբալացումը*** կապված է երկրների միջև ազգային սահմանների տարբերությունների վերացման հետ: Այստեղ որոշիչը կապիտալի, ապրանքների և տեղեկատվության ազատ շարժն է միասնական գլոբալ շուկայի շրջանակներում: Հիպերգլոբալացման ներկայացուցիչներն են Կ. Օմահին, Ֆ. Ֆուկույաման և Ռ. Ռայխը: «Գլոբալացում» տերմինի առաջին հեղինակներից է Կ. Օմահին, որն այդ տեսությանը նվիրել է մի քանի աշխատանք՝ «Աշխարհն առանց սահմանի» (1990 թ.), «Ազգային պետությունների վերջը» (1995 թ.), «Մտածել գլոբալորեն» (1995 թ.): «Այսօրվա անսահման աշխարհում,- գրում է նա,- «անտեսանելի ձեռ-

քը» ունի գործելու և ուժի երանգ, որի մասին Ա. Սմիթը կարող էր միայն երազել»:

Գլոբալացման դրույթներ զարգացել են նաև Ֆ. Ֆուկույամայի աշխատանքներում: Իր «Պատմության վերջը և վերջին մարդը» (1992 թ.) մենագրությունում նա ուսումնասիրում է աշխարհում տեղի ունեցող գլոբալացման գործընթացները: Ըստ նրա՝ ներկայում արդեն բոլոր զարգացած երկրների կողմից ստեղծվել են լիբերալ դեմոկրատական քաղաքական ինստիտուտներ, որոնք ավելի արդյունավետորեն են ներգրավված գլոբալ տնտեսական համակարգում:

Հիպերգլոբալացումը քննադատել են, այսպես կոչված, *սկեպտիկ* ուղղության կողմնակիցները՝ Ս. Խանտինգտոնը, Պ. Խիրստը, Գ. Թոմփսոնը, Ս. Կրասները: «Քաղաքակրթության և համաշխարհային կարգ ու կանոնի ձևավորման բախումը» (1996 թ.) աշխատությունում Ս. Խանտինգտոնն առաջինն է ձևակերպում «ժամանակակից աշխարհում տեղի ունեցած գործընթացներն ավելի են նպաստում սահմանազատումներին և հակասություններին, քան աշխարհի մշակութային միատարրությունը» միտքը: Պ. Խիրստը և Գ. Թոմփսոնը գտնում են, որ, չնայած 20-րդ դարի 90-ական թթ. տնտեսական կյանքի ինտերնացիոնալացման բարձր մակարդակին, համաշխարհային տնտեսությունը լրիվ չի գլոբալացվել: Տվյալ դրույթը հիմնավորվում է նրանով, որ առաջատար, իսկական անդրազգային կազմակերպությունները (ԱԱԿ) դեռևս շատ չեն, և նրանց մեծ մասը շարունակում է մնալ «ազգային հիմքի վրա», իսկ ապրանքների, ծառայությունների, կապիտալի միջազգային հոսքերն ավելի շատ կուտակվում են զարգացած, առաջատար երկրներում: Ս. Կրասները գտնում է, որ գլոբալացումը պետություններին տնտեսական գործընթացների վրա հսկողության ավելի մեծ հնարավորություն է տալիս:

ՄՏՀ *տեսության տարրերն* են.

1. ***Միջազգային առևտուրը***, որի տեսության հիմքում համեմատական առավելության սկզբունքն է: Այն արտացոլվում է Դ. Ռիկարդոյի աշխատության մեջ (1810 թ.)՝ ըստ որի ցանկացած երկիր սահմանափակ ռեսուրսների պայմաններում արտադրությունը և արտահանումը կապահովի այն դեպքում, երբ մասնագիտանա այն ապրանքատեսակների արտադրության մեջ, որոնք պահանջում են քիչ ծախսեր:

2. ***Առևտրի քաղաքականությունը***, որի տեսության դրույթներից բխում է, որ առևտրի հոսքերի ցանկացած արհեստական արգելք կարող է կասեցնել միջազգային առևտրից ստացվող օգուտները: Այդպիսի արգելքներից են պետական սահմանափակումները (ներմուծման տուրքեր, քվոտաներ, ոչ տարիֆային արգելքներ):

3. ***Միջազգային ֆինանսները և միջազգային արժույթը***, որոնք ներքինից տարբերվում են նրանով, որ մի երկրի ազգային արժույթը փոխարինվում է մի այլ երկրի ազգային արժույթով: Այս գործարքին մասնակցում են կոմերցիոն բանկերը:

ԳԼՈՒԽ 2
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱԺԱՆՈՒՄ

2.1 Աշխատանքի միջազգային բաժանման էությունը, տեղը և դերը համաշխարհային տնտեսությունում

Աշխատանքի բաժանումը պատմական գործընթաց է: Անցնելով տարբեր փուլեր՝ փոխվել են նրա բնույթը և էությունը: Այն ձևավորվել է հասարակության տնտեսական գործունեության զարգացմանը զուգընթաց՝ կրելով որակական փոփոխություններ: ***Աշխատանքի միջազգային բաժանումը (ԱՄԲ) աշխատանքային առանձին գործընթացների առանձնացումը և դրանց հետագա միավորումն է մարդկանց, ձեռնարկությունների, ճյուղերի, երկրների միջև:*** Դեռևս Ա. Սմիթի ժամանակներից նշվում է, որ, ԱՄԲ-ով պայմանավորված, մասնագիտացումը և կոոպերացումն աշխատանքի արտադրողականության աճի և տնտեսության առաջընթացի կարևոր գործոններն են:

Առանձին երկրներում անհամաչափ զարգացումով առաջանում է աշխատանքի ճյուղային բաժանում՝ արդյունաբերություն, գյուղատնտեսություն և այլն: ՄՏՀ-ում ԱՄԲ-ն ուսումնասիրվում է որպես առանձին երկրների արտադրության մեջ ապրանքների և ծառայությունների մասնագիտացում միջազգային փոխանակումների համար: ԱՄԲ-ն[19] աշխատանքի հասարակական բաժանման բարձրագույն աստիճանն է, որը հիմնվում է առանձին երկրների արտադրական հարաբերությունների վրա: Այն համարվում է ՄՏՀ բովանդակությունն արտահայտող կարևոր կատեգորիա: Աշխարհի բոլոր երկրներն այս կամ այն կերպ ընդգրկվում են ԱՄԲ-ի մեջ, որում խորացումը թելադրվում է ԳՏՀ ազդեցության տակ արտադրողական ուժերի զարգացմամբ:

ԱՄԲ-ը ստեղծվել է կապիտալիզմի զարգացման մանուֆակտուրային ժամանակաշրջանում (17-18-րդ դդ.) և մինչև արդյունաբերական հեղաշրջումը հիմնվել է բնակլիմայական, առանձին երկրների աշխարհագրական պայմանների, հումքի պաշարների և էներգետիկ աղբյուրների բնական հիմքերի վրա: Հետագայում միջազգային մասշտաբով աշխատանքի բաժանումը հիմնվում է խոշոր մեքենայական արտադրության վրա, որը տնտեսապես կապում է միջազգային արտադրություն ստեղծող տարբեր երկրներ:

Համաշխարհային տնտեսության շրջանակներում ԱՄԲ-ն առանձին երկրների մասնագիտացումն է որոշակի ապրանքների և ծառայությունների գծով: Ներկա փուլում այն արտահայտվում է արտադրության

[19] «Աշխատանքի միջազգային բաժանում» արտահայտության տակ, ինչպես նշում է Յա. Տինբերգենը, հասկացվում է «աշխարհում տնտեսական գործունեության տեսակների աշխարհագրական տեղաբաշխում»: Տե՛ս Тинберген Я., Пересмотр международного порядка. М.,1980, стр. 174.

գործընթացների բաժանման, դրանց համագործակցության դիալեկտիկական կապի մեջ: ԱՄԲ-ի պատճառը երկրների բնական պաշարների և աշխատուժի անհամաչափ տեղաբաշխումը, աշխարհագրական և կլիմայական պայմանների տարբերությունն են, իսկ որոշիչ գործոնը ԳՏԱ-ն է, որը ստեղծում է ***արտադրության համակենտրոնացում, կենտրոնացում, մասնագիտացում և կոոպերացում:*** ԱՄԲ-ը բարդ համագործակցություն է, որի դեպքում արտադրության միջոցների սեփականության սուբյեկտները միաժամանակ դառնում են նաև ԱՄԲ սուբյեկտներ:

Աշխարհի տարբեր երկրների միջև պատմականորեն ձևավորվել են արտադրական, տնտեսական, առևտրական, վարկային հարաբերություններ: Հետևաբար, ԱՄԲ-ն արտահայտում է նաև երկրների զարգացման աստիճանը և ունի ինչպես ***քանակական***, այնպես էլ ***որակական*** չափանիշներ: ***Քանակական*** կողմն արտահայտում է ՄՏՀ ծավալները և մասշտաբները, իսկ ***որակականը***՝ զարգացման մակարդակը, ապրանքների և ծառայությունների հարաբերությունը:

Գնալով բարձրանում է ԱՄԲ նշանակությունը տարբեր սոցիալ-տնտեսական համակարգ ունեցող երկրների համագործակցության գործում և դառնում է համաշխարհային տնտեսության կարգավորման կարևոր գործոններից մեկը: Միաժամանակ տարբեր սոցիալ-տնտեսական գործընթացների ազդեցության տակ ԱՄԲ կառուցվածքում կատարվում են էական փոփոխություններ:

ԱՄԲ-ը հասարակական հարաբերությունների մի ամբողջ համակարգ է, որը ձևավորվել է ազգային տնտեսությունները համաշխարհային համագործակցության մեջ ընդգրկելու միջոցով: Արդյունքում՝ ԱՄԲ-ը հանդես է գալիս որպես համաշխարհային տնտեսության կազմակերպման եղանակ, որի դեպքում տարբեր երկրների արտադրական ձեռնարկությունները մասնագիտանում են որոշակի ապրանքների արտադրության և ծառայությունների գծով: Այնուհետև դրանց արդյունքները փոխանակվում են:

Երկրների համար ԱՄԲ-ին մասնակցելու հիմնական նպատակը տնտեսական օգուտ ստանալն է: Օգուտը գոյանում է համաշխարհային շուկա մուտք գործած այնպիսի ապրանքների, ծառայությունների, տեխնոլոգիաների իրացումից, որոնց արտադրության ազգային ծախսերը ցածր են համաշխարհայինից: Փոխարենը ներմուծվում են այնպիսի ապրանքներ, որոնց ազգային ծախսերը համաշխարհայինից բարձր են: Հիմնավորելով համաշխարհային առևտրի փոխշահավետությունը՝ Ա. Սմիթը գրում է. «Եթե որևէ երկիր կարող է մեզ մատակարարել որևէ ապրանք ավելի ցածր գնով, քան մենք ի վիճակի ենք այն արտադրելու, ավելի լավ է այն գնենք նրանից»[20]: Նա դիտարկել է աշխատանքի բաժանման բոլոր տեսակները մանուֆակտուրայի, ճյուղերի ներսում, քաղաքի և գյուղի միջև, արդյունաբերության, գյուղատնտեսության, առևտրի, մտավոր և ֆիզիկական աշխատանքների, առանձին տարածաշրջանների, տարածքների և ազգային տնտեսությունների միջև: Դ. Ռիկարդոն ձևավորել է դրույթ այն մասին, որ արտաքին առևտրից օգուտ կարող է ստանալ յուրաքանչյուր երկիր:

[20] Смит А., Исследования о природе и причинах богатства народов, М., 1962, стр. 333.

ԱՄԲ տարբեր ձևերը համապատասխանում են արտադրողական ուժերի զարգացման մակարդակին, արտադրական հարաբերությունների բնույթին: ԱՄԲ-ը համաշխարհային տնտեսության հիմքն է, որը հնարավորություն է տալիս ստեղծելու ընդհանուր տնտեսական գործընթացներ: Այն միաժամանակ աշխատանքի միացման եղանակ է: Ազգային տնտեսությունները, տարբեր ապրանքների արտադրության մեջ մասնագիտանալով, փոխանակում են դրանց արդյունքները:

Սոցիալիստական համակարգի անդամ երկրների միջև տեղի է ունեցել արտադրական գործառույթների որոշակի բաշխում, որը հանգեցրել է ԱՄԲ էական փոփոխությունների: 1960-ականներին գաղութային համակարգի փլուզման հետևանքով ԱՄԲ-ը մտել է նոր փուլ: Ձևավորվել է ԱՄԲ նոր կառուցվածք՝ բաղկացած երեք հիմնական օղակներից, որոնք են.

- արդյունաբերական զարգացած երկրները (բարձրորակ ապրանքներ արտադրողներ և արտահանողներ),
- սոցիալիստական երկրները (արդյունահանող և վերամշակող արտադրողներ ու արտահանողներ),
- զարգացող երկրները (հումքային և պարենային ապրանքներ արտադրողներ ու արտահանողներ):

Աշխատանքի բաժանման և համաշխարհային շուկայի զարգացման հիմքում առևտրական հարաբերություններն են, իսկ 60-ական թթ.-ին դրանց ավելացել է նաև կապիտալի և ծառայությունների արտահանումը: ԱՄԲ-ի համակարգում ավելի զարգացել են Արևմտյան Եվրոպայի երկրները, ԱՄՆ-ը, Կանադան, Ճապոնիան: 70-ականներին նրանց միացել են նաև ասիական զարգացող երկրներ Հարավային Կորեան, Սինգապուրը, Թայվանը, Մալայզիան, Թաիլանդը, Լատինական Ամերիկայում՝ Արգենտինան, Բրազիլիան, Մեքսիկան, ինչպես նաև Մերձավոր Արևելքի նավթարդյունահանող մի քանի երկրներ: Միասնական համագործակցության պայմաններում ԱՄԲ-ը յուրաքանչյուր երկրի հնարավորություն է տալիս ընդլայնելու արտադրողական ուժերի շրջանակները՝ անկախ բնական գործոնից:

Վերջին տասնամյակում որակական փոփոխություններ են տեղի ունեցել ԱՄԲ իրացման ձևերի միջև: Գիտական գաղափարները, արտադրության տեխնոլոգիան և կազմակերպական ձևերը, աշխատուժի տարածքային տեղաշարժերը, տրանսպորտի և կապի միջոցները, տեղեկատվական ծառայությունները դարձել են միջպետական փոխանակության գործունեության հիմնական ոլորտներ:

Միջազգային համագործակցության նոր ձևերից է, այսպես կոչված, ***ռազմավարական համաձայնությունը,*** որի օգնությամբ ընկերությունները միավորում են իրենց ֆինանսական և տեխնիկական ռեսուրսները՝ առավելագույն արդյունք ստանալու համար, ինչին հնարավոր չէ հասնել առանձին-առանձին: Ռազմավարական համաձայնությունների իրականացման եղանակներից են կապիտալների փոխանակումները, արժեթղթերի փոխադարձ գնումները, որոնք ապահովում են կողմերի փոխադարձ շահերը:

Արդյունաբերական զարգացած երկրների միջև ԱՄԲ-ը տեղի է ունենում ճյուղային մասնագիտացման ուղիով: Ներկա փուլում տնտեսության կարևոր առանձնահատկություններից են կապիտալի արագ տեղաշարժը, նրա արտահոսքն ազգային սահմաններից դուրս: Արտասահմանյան երկարաժամկետ ինվեստիցիաները հասնում են անկանխատեսելի մեծության:

Տնտեսական կյանքի միջազգայնացումը պայմանավորված է ԱՄԲ-ով, որը միաժամանակ նրա զարգացման ու խորացման չափանիշն է և ուղեկցվում է արտադրողական ուժերի ու արտադրական հարաբերությունների մակարդակի բարձրացմամբ: Արդյունքում՝ տարբեր երկրներում իրականացվող արտադրական գործընթացները միավորվում և ձեռք են բերում միջազգային բնույթ: Տնտեսական կյանքի միջազգայնացմամբ են պայմանավորված նաև ԳՏԱ-ը և զարգացած արդյունաբերության ներկա վիճակը: Արտադրության միջազգայնացման և ԱՄԲ-ի վրա հիմնված ապրանքադրամական հարաբերություններն ստեղծում են ***համաշխարհային շուկան***:

Ոչ մի երկիր չի կարող հաջողությամբ զարգացնել իր տնտեսությունն առանց այլ երկրների հետ տնտեսական կապերի: Որքան էլ երկիրը տնտեսապես զարգացած լինի, չի կարող հավասար հաջողությամբ և արդյունավետությամբ թողարկել արտադրանքի բոլոր տեսակները: Զարգացած երկրները նույնպես պարենամթերքի, սպառման ապրանքների, հումքի, էներգետիկ ռեսուրսների կարիք ունեն, քանի որ սեփական բնական հարստությունները չեն բավարարում նրանց արագ աճող պահանջներին: Միջազգային տնտեսական համագործակցությանը մասնակցելը յուրաքանչյուր երկրի տնտեսական զարգացման օբյեկտիվ պահանջն է: Պետությունների միջև ԱՄԲ-ն ստեղծում է արտադրության մասշտաբների հետագա աճ, նպաստում արտադրանքի տեսականու ավելացմանը: Արդյունաբերական, գյուղատնտեսական, էներգետիկ և այլ օբյեկտների կառուցման համար երկրները միմյանց տեխնիկական աջակցություն են ցույց տալիս: Հսկայական սարքավորումների մատակարարման, դրանց տեղադրման համար մատակարար երկրից գործուղվում են մասնագետներ, կազմակերպվում է փորձի փոխանակում:

Համաշխարհային տնտեսության համակարգում ԱՄԲ ազդեցությամբ տեղի է ունենում երկրների դերի փոփոխություն, հաղթահարվում

են դրանց միջև ազգային սահմանափակումները, լուծվում տեխնոլոգիաների համատեղ օգտագործման, գիտական նվաճումների փոխանակման, գների կարգավորման, արտահանվող և ներմուծվող ապրանքների հարաբերության պահպանման, աշխատուժի միգրացիայի հիմնահարցերը: Մեղմվում է որևէ երկրի մենաշնորհային դիրքը մյուսների նկատմամբ: Ներկայում միջպետական համատեղ օգտագործման օբյեկտ են գիտական հայտնագործությունները, տրանսպորտի, կապի, տեղեկատվության ծառայությունները: Ստեղծվում են փոխադարձ կապեր շինարարության (գազաշինություն, էլեկտրահաղորդման գծերի անցկացում), տրանսպորտի ոլորտներում: Կոորդինացվում են էլեկտրոնային, հաշվողական տեխնիկայի միասնական համակարգերը:

Համաշխարհային տնտեսության մեջ ԱՄԲ-ն իրականացվում է նաև տարածքային սկզբունքով՝ ելնելով աշխարհագրական պայմաններից: Նյութական, ֆինանսական, աշխատանքային ռեսուրսների օպտիմալ օգտագործումը, երկրների նյութական շահը շարժիչ ուժ են դառնում հասարակության անընդհատ զարգացման համար:

2.2 Աշխատանքի միջազգային բաժանման սկզբունքները, գործոնները, ցուցանիշները և փուլերը

Աշխատանքի միջազգային բաժանումը հատուկ է տնտեսական բոլոր համակարգերին: Կախված արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների զարգացման աստիճանից՝ աշխատանքի բաժանումն իր հերթին ներգործում է արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների զարգացման, աշխատանքի արտադրողականության բարձրացման վրա:

Արդյունաբերական համակարգում աշխատանքի բաժանման գործընթացի, խոշոր մեքենայական արտադրության զարգացումը պայմանավորում է աշխատանքի բաժանման հետագա խորացումը ճյուղերի ներսում՝ կազմավորելով ԱՄԲ ամբողջական համակարգ: Նախկին գաղութային երկրները դարձել են զարգացած երկրների գործընկերներ, իսկ վերջիններս հաստատում են իրենց առավելությունները՝ նպաստելով առաջինների արտադրության կատարելագործմանը:

Համաշխարհային շուկայի առաջացումն ընդարձակել է երկրների տնտեսական գործունեության հնարավորությունները և կապիտալի առաջարկի ոլորտը: Անհրաժեշտ էր համագործակցել տնտեսապես թույլ երկրների հետ, որոնք ընդգրկված էին ԱՄԲ-ի մեջ, և յուրաքանչյուրը մասնագիտանում էր որոշակի ապրանքների արտահանման գործում:

Սոցիալիստական համակարգի փլուզումից հետո ստեղծված իրավիճակն առաջ է բերել շատ հիմնախնդիրներ՝ տնտեսական կապերի միջազգայնացում, Արևմուտքի և Արևելքի միջև ուժերի հարաբերակ-

ցության փոփոխություն: Սոցիալիստական երկրները, ընդգրկվելով համաշխարհային տնտեսության և ԱՄԲ-ի մեջ, ստեղծել են ժողովրդավարական պետություններ: Համաշխարհային տնտեսության մեջ ԱՄԲ-ը ձեռք է բերել կառուցվածքային նոր ձև: Շատ երկրներ ձևավորել են միացյալ ժողովրդավարական համալիր՝ պահպանելով երկրների տնտեսական զարգացման մակարդակների տարբերությունները:

ԱՄԲ-ը հիմնվում է որոշակի *սկզբունքների* վրա. համագործակցելիս հաշվի են առնվում երկրների տնտեսական հնարավորությունները, բոլոր ռեսուրսների արդյունավետ օգտագործման համար կոորդինացվում և կոոպերացվում է արտադրությունը:

ԱՄԲ-ին մասնակցող երկրների որոշիչ *գործոններն* են.

1. Ազգային գործոններ

- բնակլիմայական պայմաններ,
- բնական ռեսուրսներ,
- տարածքի չափեր,
- բնակչության թիվ, աշխատանքային ռեսուրսներ, որակավորման մակարդակ,
- երկրի տնտեսական, աշխարհագրական դիրք, ագրոտնտեսական վիճակ,
- տնտեսության կառուցվածք՝ գյուղատնտեսություն, հանքարդյունաբերություն, մեքենաշինություն, արդյունաբերություն, գիտատեխնիկական զարգացում,
- արտադրության և սպառման պատմական սովորույթներ.

Եթե երկիրն ապահովված չէ բնական ռեսուրսներով կամ ունի նավթ, գազ, ածուխ և այլն, ապա ԱՄԲ-ն անհրաժեշտ է դրանք ձեռք բերելու կամ ունեցածն արտահանելու համար: Դրանով երկիրը ստեղծում է արդյունաբերության, էներգետիկական, մեքենաշինության բազային ճյուղեր:

2. Սոցիալ-տնտեսական գործոններ

- երկրի տեղը և դերը համաշխարհային տնտեսությունում,
- արտադրական և արտաքին տնտեսական կապերի առանձնահատկությունները,
- տնտեսական և գիտատեխնիկական զարգացման մակարդակը,
- տնտեսավարման ձևը (շուկայական կամ պլանային),
- արտաքին կապերի հնարավորությունները:

3. Միջազգային գործոններ

- համաշխարհային տնտեսության ԳՏԱ մակարդակ,
- համաշխարհային շուկայի պահանջարկ,
- միջազգային հաշվարկների համակարգ,
- արտադրանքի որակի վրա ազդող հիմնախնդիրներ:

ԱՄԲ զարգացման համար հիմք են ծառայում ***երկրների տնտեսական զարգացման մակարդակը, տեղեկատվության և հաղորդակցության միջոցների կիրառումը, պահանջարկի աճը, տարբեր գլոբալ հիմնախնդիրների առկայությունը:*** Որքան երկրների տնտեսական ներուժը փոքր է, այնքան մեծ է ԱՄԲ-ի մեջ ընդգրկվելու անհրաժեշտությունը: Զարգացած երկրների՝ ԱՄԲ-ին մասնակցելու անհրաժեշտությունը պայմանավորված է շուկաներն ընդլայնելով, հումք ներմուծելով: Կարևոր գործոններ են երկրի ներքին շուկայի ծավալները և զարգացման մակարդակը:

ԱՄԲ արտադրական գործոններն են ***կապիտալը, տեխնոլոգիաները, դրանց մոբիլացումը, կազմակերպումը, օգտագործումը,*** որոնք իրենց դրսևորման մեջ բացարձակ չեն և ենթակա են փոփոխման: Համագործակցությանը մասնակցող յուրաքանչյուր երկիր տնտեսական շահ ստանում է արտահանվող ապրանքների և ծառայությունների միջազգային ու ներքին գների տարբերությունից, ավելի էժան ներմուծման դեպքում՝ երկրի ներքին ծախսերի կրճատումից: ԱՄԲ-ը հետագայում ավելի կզարգանա և ավելի արագ տեմպերով կաճեն տնտեսական հարաբերությունները: Զարգացող երկրներում ենթադրվում է ներքին շուկայի էքստենսիվ աճ:

ԱՄԲ գնահատման համար մասնագետներն առաջարկում են հետևյալ *ցուցանիշները*.

- արտահանման տեսակարար կշիռը թողարկվող արտադրանքի ընդհանուր ծավալում,
- առանձին ճյուղերի տեսակարար կշիռն արտահանման ամբողջ ծավալում,
- մասնագիտացած ճյուղերի արտադրանքի արտահանման աճի տեմպերն ամբողջ արդյունաբերության աճի համեմատ,
- համագործակցող երկրների արտադրության և արտաքին առևտրի համեմատական աճը,
- փոխադարձ ապրանքաշրջանառության բաժինը երկրների արտադրության մեջ,
- արտաքին առևտրի շրջանառությունը բնակչության մեկ շնչի հաշվով և այլն:

Ելնելով կարևորությունից՝ կարող են առաջնային համարվել թվարկված ցուցանիշներից մի քանիսը:

Կարելի է առանձնացնել ԱՄԲ մի քանի *փուլեր:*

Առաջին փուլն ընդգրկում է ԱՄԲ իրականացումից մինչև արդյունաբերական հեղափոխությունն ընկած ժամանակահատվածը, երբ երկրների տնտեսության զարգացման համար հիմք են ծառայել բնական ռեսուրսները:

Երկրորդ փուլն ընդգրկում է 18-րդ դարի երկրորդ կեսից մինչև 19-րդ դարը: Այդ հատվածում ԱՄԲ հիմքը մեքենայական արտադրութ-

յունն էր, որն ընդգծում էր տնտեսության զարգացման առավելությունը նախորդ փուլի նկատմամբ:

Երրորդ փուլում ԱՄԲ-ը հիմնվում է արդյունաբերական հեղափոխության նվաճումների վրա՝ համաշխարհային տնտեսությունը բաղկացուցիչների (դեզինտեգրացիա) վերածվելու և երկրի ռազմականացման (միլիտարիզացիա) պայմաններում:

Չորրորդ փուլն ԱՄԲ գիտատար արտադրությունն է՝ կապված երրորդ փուլի արդյունաբերական հեղափոխության նվաճումների հետ: Այս փուլում ԱՄԲ խորացումն ընդլայնում է ապրանքների, ծառայությունների փոխանակումները երկրների միջև:

Տնտեսագիտությունը մշակել է ԱՄԲ դասակարգման ***երեք հիմնական ձևեր՝ ընդհանուր, մասնավոր*** և ***եզակի***, որոնք համապատասխանում են արտադրողական ուժերի զարգացմանը:

1. ԱՄԲ ***ընդհանուր*** ձևն արտադրության ոլորտն է (արդյունաբերություն, գյուղատնտեսություն, հանքարդյունաբերություն, վերամշակում):
2. ԱՄԲ ***մասնավոր*** ձևի դեպքում ձեռք են բերվում տեխնոլոգիական, որակավորման գործոններ, իրականացվում է միջազգային մասնագիտացում որոշակի ճյուղերում և տեղի է ունենում արտադրության տեսակների առևտրի աճ:
3. ԱՄԲ անցումը ***եզակի*** ձևի ենթադրում է մասնագիտացում առանձին գործընթացների (դետալային, հանգուցային, ագրեգատային և այլն) ոլորտներում: Այս պայմաններում էապես աճում է շուկայական առևտրի ծավալը, քանի որ համաշխարհային առևտուրը զարգանում է աճող տեմպերով: Ձեռնարկության մակարդակով զարգանում է տեխնոլոգիաների գծով աշխատողների մասնագիտացումը:

2.3 Աշխատանքի միջազգային բաժանման առանձնահատկությունները ներկա փուլում

ԱՄԲ գործընթացը տեղի է ունենում ԳՏԱ ազդեցության տակ: Տարբեր երկրների ընկերությունների միջև կապերի խորացումը պահանջում է կիրառել կազմակերպչական բնույթի նոր տարրեր: Ազգային սահմաններից դուրս կազմակերպված նոր ընկերությունները միմյանց հետ կնքում են համաձայնագրեր: Այսպես, ճապոնական ընկերությունների արտասահմանյան ուղղակի կապիտալ ներդրումները միայն 80-ական թթ.-ին զգալի գերազանցել են 1951-1980 թթ. նույն ցուցանիշը (36.5 մլրդ դոլար): 1986-1990 թթ. ցուցանիշը 1981-1985 թթ. համեմատ նորից աճել է 5 անգամ: Եթե 1970 թ. վերջերին կապիտալի արտահանումը կազմում էր համաշխարհային ապրանքաշրջանառության 7 տոկոսը, ապա 1989 թ. այն հասավ 15 տոկոսի: Առաջատար արդյունաբերական 13 երկրների կապիտալի արտահանումը 1989 թ. հասել է 444 մլրդ դոլարի 1970 թ. վերջի 52 մլրդ դոլարի փոխարեն[21]:

Միջազգային ընկերությունները նպաստում են ԱՄԲ խորացմանը: Օրինակ՝ Կալիֆորնիայում «Ջեներալ մոթորս» ընկերությունը ճապոնական «Տոյոտա» ընկերության հետ համատեղ կազմակերպել է «Կորոլլա» մակնիշի ավտոմեքենայի արտադրությունը: Նույն «Ջեներալ մոթորս»-ը Հարավային Կորեայում, տեղական «Դայվու» ընկերության հետ համագործակցելով, արտադրում է «Պոնտիակ» ավտոմեքենան: «Ֆորդ» ընկերությունը համագործակցում է ճապոնական «Մազդա» և գերմանական «Ֆոլկսֆագեն» ավտոմոբիլային ընկերությունների հետ՝ Հարավային Ամերիկայում ավտոմեքենա արտադրելու համար: Նման գործարքներ կնքվում են նաև այլ ոլորտներում: «Ջեներալ էլեկտրիկ» ընկերությունը ֆրանսիական CHEKMA ընկերությանը մատակարարել է 6 հազար ավիացիոն շարժիչ, ճապոնական «Ֆանուկ»-ը համաշխարհային շուկային՝ վերահսկող և կառավարող համակարգիչներ, որոնք արտադրվում են ԱՄՆ-ի հետ համատեղ ստեղծված գործարանում:

ԱՄԲ-ն արտահայտում է անդրազգային կորպորացիաների շահերը, ուժեղացնում ազգային կապիտալի կախվածությունը միջազգային մոնոպոլիաներից: Նրա խորացումն ամրապնդում է մոնոպոլիաների դերը գիտահետազոտական և փորձարարա-կոնստրուկտորական աշխատանքների բնագավառներում, ուժեղացնում փոքր, բայց տնտեսապես արագ զարգացող երկրների արտադրական ներուժի կախվածությունն առաջատար երկրներից: Այս ամենը պայմանավորված է նրանով, որ զարգացող երկրները դառնում են էժան հումքի, աշխատուժի մատակարարներ: ՄԱԿ տվյալներով՝ զարգացող մոտ 120 երկրում 1980 թ. ապրում էր երկրագնդի բնակչության 70 տոկոսը, սակայն նրանց բաժինը երկրների ազգային եկամտի մեջ կազմում էր 17, իսկ համաշխարհային արտադրության մեջ՝ 17-20 տոկոս: Հետևաբար, վերջին տասնամյակում արտադրության մասնագիտացման և կոոպերացման նպատակով ԱՄՆ էլեկտրոնային արդյունաբերության միավորումներն այլ երկրների ընկերությունների հետ կնքել են համատեղ ձեռնարկություններ ստեղծելու 200-ից ավելի վենչուրային[22] համաձայնագիր:

Սկսած 70-ական թթ.-ից՝ անդրազգային ընկերությունների ազդեցության տակ ԱՄԲ-ը փոփոխություններ է կրել: Համաշխարհային շուկայի մարդատար և բեռնատար ավտոմեքենաների հիմնական մատակարարներ են դարձել արդյունաբերական զարգացած երկրների անդրազգային ընկերությունները (ԱՄՆ-ում՝ «Ջեներալ մոթորս»-ը,

[21] Мировая экономика и международные отношения. 1993, N 10, стр. 114.

[22] Վենչուրային կապիտալն օգտագործվում է բարձր ռիսկայնություն ունեցող կապիտալ ներդրումների նպատակով:

«Ֆորդ»-ը, «Կրայսլեր»-ը, Գերմանիայում՝ «Ֆոլկսֆագեն»-ը, «Օպել»-ը, «Աուդի»-ն, Ֆրանսիայում՝ «Ռենո»-ն, Անգլիայում՝ «Բրիտիշ մոտորե»-ն, Ճապոնիայում՝ «Միթսուբիշի»-ն, «Նիսան»-ը, «Տոյոտա»-ն, Իտալիայում՝ «Ֆիատ»-ը, Հարավային Կորեայում՝ «Դայվուն»-ն):

Էլեկտրոնային ապրանքների հիմնական արտադրողներ են ԱՄՆ-ի, Ճապոնիայի, Գերմանիայի, Ֆրանսիայի, Հոլանդիայի, Իտալիայի ընկերությունները, իսկ կենցաղային սարքավորումների արտադրությամբ աչքի են ընկնում Գերմանիան, Ֆրանսիան, Անգլիան, Հոլանդիան:

Վերջին ժամանակաշրջանում փոխվել է ԱՄԲ կառուցվածքը: Միջազգային առևտրում կրճատվել է հումքի, սննդի բաժինը և աճել՝ վերամշակող արդյունաբերության տեսակարար կշիռը: 2000 թ. մեքենաների և սարքավորումների արտահանման տեսակարար կշիռը Ճապոնիայում կազմել է 61.6, ԱՄՆ-ում՝ 47.6, Գերմանիայում՝ 46.6, Ֆրանսիայում՝ 33.6, Մեծ Բրիտանիայում՝ 32.5 տոկոս: Նույն ժամանակահատվածում մեքենաները և սարքավորումները կազմել են նաև ներմուծման հիմնական մասը (ԱՄՆ-ում՝ 37.8, Մեծ Բրիտանիայում՝ 31.7, Ֆրանսիայում՝ 24.8, Գերմանիայում՝ 29.6 և Ճապոնիայում՝ 8.7 տոկոս): Աշխարհագրական տեղաբաշխման առումով ԱՄՆ-ն իր կապիտալը հիմնականում ներդնում է Անգլիայում, Գերմանիայում, Ֆրանսիայում, Իտալիայում: Բավական գումար են կազմում ներդրումները նաև Իսպանիայում, սկանդինավյան երկրներում, Շվեյցարիայում, Ավստրիայում:

Զարգացած երկրների մեծ մասը, իր ԳՏ և արդյունաբերական հիմնական ռեսուրսներն ուղղելով գիտատար ճյուղերի զարգացմանը, կրճատում է մետալուրգիայի արտադրությունը: Համաձայն ամերիկյան հետազոտական ընկերությունների տվյալների՝ 2001 թ. ԱՄՆ-ում պողպատի ծուլումը կազմել է 78 մլն տոննա 1987 թ. 112 մլն-ի դիմաց: Սև մետալուրգիայի արտադրությունը Ճապոնիայում կրճատվել է և կազմել 25 մլն տոննա 1985 թ. 36 մլն-ի դիմաց:

Այսպիսով, վերջին 20-30 տարիներին անդրազգային կորպորացիաներն իրենց վրա են վերցրել ԱՄԲ-ի և արտադրության միջազգային մասնագիտացման գործառույթները: Սակայն նրանք չեն սահմանափակվում միայն ապրանքների արտադրությամբ և ծառայություններով, ընդգրկում են նաև կապիտալի ու արժեթղթերի շուկան:

2.4 Արտադրության միջազգային մասնագիտացում և կոոպերացում

ԱՄԲ բազայի վրա գործում են արտադրության միջազգային մասնագիտացումը և կոոպերացումը, որոնց արդյունքում առանձին երկրներ մասնագիտանում են որևէ կոնկրետ ապրանքի և ծառայությունների թողարկման մեջ՝ պայմանավորված ազգային առանձնահատկություններով, տնտեսական ցուցանիշներով, բնական ռեսուրսների, արտադրական ներուժի առկայությամբ կամ բացակայությամբ: Արտադրության մասնագիտացումն առանձին երկրների թույլ է տալիս նյութական ռեսուրսներ և անհրաժեշտ ապրանքներ ձեռք բերել ներմուծման միջոցով:

Աշխատանքի միջազգային ***մասնագիտացումը*** և ***կոոպերացումն*** աշխատանքի բաժանման տարբեր ուղղություններ են: ***Արտադրության միջազգային մասնագիտացումը (ԱՄՄ) երկրների միջև աշխատանքի բաժանումն է, որը տեղի է ունենում ազգային արտադրությունների տարբերակման հիման վրա՝ միատեսակ արտադրանք թողարկելու համար:*** Արտադրության մասնագիտացումը նպաստում է միջազգային հարաբերությունների կատարելագործմանը: Այն համատեղ արտադրություն կազմակերպելու եղանակ է, որի դեպքում տարբեր երկրներ մասնագիտանում են որոշակի ապրանքների և ծառայությունների արտադրության ու փոխանակության գծով:

Արտադրության մասնագիտացումն աշխատանքի հասարակական բաժանման ձև է, որին բնորոշ են արտադրական ճյուղերի տրոհումը, նոր ճյուղերի ստեղծումը, ճյուղերի ներսում աշխատանքի բաժանումը: Միջազգային մասնագիտացած ճյուղերը (մեքենաշինություն, ռադիոտեխնիկա և այլն) կապված են միջազգային կորպորացիաների մասնագիտացած արտադրանքի հետ: ԱՄՄ-ն ԱՄԲ ձև է, որի ժամանակ տեղի է ունենում միատարր արտադրության կենտրոնացում մեկ կամ մի քանի երկրներում:

Միջազգային մասնագիտացումն առավել զարգացել է 20-րդ դարի երկրորդ կեսին: Դրան նպաստել են առանձին երկրների տնտեսական և քաղաքական բարեփոխումները, ԳՏՀ-ը, համաշխարհային շուկայի հետագա զարգացումը: Արտադրության միջազգային մասնագիտացման հետևանքով երկրները բաժանվում են երեք խմբի:

1. ***Համաշխարհային շուկայի համար արդյունաբերական արտադրանք թողարկող և վերամշակող երկրներ:*** Սրանք զարգացած արդյունաբերական երկրներն են՝ ԱՄՆ-ը, Գերմանիան, Անգլիան, Ֆրանսիան, Կանադան, Ճապոնիան, որոնք համաշխարհային շուկային մատակարարում են բարձրորակ մեքենաներ, հաստոցներ, քիմիական ապրանքներ, կենցաղային տեխնիկա: Միաժամանակ այս խմբի ներսում գոյություն ունի առանձին տեսակի ապրանքների մասնագիտացում: Օրինակ՝ ավիացիոն տեխնիկայի արտադրողներ և մատակարարներ են հիմնականում ԱՄՆ-ը, Անգլիան, Գերմանիան, Իտալիան: Բարձրորակ ավտոմեքենաների արտադրողներ և մատակարարներ են ԱՄՆ-ի, Անգլիայի, Գերմանիայի, Ճապոնիայի, Իտալիայի, Շվեդիայի ընկերությունները: Կենցաղային տեխնիկայի արտադրության պայքարում մասնագիտացման առաջնություն ունեն Գերմանիան, Ճապոնիան, Հոլանդիան:

2. ***Արդյունահանող և արդյունաբերական արտադրանք թողարկող, հումքային ռեսուրսներ արտահանող երկրներ:*** Սրանք հիմնականում զարգացած երկրներին վաճառում են նավթ, գազ (Մերձավոր Արևելքի, Աֆրիկայի, Լատինական Ամերիկայի երկրներ): Շվեդիան, Ավստրալիան, Կանադան ևս արդյունահանում և վաճառում են մեծ քանակով տարբեր հումքային ռեսուրսներ՝ ածուխ, սև և գունավոր մետաղներ:

3. ***Գյուղատնտեսական արտադրանք թողարկող և արտահանող երկրներ:*** Այս խմբին պատկանում են այն երկրները, որոնք համաշխարհային շուկա արտահանում են բացարձակապես գյուղատնտեսական արտադրանք (Ասիայի, Աֆրիկայի, Լատինական Ամերիկայի երկրներ): Համաշխարհային շուկայում գյուղատնտեսական մթերքներ արտահանողներ են նաև զարգացած երկրները՝ ԱՄՆ-ը, Կանադան, Արևմտյան Եվրոպայի երկրները, Ավստրալիան, Նոր Զելանդիան: Առանձին ապրանքներ արտահանողներ են Բրազիլիան (սուրճ), Արգենտինան (միս), Կուբան (շաքար), Հնդկաստանը, Շրի Լանկան (թեյ), Լատինական Ամերիկայի և Աֆրիկայի մի քանի երկրներ (ցիտրուսային պտուղներ), արաբական երկրները (բամբակ) և այլն: Կան երկրներ, որոնք միաժամանակ թողարկում են արդյունահանվող, վերամշակվող արդյունաբերական և գյուղատնտեսական արտադրանք:

Արտադրության ճյուղերի ներպետական մասնագիտացումը հիմք է միջազգային մասնագիտացման համար, որը նպաստում է ԳՏԱ նվաճումների իրականացմանը, ներպետական և միջպետական մասնագիտացումների հետագա զարգացմանը և ձեռք է բերում միջազգային ճանաչում: Այսպես, ճապոնական էլեկտրատեխնիկական արդյունաբերության ներպետական մասնագիտացումը հիմք է հանդիսացել այդ ճյուղի միջազգային մասնագիտացման համար:

Արտադրության միջազգային մասնագիտացումը լինում է ***ընդհանուր,*** երբ արդյունաբերական ճյուղերը մասնագիտանում են հումքային, ագրարային և ինդուստրիալ հատկանիշներով, ***ճյուղային,*** երբ արդյունաբերական ճյուղերի մասնագիտացումը կատարվում է արտադրության որոշակի ճյուղերում առանձին արտադրանքների արտադրության գծով: Գոյություն ունի նաև արտադրության ***միջճյուղային, ներճյուղային*** և ***տարածքային*** առանձին ձեռնարկությունների մասնագիտացում:

Միջճյուղային մասնագիտացումն իրականացվում է արդյունաբերության տարբեր ճյուղերի պատկանող ձեռնարկությունների միջև: Այն զարգացել է 20-րդ դարի 30-ական թվականներին: 50-60-ականներին մասնագիտացել են առաջնային ճյուղերը (մեքենաշինություն, ավտոմոբիլաշինություն և այլն): Ըստ այդմ՝ երկրները դասակարգվում են հետևյալ կերպ.

- վերամշակող արդյունաբերության մեջ մասնագիտացած երկրներ,
- գյուղատնտեսական արտադրության մեջ մասնագիտացած երկրներ,
- արդյունահանող երկրներ:

Օրինակ՝ Նորվեգիան մասնագիտացել է ալյումինի, Բելգիան՝ թուջի և պողպատի, Ֆինլանդիան՝ անտառանյութի և փայտամշակման արտադրության և արտահանման մեջ:

Ներճյուղային մասնագիտացումն արդյունաբերության միևնույն ճյուղի տարբեր ձեռնարկությունների մասնագիտացումն է, որը բնորոշվում է միևնույն տեսակի կամ խմբի ապրանքների արտադրությամբ (տեխնոլոգիական, դետալային):

Տարածքային մասնագիտացումը կարող է լինել առանձին երկրներում կամ խումբ երկրների միջև:

1950-1960-ական թվականներին առաջատար տեղ էր գրավում արտադրության ճյուղային մակարդակով միջազգային մասնագիտացումը (ավտոմեքենաշինություն, ինքնաթիռաշինություն, պլաստմասսաների, ռադիոսարքավորումների և այլնի արտադրություն): 70-80-ականներին առանձնանում էր սպառման բնույթով տարբերվող արտադրանքների ներճյուղային միջազգային մասնագիտացումը՝ անիվային և թրթուռավոր տրակտորներ, կաշվե, ռետինե կոշկեղեն և այլն:

Վերջին ժամանակներում զարգացել է համալիր սարքավորումների արտադրության մասնագիտացումը: Տարբեր երկրների ձեռնարկությունների մասնագիտացումն առանձին արտադրանքների թողարկման ուղղությամբ կապվում է ԳՏԱ-ի հետ: Հետևաբար, արտադրության տեխնոլոգիական սարքավորումների բարդացումը բերում է օգտագործվող դետալների և հանգույցների թվի ավելացում: Օրինակ՝ մարդատար ավտոմեքենաների մեջ հաշվվում են մինչև հազար, գլանման հաստոցների մեջ՝ 100 հազար, էլեկտրաքարշերի մեջ՝ մինչև 250 հազար դետալներ և հանգույցներ: Այսպես, շվեդական «Վոլվո» ավտոմեքենայի դետալների միայն մեկ երրորդն է արտադրվում Շվեդիայում: Կոմպլեկտավորման մնացած 60 տոկոսից ավելի դետալները ներմուծվում են:

Տեխնոլոգիական մասնագիտացումն արտադրության որևէ փուլի մասնագիտացած գործունեությունն է: Տեխնոլոգիական մասնագիտացում նշանակում է առանձին լրիվ տեխնոլոգիական գործընթացների (հավաքում, եռակցում, ներկում, ձուլման արտադրություն, որևէ համալիր հանգույցի պատրաստում և այլն) իրականացում:

ԱՄԲ-ը հիմնվում է նաև ***աշխատանքի միջազգային կոոպերացման (ԱՄԿ)*** վրա: Աշխատանքի միջազգային կոոպերացումը տարբեր երկրների ընկերությունների միջև միկրոտնտեսական ինտեգրացումն է,

որի ձևերը որոշվում են մրցակցային պայքարի պայմաններում: ԱՄԿ-ն ընդգրկում է գործունեության տարբեր ոլորտներ: Դրանք են.

- գիտատեխնիկական համագործակցությունը (նախագծերի, կոնստրուկտորական փաստաթղթերի մշակում, արտադրության, շինարարական, մոնտաժային աշխատանքների իրականացում),
- առևտրատնտեսական համագործակցությունը,
- տնտեսության կոոպերացումը:

ԱՄԿ հիմնական հատկանիշներն են.

- կողմերի նախնական համաձայնությունը, պայմանագրերի կնքումը համատեղ գործունեության վերաբերյալ,
- գործընկեր երկրների գործունեության կոորդինացումը, համաձայնեցված ծրագրերի շրջանակներում կողմերի միջև առաջադրանքների բաշխումը:

Արտադրության միջոցների կոոպերացումը երկու և ավելի երկրների արտադրական ներուժի միավորումն է մի որևէ արտադրանքի թողարկման կամ տեխնոլոգիաների կատարելագործման միասնական ծրագրերի իրականացման նպատակով: Արտադրատեխնիկական կոոպերացումը տնտեսական գործունեության իրականացման առավել արդյունավետ ձևերից է, որի պայմաններում համագործակցող կողմերը դառնում են համատեղ արտադրողներ: Արտադրության միջազգային կոոպերացման խթաններից մեկն էլ արտադրության բնապավառում նոր մտահղացումներից ստացված եկամուտն է: Միջազգային մասնագիտացման պայմաններում կրճատվում են արտադրական ծախսերը, բարձրանում է տնտեսական արդյունաբերությունը: Ազգային արտադրությունները դուրս են գալիս միջազգային ասպարեզ՝ միաժամանակ խթանելով ներպետական արտադրությունը և սպառումը, կատարելագործելով դրանց կառուցվածքը:

Կոոպերացիայի օբյեկտիվ հիմք են արտադրողական ուժերի զարգացման մակարդակը, արտադրության դիֆերենցումը: ԱՄԿ-ը կայուն արտադրական կապերի գործընթաց է տարբեր երկրների ինքնուրույն ձեռնարկությունների միջև: Այն ընկերություններին օգնում է կրճատել արտադրության և շրջանառության ծախսերը, ուժեղացնում է արտադրանքի մրցունակությունը: Առանձին դեպքերում ԱՄԿ-ը կրում է համալիր բնույթ՝ ընդգրկելով արտադրությունը, գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական մշակումները (НИОКР), ինչպես նաև արտադրանքի իրացումը: Որպես որոշակի համապարգ, ԱՄԿ-ն ընդգրկում է.

- շինարարության և մոնտաժային աշխատանքներ իրականացնող ձեռնարկությունների միջազգային արտադրատեխնիկական կոոպերացումը,
- կոոպերացված արտադրանքի իրացման առևտրային գործընթացը:

Կապալային կոոպերացման և համատեղ արտադրության ձևերի կոոպերացիայի կապերի կառավարման համար կիրառվում է ***համատեղ ծրագրերի իրականացման մեթոդը: Կապալային կոոպերացումը*** որոշակի աշխատանքների կատարումն է պատվիրատուի հանձնարարությամբ: ***Համատեղ արտադրությունն*** ինտեգրացված կոոպերացիա է, որի դեպքում մի քանի մասնակից համատեղ կապալով իրագործում են համաձայնեցված նպատակներ: Օրինակ՝ Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Իսպանիայի ավիացիոն ընկերությունները կոոպերացվել են մարդատար «Աէրոբուս» ինքնաթիռի արտադրության գծով:

Միջազգային կոոպերացիան նպաստում է առարկայական, հանգուցային, տեխնոլոգիական արտադրությունների մասնագիտացման խորացմանը: Արտադրության միջազգային մասնագիտացումը և կոոպերացումը հնարավոր են.

- արտադրական հզորությունների, աշխատանքային ռեսուրսների թվի հնարավոր աճի,
- կուտակման և սպառման միջոցների ավելացման, ներքին շուկայի ծավալների ընդլայնման, բնական հարստությունների առկայության,
- երկրի աշխարհագրական բարենպաստ դիրքի, միջազգային հաղորդակցության զարգացման պայմաններում:

Համաշխարհային տնտեսությունը գտնվում է ԱՄԲ հզոր ազդեցության տակ: Աշխարհի բոլոր երկրներն այս կամ այն չափով ընդգրկված են ԱՄԲ-ի մեջ, հետևաբար դրա ընդլայնումը և խորացումը պահանջում են արտադրողական ուժեր, որոնք իրականացնում են գիտատեխնիկական հեղափոխություն:

Այսպիսով, ԱՄԲ հիմքը տնտեսական գործունեության գործընթացում միջազգային մասնագիտացման և կոոպերացման միջև տարբեր երկրների օբյեկտիվ անհրաժեշտությունն է, երբ երկիրն արտադրում է ապրանքային արտադրանքի այն տեսակը, որի թողարկումը ձեռնտու է տվյալ երկրին հասարակական անհրաժեշտ ծախսերի տեսանկյունից: Ուրեմն, ***ԱՄԲ-ը երկրների միջև աշխատանքի հասարակական բաժանման զարգացման բարձր աստիճան է, որ բխում է արտադրությանը ձեռնտու մասնագիտացումից ճյուղային և տարածքային բազայի վրա:***

ԳԼՈՒԽ 3
ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ

3.1 Համաշխարհային առևտուրը ՄՏՀ համակարգում

Համաշխարհային առևտուրը պատմականորեն համարվում է ՄՏՀ առաջին ձևը, որն իրենից ներկայացնում է ապրանքների և ծառայությունների փոխանակում երկրների լիազոր ներկայացուցիչների միջև:

Համաշխարհային առևտուրը լայն իմաստով ապրանքների և ծառայությունների, հումքի և հանքարդյունաբերության, արտադրության միջոցների տարբեր տեսակների գործարք է համաշխարհային շուկայում:

Երկրների արտաքին առևտուրը արտադրված ապրանքների և ծառայությունների մի մասն է, որը երկիրն արտահանում է սահմաններից դուրս իրացման նպատակով, ինչպես նաև՝ ապրանքների, ծառայությունների և այլ տարրերի մասերը, որոնք երկիրը ներկրում է արտասահմանից:

Համաշխարհային առևտրի համակարգը կազմում են.

- երկրների և միջազգային ընկերությունների արտաքին առևտուրը,
- երկրների ինտեգրացիոն խմբավորումների միջև առևտուրը,
- տարածքային առևտուրը,
- համաշխարհային առևտրի իրավունքները սահմանող, առևտուրը երաշխավորող միջազգային կազմակերպությունները (ԱՀԿ, ՄԱՖ, ՅՈՒՆԿՏԱԴ և այլն):

Միջազգային առևտրի ներկա փուլը բարդ գործընթաց է: Եթե 1950-ական թթ. հումքային ապրանքների, վառելիքի բաժինը հավասար էր պատրաստի արտադրանքին, ապա 20-րդ դարի վերջին հումքային ապրանքների, վառելիքի, պարենամթերքի բաժինը նվազեց 30 տոկոսով, որից 25 տոկոսը վառելիքինն էր, 5-ը՝ հումքինը: Նույն ժամանակում պատրաստի արտադրանքների ծավալն աճել է մինչև 70 տոկոս: Երկու անգամ կրճատվել է հումքի, վառելիքի և պարենամթերքի, 1.5-2.0 անգամ՝ ավելացել պատրաստի արտադրանքի և կիսաֆաբրիկատների և մոտ 3 անգամ՝ այլ ապրանքների բաժինը:

Միջազգային առևտրում հումքի բաժնի պակասը բացատրվում է 3 պատճառներով.

- սինթետիկ նյութերի արտադրության ընդլայնումով քիմիական արդյունաբերության զարգացման բազայի վրա (սինթետիկ կաուչուկ, պլաստմասսա և այլ ապրանքներ),
- հայրենական հումքի մեծ քանակի օգտագործումով,
- անցումով ռեսուրսախնայողությանը:

Նույն ժամանակում կտրուկ աճել է հանքային վառելիքի առևտուրը (նավթ, բնական գազ)՝ որպես քիմիական արդյունաբերության զարգացման արդյունք և վառելիքաէներգետիկայի հաշվեկշռի կառուցվածքի փոփոխություն: 1970 թ. ծառայությունների համաշխարհային արտահանման ծավալը կազմել է 80, 2006 թ.՝ 2.710 մլրդ դոլար: ԱՄՆ-ին, Ճապոնիային, Գերմանիային, որտեղ ապրում է աշխարհի բնակչության 9 տոկոսը, բաժին են ընկնում համաշխարհային եկամտի կեսը և համաշխարհային գնողունակության 1/3-ը:

Ըստ ԱՀԿ տվյալների՝ 1990-2000 թթ. ապրանքների համաշխարհային արտադրման միջին տարեկան աճի տեմպերը կազմել են 7, արդյունաբերության վերամշակվող արտադրանքի արտահանման տեմպերը՝ 7.5 տոկոս: 2000-2008 թթ. նույն ցուցանիշները եղել են տարեկան 5 և 6 տոկոս[23]:

1990 թ. համեմատ 2000 թ. համաշխարհային արտահանման տեսակարար կշիռն ԱՄՆ-ում կազմել է 12.1-13.8 տոկոս: Աճել է նաև Կանադայի և Մեքսիկայի բաժինը, ինչի արդյունքում ՀԱՓԹԱ անդամ երկրների բաժինը 16.3-ից հասել է 20.5 տոկոսի: Զգալի կրճատվել է Ճապոնիայի արտահանումը, և աճել Չինաստանի, Ինդոնեզիայի, Մալայզիայի, Թայլանդի արդյունաբերության արտահանումը:

Համաշխարհային առևտրի զարգացման արդյունքում Ասիայի 9 երկրների (Հոնկոնգ, Ինդոնեզիա, Չինաստան, Կորեական Հանրապետություն, Մալայզիա, Սինգապուր, Թայլանդ, Թայվան, Ճապոնիա) արդյունաբերական ապրանքների արտահանումն ավելացել է 22.3-25.9 տոկոսով: Համաշխարհային արդյունաբերական արտադրանքների բաժինն Արևմտյան Եվրոպայի երկրներում 1995 թ. կազմել է 25, 2007 թ.՝ 27 տոկոս:

2007 թ. տվյալներով՝ ապրանքներ արտահանող երկրների հնգյակը կազմում էին Գերմանիա՝ 9.5, Չինաստանը՝ 8.7, ԱՄՆ-ը՝ 8.3, Ճապոնիան՝ 5.1 և Ֆրանսիան՝ 4.0 տոկոս:

Կոմերցիոն ծառայությունների հիմնական արտահանողներն էին ԱՄՆ-ը՝ 16.7, Մեծ Բրիտանիան՝ 11.8, Գերմանիան՝ 7.3, Ճապոնիան՝ 5.2, Ֆրանսիան՝ 4.3 տոկոս: Ծառայություն ներմուծող հիմնական երկրներն էին ԱՄՆ-ը՝ 13.9, Մեծ Բրիտանիան՝ 8.3, Գերմանիան՝ 6.3, Ֆրանսիան՝ 4.2 և Ճապոնիան՝ 3.9 տոկոս: Ռուսաստանն արտահանման գծով 25-րդ տեղում է (1.2 տոկոս), ներմուծման գծով՝ 16-րդ (1.9 տոկոս)[24]:

Միջազգային առևտուրը կազմում է ՄՏՀ հիմնական մասը: Գործնականում ՄՏՀ բոլոր ձևերը՝ ապրանքների և ծառայությունների ներ-

---

[23] Соколов В., журнал, Мировая экономика и международные экономические отношения, 2011, N 2, стр. 36.

[24] Мировая экономика и международные экономические отношения, под ред. Булатова А. С. и Ливенцева Н. Н., М., 2012, стр. 427.

մուծումը, արտահանումը, ԳՏԱ-ը, տնտեսական կյանքի միջազգայնացումը և ԱՄԲ-ը, միջնորդավորվում են միջազգային առևտրի միջոցով, որն ընդգրկում է նաև պատրաստի արտադրանքի, մեքենասարքավորումների, տեխնոլոգիաների, հումքի և այլնի առևտուրը: Միջազգային առևտրի շրջանառությունն ընդգրկում է արտահանման ու ներմուծման գումարը և բնութագրվում է երկու հիմնական ցուցանիշներով՝ ***ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալով, ապրանքային կառուցվածքով***:

Արտաքին առևտուրն ինվեստիցիոն գործունեություն է՝ ներառյալ արտադրական կոոպերացիան, միջազգային ապրանքափոխադրումները, տեղեկատվությունը, ծառայությունները, ինտելեկտուալ գործունեության արդյունքները: Արտաքին առևտուրը կազմում են ապրանքների ***ներմուծումը*** և ***արտահանումը***:

Տեղեկատվության արտաքին առևտուրն առևտրի համաշխարհային գործունեության ձև է: ***Ծառայությունների արտաքին առևտուրը*** ծառայությունների վաճառումն է՝ ներառյալ արտադրությունը, բաշխումը, մարքեթինգը: ***Մտավոր սեփականության արտաքին առևտուրը*** մտավոր սեփականության իրավունքի տրամադրումն է օգտագործող օբյեկտներին:

Միջազգային առևտրի ***ներմուծումն*** արտասահմանյան երկրներից ապրանքների, տեխնոլոգիաների, կապիտալի, ինչպես նաև փոխհատուցման սկզբունքով արտադրական կամ սպառողական նշանակության ծառայությունների ստացումն է: Ներմուծված համարվում են նաև ***տոնավաճառների, ցուցահանդեսների*** և ***աճուրդների*** համար երկիր բերվող ապրանքները: Ներմուծվող ապրանքների ծավալը, կառուցվածքը և տեսականին կապված են երկրի արտադրական ռեսուրսների ապահովվածության, արտադրության և ԳՏ զարգացման մակարդակի հետ: Ներմուծման ապրանքների արժեքները հաշվարկվում են ՍԻՖ գնով (ապրանքների արժեքը մինչև երկրի սահման հասնելը)՝ ներառյալ ապահովագրության և տրանսֆերտային փոխադրումների ծախսերը:

Արտահանումն արտաքին շուկաների միջոցով իրացվող ապրանքների, ծառայությունների, կապիտալի (վարկերի տրամադրում) առաքումն է արտասահմանյան երկրներ: Արտահանում կարելի է համարել նաև ապրանքների և ծառայությունների վաճառքը սեփական երկրի ներսում արտասահմանցի անձանց, ընկերություններին, կազմակերպություններին, հատուկ ձեռնարկություններին՝ առանց արտասահման ուղարկելու: Արտահանված ապրանքների արժեքները հաշվարկվում են ՖՕԲ գնով (ապրանքների արժեքը մինչև երկրի սահմանից դուրս գալը):

Վերարտահանումն այլ երկրներից ներմուծված ապրանքների վաճառքն է մեկ այլ երկրի՝ առանց վերամշակման կամ աննշան փոփոխություններով: Չի փոխվում նաև ապրանքի անվանումը: Արտա-

հանման ծավալում ընդգրկվում են ինչպես հայրենական, այնպես էլ արտասահմանյան արտադրության վերարտահանված ապրանքները:

Վերներմուծումը նախկինում արտահանված և արտասահմանում վերամշակման չենթարկված ապրանքների վերադարձումն է արտադրողին, եթե այդ ապրանքը ցածրորակ է կամ պահանջարկ չունի և եթե աճուրդներում, տոնավաճառներում չի վաճառվում:

Արտաքին առևտրի շրջանառությունը՝ արտահանման և ներմուծման ծավալների հանրագումարն է, ***արտաքին առևտրի հաշվեկշիռը***՝ արտահանման ՖՕԲ և ներմուծման ՍԻՖ ծավալների գնային տարբերությունը:

Արտահանման և ներմուծման ծավալների տարբերությունը երևում է երկրի առևտրի հաշվեկշռում: Հայաստանի արտաքին առևտրի հաշվարկման համար հիմք են բեռնամաքսային հայտարարագրերը, Հայաստանի Մաքսային վարչությունից ստացված՝ ֆիզիկական անձանց կողմից կատարված առևտրի, Հայաստանի էներգետիկայի նախարարությունից ստացված՝ գազի ներմուծման, էլեկտրաէներգիայի արտահանման և ներմուծման տվյալները:

Ապրանքների արտահանումը և ներմուծումը կազմում են համաշխարհային առևտրի վերարտադրության փուլերը և ապահովում են ազգային արտադրանքների բաշխման, իրացման նորմալ գործընթացը: Վերջին 45 տարում համաշխարհային տնտեսության վերարտադրության բաց լինելն ապրանքների և ծառայությունների արտահանումն ավելացրել է 3.1 անգամ՝ 9.5-ից հասնելով 29.8 տոկոսի: Արտադրության կեսից ավելին կատարվում է միջազգային փոխանակումով: Դրան նպաստում են աշխարհում գործող տասնյակ հազարավոր անդրազգային ընկերությունները և մասնաճյուղերը, որոնց թիվը 2008 թ. հասնում էր 790 հազարի:

Վերջին 25 տարում համախառն արտադրանքը 676 մլրդ դոլարից հասել է 6029 մլրդ դոլարի: 2008-2009 թթ. համաշխարհային ճգնաժամը կտրուկ նվազեցրել է արդյունաբերական արտադրանքը: Անկում է գրանցվել էլեկտրոնային, ավտոմեքենաների և այլ արտադրանքների ոլորտներում: Համաշխարհային առևտրի ֆիզիկական ծավալը պակասել է 12 տոկոսով: Շուրջ 40 առաջատար արտահանող և ներմուծող երկրներից ոչ մեկը դրական դինամիկա ցույց չի տվել, իսկ որոշ երկրների արտահանման և ներմուծման անկումը կազմել է 30-40 տոկոս: 2009 թ. Չինաստանի արտահանումը կրճատվել է 19.1, ԱՄՆ-ինը՝ 20, ԵՄ երկրներինը՝ 27, Ճապոնիայինը՝ 41.3, Թայվանինը՝ 38.4 տոկոսով: 2009 թ. աշխարհում ավտոմեքենաների արտադրությունը պակասել է 13.5, կիսահաղորդիչների սարքավորումների համաշխարհային վաճառքը՝ 9, իսկ ԱՀԿ տվյալներով՝ համաշխարհային արտահանումը՝ 23 տոկոսով[25]: 2008-2010 թթ. ճգնաժամը հանգեցրել է համաշխարհային

[25] Мировая экономика и международные экономические отношения, журнал, 2010, N 1.

աշխարհի խոշոր մասնակիցների ***վճարային հաշվեկշռի*** անհամաչափ զարգացման: Համաշխարհային առևտրի ծավալի կրճատումը մեղմացրել է արտահանման և ներմուծման հարաբերությունները:

Արտաքին առևտուրը չափվում է ***արժեքային*** և ***ֆիզիկական*** ծավալներով:

Արժեքային ծավալը հաշվարկվում է ժամանակի որոշակի հատվածի համար, համապատասխան տարիների ընթացիկ գներով՝ ընթացիկ արժութային կուրսերով:

Ֆիզիկական ծավալը հաշվարկվում է բնեղեն չափերով: Դրա հիմքում կարելի է կատարել անհրաժեշտ համադրում, որոշել միջազգային առևտրի դինամիկան:

Համաշխարհային արտահանման և ներմուծման ծավալները պետք է հավասար լինեն: Սակայն ներմուծման փաստացի արժեքը մեծ է արտահանման արժեքից (ՖՕԲ և ՍԻՖ գների տարբերություն): Օրինակ՝ ըստ ԱՀԿ տվյալների՝ ***2008 թ.*** ապրանքային համաշխարհային ներմուծումը կազմել է ***9765,*** արտահանումը՝ ***9482*** մլրդ դոլար: Զարգացած երկրների միջև ապրանքաշրջանառությունը 1980-2005 թթ. ավելացել է 3.19 անգամ, զարգացող երկրների միջև արտահանումը՝ 30.9, ներմուծումը՝ 27.4 տոկոսով, անցումային երկրներում՝ 1.8 և 1.90 անգամ:

Երկրները տարբեր չափերով են մասնակցում միջազգային առևտրին: Դա պայմանավորված է տվյալ երկրի արտադրական զարգացման մակարդակով, սոցիալ-տնտեսական պայմաններով, բնական ռեսուրսներով, աշխարհագրական դիրքով: Ջ. Սաքսը նշում է. «Աշխարհի զարգացած երկրի տնտեսական հաջողությունը հիմնվում է արտաքին առևտրի վրա: Դեռևս ոչ մի երկրի չի հաջողվել ստեղծել առողջ տնտեսություն համաշխարհային տնտեսական համակարգից մեկուսացված»[26]:

Արտահանման և ներմուծման գործունեությունն իրականացնում են արտադրող ձեռնարկությունները, ընկերությունները, առևտրի կազմակերպությունները: Միջազգային ապրանքաշրջանառությունն ավելի արագ է աճում, քան արտադրությունը: Միջազգային առևտուրը նպաստում է զարգացող երկրների արտադրության մասնագիտացմանը, սեփական ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը և արտադրության ծավալի ավելացմանը: Երկրները արտադրության մասնագիտացման միջոցով կարող են թափանցել այլ երկրների շուկաներ և իրենց ապրանքը փոխանակել այնպիսի ապրանքներով, որոնց արտադրությունն իրենց երկրում արդյունավետ չէ: Սեփական ապրանքը վաճառելիս՝ պետությունները հաշվի են առնում բնական, աշխարհագրական, արտադրական ռեսուրսներով ապահովվածությունը: Տարբեր ապրանքների արտադրությունը պա-

[26] Սաքս Ջ., Рыночная экономика и Россия, М., 1994, стр. 244.

հանջում է բարդ տեխնոլոգիաներ, ուստի նման դժվարությունները հաղթահարվում են միջազգային առևտրի միջոցով: Այդ պատճառով միջազգային առևտուրը հանդես է գալիս որպես ներքին ռեսուրսների մոբիլացման միջոց: Եթե աշխատանքային և նյութական ռեսուրսները երկրից երկիր դժվար է տեղաշարժել, ապա ապրանքների և ծառայությունների տեղաշարժն ավելի արդյունավետ և հեշտ է:

Բոլոր երկրներն այս կամ այն չափով կախված են համաշխարհային շուկայից: Նույնիսկ ԱՄՆ-ն այլ երկրներից կախում ունի այնպիսի ապրանքների ձեռք բերման հարցում, ինչպիսիք են արևադարձային մշակաբույսերը, բնական կաուչուկը, նիկելը, ալմաստը և այլն: Երկրի ներքին շուկայում տեղի է ունենում արտասահմանյան ապրանքների մրցակցություն, հատկապես էլեկտրոնային ապրանքների, էլեկտրախցիկների, տեսամագնիտոֆոնների, մոտոցիկլետների, ավտոմոբիլների, ֆրանսիական, իտալական գինիների, անգլիական հեծանիվների և այլնի գծով:

Միջազգային առևտուրն ազդում է առանձին երկրների տնտեսության զարգացման վրա: Արտաքին առևտուրն ավելացնում է տնտեսապես թույլ զարգացած երկրների հանքային և գյուղատնտեսական հումքը: Համաշխարհային առևտրի անվանացանկում ավելանում են ատոմային էներգիայի սարքավորումները, էլեկտրահամակարգիչները, ավիացիոն տեխնիկան, մեքենասարքավորումների, ռադիոֆիզիկայի, կապի և այլ խոշոր գիտատար ճյուղերի արտադրանքները: Արդյունաբերական արտադրանքի առևտուրը մոտ 30 տոկոսով առաջ է անցնում հումքային ապրանքների առևտրից:

Հետագայում ևս նոր զարգացող երկրները համաշխարհային շուկայում կմնան որպես նավթի և այլ հումքատեսակների մատակարարներ: Առանձին զարգացած երկրները, որոնք ապահովված են սեփական հումքով, նորից առաջնակարգ տեղեր կգրավեն որպես հումքի տարբեր տեսակների և էներգետիկ ռեսուրսների մեծ մասի հիմնական մատակարարներ: Սակայն դժվար է ասել, որ այսօր արտաքին առևտուրը տնտեսության առողջացման և տնտեսական աճի ապահովման ռեալ գործոն է: Հիմքեր կան հաստատելու, որ համաշխարհային առևտուրը խաղում է նաև բացասական դեր՝ խանգարելով աշխարհի շատ երկրների ինքնուրույն զարգացմանը: Առևտրի գոյությունը հիմնավորվում է «շահում առևտրից» հասկացության երկարատև էվոլյուցիայի գաղափարով:

Միջազգային առևտուրը երկրներին տնտեսապես շահելու հնարավորություն է տալիս՝ թեկուզ պոտենցիալ ձևով: Եթե երկու երկրի միջև տեղի է ունենում ապրանքափոխանակություն, ապա յուրաքանչյուրը հնարավորություն է ստանում ցանկացած ապրանք ձեռք բերելու համեմատաբար քիչ ծախսերով՝ նույն ապրանքի արտադրության ծախսերի համեմատ: Միջազգային առևտրի շնորհիվ՝ շահում է ողջ երկիրը, բարձրանում՝ ժողովրդի բարեկեցության մակարդակը: Դրա հետ միաս-

ին արտաքին առևտրի ակտիվ քաղաքականությունը կարող է դառնալ տնտեսության կառուցվածքային փոփոխությունների, արդյունավետության, ազգային արտադրության մրցունակության և ժողովրդի կենսամակարդակի բարձրացման միջոց: Հակառակ դեպքում երկիրը կհայտնվի ապրանքների, ծառայությունների և կապիտալի փոխանակումների միջազգային հոսքից դուրս:

3.2 Համաշխարհային առևտրի կառուցվածքը, դինամիկան և փոփոխման գործոնները: Համաշխարհային առևտրի քաղաքականություն

20-րդ դարի երկրորդ կեսից համաշխարհային առևտուրը զարգանում է բարձր տեմպերով: 1970 թ. զարգացած երկրների բաժինն արտահանման մեջ կազմել է 49.2, ընդհանուր շուկայի երկրներինը՝ 32.1, ԱՄՆ-ինը՝ 15.5, Ճապոնիայինը՝ 7 տոկոս: Ծառայությունների առևտուրն աճել է ավելի բարձր տեմպերով, ինչին նպաստել է տեղեկատվության և կապի միջոցների բուռն զարգացումը: 90-ականների կեսերին համաշխարհային առևտրի արագ աճը հիմնականում կապված էր զարգացած երկրների ներմուծումների կտրուկ աճի, ինչպես նաև Ճապոնիայի և Լատինական Ամերիկայի երկրների տնտեսական իրավիճակների բարելավման հետ:

Միջազգային առևտրի ***դինամիկան*** և ***կառուցվածքը*** խիստ փոփոխվել են: 1950-2000 թթ. համաշխարհային ապրանքային արտահանումն ավելացել է ավելի քան 18, 1980-2002 թթ.՝ 3.15 անգամ՝ 2031.0-ից հասնելով 6414.0 մլրդ դոլարի, իսկ ներմուծումն ավելացել է 3.17 անգամ՝ 2071.3-ից հասնելով 6568.8 մլրդ դոլարի: Երկրների անհամաչափ զարգացումն արտահայտվում է միջազգային առևտրի աշխարհագրական փոփոխություններով:

Ելնելով պետության, շուկայի կառուցվածքի և տնտեսական մեխանիզմի առանձին տարրերից՝ կարելի է առանձնացնել տնտեսության զարգացման մի քանի ***մոդելներ:***

1. ***Ազատական մոդել*** (ԱՄՆ տնտեսական փորձը), որը բնութագրվում է մասնավոր բաժնետիրական սեփականության առավելությամբ՝ արտադրության, ներդրումների, մատակարարման, աշխատուժի օգտագործման ոլորտներում:
2. ***Ազատական-ռեֆորմիստական մոդել,*** որը մոտ է ազատական մոդելին և իրենից ներկայացնում է կարգավորվող շուկայական տնտեսության բավարար ապահովագրում: Պետությունը, կազմակերպությունները, արհկոմը բանակցությունների միջոցով ձգտում են ապահովել աշխատանքային հարաբերությունները:
3. ***Սոցիալ-շուկայական մոդել,*** որը մշտապես հովանավորում է ֆերմերներին, ընկերություններին, երիտասարդությանը, անապահով մարդկանց, որոնք ունեն սոցիալական դժվարություններ և չեն կարող դիմակայել խոշոր ընկերություններին:

Աղյուսակ 3.1

Արդյունաբերական ոլորտի խոշոր մասնակիցների բաժինը համաշխարհային առևտրում (տոկոս)[27]

	Արտահանում			Ներմուծում		
	1990 թ.	2000 թ.	2010 թ.	1990 թ.	2000 թ.	2010 թ.
Արևմտյան Եվրոպա (26 երկիր)	**54.2**	**42.3**	**-**	**50.3**	**40.2**	**-**
ԵՄ 27 երկիր (ներմուծում)	-	42.8	44.1	-	39.7	40.1
ԵՄ 27 երկիր (արտահանում)	-	14.2	15.0	-	12.9	11.9
ԱՄՆ	12.1	13.8	9.2	15.4	19.7	13.1
Կանադա	3.1	3.7	2.0	3.8	4.1	2.9
Մեքսիկա	1.1	3.0	2.0	1.3	3.0	2.2
Ընդամենը ՀԱՓԹԱ-ի երկրներ	**16.3**	**20.5**	**13.2**	**20.5**	**26.8**	**18.2**
Հոնկոնգ	1.1	0.5	0.1	0.9	05	0.1
Ինդոնեզիա	0.4	0.8	0.5	0.7	0.6	0.7
Չինաստան	1.9	4.7	12.7	1.7	3.5	6.8
Կորեայի Հանրապետություն	2.5	3.3	3.3	1.8	2.0	2.1
Մալայզիա	0.7	1.7	1.2	0.9	1.4	1.1
Սինգապուր	1.0	1.3	1.0	0.6	1.1	1.2
Թայլանդ	0.6	1.1	1.2	1.0	1.0	1.1
Թայվան	2.6	3.0	2.1	1.5	2.2	1.3
Ճապոնիա	11.5	9.6	6.6	4.1	4.3	3.2
Ընդամենը Ասիայի 9 երկրներ	**22.3**	**26.0**	**28.9**	**15.2**	**16.6**	**17.6**
Ընդամենը 3 կենտրոններ	**92.8**	**88.8**	**86.3**	**85.0**	**83.6**	**75.9**
Ամբողջ աշխարհը	**100**	**100**	**100**	**100**	**100**	**100**

Խոշոր չափերի արտահանողներ են Գերմանիան, Ճապոնիան, ԱՄՆ-ը, Ֆրանսիան, Մեծ Բրիտանիան, Իտալիան, զարգացող երկրներից՝ Հարավ-Արևելյան Ասիայի երկրները՝ Բանկոնգը (Սյանգան), Հարավային Կորեան, Սինգապուրը, Չինաստանը, Թայվանը, Մերձավոր Արևելքում՝ Սաուդյան Արաբիան, Լատինական Ամերիկայում՝ Բրազիլիան, Մեքսիկան և այլն: Երկրների միջազգային առևտրի բնույթը, զարգացման մակարդակը կախված են միջազգային հարաբերություններում այդ երկրի գրաված դիրքից:

[27] ՀՀ սոցիալ-տնտեսական կայուն զարգացման հիմնախնդիրները, Երևան, 2010:

Աղյուսակ 3.2

Համաշխարհային առևտրի դինամիկան 1990-2010 թթ. (մլն դոլար)[28]

	1990 թ.	1995 թ.	2000 թ.	2010 թ.
Արտահանում, ընդամենը	**3 500 278**	**5 160 678**	**6 426 893**	**6 414 058**
Զարգացած երկրներ	2 479 848	3 519 047	4 098 734	4 070 620
Զարգացող երկրներ	844 000	1 440 775	2 057 258	2 031 937
Անցումային երկրներ	176 430	200 857	270 903	311 501
Ներմուծում, ընդամենը	**3 615 684**	**5 201 265**	**6 554 169**	**6 568 834**
Զարգացած երկրներ	2 603 316	3 482 748	4 404 520	4 454 759
Զարգացող երկրներ	818 803	1 514 180	1 891 510	1 897 655
Անցումային երկրներ	195 564	204 337	258 137	316 420

1992-2000 թթ. համաշխարհային միջին տարեկան ապրանքաշրջանառությունն աճել է 7, իսկ 2000-2008 թթ.՝ 6 տոկոսով: Այդ ընթացքում զարգացող երկրներում արտահանման և ներմուծման ծավալների աճի տեմպերն ավելի բարձր էին, քան զարգացած երկրներում: Նույն թվականներին ինդուստրիալ երկրներում արտահանման ծավալն աճել է միջին տարեկան 6.8, զարգացող երկրներում՝ 8.5 տոկոսով, իսկ ներմուծմանը՝ համապատասխանաբար 7.2 և 8.2 տոկոսով:

Աղյուսակ 3.3

Աշխարհի առաջատար արտահանող երկրները համաշխարհային ապրանքաշրջանառության մեջ 2005-2010 թթ. (տոկոս)

Երկրներ	Արտահանում		Ներմուծում
	2005 թ.	2010 թ.	2010 թ.
ԱՄՆ	10.7	9.7	16.8
Գերմանիա	9.5	10.0	7.7
Ճապոնիա	6.5	6.3	4.9
Ֆրանսիա	5.1	4.1	5.3
Չինաստան	5.0	5.9	5.3
Մեծ Բրիտանիա	4.3	4.1	5.3
Կանադա	3.9	3.6	3.2
Իտալիա	3.9	3.9	3.7
Նիդեռլանդներ	3.8	3.9	3.4
Բելգիա	3.3	3.4	5.0

Արտաքին առևտուրը չափվում է ***արժեքային*** և ***ֆիզիկական*** ծավալներով: ***Արժեքային ծավալը*** հաշվարկվում է ժամանակի որոշակի հատվածի համար՝ համապատասխան տարիների ընթացիկ գներով՝

[28] Международные экономические отношения, уч. под. ред. Ливенцева Н. Н., М., 2010.

ընթացիկ արժութային կուրսերով: ***Ֆիզիկական ծավալը*** հաշվարկվում է բնեղեն արտահայտությամբ, ինչի հիման վրա կարելի է կատարել անհրաժեշտ համադրում:

Պատրաստի արտադրանքների և կիսաֆաբրիկատների համաշխարհային արտահանումը 1960 թ. կազմել է 54.8 տոկոս, որը 2002 թ. հասել է 75.1-ի՝ կազմելով 4708.6 մլրդ դոլար: Ըստ ԱՀԿ տվյալների՝ 1990-2000 թթ. արդյունաբերական ապրանքների տեսակարար կշիռը համաշխարհային արտահանման ամբողջ ծավալում 70.4 տոկոսից հասել է 74.9-ի: Հիմնական ապրանքային խմբերից մեքենաների, սարքավորումների և տրանսպորտի միջոցների բաժինը 2005 թ. կազմել է 40.5 տոկոս: 2005 թ. ավտոմեքենաների արտահանումը կազմել է 630 մլրդ դոլար, որը հավասար էր արտահանվող ապրանքների 8 տոկոսին և զիջում էր միայն քիմիական արտադրանքների արտահանմանը: Օֆիսային և հեռահաղորդակցության սարքավորումների արտահանումը 2005 թ. կազմել է 840 մլրդ դոլար և արտահանման ծավալում 8.8-ից հասել 15.2 տոկոսի: Հիմնական արտահանողներ են ԵՄ երկրները, ԱՄՆ-ը, Ճապոնիան, Հյուսիսային Կորեան: 2005 թ. ԵՄ երկրների արտահանումը կազմել է 42.5, ԱՄՆ-ինը՝ 17.3, Ճապոնիայինը՝ 12.1, Հյուսիսային Կորեայինը՝ 6.2 տոկոս: Պատրաստի արտադրանք արտահանող 15 առաջատար երկրներ արտահանում են համաշխարհային արտահանման 90 տոկոսը, որից 8 զարգացած երկրների բաժինը կազմում է 53.2 տոկոս:

Հումքի, վառելիքի համաշխարհային արտահանումը 2005 թ. կազմել է 1370.0 մլրդ դոլար: 2005 թ. 1990-ի համեմատ հումքային և վառելիքա-էներգետիկ ռեսուրսների արտահանումը պակասել է՝ 14.3-ից հասնելով 13.1 տոկոսի: Պատճառն այն է, որ շատ երկրներ իրենք են սկսել զարգացնել սեփական արդյունաբերությունը և կրճատել ներմուծումը: Զարգացած երկրների վառելիքի արտահանումն ավելացել է՝ 18 տոկոսից հասնելով 33-ի: ՕՊԵԿ (նավթ արտահանող երկրների միություն) անդամ երկրների (Ալժիր, ԱՄԷ, Էկվադոր, Գաբոն, Իրան, Իրաք, Լիբիա, Նիգերիա, Սաուդյան Արաբիա, Կոնգո, Վենեսուելա, Քուվեյթ, Ինդոնեզիա) փոխադարձ առևտուրը ՀԱՓԹԱ երկրների (ԱՄՆ, Կանադա, Մեքսիկա) հետ 41.4-ից հասել է 56.0 տոկոսի: Միայն ***վառելիքի*** համաշխարհային արտահանումը 2005 թ. կազմել է 615.2 մլրդ դոլար: 1998 թ. 1986 թ.-ի համեմատ վառելիքի գներն իջել են 25, իսկ 2000 թ. կտրուկ աճել 20 տոկոսով: 2004 թ. նավթի մեկ բարելի գինը հասել է 50, 2006 թ. հուլիսին՝ մոտ 70 դոլարի:

Պարենի համաշխարհային արտահանումը (այդ թվում՝ պարենային և գյուղատնտեսական հումքը) 2005 թ. կազմել է 582.5 մլրդ դոլար: Համաշխարհային արտահանման մեջ պարենի տեսակարար կշիռը 1960 թ. 17.5 տոկոս էր, 2005 թ.՝ 9.3: Հացամթերքները պակասել են 15, շաքարը, սուրճը, կակաոն, թեյը՝ 10-14 տոկոսով: Ագրարային ապրանքների տեսակարար կշիռը 1960 թ. 17.5 տոկոս էր, 2005 թ.՝ 12.2,

2003 թ.՝ 9.0: Պարենամթերքի նվազման պատճառը 1990-2000 թթ. աշխարհում անասնագլխաքանակի կրճատումն էր: Պարենամթերքի հիմնական արտահանողներ են զարգացող երկրները, Ավստրալիան, Բրազիլիան, Չինաստանը, ԵՄ երկրները, որոնց բաժին է ընկնում պարենի արտահանման 70 տոկոսը: Զարգացող երկրների բաժինը 31 տոկոս է: Արևմտյան Եվրոպայի տարածքում արտահանումը կազմում է 42.7, Ասիայում՝ 18 տոկոս: 2005 թ. ԱՄՆ արտահանման բաժինը կազմել է 11.8, ԵՄ 15 երկրների բաժինը՝ 81 տոկոս: Պարենամթերք ներմուծողներ են ԱՄՆ-ը, ԵՄ երկրները, Ճապոնիան, Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, Ռուսաստանը և այլն:

Արդյունաբերական հումքի արտահանումը 2005 թ. կազմել է 172.3 մլրդ դոլար: Արտահանման տեսակարար կշիռը 1960 թ.-ի 16.7 տոկոսի համեմատ 1990 թ. կազմել է 6.6, 2005 թ.՝ 4.6 տոկոս: Արդյունաբերական հումքի հիմնական արտահանողներ են Արևմտյան Եվրոպան՝ 24.2, Մերձավոր Արևելքը՝ 18.2, Ասիան՝ 16.5, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրները՝ 11.8 տոկոս:

Այլ ապրանքների համաշխարհային արտահանումը (զենք, զինամթերք, ոչ ապրանքային մատակարարումներ) 1990 թ.-ի 1.1 տոկոսից 2005 թ. հասել է 3.0-ի՝ կազմելով 335.45 մլրդ դոլար:

Զարգացած երկրների արտահանման տեսակարար կշիռը համաշխարհային առևտրի ապրանքաշրջանառության մեջ ավելի բարձր է, քան նրանց բնակչության տեսակարար կշիռն աշխարհի բնակչության մեջ: Զարգացած 11 երկրների (ԱՄՆ, Գերմանիա, Ճապոնիա, Ֆրանսիա, Մեծ Բրիտանիա, Իտալիա, Կանադա, Բելգիա, Նիդեռլանդներ, Շվեյցարիա, Շվեդիա) բնակչությունը 2005 թ. կազմել է աշխարհի բնակչության մոտ 20, իսկ նրանց ապրանքաշրջանառությունը՝ համաշխարհային առևտրի 55 տոկոսը: Զարգացող երկրների առևտուրը 28, անցումային երկրներինը՝ 3.5 տոկոս է: Զարգացած երկրների արտահանման ծավալը 1980 թ.-ի 1277.3 մլրդ դոլարից 2005 թ. հասել է 4070.6-ի՝ աճելով 3.19 անգամ: Ներմուծումը 1411.3 մլրդ դոլարից հասել է 4354.8-ի՝ աճելով 3.09 անգամ:

Զարգացած երկրների համաշխարհային արտահանման տեսակարար կշիռը 1980 թ.-ի 67.3 տոկոսից 2005 թ. նվազել է մինչև 64.1 տոկոս: Արդյունաբերական ապրանքների արտահանումը 78.4 տոկոսից հասել է 79.7, վառելիքինը՝ 4.2-4.7 տոկոսի: Սյուս ապրանքների արտահանումը նվազել է: Պարենի արտահանումը 8.9 տոկոսից նվազել է մինչև 7.4, հանքահումքային ապրանքներինը՝ 3.2-2.6, գյուղատնտեսական հումքինը՝ 2.8-1.8 տոկոս:

Զարգացող երկրների արտահանումը 2005 թ. կազմել է 2031.9 մլրդ դոլար՝ 1980 թ.-ի համեմատ աճելով 3.4 անգամ, իսկ ներմուծումը 495.2 մլրդ դոլարից աճել է 3.83 անգամ: Զարգացող երկրների բաժինը 1980-2005 թթ. համաշխարհային արտահանման 23.4 տոկոսից հասել է 30.9, իսկ ներմուծման մեջ՝ 27.4 տոկոսի: Չորս տասնամյակների

ընթացքում հումքի, վառելիքի և պարենի տեսակարար կշիռն արտահանման մեջ 85.7 տոկոսից նվազել է մինչև 30.9 տոկոս, պատրաստի ապրանքներն ու կիսաֆաբրիկատներն ավելացել են՝ 14.1 տոկոսից հասնելով 67.9-ի:

Էլեկտրատեխնիկայի և էլեկտրոնային ապրանքների հիմնական արտահանողներ են Սինգապուրը, Թայվանը, Մալայզիան, Թաիլանդը, Ֆիլիպինները, Չինաստանը, Կոստա-Ռիկան, Մեքսիկան: Տեքստիլ ապրանքներ արտահանողներ են Չինաստանը, Հնդկաստանը, Կորեական Հանրապետությունը, Մեքսիկան, Մարոկկոն, Ֆիլիպինները, Թուրքիան, Թունիսը: Տրանսպորտի միջոցներ արտահանում են Արգենտինան, Բրազիլիան, Մեքսիկան, Կորեայի Հանրապետությունը: Տարածաշրջանային մակարդակով Ասիայի երկրներից արտահանման 40 տոկոսը պատկանում է Չինաստանին և Սինգապուրին: ACEAH (Հարավային Ասիայի պետությունների ասոցիացիա) անդամ երկրների (Ինդոնեզիա, Մալայզիա, Սինգապուր, Թաիլանդ, Ֆիլիպիններ, Բրունեյ) արտահանումը 19.0-ից հասել է 22.8 տոկոսի: Լատինական Ամերիկայի երկրներից 46 տոկոս արտահանում է Մեքսիկան, Մերձավոր, Միջին Արևելքից 50 տոկոս՝ Սաուդյան Արաբիան, Աֆրիկայից 50 տոկոս՝ ՀԱՀ-ը, Նիգերիան, Ալժիրը:

1993-2005 թթ. Արևմտյան Եվրոպայի արտահանումը 44.0 տոկոսից իջել է մինչև 42.4, Ասիայի երկրներինը՝ 26.1-25.8, Հյուսիսային Ամերիկայի երկրներինը՝ 16.6-15.1, Աֆրիկայինը՝ 2.5-2.2 տոկոս: Լատինական Ամերիկայի արտահանումը 4.4 տոկոսից աճել է մինչև 5.6, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայինը՝ 2.9-5.0, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներինը՝ 3.4-3.9 տոկոս: Համաշխարհային ներմուծման մեջ Հյուսիսային Ամերիկայի տեսակարար կշիռը 19.7-ից հասել է 22.0, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայինը՝ 2.9-4.6, Լատինական Ամերիկայինը՝ 5.1-5.4 տոկոսի: Արևմտյան Եվրոպայի ներմուծումը պակասել է 43.0-40.8, Ասիայինը՝ 23.3-22.4, Մերձավոր և Միջին Արևելքինը՝ 3.3-2.7, Աֆրիկայինը՝ 2.6-2.1 տոկոս[29]:

Անցումային երկրների արտահանումը 1990-2005 թթ. աճել է 1.92 անգամ: Ներմուծումը 164.9 մլրդ դոլարից հասել է 316.4 մլրդ դոլարի կամ աճել է 1.90 անգամ: Անցումային տնտեսության երկրների արտադրանքն 9.3-ից նվազել է մինչև 5.0 տոկոս, հետևաբար արտահանումը 24.1-ից նվազել է մինչև 13.1 տոկոս, ներմուծումը 13.7 տոկոսից հասել է 10.6 տոկոսի:

Վերջին տասնամյակներում միջազգային առևտրի արագ զարգացումը պայմանավորվել է հետևյալ գործոններով.

- երկրների միջև ապրանքների և ծառայությունների նկատմամբ պահանջարկի ավելացմամբ,

[29] Международные экономические отношения, уч. под ред. Ливенцева Н. Н., М., 2005, стр. 43-52.

- հասարակական արտադրական ծյուղերի անհամաչափ զարգացմամբ, ապրանքային կառուցվածքի հաճախակի փոփոխություններով,
- արտադրական նոր ծյուղերի ստեղծմամբ և հիմնական կապիտալի նորացմամբ,
- համաշխարհային շուկայում միջազգային կորպորացիաների ակտիվ գործունեությամբ,
- միջազգային ֆինանսական, տնտեսական կազմակերպությունների աջակցմամբ,
- «ընդհուպ շուկաների», ազատ տնտեսական գոտիների կազմակերպմամբ և արգելքների վերացմամբ,
- ՄՏՀ համաշխարհային տնտեսության միջազգայնացմամբ և քաղաքական հարաբերությունների կայունացմամբ,
- կապիտալի կենտրոնացմամբ և համակենտրոնացմամբ,
- տրանսպորտի, կապի, տեղեկատվության, ապահովագրության գործունեության բարելավումով,
- ԳՏԱ ակտիվ զարգացմամբ:

Միջազգային առևտրի քաղաքականությունը պետությունների կողմից իրականացվող միջոցառումների համակարգ է՝ ուղղված ներքին շուկայի պաշտպանությանը, արտաքին առևտրի ծավալների ավելացմանը, նրա կառուցվածքի և ապրանքային հոսքերի փոփոխությանը:

Պետության արտաքին առևտրային քաղաքականությունը պետության նպատակաուղղված ազդեցությունն է առևտրային հարաբերությունների զարգացման վրա, որն ապահովում է.

- տնտեսական աճ,
- վճարային հաշվեկշռի հավասարում,
- կայունություն, մարտավարություն,
- երկրների տնտեսական և քաղաքական անկախության պահպանում,
- տնտեսական և ռազմավարական պայմաններ:

Արտաքին առևտրի քաղաքականությունն իրականացվում է ***հովանավորչության*** (պրոտեկցիոնիզմ), ***ազատ առևտրի լիբերալացման*** և ***խառը*** քաղաքականության ձևերով:

Պետության ***հովանավորչության*** քաղաքականությունն ուղղված է հայրենական արտադրողների պաշտպանությանը մրցակցությունից: Հովանավորչությունը և ազատականացումն առևտրի արտաքին քաղաքականության սկզբունքներն են, որոնք գործել են կապիտալի նախասկզբնական կուտակման ժամանակաշրջանում՝ որպես արտաքին առևտրի քաղաքականության տիպիկ համակարգ: Ըստ մերկանտիլիզմի ներկայացուցիչներ Տ. Մենի և Ա. Մոնկրետինի՝ արտաքին քաղաքականությունը պետության կարևոր խնդիրն է, որն ապահովում է ոսկու ստացումը[30]:

20-րդ դարում էլ հովանավորչությունը պահպանվել է, սակայն ոչ նույն բնույթով և նշանակությամբ: Այժմ այն կրում է ոչ թե պաշտպանական, այլ ագրեսիվ բնույթ: Ապրանքները հարկվում են բարձր տուրքերով ոչ նրա համար, որ դրանց արտադրությունը տվյալ երկրում թույլ է զարգացած, այլ արտասահմանյան ապրանքների մուտքը ներքին շուկա արգելելու, սեփական արդյունաբերողներին հովանավորելու և մոնոպոլ բարձր գներ ապահովելու համար: Ներմուծումը սահմանափակելու նպատակով հաճախ տուրքերին ավելանում են նաև ապրանքների արտահանումը խրախուսող պարգևատրումներ: Ներմուծող երկրների համար առևտրի սահմանափակումներն արհեստականորեն դժվարացնում են ոչ շահավետ ծյուղերի աշխատանքը: Հովանավորչությունը, որպես պետական քաղաքականություն, ուղղված է օտարերկրյա մրցակցությունից ներքին շուկայի պաշտպանությանը: Դրա ձևերից են ***մաքսային սակագները***, որոնցով կարելի է պաշտպանել տեղական արտադրողների շահերը:

Ազատ առևտուրն առանց տուրքերի կամ չնչին տուրքերով հարկվող ապրանքների ներմուծումն է: Հասարակության զարգացման տարբեր փուլերում արտաքին առևտրի քաղաքականությունը բնութագրվում է տվյալ հասարակարգին բնորոշ ձևով: Ազատ առևտուրը հիմնվում է ապրանքների արտադրության համեմատական ծախսերի սկզբունքի վրա և նպաստում է սահմանափակ ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը:

Ազատ առևտրի ազատականացումը ենթադրում է վերացնել առևտրի հնարավոր արգելքները:

Արտադրության և կապիտալի միջազգայնացման պայմաններում ազատ առևտրի ներկայիս քաղաքականությունը դրսևորվում է մասնավորապես փոխանակումների, սահմանափակումների թուլացումով, արգելքների վերացումով: Պետության ազատ առևտրի քաղաքականությունը բխում է դրա իրականացման մեթոդներից, նպատակներից և ռազմավարությունից, որոնց գլխավոր խնդիրն ազատ առևտրի գործունեության համար բարենպաստ պայմաններ ստեղծելն է:

Արտաքին առևտրի ***խառը*** քաղաքականությունը կիրառում է վերը նշված միտումների փոխադարձ գործունեությունը:

Արտահանման խթանումը երկրների արտաքին առևտրային քաղաքականության կարևոր մասերից է: Պետության կողմից արտադրության և արտահանման աջակցումը բոլոր երկրներում դառնում է ազգային տնտեսական քաղաքականության գլխավոր ոլորտը և տնտեսության զարգացման ռազմավարության հիմնական մասը: Պե-

[30] Соколов В., журнал, Мировая экономика и международные экономические отношения, 2011, стр. 54-55.

տություն, աջակցում է արտադրությանը և հանդես է գալիս վարկատուի, երաշխավորի դերում՝ ***տրամադրելով արտադրության խթանման արտոնություններ, սուբսիդիաներ, արտոնյալ վարկեր, կատարելով ներդրումներ, արտահանման ապահովագրում՝ կապված առևտրային և քաղաքական ռիսկերի հետ, կազմակերպելով պետական հիմնադրամի և աջակցող հաստատությունների ստեղծում, ռեսուրսների մոբիլիզացում:***

Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ արտահանման խթանումը տեղի է ունենում հիմնականում մակրոտնտեսական բարենպաստ միջավայրի ձևավորումով, արտադրողների, արտահանողների համար անհրաժեշտ խթանիչների ստեղծմամբ: Արտահանումն իրականացնում է և՛ պետական, և՛ տարածաշրջանային միավորումների մակարդակով:

3.3 Առանձին երկրների տեղը և առանձնահատկությունները համաշխարհային առևտրում

1990-ական թվականների կեսերին ԱՄՆ-ում ընդունվել է արտահանման ազգային ծրագիր, որով նպատակ է դրվել 2005 թվականից հետո արտահանման ծավալը հասցնելու 1.2 տրիլիոն դոլարի: ԱՄՆ-ից բացի՝ առևտրական խոշոր տերությունների առաջին տասնյակում են Գերմանիան, Ճապոնիան, Ֆրանսիան, Մեծ Բրիտանիան, Իտալիան, Կանադան, Հոլանդիան, Հոնկոնգը, Բելգիան: Արտահանումը խիստ դինամիկ է զարգանում Չինաստանում, Ռուսաստանում, Սինգապուրում, Ֆիլիպինդիայում և այլն:

2000 թ. արտահանման տեմպերով Կենտրոնական և Արևելյան Եվրոպան գրավել է Ասիայից հետո երկրորդ տեղը: Սակայն համաշխարհային շուկայում հումքի և պարենամթերքի պահանջարկի նվազումը հանգեցրել է զարգացող երկրների արտահանման կրճատմանը: Հումքային ապրանքների գծով (առանց նավթի) զարգացող երկրների բաժինը համաշխարհային արտահանման մեջ 1960 թվականի 40 տոկոսի փոխարեն 2000-ին կրճատվել է մինչև 28 տոկոս: Հետևաբար, զարգացած երկրները համաշխարհային արտահանման մեջ ավելացրել են պարենամթերքի և հումքի (բացի նավթից) արտահանումը:

Զարգացող երկրների արտահանումն ավելացնելու փորձերը հաճախ հանդիպում էին զարգացած երկրների արգելքներին: Նոր ինդուստրիալ երկրները վերափոխեցին իրենց արտահանումը՝ արդյունաբերական արտադրանքի մեջ ավելացնելով մեքենասարքավորումների բաժինը: Նոր ինդուստրիալ երկրները, հատկապես Հարավային Կորեան, Սինգապուրը, Թայվանը, ունեն արտահանման բարձր աճ:

20-րդ դարի վերջին քառորդում համաշխարհային ապրանքաշրջանառության ոլորտում նկատվեց ասիական-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի դերի բարձրացում: ՎԶՄԲ գնահատմամբ 2000 թվա-

կանից հետո համաշխարհային առևտրի ամբողջ ծավալի 40 տոկոսը կենտրոնանում է այդ տարածաշրջանում: Ըստ Առևտրաարդյունաբերական պալատի տվյալների՝ ԱՄՆ-ի և ԵՄ-ի միջև ապրանքաշրջանառության ծավալը 2000 թ. կազմել է մոտ 500 մլրդ դոլար, որը 50 տոկոսով ավելի էր խաղաղօվկիանոսյան երկրների առևտրից: Առևտրի հիմնական հոսքը կատարվում է ԱՄՆ-Արևմտյան Եվրոպա-Ճապոնիա շրջանակներում: Զարգացած երկրների արտահանման երեք քառորդը կատարվում է միմյանց միջև, ըստ որում արտահանման մեծ մասը կազմում են մեքենասարքավորումները, գիտատեխնիկական նվաճումները: 2000 թ. մեքենաների և սարքավորումների վաճառքի գերակշռող մասը (մոտ 60 տոկոս) նույնպես կատարում էին ԱՄՆ-ը, Գերմանիան, Ճապոնիան: Միայն մեքենաները կազմում էին 80, սարքավորումները՝ 43 տոկոս, որոնք զարգացող երկրների արտահանման մեջ կազմում էին 54 և 19 տոկոս: Ռուսաստանի մեքենասարքավորումների արտահանումը զարգացած երկրների համեմատ կազմում է 2-2.5, իսկ համաշխարհային առևտրում՝ 1.0 տոկոս:

Աղյուսակ 3.4

Առանձին երկրների արտաքին առևտուրը, 2005 թ. (մլրդ դոլար)[31]

Երկրներ	Արտահանում	Ներմուծում
ԱՄՆ	624.8	817.3
Գերմանիա	521.2	456.3
Ճապոնիա	417.6	349.6
Ֆրանսիա	290.3	275.3
Մեծ Բրիտանիա	259.1	278.6
Իտալիա	250.7	207.0
Նիդեռլանդներ	197.1	174.1
Սյանգան	180.9	202.0
Բելգիա և Լյուքսեմբուրգ	166.7	154.6
Սինգապուր	125.1	131.5
Իսպանիա	102.1	121.9

Սոցիալիստական դաշինքի փլուզումից հետո կտրուկ աճել է առևտուրը ԵՄ և նախկին սոցիալիստական երկրների միջև: 1995 թ. ԵՄ երկրների արտահանման ընդհանուր ծավալն ավելացել է 8.8, իսկ Արևելյան Եվրոպայինը՝ 23 տոկոսով: ԵՄ հիմնական առևտրական գործընկերներ են դարձել Լեհաստանը, Չեխիան և Հունգարիան, որոնց արտահանումը համապատասխանաբար կազմել է 27, 21 և 14 տոկոս: Ըստ արտասահմանյան փորձագետների գնահատման՝ առաջիկա 20

[31] Фомичев Б. М., Международная торговля, М., ИНФРА, 2005, стр. 59.

տարրներին Ճապոնիան ու Չինաստանը պետք է ընդլայնեն փոխադարձ առևտուրը, որով կփոխվի համաշխարհային առևտրի ներկա հոսքերի ուղղությունը:

Համաշխարհային առևտրում ԱՄՆ կայուն դիրքը և ասիական երկրների զարգացման հեռանկարները նվազեցնում են ԵՄ երկրների դերը: Ըստ Եվրոստատի տվյալների՝ վերջին 20 տարում համաշխարհային առևտրում ԵՄ երկրների բաժինը, չնայած քանակական աճին, նվազել է: Արևմտաեվրոպական փորձագետների կարծիքով՝ թեև եվրոպական երկրները չափից ավելի ակտիվ են, այնուհանդերձ ցածր արդյունք ունեն, բարդ տեխնոլոգիաներ քիչ են արտադրում և այդ առումով ԱՄՆ-ից հետ են մնում 10 տարով (տե՛ս աղ. 3.5):

Աղյուսակ 3.5

ԵՄ երկրների առևտուրը ԱՊՀ երկրների հետ[32]

Երկրներ	2010 թ.				Միջին տարեկան աճի տեմպը 2000-2010 թթ., %	
	Ծավալը, մլն եվրո		Բաժինը, %			
	Ներմուծում	Արտահանում	Ներմուծում	Արտահանում	Ներմուծում	Արտահանում
Հայաստան	257	557	0.13	0.45	7.0	7.5
Ադրբեջան	9 763	2 347	4.88	1.92	25.7	20.6
Բելառուս	2 627	6 716	1.32	5.48	7.0	14.8
Ղազախստան	15 841	5 231	7.92	4.27	15.3	13.9
Ղրղզստան	199	210	0.10	0.17	3.5	11.5
Մոլդովա	582	1 529	0.29	1.25	8.0	9.6
Ռուսաստան	158 394	86 505	79.24	70.60	9.5	14.3
Տաջիկստան	57	144	0.03	0.12	-5.5	13.2
Թուրքմենստան	366	719	0.18	0.50	3.6	13.6
Ուկրաինա	1 196	17 334	5.70	14.15	9.0	12.3
Ուզբեկստան	415	1 243	0.21	1.01	-4.4	7.9
Ամբողջը	**199 897**	**122 535**	**100**	**100**	**-**	**-**

Ռուսաստանը և արևելաեվրոպական մյուս երկրները առևտրային վնաս էին պատճառում ինչպես ԵՄ 27, այնպես էլ ԱՊՀ երկրներին: 1900-ական թթ. սկզբին ԱՊՀ երկրներն անցել են տնտեսական և քաղաքական զարգացման տարբեր ուղիներ: 2000 թվականից կնքվել են առևտրային բազմաթիվ համաձայնագրեր ինչպես խմբավորումների առանձին երկրների, այնպես էլ ԵՄ 27 երկրների միջև:

[32] ЭКО Всероссийский экономический журнал, N 1, 2012 г., стр. 75.

Աղյուսակ 3.6

ԵՄ 27 երկրների արտահանման և ներմուծման աճի տեմպերը 1999-2010 թթ., (տոկոս)[33]

	Արտահանում			Ներմուծում		
	1999-2010	2008-2010	2009-2010	1999-2010	2008-2010	2009-2010
ԱՄՆ	25.9	-3.2	17.8	2.2	-9.3	6-4
Չինաստան	475.4	44.3	37.2	436.2	13.7	31.7
Ռուսաստան	412.9	-17.6	31.8	341.2	-11.1	34.5
ԵՄ-27	97.5	3.0	22.9	102.0	-4.1	24.5

Աղյուսակը ցույց է տալիս ԵՄ-27-ի արտահանման և ներմուծման դինամիկան: ԵՄ-27-ի ընդհանուր առևտրի շրջանառության աճը 1999-2010 թթ. ավելացել է 97.5, իսկ ներմուծումը՝ 102.9 տոկոսով: Այդ ընթացքում Չինաստանի և Ռուսաստանի ներմուծումն ավելացել է 475.4 և 412.9 տոկոսով: ԱՄՆ-ը մնում է առավել կարևոր գործընկեր, սակայն աճը կազմել է 25.9 տոկոս: Առևտրային գործընկերների ներմուծումը ԵՄ-27 երկրներից ցույց է տալիս աճի ավելի ցածր տեմպեր, քան արտահանումը: ԵՄ-27-ի ներմուծումն ԱՄՆ-ից ցույց է տալիս միայն 2.2 տոկոս, որը զարմանալի ցուցանիշ է եվրոշուկայում:

Աղյուսակ 3.7

ԵՄ 27 երկրների 5 հիմնական ապրանքների արտահանումը և ներմուծումը Հայաստան 2010 թ.[34]

Ներմուծում ԵՄ 27 երկրներից		Արտահանում ԵՄ 27 երկրներ	
Ապրանքներ	%	Ապրանքներ	%
Երկաթ և պողպատ	35	Ոչ մետաղյա հանքային արտադրանք	9
Գունավոր մետաղներ	26	Ընդհանուր արդյունաբերական սարքավորումներ	8
Ոչ մետաղյա հանքային արտադրանք	17	Մասնագիտական սարքավորումներ	6
Մետաղյա հանքանյութ	8	Հեռահաղորդակցության և ձայնագրման սարքավորումներ	6
Հագուստ և պիտույքներ	6	Էլեկտրոնային սարքավորումներ	5

2000-2010 թթ. ԵՄ և նշված 6 երկրների (Հայաստան, Բելառուս, Ուկրաինա, Մոլդովա, Վրաստան, Ադրբեջան) միջև ապրանքաշրջանառությունը զգալի չափով աճել է և շարունակում է աճել 2009 թ. անկումից հետո:

[33] ЭКО Всероссийский экономический журнал, 2012, N 1, стр. 74.
[34] ЭКО Всероссийский экономический журнал, 2012, N1, стр. 76.

Միջազգային առևտրի ավելի արդյունավետ զարգացող սեկտոր է ***գիտատեխնիկական*** ապրանքների առևտուրը: Էլեկտրատեխնիկական սարքավորումների արտահանմանը բաժին է ընկնում գիտատեխնիկական ամբողջ արտադրության 25 տոկոսը:

Միկրոէլեկտրոնային ապրանքների համաշխարհային շուկայի տարեկան ապրանքաշրջանառության աճը 2010 թ. հետո նախատեսվում է ավելացնել 10-15 տոկոսով:

Միջազգային առևտրի արագ զարգացող ոլորտներից է ***քիմիական*** արտադրանքի առևտուրը: Սակայն հումքի առևտրի աճը հետ է մնում առևտրի աճի տեմպերից, ինչը պայմանավորված է հումքի փոխարինիչների պատրաստմամբ և օգտագործմամբ:

Համաշխարհային առևտրում նվազում է պարենամթերքի նկատմամբ պահանջարկը՝ կապված զարգացած երկրներում պարենամթերքի արտադրության ընդարձակման և քիչ ներմուծման հետ: 20-րդ դարի վերջին համաշխարհային ապրանքաշրջանառության 2/3-ը բաժին էր ընկնում պարենամթերքին, հումքին, վառելանյութին, ինչը կազմում էր ամբողջ ապրանքաշրջանառության 1/4-ը: Վերամշակվող արդյունաբերության առևտրի բաժինը 1/3-ից աճեց մինչև 3/4: Համաշխարհային ամբողջ առևտրի ավելի քան 1/3-ը կազմում էր մեքենաների և սարքավորումների առևտուրը:

Յուրաքանչյուր երկիր իր ՄՏՀ-ը կառուցում է՝ ելնելով իր տնտեսական և քաղաքական ուղղվածությունից, ներուժից, սոցիալ-տնտեսական իրավիճակից: 1970-ական թվականներին էներգետիկ ռեսուրսների և հումքային ապրանքների գների կտրուկ բարձրացումը հումքային ապրանքներ սպառող երկրներին հարկադրել է վերակառուցել իրենց վառելիքաէներգետիկ բազան, դրանց նկատմամբ ցուցաբերել խնայողություն և որոնել էներգիայի նոր ռեսուրսներ:

Արտահանող երկրների կողմից էներգետիկ, հումքային ապրանքների իրացումը բացասաբար է ազդում պահանջարկի կառուցվածքի վրա, ինչի հետևանքով աճում են զարգացող երկրների եկամուտները: Նավթ արդյունահանող երկրների եկամուտներն ավելացել են հիմնականում նավթի թանկացման հաշվին, ինչից նրանց դիրքերը միջազգային առևտրում չեն բարելավվել, քանի որ նրանցից շատերը չունեին զարգացած տնտեսություն:

Առանձին երկրներում արտահանումն ունի միակողմանի բնույթ: Կոնգոյի արտահանման ընդհանուր ծավալում նավթը կազմում է 89, Քուվեյթում՝ 88, Գվինեայում բոքսիդները և կոնցենտրատները՝ 98 տոկոս: Զարգացած երկրներում արագ աճում են արդյունաբերության այն ճյուղերը, որոնք քիչ հումքատար և էներգատար են (մակրոտնտեսություն, օպտիկական և լազերային տեխնիկայի արտադրություն և այլն): ԱՄՆ արտահանման մեջ գիտատար արտադրանքի բաժինը հասել է մոտ 50 տոկոսի: Սակայն Արևմտյան Եվրոպայի զարգացած երկրների և Ճապոնիայի համեմատությամբ ԱՄՆ բաժինը նվազում է:

Եթե 1970 թ. համաշխարհային արտահանման մեջ այն 18.2 տոկոս էր, 1987 թ.՝ 11.6, 2003 թ.՝ 9.0, ապա 2010 թ. այս ցուցանիշը նվազեց մինչև 8.0 տոկոս: Այնուամենայնիվ, ԱՄՆ արտահանման բաժինը պահում է իր գերակշռող դիրքը, քանի որ էլեկտրոնային հաշվիչ մեքենաների վաճառքը կազմում է զարգացած բոլոր երկրների կողմից վաճառված արտադրանքների 70 տոկոսը: Ներկայում ԱՄՆ-ն ունի ազատ առևտրի ռեժիմ Կանադայի, Մեքսիկայի, Իսրայելի հետ և ձգտում է վերականգնել իր առաջատար դերն ազատ առևտրի զարգացման մեջ:

2000 թ. ***ճապոնական*** ընկերությունների արտասահմանյան ուղղակի կապիտալ ներդրումները զգալի գերազանցել են վերջին 30 տարիների ցուցանիշը, իսկ 2005 թ. 1985-ի համեմատ նորից աճել են 5 անգամ: Տնտեսական բարեփոխումների համար մեծ դեր է խաղացել պողպատի, ածխարդյունաբերության, մեքենաշինության և մյուս ճյուղերի կոորդինացումը: Ճապոնիան համաշխարհային շուկա արտահանում է վերահսկող և կառավարող համակարգիչներ, գիտատար ապրանքներ, ներմուծում՝ հումքային ապրանքներ:

Համաշխարհային առևտրում ***Գերմանիան*** գրավում է առաջատար տեղ, իսկ արտահանման մեջ արդյունաբերական ապրանքները հասնում են մինչև 92 տոկոսի: Միջազգային շուկայում այդ երկիրը ճանաչվում է բարձրորակ ապրանքներով: Լինելով Եվրոպայի ամենահզոր պետությունը՝ նա իր տնտեսական, արտադրական ներուժով աշխարհի երրորդ երկիրն է ԱՄՆ-ից և Ճապոնիայից հետո: Արտահանող հիմնական ճյուղերն են մեքենաշինությունը, էլեկտրատեխնիկան, քիմիական արդյունաբերությունը: Ապրանքափոխանակության մոտ 65 տոկոսը կատարվում է զարգացած երկրների հետ: 2008 թ. արտահանումը կազմում էր 82, ներմուծումը՝ 79 տոկոս: Արտաքին առևտրի բաժինը երկրի եկամտի մեջ կազմում է 38 տոկոս: Գերմանիան զարգացող երկրներից ներմուծում է հումք, վառելիք, արևադարձային մշակաբույսեր, գյուղատնտեսական արտադրանք և այլն:

Անգլիայի տնտեսության զարգացման գործում մեծ դեր է խաղում արտաքին առևտուրը: Վերջին 50 տարում գյուղատնտեսության արդյունավետ զարգացումը հնարավորություն է տվել կրճատելու պարենային ապրանքների ներմուծումը: Կրճատվել են արդյունաբերության այն ճյուղերը, որոնք աշխատում են ներմուծվող հումքով: Անգլիան հիմնականում արտահանում է մեքենաշինական արտադրանք, տրանսպորտային միջոցներ և արտադրված ավտոմեքենաների 2/3-ը: Ավիացիոն արդյունաբերության գծով Անգլիան ԱՄՆ-ից հետո երկրորդն է, և արտադրանքի մոտ 60-65 տոկոսն արտահանվում է: Էլեկտրաարդյունաբերության մեջ մեծ տոկոս են կազմում գեներատորների, ԱԷԿ սարքավորումների արտադրությունը և էլեկտրոնիկան, որոնք մեծ ճանաչում ունեն: Զգալի մաս է կազմում մեքենասարքավորումների ներմուծումը: Ներկրման 90 տոկոսը բաժին է ընկնում հումքին, կիսաֆաբրիկատներին և պարենամթերքին: Արտաքին առևտրի բաժինը

երկրի ազգային եկամտի մեջ կազմում է 32 տոկոս: Անգլիան կապիտալ արտահանող երկիր է: Բանկային մասնաճյուղեր ունի աշխարհի տասնյակ երկրներում: Հայաստանում գործում է «Միդլենդ Արմենիա» բանկը:

Իտալիայում ներմուծման և արտահանման ծավալները կազմում են ազգային համախառն արտադրանքի 26-27 և 27-29 տոկոսը: Վերամշակվող ապրանքների 70 տոկոսը ներմուծվում է (հումք, կիսաֆաբրիկատներ, կոմպլեկտավորվող ապրանքներ, նավթ, վառելիք, երկաթի հանքանյութ, էլեկտրասարքեր, հաստոցներ, պարենային ապրանքներ): Արտահանվում է արտադրվող ավտոմեքենաների, տրակտորների 1/3-ը, պլաստմասսաների, քիմիական մանրաթելերի 2/3-ը, բրդյա, սինթետիկ մանրաթելերի հիմնական մասը: Իտալիայի առևտրական գործընկերները եվրոպական երկրներն են, որոնցից ներմուծումը կազմում է 44, արտահանումը՝ 48 տոկոս: Արտաքին հարաբերություններում մեծ ծավալ են կազմում գիտատեխնիկական, միջազգային ծառայությունների տրամադրումը և կապիտալի արտահանումը:

Ճապոնիան արտաքին առևտրի ծավալով չորրորդն է ԱՄՆ-ից, Գերմանիայից և Ճապոնիայից հետո: Առաջատար տեղ է գրավում արդյունաբերական, գյուղատնտեսական արտադրանքներով, արտաքին առևտրի գումարով, կապիտալի արտահանման ծավալով: Արտահանումը կազմում է երկրի ազգային եկամտի 20 տոկոսը: Դա ավելի բարձր է, քան ԱՄՆ-ի, Ճապոնիայի արտահանումը, սակայն պակաս է Գերմանիայի, Անգլիայի, Իտալիայի, Բելգիայի արտահանումից: Շատ ապրանքների գծով երկրի պահանջարկն ապահովված չէ: Ներմուծում է վառելիքի 40, բամբակի 80 տոկոսը, ինչպես նաև՝ նավթ, քարածուխ (100 տոկոս), բոքսիդներ, գունավոր մետաղներ, անտառանյութ: Նավթամթերքի մի մասը ներմուծում է Գերմանիայից, Արևմտյան Եվրոպայի երկրներից, գազի մոտ 50 տոկոսը՝ Ալժիրից, Նիդեռլանդներից:

Համաշխարհային տնտեսության մեջ իր տեղն ունի ***Կանադան***: Երկրի արտահանման 2/3-ը կազմում են կիսաֆաբրիկատները, պարենային ապրանքները, թուղթը, հացահատիկը, նիկելը, ալյումինը, նավթամթերքը, պղինձը, ուրանը, փայտը, գյուղատնտեսական արտադրանքը: Կանադան հիմնականում ներմուծում է պատրաստի արտադրանք, կաուչուկ, ածուխ, սուրճ, արևադարձային պտուղներ: Հիմնական գործընկերներն են ԱՄՆ-ը, Անգլիան, Ճապոնիան, Գերմանիան, Բելգիան, Իտալիան, Նիդեռլանդները և այլն:

Առանձին երկրներ ճանաչվում են տարբեր արտադրատեսակների թողարկմամբ: Օրինակ՝ Նիդեռլանդները ճանաչվում է էլեկտրոնիկայի, բժշկական սարքերի ու սարքավորումների, սննդամթերքի, Շվեյցարիան՝ բարձր ճշգրտության հաստոցների, չափիչ գործիքների, ժամացույցների, դեղորայքի, Բելգիան և Ավստրիան՝ արդյունաբերական սարքավորումների և մեքենաշինության, Լյուքսեմբուրգը՝ բարձրորակ պողպատի, Իռլանդիան՝ գունավոր մետաղների արտադրությամբ: Ելնելով սրանից՝ տարբեր են նաև առանձին երկրների արտահանման և ներմուծման քվոտաներն իրենց ՀՆԱ-ի նկատմամբ:

Աղյուսակ 3.8

Առանձին երկրների արտահանման և ներմուծման քվոտաները 2010 թ., (տոկոս)

Երկրներ	Արտահանման քվոտաները ՀՆԱ-ի նկատմամբ, %	Ներմուծման քվոտաները ՀՆԱ-ի նկատմամբ, %	Երկրներ	Արտահանման քվոտաները ՀՆԱ-ի նկատմամբ, %	Ներմուծման քվոտաները ՀՆԱ-ի նկատմամբ, %
Լյուքսեմբուրգ	93	50	Գերմանիա	32	22
Իռլանդիա	70	30	Թաիլանդ	30	21
Բելգիա	68	40	Կանադա	27	20
Նիդեռլանդներ	65	34	Մեծ Բրիտանիա	26	21
Մալայզիա	61	35	Ֆիլիպիններ	23	19
Կորեայի Հանրապետություն	46	28	Ֆրանսիա	21	17
Շվեյցարիա	40	35	Իտալիա	18	15
Հունգարիա	37	27	Ճապոնիա	13	12
Ավստրիա	36	26	ԱՄՆ	8	9
Շվեդիա	34	24	Ռուսաստան	2	3

3.4 Միջազգային առևտրի անհամաչափ զարգացումը և կարգավորումը

20-րդ դարի կեսերից մի շարք զարգացած երկրների միջազգային առևտրի դինամիկան զարգանում է անհամաչափ, ինչն ազդում է համաշխարհային շուկայում նրանց ուժերի հարաբերակցության վրա: Փոխվել է ԱՄՆ գերիշխող դիրքը: Եթե 1960 թ. նա արտահանում էր համաշխարհային ամբողջ արտահանման 1/5-ը, ապա 2000 թ. այս ցուցանիշը նվազեց մինչև 1/8: Գերմանիայի արտահանումն առանձին տարիների նույնիսկ գերազանցել է Ամերիկայի արտահանմանը: Աճել է նաև Արևմտյան Եվրոպայի երկրների արտահանումը, որը համարյա չորս անգամ գերազանցում է ԱՄՆ ցուցանիշը, և այդ երկրները դարձել են միջազգային առևտրի գլխավոր կենտրոններ: Նույն ժամանակում միջազգային առևտուրն արագ զարգացել է Ճապոնիայում, որը մեքենաների և սարքավորումների արտահանման գծով աշխարհում առաջին անգամ գրավել է առաջին տեղը: Ճապոնական արտահանման ծավալի 1/3-ը գնում էր Ամերիկա, հետևաբար, 2000 թ. Ճապոնիայի հետ առևտրում ԱՄՆ դեֆիցիտը կազմում էր 50-60 մլրդ դոլար: Հենց այդ ժամանակաշրջանում Ճապոնիան դարձավ միջազգային մրցակ-

գության առաջատար: Նրան միացան նոր ինդուստրիալ երկրները՝ Սինգապուրը, Հոնկոնգը, Թայվանը: Սակայն ԱՄՆ կառավարությունն ընդունեց մի շարք որոշումներ, որոնցով ամերիկյան ընկերություններին հնարավորություն տրվեց բարձրացնելու իրենց մրցունակությունը համաշխարհային շուկայում: Ստեղծվեցին առևտրին աջակցելու կոորդինացիոն և տեղեկատվական կոմիտեներ ու աշխատանքային խմբեր՝ արտահանումը ֆինանսավորելու և արտասահմանյան շուկաներում ամերիկյան ընկերություններին օգնելու նպատակով:

Ըստ միջազգային վարկանիշի՝ առաջատար երկրներ են ԱՄՆ-ը, Սինգապուրը, Հոնկոնգը (Սյանգան), Ճապոնիան, 17-րդ տեղում Ֆրանսիան է, 34-րդում՝ Չինաստանը, 40-րդում՝ Թուրքիան և 48-րդում՝ Ռուսաստանը: Համաշխարհային նման դասակարգման հիմքում տարբեր չափանիշներ են (եկամուտները բնակչության մեկ շնչի հաշվով, արժեզրկման մակարդակը, արտաքին առևտրի հաշվեկշռի վիճակը, բնական հարստությունները, ենթակառուցվածքները, հաղորդակցության միջոցները և այլն): Սակայն միջազգային վարկանիշի հաշվարկման համար կարևոր ցուցանիշներից է արտաքին առևտրի շրջանառության ծավալը բնակչության մեկ շնչի հաշվով:

Աղյուսակ 3.9

Արտաքին առևտրի շրջանառության ծավալը մեկ շնչի հաշվով ըստ խոշոր տարածաշրջանների (2000 թ., դոլար)

Տարածաշրջաններ	Շրջանառությունը
Արևմտյան Եվրոպա	6975
Հյուսիսային Ամերիկա	3630
Ավստրալիա և Օվկիանիա	3335
Արևելյան Եվրոպա	1830
ԱՊՀ երկրներ	760
Լատինական Ամերիկա	470
Ասիա	445
Աֆրիկա	265

Ըստ մասնագետների կանխորոշման՝ 21-րդ դարի առաջին տասնամյակում ավելի մրցունակ կլինեն ԱՄՆ-ը և ասիական պետությունները, 2030 թ.՝ ԱՄՆ-ը, Ճապոնիան և Չինաստանը: Հետագայում այդ ցանկը կլրացնեն Գերմանիան, Հարավային Կորեան, Սինգապուրը, Հնդկաստանը, Թայվանը, Մալայզիան, Շվեյցարիան[35]:

[35] Զեկույց աշխարհում մրցակցության մասին համաշխարհային ֆորումի (ժնև, 1996) և մենեջմենթի զարգացման միջազգային ինստիտուտի (Լոզան) կողմից:

Համաշխարհային առևտուրը կարիք ունի ***պետական և միջազգային մակարդակով կարգավորման: Պետական կարգավորումը*** լինում է ***վարչական*** և ***տնտեսական***: Վարչական կարգավորմամբ հաշվարկվում է.

- ՄՏՀ մասնակից երկրների գնահատումը,
- արտահանվող ապրանքների հայտարարագրումը,
- արտահանման և ներմուծման քվոտաները,
- ՄՏՀ օպերատիվ միջոցների ձեռնարկումը:

Քվոտավորումը (բաժնեչափ) և ***լիցենզավորումն*** ապրանքների ներմուծման քանակական սահմանումն են: Պետությունը կարող է արգելել որոշ ապրանքների ներմուծումը երկկողմանի համաձայնագրով:

Վարչական կարգավորումը կարող է լինել ***ուղղակի*** և ***անուղղակի***: ***Ուղղակի կարգավորումը*** սահմանվում է պետական իշխանության որոշումներով, օրենսդրական նորմերով: ***Անուղղակի կարգավորումը*** տեխնիկական ստանդարտների, հավաստագրերի և այլնի սահմանափակումն է: Պետական կարգավորման միջոցներ են օպերատիվ գործընթացները (արտահանման և ներմուծման սահմանափակումներ, դադարեցում):

Արտաքին առևտրի կարգավորումն իրականացվում է ***տարիֆային*** և ***ոչ տարիֆային*** մեթոդներով: Այս դասակարգումն առաջարկվել է ԳԱՏԹ-ի (Տարիֆների և առևտրի գլխավոր համաձայնություն) կողմից: Ներկայում գոյություն ունեն ԳԱՏԹ-ի (ԱՀԿ), Միջազգային առևտրի պալատի (ՄԱՊ), ՄԱԿ-ի առևտրի զարգացման կոնֆերանսի (ՅՈՒՆԿՏԱԴ), ԱՄՆ տարիֆային հանձնաժողովի կարգավորման համակարգերը: Միջազգային առևտրի կարգավորման համար կիրառվում են ***ներմուծման մաքսային տարիֆներ***, որոնք ներմուծվող ապրանքների համակարգված ցուցակներ են:

Ներմուծման կարգավորման մաքսային-տարիֆային ձևերից է ***մաքսային տուրքերի գանձումը,*** որն իրականացվում է ապրանքները պետական սահմանով անցկացնելու համար: Տուրքերը լինում են ***ներմուծման, արտահանման*** և ***տրանզիտ*** (տրանզիտ տեղափոխվող ապրանքների համար): Տարիֆները լինում են ***միատեսակ*** (անկախ երկրից) և ***տարբեր*** (յուրաքանչյուր ապրանքային դիրքի համար՝ կախված երկրների պայմաններից): Տարբեր երկրների մաքսակետերում տարիֆները տարբեր են: Առանձին ապրանքային խմբերի համար (տեքստիլ, հագուստ, կաշի, կաուչուկ, կոշկեղեն, ձկնամթերք, տրանսպորտային սարքավորումներ) սահմանվում է տուրքերի բարձր դրույք:

Ոչ տարիֆային արգելքներն ուղղակի միջոցներով սահմանվում են կառավարական նորմատիվներով (քվոտավորում, լիցենզավորում): Տարիֆային արգելքների տարբեր ձևեր մշակվել են ՅՈՒՆԿՏԱԴ-ի, ԱՀԿ-ի կողմից:

Տեխնիկական արգելքները սահմանվում են անվտանգության ապահովում պահանջող ստանդարտների պահպանման, որակի, առողջապահության, սանիտարահիգիենիկ նորմերի, գովազդի կանոնների խախտումների դեմ: Օրինակ, 2006 թ. փետրվարի 7-ին ԱՀԿ դատարանը լսել է ԱՄՆ-ի, Կանադայի, Արգենտինայի հայցն ընդդեմ ԵՄ վեց երկրների՝ Գերմանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Ավստրիայի, Հունաստանի, Լյուքսեմբուրգի, որոնք դադարեցրել էին սննդամթերքի ներմուծումը վերոհիշյալ երկրներից, և հետևաբար փոխհատուցեցին չիրացված գյուղմթերքների վնասի համար:

Կարգավորման մեթոդներից են *գների վերահսկողությունը, ֆինանսական միջոցառումները, քանակական և որակական ստուգումները:*

Կարգավորման հիմնական դերը պատկանում է ԱՀԿ-ին և Միջազգային առևտրի պալատին (ՄԱՊ): Միջազգային տնտեսական համագործակցության ոլորտում առանձնահատուկ գործառույթ ունի ԱՀԿ-ը, որի անդամ երկրները պարտավորվում են փոխադարձ առևտրում կրճատել ներմուծման մաքսատուրքերը և տարիֆները:

ԱՀԿ-ը երկրներին հնարավորություն է տալիս ներկայացնելու բողոք, եթե փոխգործունեության ընթացքում անդամ երկրները խախտումներ են կատարել: Որպես միջազգային կազմակերպություն, նա չի խոչընդոտում զարգացած երկրներին օգտագործել իր տնտեսական և քաղաքական առավելություններն այլ երկրների հետ հարաբերություններում: Կարգավորումն իրականացնում են խոշոր տնտեսական և առևտրային խմբավորումները, որոնք են.

- ԵՄ երկրները (27 անդամ),
- Հյուսիսային Ամերիկայի ազատ առևտրի համաձայնությունը (ՀԱՓԹԱ)՝ ԱՄՆ, Կանադա, Մեքսիկա,
- Ասիական-խաղաղօվկիանոսյան տնտեսական համագործակցությունը (ACEAH),
- Եվրոպական տնտեսական ընկերությունը (ԵՏԸ) և այլն:

Միջազգային առևտրի կարգավորման նպատակով ստեղծվել են արտահանող և ներմուծող երկրների միջազգային կազմակերպություններ, մասնավորապես՝

- Կակաոյի և սուրճի միջազգային կազմակերպությունը (ՄՕԿԿ),
- Բնական կաուչուկի միջազգային կազմակերպությունը (ՄՕՀԿ),
- Շաքարի միջազգային կազմակերպությունը (ՄՕՇ),
- Նավթ արտահանող երկրների կազմակերպությունը (ՕՊԵԿ),
- ՄԱԿ Առևտրի զարգացման կոնֆերանսը (ՅՈՒՆԿՏԱԴ):

3.5 Առևտրի համաշխարհային շուկա

Համաշխարհային շուկան (ՀՇ) ազգային շուկաների ամբողջությունն է, որում շուկաների կապն իրականացվում է ապրանքների և ծառայությունների առևտրի, տեղեկատվության, կապիտալի միջազգային հոսքերի, աշխատուժի (բնակչության) տեղաշարժերի միջոցով: ՀՇ-ն երկրների միջև կայուն ապրանքադրամական հարաբերությունների ոլորտ է և իրականացնում է համաշխարհային առաջարկ և պահանջարկ, ինչպես նաև դասական մասնագիտացած խմբերի՝ տրանսպորտի բոլոր միջոցների, քիմիական ապրանքների, գյուղատնտեսական արտադրանքների, վառելիքի, նավթի, գազի, հումքի, էլեկտրաէներգիայի, և այլ ճյուղերի ու ոլորտների արտադրանքների վաճառքգնումներ:

Համաշխարհային շուկան կայուն ապրանքադրամական հարաբերություններ է երկրների միջև՝ հիմնված ԱՄԲ մասնագիտացման և կոոպերացման վրա: Այն ակտիվորեն ազդում է վերարտադրության բոլոր ոլորտների վրա: Եթե ապրանքային արտադրությունն օբյեկտիվ անհրաժեշտություն է, ապա նույնքան անհրաժեշտ է շուկայի գոյությունը: Արտադրության յուրաքանչյուր եղանակի պայմաններում շուկան գործել և կատարել է տվյալ տնտեսական համակարգի հարաբերություններին համապատասխան ծառայություն: ՀՇ-ն օպտիմալացնում է արտադրական ռեսուրսների, աշխատուժի, տարբեր գործոնների ռացիոնալ օգտագործումը: Իր գոյության ընթացքում այն զարգացել է բնական ճանապարհով, անցել զարգացման երկար ու բարդ ուղի, վերափոխվել ու հարմարվել փոփոխվող պայմաններին, ունեցել նաև հակասություններ և թերություններ: Շուկայի առաջացման կարևոր նախադրյալներ են աշխատանքի հասարակական բաժանումը և մասնագիտացումը, արտադրական ռեսուրսների, ստեղծված բարիքների ազատ փոխանակման գործընթացը:

Համաշխարհային շուկան ԱՄԲ մասնակից երկրները միմյանց կապող ապրանքադրամական հարաբերությունների կայուն ոլորտ է: Այն, իր ուղին սկսելով մասնավոր առևտրական գործարքներից, հասել է երկրների միջև խոշոր մասշտաբի առևտրատնտեսական համագործակցության: Պատմական առումով ՀՇ-ն հիմնվել է առանձին երկրների ներքին շուկաների վրա, երբ ապրանքները, ծառայությունները, կապիտալը, աշխատուժը դուրս են եկել ազգային շրջանակներից և իրենց շարժը շարունակել են ՄՏՀ համակարգում: Շուկայի ստեղծումից հետո սկսվել է նրա մասնագիտացումը: Առաջացել են ապրանքների ազգային շուկաներ, որոնց մի մասը կողմնորոշվել է դեպի արտաքին շուկա: Միջազգային շուկաներ ստեղծվել են տարբեր տարածաշրջաններում:

Առանձին երկրների միջև առևտրային հարաբերություններ ստեղծվել են մինչև կապիտալիստական համակարգի առաջացումը: 16-17-

րդ դարերում, հասարակական արտադրության մանուֆակտուրային փուլում, ԱՄԲ-ը նոր պայմաններ է ստեղծել ապրանքային արտադրության զարգացման համար: Քաղաքային շուկաները, տոնավաճառներն աստիճանաբար միացել են և դարձել տարածաշրջանային, ազգային, միջպետական շուկաներ, ապա՝ վերածվել համաշխարհային շուկայի: Կապիտալիզմի զարգացումը շուկան փոխել է տնտեսապես և քաղաքականապես: Առևտրային կապիտալի շարժի ազդեցության տակ այն դարձել է կապիտալի նախասկզբնական կուտակման որոշիչ գործոններից մեկը: 18-19-րդ դարերում համաշխարհային շուկայի զարգացումը կապված էր արդյունաբերական հեղափոխության հետ:

Համաշխարհային շուկան բնութագրվում է ***ապրանքաշրջանառության ծավալով, ապրանքային կառուցվածքով և աշխարհագրական տեղաբաշխումով:***

1950-2000 թթ. համաշխարհային շուկայի ապրանքաշրջանառությունը 150 մլրդ դոլարից հասել է 7050 մլրդ դոլարի (աճել է մոտ 47 անգամ) և գերազանցել արտադրության աճի տեմպերը:

Ապրանքային կառուցվածքում մեծացել է մեքենասարքավորումների բաժինը: Ներկայում համաշխարհային առևտրի 75 տոկոսը կազմում է պատրաստի արտադրանքը, որի առաջնային տեղերն զբաղեցնում են ավտոմեքենաները, էլեկտրոնային ապրանքները, մեքենասարքավորումները, էլեկտրասարքավորումները և հագուստը: Հումքի և կիսաֆաբրիկատների բաժինը 55 տոկոսից իջել է մինչև 25 տոկոս: Նույն ժամանակում փոխվել է ՀՇ ճյուղային կառուցվածքը: Ավելացել է հումքային ապրանքների առևտուրը: 2000 թ. պողպատի ձուլումը կազմել է 847 մլն տոննա 1990 թ.-ի 745 մլն տոննայի համեմատ: Երկաթի խոշոր արտահանողներ են դարձել Ավստրալիան, Բրազիլիան, Կանադան, Հնդկաստանը, ՀԱՀ-ը: Ավելացել է պարենի որոշ տեսակների մատակարարումը: Պարենամթերքի արտահանումն աստիճանաբար պակասում է հետևյալ պատճառներով.

- պարենամթերքի աճի տեմպը չի գերազանցում բնակչության աճի տեմպերին,
- ԳՏԱ կիրառումը գյուղատնտեսության մեջ ավելի դանդաղ է իրականացվում,
- պարենամթերքի գներն ավելի դանդաղ են փոփոխվում, քան ոչ պարենային ապրանքներինը:

Տնտեսագիտական տեսակետից շուկան փոխանակության կատեգորիա է, և այստեղ տնտեսական օրենքներից հիմնականում կիրառվում է ***առաջարկի և պահանջարկի օրենքը,*** որպես արտադրության և սպառման միջև հավասարակշռվածության պահպանման օբյեկտիվ անհրաժեշտություն: Անկախ կոնկրետ ձևից, շուկան հիմնվում է ***գնի, առաջարկի և պահանջարկի, մրցակցության*** վրա: ***Գինն*** ապրանքների ծավալների փոփոխության կողմնորոշիչն է, ***պահանջարկը՝*** սպառողի

կողմից ապրանքների և ծառայությունների նկատմամբ պահանջը, ***առաջարկը՝*** ապրանքների այն քանակը, որը տվյալ ժամանակում առկա է վաճառքում սահմանված գների պայմաններում: ***Մրցակցությունը շուկայական մեխանիզմի շարժիչ ուժն է:*** Յուրաքանչյուր արտադրող այլ արտադրողի ***մրցակիցն*** է: Շուկայական մեխանիզմն ավելի արդյունավետ է գործում ազատ մրցակցության պայմաններում:

Համաշխարհային շուկան հակադարձ ազդեցություն է թողնում արտադրության վրա՝ կողմնորոշելով, թե ինչ, ինչքան և ում համար պետք է արտադրել: Այն ազգային շուկաներից տարբերվում է հետևյալով.

- եթե ազգային շուկաներում ապրանքների շարժը պայմանավորված է արտադրողների և երկրի շրջանների միջև կապով, ապա ՀՇ-ի համար գոյություն ունեն միջպետական սահմաններ և երկրների արտաքին տնտեսական քաղաքականություն,
- համաշխարհային շուկայում գործում է համաշխարհային գների համակարգ,
- համաշխարհային շուկան զբաղվում է նաև ծառայությունների ու լիցենզիաների առևտրով և կարգավորվում է միջազգային կազմակերպությունների կողմից:

3.6 Համաշխարհային շուկայի դասակարգումը

Շուկայական տնտեսության, ԱՄԲ-ի, միջազգային ապրանքադրամական և երկրների ֆինանսավարկային հարաբերությունների բազայի վրա պատմականորեն ձևավորվել է համաշխարհային կապիտալիստական համակարգը, որի հիման վրա՝ համաշխարհային կապիտալիստական շուկան: Այն հիմնականում գործում է տարածքային (ամերիկյան, եվրոպական, ասիական) սկզբունքով: Բոլոր ժամանակներում ՀՇ-ում ***գերակշռող դիրք*** են ունեցել զարգացած երկրները: Համաշխարհային ապրանքաշրջանառության 47 տոկոսը բաժին է ընկնում Մեծ Բրիտանիային, Գերմանիային, Ֆրանսիային, Իտալիային, Նիդեռլանդներին, Բելգիային, Լյուքսեմբուրգին, Իսպանիային, Շվեյցարիային, Շվեդիային: ***Երկրորդ տեղը*** պատկանում է Ասիային՝ Ճապոնիային, «նոր ինդուստրիալ երկրներին», Չինաստանին և մյուսներին: ***Երրորդ տեղում*** Հյուսիսային Ամերիկան է: ԱՊՀ անդամ երկրների բաժինը համաշխարհային առևտրում կազմում է 4 տոկոս:

Համաշխարհային կապիտալիստական շուկայի բազայի վրա ստեղծվել են տարբեր ազգային մենատիրական միավորումներ, միություններ, «ընդհանուր շուկա» (ազատ առևտրի եվրոպական ասոցիացիա): Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո համաշխարհային շուկան բաժանվել է ***կապիտալիստական*** և ***սոցիալիստական*** շուկաների: Համաշխարհային ***սոցիալիստական շուկան*** (ՀՍՇ) ապ-

ռանքաղրամական հարաբերությունների պլանային համակարգ էր սոցիալիստական երկրների միջև: Նպատակ ուներ փոխադարձ ապրանքաշրջանառության և ծառայությունների միջոցով մասնակից երկրների միջև ստեղծելու տնտեսական և գիտատեխնիկական համագործակցություն: ՀՍԾ բնորոշ գիծն էր ապրանքաշրջանառության պլանային բնույթը: Այս շրջանում աստիճանաբար փոխվում էր ապրանքային կառուցվածքը: Արտահանման և ներմուծման մեջ ավելացել էր արդյունաբերական, մեքենասարքավորումների, քիմիական ապրանքների տեսակարար կշիռը, կրճատվել՝ հումքի, նյութերի, վառելիքի բաժինը: ՀՍԾ գները համապատասխանում էին համաշխարհային շուկայի գներին: Թեև համաշխարհային սոցիալիստական շուկան զարգանում էր, այդուհանդերձ նրա տեսակարար կշիռը համաշխարհային ապրանքաշրջանառության մեջ ցածր էր (արտահանումը՝ մոտ 11, ներմուծումը՝ 10 տոկոս):

Սոցիալիստական համակարգի երկրների միջև մեծ տեսակարար կշիռ ուներ ԽՍՀՄ առևտուրը, որը 1989 թ. տնտեսական կապերի մեջ էր աշխարհի ավելի քան 140 երկրի հետ: Սոցիալիստական համակարգի փլուզումից հետո սոցիալիստական երկրները և միութենական հանրապետություններն անդամագրվել են համաշխարհային տնտեսական համակարգին:

Ըստ արդյունքի բաշխման՝ շուկան լինում է ***արտադրության միջոցների*** և ***սպառման առարկաների իրացման***: Ազգային շուկաները լինում են ***մեծածախ, մանրածախ, աշխատանքի, կապիտալի, տեխնոլոգիաների, ծառայությունների, արժեթղթերի***: Ըստ կազմակերպման մակարդակի՝ շուկաները դասակարգվում են ***ներքին, ազգային, միջազգային*** և ***համաշխարհային տեսակների***:

Ներքին շուկայում հիմնականում վաճառվում են տվյալ երկրում արտադրված ապրանքները:

Ազգային շուկան երկրի ներքին շուկան է, որի մի մասը կողմնորոշվում է դեպի արտասահմանյան շուկա և համալրվում է ներմուծումով:

Միջազգային շուկան ազգային շուկաների այն մասն է, որն անմիջապես կապված է արտասահմանյան շուկաների հետ:

Վերը նշվածից կարելի է եզրակացնել, որ ***ՀՇ-ն երկրների ներքին շուկաների, ինչպես նաև արտադրողների և սպառողների միջև տնտեսական հարաբերությունների ամբողջություն է, որը հիմնված է ինքնակարգավորվող գնային մեխանիզմի վրա***: ՀՇ շրջանակներում ապրանքային առևտրից բացի ընդգրկվում են նաև ծառայությունների միջազգային առևտուրը, կապիտալի միջազգային շարժը, աշխատուժի միջազգային միգրացիան, միջազգային տեղեկատվական փոխանակումները: Այսպիսով, ***համաշխարհային շուկան արտահանվող և ներմուծվող ապրանքների միջազգային հաշվեկշիռ է***: Արտահանման

չափերը որոշվում են երկրի սեփական արտադրության և ներմուծման հանրագումարի ավելցուկի քանակով:

Պարենի շուկայի մեջ մտնում են կենդանական և բուսական ծագում ունեցող ապրանքների, դրանցից պատրաստված կիսաֆաբրիկատների ու պատրաստի արտադրանքների, ձկնապրանքների, սննդամթերքների, հացամթերքների, բուսական և կենդանական յուղերի, ճարպերի, մրգերի և բանջարեղենի, մսի և մսամթերքների, կաթի և կաթնամթերքների, թեյի, սուրճի, շաքարի շուկաները:

Աշխարհի բնակչության մատակարարումը պարենամթերքով զգալի բարելավվել է: 1955 թ. մսի համաշխարհային արտադրությունը մեկ շնչի հաշվով կազմել է 16.5, 2000 թ.՝ 38.5, 2010 թ.՝ 41.2 կգ: Տավարի մսի արտադրողներ և արտահանողներ են ԱՄՆ-ը, Բրազիլիան, Հնդկաստանը, Չինաստանը, Ռուսաստանը, խոզի մսի արտահանողներ՝ ԱՄՆ-ը, Բրազիլիան, Ռուսաստանը, Գերմանիան, Լեհաստանը, Ուկրաինան, Իսպանիան, Նիդեռլանդները, Ֆրանսիան, Կանադան, Մեքսիկան, ոչխարի մսի արտահանողներ՝ Ավստրիան, Չինաստանը, Հնդկաստանը, Թուրքիան, Իրանը, Մոնղոլիան, Արգենտինան, Նոր Զելանդիան, Բրազիլիան և թռչնի մսի արտահանողներ՝ ԱՄՆ-ը, Ճապոնիան, Իտալիան, Մեծ Բրիտանիան, Բրազիլիան, Կանադան և այլ երկրներ: Անասնապահական մթերքների՝ մսի, կաթի, յուղի, ձվի արտադրությամբ և արտահանմամբ առաջատար դիրք ունեն Ասիայի, Լատինական Ամերիկայի, Եվրոպայի երկրները: 2005 թ. համաշխարհային ապրանքային արտահանումը կազմել է ՀՆԱ 20 տոկոսը:

Պարենամթերքի արտահանումը (ներառյալ ոգելից խմիչքը և ծխախոտը) ընթացիկ գներով 1955 թ. 17.4 մլրդ դոլարից 2005 թ. հասել է 388.1 մլրդ դոլարի (աճել է 22.3 անգամ, իսկ տարեկան աճը կազմել՝ 7.2 տոկոս): Սա այն դեպքում, երբ այդ ապրանքների արտահանման բաժինը համաշխարհային ապրանքաշրջանառության մեջ 1955 թ. 20.8 տոկոսից 2005 թ. նվազել է մինչև 6.3 տոկոս, ինչի վրա ազդում են 3 գործոններ.

- պարենամթերքի աճի տեմպերը չեն կարող գերազանցել բնակչության աճի տեմպերին, հատկապես 1 շնչի հաշվով,
- ԳՏԱ-ը գյուղատնտեսության մեջ ավելի դանդաղ է իրականացվում,
- պարենամթերքի գներն ավելի դանդաղ են փոփոխվում, քան մյուս ապրանքների համաշխարհային արտահանման գները:

Եվ երկրները գյուղմթերքների գծով ոչ լրիվ մրցունակ են: Իրենց արտադրանքը միմյանց վաճառում են բարձր գներով և վարում են միասնական ագրարային քաղաքականություն:

Հումքի շուկաները լինում են ***հանքանյութերի, վառելանյութերի*** և ***գյուղատնտեսական հումքի***:

Հումքի համաշխարհային արտահանումն ընթացիկ գներով 2000 թ. 1955 թ. համեմատ ավելացել է 1.7 անգամ: Սակայն բոլոր հումքային ապրանքների համաշխարհային արտահանման բաժինը նույն ժամանակում 18.8-ից նվազել է մինչև 4.5 տոկոս: Պատճառն արտադրության նյութատարության ցածր լինելն էր, հումքի տնտեսումը, արտահանման մեջ բնական հումքին փոխարինող քիմիական, սինթետիկ, պլաստմասսային նյութերի ծավալի ավելացումը:

Հանքանյութերի շուկան բաժանվում է ***մետաղների*** և ***ոչ մետաղային*** հանքանյութերի շուկաների: Մետաղների շուկան իր հերթին բաժանվում է սև և գունավոր մետաղների շուկաների: Զարգացած երկրներն արտահանում են հանքանյութերի 77.0, զարգացողները՝ 18.6 տոկոսը:

Վառելիքի շուկայում որոշիչ դերը պատկանում է նավթարդյունահանմանը: Տարեկան արդյունահանվում է 3270 մլն տոննա նավթ, որից 77 տոկոսը պատկանում է ՕՊԵԿ երկրներին: Նրանց է պատկանում նավթի համաշխարհային պաշարների 40 և գազի 15 տոկոսը: Կարևոր դեր ունեն բնական գազի և քարածուխի շուկաները:

Էներգառեսուրսների համաշխարհային արտահանումը 2000 թ. 1955-ի համեմատ աճել է 65 անգամ՝ միջին տարեկան աճը կազմելով 9.7 տոկոս: Վառելանյութերը 11 տոկոսից նվազել են մինչև 9.6 տոկոս:

1970 թ. էներգետիկ ճգնաժամի պատճառով նավթի մեկ բարելի գինը 1982 թ. 1950-ի համեմատ բարձրացել է 20 անգամ (1.7-33.5 դոլար), իսկ 2000 թ. 1970-ի համեմատ՝ 13 անգամ: 2005 թ. վառելիքի ծավալները ԵՄ 15 անդամ երկրներում կազմել են 124701 հազար տոննա բենզին և 159415 հազար տոննա դիզելային վառելիք: 2005 թ. վառելիքի վաճառքի ամենամեծ ծավալները գրանցվել են Գերմանիայում 35088 և 34642, Իտալիայում՝ 19704 և 28777, Միացյալ Թագավորությունում՝ 25191 և 22252, Իսպանիայում՝ 10445 հազար տոննա բենզին և 26447 հազար տոննա դիզվառելիք: Նշված չորս երկրներին բաժին է ընկնում ԵՄ տարածքում վաճառված բենզինի և դիզելային վառելիքի 63.1 տոկոսը:

Պատրաստի արտադրանքների և կիսաֆաբրիկատների համաշխարհային շուկայում արտահանումն ընթացիկ գներով 2000 թ. 1950 թ. համեմատ ավելացել է 115 անգամ (41.5-4485.0 մլրդ դոլար): Միջին տարեկան աճը կազմում է 11 տոկոս, թեև տարբեր արտադրատեսակների արտահանման աճի ցուցանիշները տարբեր են՝ քիմիական ապրանքներինը՝ 4.6-9.2, մեքենաշինական արտադրանքներինը՝ 14.3-41.3, տեքստիլ ապրանքներինը՝ 5.8-6.0, մետաղներինը՝ 6.1-4.2 տոկոս:

Ապրանքների և ***ծառայությունների*** ՀՇ տարողությունը համապատասխանում է համաշխարհային ՀՆԱ-ին: 2000 թ. 1950-ի համեմատ գյուղատնտեսության բաժինը ՀՆԱ-ում «Մեծ ութնյակի» երկրներում իջել է 8.9-1.9, արդյունահանվող արդյունաբերությունը՝ 3.1-1.1, վերամշակման արդյունաբերությունը՝ 30.6-20.4 տոկոս: Սակայն ՀԱ-ում ավելացել են բարդ արտադրատեսակների ծավալը:

Գյուղատնտեսությունը նյութական արտադրության գլխավոր ճյուղն է: Այս ոլորտում հողը համարվում է աշխատանքի առարկա և արտադրության հիմնական միջոց: Զարգացած երկրներում գյուղատնտեսությամբ զբաղված է ակտիվ բնակչության 10, առանձին երկրներում՝ ավելի քիչ, զարգացող երկրներում՝ 60-80 տոկոսը: Չինաստանում գյուղատնտեսության ոլորտում զբաղված է 450, ԱՄՆ-ում՝ 3 մլն մարդ: Այս ոլորտում խնդիր է ոչ միայն գյուղատնտեսության մեքենայացման գործոնը, այլև գյուղատնտեսության վարման տարբեր տիպերը:

Գյուղատնտեսության զարգացման բնական նախադրյալներից են ***ագրոկլիման, հողային ռեսուրսները,*** իսկ արդյունավետությունը կախված է ***էքստենսիվ*** և ***ինտենսիվ*** ձևերից: Տարբերվում են գյուղատնտեսության տարբեր տիպեր.

- զարգացած (բարձր արդյունավետությամբ),
- թույլ (ագրարային),
- մեքենայացման և քիմիացման բարձր մակարդակի:

Գյուղատնտեսության վերափոխման հիմնական խնդիրը նոր մշակաբույսերի, անասունների տեսակների աճեցումն է, ժամանակակից տեխնիկայի, պարարտանյութերի, ոռոգման համակարգի կիրառումը:

Գյուղատնտեսական հումքի (փայտանյութ, բամբակ, վուշ, բուրդ, կաշի, մորթի, բնական կաուչուկ և այլն) շուկաները 20-րդ դարավերջին զարգացած երկրներում կազմում էին 70, զարգացող երկրներում՝ 22.5 տոկոս:

Տարեկան համաշխարհային շուկա է դուրս բերվում 200 մլն տոննա հացահատիկ, որից ցորենը կազմում է 90-100, եգիպտացորենը և գարին՝ 60-70 մլն տոննա: Գարի հիմնականում ***արտահանում են*** ԱՄՆ-ը, Կանադան, Ֆրանսիան, Ավստրալիան, Արգենտինան: Ավստրալիան և Կանադան արտահանում են ցորենի բերքի կեսից ավելին: Հացահատիկ ***ներմուծող*** երկրներն են Ճապոնիան (30 մլն տոննա), Եգիպտոսը (10 մլն տոննա), Բրազիլիան (5 մլն տոննա), Ռուսաստանը, Միջին Ասիայի, Անդրկովկասի երկրները:

Հացահատիկի նվազումն ազդում է հացամթերքի, սննդի մյուս արտադրանքների գների աճի վրա: Կարևոր նշանակություն ունեն ***բրնձի, ձիթատու, շաքարատու, բանջարաբոստանային, մշակաբույսերի, սուրճի, այգեգործության արտադրանքների, արևածաղկի, կակաոյի, ձիթենու մշակումը*** և ***արտահանումը***: Արևածաղիկ և ձիթենի մշակում ու արտահանում են Ռուսաստանը, Ուկրաինան, Հարավարևելյան Եվրոպայի երկրները, ԱՄՆ-ը, Արգենտինան, Չինաստանը, Ուրուգվայը, Իտալիան, Իսպանիան, Հունաստանը, Թուրքիան:

Աղյուսակ 3.10

Հացահատիկի համաշխարհային արտադրությունը
(մլն տոննա)

	2005 թ.	2008 թ.
Աշխարհում	624.5	591.8
Ռուսաստանում	47.7	43.1
Ուկրաինայում	18.7	13.8
Կանադայում	26.8	26.3
ԱՄՆ-ում	57.3	49.3
ԵՄ երկրներում	123.6	117.6
Մնացած երկրներում	350.4	341.7

Բամբակի տարեկան համաշխարհային արտադրությունը կազմում է 18, արտահանումը՝ 5-6 մլն տոննա: Հիմնական արտադրողներ և արտահանողներ են Չինաստանը (տարեկան 4.5 մլն տոննա), Հնդկաստանը (տարեկան 1.6 մլն տոննա), Պակիստանը (տարեկան 1.5 մլն տոննա), Ավստրալիան, Միջին Ասիայի երկրները, Թուրքիան, Իրանը, Իրաքը, Սիրիան, ամերիկյան երկրները՝ Բրազիլիան, Մեքսիկան, Արգենտինան, Վենեսուելան, Պերուն, աֆրիկյան երկրները՝ Եգիպտոսը, Սուդանը, Եթովպիան և այլն: Հիմնական ներմուծողներ են Ճապոնիան, Կորեան, Թայլանդը, Ինդոնեզիան, Իտալիան, Գերմանիան, Ֆրանսիան, Լեհաստանը, Չեխիան և այլն:

Ըստ ՄԱԿ-ի ու Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) համատեղ զեկույցի՝ 2011-2020 թթ. պարենամթերքի բարձր գները, ինչպես նաև հումքային շուկաների անկայունությունը կպահպանվեն, իսկ մսի և հացահատիկի գները, միջին հաշվով, կբարձրանան 20-30 տոկոսով: Գյուղատնտեսական արտադրանքի ամենամյա աճը կկազմի 1.7 տոկոս անցած տասնամյակի 2.6 տոկոսի համեմատ: Մեկ շնչին բաժին ընկնող պարենամթերքի սպառման ամենաարագ տեմպերը կարձանագրվեն Արևելյան Եվրոպայում, Ասիայում և Լատինական Ամերիկայում: Այս առիթով ՄԱԿ-ի Պարենամթերքի և գյուղատնտեսության կազմակերպությունը (ՊԳԿ) և ՏՀԶԿ-ը դիմել են կառավարություններին՝ շուկաների թափանցիկությունն ապահովելու, ներդրումների հոսքերը խթանելու կոչով:

ԳԼՈՒԽ 4
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲՈՐՍԱՆԵՐ, ԱՃՈՒՐԴՆԵՐ, ՏՈՆԱՎԱՃԱՌՆԵՐ ԵՎ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍՆԵՐ

4.1 Միջազգային առևտրային բորսաներ

Միջազգային առևտրային բորսաները (ՄԱԲ) մշտական գործող շուկաների հատուկ ձև են, որտեղ իրականացվում են միատեսակ որակի, համասեռ հատկանիշի, միմյանց փոխարինող հումքային և պարենային ապրանքների զանգվածային առք ու վաճառքի գործարքներ: ՄԱԲ հիմքում ԱՄԲ-ն է: Ապրանքային առաջին միջազգային բորսան կազմակերպվել է 17-րդ դարում Ամստերդամում (Հոլանդիա) և աստիճանաբար տարածվել է տարբեր երկրներում:

Առևտրային բորսաները կազմակերպվում են բաժնետիրական ընկերությունների ձևով: Հետևաբար, բորսաներում գործարքներ կարող են կնքել միայն անդամ բաժնետերերը: Բորսայի անդամները ներդրած կապիտալի դիմաց շահութաբաժին չեն ստանում: Նրանց շահույթը գոյանում է կատարած գործարքների դիմաց հաճախորդներից ստացած վարձատրությունից: Բորսայի անդամները կոչվում են ***բրոկերներ:*** Բորսան բրոկերներին ապահովում է աշխատատեղերով, կապի միջոցներով, կազմակերպում է գործառնությունների հաշվառում, որոշում բորսայի գները, մշակում տիպային պայմանագրեր, վարում վեճերի արբիտրաժային քննարկումներ: Ապրանքային բորսաներում ստեղծվում են մասնագիտացած կոմիտեներ, որոնք ղեկավարում են բորսային խորհուրդները նախագահի գլխավորությամբ: Ներկայում առևտրական բորսաներ գործում են բոլոր երկրներում: Դրանց միջոցով իրացվում է հումքային և պարենային ապրանքների համաշխարհային առևտրի մոտ 20 տոկոսը: Բրոկերները բորսաներում ապրանքներ գնում և վաճառում են՝ հաճախորդների հետ նախօրոք պայմանավորվելով: Գործարքների 5-10 տոկոսը կատարվում է ***իրական (ռեալ)*** ապրանքներով՝ վաճառողների կողմից ապրանքը բորսա առաքելով, որտեղից և գնորդներն այն ստանում են, իսկ 90-95 տոկոսը՝ ***ապառիկ (ֆյուչերային)*** ձևով: Ապառիկ գործարքով գնումների մոտ 80 տոկոսը կատարվում է վերավաճառքի նպատակով, իսկ 20-ը՝ ապրանքների գների փոփոխությունից առաջացած կորուստների փակման համար: Եթե գործարքները կնքվում են երկար ժամանակով, կոչվում են ***«ֆորվարդ» (հետագա):*** Քանի որ ժամանակի ընթացքում բորսային գները կարող են փոփոխվել, «ֆորվարդ» գործարքների գները սահմանվում են իրական գործարքների գներին համապատասխան ճշգրտումով:

Միջազգային բորսաներում ապրանքները գնվում և վաճառվում են հաստատված նմուշներով և ստանդարտներով: Գործարքների կնքումը տեղի է ունենում տիպային կոնտրակտներով, որոնցում նշվում են բորսայի կողմից սահմանված ապրանքների քանակը, տեսակը, մակ-

նիշը, մատակարարման ժամկետը և այլ ցուցանիշներ: Ըստ բորսայի կանոնների՝ մատակարարումը պետք է կատարվի կնքվելուց հետո 15 օրվա ընթացքում: Ապրանքների մատակարարումը կատարվում է կոնտրակտի կնքման պահին արձանագրված գներով: Ի տարբերություն իրական գործարքների, ապառիկ գործարքներն ապրանքների մատակարարման կամ ընդունման վերաբերյալ կողմերի համար պարտավորություններ չեն նախատեսում: Այստեղ գնորդը չի շտապում վճարել գնած ապրանքի արժեքը կամ վաճառողը՝ ստանալ անհրաժեշտ գումարը: Պարզապես գործարքի արդյունքը ոչ թե իրական ապրանքի դիմաց ստացված գումարն է, այլ կոնտրակտի կնքման և իրացման օրերի գների տարբերության հաշվարկը: Օրինակ՝ վաճառողը 3 ամսով բորսային հանձնել է պղինձ՝ մեկ տոննան 460 ֆունտ ստեռլինգով: Եթե այդ ընթացքում պղնձի մեկ տոննայի գինը բորսայում բարձրացել է 5 ֆունտ ստեռլինգով, ապա բորսան վաճառողին պետք է վճարի գնի տարբերությունը: Վճարումը կատարվում է հետադարձ գործարքի ձևով:

Միջազգային ապրանքային բորսաների առք ու վաճառքի առարկա համարվում են գյուղատնտեսական արտադրության, հանքահումքային և այլ ապրանքների, ինչպես նաև կիսաֆաբրիկատների և պատրաստի արտադրանքների կոնտրակտները:

Համաշխարհային բորսային առևտրով իրացվում են գյուղատնտեսության և անտառային տնտեսության արտադրանքներ, բնական կաուչուկ, կակաո, սուրճ, տեքստիլ հումք, էներգակիրներ, նավթային հանքահումք և նավթամթերքներ, դիզելային վառելանյութ, գունավոր մետաղներ և այլն: 1992 թ. ՌԴ-ում ընդունվել է «Ապրանքային բորսաների և բորսային առևտրի մասին» օրենքը, և ձևավորվել են ապրանքային 92 բորսաներ, բայց գործում էին միայն Սանկտ Պետերբուրգի բորսան և Կենտրոնական ունիվերսալ ապրանքային բորսան Մոսկվայում:

Ապրանքային բորսաների գործունեության նպատակը բնակչությանը սպառման ապրանքներով բավարարելն է, իրական ապրանքների առքն ու վաճառքը, հետևաբար, բորսային առևտրում չեն ընդգրկվում արվեստի գործեր, արտադրական և բնակելի շենքեր, գիտական նվաճումներ և այլն: Բորսային ապրանքներ հիմնականում լինում են գունավոր մետաղները, գյուղատնտեսական հումքային և պարենային ապրանքները (բնական մետաքս, բամբակ, բնական կաուչուկ, շաքար, հացահատիկ և այլն): Ժամանակակից մասնագիտացած բորսաները տեղաբաշխված են հետևյալ կերպ.

- գունավոր մետաղների (Լոնդոն, Նյու Յորք),
- բնական կաուչուկի (Լոնդոն, Նյու Յորք, Ամստերդամ, Սինգապուր),

- բամբակի (Լիվերպուլ, Նյու Յորք, Բոմբեյ, Ալեքսանդրիա, Սան Պաուլո),
- վուշի (Լոնդոն, Կալկաթա),
- հացահատիկի (Լոնդոն, Լիվերպուլ, Անտվերպեն, Միլան, Ռոտերդամ, Չիկագո),
- շաքարի (Լոնդոն, Նյու Յորք, Համբուրգ),
- սուրճի (Նյու Յորք, Լոնդոն, Լիվերպուլ, Ամստերդամ, Համբուրգ, Ռոտերդամ):

4.2 Միջազգային առևտրային աճուրդներ

Միջազգային առևտրական աճուրդը (ՄԱԱ) հատուկ կազմակերպված, պարբերաբար գործող շուկաների որոշակի տեսակ է, որտեղ հրապարակային առևտրի ձևով նախօրոք պայմանավորված ժամանակում և նշանակված վայրում գնորդների կողմից կատարվում է նախնական դիտում, այնուհետև՝ ապրանքների, գույքի հրապարակային վաճառք մրցութային կարգով: Առևտրի աճուրդային ձևը հարմար պայմաններ է ստեղծում ինչպես վաճառողների, այնպես էլ գնորդների համար: Առաջին հերթին, առավելությունն այն է, որ վաճառողը հնարավորություն է ստանում կարճ ժամանակում և առանց միջոցներ ծախսելու գտնելու գնորդների: Իր հերթին գնորդը կարող է դիտել մեծ քանակով ցուցադրական նմուշներ և ընտրել անհրաժեշտ ապրանքներ: Աճուրդի կանոնները շարադրվում են մասնակիցներին տրված տեղեկատվական նյութերում: Տարբեր աճուրդների համար առավել կարևոր պայմաններ են ապրանքների ընդունման ժամանակը, վաճառքի կազմակերպումը, պայմանագրերի ձևակերպման և ապրանքների մատակարարման կարգը: Աճուրդի կանոններում նշվում է, որ աճուրդներին մասնակցելու իրավունք չունեն պետական հիմնարկ-ձեռնարկությունները, իշխանության ներկայացուցիչները:

Աճուրդներում վաճառվում են օրիգինալ նմուշներ: Սա բացառում է միատեսակ ապրանքների փոխանակումը: Այդ պատճառով աճուրդի ապրանքները մինչև վաճառքը պետք է դիտվեն գնորդների կողմից: Աճուրդային յուրաքանչյուր ապրանքատեսակի համար կան առանձին կենտրոններ: Այսպես, մորթի և մուշտակեղեն վաճառելու նպատակով ամեն տարի կազմակերպվում է ավելի քան 150 միջազգային աճուրդ, սակայն հիմնական կենտրոններն են Նյու Յորքը, Մոնրեալը, Լոնդոնը, Կոպենհագենը, Օսլոն, Ստոկհոլմը, Սանկտ Պետերբուրգը: Բրդի աճուրդի հիմնական կենտրոններն են Լոնդոնը, Լիվերպուլը, Մելբուրնը, Սիդնեյը և այլն: Հարկ է նշել, որ տարբեր երկրների և ապրանքների աճուրդների կանոնները տարբեր են՝ պայմանավորված աճուրդի կազմակերպման և ապրանքատեսակի իրացման առանձնահատկություններով:

Կախված ապրանքների հատկանիշներից, բնույթից, կազմակերպման առանձնահատկություններից՝ **աճուրդի ձևերը** տարբեր են, քանի որ աճուրդային առևտուրն իրականացնում են.

- աճուրդի մասնագիտացած ընկերությունները,
- աճուրդի միջնորդ կոմիսիոն ընկերությունները,
- կոոպերատիվները կամ ֆերմերային միություններին պատկանող աճուրդային ընկերությունները:

Աճուրդի մասնագիտացած ընկերություններն աճուրդ կազմակերպում են ինչպես իրենց հաշվին, այնպես էլ կոմիսիոն սկզբունքներով: Նրանք իրենց վրա են վերցնում աճուրդի նախապատրաստման և կազմակերպման բոլոր գործառույթները:

Աճուրդի միջնորդ կոմիսիոն ընկերությունները լայն տարածում են ստացել մորթի-մուշտակեղենի, բրդի, թեյի, ծխախոտի և այլ ապրանքների առևտրում: Նրանք միաժամանակ կարող են հանդես գալ որպես միջնորդ ներկայացուցիչ վաճառողի և գնորդի միջև:

Կոոպերատիվներին կամ ֆերմերային միություններին պատկանող աճուրդային ընկերությունները տարածված են սկանդինավյան երկրներում: Դանիան, Նորվեգիան, Շվեդիան ունեն մուշտակեղենի մենաշնորհ վաճառքի մեկական ընկերություն:

Միջազգային աճուրդներ կազմակերպվում են տարեկան 2-4 անգամ առևտրական խոշոր կենտրոններում: Աճուրդի կազմակերպումն իրականացվում է 4 փուլով.

- նախապատրաստում,
- ապրանքների դիտում,
- անցկացում,
- գործարքների ձևակերպում և մատակարարում:

Աճուրդի նախապատրաստումը սկսվում է ապրանքների ցուցանմուշների ցուցադրումից: ***Դիտումը*** ենթադրում է գնորդի մասնակցությունն աճուրդին: Աճուրդի անցկացումը տեղի է ունենում աճուրդի մասնագիտացած սրահում՝ նախօրոք պայմանավորված օրը և ժամին: Աճուրդավարի կողմից հայտարարվում է վաճառքի սկզբնական գինը՝ մոտավորապես շուկայական գների մակարդակով, իսկ վերջնական գինը որոշվում է ամենաբարձր գինն առաջարկողի կողմից: Եզրափակիչ փուլում կատարվում են աճուրդային գործարքների ձևակերպումը և ապրանքների հանձնումը գնորդներին:

Աճուրդներ կազմակերպվում են նաև երկրի ներսում, և դրանք միջազգային բնույթ չեն կրում: Աճուրդային վաճառքը լինում է ***հարկադրական***, եթե կազմակերպվում է դատական կամ իշխանության օրգանների կողմից՝ մեղավորից պարտքերը գանձելու համար: Հարկադրական աճուրդ կազմակերպվում է նաև անտեր, ժառանգության իրավունքը պետությանն անցած, մաքսատանը բռնագրավված, գրավ դրված և հետ չգնված ապրանքները վաճառելու նպատակով:

Լինում են ***կամավոր աճուրդներ,*** որոնք կազմակերպվում են գույքի, ապրանքի տիրոջ նախաձեռնությամբ՝ առավել շահութաբեր վաճառքի նպատակով:

ՀՀ կառավարության 1998 թ. հունիսի 25-ի N 387 որոշմամբ հաստատված է պետական գույքի՝ աճուրդով մասնավորեցման կարգը: Սահմանվել են աճուրդի ձևերը, մասնավորեցվող գույքի մեկնարկային գինը, աճուրդի իրականացման ժամկետները, ինչպես նաև աճուրդով մասնավորեցման ենթակա ընկերության պարտավորությունները որոշման ընդունման պահին՝ ներառյալ հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարումների գումարները: Աճուրդի մասնակցության վճարը հաշվարկվում է տվյալ աճուրդում վաճառվելիք գույքի մեկնարկային գների 5 տոկոսի չափով: Եթե աճուրդի մասնակիցը տվյալ աճուրդի ժամանակ գույք չի գնել, ապա նրա մուծած մասնակցության վճարը վերադարձվում է 10 օրվա ընթացքում:

Աճուրդով մասնավորեցման մասին տրվում է տեղեկատվություն, ուր նշվում են.

- մասնավորեցվող պետական գույքի անվանումը,
- աճուրդով վաճառքի մեկնարկային գինը,
- աճուրդի անցկացման ձևը, վայրը, ամսաթիվը:

Աճուրդը լինում է ***դասական, հոլանդական, լոտային:***

Դասական աճուրդն անցկացնում է աճուրդավարը, որը հրապարակում է մեկնարկային գինը, բնութագրում վաճառվող գույքը: Աճուրդը շարունակվում է այնքան ժամանակ, մինչև մասնակիցներից մեկն առաջարկում է առավելագույն գին: Նա բարձրացնում է իր համարը՝ տալով համաձայնություն հայտարարված գնով գույք ձեռք բերելու մասին, որից հետո աճուրդը դադարեցվում է:

Հոլանդական աճուրդն անցկացնող աճուրդավարը հրապարակում է գույքի բնութագիրը, մեկնարկային գինը, աճուրդի քայլի չափը, որը հավասար է մեկնարկային գնի 5 տոկոսին: Նշված քայլերով մեկնարկային գինն իջեցվում է այնքան, մինչև մասնակիցներից մեկը հայտարարված գնով գույքը ձեռք բերելու ցանկություն է հայտնում: Վաճառքի գինը չպետք է իջնի մեկնարկային գնի 50 տոկոսից:

Լոտային աճուրդի դեպքում լոտերը[36] (բաժնետոմսեր) վաճառվում են դասական աճուրդի ձևով: Գույքի լոտերի՝ հոլանդական աճուրդի ձևով մասնավորեցման դեպքում վաճառքը կատարվում է հոլանդական աճուրդի սահմանած կարգով:

Աճուրդը համարվում է ***չկայացած,*** եթե հաղթողը սահմանված ժամկետում չի վճարում և հրաժարվում է գույքը գնելուց կամ եթե աճուրդին չի ներկայանում ոչ մի գնորդ: Աճուրդում հաղթողը պարտավոր է 10 օրվա ընթացքում ամբողջությամբ վճարել գույքի արժեքը:

[36] Լոտը միասեռ ապրանքների խմբի աճուրդային վաճառքն է բաժնետոմսերով:

4.3 Առևտրաարդյունաբերական տոնավաճառներ և ցուցահանդեսներ

Առևտրաարդյունաբերական տոնավաճառները տարվա որոշակի ժամանակում որևէ կենտրոնում պարբերաբար կազմակերպվող շուկաներն են: Արտադրության զարգացմանը զուգընթաց ապրանքային խոշոր խմբաքանակների տեղաշարժերը վերածվում են տոնավաճառների և ցուցահանդեսների:

1950-ական թվականներից սկսել են զարգանալ միջազգային տոնավաճառները: Կազմակերպման նպատակն էր արտադրության նմուշներ, տեխնիկայի նվաճումներ ցուցադրելու միջոցով կնքել առևտրական պայմանագրեր: Տոնավաճառները կազմակերպվում են համաշխարհային, միջազգային, տարածաշրջանային, ազգային մակարդակներով՝ տարաբնույթ, բազմաճյուղ, մասնագիտացած ձևերով: Միջազգային առավել խոշոր տոնավաճառներ կազմակերպվել են Լայպցիգում, Պոզնանում, Զագրեբում, Փարիզում, Լոնդոնում, Բռնոյում, Բուդապեշտում, Բուխարեստում, Հանովերում, Պլովդիվում, Միլանում, Տորոնտոյում, Իզմիրում, Դամասկոսում, Բաղդադում: Միջազգային տոնավաճառների գործունեությունը ղեկավարում է ***Միջազգային տոնավաճառների միությունը (ՄՏՄ)***, որը ստեղծվել է Փարիզում 1925 թ.:

ԽՍՀՄ-ում տոնավաճառներ կազմակերպվել են 1960 թվականից հետո՝ արտադրության միջոցների և ժողովրդական սպառման ապրանքների ֆոնդային պայմանագրերի կնքման նպատակով: Կազմակերպվում էին միութենական, միջհանրապետական, հանրապետական մակարդակով ու նպաստում արդյունաբերության և առևտրի կապերի ամրապնդմանը:

Առևտրաարդյունաբերական ցուցահանդեսները, ի տարբերություն տոնավաճառների, կազմակերպվում են ոչ հաճախ՝ նպատակ ունենալով ցուցադրելու արտադրության տարբեր բնագավառների, գիտության և տեխնիկայի, արվեստի նվաճումները: Միջազգային ցուցահանդեսներում կնքվող հիմնական գործարքները վերաբերում են մեքենասարքավորումների, երկարատև օգտագործման և լայն սպառման ապրանքների վաճառքին:

Ըստ մասնակիցների կազմի և տնտեսական նշանակության՝ գործում են ազգային, միջազգային, անհատական, մասնագիտացած, ունիվերսալ ցուցահանդեսներ, որոնք լինում են ***մշտական գործող*** և ***ժամանակավոր***, նաև ***շարժական*** (տեղափոխվող):

Միջազգային ցուցահանդեսները նպաստում են միջազգային առևտրի զարգացմանը, քանի որ դրանց մասնակցում են տարբեր երկրների առևտրական կազմակերպություններ, ընկերություններ և անհատ ձեռներեցներ, որոնց միջև ստեղծվում են նոր հարաբերություններ: Այստեղ ցուցադրվում են տարբեր երկրներում արտադրված մեծաքանակ ապրանքային նմուշներ: Ցուցահանդեսներում աստիճանաբար ընդգրկվում են նոր երկրներ, նոր հաճախորդներ: Ցուցահանդեսի աշխատանքներին մասնակցելու, հարցաթերթիկների միջոցով պահանջարկի և առաջարկի հարաբերությունը որոշելու համար տարբեր երկրներից հրավիրվում են առևտրական գործակալներ, սոցիոլոգներ:

Ցուցահանդեսները քաղաքական լծակ, մարքեթինգի և գովազդի միջոց են արտադրության ու տնտեսության զարգացման համար: Դրանք օգտագործվում են նաև ՀՏ համակարգում: Հայաստանի ցուցահանդեսային շուկան կապող օղակ է Եվրոպայի և Ասիայի միջև, տեղեկատվության և հաղորդակցության համալիր միջոց: Հայաստանում տարեկան անցկացվում է 10-12 միջազգային ցուցահանդես, որոնք ընդարձակում են տնտեսական պահանջարկը: Միայն 2005 թ.-ի սեպտեմբերի 15-17-ը Երևանի մարզահամերգային համալիրում կազմակերպվել է «Էքսպո-Ֆորում-2005» միջազգային մասնագիտացած 6 ցուցահանդես («Համագործակցություն-2005», «ԱՄՆ և Չինաստանի օրեր» և այլն), որոնք կարևոր դեր են խաղացել մեր հանրապետության տնտեսության համար: 2006 թ.-ի հոկտեմբերի 31-ին Հայաստանի առևտրաարդյունաբերական պալատի և «Ագրոբիզնեսի զարգացման կենտրոնի» նախաձեռնությամբ Երևանում բացվել է «Արմպրոդէքսպո-2006» վեցերորդ միջազգային ցուցահանդեսը, որտեղ ներկայացված էին Հայաստանի 62 տարբեր ընկերությունների և գործարանների արտադրատեսակներ՝ կաթնամթերք, մսամթերք, չրեղեն, պահածոներ, քաղցրավենիք, սիգարետներ, խմիչքների մեծ տեսականի:

Ցուցահանդեսներն արդյունավետ և նպատակային կազմակերպելու համար անհրաժեշտ է.

1. Ընտրել ցուցահանդեսի կազմակերպման այնպիսի վայր և ժամանակ, որոնք հարմար կլինեն բոլոր մասնակիցներին:
2. Ունենալ տաղավարների, ցուցասրահների տեղաբաշխման պլան-սխեմա, որպեսզի կիրառվեն ցուցադրման բոլոր ձևերը, և ցուցահանդեսը ծառայի արտասահմանյան ընկերությունների, արտադրողների և սպառողների շահերին:
3. Ցուցանմուշները ձևավորել, ապրանքներն ապահովագրել վնասվելուց, կորուստներից:
4. Մասնակիցներին ապահովել տրանսպորտի, կենցաղային, սոցիալական և այլ անհրաժեշտ միջոցներով:
5. Ժամանակին ձևակերպել մաքսային և իրավական փաստաթղթերն ու կազմակերպել փոխադրամիջոցների ընդունումը:
6. Կազմակերպել մեքենասարքավորումների ցուցանմուշների մոնտաժում-ցուցադրում, ավարտից հետո՝ ապամոնտաժում, փաթեթավորում և հետադարձ տրանսպորտավորում:
7. Ամփոփել ցուցահանդեսի արդյունքները և գնահատել աշխատանքները:

Ցուցահանդեսների ընթացքում պետք է կազմակերպել գիտական կոնֆերանսներ, կոնսուլտացիաներ, խորհրդակցություններ, փորձի փոխանակումներ, ցուցահանդեսի ընթացքը լուսաբանելու համար հրավիրել ԶԼՄ-ների ներկայացուցիչների: Տեխնոլոգիական սարքավորումները ցուցադրելուց բացի՝ պետք է փորձարկելու հնարավորություն ստեղծել՝ ճիշտ ընտրություն կատարելու համար: Բացի վերը նշվածից,՝ արդյունաբերական խոշոր քաղաքների ունիվերսալ խանութներում սպառողական ապրանքների ցուցադրման և վաճառքի նպատակով կազմակերպվում են առևտրային կենտրոններ, որոնք տոնավաճառների նոր տեսակներ են: Դրանք գործում են մեկ շաբաթ (առևտրական շաբաթ), 10 օր (առևտրի տասնօրյակ), 1 ամիս (առևտրի միամսյակ):

ԳԼՈՒԽ 5
ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

5.1 Տեխնոլոգիաների իրացման էությունը, նախադրյալները

ՄՏՀ համակարգում գիտատեխնիկական (ԳՏ) փոխանակումները, համագործակցումն առևտրի, կապիտալի արտահանման, մյուս հարաբերությունների հետ միասին սկսել են զարգանալ 20-րդ դարի երկրորդ կեսին: Այս հարաբերություններն ամենաերիտասարդ և դինամիկ զարգացող ձևերն են ՄՏՀ-ում:

Միջազգային ԳՏ նվաճումների իրացումը, փոխանակումները մեծ ազդեցություն ունեն ՄՏՀ զարգացման, ապրանքների և ծառայությունների միջազգային առևտրի վրա: Նոր տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս կրճատելու արտադրական ծախսերը, էժանացնելու արտադրանքը, պակասեցնելու ֆիզիկական աշխատանքը:

Տեխնոլոգիաների միջազգային փոխանակումները գիտական նվաճումների միջպետական մատակարարումներ են առևտրի միջոցով և լիցենզիաների ձևակերպումով կամ անհատույց տրամադրում:

«Տեխնոլոգիա» կատեգորիան մեկնաբանվում է.

- որպես ԳՏ գիտելիքների ամբողջություն, կոնստրուկտորական և տեխնիկական գիտությունների հավաքածու, որն օգտագործվում է արտադրության և գիտատեխնիկական նվաճումների ընթացքում,
- որպես գիտական հայտնագործություններ, որոնք նպաստում են մեքենասարքավորումների համաշխարհային շուկայի կառուցվածքի փոփոխությանը:

ԳՏ նվաճումների, տեխնոլոգիաների առքն ու վաճառքը վաղուց անցել են ազգային սահմանները և դարձել միջազգային հարաբերությունների օբյեկտ, տնտեսական համագործակցության կարևոր ձև, որի առաջ գալու նախադրյալներ են ԳՏ զարգացումը, նոր տեխնոլոգիաների կիրառման պահանջը, ԱՄԲ խորացումը, գիտական հետազոտությունների և փորձակոնստրուկտորական մշակումների ստեղծումը: Տեխնոլոգիան ստեղծում է նոր արդյունաբերական ապրանքներ, նյութեր, առարկաներ, մարդուն տանում արագ զարգացման ուղիներով: Շնորհիվ բարձր, որակյալ տեխնոլոգիաների արտադրության և արտահանման՝ երկրի զարգացումն ապահովում է առաջատար դիրք աշխարհում: ԳՏՀ արագացրել է տնտեսությունների զարգացման աճի տեմպերը, հզոր ազդեցություն գործել ժամանակակից արտադրության բոլոր ճյուղերի, համակարգերի, հասարակական հարաբերությունների, կենսամակարդակի և մարդու բնակության միջավայրի վրա:

ԳՏ և սոցիալական շարժը պայմանավորված է արտադրության նոր տեխնիկական բազիսով, ավտոմատացված համակարգերի և կա-

ռավարման կատարելագործումով, տեխնոլոգիաների կառավարման ծրագրավորումով, ԷՀ մեքենաների, միկրոպրոցեսների, տեղեկատվության կատարելագործումով, բարձրորակ աշխատուժով:

ՄՏՀ-ում տեխնոլոգիաների առևտուրը կարևոր տնտեսական գործոն է և տարբերվում է սովորական ապրանքների առևտրից, քանի որ գործարքների օբյեկտներ են հայտնագործությունները, տեխնոլոգիական կատարելագործումները, արտադրության նոր մեթոդները, գիտատեխնիկական նվաճումները:

ԳՏ նվաճումների փոխանակումների, գնումների շրջանակներում առանձնացվում են հետևյալ հիմնական ձևերը.

1. ***Կոմերցիոն*** (տեխնոլոգիաների վաճառք, լիցենզիոն, ինժինիրինգ, կոնսալտինգ, պատենտ):

2. ***Ոչ կոմերցիոն*** (միջազգային տոնավաճառներում, սիմպոզիումում, տեղեկատվության և այլ միջոցներով),

3. ***Ոչ շուկայական*** (արդյունաբերական տեխնոլոգիաների ձեռքբերում այլ ճանապարհներով, կեղծում):

Գործարքի օբյեկտ կարող են դառնալ ոչ միայն ավարտուն գործերը, այլև գիտական հայտնագործությունների, ԳՏ նվաճումների արտադրության և իրացման փուլերում գտնվողները:

20-րդ դարի երկրորդ կեսին ՀՏ հզորությունն ավելացել է 10 անգամ, որի 9/10 մասը կազմում են դարի նվաճումները: Առավելապես արագ են աճել էլեկտրաէներգիայի, մեքենաշինության, հանքարդյունաբերության, քիմիական արդյունաբերության և այլ ճյուղերի զարգացման տեմպերը:

ԱՄՆ-ում վերամշակող արդյունաբերական արտադրանքի 40, Գերմանիայում, Ֆրանսիայում, Իտալիայում, Մեծ Բրիտանիայում 30-35 տոկոսը բաժին է ընկնում տեխնոլոգիական արտադրատեսակներին:

2008 թ. բարձր տեխնոլոգիական արտադրանքների արտահանման ընդհանուր ծավալում ԵՄ երկրների բաժինը կազմել է 17.7, Գերմանիայում՝ 14.8, Ֆրանսիայում՝ 20, Մեծ Բրիտանիայում՝ 22.7, ԱՄՆ-ում՝ 27, Ճապոնիայում՝ 22.8 տոկոս[37]:

ԳՏՀ ազդեցությամբ նոր բովանդակություն են ստացել արտադրության տեղաբաշխման հետևյալ ***գործոնները.***

- երկրի տնտեսաաշխարհագրական դիրքը (կենտրոնական, ծայրամասային, հարևան երկրների, ծովամերձ շրջանների, կլիմայական),
- բնառեսուրսային (հանքարդյունաբերական),
- տրանսպորտային (ջրային, երկաթուղային, հաղորդակցության միջոցների),

[37] Международные экономические отношения, под ред. Архипова А. Ю. и Пузаковой Е. П., Ростов-на-Дону, 2009, стр. 273.

- աշխատանքային ռեսուրսների (աշխատողների որակավորման մակարդակը),
- բնապահպանական (տարածքի, ջրի անբավարարում):

5.2 Տեխնոլոգիաների առևտրի տեսակները և ձևերը

Տեխնոլոգիաների միջազգային փոխանակումների հիմնական ձևերն առանձնանում են ըստ տնտեսական ոլորտների, արտադրական ճյուղերի մասնագիտական բնույթի: Բոլոր տնտեսական ճյուղերի զարգացումը պայմանավորված է գիտատեխնիկական նվաճումների, տեխնոլոգիաների, սարքավորումների, դրանց ռացիոնալ օգտագործման և կատարելագործման բնույթով:

Մեքենաշինությունն աշխարհի արդյունաբերության գլխավոր ճյուղն է, որի զարգացումից են կախված աշխատանքի արտադրողականության բարձրացումը, տեխնիկական առաջընթացի տեմպերը, երկրների պաշտպանությունը, աշխատուժի զբաղվածությունը: Աշխարհի մեքենաշինության մեջ առաջնությունը պատկանում է ԱՄՆ-ին, Ճապոնիային, Գերմանիային: Կարևոր ոլորտներն են ***հաստոցաշինությունը, ավտոմոբիլաշինությունը***: Այս ուղղությամբ առաջավոր երկրներն են ԱՄՆ-ը, Ճապոնիան, Գերմանիան, Ֆրանսիան, Իտալիան, Մեծ Բրիտանիան, Ռուսաստանը, Կանադան, Իսպանիան: Աշխարհում առանձնանում են ավտոմոբիլաշինության երեք տարածաշրջաններ՝ Արևմտյան Եվրոպան՝ 33, Հյուսիսային Ամերիկան՝ 30 և Ճապոնիան՝ 30 տոկոս: Ռուսաստանում տրանսպորտային միջոցների և սարքավորումների արտադրության աճը 2011 թ. հունվար-սեպտեմբերին 2010 թ. նույն ժամանակի համեմատ կազմել է 129.6 տոկոս: Նույն ժամանակում մարդատար ավտոմեքենաների արտադրությունն ավելացել է 54.0, բեռնատար ավտոմեքենաների արտադրությունը՝ 45.1 տոկոսով:

Քիմիական արդյունաբերության գծով առաջատարներ են Եվրոպան, Հյուսիսային Ամերիկան, Արևելյան Ասիան և Հարավային Ասիան: Ռուսաստանում քիմիական արտադրանքների արտահանման ծավալի աճը դարձյալ 2011 թ. հունվար-սեպտեմբերին 2010 թ. նույն ժամանակի համեմատ արժեքային ցուցանիշներով կազմել է 128.5 տոկոս: Ըստ Ռուսաստանի էներգետիկայի նախարարության տվյալների՝ 2011 թ. հունվար-սեպտեմբեր ժամանակահատվածում նավթի արտահանումը կազմել է 181 մլն տոննա կամ 2010 թ. նույն ժամանակում արտահանվածի 96.9 տոկոսը: Արտահանումն ԱՊՀ երկրներ կազմել է 22.6, իսկ այլ երկրներ՝ 158.4 մլն տոննա, ինչը 2010 թ. նույն ժամանակում արտահանվածի համեմատ աճել է մինչև 114.5 տոկոս:

Գազի արդյունահանումը 2011 թ. կազմել է 490 մլրդ խմ կամ 2010 թ. նույն ժամանակում արդյունահանվածի 104.6 տոկոսը: 2011 թ. գների ինդեքսը 2010 թ. համեմատ կազմել է 127 տոկոս:

Ածխի արդյունահանումը 2011 թ. կազմել է 240 մլն տոննա կամ 2010 թ. նույն ժամանակահատվածում արդյունահանվածի 102.3 տոկոսը: Ըստ Ռուսաստանի վիճակագրական տվյալների՝ 2011 թ. հունվար-օգոստոս ամիսներին արտահանվել է 68 մլն տոննա ածուխ, որը կազմում է 2010 թ. նույն ժամանակում արտահանվածի 88.1 տոկոսը:

Երկաթահանքի կոնցենտրատի արտադրությունը 2011 թ. հունվար-օգոստոս ամիսներին կազմել է 77.3 մլն տոննա կամ 2010 թ. նույն ժամանակում արտահանվածի 108.3 տոկոսը[38]:

Էլեկտրոնային առևտուրը տեխնոլոգիաների ամբողջական կոմերցիոն տեղեկատվության կառավարում է էլեկտրոնային եղանակով, այսինքն՝ այս դեպքում առք ու վաճառքի գործընթացն իրականացվում է համացանցի միջոցով:

Էլեկտրոնային առևտուրը բաժանվում է երեք փուլի.

- որոնման՝ արտադրողների, վաճառողների, սպառողների փոխադարձ գործունեություն,
- պատվերի և վճարման՝ գործընթացի իրականացում,
- մատակարարման:

Էլեկտրոնային և օպտիկական սարքավորումների արտադրությունը Ռուսաստանում 2011 թ. 2010-ի համեմատ աճել է 5.8 տոկոսով[39]:

Թեթև արդյունաբերությունն ամենալայն սպառման արտադրանքներ արտադրող ոլորտն է, որի հիմնական ճյուղերն են տեքստիլ, կաշվի, կոշկեղենի այլ արտադրությունները:

Սննդի արդյունաբերության ճյուղերը ձևավորվել են Արևմտյան Եվրոպայում, ԱՄՆ-ում, ասիական երկրներում, իսկ այդ ճյուղերի տեխնոլոգիաների, արտադրության միջոցների առևտուրը զարգացել է ավելի ուշ:

Տեխնոլոգիաների միջազգային փոխանակումները երկրների միջև կարելի է դիտարկել երկու մակարդակով.

- որպես գիտատեխնիկական գիտելիքի գնում և օգտագործում,
- որպես տեխնոլոգիական գործընթացի փորձի փոխանակում:

Տեխնոլոգիաները փոխանակվում են ***առևտրային*** և ***ոչ առևտրային ճանապարհով:***

Առևտրային ճանապարհով փոխանակումներն իրականացվում են.

- ագրեգատների, ավտոմատ և էլեկտրոնային սարքավորումների, հաստոցների, հոսքային գծերի վաճառքի,
- միջազգային համաձայնության շրջանակներում գիտատեխնիկական տեղեկատվության (կոնստրուկտորական, արտոնագրերի, նոու-հաուի, գրանցված ապրանքային նշանների, արդյունաբերական նմուշների) օգտագործման իրավունքի փոխանցման (տրանսֆեր),

[38] Экономист, журнал, 2011, N 11, стр. 58,59.
[39] Экономист, журнал, 2011, N 11, стр. 58.

- ուղղակի ինվեստիցիաների և շինարարությունների կատարման, ընկերությունների, ձեռնարկությունների վերակառուցման,
- նոր տեխնիկա-տեխնոլոգիական մշակումների բազայի վրա մեքենաների և սարքավորումների ստեղծման,
- արտոնագրերի և արտոնագրված սեփական արդյունաբերական լիցենզիաների վաճառքի,
- աշխատուժի վերապատրաստման և ինժինիրինգային ծառայությունների,
- պորտֆելային ինվեստիցիաների, այդ թվում՝ համատեղ ձեռնարկությունների կազմակերպման միջոցով:

Առևտրային ճանապարհով տեխնոլոգիաների փոխանակումները ձևակերպվում են լիցենզային պայմանագրով, որն արտոնագրված տեղեկատվության հետ կարող է բովանդակել մի շարք այլ դրույթներ և պահանջներ:

Ոչ առևտրային ճանապարհով տեխնոլոգիաները փոխանակվում են.

- տեղեկատվության, մասնագիտական գրականության, համակարգչային տվյալների, արտոնագրերի, տեխնոլոգիաների, գովազդների հրապարակումների, գիտական կոնֆերանսների, ցուցահանդեսների, տոնավաճառների, սիմպոզիումների, ակումբների,
- ուսուցման, պրակտիկ գործունեության, գիտնականների ու մասնագետների միգրացիայի և այլնի միջոցով:

ՄՏՀ-ում տեխնոլոգիաները հանդես են գալիս նյութաիրական տեսքով: Հետևաբար, տեխնոլոգիաների միջազգային փոխանակումները կատարվում են ***որպես ապրանքի, կապիտալի*** և ***աշխատուժի արտահանում:***

Որպես ***ապրանք***, տեխնոլոգիաների միջազգային առևտուրը ՄՏՀ ամենադինամիկ ձևերից է և իրականացվում է որպես.

- արտոնագրային միջազգային առևտուր, որով տեխնոլոգիայի տերն օգտագործման իր իրավունքը զիջում է գնորդին,
- լիցենզային համաձայնագրերով միջազգային առևտրական գործարք, որի համաձայն սեփական հայտնագործությունը կամ տեխնիկական գիտելիքները տրամադրվում են գնորդին՝ ժամանակավոր կամ մշտական օգտագործման համար,
- նոու-հաու՝ տեխնիկական փորձի և արտադրության գաղտնիքների (ներառյալ տեխնոլոգիական, տնտեսական, վարչական, ֆինանսական բնույթի տեղեկությունները) տրամադրում,
- ինժինիրինգային ձևով տեխնոլոգիական գիտելիքների տրամադրում՝՝ սարքավորումների ձեռք բերման, մոնտաժման և գնված կամ վարձակալած մեքենաների ու սարքավորումների շահագործման համար:

1980 թ.-ից հետո տեխնոլոգիաների առևտրի համաշխարհային շրջանառությունն աճել է 15 անգամ: Ենթադրվում է, որ 2005 թ.-ից հետո այն ավելի կաճի: Տեխնոլոգիաների փոխանակումը դրանց օգտագործումն է միջազգային համագործակցության ձևով: Նոր տեխնոլոգիաներն օգտագործելու, ծառայություններ տրամադրելու (մոնտաժելու և շահագործելու) համար պահանջվում է ***որակյալ աշխատուժի արտահանում:***

Տեխնոլոգիաների միջազգային առևտուրն իրականացվում է.

1. ***Մատակարարման ձևով:*** Օրինակ՝ ամերիկյան Меткомедиа интернэшн телеком-юникэйшнс ընկերությունը մատակարարել է Флекс ստանդարտի Мобил телеком նոր փեյջինգային տեխնոլոգիան, որի հետ միաժամանակ ռուսական ընկերությունը «Մոտորոլա» ընկերությունից պետք է գնի փեյջերներ և հեռահաղորդակցման սարքավորումներ:

2. ***Ներֆիրմային*** ձևով՝ նոր տեխնոլոգիաներ տրամադրելով անդրազգային կորպորացիաների (ԱԱԿ) շրջանակներում իրենց մասնաճյուղերին կամ դուստր ընկերություններին: Ըստ որոշ տվյալների՝ համաշխարհային առևտրի 2/3-ը բաժին է ընկնում ներֆիրմային լիցենզիաներով փոխանակումներին: Այսպես, ՄԱԿ-ի զեկուցման (1997 թ.) համաձայն՝ գլոբալ ինվեստիցիաների գծով տեխնոլոգիաների բնագավառի արտասահմանյան բոլոր միատերերի (роялти) 70 տոկոսը բաժին է ընկնում գլխավոր ընկերություններին և նրանց արտասահմանյան մասնաճյուղերին (ԱՄՆ-ում և Մեծ Բրիտանիայում՝ 80, Գերմանիայում՝ մինչև 90 տոկոս):

Անդրազգային կորպորացիաների շրջանակներում տեխնոլոգիաների ակտիվ փոխանակումները նպաստում են նոր տեխնոլոգիաների լայն կիրառմանը՝ ԳՀՓԿՄ-ի վրա տեսակարար ծախսերի կրճատմանը, մայր ընկերությունների օգուտների ավելացմանը, քանի որ շատ երկրներում նոր տեխնոլոգիաների ստացման համար վճարումներն ազատվում են հարկումից: Բացի դրանից, տեխնոլոգիաների վաճառքի ժամանակ ԱԱԿ-ի համար հնարավորություն է ստեղծվում հաղթահարելու այս կամ այն երկրի փակ շուկայի արգելքները, քանի որ ընդունող երկրում տեխնոլոգիաներին հաջորդում են ծառայությունները:

3. ***Միջֆիրմային ձևով*** փոխանակումներ կատարելով լիցենզային, կոոպերացիոն, կառավարչական և արտասահմանյան այլ ընկերությունների հետ: Օրինակ՝ ամերիկյան «Քսերոքս» և իտալական «Օլիվետտի» ընկերությունների գործընկերային հարաբերություններում «Օլիվետտիին» տրվում է ամերիկյան թվային և լազերային տեխնոլոգիաների մուտքի իրավունք, իսկ «Քսերոքսին»՝ օֆիսային սարքավորումների բնագավառում «Օլիվետտիի» «Լեքսիկոն» ստորաբաժանման արտադրանքը:

Տեխնոլոգիաների միջազգային փոխանցումները կատարվում են փուլերով, այն է՝

- տեխնոլոգիաների ընտրություն և ձեռք բերում,
- ձեռք բերած տեխնոլոգիաների յուրացում և հարմարեցում,
- տնտեսության մեջ տեխնոլոգիաների օգտագործում և կատարելագործում:

4. ***Միջազգային ռազմավարական միությունների միջոցով:*** Օրինակ՝ ամերիկյան «Ջեներալ էլեկտրոնիքս» և ճապոնական «Տոշիբա» ընկերությունները համատեղ արտադրում են գազային տուրբիններ, ինչպես նաև «Տոշիբա» (Ճապոնիա), «Թոմսոն» (Ֆրանսիա) և «Սիմենս» (ԳԴՀ) ընկերությունները համատեղ մշակում են միկրոսխեմաներ:

5. ***Միջազգային տեխնիկական օգնությունների միջոցով,*** որոնք հիմնականում իրականացվում են ներդրումներով, աջակցություններով, համատեղ գործունեությամբ:

6. ***Միջազգային արտոնագրային-լիցենզային գործարքների միջոցով՝*** մի մասը՝ պայմանագրերով, մյուսը՝ վաճառքի միջոցով: Արտասահմանյան գործընկերներին տրվում է միջազգային լիցենզավորում, որը միջազգային առևտրի հիմնական ձևն է:

Միջազգային տեխնոլոգիաների փոխանակումների առաջատար դերը պատկանում է զարգացած երկրներին՝ ԱՄՆ-ին, Արևմտյան Եվրոպային, Ճապոնիային, նոր ինդուստրիալ երկրներ Չինաստանին, Հնդկաստանին և մյուսներին: 1970-ական թվականներին համաշխարհային տնտեսությունում միջազգային լիցենզային գործարքները կազմում էին 7, իսկ հազարամյակի վերջում՝ 60-65 մլրդ դոլար: 2002 թ. ընդունվել է միջազգային համաձայնագիր՝ առաջիկա 10 տարիներին պետական գիտատեխնիկական քաղաքականություն վարելու մասին:

5.3 Միջազգային արտոնագրային-լիցենզային գործունեություն

Տեխնոլոգիաների լիցենզավորումը, որպես իրավական ինստիտուտ, գործում է շատ երկրներում:

Տեխնոլոգիաների միջազգային առևտուրն իրագործվում է արտոնագրերով և լիցենզիաներով: Երբեմն, որպես արտահանողներ, հանդես են գալիս մեքենաշինական այն ընկերությունները, որոնք իրենց դուստր ձեռնարկությունների կամ արտասահմանյան ընկերությունների միջոցով կարողանում են ապահովել սեփական արտադրության առաջատար դերը: Հանդիսանալով տնտեսական գործունեության կարգավորման մեթոդներից մեկը՝ լիցենզավորման գործընթացը լուծում է հետևյալ ***խնդիրները.***

- ապահովում է պետության և հասարակության տնտեսական շահերը,
- գործունեության իրականացման համար ստեղծում է ազատ պայմաններ,

• պահպանում է սեփականության բոլոր ձևերի հավասարությունը:

ՍՏՀ-ում տեխնոլոգիաների իրացման գործարքներն արդյունավետ են, քանի որ հնարավորություն են տալիս լիովին փոխհատուցելու գիտահետազոտական աշխատանքների ծախսերը՝ միաժամանակ և՛ վաճառողին, և՛ գնորդին բերելով որոշակի եկամուտ: Այսպես, ամերիկյան «Դյուպոն» ընկերությունը ճապոնական «Տոյոռեյոն» ընկերությունից մոտ 10 մլն դոլարով գնել է նեյլոնի արտադրության լիցենզիա, մինչդեռ «Դյուպոն»-ը նույն արտադրության կազմակերպման համար պետք է ծախսեր 27 մլն դոլար: Բացի դրանից, լիցենզիաների գնումը թույլ է տալիս ժամանակ շահել, ինչը ԳԱ մրցակցային պայքարում կարևոր գործոն է:

Միջազգային առևտրի ամբողջ եկամտի 7 տոկոսը ստացվում է տեխնոլոգիաների իրացման գործարքներից: Արտասահմանյան արտոնագրերի օգտագործումը Գերմանիային և Ճապոնիային հնարավորություն է տալիս բարձրացնելու սեփական արտադրանքի մրցունակությունն արտաքին շուկայում: Տեխնոլոգիաների արտահանումներն ընդգրկում են առաջին հերթին արդյունաբերության արագ աճող ճյուղերը (քիմիական, էլեկտրատեխնիկական, մետաղամշակման): Արտաքին առևտրի ավանդական ձևերի հետ լայնորեն օգտագործվում են նաև գիտատեխնիկական տեղեկատվության փոխանակությունը, սարքավորումների երկարաժամկետ վարձակալումը, շինարարության մատակարարումը: Տեխնոլոգիաների փոխանակումներն ապահովում են ոչ միայն արդյունաբերական արտադրանքի աճի բարձր տեմպեր, այլև կատարելագործում են նրա առանձին արտադրատեսակների, հանգույցների պատրաստման և դրանց կոմպլեկտավորող մասերի արտադրությունը:

Լիցենզային համաձայնություն կնքվում է օտարերկրյա և տվյալ երկրի կազմակերպությունների, ընկերությունների միջև՝ արդյունաբերության, շինարարության կամ համալիր սարքավորումների մատակարարման համար: Համաձայնագրում նշվում են լիցենզիայի տեսակը (վճարովի, անվճար), տեխնոլոգիաների օգտագործման ծավալն ու բնույթը (հասարակ, բացարձակ, լրիվ), ձևերը և ժամկետները, գնորդին փաստաթղթեր հանձնելու, տեխնիկական օգնություն ցույց տալու, տեխնոլոգիաները տեղադրելու պայմանները, վճարման չափերը և ձևերը: Լիցենզային համաձայնագրերով հայտնագործությունները և գիտական նվաճումներն իրացվում են նմուշների, տեխնիկական փաստաթղթերի, համալիր սարքավորումների ձևով: Տեխնոլոգիաների տերն անձանց կամ կազմակերպություններին տալիս է արտոնագրված հայտնագործությունների նոու-հաուի՝ տեխնոլոգիաների, արտադրական փորձի օգտագործման իրավունք: Տեխնոլոգիաների կամ

տրամադրված ծառայությունների օգտագործման դիմաց լիցենզիարը ստանում է վարձատրություն կամ փոխհատուցում:

Լիցենզային համաձայնագրերը լինում են ***ինքնուրույն,*** երբ գնորդին տրվում են միայն տեխնոլոգիա կամ տեխնոլոգիական գիտելիքներ, և ***ուղեկցող,*** որի դեպքում տեխնոլոգիական սարքավորումների մատակարարման հետ տրամադրվում են նաև ինժեներախորհրդատվական և տեղադրման ծառայություններ: Համաձայնագրեր կարող են կնքել արտոնագրման իրավունք չունեցող, սակայն լիցենզիա գնող երկրները: Օրինակ՝ Ավստրիայում, Դանիայում, Գերմանիայում, Նիդեռլանդներում, Շվեյցարիայում, Ճապոնիայում արգելված է քիմիական արտադրանքների արտոնագրումը:

Արտոնագրային գործունեությունը բնույթով նման է լիցենզիայի գործարքներին: Գործունեության ժամկետը սահմանվում և չեղյալ է համարվում ազգային օրենսդրությամբ, իսկ հաստատվելիս գանձվում է պետական տուրք: Արտոնագիրը պետք է ունենա տեխնիկատնտեսական բարձր ցուցանիշներ և համապատասխանի համաշխարհային նվաճումներին: Որպեսզի արտաքին շուկայում արտոնագիրը լինի մրցունակ, պետք է կատարվի գիտական, փորձակոնստրուկտորական և նախագծատեխնոլոգիական աշխատանքների հետազոտություն:

Զարգացած երկրների առաջատար ընկերությունները, իրենց արտոնագրային-լիցենզային գործունեությունը կազմակերպելիս, նպատակ ունեն.

• պահպանելու առևտրական գործարքները ներքին և արտաքին շուկաներում,

• զարգացնելու արտադրության միջազգային մասնագիտացումը և կոոպերացումը,

• կազմակերպելու միջազգային ցուցահանդեսներ, գիտական կոնֆերանսներ,

• գովազդելու ունեցած նվաճումները, ստանալու պատվերներ, փոխանակելու գիտական մտքեր, մասնագետների, մասնագիտական փորձ,

• ձեռք բերելու համագործակցություն, փոխանակելու արտոնագրեր:

Գործնականում կիրառվում է ***լիցենզային վճարումների*** երկու հիմնական տեսակ՝ ***պարբերաբար վճարում,*** որի չափը կախված է լիցենզիայի օգտագործման տնտեսական արդյունքից, և ***միանվագ*** վճարում, որը ժամանակի առումով կապված չէ լիցենզիայի փաստացի օգտագործման հետ, այլ սահմանված է նախօրոք՝ փորձագիտական գնահատումների հիման վրա: Միջազգային պրակտիկայում հաճախ լիցենզային վճարումը կատարվում է գնորդի կողմից փոխհատուցման ձևով՝ արժեքի 5-20 տոկոսի չափով, թեև որոշ դեպքերում այն կարող է նաև բարձր լինել: Ելնելով տեխնոլոգիաների փոխանակումների

նպատակից, նյութական և աշխատանքային ծախսերից, խնայողության և սոցիալական խնդիրների լուծումներից՝ հնարավոր է օգտվել վճարման *ակցեպտ ձևից*: Այսպիսով, արտոնագրային-լիցենզային գործունեության վերջնական արդյունքը գնումների դիմաց վճարումն է, որի համար կարևոր նշանակություն ունեն դոլարի արժեքի տատանումը, ինչպես նաև գիտահետազոտական, տեխնոլոգիական և այլ աշխատանքների արժեքների գնահատումը:

Տեխնոլոգիաների միջազգային առևտրում լիցենզիաները լինում են *բաց* և *անհատական* (հատուկ): *Բաց լիցենզիաների* դեպքում տեխնոլոգիաների արտահանման և ներմուծման մասին թույլտվությունը պետական համապատասխան մարմինները հրապարակում են մամուլում: *Անհատական լիցենզիա* տրվում է առանձին անձանց՝ մատակարարվող ապրանքների հետ միասին, որպես ապրանքը պետական սահմանով անցկացնելու թույլտվություն:

Լիցենզային համաձայնությունները լինում են *բացառիկ, հասարակ* և *լրիվ*:

Բացառիկ համաձայնությունը տարածված ձև է և բնորոշ է ոչ սերիական ապրանքներին: Այս դեպքում լիցենզիատը տեխնոլոգիաների օգտագործման բացառիկ իրավունք ստանում է նախօրոք պայմանավորվածության հիման վրա, և լիցենզիայի սեփականատերն այդ ընթացքում իրավունք չունի այն տրամադրելու ուրիշի:

Հասարակ համաձայնությունը լիցենզիատին իրավունք է տալիս տեխնոլոգիան օգտագործելու որոշակի պայմաններում: Սակայն լիցենզիայի տերն իրավունք ունի ինչպես օգտագործելու, այնպես էլ նույն պայմանով ուրիշ գնորդներին տալու: Հասարակ լիցենզիայի համաձայնությունն ավելի շատ օգտագործվում է լայն սպառման ապրանքների արտադրության ոլորտում (դեղամիջոցներ, սննդային ապրանքներ և այլն):

Լրիվ համաձայնության դեպքում պայմանագրի ժամկետում լիցենզիա գնողին տեխնոլոգիաները լրիվ օգտագործելու իրավունք է տրվում, իսկ վաճառողը զրկվում է այդ իրավունքից: Փաստորեն այս ձևը համարվում է արտոնագրի վաճառք: *Լրիվ լիցենզիայի պայմանագիր* կնքվում է այն դեպքում, երբ լիցենզիայի տերն ինքնուրույն չի կարող օբյեկտն օգտագործել կամ էլ որոնել այլ գնորդների:

Տեխնոլոգիաների առևտրում փորձարկվում է նաև *խաչաձև* լիցենզավորումը, երբ մեկը մյուսին լրացնող սեփական օբյեկտները փոխանակվում կամ օգտագործվում են համատեղ:

5.4 Տեխնոլոգիաների միջազգային շուկա

Տեխնոլոգիաների միջազգային շուկան (ՏՄՇ) երկրների միջև իրացնում է տեխնոլոգիաներ, սարքավորումներ:

18-րդ դարի վերջին և 19-րդ դարի սկզբին ՏՄՇ առաջացումը նպաստել է արտոնագրային համակարգի կիրառմանը, որով ամրապնդվել է տեխնոլոգիաներ ստեղծողների սեփականության իրավունքը: Նման համակարգ ԱՄՆ-ում ներդրվել է 1787, Ֆրանսիայում՝ 1791, Ռուսաստանում՝ 1812, Իսպանիայում՝ 1820 թվականին: ՏՄՇ-ն հատուկ զարգացում է ապրել 20-րդ դարում ԳՏԱ պայմաններում: ՏՄՇ գործակալներ համարվում են խոշոր արդյունաբերական ընկերությունները, որոնք վաճառում և գնում են գիտատեխնիկական գիտելիքներ, տեխնոլոգիաներ: 1980-ական թվականների վերջին առաջացել են տեխնոլոգիաների փոխանակման ընդհանուր հիմնահարցեր, քանի որ ԳՀՓԿՄ-ի վրա ծախսեր կատարող ընկերությունները պետք է ձգտեին վերականգնել այդ ծախսերը՝ դրանց փոխանակման միջոցով:

ՏՄՇ *սուբյեկտներն* են պետությունները, կազմակերպությունները, ընկերությունները, գիտական հիմնարկները, ֆիզիկական անձինք (մասնագետներ, գիտնականներ) և այլն: ՏՄՇ *օբյեկտ* համարվում են *առարկայական* (սարքավորումներ, ագրեգատներ, գործիքներ, հումքային գծեր և այլն) և *ոչ առարկայական* (տեխնիկական փաստաթղթեր, գիտական փորձեր և այլն) ինտելեկտուալ գործունեության արդյունքները: Սակայն ոչ բոլոր տեխնոլոգիաներն են ապրանք: Դրանք ապրանք դառնում են միայն վաճառքի պայմաններում: Նույնիսկ արտոնագրված նորույթներից օգտագործվում է միայն 3-5 տոկոսը, և գաղափարը մինչև ապրանք դառնալն անցնում է երկար ուղի: Յուրաքանչյուր 100 գաղափարից մշակվում է մեկը, և 100 նոր ապրանքից 10 տոկոսն է ընդունվում շուկայի կողմից: Այսպիսով, «գաղափար-շուկա» շարժման որոշակի փուլում նոր տեխնոլոգիան դառնում է ապրանք, ունենում ապրանքային տեսք և բավարարում ապրանքի համար սահմանված պահանջները:

ՏՄԱ-ն (տեխնոլոգիաների միջազգային առևտուր) իր առանձնահատկություններով տնտեսական հարաբերությունների յուրահատուկ ձև է: Դա կոմերցիոն հիմունքներով օտարերկրյա սպառողներին գիտատեխնիկական միջոցների մատակարարում է, որն ունի ոչ միայն գիտական, այլև կիրառական բնույթ և ապահովում է նոր արտադրանքի թողարկումը: Տեխնոլոգիաները համարվում են ինտելեկտուալ սեփականություն և պաշտպանվում են ազգային օրենսդրությամբ, միջազգային համաձայնություններով:

21-րդ դարի սկզբին միջազգային իրավական արտոնագրային պահանջները մշակվել են Եվրոպական տարածաշրջանային արտոնագրային համակարգի կողմից՝ 1973 թ. եվրոպական արտոնագրային կոնցեպցիայի հիման վրա: Եվրոպական արտոնագրային գերատեսչությունն առաջին արտոնագիրը տվել է 1980 թ., իսկ 1990 թ. արդեն ձևակերպվել է 200 հազար միավոր:

ՄԱԿ համակարգում գործում է մասնագիտացած հիմնարկություն՝ Ինտելեկտուալ սեփականության համաշխարհային կազմակերպութ-

յունը (ВОИС), որը հիմնվում է կոնվենցիաների, պայմանագրերի վրա: Այն պատրաստում է մասնագետների զարգացող երկրների համար, մշակում արդյունաբերության, ապրանքային նշանների և այլ օբյեկտների օրենքներ, օգնում զարգացող երկրներին արտոնյալ պայմաններով ստանալ տեխնոլոգիաներ:

ՌԴ և ՀՀ կառավարությունների միջև ստորագրվել է գիտատեխնիկական համագործակցության արձանագրություն՝ ըստ որի տնտեսական, առևտրական, գիտատեխնիկական պայմանները կողմերի համար պետք է լինեն փոխադարձ, նպատակահարմար, ապահովեն կողմերի շահերը, հեղինակային իրավունքի պայմանները: Ռուսաստանի Агролизинг ընկերությունը նպատակ ունի Հայաստանում ներդնելու գումար պահեստամասեր արտադրելու համար: Ցանկացած տեխնոլոգիայի մատակարարում ուղեկցվում է փաստաթղթերով, լիցենզիայով: Նաև մատակարար ընկերությունը կատարում է տեխնոլոգիաների տեղադրում, գործարկում, անձնակազմի ուսուցում:

Տեխնոլոգիաների միջազգային փոխանակումների ժամանակ անհրաժեշտ է, որ դրանք լինեն նոր, հետ չմնան իրենց տեսակի արտադրանքներից և ծառայեն նպատակին: Ինչպես օգտագործվող, այնպես էլ դեռևս չտեղադրված տեխնոլոգիան պահանջում է էական հարմարեցումներ, փոփոխություններ: Վաճառքի ժամանակ շուկայի կողմից կատարվում են իրավաբանական ձևակերպումներ, արտոնագրային պաշտպանվածություն, երաշխավորում: Տեխնոլոգիաներ մատակարարող ընկերությունները հանձնման ժամանակ պետք է պահպանեն մատակարարման բոլոր կանոնները: Տեխնոլոգիաներ արտադրող և արտահանող ընկերությունները, պաշտպանելով իրենց իրավունքները, ձգտում են դրանք արտոնագրել 25 հիմնական մրցակից զարգացած ինդուստրիալ երկրներում: «Կյանքի առաջին փուլում» նախապատվությունը տրվում է պատրաստի արտադրանքի վաճառքին: Փոխանակումների երկրորդ փուլում վաճառողը գնորդին օգնում է ուղղակի ինվեստիցիաներով:

Զարգացած երկրների բաժինը տեխնոլոգիաների համաշխարհային արտահանման մեջ կազմում է մոտ 80 տոկոս: Դրա ավելի քան 60 տոկոսը բաժին է ընկնում ԱՄՆ-ին: Արտոնագիր արտահանող և ներմուծող երկրների մեջ են նաև Գերմանիան, Մեծ Բրիտանիան, Շվեյցարիան, Շվեդիան, Ճապոնիան: Սննդարդյունաբերության տեխնոլոգիաների արտոնագիր և լիցենզիա արտահանող երկիր է Շվեյցարիան: Ներմուծողներից առաջին տեղն են զբաղեցնում Գերմանիան, Ճապոնիան: Վերջինս լիցենզիա ներմուծողից վերջին տասնամյակում դարձել է լիցենզիա արտահանող երկիր: 1950-1970-ական թվականներին Ճապոնիան գնում և ներդնում էր տեխնոլոգիաներ: Այդ տարիներին ճապոնական ընկերությունները կնքել են մոտ 3 հազար տեխնիկական համաձայնագիր, որոնց կեսից ավելին՝ ԱՄՆ-ի հետ: 1970-ական թվականներից հետո Ճապոնիան դարձել է խոշոր տեխնոլոգիաների ներ-

կիր՝ շարունակելով նաև լիցենզիաների գնումները: Միայն 1979 թ. լիցենզիաների ձեռք բերման համար Ճապոնիան վճարել է 3 անգամ ավելի, քան 1970 թ.: 1980-ականներին շարունակվում էր արտասահմանյան տեխնոլոգիաներ ձեռք բերելու միտումը, միաժամանակ կատարվում էր լիցենզիաների վաճառք մյուս երկրներին:

Պետությունների միջև լիցենզային պայմանագրերը կնքվում են 15-20 տարով: Վճարողը պարտավոր է հոգ տանել լիցենզային տեխնոլոգիաներով թողարկվող արտադրանքի որակի համար՝ պահպանելով արտադրանքի ստանդարտները և տեխնիկական պայմանները: ԱՄՆ-ն ամեն տարի լիցենզիաների վաճառքից ստանում է ավելի քան 1 մլրդ դոլար: Գործնականում ԱՄՆ տեխնոլոգիաները և՛ քանակով, և՛ որակով գերազանցում են եվրոպական երկրներում արտադրված տեխնոլոգիաները:

Աղյուսակ 5.1

Մակրոտեխնոլոգիաների միջազգային շուկա (մլրդ դոլար)[40]

Մակրոտեխնոլոգիաներ	1996 թ.	2010 թ.	2015 թ., սպասվող
Ավիացիոն	4.0	18-22	28
Տիեզերագնացության	0.9	4	8
Միջուկային	0.6	6	10
Նավաշինության	0.4	4	10
Ավտոմոբիլաշինության	0.2	2	6-8
Տրանսպորտային մեքենաշինության	0.6	4	8-12
Քիմիական մեքենաշինության	0.6	3	8-10
Հատուկ մետալուրգիայի, քիմիայի, նոր նյութերի	7.0	12	14-18
Նավթարդյունահանման և վերամշակման	6.4	8	14-22
Գազարդյունահանման և տեղափոխման	0.6	7	21-28
Էներգատեխնիկական մեքենաշինության	0.5	4	12-14
Արդյունաբերական սարքավորումների, հաստոցաշինության	0.2	24	23-27
Միկրո և ռադիոէլեկտրոնային	0.05	4	7-9
Համակարգչային և տեղեկատվական	0.05	4.6	7-8
Հաղորդակցության, կապի	0.2	3.8	12
Բիոտեխնոլոգիաների	0.4	6	10
Ընդամենը	22.6	94-98	144-180

Տեխնոլոգիաների ընդհանուր շուկայի շրջանակներում իր կարևոր բաժինն ունի մակրոտեխնոլոգիաների շուկան: ***Մակրոտեխնոլոգիան*** ամբողջապես գիտատար արտադրություն է, որը համաշխարհային

[40] Авдокушин Е. Ф., Международные экономические отношения, М., Юрист, 1999, стр. 202.

շուկայի համար թողարկում է կոնկրետ արտադրանք՝ ինքնաթիռներ, նավեր, ատոմային ռեակտորներ, ատոմակայանների համար սարքավորումներ և նմանատիպ տեխնիկա: Արդյունաբերական զարգացած յոթ երկիր, տեր լինելով մակրոտեխնոլոգիաների 46 արտադրատեսակի, կատարում են դրանց առևտրի 80 տոկոսը: ԱՄՆ-ն ամեն տարի գիտատար տեխնոլոգիաների արտահանումից ստանում է մոտ 700, Գերմանիան՝ 530, Ճապոնիան՝ 400 մլրդ դոլար: Այս շուկան բարձր մրցակցային է և հեռանկարային:

Շատ երկրներ հանդես են գալիս որպես տեխնոլոգիաների հիմնական սպառողներ: Ճապոնիայի գնումներն ամբողջ ներմուծման մեջ կազմում են 16 տոկոս: ՏՄՇ-ից ակտիվորեն օգտվում է նաև Գերմանիան: Մեծ պահանջ ունեն զարգացող՝ առաջին հերթին նոր ինդուստրիալ երկրները (Հարավային Կորեա, Սինգապուր, Հոնկոնգ (Սյանգան), Թայվան և մյուսներ): Մի կողմից նրանք հանդես են գալիս որպես տեխնոլոգիաներ գնողներ և վարձակալներ, մյուս կողմից իրենք են դառնում նոր տեխնոլոգիաներ արտադրողներ և միջազգային շուկայում վաճառողներ: Պետք է նշել, որ տեխնոլոգիաների միջազգային առևտուրը նպաստել է Ճապոնիայի, Հարավարևելյան Ասիայի երկրների զարգացմանը, տնտեսությունների վերակառուցմանը, կառավարչական կառուցվածքի ամրապնդմանը, բավարարել նրանց ներքին պահանջարկը և հնարավորություն տվել միջազգային շուկայում վարելու էքսպանսիայի քաղաքականություն:

ՏՄՇ ***առանձնահատկությունն*** այն է, որ միջազգային խոշոր ընկերությունները մոնոպոլացվում են: Հատկապես նրանց ուժերով է իրականացվում բազմաբիվ գիտատար թանկարժեք տեխնոլոգիաների թողարկումը: Այդ տեսակետից երկրները բաժանվում են հետևյալ խմբերի.

- լիցենզիաների գերակշիռ մասն արտահանող զարգացած երկրներ,
- լիցենզիաների գերակշիռ մասը ներմուծող զարգացած երկրներ,
- ներմուծող-արտահանող զարգացող երկրներ (Արգենտինա, Բրազիլիա, Մեքսիկա, Հնդկաստան, Թուրքիա):

5.5 Տեխնոլոգիաների միջազգային շուկայի կարգավորումը

Տեխնոլոգիաների միջազգային փոխանակումների և ՄՏՀ իրականացման ընթացքում ծագում են տարբեր հարցեր, որոնք պահանջում են պետական կարգավորում: Ներմուծման և արտահանման պետական ***ուղղակի կարգավորումն*** իրականացվում է հատուկ հսկող օրգանների կողմից, որոնք կիրառում են մաքսային և սահմանային հսկողության մեթոդներ: Տեխնոլոգիաների փոխանակումների ***անուղղակի***

կարգավորումը կատարվում է պետական համակարգերի, արտոնագրերի և առևտրական նշանների գրանցման միջոցով:

Լիցենզիաների օգտագործման թույլտվություն տալով՝ պետությունն անուղղակի պատասխանատվություն է կրում սպառողների առջև, քանի որ նրա դերը միայն տնտեսական գործընթացներն արգելելը կամ սահմանափակելը չէ: Նա պայքարում է նաև երկրի տնտեսական ներուժի ավելացման, արտադրողների և սպառողների շահերի պաշտպանության համար: Շուկայական տնտեսությանն անցնելու գործընթացը պահանջում է պետական կարգավորման համակարգի փոփոխություններ: Հաճախ օգտագործվում են վարչական մեթոդներ՝ սահմանելով արտահանման քվոտաներ: Համաշխարհային շուկայում տեխնոլոգիաների միջազգային փոխանակումների վրա պետական կարգավորում և վերահսկողություն իրականացվում է մրցակցային պայքարում արդարության և տեխնոլոգիաների առաջատարության պահպանության համար: Վերջինս կարևոր է, քանի որ որևէ երկիր, լինելով տեխնոլոգիաների ծավալուն արտադրանք թողարկող առաջատար, հարաբերական առավելություն է ձեռք բերում մյուս երկրների նկատմամբ՝ սահմանելով պետական հսկողություն, որպեսզի արտադրական տեխնոլոգիան չծառայի ռազմական նպատակների, քիմիական, բակտերիոլոգիական, հրթիռային զենքերի ստեղծմանը:

Լիցենզիաների միջազգային շուկայի կարգավորումն իրականացվում է արտոնագրային օրենսդրության միջոցով: ԵՄ երկրների արտոնագրման օրենսդրությամբ արգելվում է ապրանքային նշանների և արտոնագրերի դիտավորյալ չօգտագործելը, եթե դա գիտակցաբար խոչընդոտում է մրցակցությանը: Նման դեպքում արտոնագրատիրոջը պարտադրվում է մենաշնորհի սահմանափակում, այսինքն՝ այն երկրում, որտեղ արտոնագիրը չի գրանցվել, գործունեության ժամկետը չեղյալ է համարվում: ԵՄ-ը նոր ստեղծված տեխնոլոգիաների պահպանման համար սահմանում է իրավական նորմեր, եթե նրանց կարգավիճակի մասին օրենք դեռևս չի մշակվել: ԵՄ-ը 1996 թ. դիրեկտիվ է ընդունել կիսահաղորդիչների իրավական պաշտպանության, իսկ 1988 թ.՝ բիոտեխնոլոգիաների և համակարգչային ծրագրերի ինովացիայի համար: Ինչ վերաբերում է այդ ոլորտում արդյունավետ մրցակցությանը, ԵՄ հանձնաժողովը 1984 թ. մշակել է դիրեկտիվ՝ Հռոմի պայմանագրի 85-րդ հոդվածի 3-րդ կետի կիրառման մասին: Ըստ դրա՝ լիցենզիաներում որոշ սահմանափակումներ կարող են կիրառվել առանց հանձնաժողովի թույլտվության: Սակայն մրցակցությանը վնաս պատճառելու կամ չարաշահումների դեպքում հանձնաժողովը կիրառում է խիստ միջոցներ: Մրցակցության կանոնները լրիվ վերաբերում են նաև ԵՄ տարածքում գործող երրորդ երկրներին: Օրինակ՝ վերջին տարիներին Եվրոդատարանն ընդունել է հանձնաժողովի որոշում՝ ԱՄՆ-ի, Կանադայի և ֆիննական ցելյուլոզի արտադրության 26 ընկերություններից տուգանքների գանձման վերաբերյալ:

Վերջիններս առանց իրավական հիմքի եվրոպական շուկաներում սահմանել էին մենաշնորհ գներ:

Համաձայն Հաագայի 1964 թ. և Վիեննայի 1980 թ. «Տեխնոլոգիաների փոխանակումների կարգի մասին» կոնֆերանսների որոշումների՝ խստորեն կանոնակարգվում են ապրանքափոխանակումները՝ ներառյալ տեխնոլոգիաները:

Տեխնոլոգիաների միջազգային փոխանակությամբ զբաղվողները պետք է իմանան ինչպես ազգային, այնպես էլ միջազգային իրավական բնույթի հրահանգները: Փոխանակումները պետք է ձևակերպվեն պայմանագրով (կոնտրակտ), որում պետք է նշվեն հրահանգներ ապրանքների՝ ստանդարտներին, անվանացանկին, քանակին, որակին, կոմպլեկտայնությանը, փաթեթավորմանը համապատասխանելու, տեխնիկան և տեխնոլոգիան շահագործելու երաշխավորության, արտոնագրի մաքրության և երրորդ անձի առարկություններից ապահովագրելու մասին: Գնորդն իրավունք ունի վաճառողից տեխնոլոգիաների մասին տեղեկություն և օգնություն ստանալու:

Տեխնոլոգիաների միջազգային շուկայի կարգավորման համար միջազգային կարևոր նորմատիվային ակտ է արդյունաբերական սեփականության պահպանման 1883 թ.-ի Փարիզյան կոնվենցիան: Արդյունաբերական սեփականությունն մտավոր սեփականության մաս է և վերաբերում է մարդու գիտատեխնիկական ստեղծագործությանը[41]. Մտավոր սեփականության օբյեկտ են գյուտերը, օգտակար մոդելները, ապրանքային նշանները և արտադրական նմուշները: Փարիզյան կոնվենցիայի նպատակն էր արտոնյալ պայմաններ ստեղծելը մտավոր սեփականության արտոնագրման, ապրանքային նմուշների գրանցման համար: Գոյություն ունի նաև արդյունաբերական սեփականության պահպանությունը կարգավորող տարածաշրջանային համաձայնություն: 1973 թ. Մյունխենում եվրոպական Արտոնագրային գերատեսչության կողմից ստորագրվել է եվրոպական արտոնագրի հանձնման մասին կոնվենցիա: Կոնվենցիայի մասնակից երկրներում արտոնագիրը գործում է որպես ազգային, իսկ ԵՄ երկրներում՝ որպես ընկերության արտոնագիր:

Տեխնոլոգիաների միջազգային շուկան կարգավորող կարևոր փաստաթուղթ է ՄԱԿ առևտրի և զարգացման (ЮНКТАД) կոնֆերանսի կողմից մշակված Օրենսգիրքը, որի հիմնական նպատակն է աջակցել տեխնոլոգիաների միջազգային փոխանակումների ընդլայնմանը:

[41] Ինտելեկտուալ սեփականության իրավունքի պաշտպանության մասին կան մի քանի կոնվենցիաներ: Օրինակ՝ ֆոնոգրամաներով կատարողների, արտադրողների և ռադիոհաղորդման կազմակերպությունների պաշտպանության մասին 1957 թ. Հռոմի, արդյունաբերության սեփականության պաշտպանության 1883 թ. Փարիզի, գրականության և արվեստի ստեղծագործությունների պաշտպանության մասին 1886 թ. Բեռնի, ինտեգրացված ցանցերի ինտելեկտուալ սեփականության մասին Վաշինգտոնի կոնվենցիաները:

ԳԼՈՒԽ 6
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ

6.1 Ծառայությունների համաշխարհային շուկա

Ծառայությունների համաշխարհային շուկան (ԾՀՇ) երկրների միջև ապրանքների, կապիտալի, աշխատուժի, հայտնագործությունների, տեխնոլոգիական կատարելագործումների, արտադրության նոր մեթոդների, մասնագետների պատրաստման, նախագծերի մշակման, մարդու գործունեության արդյունքների անբաժան մասն է ՄՏՀ-ում:

Ծառայությունների միջազգային առևտրի (ԾՄԱ) մի մասը չերևացող ինքնատիպ գործարք է և առանձնահատուկ է նրանով, որ.

- ծառայությունների մի մասը պահպանման ենթակա չէ, կազմակերպվում և սպառվում է,
- ծառայությունները կապի մեջ են մյուս ոլորտների հետ,
- ոչ բոլոր ծառայություններն են առևտրի առարկա և ոչ բոլորն են ընդգրկվում ՄՏՀ-ում,
- ծառայությունների ոլորտը նույնպես պաշտպանվում է պետության կողմից, ինչպես արտադրությունը:

Ծառայությունների իրացման օբյեկտ կարող են դառնալ ոչ միայն ավարտուն գործերը, այլև ստեղծման տարբեր փուլերում գտնվող գիտական մտածողությունները, հայտնագործությունները: ԾՄԱ-ն ավելի արագ է աճում, քան ապրանքայինը: Հետպատերազմյան տասնամյակների ընթացքում ապրանքների և ծառայությունների համաշխարհային առևտրի ծավալն աճել է 30 անգամ: Ներկայում շատ երկրներում տնտեսության մեջ գերակշռող է ծառայությունների ոլորտը և ակտիվ բնակչության 35-40 տոկոսն արդյունաբերական ճյուղերից տեղափոխվել է այս ոլորտ: 2000-2010 թթ. աշխարհում ծառայությունների շրջանառությունն աճել է 3.3, իսկ առևտրի շրջանառությունը՝ 2.95 անգամ:

20 տարում ԱՄՆ նյութական արտադրության ոլորտում աշխատողների թիվը կրճատվել է կիսով չափ, սպասարկման ոլորտում՝ աճել 25 մլն-ով: Ներկայում ԱՄՆ-ում այս ոլորտում զբաղված է աշխատուժի 64, Մեծ Բրիտանիայում՝ 63, Կանադայում՝ 62, Շվեդիայում՝ 60, Ռուսաստանում՝ 28, Հնդկաստանում՝ 25, Լեհաստանում՝ 20 տոկոսը:

Մի շարք նոր զարգացող և զարգացման միջին մակարդակի հասած երկրներում ոչ արտադրական ոլորտում զբաղվածների տեսակարար կշիռը նույնպես բարձր է: ԾՄԱ-ը ներկայում ղեկավարում են տարբեր ոլորտների շուրջ 40 կազմակերպություններ:

ԾՀՇ-ն առևտրի համաշխարհային շուկայի մի մասն է, որում ընդգրկված են ծառայությունների առանձին բաժիններ.

- ծառայություններ՝ կապված արտաքին առևտրի գործունեության հետ (ապրանքային տեղաշարժի, իրացման, տրանսպորտի ապահովագրության և այլն),
- ծառայություններ՝ կապված արտադրության միջոցների, տեխնոլոգիաների, շինարարության, տեխնիկական համագործակցության, կառավարման հետ,
- ճանապարհորդություն, զբոսաշրջություն, մասնագետների պատրաստման, վերապատրաստման, աշխատանքային ծառայություններ,
- բանկային, ֆինանսավարկային, վճարումների, մուտքերի, եկամուտների ստեղծման և այլ ծառայություններ:

ՄԱՖ-ի կառավարման համապատասխան վճարային հաշվեկշռի կազմման ժամանակ բոլոր ***առևտրային ծառայությունները*** բաժանվում են հետևյալ տեսակների.

- տրանսպորտի (բեռնատար, մարդատար),
- ուղևորության (գործառնական, անձնական),
- կապի (փոստային, հեռախոսային, հաղորդակցության),
- շինարարական,
- ապահովագրական,
- ֆինանսական (արժույթի փոխանակում, վճարումներ, բրոկերային),
- համակարգչային տեղեկատվության,
- լիցենզային վճարումների և այլ բիզնես ծառայություններ (միջնորդ, լիզինգ, գովազդ, իրավական),
- կառավարման (վարչական, անհատական):

Ըստ ՄԱՖ տվյալների՝ ծառայությունների ընդհանուր ծավալը կազմում է համաշխարհային արտահանման ծավալի 25 տոկոսը, որն անընդհատ աճում է:

ԾՄԱ աշխարհագրական տեղաբաշխումն անհամաչափ է՝ հօգուտ զարգացած պետությունների: Եթե դասակարգենք ծառայությունների առանձին տեսակները, համաշխարհային առևտրում ամենամեծ բաժինն ունեն ***զբոսաշրջության*** և ***տրանսպորտի*** ծառայությունները: Բացարձակ արագ տեմպերով է աճում ՄՏՀ-ը, որը նշված ծառայությունների հետ կազմում է ՀՏ ծառայությունների 30 տոկոսը:

Ծառայությունների համաշխարհային շուկայում գերակշռող ութ երկրներին բաժին է ընկնում ծառայությունների համաշխարհային արտահանման 2/3-ը և ներմուծման ավելի քան 50 տոկոսը: ԱՄՆ-ի, Գերմանիայի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի բաժինը ծառայությունների համաշխարհային արտահանման մեջ 44 տոկոս է:

Ըստ ԱՀԿ քարտուղարության տվյալների՝ ծառայությունների արտահանման մեջ ԱՄՆ բաժինը կազմում է 16.2, Ֆրանսիայինը՝ 10.2, Իտալիայինը՝ 6.5, Գերմանիայինը՝ 6.4, Մեծ Բրիտանիայինը՝ 5.5, Ճապոնիայինը՝ 5 տոկոս: Ծառայությունների արժեքային ծավալի մոտ 75 տոկոսն արտահանում են զարգացած, 24-ը՝ զարգացող երկրները, 1 տոկոսը՝ միջազգային կազմակերպությունները: Զարգացող երկրներն ունեն ծառայությունների արտահանման բացասական մնացորդ, թեև Հարավային Կորեան համարվում է ինժինիրինգային, խորհրդատվական, Սինգապուրը՝ ֆինանսական ծառայությունների, Մեքսիկան՝ զբոսաշրջության խոշոր արտահանող: Շատ ծառայություններ, առավելապես պետականները, տրամադրվում են ազգային մակարդակով:

Աղյուսակ 6.1

Ծառայությունների տեսակարար կշիռն արտահանման ընդհանուր ծավալում[42]

	1991 թ.*	1996 թ.	2005 թ.	2015 թ., պայմ.
Ապրանքների արտահանում, մլրդ դոլար	3440.7	4830	9041	7713
Ծառայությունների արտահանում, մլրդ դոլար	860	1170	1763	2314
Ծառայությունների արտահանման տեսակարար կշիռն ապրանքների համեմատ, %	25	23.9	19.5	30.0

Ծառայությունները, բացառությամբ տրանսպորտի և զբոսաշրջության, մնացել են ազգային իրավասության տակ: Սակայն շատ ծառայություններ միջազգային ծառայությունների օբյեկտներ են և արտացոլվում են միջազգային հաշվեկշիռներում: Վերջին երկու տասնամյակում ապրանքային արտահանման համեմատ ծառայությունների արտահանումն ավելի արագ է աճել: Ըստ ԱՀԿ տվյալների՝ 2005 թ. այն կազմել է 1863 մլրդ դոլար: Ծառայությունների արտահանման բաժինն ապրանքների միջազգային առևտրում կազմել է 19.5 տոկոս, որը 2015 թ. նախատեսվում է հասցնել 30-ի, ինչին կնպաստեն.

- ԳՏԱ, ԱՄԲ և ազգային տնտեսությունների արագ զարգացումը,
- բնակչության սպառման կառուցվածքի և պահանջարկի փոփոխությունները,
- տեղեկատվության նոր միջոցների ավելացումը:

Ցյուղային կառուցվածքում վերջին 20 տարում գերակշռում է զբոսաշրջության ծառայությունը:

[42] Ցուցանիշները վերաբերում են ազգային վճարային հաշվեկշիռներում արտացոլված անդրսահմանային առևտրին:

* Թվերը վերաբերում են միայն ՄԱՖ անդամ երկրներին՝ ներառյալ Հունգարիան, Հարավսլավիան, Ռումինիան, Լեհաստանը, Չինաստանը:

Առևտրի ծառայություններ ***ներմուծող*** երկրներն են ԱՄՆ-ը (13.3 տոկոս), Գերմանիան (9.6 տոկոս), Ճապոնիան (6.9 տոկոս), Մեծ Բրիտանիան (6.6 տոկոս), Ֆրանսիան (4.4 տոկոս): Զարգացող երկրներից խոշոր արտահանողներ են Չինաստանը, Կորեան, Սինգապուրը, Հնդկաստանը: Նրանք միաժամանակ նաև ներմուծողներ են: Անցումային երկրներից արտահանողներ են Ռուսաստանը, Լեհաստանը, Չեխիան, Հունգարիան: Ռուսաստանում ծառայությունների կառուցվածքը ներկայում հետևյալն է.

- զբոսաշրջություն (42 տոկոս),
- տրանսպորտի ծառայություններ (33 տոկոս),
- այլ ծառայություններ (25 տոկոս):

6.2 Ծառայությունների միջազգային շուկայի կառուցվածքը, դասակարգումը և դինամիկան

ՄԱԿ-ը միջազգային ծառայությունները դասակարգել է հետևյալ խմբերի.

- կոմունալ ծառայություն և շինարարություն,
- առևտուր, ռեստորաններ, հյուրանոցներ,
- փոխադրումներ, պահպանություն, կապ,
- կրթություն, առողջապահություն և հասարակական աշխատանքներ,
- պաշտպանություն և պարտադիր սոցիալական ծառայություններ,
- կոմունալ, սոցիալական և անձնական ծառայություններ:

Ըստ ԱՀԿ հաշվարկման՝ ծառայությունները լինում են շուրջ 600 տարատեսակ, սակայն ըստ ՄԱԿ-ի դասակարգման՝ ծառայությունների ոլորտն ընդգրկում է 160 տեսակ ծառայություն՝ 12 հիմնական բաժիններով: Դրանք են.

1. Գործարարական (46 տեսակ):
2. Տրանսպորտային (33 տեսակ):
3. Կապի (25 տեսակ):
4. Ֆինանսական, ապահովագրական (17 տեսակ):
5. Շինարարական, ինժեներային (5 տեսակ):
6. Բաշխող (5 տեսակ):
7. Հանրակրթական (5 տեսակ):
8. Ազատ ժամանցի, մշակույթի, սպորտի (5 տեսակ):
9. Շրջակա միջավայրի պահպանության (4 տեսակ):
10. Առողջապահական և սոցիալական (4 տեսակ):
11. Զբոսաշրջության և ճանապարհորդության (4 տեսակ):
12. Այլ ծառայություններ (7 տեսակ):

Ազգային հաշիվների համակարգում ծառայությունները բաժանվում են հետևյալ խմբերի.

- ***սպառողական*** (զբոսաշրջություն),
- ***սոցիալական*** (կրթական, առողջապահական),
- ***արտադրական*** (ինժինիրինգ, կոնսալտինգ, ֆինանսավարկային),
- ***բաշխիչ*** (առևտրական, տրանսպորտային, ֆրախտային):

Միջազգային ծառայությունները լինում են նաև.

- ***գործոնային***, որոնց վճարումները կապված են կապիտալի, աշխատուժի, բիզնեսի, զբոսաշրջության, կրթության, առողջապահության ոլորտում կապիտալ տրամադրելու հետ,
- ***ոչ գործոնային***, որն ընդգրկում է մնացած տեսակի ծառայությունները (տրանսպորտ, արտոնագրեր, հրատարակչական գործունեություն, բանկային, կապի, հյուրանոցային, ապահովագրության, ինվեստիցիաների, առևտրի, շինարարության, համակարգչային, տեղեկատվական, անհատական, հանգստի և մշակութային):

Ծառայությունների ոլորտում ***կրթությունը*** և ***առողջապահությունը*** գնահատվում են երկրի հիմնարկների ցանցով, կադրերով, ծյուղերում ներդրումների չափով, սպասարկման մակարդակով: ԱՄՆ-ը, Եվրոպայի երկրների մեծ մասը, Ճապոնիան, Ռուսաստանն ունեն կրթության և առողջապահության հզոր ուժ: Զարգացած երկրներում գնալով աճում են այդ բնագավառում կատարվող ներդրումները: Բուռն զարգացում է ապրում համաշխարհային ***մշակույթը՝*** թատերական, երաժշտական արվեստները, կինոարվեստը:

Համաձայն ՄԱԶ վճարային հաշվեկշռի, որով ղեկավարվում են աշխարհի բոլոր երկրները, վաճառվող ծառայությունների կազմում ընդգրկվում են.

1. Աշխատուժի միգրացիան, կապիտալի, բանկային և ապահովագրական ծառայությունները, արտասահմանում մասնաճյուղեր բացելը և այդ տարածքներում հաճախորդներին սպասարկելը:

2. Արտասահմանում սպառվող ծառայությունները (զբոսաշրջություն, գործարար հանդիպումներ, արտասահմանյան նավահանգիստներում, օդանավակայաններում նավերի, ինքնաթիռների ծառայություններ, արտասահմանյան կլինիկաներում, հիվանդանոցներում բժշկական սպասարկումներ, ուսուցում արտասահմանյան բուհերում):

3. Արտասահմանում իրականացվող ծառայությունները (դասախոսություններ, կոնֆերանսներ, սիմպոզիումներ, հյուրախաղեր, արվեստի ցուցադրություններ):

4. Ծառայություններ, որոնք չեն տեղափոխվում երկրից երկիր (արտասահմանյան բեռներ տեղախոխելու համար իրենց տրանսպորտի միջոցները տրամադրող ընկերությունների ծառայություններ, նա-

խագծա-նախահաշվային փաստաթղթերի պատրաստում, որն իրականացվում է կապի միջոցներով):

6.3 Միջազգային զբոսաշրջություն. էությունը և դասակարգումը

Միջազգային զբոսաշրջությունը տնտեսական հարաբերությունների ձև է, հանգստի, բուժման, ճանապարհորդության, գիտական և գործնական հանդիպումների, առողջության, ֆիզիկական զարգացման պայման: Զբոսաշրջությունը ծառայությունների ոլորտի ամենաշահութաբեր գործունեությունն է: Եթե 1950 թ. միջազգային զբոսաշրջիկների թիվը 25, 1970 թ.՝ 160, 1990 թ.՝ 420, 2002 թ.՝ 694 մլն էր, ապա 2010 թ.-ին այդ ցուցանիշը հասավ 1 մլրդ մարդու: 10 տարում միջազգային զբոսաշրջությունն աճել է 1.5 անգամ: Ծառայությունների այս ձևի զարգացումը կապված է բնակչության սոցիալ-տնտեսական զարգացման, տրանսպորտի առաջընթացի հետ: Զբոսաշրջությունն ավելի քան 150 մլն մարդու ապահովում է աշխատանքով, և նրանից տարեկան եկամուտ ստանում են բոլոր երկրները: Օրինակ՝ Եգիպտոսում, Հորդանանում, Նեպալում, Եմենում ծառայությունները հիմնականում կապված են զբոսաշրջության հետ, որը կազմում է ամբողջ արտահանման 40-90 տոկոսը: Զբոսաշրջիկներին տրամադրելով անհրաժեշտ ապրանքներ և ծառայություններ՝ երկիրը մասնակցում է ԱՄԲ համակարգին՝ ռացիոնալ օգտագործելով իր բնական ռեսուրսները:

Միջազգային զբոսաշրջությունը համաշխարհային տնտեսության առավել եկամտաբեր և զարգացող ոլորտն է, որը 21-րդ դարի սկզբին կազմել է համաշխարհային արտահանման ընդհանուր ծավալի 8 տոկոսը և ծառայությունների միջազգային առևտրի համաշխարհային արտահանման 1/3-ը: Հաագայի 1989 թ. Զբոսաշրջության հռչակագիրը զբոսաշրջությունը համարել է տնտեսական գործունեության յուրահատուկ ձև, որը մեծ նշանակություն ունի կյանքի համար:

Զբոսաշրջությունը, որպես գործունեության ձև, ուղղված է տարբեր ծառայությունների, ձեռնարկությունների և ապրանքների պահանջարկին: Այն բաժանվում է ***կարգերի***, ***տեսակների***, ***ձևերի*** և ***տարատեսակների***:

Միջազգային զբոսաշրջության ***գլխավոր տարբերիչ*** հատկանիշներն են պետական սահմանի հատումը և զբոսաշրջության տարբեր ձևերի (անձնագրային, կանչերի, մաքսակետերի, սանիտարա-համաճարակային) պահպանումը:

Զբոսաշրջության կարգերը, որպես միջազգային առևտրի օբյեկտ, իրենցից ներկայացնում են փոխադրումների, տեղաբաշխման, սննդի, էքսկուրսիոն և այլ ծառայությունների համալիր: Այս կամ այն երկրի գրավչության կարևոր գործոններ են զբոսաշրջության ***պաշարները***՝ բնական, պատմական, սոցիալ-մշակութային և այլն:

Զբոսաշրջության տարածքն աշխարհագրական տարածություն է, որը տեղաբաշխված է զբոսաշրջության ռեսուրսներով:

Զբոսաշրջությունն իրականացնում է մի շարք ազգային տնտեսական ***գործառույթներ.***

- ***զբոսաշրջության արտադրական,*** երբ զբոսաշրջության ձեռնարկություններն օգտագործում են աշխատանքը, հողը և կապիտալը, որոնցով ստեղծվում են նոր աշխատատեղեր,
- ***եկամուտների ստեղծման,*** երբ զբոսաշրջության ոլորտի տնտեսական գործունեությունը երկրին բերում է եկամուտներ և ավելացնում ազգային եկամտի ներդրումները (Համաշխարհային զբոսաշրջության կազմակերպության (ԲՏՕ) հետազոտությունների համաձայն՝ օտարերկրյա զբոսաշրջության յուրաքանչյուր անձի եկամուտը կազմում է միջին հաշվով 708 դոլար),
- ***վճարային հաշվեկշռի համաչափության,*** որով զբոսաշրջությունը նպաստում է երկրի վճարային հաշվեկշռի հավասարեցմանը,
- ***զբոսաշրջության սոցիալական,*** որը վերականգնում և լրացնում է մարդկանց ֆիզիկական, հոգևոր և էմոցիոնալ ուժերը:

Համաշխարհային մակարդակով 2006 թ. զբոսաշրջության բաժինը միջին հաշվով ՀՆԱ-ի մեջ կազմել է 3.6 տոկոս: 2005 թ. այդ ոլորտի ծախսերի հիմնական գումարը 682 մլրդ դոլար էր, որը 49 մլրդ դոլարով (3.4 տոկոս) գերազանցել է 2004 թ. ցուցանիշը: 2006 թ. ճանապարհորդության և զբոսաշրջության ոլորտում ինվեստիցիաները (ներդրված կապիտալ) կազմել են 1070.7 մլրդ դոլար կամ ինվեստիցիաների ընդհանուր ծավալի 9.3 տոկոսը:

Միջազգային զբոսաշրջությունը երկրի համար ապրանքների ու ծառայությունների դիմաց վճարման և տեղական ապրանքների վաճառքի միջոց է: Եկամուտներն ավելացնում են հյուրանոցային տնտեսության, տրանսպորտի, կապի, սննդի և սպառման մյուս օբյեկտների գործունեության ծավալները: Ավելանում են բժշկական սպասարկումը, աշխատատեղերը: Զբոսաշրջության եկամուտներով փոխհատուցվում է երկրի վճարային հաշվեկշռի դեֆիցիտը: Օրինակ՝ 2005 թ. Մեծ Բրիտանիայի ծառայությունների առևտրի մուտքերը կազմել են 20 մլրդ ֆունտ ստեռլինգ, ինչը վճարային հաշվեկշռի դրական մնացորդն ավելացրել է 4.5 մլրդ ֆունտ ստեռլինգով:

Ընդամենը 9 հազար քառ. կմ տարածք և 750 հազար բնակիչ ունեցող Կիպրոսը, տարեկան ընդունելով 1 մլն զբոսաշրջիկի, ստանում է 2 մլրդ դոլար եկամուտ: 316 քառ. կմ տարածք և 400 հազար բնակիչ ունեցող Մալթան տարեկան ընդունում է 1 մլն զբոսաշրջիկի և ստանում 1 մլրդ դոլար եկամուտ: Ամեն տարի Հունաստանն ընդունում է 12 մլն զբոսաշրջիկի, և 2008 թ. նրա եկամուտը կազմել է 29 մլրդ դոլար:

Աղյուսակ 6.2

Միջազգային զբոսաշրջությունն ըստ տարածքների (մլն մարդ)[43]

Աշխարհի տարածքները	1990 թ.	1995 թ.	2000 թ.	2005 թ.	2009 թ.
Եվրոպա	282.2	324.2	402.8	411.0	441.5
Հյուսիսային Եվրոպա	29.1	37.6	44.1	42.5	52.9
Արևմտյան Եվրոպա	113.8	116.7	141.2	141.4	142.7
Կենտրոնական Եվրոպա	43.8	67.1	76.8	81.1	87.9
Հարավ-Միջերկրական Եվրոպա	95.5	102.7	140.7	146.1	158.0
Ասիան Խաղաղօվկիանոսյան տարածք	57.7	85.6	115.3	130.6	155.4
Հյուսիսարևելյան Ասիա	28.0	44.1	62.5	73.4	87.6
Հարավարևելյան Ասիա	21.5	29.2	37.0	41.7	49.3
Օվկիանիա	5.2	8.1	9.6	9.6	10.5
Հարավային Ասիա	3.2	4.2	6.1	5.9	8.0
Ամերիկյան տարածք	92.5	108.9	128.3	120.2	133.5
Հյուսիսային Ամերիկա	71.7	80.5	91.2	85.3	89.9
Կարիբյան երկրներ	11.4	14.0	17.2	16.4	18.9
Կենտրոնական Ամերիկա	1.8	2.6	4.3	4.8	6.5
Հարավային Ամերիկա	7.9	11.8	15.5	13.6	18.2
Աֆրիկա	15.0	20.0	27.0	28.7	36.7
Հյուսիսային Աֆրիկա	8.4	7.3	10.1	10.1	13.7
Արևմտարծային Աֆրիկա	6.6	12.7	17.0	18.6	23.0
Մերձավոր Արևելք	9.0	13.1	22.7	24.1	39.1
Աշխարհում	456.8	551.7	696.1	714.6	806.0

ՀՀ կառավարությանն առընթեր Միգրացիայի և փախստականների վարչության տվյալներով՝ 2000 թ. Հայաստան են եկել 45, 2003 թ.՝ 206, 2005 թ.՝ 318.5, 2011 թ.՝ 684 հազար զբոսաշրջիկներ, որոնց մի մասը սփյուռքահայերի ժառանգներն են, որ գալիս են հայրենիքը տեսնելու, մյուսները Հայաստանից արտագաղթածներն են, որ այցելում են հարազատներին: Հանրապետությունից 2004 թ. մեկնել է 221.1, 2005 թ.՝ 268.6 հազար զբոսաշրջիկ: 2005 թ. Հայաստան ժամանած զբոսաշրջիկների 48.3 տոկոսը եկել է Ռուսաստանից, 27.5-ը՝ ԱՊՀ մյուս երկրներից, 3.8-ը՝ ԱՄՆ-ից, 12.4-ը՝ Եվրոպայից և 8.0-ը՝ այլ երկրներից[44]:

Զբոսաշրջիկների ընդունող առաջատար 10 երկրների թվում են Ֆրանսիան, Իսպանիան, ԱՄՆ-ը, Իտալիան, Չինաստանը, Մեծ Բրիտանիան, Գերմանիան, Կանադան, Հունգարիան, Ավստրիան: Իսկ եկամուտների ստացման տասնյակում են ԱՄՆ-ը, Իտալիան, Իսպանիան, Ֆրանսիան, Մեծ Բրիտանիան, Չինաստանը, Ավստրիան, Կանադան, Գերմանիան, Մեքսիկան:

[43] Международные экономические отношения, Международный бизнес, под ред. Архипова А. Ю. и Пузаковой Е. П., Ростов-на-Дону, 2009, стр. 185.

[44] Տվյալները վերաբերում են միայն հյուրանոցներում, առողջարաններում, հանգստյան տներում տեղավորված զբոսաշրջիկներին:

Աղյուսակ 6.3

Երկրներ, որոնցում առավել զարգացած է միջազգային զբոսաշրջությունը

Երկրներ	Զբոսաշրջիկների թիվը, մլն մարդ	Երկրներ	Զբոսաշրջիկների թիվը, մլն մարդ
Իսպանիա	55	Պորտուգալիա	10
Իտալիա	45	Հարավսլավիա	9
Ֆրանսիա	40	Չեխիա	8
ԱՄՆ	27	Բուլղարիա	8
Ավստրիա	18	Հունաստան	8
Մեծ Բրիտանիա	17	Ռուսաստան	7
ԳԴՀ	15	Շվեդիա	7
Կանադա	15	Նիդեռլանդներ	7
Հունգարիա	14	Մեքսիկա	7
Շվեյցարիա	13	Ռումինիա	6
Անդորա	12	Լեհաստան	6
Բելգիա	11	Սինգապուր	5
Չինաստան	10	Հոնկոնգ	5

2005 թ. միջազգային ամբողջ զբոսաշրջության մոտ 65 տոկոսը բաժին էր ընկնում Եվրոպային, 20-ը՝ ԱՄՆ-ին և 15-ը՝ մնացած տարածաշրջաններին (տե՛ս աղ. 6.3): Վերջին 20 տարում միջազգային զբոսաշրջության ծավալներն աշխարհում ավելացել են 1/3-ով: Ըստ Միջազգային զբոսաշրջության կազմակերպության տվյալների՝ զբոսաշրջության տարեկան աճը կազմում է 4.5-5 տոկոս: 2008 թ. զբոսաշրջությունը կազմում էր համաշխարհային ՀՆԱ 11.0, գումարային կապիտալ ներդրումների 7, համաշխարհային սպառման ծախսերի 11.0, ամբողջ հաշվարկային մուտքերի 5 և աշխատուժի 10.5 տոկոսը: ԵՄ երկրներում միջազգային զբոսաշրջության բնագավառում զբաղվածների ընդհանուր թիվը կազմում էր 8.5 մլն (Իսպանիայում և Պորտուգալիայում՝ 10, Հունաստանում և Ֆրանսիայում՝ 8, Իտալիայում՝ 7, Գերմանիայում՝ 6, Մեծ Բրիտանիայում՝ 5 տոկոս), որն ակտիվ բնակչության 6 տոկոսն էր[45]:

Սոցիալ-տնտեսական առումով արտասահմանյան զբոսաշրջիկների հոսքը երկրում բարձրացնում է ապրանքների գները՝ կապված

[45] Международные экономические отношения, учебник, М., Юнити, 1999, стр. 227.

տվյալ ոլորտի ապրանքների պահանջարկի աճի հետ: Զարգացող երկրները ստիպված են որոշ չափով ապրանքներ և սարքավորումներ ներմուծել՝ զբոսաշրջիկներին լավ սպասարկելու համար:

Զբոսաշրջությունը դասակարգվում է նաև.

- *ըստ նպատակի՝* երթուղային-ճանաչողական, մարզական, առողջական, ինքնուրույն հանգստի, լեռնադահուկային, որսորդական, ուսումնական,
- *ըստ մասնակցության ձևի՝* խմբային, ընտանեկան, անհատական,
- *ըստ տարիքի՝* հասուն, երիտասարդական, մանկական, խառը,
- *ըստ տևողության՝* մեկօրյա, բազմօրյա,
- *ըստ տրանսպորտային միջոցների՝* օդային, ջրային, երկաթուղային, ավտոմոբիլային և խառը,
- *ըստ աշխարհագրական տարածքների՝* միջաշխարհամասային, միջերկրային, միջտարածաշրջանային,
- *ըստ սեզոնի՝* ամառ, ձմեռ:

Զբոսաշրջությունը լինում է *ներքին* և *միջազգային*: *Ներքին* զբոսաշրջությունը տվյալ երկրի ներսում բնակչության շրջագայությունն է: *Միջազգային զբոսաշրջությունը* երկրից մեկնողների և երկիր ժամանողների շրջագայությունն է, որն ունի տարբեր նպատակներ.

- *ճանաչողական* (ծանոթություն այլ երկրների մշակույթին, պատմությանը, լեզվին, ժողովրդին),
- *տնտեսական՝* կապված մեկնողների եկամուտների ավելացման, կենսամակարդակի բարելավման հետ,
- *սոցիալական՝* կապված կյանքի պայմանների, կրթության, գործունեության զարգացման հետ,
- *տարածաշրջանային՝* կապված փառատոներին, օլիմպիադաներին, մարզական միջոցառումներին, տոնավաճառներին, ցուցահանդեսներին մասնակցելու հետ:

Զբոսաշրջությունը լինում է *ակտիվ*, երբ երկիր են ժամանում զբոսաշրջիկներ և եկամուտ են բերում, և *պասիվ*, երբ տվյալ երկրից զբոսաշրջիկները դուրս են գնում և արտահանում են ֆինանսական միջոցներ:

6.4 Տեղեկատվական և կապի ծառայություններ

Միջազգային տեղեկատվական ծառայությունները նպաստում են երկրների միջև տեղեկությունների փոխանակմանը: Տեղեկատվական փոխանակումների օբյեկտներ են փաստաթղթային տեղեկատվությունը, արտադրանքի, ծառայությունների մատուցումները: Վերջին երկու տասնամյակում տեղեկատվական ծառայություններն ավելի արագ են

աճում և այժմ ընդգրկում են գործնական, իրավական, բնապահպանական, բժշկական, մասնագիտական տարբեր տեղեկատվություններ:

Տեղեկատվական ծառայությունների համաշխարհային շուկան ունի իր առանձնահատկությունները: Դրանք են.

- տեղեկատվության պահանջարկի արագ աճը՝ պայմանավորված տնտեսությունների կառավարման բարդություններով,
- արագ զարգացող էլեկտրոնային և համակարգչային տեխնիկայի բազայի վրա նոր տեխնոլոգիաների ներդրումը,
- կապի համակարգում օգտագործվող միկրոէլեկտրոնային և համակարգչային տեխնիկայի սպասարկումն ու կարգավորումը տեղեկատվության բարդ հոսքերի միջոցով,
- տեղեկատվական համակարգի արագ ընդլայնվող ծրագրային նյութերը, որոնց դեպքում աճում է տեխնիկական միջոցների և ծրագրավորման արժեքը:

Տեղեկատվական ծառայությունների համաշխարհային շուկան ենթարկվում է մրցակցային պայքարի ընդհանուր օրենքին: Այդ շուկայի 3/4-ը բաժին է ընկնում հինգ երկրների, ընդ որում ԱՄՆ-ին՝ 50 տոկոսից ավելին, Ճապոնիային՝ 10 տոկոսը: ԱՄՆ-ում, Արևմտյան Եվրոպայում և Ճապոնիայում աշխատանքներ են տարվում պետական և միջպետական ծրագրերի շրջանակներում միջոցառումներ մշակելու համար, որոնց ֆինանսավորումը կազմում է 3.6 մլրդ էջյու: Այդ ծրագրերի հիմնական ուղղությունը բարձր արտադրողական հաշվողական ցանցի, առաջավոր հաղորդակցության տեխնոլոգիաների և սպասարկումների ստեղծումն է:

Արդեն գոյություն ունի ԵՄ երկրների գերհամակարգչային կենտրոն, որի ֆինանսավորումը հիմնականում կատարվում է երկրների պետական միջոցների հաշվին:

Կապի ծառայությունը համացանցով սպասարկում է շուկաներին: Համաշխարհային ինտերնետ ծառայությունների շուկան 1996 թ. հասել է 2.5 մլրդ դոլարի: Համացանցի մասշտաբների զարգացման վրա ազդում են հիմնականում կապի ծառայությունների գները: 1998 թ. հունվարից ուժի մեջ է մտել հեռահաղորդակցության և տեղեկատվական տեխնոլոգիաների շուկայի ազատականացման մասին համաձայնությունը:

1993 թվականից ինտերնետ տեղեկատվական ցանցը վերածվել է գլոբալ ցանցի: Եթե 1980 թ. ինտերնետը միավորում էր 25, 90-ականների կեսերին՝ աշխարհի 160 երկրների ավելի քան 44 հազար պետական, կոոպերատիվ ցանցային համակարգ՝ կապի բացառիկ միջոցներով, ապա 2010 թ. այս ցուցանիշը հասել է մոտ 60 հազարի 200 երկրներում: Համացանցի միջոցով վաճառվում են թերթեր և ամսագրեր, առանձին հոդվածներ, ԷՀՄ ծրագրեր, այլ տեղեկատվություն: Ժամանակակից տեղեկատվական համակարգի և միջազգային կապի համալիր

զարգացմամբ հնարավորություն է ստեղծվում հեռանալու փաստաթղթաշրջանառությունից, տեղեկատվությունը հաղորդելու ստույգ, արագ և արդյունավետ:

Ծառայությունների համաշխարհային առևտրի նոր տեսակ է ***էլեկտրոնային առևտուրը,*** որը չի պահանջում ֆիզիկական ուժ, կապիտալ ներդրումներ: Էլեկտրոնային առևտուր տերմինն ի հայտ է եկել 1990-ական թվականներին՝ կապված համացանցի միջոցով ապրանքների առք ու վաճառքի հետ: Էլեկտրոնային առևտուրն արագ թափով զարգանում է նաև զարգացող երկրներում: Ինտերնետ կապի միջոցով հնարավոր է իրականացնել մարքեթինգային հետազոտություններ, կոմերցիոն գործունեություն (պատվեր, վճարում, թույլտվություն):

2005 թ. նոյեմբերի 16-18-ը ՄԱԿ-ի հովանու ներքո Թունիսում տեղի է ունեցել Տեղեկատվության տեխնոլոգիաների (SS) համաշխարհային գագաթաժողով 170 երկրների ներկայացուցիչների մասնակցությամբ (մասնակցում էր նաև ՀՀ պատվիրակությունը): Հիմնական նպատակն էր ՄԱԿ շրջանակներում քննարկել տեղեկատվության զարգացմանը վերաբերող ռազմավարական և քաղաքական հարցերը, որոնք են.

1. Համացանցի տարածման և հավասար օգտագործման հնարավորությունները:
2. ՄԱԿ աջակցումը ոլորտի ընդհանուր զարգացմանը:

2005 թ. նոյեմբերի 25-29-ը Դուբայում կայացել է SS ցուցահանդես, որին առաջին անգամ մասնակցել է նաև Հայաստանը: Ցուցահանդեսը նոր հնարավորություններ է ստեղծել միջազգային կապի, առևտրի և տնտեսական ոլորտի զարգացման համար:

Կապի ծառայությունը դասակարգվում է հետևյալ կերպ.

1. ***Հեռահաղորդակցության կապի գործունեություն*** - ձայնի, տեղեկությունների, տեքստերի, ձայնագրությունների, պատկերների փոխանցում:
2. ***Լարային հեռահաղորդակցության համակարգերի ծառայություններ.***
   - հեռախոսային ցանց,
   - հեռագրական կապ,
   - ինտերնետ հասանելիություն,
   - մալուխային հեռուստատեսային համակարգեր:
3. ***Անլար հեռահաղորդակցության համակարգերի ծառայություններ.***
   - բջջային հեռախոսակապ,
   - ռադիոալիքային կապ,
   - ինտերնետ հասանելիություն:
4. ***Արբանյակային կապի ծառայություններ.*** ներառում է ձայնի, տեքստերի, ձայնագրությունների, պատկերների փոխանցման հնարավորությունները:

5. ***Հեռուստառադիոծրագրերի կազմում և հեռարձակում.*** ներառում է հեռուստառադիոծրագրերի կազմման և հեռարձակման գործունեությունը:

6.5 Տրանսպորտային միջազգային ծառայություններ

Արդյունաբերությունից և գյուղատնտեսությունից հետո տրանսպորտը երրորդ առաջատար ճյուղն է: Այն ապահովում է տնտեսական բոլոր ճյուղերի գործունեությունը, իրականացնում բեռների և ուղևորների փոխադրում:

Տրանսպորտի զարգացումը բնորոշում է ՄՏՀ զարգացման մակարդակը: Միջազգային տրանսպորտն ակտիվ կերպով ներազդում է արդյունաբերության, երկրների մասնագիտացման և կոոպերացման, մատակարարման և ՄՏՀ մյուս ոլորտների գործունեության վրա: Տրանսպորտային բոլոր միջոցներն ամբողջությամբ՝ կազմում են ***համաշխարհային տրանսպորտային համակարգը***:

Տրանսպորտային համակարգը բնութագրվում է.

- ***հաղորդակցության ուղիների երկարությամբ*** (ավտոմոբիլային ճանապարհները կազմում են 24, օդային ուղիները՝ 8, ներքին ջրային ուղիները՝ 0.6 մլն կմ, իսկ աշխարհի տրանսպորտային ցանցի երկարությունն առանց ծովային ուղիների անցնում է 35 մլն կմ-ը),
- ***տրանսպորտում զբաղվածների թվով***, որը կազմում է ավելի քան 100 մլն մարդ,
- ***բեռնաշրջանառությամբ և ուղևորափոխադրումներով*** (եթե 1950-ական թվականներին համաշխարհային տրանսպորտի բեռնաշրջանառությունը կազմում էր 7, 2000 թ.՝ 55 տրլն տ/կմ, ապա 2011 թ. բեռների ծավալը գերազանցեց 70 տրլն տ/կմ-ը:

Համաշխարհային տրանսպորտային ծառայություններն առաջացել են ավելի վաղ, քան ծառայությունների մյուս տեսակները, քանի որ դրանք կապված են եղել համաշխարհային առևտրի զարգացման հետ: Սակայն համաշխարհային տրանսպորտային համակարգը ձևավորվել է 20-րդ դարում: Զարգացած երկրներին բաժին է ընկնում համաշխարհային տրանսպորտային ցանցի երկարության մոտ 78 և բեռնաշրջանառության 75 տոկոսը: Զարգացած երկրների տրանսպորտային ցանցի խտությունը կազմում է 50-60 կմ յուրաքանչյուր 100 քառ. կմ-ի համար (Մեծ Բրիտանիայում՝ 160, Ֆրանսիայում՝ 150 կմ), իսկ մնացած երկրների տրանսպորտի համակարգը կազմում է համաշխարհային տրանսպորտի ցանցի 22, բեռնաշրջանառության 25 տոկոսը: Տրանսպորտի ցանցի խտությունը զարգացող երկրներում կազմում է 5-10 կմ:

Առանձնանում են Հյուսիսային Ամերիկայի, Եվրոպայի, Ճապոնիայի, Չինաստանի, Հնդկաստանի և Պակիստանի, Հարավարևմտյան Ա-

սիայի, Հյուսիսային Աֆրիկայի, Լատինական Ամերիկայի, Ավստրալիայի տարածքային տրանսպորտային համակարգերը: Միասնական տրանսպորտային համակարգ ունեն նաև ԱՊՀ երկրները, որոնց բաժինը համաշխարհային տրանսպորտային ցանցում 10 տոկոս է:

Աղյուսակ 6.4

Միջազգային փոխադրումների կառուցվածքն
ըստ տրանսպորտի տեսակների, տոկոս

Տրանսպորտի տեսակները	Բեռ	Մարդ
Ավտոմոբիլային	8	80
Երկաթուղային	16	10
Ծովային	61	1
Օդային	1	8
Գետային	3	1
Խողովակային	11	-

Միջազգային տրանսպորտն իրականացնում է բեռների և ուղևորների փոխադրում երկրների միջև: Ապահովում է մարդկանց և նյութական արժեքների տեղաշարժը, համաշխարհային շուկայում հանդես է գալիս որպես արտահանման և ներմուծման օբյեկտ: ՍՏՀ-ում տրանսպորտային ծառայությունների մակարդակն ազդում է արտաքին առևտրի արդյունավետության վրա, քանի որ դրանց արժեքն ազդում է ապրանքի գնի ձևավորման վրա: ՍՏՀ-ում տրանսպորտով ապահովումը կարելի է դիտել որպես արտադրանքի թողարկման, փոխադրման, պահեստավորման, կողմերի համար տեղեկությունների, ուղեկցող փաստաթղթերի պատրաստման, փոխադարձ պայմանագրերի կնքման, փոխադրողի հետ անհրաժեշտ գործարքների իրականացման կարևոր գործոն:

Աղյուսակ 6.5

Հայաստանի բեռնաշրջանառությունը 2000-2010 թթ.,
հազար տոննա

	2000 թ.		2005 թ.		2010 թ.	
	Արտ.	Ներմ.	Արտ.	Ներմ.	Արտ.	Ներմ.
Երկաթուղային	190.0	899.6	425.7	1107.5	340.8	1425.9
տեսակ. կշիռ, %	74.3	78.4	61.3	66.7	61.5	65.7
Ավտոմոբիլային	59.7	240.3	265.2	546.9	210.3	749.3
տեսակ. կշիռ, %	23.4	21.0	38.2	32.9	37.9	34.3
Օդային	6.0	7.8	3.7	5.6	3.3	5.5
տեսակ. կշիռ, %	2.3	0.6	0.5	0.4	0.6	0.3
Ընդամենը	**255.7**	**1147.7**	**694.6**	**1660.0**	**554.4**	**2180.7**

Տրանսպորտով ապահովման փուլում կատարվում է տրանսպորտի միջոցների վարձակալում, բրոքերային գործունեություն: Միջազգային փոխադրումները ձևակերպվում են բեռնատիրոջ և փոխադրողի միջև կնքվող փոխադրման պայմանագրով, որով փոխադրողը պարտավորվում է բեռը ժամանակին հասցնել նշված վայր:

Տրանսպորտային գործառնություններն իրականացվում են արտադրողների, վաճառողների, գնորդների, պատվիրատուի, միջնորդների, փոխադրողների կողմից՝ առաքման կետերում, ճանապարհին տրանսպորտի մի տեսակից մյուսը փոխադրելու ժամանակ: Օրինակ՝

- երկրի ներսում (ապրանքի մատակարարում, բեռների, միջոցների, սարքավորումների փոխանցում, հանձնում),
- երկրից դուրս (ապրանքի արտահանում):

Միջազգային փոխադրումները կարգավորվում են բազմակողմ համաձայնագրերով՝ տարածքային և համաշխարհային մակարդակներով: Այդ ոլորտը ղեկավարում են ՄԱԿ-ի մասնագիտացած օրգանները՝ Միջազգային ծովային կազմակերպությունը (ИМО), Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպությունը (ИКАО), բազմաթիվ միջպետական կազմակերպություններ:

Ծովային բեռնափոխադրումների տեսակարար կշիռը միջազգային ամբողջ բեռնափոխադրումների մեջ կազմում է 61-62, երկաթուղային տրանսպորտինը՝ 14.3, ավտոմոբիլային փոխադրումներինը՝ 10.2, ներքին ջրային տրանսպորտինը՝ 2.9 տոկոս: Սակայն այս ցուցանիշները տարբեր երկրներում տարբեր են: Մեծ Բրիտանիայում, Ճապոնիայում ծովային տրանսպորտը սպասարկում է տեղափոխվող բեռների 98, ԱՄՆ-ում՝ 90, Հունաստանում, Իսպանիայում՝ 94, Ֆինլանդիայում, Նորվեգիայում՝ 88 տոկոսը: Ծովային տրանսպորտն ունի ամենացածր ինքնարժեքը:

Միջազգային փոխադրումները լինում են ***ուղղակի,*** երբ փոխադրումը սպասարկվում է տրանսպորտի մեկ տեսակով, և ***կոմբինացված,*** երբ սպասարկումը կատարվում է տրանսպորտի երկու և ավելի տեսակներով:

Տրանսպորտի շուկայի զարգացման հետ փոփոխվել են նաև տեխնոլոգիան, գործարքների ձևերը և ծավալները: Այսպես, 1997 թ. Ռուսաստանի արտաքին կապերին մասնակցող տրանսպորտի բոլոր տեսակներով փոխադրվել է 560 մլն տոննա արտահանվող և ներմուծվող բեռ: Անցած 15 տարում օդային տրանսպորտով բեռնաշրջանառությունը կրկնապատկվել է, ծովային փոխադրումներն ավելացել են 1.5 անգամ:

Միջազգային տրանսպորտային ծառայությունները վաճառվում ու գնվում են միջազգային տրանսպորտային շուկաներում: Դրանք կախված են.

- ***փոխադրումների աշխարհագրությունից*** (միջերկրային, միջմայրցամաքային, իսկ 1990-ական թթ. կիրառվեցին նաև, տրանսպորտային միջանցքներ, որոնցով տրանսպորտային միջոցները միանում էին՝ մի շարք երկրների տարածքներով փոխադրումների համար),
- ***փոխադրումների տեսակներից*** (բեռնատար, մարդատար),
- ***տրանսպորտի տեսակներից*** (ծովային, ներքին ջրային, օդային, երկաթուղային, ավտոմոբիլային, խողովակաշարային):

Ծովային տրանսպորտը համաշխարհային տրանսպորտային համակարգի կարևոր մասն է և հիմնականում սպասարկում է միջազգային առևտրին: Ծովային տրանսպորտի աշխատանքում առանձին երկրների դերը որոշվում է բեռնաշրջանառության ծավալով: Առաջնային տեղ են գրավում Ճապոնիան, ԱՄՆ-ը, Հունաստանը, Մեծ Բրիտանիան, Ռուսաստանը, Չինաստանը (տե՛ս աղ. 6.6): Ի տարբերություն ցամաքային տրանսպորտի, ծովայինի գործունեությունը որոշվում է ոչ թե ճանապարհների ցանցով, այլ նավահանգիստների քանակով, իսկ վերջիններիս աշխատանքի ցուցանիշը ***բեռնաշրջանառությունն*** է: Ծովային փոխադրումների համաշխարհային շուկան արտադրողների և տրանսպորտի միջև պայմանագրերի համակարգ է: Համաշխարհային առևտրի ամբողջ բեռնաշրջանառության մոտ 70 տոկոսը կատարվում է ծովային տրանսպորտով: Ծառայությունների համաշխարհային շուկայում բացակայում է ծովային միջազգային տրանսպորտի միասնական շուկան, հետևաբար, միջազգային փոխադրումներն իրականացվում են ազգային կամ առանձին ընկերությունների միջոցով: Փոխադրումների կանոնները մեկնաբանվում են ***կոնոսամենտ*** կոչվող փաստաթղթում, որն ապրանքատիրոջը տրվում է փոխադրողի կողմից՝ ապրանքը փոխադրման հանձնելու պահին: Ապրանք առաքողին կամ լիազորված անձին այս փաստաթղթով իրավունք է վերապահվում հետ ստանալու ապրանքը՝ նշված նավահանգստում կոնոսամենտը ներկայացնելուց հետո:

Ծովային փոխադրումները դասակարգվում են.

- ըստ ֆրախտային նավերի տիպերի՝ չորաբեռների և տանկերային տոննաժների (մեծ դեր են խաղում տանկերային նավերը, որոնց բաժին է ընկնում ամբողջ տոննաժների 70 տոկոսը),
- ըստ նավերի օգտագործման՝ երթուղային և վարձակալական,
- ըստ աշխարհագրական բաժանման՝ հյուսիսեվրոպական, հյուսիսամերիկյան, հարավամերիկյան, միջերկրածովային, հեռավոր արևելյան:

Ծովային փոխադրումների աճը տեղի է ունենում զարգացած պետությունների նավատորմիղների տոննաժների ավելացման հաշվին, որոնք կազմում են համաշխարհային առևտրական նավատորմիղի 2/3-ից ավելին: Աշխարհում ամենամեծ առևտրական նավատորմիղը Ճապոնիայինն է, որի բեռնափոխադրումներն ավելի շատ են, քան Մեծ

Բրիտանիայի, Գերմանիայի, Նորվեգիայի բեռնափոխադրումները միասին:

Աղյուսակ 6.6

Առանձին երկրների բեռնափոխադրումները և նավերի քանակը[46]

Երկրներ	Նավերի քանակը	Տարողությունը, տոննա
Ճապոնիա	4 295	61 535 870
Հունաստան	3 144	67 453 656
ԱՄՆ	2 091	38 243 232
Մեծ Բրիտանիա	1 932	30 928 561
Նորվեգիա	1 652	30 093 038
Հոնկոնգ	2 932	19 045 742
Ռուսաստան	2 186	10 903 866
Չինաստան	1 643	17 956 368
Գերմանիա	1 548	12 734 225

Ռուսաստանի նավատորմիղը ևս մյուս երկրներին տրանսպորտային ծառայություններ է տրամադրում: Ներկայում իրականացվում է 10 հազար երթ Եվրոպայի, Ամերիկայի և Աֆրիկայի 44 երկրի 650 նավահանգստում:

Ներքին ջրային տրանսպորտն ուրույն տեղ ունի տրանսպորտային համակարգում: Եվրոպայի և Հյուսիսային Ամերիկայի 30 խոշոր երկրների ներքին ջրային ուղիների երկարությունը կազմում է 175 հազար կմ: Դրանցով տարեկան փոխադրվում է 1200 մլն տոննա բեռ, որից 780 մլն տոննան կազմում են արտաքին փոխադրումները: Գետային տրանսպորտն առավել զարգացած է ԱՄՆ-ում, Գերմանիայում, Կանադայում, Ֆրանսիայում, Չինաստանում, Ռուսաստանում: Ռուսաստանում գետային փոխադրումների տարեկան ծավալը կազմում է 10 մլն տոննա:

Ավտոմոբիլային տրանսպորտը վերջին տասնամյակում ավելի է զարգացել: Ավելացել է փոխադրումների ծավալը: 1975-2000 թթ. կրկնապատկվել են բեռնամեքենաների համաշխարհային ավտոպարկերը: Դրանց 3/4-ը պատկանում է Եվրոպային և Հյուսիսային Ամերիկային, որոնք տարեկան փոխադրում են 16 մլրդ տոննա բեռ: Ավտոմոբիլային փոխադրումները կազմում են ամբողջ բեռնափոխադրումների 6-8 տոկոսը: Համաշխարհային տրանսպորտային ցանցի 70 տոկոսը՝ 26 մլն կմ, կազմում են ավտոճանապարհները, որոնցից 6.2 մլն-ն ԱՄՆ-ում են: Համաշխարհային ավտոմոբիլային պարկում հաշվվում է ավելի քան 600 մլն ավտոմեքենա, որի 20 տոկոսը դարձյալ ԱՄՆ-ում են: Ռուսաստան ներմուծվող բեռները բեռնաշրջանառության մեջ

[46] Международные экономические отношения, уч., Юнити, 1999, стр. 257.

կազմում են 70, արտահանվողները՝ 30 տոկոս: Ռուսաստանը Լեհաստանից տարեկան ընդունում է 20, Բուլղարիայից՝ 20, Լիտվայից՝ 12, Ուկրաինայից՝ 11, Լատվիայից՝ 10, Սլովակիայից՝ 5.5 հազար միավոր շարժակազմ: Յուրաքանչյուր 1000 դոլար ծախսի դեպքում ավտոտրանսպորտով բեռների փոխադրման միջին հեռավորությունն ԱՄՆ-ում կազմում է 1290, ԵՄ-ում՝ 930, Ռուսաստանում՝ 775 կմ: Ավտոմոբիլային տրանսպորտը միջազգային փոխադրումներին մասնակցել է 1960-ական թվականներից: Ուղևորափոխադրումների և բեռնափոխադրումների իրականացման ու կազմակերպման պայմանները սահմանվում են պետական մակարդակով երկկողմանի համաձայնագրերով: Բեռնափոխադրումները կարգավորվում են 1956 թ. կնքված «Միջազգային փոխադրումների մասին» կոնվենցիայով: Բեռնագրերի ձևերը և բեռների տեղափոխման համար համապատասխան միջազգային սակագները սահմանվել են Ավտոտրանսպորտի միջազգային միության կողմից: Օրինակ՝ Հայաստանը և Ռուսաստանը համաձայնագիր են կնքել միջազգային ավտոմոբիլային հաղորդակցության մասին՝ ըստ որի պետք է իրականացվեն մարդատար և բեռնատար փոխադրումներ, որոնց ընթացքում միմյանց տարածքներով տեղափոխված բեռների դիմաց երկուստեք ազատվում են մաքսային տուրքերից, հարկերից:

Օդային տրանսպորտը փոխադրումների հատուկ ձև է: Միջազգային օդային ուղիների երկարությունը 2000 թ. կազմել է 8 մլն կմ: Վերջին 10 տարում աշխարհում օդային մայրուղիների ընդհանուր երկարությունը կրկնապատկվել է, իսկ ուղևորների փոխադրումներն ավելացել են 1.6 անգամ: Ուղևորների թիվը տարեկան հասել է 1.2 մլրդ մարդու: Միջազգային ավիափոխադրումները կազմում են օդային բոլոր փոխադրումների 54 տոկոսը: Օդային փոխադրումների կազմակերպման իրավական հիմք են ***միջպետական համաձայնագրերը:*** Օդային տրանսպորտով իրականացվում են.

- ուղևորափոխադրումներ,
- բեռնափոխադրումներ,
- հատուկ փոխադրումներ:

Միջազգային փոխադրումների համար, որպես հիմնական փաստաթուղթ, ծառայում են ***ավիաբեռնագիրը*** և ***բեռնադիմումը***: Միջազգային ավիացիայի սակագներով զբաղվում է օդային տրանսպորտի Միջազգային ասոցիացիան: Առավել շատ ուղևորներ տեղափոխում են ԱՄՆ-ը, Ռուսաստանը, Ճապոնիան, Մեծ Բրիտանիան, Կանադան, Ֆրանսիան, Գերմանիան, Չինաստանը: Աշխարհում հաշվարկվում են 25000 օդանավակայաններ, որոնցից 34 խոշոր օդանավակայանների կեսն ԱՄՆ-ում են, 8-ը՝ Եվրոպայում: Ըստ օդային փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների հաշվետվությունների՝ Հայաստանում 2000 թ. փոխադրվել է 611.6, 2002 թ.՝ 872.0 և 2004 թ.՝ 943.1 հազար ուղևոր: Համապատասխանաբար 302.3 (49.5 տոկոս), 410.7 (47.1

տոկոս) և 370.8 (39.3 տոկոս) հազարը կազմել են փոխադրումները հայաստանյան շարժակազմով:

Երկաթուղային, օդային, ավտոմոբիլային, խողովակաշարային փոխադրումներով զբաղվում է 66 կազմակերպություն: Հայկական ավիաուղիները թռիչքներ է կատարում աշխարհի 23 երկրների 70 քաղաքներ, ինչը կազմում է Հայաստանից բոլոր թռիչքների 50 տոկոսը: Մնացածը սպասարկում են օտարերկրյա ավիաուղիները:

Երկաթուղային տրանսպորտը համարվում է ամենաավանդականը: Առաջավոր 42 երկրի երկաթուղիների ընդհանուր երկարությունն անցնում է 915 հազար կմ-ից, որոնցով տարեկան տեղափոխվում է 3.7 մլրդ տոննա բեռ: Տրանսպորտային ընդհանուր շուկայում պակասել են երկաթուղու փոխադրումները՝ կապված ավտոմոբիլային և օդային փոխադրումների զարգացման հետ: Համաշխարհային երկաթուղային ցանցի տեղաբաշխումն անհամաչափ է: Թեև երկաթուղի ունեն աշխարհի 160 երկիր, սակայն դրանց ընդհանուր երկարության 50 տոկոսը բաժին է ընկնում ԱՄՆ-ին, Կանադային, Ռուսաստանին, Հնդկաստանին, Չինաստանին, Գերմանիային, Արգենտինային, Ավստրալիային, Ֆրանսիային, Բրազիլիային: Բեռնաշրջանառության քանակով առաջատարներ են Ռուսաստանը, ԱՄՆ-ը, Չինաստանը, Կանադան, Լեհաստանը: Փոխադրման պայմանագիր է ծառայում ***երկաթուղային բեռնագիրը***, որտեղ նշվում են փոխադրման վայրը, վճարը, բեռի արժեքը, քանակը:

Խողովակաշարային տրանսպորտն ավելի արագ զարգացող փոխադրումների ձև է: 90-ական թվականների վերջերին աշխարհում խողովակաշարերի ընդհանուր երկարությունը կազմում էր 1.5 մլն կմ, որից նավթամուղների երկարությունը՝ 600 և գազամուղներինը՝ 900 հազար կմ էր: Մայրուղային խողովակաշարերի ընդհանուր երկարության կեսը բաժին է ընկնում ԱՄՆ-ին, 1/6-ը՝ Ռուսաստանին, 10 տոկոսը՝ Կանադային: Ամենաերկար նավթամուղերը կառուցվել են ԱՊՀ երկրներում, ԱՄՆ-ում, Կանադայում, Սաուդյան Արաբիայում: Գազամուղների մեծ ցանց ունեն զարգացած երկրները: ԱՄՆ-ը, Գերմանիան, Ֆրանսիան, Իտալիան, Լեհաստանը, Չեխիան ունեն ***սպառող-ներմուծող***, իսկ ԱՊՀ երկրները, Կանադան, Նիդեռլանդները՝ ***սպառող-արտահանող*** կողմնորոշում: Համաշխարհային գազաշրջանառության 4 մլրդ տ/կմ բեռնաշրջանառությունից մոտ 2 մլրդ-ը բաժին է ընկնում Ռուսաստանին, որտեղ կառուցվել են աշխարհի ամենամեծ նավթամուղները («Դրուժբա», «Պրոգրես») և գազամուղները («Յուսիսափայլ», «Սոյուզ»): 2010 թ. խողովակաշարով Հայաստան է ներմուծվել 1179.3 հազար տոննա գազ:

6.6 Ապահովագրական ծառայություններ

ՄՏՀ համակարգում ապահովագրությունը պայմանավորված է ՄՏՀ բոլոր ձևերի՝ ապրանքների ու ծառայությունների, կապիտալի ու աշխատուժի միջազգային շարժի գործընթացներով: Անհրաժեշտ է ՄՏՀ-ում ստեղծել տարբեր ծառայություններ, որոնք կնշակեն ապահովագրական ծրագրեր՝ ապահովելու համար անվտանգությունը և ճիշտ կազմակերպելու համար գործընթացները՝ կապված տարերային աղետների, արտակարգ իրավիճակների, տնտեսական, քաղաքական, ռազմական պայմանների, անկանխատեսելի երևույթների հետ:

Ապահովագրությունը դասակարգվում է.

- ըստ կազմակերպման ձևի՝ պետական, բաժնետիրական, խառը,
- ըստ ապահովագրության օբյեկտների՝ գույքի, անձի ապահովագրություն,
- իրավաբանական տեսանկյունից՝ պարտադիր, կամավոր:

Ապահովագրության արտաքին միջավայրը (գնումներ, պատասխանատվություն, հսկողություն, կառուցվածք) գլոբալացման ազդեցությամբ փոփոխություններ է կրել: Ապահովագրական շուկան բարդ, ինտեգրված համակարգ է, որը պարունակում է տարբեր օղակներ.

- բաժնետիրական ապահովագրական ընկերություններ,
- մասնագիտացած ապահովագրական ընկերություններ,
- փոխադարձ ապահովագրական միություններ,
- արտահանման վարկերի պետական ապահովագրում:

Ապահովագրական շուկան դիտվում է երկու տեսանկյունից.

- ինստիտուցիոնալ՝ բաժնետիրական ընկերությունների, կորպորացիաների և պետական ապահովագրական ընկերությունների ձևով,
- տարածքային՝ տեղական, ազգային, միջազգային:

Ապահովագրական գործի զարգացման մեջ առաջատար դիրք ունեն ԱՄՆ-ը, Մեծ Բրիտանիան, Գերմանիան, Ճապոնիան, Իտալիան, Ֆրանսիան, Նիդեռլանդները, Կանադան, Շվեյցարիան: ԱՄՆ-ում գույքի ապահովագրության ոլորտում ամենամեծ ընկերությունը SIGNA կորպորացիան է (1982 թ.): Մեծ Բրիտանիայում գործում են ավելի քան 900 ապահովագրական ընկերություններ և 376 սինդիկատներ:

2003 թ. Հայաստանում գործում էր ապահովագրական 23 ընկերություն (11 ՍՊԸ, 11 ՓԲԸ, 1 ԲԲԸ) և 4 ապահովագրական բրոքեր (3 ՍՊԸ և 1 անհատ ձեռնարկատեր): Նույն թվականի հուլիսի 1-ի դրությամբ Ընկերությունների կանոնադրական կապիտալում օտարերկրյա ներդրումների մասնաբաժինը կազմում էր 12.6 տոկոս: Հայաստանում ապահովագրության հիմնական տեսակներ համարվում են.

- բեռների,

- փոխադրամիջոցների,
- ֆինանսական,
- ավիացիոն
- շինմոնտաժային աշխատանքների,
- գրավի,
- ֆիզիկական, իրավաբանական անձանց գույքի,
- դժբախտ դեպքերի, աղետների ապահովագրությունները:

Ապահովագրվում են նաև գյուղատնտեսության ոլորտի օբյեկտները, արտասահմանյան վարկերի և ներդրումների գործընթացները:

Ապահովագրության ծառայությունների ստեղծումը կապված է ծառայությունների շուկայի զարգացման հետ: Միջազգային ապահովագրության մեջ տրանսպորտային ապահովագրումը գլխավոր տեղ է գրավում:

Զբոսաշրջության զարգացումը հանգեցնում է կյանքի, իսկ միջազգային վարկավորումը՝ վարկերի ապահովագրման անհրաժեշտության: Միջազգային ցանկացած ապահովագրում իրականացվում է ապահովագրական պայմանագրի կնքմամբ: Եթե պայմանագրի մասնակիցները գտնվում են տարբեր երկրներում, ապա գործարքը համարվում է ***միջազգային:***

Միջազգային ապահովագրական գործարքներն են.

- ***ուղղակի պայմանագրային գործարքները,*** որոնք կնքվում են ինչպես անմիջապես արտասահմանյան ապահովագրական ընկերությունների, այնպես էլ միջնորդ ապահովագրողների հետ,
- ***ուղղակի ապահովագրության պայմանագրերը***, որոնք կնքվում են արտասահմանյան ապահովագրող գործակալությունների միջև,
- ***ինստիտուցիոնալ ապահովագրության ձևը***, որը կնքվում է արտասահմանյան իրավաբանական ընկերությունների կողմից,
- ***վերաապահովագրական գործարքները,*** որոնք կարող են իրականացվել տարբեր ընկերությունների կողմից՝ իրար մեջ կնքված պայմանագրի հիման վրա՝ պատասխանատվության մի մասը դնելով այլ ապահովագրողի վրա:

Համաշխարհային մասշտաբով կարևոր դեր է խաղում ԱՄՆ ապահովագրական շուկան, որը կազմում է համաշխարհային ապահովագրական շուկայի 50 տոկոսը: Այն առաջատար է և՛ ապահովագրության ծավալով, և՛ բնակչության շնչի հաշվով: Կարևոր է նաև անգլիական ապահովագրական սեկտորի դերը: Ընդլայնվում է Ռուսաստանի ապահովագրական շուկան:

Ինչպես բոլոր ծառայությունների, այնպես էլ ապահովագրական շուկան ձևավորվել է բավական վաղ: Որպես շուկայի գործակալներ, հանդես են գալիս խոշոր ազգային և միջազգային բանկերը՝ ծառայություն մատուցելով ոչ միայն իրենց երկրի, այլև արտասահմանյան պատվիրատուներին: Բանկերի կողմից միջազգային մակարդակով

կատարվող ավանդների, վարկերի, էմիսիոն գործարքների, միջազգային փոխառությունների, արժեթղթերի բաց թողումը և տարածումը, անդրազգային կորպորացիաների զարգացումը, մանր ու միջին ընկերությունների կրճատումը պահանջում են բանկային և ապահովագրական ծառայությունների միջազգայնացում և ազատականացում: 1997 թ. դեկտեմբերին ՄԱԿ-ի շրջանակներում ստորագրվել է ֆինանսական ծառայությունների շուկայի ազատականացման մասին համաձայնություն՝ ըստ որի 100 պետություն պարտավոր են ապահովել իրենց ֆինանսական շուկաների տարբեր աստիճանի բաց լինելը:

Փոքր երկրները՝ ներքին նեղ շուկայով և թույլ ապահովված բնական ռեսուրսներով, վարում են ավելի ***բաց տնտեսություն,*** քան խոշոր երկրները: Տնտեսության բաց լինելու աստիճանը որոշվում է հարաբերական ցուցանիշով՝ արտաքին երկրներից տնտեսության կախվածությամբ, և ***բացարձակ ցուցանիշով*** բնակչության մեկ շնչի հաշվով արտաքին առևտրի շրջանառությամբ կամ արտահանման չափերով: Բաց տնտեսության ամենաբարձր ցուցանիշն ունեն Լյուքսեմբուրգը, Շվեյցարիան, Բելգիան, Իսլանդիան, Նիդեռլանդները, որտեղ բնակչության մեկ շնչին բաժին ընկնող արտաքին առևտրի շրջանառությունը գերազանցում է 15 հազար դոլարը:

ԱՄՆ-ում արտասահմանյան բանկերն իրավունքով հավասարվում են տեղականներին: Այստեղ կարող են արտասահմանցիներին թույլ տալ բանկեր գնել բոլոր նահանգներում: Շվեյցարիան հրաժարվում է արտասահմանյան բանկերի նկատմամբ մի քանի խտրական պահանջներից: Բրազիլիան պակասեցնում է բանկային սեկտորում պետության միջամտությունը: Սակայն ԱՀԿ-ին միանալու դեպքում անխուսափելի են դառնում ֆինանսական ծառայությունների սեփական շուկա բացելու պայմանները: Իրականում Ռուսաստանը, որը չի մասնակցել ֆինանսական ծառայությունների շուկայի ազատականացման բանակցություններին, դա կարող է անել կամ ԱՀԿ ստանդարտ դրույթի հիման վրա, այսինքն՝ իր շուկա ներթափանցողների համար մտցնելով ֆինանսական ծառայությունների համաձայնեցված սահմանափակումներ կամ միանալով ԱՀԿ միջազգային մակարդակով մշակված ֆինանսական ծառայությունների առևտրի մասին դրույթին, որը նախատեսում է ավելի կոշտ պարտավորություններ:

6.7 Միջազգային այլ ծառայություններ

ՄՏՀ-ում գործում են նաև ***ֆրանչայզինգ, ինժինիրինգ, նոու-հաու, կոնսալտինգ, լիզինգ, ֆակտորինգ*** ծառայությունները:

Ֆրանչայզինգը (անգլ.՝ իրավունք) տեխնոլոգիաների և ապրանքային նշանների լիցենզիաների վաճառք է կամ փոխանակման համակարգ: Դրա էությունն այն է, որ ընկերությունը, շուկայում ունենալով մեծ հեղինակություն, որոշակի պայմաններով սպառող ընկերությանն

իրավունք (լիցենզիա) է տալիս իր տեխնոլոգիան իր ապրանքային նշանի տակ օգտագործելու և եկամուտ ստանալու: Ֆրանչայզինգ իրականացնողը ***ֆրանչայզերն*** է (լիցենզիատ): Ըստ պայմանագրի՝ գործունեության իրավունքը տրվում է որոշակի ժամանակով: Կոմերցիոն գործարքներում ֆրանչայզերը տիրոջ իրավունքն է, իսկ ֆրանչայզինգը՝ օգտվողի: Ֆրանչայզերը կատարում է ***երկու գործառույթ.***

- կապիտալի տրամադրում առևտրական ձեռնարկությունների ստեղծման համար,
- սեփական առևտրական ձեռնարկությունների ղեկավարում:

Ֆրանչայզինգը ֆրանչայզերին հնարավորություն է տալիս.

- նվազագույն կապիտալ ներդրումներով ավելացնելու առևտրական ձեռնարկությունների քանակը,
- դառնալու ինքնուրույն ձեռնարկատեր,
- վարելու սեփական բիզնեսը ֆրանչայզերի՝ հայտնի առևտրական նշանի տակ,
- ֆրանչայզերից ստանալու օգնություն և այլն:

Գոյություն ունի ֆրանչայզինգի մի քանի տեսակ.

- ***արտադրական,*** երբ տեխնոլոգիաների սեփականատեր ընկերությունն արտադրանքի պատրաստումը փոխանցում է գործընկեր ընկերությանը՝ տվյալ արտադրանքը թողարկելու և իրացնելու համար,
- ***ապրանքային,*** երբ ընկերությունը կամ ձեռնարկությունն ապրանք է մատակարարում մյուս ընկերությանը՝ առաջատար ընկերության առևտրական մակնիշով (նշան) իրացնելու համար,
- ***ծառայության ոլորտի,*** որը հիմնականում նման է ապրանքային ֆրանչայզինգին, և տարբերությունը միայն համագործակցության օբյեկտների մեջ է:

Միջազգային ֆրանչայզինգ հիմնականում օգտագործում են ամերիկյան ընկերությունները: Ֆրանչայզինգի նոր ձև են արտոնագրերով կոմբինացված փոխանակումներն անմիջապես դիլերների միջև: Այս ձևը կիրառվում է հատկապես սննդամթերքի առևտրի ոլորտում և ճաշարանային բիզնեսում:

Ռուսաստանում ֆրանչայզինգի հարաբերությունները զարգացել են ապրանքային և ծառայությունների ոլորտում: Նախկինում ռուսական շուկայում այդ համակարգով աշխատում էին արտասահմանյան ընկերությունները, իսկ այժմ ակտիվացել են նաև ռուսականները:

Ինժինիրինգը (անգլ.՝ գյուտարարություն) շինարարական օբյեկտների և ձեռնարկությունների ստեղծման նպատակով ինժեներակոնստրուկտորական ծառայությունների և ինժեներական օբյեկտների կապիտալ ներդրումների արդյունավետ օգտագործման մեթոդ է: Այն արտադրության պրոցեսների իրականացման, արտադրանքի իրացման, շինարարությունների և արդյունաբերության ենթակառուցվածքների

սպասարկման, այլ օբյեկտների շահագործման, առանձին համալիր ծառայությունների ոլորտ է: Ինժինիրինգային ծառայությունների միջազգային գործարքի էությունն այն է, որ արդյունաբերական և այլ օբյեկտների նախագծման ու կառուցման ընթացքում մի երկիրը մյուսին տրամադրում է ինժեներահաշվարկային, խորհրդատվական և ինժեներաշինարարական ծառայություններ: Ինժինիրինգի հիմնական ***խնդիրը*** պատվիրատուների կապիտալ ներդրումներից ավելի շատ արդյունք ստանալն է:

Ինժինիրինգային ծառայությունների շուկան գործունեությունը սկսել է 1960-ականների վերջին և զարգացել է անհամաչափ: 1960-1970 թթ. եվրոպական երկրներում նկատվել է ինժեներախորհրդատվական ծառայությունների արտահանման աճ՝ պայմանավորված զարգացող երկրներին հատկացվող միջազգային օգնության ծրագրերի իրականացմամբ: 1970-1980 թթ. ծառայությունների այդ տեսակի պահանջը նվազել է: Սակայն 1980-ականների երկրորդ կեսին նորից աշխուժություն է նկատվել հատկապես Կենտրոնական և Արևելյան Եվրոպայում: 1990 թ.-ից ինժեներախորհրդատվական ծառայությունների ազգային շուկաները, ծառայություններն ընդլայնվել են, ինչը որոշակի դեր է խաղացել մասնավոր ինվեստիցիաների ավելացման գործում: Ինժինիրինգային ծառայություններն իրականացվում են ***երեք հիմնական մեթոդներով.***

1. Աշխատանքի մեծ մասը կատարում են պատվիրատուն կամ տեղական ընկերությունները: Այս դեպքում արտասահմանյան ինժինիրինգային ընկերությունը հանդես է գալիս որպես խորհրդատու:

2. Ինժինիրինգային ծառայությունների մեծ մասը կատարվում է արտասահմանյան ընկերությունների կողմից:

3. Օբյեկտների համալիր աշխատանքների կատարման պարտականությունները պայմանագրով իրենց վրա են վերցնում արտասահմանյան կապալառուները:

Ինժինիրինգային ծառայությունների շուկայի զարգացման վրա ազդում են ***երեք գործոններ.***

- պետական և մասնավոր ինվեստիցիաների ծավալները, որոնք թույլ են տալիս ընդլայնել շինարարությունը, և նոր օբյեկտների շահագործումը,
- խորհրդատվական ծառայությունների արտահանման անհրաժեշտությունը՝ կապված տարբեր երկրներում ԳՏԱ արդյունքի միատեսակ չլինելու հետ,
- ինժինիրինգային ծառայությունների շուկայում ազատ կապիտալի առկայությունը:

Ինժինիրինգային ծառայություններն իրականացվում են արդյունաբերական և շինարարական, ինժեներախորհրդատվական հատուկ

ընկերությունների կողմից: Ինժինիրինգային ծառայությունների ***օբյեկտներն*** են.

- մինչնախագծային, նախագծային, հետնախագծային և մասնագիտացած ծառայությունները, որոնք ավելի լայն կիրառում ունեն բնակարանային և արդյունաբերական շինարարության ու ենթակառուցվածքների օբյեկտների կառույցներում,
- արտադրական գործընթացների նորմալ ընթացքի և արտադրանքի իրացման ծառայությունները, այսինքն՝ ձեռնարկությունների շահագործումը և կառավարումը:

Ինժեներախորհրդատվական ծառայությունների զգալի մասը բաժին է ընկնում Մեծ Բրիտանիային: Ավելի պակաս բաժին ունեն Գերմանիան, Դանիան, Ֆրանսիան և Իտալիան: Այս ծառայություններն արտահանողների մեջ առաջատար դիրք ունեն ամերիկյան, ճապոնական, ֆրանսիական կապալառու ընկերությունները: Ասիական, Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի շուկան մնում է որպես ծառայություններ ներմուծող: Փոփոխվել են ծառայությունների ճյուղային կառուցվածքը և պայմանագրերի աշխարհագրական բաժանումը:

Աղյուսակ 6.7

225 առաջատար կապալառու ընկերությունների կոնտրակտների աշխարհագրական տեղաբաշխումը (մլրդ դոլար)[47]

Երկրներ	1992 թ.	1995 թ.	1997 թ.
Միջին Արևելք	28.2	16.7	19.7
Աֆրիկա	14.5	12.9	14.3
Լատինական Ամերիկա	13.7	10.1	11.3
Ասիական-Խաղաղօվկիանոսյան տարածաշրջան	42.6	49.3	53.8
ԱՄՆ և Կանադա	13.1	16.9	19.6
Եվրոպա	34.4	34.6	38.2
Ամբողջը	146.5	140.5	156.9

Ինժինիրինգային ծառայությունների շուկան, որպես միջազգային ծառայությունների շուկայի մի մասը, ունի ընդլայնման միտում: Ներկայում ինժեներային տարբեր ծառայություններ (նախագծում, շինարարություն և այլն) դարձել են միջազգային փոխանակության օբյեկտ:

Վերջին ժամանակներում ծառայությունների միջազգային շուկայում կիրառվում է ծառայության նոր տեսակ՝ ***ռեինժինիրինգ,*** որը կազմակերպությունների և առևտրաարտադրական կառավարման, տնտեսական օբյեկտների վերակառուցման, ֆինանսական կայունության

[47] Международные экономические отношения, учебник, Юнити, М., 1999, стр. 247.

ինժեներախորհրդատվական ծառայություն է: Այն կարող է լինել ***ճգնաժամային*** և ***զարգացման: Ճգնաժամային ռեինժինիրինգի*** նպատակը տնտեսական խնդիրների լուծումն է: Կիրառվում է այն դեպքում, երբ տնտեսական սուբյեկտի ֆինանսաառևտրական և արտադրական արդյունավետությունն իջնում է: ***Զարգացման ռեինժինիրինգը*** կիրառվում է, երբ արտադրական-առևտրական և ինվեստիցիոն գործընթացների կառավարման գործող կառուցվածքն արդեն հասել է օգուտների ստացման մակարդակին:

ՄՏՀ-ում կարևոր մաս են կազմում գիտելիքների, փորձի և ԳՏ տեղեկատվության տեսքով փոխանակումները, որոնք մաքուր տեսքով իրենցից ներկայացնում են ***նոու-հաու***: Տեխնիկական բնույթով նոու-հաուն ընդգրկում է.

- արտադրանքների, մեքենաների, ապարատների, առանձին դետալների, գործիքների, հարմարանքների, չգրանցված փորձնական նմուշների մշակումները,
- տեխնիկական փաստաթղթեր (հաշվարկներ, պլաններ, նախագծեր, փորձի արդյունքներ, կատարված գիտահետազոտական աշխատանքների ցուցակներ), տվյալներ նյութերի որակի մասին,
- անձնակազմի պատրաստման ուսումնական պլանները:

Նոու-հաուի վաճառքն ունի առանձնահատկություններ: Գնորդը պետք է մասնակի ծանոթանա նրա էությանը: Նոու-հաուի գինը որոշելիս պետք է հաշվի առնել, որ այն փոխհատուցվում է ապագա օգուտներից, որոնք օգտագործողին պետք են: Վերջինս կարող է քիչ օգուտ ստանալ կամ բոլորովին չստանալ: Համաշխարհային պրակտիկայում նոու-հաուի գինը կազմում է ապագա օգուտի 5, առանձին դեպքերում՝ մինչև 2 տոկոսը: Ի տարբերություն արտադրության գաղտնիքների՝ նոու-հաուն չի արտոնագրվում, քանի որ զգալի մասը ստացվում է որոշակի հնարքներից:

Ժամանակակից պայմաններում ԳՏՀ զարգացմանը զուգահեռ ավելի մեծ նշանակություն են ձեռք բերում ***կոնսալտինգային ծառայությունները: Կոնսալտինգն*** առանձին կոմերցիոն բնույթի ծառայությունների ինքնուրույն ոլորտ է, որի նպատակն է ապահովել արդյունքի թողարկման, արտադրության և իրացման գործընթացը: Այն ծառայությունների ամբողջություն է՝ կապված հաճախորդների պատվերով տեղեկատվության մշակման, ԷՀՄ-ով տեղեկատվության սպասարկման, խորհրդատվության և փորձագիտական տարբեր տնտեսական գործունեությունների հետ: Կոնսալտինգային ծառայությունների արտահանումը կարող է իրականացվել ներմուծող երկիր տեղափոխելու միջոցով: Կոնսալտինգային ծառայություններին վերաբերում են.

- պրոֆեսիոնալ մենեջերների, ընկերությունների կողմից ծառայությունների անմիջապես կառավարումը,
- տնտեսական օբյեկտներին օգնելը:

Տվյալ դեպքում կոնսալտինգային ընկերությունները լրիվ հսկողություն են սահմանում առաջարկվող ծրագրերի պատվերների իրականացման վրա:

Կոնսալտինգային ծառայությունների շուկան ամենաշարժունակն է: Այդտեղ գլխավոր վաճառողը մասնավոր ***սեկտորն*** է: ԱՄՆ կոնսալտինգային առաջատարներից է «Մակկինսի» ընկերությունը: Ճապոնիայի կոնսալտինգային ծառայությունների շուկան տարբերվում է ամերիկյանից: Այն ներկայանում է ***երեք տեսակ ընկերություններով: Առաջինը*** զբաղվում է անձնակազմի և արտադրության հարցերով, ***երկրորդն*** օգնություն է ցույց տալիս ձեռնարկությունների ռազմավարության մշակման գործին, և ***երրորդը,*** այսպես կոչված, «ուղեղային կենտրոններն» են:

Վերջին տարիներին կոնսալտինգային ծառայություններ սկսել են զարգանալ նաև Ռուսաստանում: Ավելի արագ զարգանում է լսարանային ծառայությունների շուկան, որի բաժինը կազմում է ամբողջ շուկայի 75 տոկոսը: Ավելի մեծ բաժին են կազմում բանկային աուդիտը (22 մլն ռուբլի) և ապահովագրական ծառայությունները (9.7 մլն ռուբլի):

Լիզինգային ծառայություններն արտադրական նշանակության կառույցների, տրանսպորտային միջոցների, մեքենաների, տեխնոլոգիական սարքավորումների, շարժական և անշարժ գույքի (բացի հողատարածքներից և բնական օբյեկտներից) ***երկարաժամկետ վարձակալություն են:*** Դրանք ի հայտ են եկել 1950-ական թվականներին ԱՄՆ-ում և 60-ական թվականներին՝ Արևմտյան Եվրոպայում: Ներկայում լայն տարածում են ստացել տնտեսության տարբեր ճյուղերում, քանի որ ինվեստիցիաների պահանջը չի կարող բավարարվել սեփական միջոցների և բանկային վարկերի օգտագործման հաշվին: Լիզինգատերը լիզինգային օբյեկտի սեփականատերն է: Նա պայմանագիր է կնքում՝ ապահովագրելով լիզինգային կոնտրակտի ամբողջ ժամկետը: Լիզինգը վարձակալության ինքնատիպ պայմանագիր է հաճախորդ-վարձակալին ապրանք տրամադրելու համար:

Լիզինգային համաձայնագիրը հիմնական փաստաթուղթ է, որը որոշում է լիզինգատերերի և լիզինգ ստացողների միջև հարաբերությունների որոշակի բնույթը: ***Լիզինգի սուբյեկտ*** են լիզինգատու իրավաբանական և ֆիզիկական անձինք, արտասահմանի ինվեստիցիոն ձեռնարկությունները և անհատ ձեռներեցները: Լիզինգային գործարք համարվում են այն ծառայությունները, երբ մեկ տարուց ավել ժամանակով միջոցները վճարային կարգով հանձնվում են գնորդին օգտագործման համար: Գույքի միջոցների օգտագործման վերաբերյալ վարձակալի և վարձատուի միջև կնքվում է պայմանագիր, որը պահպանում է սեփականատիրոջ իրավունքը: Լիզինգային ծառայությունները լինում են ***ֆինանսական*** և ***օպերատիվ:***

Ֆինանսական լիզինգի դեպքում վարձակալության գումարը վճարվում է պայմանագրով սահմանված ժամկետում սարքավորումների մաշվածքի լրիվ արժեքի չափով: Եթե պայմանագրի ժամկետը լրանում է, ապա հնարավոր է, որ.

- սարքավորումների սեփականության իրավունքը մնացորդային արժեքով անցնի վարձակալին,
- վարձակալության օբյեկտը վերադարձվի վարձատուին,
- վարձակալության ժամկետը երկարեցվի նոր պայմանագրով:

Օպերատիվ լիզինգը կնքվում է ավելի կարճ ժամանակով, քան սարքավորումների մաշվածքի ժամկետը: Վարձակալության ժամկետը լրանալիս՝ կիրառվում են նույն սկզբունքները, ինչ ֆինանսական լիզինգի դեպքում:

Լիզինգային ծառայությունների պայմանագրի դեպքում սարքավորումներն օգտագործելու ընթացքում վարձակալը որևէ պատասխանատվություն չի կրում, իսկ վարձակալության ժամկետները կախված են մեքենասարքավորումների տեսակից, դրանց ֆիզիկական մաշվածքի երաշխավորված ժամկետներից:

Լիզինգը կարող է լինել ***ուղղակի,*** երբ մեքենասարքավորումներ տրամադրողը դրանք անմիջապես ստացողին է փոխանցում, և ***միջնորդությամբ լիզինգ,*** երբ արտադրողի և ստացողի միջև կա միջնորդ օղակ, որն առք ու վաճառքի պայմանագիր է կնքում և՛ արտադրողի, և՛ ստացողի հետ: Լիզինգատուն կատարում է տրամադրվող միջոցների պահպանման, ապահովագրման, շահագործման և նորոգման ծախսերը:

Լիզինգը լինում է ***ներքին*** և ***միջազգային***: Եթե լիզինգային ընկերությունն ազգային ընկերություններից գնում է սարքավորումներ և տրամադրում արտասահմանյան վարձակալին, լիզինգային ծառայությունը համարվում է ***միջազգային*** (արտահանում): Արտասահմանյան ընկերություններից սարքավորումների գնման և հայրենական վարձակալին տրամադրելու գործարքը համարվում է ***ներքին լիզինգ*** (ներմուծում): 1980-ական թվականներին լայն տարածում ստացավ նաև ***խաչաձև լիզինգավորումը:***

Միջազգային արժութային հիմնադրամի կանոնների համաձայն՝ վճարման և վարձակալության պարտքերը չեն մտնում պետության արտաքին պարտքերի մեջ: Այդ պատճառով միջազգային լիզինգային ծառայությունները շատ երկրներում պետական աջակցություն չեն ստանում: Կապիտալ ներդրումների ընդհանուր ծավալում լիզինգային ծառայություններն ԱՄՆ-ում կազմում են մոտ 30, Գերմանիայում և Մեծ Բրիտանիայում՝ 14-16, Ճապոնիայում, Դանիայում, Նորվեգիայում՝ 8-10 տոկոս:

Լիզինգային ծառայություններն ունեն ***առավելություններ*** և ***թերություններ***: Առավելությունն այն է, որ.

- մեքենասարքավորումների արժեքը վճարվում է 100 տոկոսով,
- վարձակալության ընթացքում մատակարարը հոգ չի տանում սարքավորումների օգտագործման համար,
- գնորդից չի պահանջվում գրավ կամ երաշխավորում բանկային վարկերի կամ այլ փոխատվությունների դեպքում,
- վարձակալն ազատվում է սարքավորումների մաշվածքի վտանգից:

Որպես ***թերություն***, կարելի է նշել այն, որ.

- գործարքի սկզբում գնորդը վճարում է սարքավորումների փաստացի լրիվ արժեքը և չի կարող առարկել կամ գումարի մի մասը վճարել օգտագործման ժամկետի վերջում,
- գնորդը չի կարող օգտվել ինվեստիցիաների վրա հարկային արտոնություններից, քանի որ նա չի համարվում վարձակալած սարքավորումների սեփականատեր:

2000 թ. ԱՀԿ տվյալներով՝ վարձակալական գործառնություններն աշխարհում 138.1 մլրդ դոլարից հասել են 356.4 մլրդ դոլարի: 2000 թ. ԱՄՆ-ում 148 մլրդ դոլարի նոր սարքավորումների ներդրումներ կատարվել են վարձակալության միջոցով, ինչը կազմում է մասնավոր ներդրումների 41.5 տոկոսը: Անգլիայում, Իռլանդիայում վարձակալության տրվում է սարքավորումների 35 տոկոսը:

Ներկայում լիզինգային ծառայություններ տրամադրվում են նաև Հայաստանում: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 35-րդ գլխի 6-րդ կետը վերաբերում է ֆինանսական վարձակալության ***լիզինգի պայմանագրին***: Համաձայն օրենսգրքի 677-րդ հոդվածի «Ֆինանսական վարձակալություն» պայմանագրի՝ վարձատուն պարտավորվում է վարձակալի առաջարկած գույքը սեփականության իրավունքով ձեռք բերել և վճարել ժամանակավոր տիրապետման համար: Լիզինգի պայմանագիրը կնքվում է գրավոր՝ կողմերի ստորագրությամբ և նոտարական վավերացմամբ: Որպես նախաձեռնողներ հանդես են գալիս առևտրային բանկերը և գյուղացիական տնտեսությունները:

Այժմ գործում են վարձակալական երկու կազմակերպություն՝ «Ագրոլիզինգը» և «Ակբալիզինգը», որոնց գործընթացները կանոնակարգվում և վերահսկվում են ՀՀ Կենտրոնական բանկի կողմից: Առաջատարն «Ագրոլիզինգ» կազմակերպությունն է, որի նպատակը Հայաստանի գյուղատնտեսության վերականգնումն է: «Ակբալիզինգը» հիմնվել է 2003 թ. «Հայգյուղփոխբանկի» կողմից և նույնպես զբաղվում է վարձակալական գործունեությամբ: 2004 թ. կնքվել է լիզինգային 68 պայմանագիր, որոնց շրջանակներում հաճախորդներին տրամադրվել է 224 միավոր գույք՝ ավելի քան 3.0 մլն դոլարի չափով: Այդ ծառայությունը նպաստում է գյուղատնտեսության զարգացմանը, քանի որ սեփականաշնորհման գործընթացը հանգեցրել է հողի սեփականատիրոջ և կազմակերպող օղակների կապերի խզման, գյուղտեխ-

նիկայի մենաշնորհի ձևավորման: Լիզինգի կիրառումը ձեռնտու է գյուղացուն, քանի որ հնարավորություն է տալիս գյուղտեխնիկան օգտագործելու միայն գյուղատնտեսական աշխատանքների սեզոնին: Իսկ վարձակալության տրված տեխնիկայի նորոգումը, սպասարկումը, ապահովումը կատարվում են վարձատուի կողմից: Միջազգային ֆակտորինգը կիրառվում է արտահանման առևտրում և պարզում արտահանման գործընթացում կանխիկ դրամի ստացումը:

6.8 Միջազգային տրանսպորտային կազմակերպություններ և կոնվենցիաներ

Միջազգային տրանսպորտի կազմակերպությունները մասնագիտացած օղակներ են, որոնք ղեկավարում են տվյալ տրանսպորտի տեսակը միջազգային մակարդակով: Դրանք են.

1. ***Միջազգային ծովային կազմակերպությունը (ИМО):*** Հիմնվել է 1958 թ. Լոնդոնում: Կազմակերպության բյուջեն գոյանում է անդամ երկրների ներդրումներից, կամավոր նվիրատվություններից, հրատարակումների վաճառքի հասույթից, ծառայությունների դիմաց վճարումներից:

2. ***Երկաթուղիների միջազգային միավորումը:*** Ստեղծվել է 1922 թ. Իտալիայում՝ Եվրոպայի և Ասիայի 27 երկրներից՝ 46 երկաթուղային վարչությունների ներկայացուցիչների միջազգային համաժողովում:

3. ***Ավտոմոբիլային տրանսպորտի միջազգային միավորումը (АТМО):*** Ստեղծվել է 1948 թ. Ժնևում՝ Բելգիայի, Դանիայի, Մեծ Բրիտանիայի, Նիդեռլանդների, Նորվեգիայի, Շվեդիայի և Շվեյցարիայի նախաձեռնությամբ:

4. ***Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպությունը (ИКАО):*** Ստեղծվել է 1947 թ. «Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին» Չիկագոյի 1944 թ. Կոնվենցիայի վավերացումից հետո՝ 52 հիմնադիր երկրների ներկայացուցիչների ստորագրությամբ: 2006 թ. միջազգային հեղինակավոր այս կազմակերպությանն անդամագրվել է աշխարհի 188 երկիր: ИКАО-ի ընդունած չափանիշներով միասնական ձևով առաջնորդվում է աշխարհի քաղաքացիական ավիացիան, որը ՄԱԿ-ի մասնագիտացած կազմակերպություն է:

Գործում են նաև օդային փոխադրումների միջազգային կոնվենցիաներ, որոնք են.

1. ***Օդագնացության կարգավորման կոնվենցիան՝*** ընդունված 1919 թ. Փարիզում եվրոպական 19 երկրների կողմից: Կոնֆերանսում ընտրվել է հանձնաժողով՝ Բելգիա, Բրազիլիա, ԱՄՆ, Կուբա, Հունաստան, Մեծ Բրիտանիա, Իտալիա, Ճապոնիա, Խորվաթիա, Սերբիա, Սլովենիա, Պորտուգալիա, Ռումինիա կազմով:

2. ***Վարշավայի կոնվենցիան*** (1929 թ.), որտեղ սահմանվում են օդային փոխադրումների ժամանակ ուղևորի կամ բեռի վնասվելու, ուշանալու կամ կորստի դեպքում միջազգային պատասխանատվության և դրամական փոխհատուցման չափերը:

3. ***Բերմունդյան համաձայնագիրը*** (1946 թ.), որի նպատակը միջազգային քաղաքացիական ավիացիայի կարգավորումը և ԱՄՆ-ի ու Մեծ Բրիտանիայի միջև փոխզիջման տարբերակների ընդունումն էր:

4. ***Մոնրեալի 1966 թ. արձանագրությունը և Գվատեմալայի 1971 թ. կոնվենցիան՝*** Վարշավայի կոնվենցիայում լրացումներ կատարելու համար:

5. ***Հաագայի 1995 թ. կոնֆերանսի արձանագրությունը՝*** Վարշավայի կոնվենցիայում փոխադրման փաստաթղթերի, անձանց համար պատասխանատվության փոփոխությունների վերաբերյալ:

Ներկայում Հայաստանն անդամակցում է միջազգային տրանսպորտային տարբեր կազմակերպությունների: Դրանք են.

1. Առաքողների միջազգային կազմակերպությունների միությունը, որը հիմնադրվել է 1926 թ. մայիսին՝ 152 երկրների անդամակցությամբ:

2. ***Եվրոպական տրանսպորտի նախարարների կոնֆերանսը,*** որը հիմնադրվել է 1953 թ., և որի անդամ են եվրոպական 40 երկիր, այդ թվում՝ ԱՊՀ 9 երկիր:

3. ***Միջազգային առևտրատրանսպորտի միությունը,*** որը հիմնադրվել է 1975 թ. մայիսին՝ 51 երկրների անդամակցությամբ:

4. ***Տրանսպորտային կոորդինացիոն խորհուրդը,*** որը հիմնադրվել է 1992 թ. մարտին: Ունի 12 անդամ երկիր:

5. ***Սևծովյան տնտեսական համագործակցությունը,*** որը հիմնադրվել է 1992 թ.՝ Ռուսաստանի, Ուկրաինայի, Թուրքիայի, Հունաստանի, Ռումինիայի, Բուլղարիայի, Ալբանիայի, Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի, Մոլդովայի մասնակցությամբ:

6. ***Եվրոպա-Կովկաս-Կենտրոնական Ասիա տրանսպորտային միությունը (ՏՐԱՍԵԿԱ),*** որը հիմնադրվել է 1993 թ. հունիսին Բրյուսելում: Անդամներն են Անդրկովկասի 3, միջինասիական 5 պետություն, Ուկրաինան և Մոնղոլիան:

7. ***ԻԿԱՕ-ն,*** որին Հայաստանն անդամագրվել է 1992 թ., իսկ 1994 թ. վավերացրել է «Միջազգային քաղաքական ավիացիայի մասին» Չիկագոյի կոնվենցիան և, որպես լիիրավ անդամ, գործուն մասնակցություն է ունենում կազմակերպության աշխատանքներին: 2006 թ. կազմակերպության կենտրոն Մոնրեալում տեղի է ունեցել ԻԿԱՕ-ի Ասամբլեայի 35-րդ նստաշրջանը, որի աշխատանքներին մասնակցել է նաև Հայաստանի պատվիրակությունը: Ասամբլեան ընդունել է ավիացիոն, թռիչքային անվտանգության և մի շարք այլ բանաձևեր առաջիկա երեք տարիների համար:

8. ***Մերասխի համաձայնագիրը,*** որը ստորագրվել է 1996 թ.՝ Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի, Բուլղարիայի, Ուզբեկստանի, Ղրղզստանի, Տաջիկստանի անդամակցությամբ:

6.9 Ծառայությունների համաշխարհային շուկայի կարգավորումը

Ծառայությունների համաշխարհային շուկայի կարգավորումը միջազգային կարևոր գործընթաց է: Այն նման է ապրանքների միջազգային առևտրի կարգավորմանը, որի հիմքում կողմերի միջև տուրքերի, հարկերի, քվոտաների, փոհատուցումների ճիշտ կիրառումն է, արգելքների վերացման միջոցառումների մշակումը: Առևտրի ծառայությունների կարգավորումը կատարվում է.

- ***ուղղակի կարգավորման միջոցներով,*** որոնց արգելքները կապված են քաղաքական, հասարակական, մշակութային պայմանների հետ (երկրների միջև արտասահմանյան ընկերությունների օդային, ջրային, երկաթուղային տրանսպորտով փոխադրումների արգելքները կարող են լինել զուտ քաղաքական պատճառներով),
- ***փակ կարգավորման միջոցներով,*** որոնցով արգելվում են կապիտալի, անձանց, տեղեկատվության տեղաշարժերն արտասահմանյան մատակարարների կողմից:

ԱՄՆ առևտրական կազմակերպություններն արտասահմանյան ընկերությունների հետ առաջարկում են սահմանափակման ինդեքս: Օրինակ՝ ԱՄՆ հաշվապահական ծառայություններում սահմանվել է 0.33, բանկային ծառայություններում՝ 0.06, առևտրական ծառայություններում՝ 0.16, տրանսպորտայինում՝ 0.60 տոկոս զեղչ: Կիրառվում է նաև «Գնիր ամերիկյան ապրանք 12 տոկոս զեղչով» գովազդը:

Ըստ Միջազգային արժութային ֆոնդի (ՄԱՖ)՝ 187 անդամ երկրներից 52-ն ունեն բաց տնտեսություն, 48-ը՝ սահմանափակ ռեժիմ, 87-ը զբաղեցնում են միջանկյալ դիրք: ԱՊՀ երկրներից ***ազատ ռեժիմով*** գործում են Հայաստանը, Վրաստանը, Մոլդովան, Ղրղզստանը, ***կոշտ սահմանափակ ռեժիմով*** Բելառուսը, Ուզբեկստանը, Թուրքմենստանը, ազգային տնտեսության վերակառուցման դանդաղ տեմպերի պատճառով՝ նաև Տաջիկստանը: Միջանկյալ դիրք են գրավում Ռուսաստանը, Ուկրաինան, Ադրբեջանը և Ղազախստանը: Ռուսաստանի արտաքին առևտրի 26 տոկոսը (արտահանում+ներմուծում) կատարվում է խոշոր ընկերությունների՝ Ռուսգինարտադրանքի, Գազպրոմի միջոցով: Ուզբեկստանի արտաքին առևտուրը կապված է բամբակի, Ադրբեջանինը՝ նավթի, Տաջիկստանինը՝ ալյումինի, Թուրքմենստանինը՝ գազի արտահանման հետ: Մաքսատուրքերի դրույքները չեն ապահովում ազգային շուկաների ծախսերը: ԱՊՀ երկրների տուրքերի միջին դրույքը կազմում է 8.08 տոկոս (Հայաստանում՝ 4.1-11.0, Ռուսաստանում, Ուզբեկստանում՝ 9.9, Ուկրաինայում՝ 7.7 տոկոս):

Պետությունը կարգավորում է միջազգային ծառայությունները, որպես պետության սոցիալ-տնտեսական քաղաքականության հիմնական ուղղություն: Պետությունն է որոշում իր երկրի վճարային հաշ-

վեկշռի հարցերը, դրամական հոսքերի շարժը, որոնց մեջ ծառայությունների միջազգային առևտուրն ունի իր բաժինը:

Կարգավորման համակարգն ընդգրկում է.

- մաքսային հսկողությունը,
- ծառայությունների վրա գնային հսկողությունը,
- ծառայությունների ստանդարտների կիրառումը,
- առանձին ծառայությունների լիցենզավորումը:

Ծառայությունների միջազգային առևտրի կարգավորման առաջին քայլերն արվել են 1970-80 թթ.: Պաշտպանելով ծառայությունների իրավունքները՝ պետությունները մտցրել են հսկողության տարբեր ձևեր ստանդարտների և լիցենզիաների ստացման, կապիտալի տեղաշարժի որոշակի սահմանափակումների վերաբերյալ: Ծառայությունների միջազգային կարգավորման մեխանիզմի հիմքում հետևյալ ***սկզբունքներն են.***

1. Հասնել տարիֆների, հարկերի, տուգանքների էական սահմանափակումները:

2. Ստեղծել բարենպաստ ռեժիմ երկրների՝ համաշխարհային շուկա անասրգելք մտնելու համար:

3. Պետության կողմից հովանավորել շուկայի սուբյեկտները, խրախուսել արտահանվող և ներմուծվող ծառայությունները:

«Ուրուգվայի ռաունդ»-ի (1986 թ.) բանակցությունների արդյունքում համաձայնություն է ձեռք բերվել ծառայությունների առևտրի ազատականացման և սահմանափակումների վերաբերյալ, ստեղծվել է Ծառայությունների առևտրի կոմիտե: 1987 թ. հիմնավորվել են ծառայությունների առևտուրը կարգավորող սկզբունքները և կանոնները: 1999 թ. մշակվել է ծառայությունների առևտրի Գլխավոր համաձայնության ծրագիրը, որը ծառայությունների առևտրի ընդլայնման քայլ էր և նպատակն էր զարգացնել ազատականացման գործընթաց, յուրաքանչյուր երկրի տարածքում վերացնել ծառայությունների արտադրության և սպառման խտրականությունը:

1995 թ. հունվարի 1-ից ծառայությունների կարգավորման մասին համաձայնությունը համարվել է ԱՀԿ բաղկացուցիչ մասը: Ծառայությունների միջազգային կարգավորում կատարում են նաև միջազգային մասնագիտացած կազմակերպությունները (ИКАО, ИМО, ВТО, ВТО, ЮНКТАД): 2005 թ. հոկտեմբերի 20-ին Փարիզում ստորագրվել է «Մշակութային ինքնարտահայտման ձևերի պաշտպանության մասին» կոնվենցիան, որին մասնակցում էր նաև Հայաստանը:

Կարգավորում կատարվում է նաև սահմանափակումների ձևով: Օրինակ՝

- բոլոր ներմուծվող ծառայությունները պետք է ապահովագրեն միայն տեղական ապահովագրական ընկերությունները,

• ներմուծվող ծառայությունների վրա պետք է կիրառվեն քանակական քվոտաներ՝ սահմանելով ազգային ռադիոկայանների հաղորդումների, արտասահմանյան ֆիլմերի ցուցադրման եթերային ժամանակի պարտադիր քանակ,

• պետք է սահմանափակվեն ներքին շուկայում արտասահմանյան ընկերությունների մասնաճյուղերը և այլն:

Ֆիլմեր և հեռուստատեսային ծրագրեր արտահանում են Ճապոնիան, Հնդկաստանը, Մեքսիկան, Բրազիլիան, Արգենտինան, իսկ ներմուծում են ավելի մեծ թվով երկրներ:

Ծառայությունների առևտրի Գլխավոր համաձայնությունը (ГАТС) մշակել է ծառայությունների միջազգային առևտրի մեխանիզմ բոլոր կանոններով: Այն բովանդակում է 6 բաժին, 35 հոդված:

ԳԼՈՒԽ 7
ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ԳՆԵՐ

7.1 Համաշխարհային շուկայական գների էությունը և ձևավորումը

Դրամի այն քանակը, որը պետք է փոխանակվի ապրանքի կամ ծառայության մեկ միավորի հետ, կոչվում է ***ապրանքի գին***: Գինն ապրանքի արժեքի դրամական արտահայտությունն է: Սակայն, կախված ապրանքի առաջարկից և պահանջարկից, այն կարող է լինել արժեքից ցածր կամ բարձր: Ապրանքի արժեքի հիմքում արտադրական և արդյունքի իրացման ծախսերն են՝ գումարած զուտ եկամուտը, որն անհրաժեշտ է ձեռնարկության արդյունավետ գործունեության, ինչպես նաև բյուջեի վճարման համար: Ապրանքի արժեքը և գները փոփոխվում են արտադրության պայմանների փոփոխման դեպքում:

Գնագոյացման միտումներն են.

• միավոր արտադրանքի վրա արտադրական և մատակարարման ծախսերի մակարդակը,

• առաջարկի և պահանջարկի հարաբերության փոփոխությունը,

• տնտեսվարող սուբյեկտների և պետական օղակների ազդեցությունը:

Գնագոյացումը հիմնավորվում է.

• արտադրական ռեսուրսների գների տատանումով,

• արտահանման գների մակարդակով՝ կապված դոլարի փոխարժեքի հետ,

• իրացվող ապրանքների որակով, բեռնման և տեղափոխման պայմաններով, գնորդի և վաճառողի փոխհարաբերությամբ:

Երկրների միջև ապրանքափոխանակությունը կատարվում է համաշխարհային գներով, քանի որ համաշխարհային շուկայում հաշվի են առնվում հասարակայնորեն անհրաժեշտ աշխատանքի ծախսերը: ***Համաշխարհային գները*** համաշխարհային շուկայում կիրառվող խոշորամասշտաբ արտահանման և ներմուծման գործարքներում կիրառվող գներն են՝ կնքված համաշխարհային շուկաներում, համաշխարհային առևտրի կենտրոններում ազատ կոնվենցիայի արժույթներով (ԱՄՆ դոլար, եվրո):

«Համաշխարհային ապրանքային շուկա» հասկացությունը նշանակում է ապրանքների և ծառայությունների առք ու վաճառքի կայուն, ամբողջական գործընթաց, որն ունի միջազգային կազմակերպված ձևեր՝ շուկաներ, բորսաներ, աճուրդներ, տոնավաճառներ: Առքն ու վաճառքը սահմանվում են ազատ փոխարկելի արժույթով: Համաշխարհային առևտրի պայմաններում միջազգային մասշտաբով ձևավորվում են ապրանքների միջազգային արժեքը և գինը, որոնց հիմքում ազգային տարբեր արժեքները և արտադրության գներն են:

Համաշխարհային տնտեսության մեջ ապրանքի արտադրության վրա կատարվող հասարակայնորեն անհրաժեշտ ծախսերը կոչվում են ***արդյունքի միջազգային արժեք:*** Յուրաքանչյուր երկիր ունի աշխատանքի արտադրողականության ազգային որոշակի մակարդակ, հետևաբար նաև տվյալ ապրանքի արտադրության վրա կատարվող աշխատանքի հասարակայնորեն անհրաժեշտ ծախսերի որոշակի մեծություն, որով որոշվում է ապրանքի ***ազգային արժեքը:*** Համաշխարհային շուկայում ապրանքների փոխանակությունը կատարվում է ոչ թե աշխատանքի ազգային, այլ միջազգային արժեքի հիման վրա:

Տնտեսական սերտ կապեր ունեցող երկրների ապրանքափոխանակության ժամանակ կարող է կիրառվել նաև ***ռեգիոնալ արժեք,*** որը միջազգային արժեքի տեսակ է:

Համաշխարհային գների դինամիկան ընդգրկում է 60 տարվա տեղեկություն: 1948 թ. գները 1938-ի գները գերազանցեցին 2.6 անգամ: Գների փոփոխությունը կապված է նաև 1973-80 թթ. էներգետիկ ճգնաժամի հետ: 1980 թ. համաշխարհային գները 1970-ի գները գերազանցեցին 4, 1990 թ. 1960-ի գները՝ 5 անգամ: 1980 թ. 1970-ի համեմատ հումքի, վառելիքի գները բարձրացան 6.3, նավթինը՝ 19.6, գյուղատնտեսական հումքինը՝ 2.9 անգամ[48]: Արտադրանքի միջազգային գինը արտադրանքի ազգային գնի միջին թվաբանականը չէ: Այն հաշվվում է համաշխարհային առևտրում ապրանքային զանգվածի առկայությամբ:

Միևնույն ապրանքի վրա կարող է դրվել ոչ թե մեկ, այլ տարբեր մակարդակով դիֆերենցված մի քանի գին՝ կախված է առևտրական գործունեության բնույթից, երկրների փոխհարաբերությունից և վճարման պայմաններից: Գների բազմազանության գործում էական դեր են խաղում պրոտեկցիոնիզմը, մաքսային և այլ արգելքներ, հատուկ առևտրա-քաղաքական և արժութային գոտիների առկայությունը և այլն:

Համաշխարհային են նաև այն գները, որոնցով կնքվում են սովորական առևտրական գործարքները: Կախված առանձին ապրանքային շուկաների կոնկրետ պայմաններից՝ համաշխարհային գներ համարվում են.

- հիմնական նյութեր արտահանող երկրների գները՝ արտահայտված ազատ կոնվերսիայի ենթարկված արժույթով,
- հումքի հիմնական մատակարարների կողմից նշանակված գները (համապատասխան արժույթի կուրսով),
- արևմտաեվրոպական խոշոր շուկաներ բերվող ապրանքների գները, որոնց միջոցով հավասարեցվում են առանձին մատակարարների ներմուծման գները:

[48] Международные экономические отношения, уч. под ред. Ливенцева Н. Н., М., 2005, стр 105.

Այստեղ հաշվի են առնվում նաև տրանսպորտային ծախսերը, մեքենասարքավորումների շուկաների գները, որոնք տարբերվում են իրենց կոնստրուկտիվ, տեխնիկատնտեսական ցուցանիշներով, մեքենասարքավորումների տեսակներով: Համաշխարհային համարվում են նաև հիմնական մատակարարներ հանդիսացող ընկերությունների արտահանման գները:

Համաշխարհային գները բաժանվում են արդյունաբերության կողմից ***վերամշակվող*** ապրանքների և ***հումքային ապրանքների*** միջազգային գների: Ըստ ՄԱԿ-ի վիճակագրական բյուրոյի դասակարգման՝ հումքային ապրանքների խմբում ընդգրկված են էներգառեսուրսները (նավթ, ածուխ, գազ), հանքային հումքը, գյուղատնտեսական հումքը, պարարտանյութերը: Հումքային ապրանքների համաշխարհային գների ձևավորման կարևոր առանձնահատկությունն այն է, որ դրանք կախված են ոչ թե ներքին ծախսերի մեծությունից, այլ.

- շուկայում առաջարկի և պահանջարկի հարաբերությունից,
- հիմնական արտահանողների և բորսային գների համընկնումից, նրանց առաջարկած գների բազմազանությունից,
- առանձին ապրանքների գների ձևավորման գործում պետության կամ խումբ երկրների հատուկ ներգործությունից:

Համաշխարհային շուկայում գնագոյացման վրա ազդող կազմակերպական մեխանիզմն իրենից ներկայացնում է միջազգային կանոններ, որ մշակվում են ԱՀԿ-ի կողմից առևտրի ազատականացման միջոցով: Գների կարգավորումով զբաղվում են նաև միջազգային այլ կազմակերպություններ: Օրինակ՝ երկաթահանքերի համաշխարհային բազային գները սահմանում են արտահանողներ Ավստրալիան, Բրազիլիան, Ռուսաստանը, Կանադան: Կամ նավթ արտահանող ՕՊԵԿ-ի անդամ երկրների ասոցիացիան 1997-1998 թթ. նավթի արդյունահանման քվոտան կտրուկ բարձրացրեց՝ 1252-ից հասցնելով 1375 մլն տոննայի (մեկ տարում), ինչի հետևանքով նավթի գներն իջան: Տեսականորեն առաջարկը գերազանցեց պահանջարկը: ՕՊԵԿ-ի անդամ երկրները միջոցառումներ ձեռնարկեցին նավթի հանույթը կրճատելու համար: 2005-2006 թթ. նավթի մեկ բարելի գինը հասավ 74 դոլարի, իսկ Ռուսաստանի գազի գինը 1000 խորանարդ մետրի դիմաց տատանվեց 110-160 դոլարի միջև: 1990-ականներին հատկապես գունավոր և սև մետաղների համաշխարհային շուկայում դիտվեց հումքային ապրանքների գների իջեցում, ինչի գլխավոր գործոնը Ռուսաստանի կողմից արտահանված մետաղի ծավալների աճն էր: Հումքային ապրանքների համաշխարհային գների մեխանիզմը վկայում է, որ միատեսակ ապրանքների համաշխարհային և ներքին գները չեն համընկնում, ինչը կախված է երկրի տնտեսական զարգացման մակարդակից:

Զարգացող երկրներում ներքին գները կարող են ցածր լինել համաշխարհային գներից, ինչը հնարավորություն է տալիս առանձին մեներերների օգտվելու ներքին և համաշխարհային գների միջև եղած տարբերությունից: Համաշխարհային գներն իրենց մակարդակով մոտ են շուկայական գներին:

Սոցիալիստական շուկայի գները ձևավորվում էին համաշխարհային շուկայի գներին զուգահեռ, և առևտուր կատարվում էր համակարգի երկրների միջև: Նույն գներն անհրաժեշտ ուղղումներով ընդունվում էին նաև սոցիալիստական երկրների միջև գործարքներում: Միաժամանակ դրանցով իրականացվում էր վաճառք գյուղատնտեսության, կոոպերատիվների, առանձին օժանդակ տնտեսությունների և անհատ անձանց միջև:

Տարբեր երկրներում միևնույն ապրանքների արտադրության համար կատարվում են տարբեր ծախսեր: Հետևաբար, համաշխարհային շուկայում, ապրանքները միևնույն գնով վաճառելիս, առանձին երկրներ օգտվում են, մյուսները՝ վնասվում: Այն երկրները, որոնց արտադրանքի թողարկման ծախսերը բարձր են, համաշխարհային շուկայում դառնում են անմրցունակ, իսկ որոնց արտադրական ծախսերը միջազգային ծախսերի միջին մակարդակից ցածր են, ապրանքների արտահանումից մեծ եկամուտ են ստանում: Գործնականում համաշխարհային շուկայի գները ձևավորվում են միջազգային առևտրի հիմնական կենտրոնների գներով, համաշխարհային շուկայում ազատ փոխարկելի արժույթով: Օրինակ՝ մեքենաների և սարքավորումների համաշխարհային գներն առավելապես եվրոպական, ճապոնական և ամերիկյան խոշոր ընկերություններն են առաջարկում: Քարածխի գինը որոշում են խոշոր արտահանողները և ներմուծողները (ԱՄՆ, ՌԴ, Մեծ Բրիտանիա, Արևմտյան Եվրոպա, Ճապոնիա): Ցինկի, կապարի, նիկելի, ալյումինի, անագի գները որոշվում են Լոնդոնի գունավոր մետաղների բորսայի, ցորենինը՝ Կանադայի ցորենի արտահանման, սղոցանյութերինը՝ Շվեդիայի արտահանման, կաուչուկինը՝ Չիկագոյի, Սինգապուրի բորսաների, թեյինը՝ Կալկաթայի, Կոլումբիայի և Լոնդոնի աճուրդային, նավթի համաշխարհային գինը՝ ՕՊԵԿ-ի անդամ երկրների վաճառքի գներով: Եթե հումքային ապրանքների համաշխարհային գները հիմնականում որոշում են մատակարար երկրները, ապա պատրաստի արտադրանքի և սարքավորումների համար որոշիչ դեր են խաղում առանձին արտադրատեսակներ թողարկող և արտահանող առաջատար ընկերությունները:

Համաշխարհային շուկայում գները փոփոխական են: Նույն ապրանքի գները կարող են տատանվել՝ կախված վաճառքի տեղից և ժամանակից, վաճառողի և գնորդի փոխհարաբերությունից: Յուրաքանչյուր շուկային բնորոշ է իր գինը, որը կոչվում է ***շուկայի գին:*** Եթե շուկան դեֆիցիտային է, այսինքն՝ որոշակի արտադրանքի պահանջարկը գերազանցում է նրա առաջարկին, ապա այն կոչվում է ***վաճառողի***

շուկա, երբ առաջարկն է գերազանցում պահանջարկին՝ ***գնորդի շուկա:***

Շուկայի գինը վաճառողի կողմից առաջարկվող համեմատաբար բարձր և գնորդի կողմից առաջարկվող համեմատաբար ցածր գինն է: 1970-80 թթ. դիտարկվում էին գների տատանումներ, իսկ 1990-ական թթ.-ից համաշխարհային շուկայի հումքային ապրանքների գները զգալի իջան: Ֆինանսական ճգնաժամի ազդեցության տակ 1997-1998 թթ. նավթի գինն իջավ 32-35, գազինը՝ 18-20, նավթամթերքներինը՝ 30, ազոտային պարարտանյութերինը՝ 37-40, պղնձինը՝ 21-23, անտառանյութինը՝ 27-30 տոկոսով[49]:

Գների փոփոխությունը, վերլուծությունը, դրանց վրա ազդող գործոնների բացահայտումը շուկայի իրավիճակի ուսումնասիրման խնդիրն են: Համաշխարհային տնտեսության մեջ կիրառվում են գնագոյացման երկու մեթոդ՝ ***նորմատիվային*** և ***վարչական: Նորմատիվային մեթոդը*** գործում է, երբ գները սահմանվում են արտադրության ծախսերի և միջին շահույթի հիման վրա: Տնտեսվարման սոցիալիստական համակարգի պայմաններում գերակշռում էր գնագոյացման ***վարչական (պլանային) մեթոդը:***

Աղյուսակ 7.1

Լրիվ ծախսերի մեթոդով արտադրանքի գնի որոշումը (ամսական ծախսեր, դոլար)[50]

Ծախսեր	Գումար
Նյութերի	12000
Աշխատուժի	1450
Անուղղակի ծախսեր	4500
Ընդամենը	17950
Սպասվելիք օգուտ	3400
Սպասվելիք եկամուտ	20100
Արտադրանքի ամսական թողարկում, հատ	1350
Արտադրանքի միավորի գինը	14.9

Ելնելով արտադրական ծախսերի փոխհատուցման և որոշակի շահույթի մակարդակից, ֆինանսական դրությունից, վաճառվող ապրանքների առանձնահատկություններից՝ նորմատիվային գների հաշվարկման ժամանակ կիրառվում են ***լրիվ, սահմանային*** և ***ուղղակի ծախսերի,*** նպատակային շահույթի ստացման մեթոդները: Գնագոյացման ամենակիրառվող մեթոդը ***լրիվ*** ծախսերի մեթոդն է, որի էությունն

[49] Международные экономические отношения, под ред. Рыбалкина В. Е. и др., М., 2008 г., стр. 378, Внешнеэкономическая деятельность, под ред. Ростовского Ю. М., 2009 г., стр. 144.

[50] Международные экономические отношения, под ред. Жукова Е. Ф., М., Юнити, 1999, стр. 68.

արդյունքի իրացումից ստացված եկամուտն է: Այս եկամտի մեծությունը բաժանվում է ամսական արտադրանքի թողարկման վրա, և որոշվում է միավոր արտադրանքի գործարանային գինը: Խոշոր ընկերությունները գնի սկզբնական ձևավորման փուլում շուկայի պայմանների լրիվ հաշվառման ժամանակ կիրառվում է նաև գնագոյացման ***ուղղակի ծախսերի մեթոդը,*** որով գները սահմանվում են ձեռնարկության ուղղակի ծախսերի սպասվելիք շահույթի գումարով:

Ուղղակի ծախսերի և վերադիրների գումարը որոշվում է արտադրանքի միավորի և սպասվող վաճառքի ամբողջ ծավալի հաշվով (տե՛ս աղ. 7.2):

Աղյուսակ 7.2

Ուղղակի ծախսերի մեթոդով գների հաշվարկ
(ամսական ծախսեր, դոլար)[51]

Ծախսեր	Տարբերակներ			
	I	II	III	IV
Վաճառքի սպասվելիք ծավալը, հատ	400	600	800	900
Ենթադրվող գինը միավորի հաշվով	18.0	16.0	15.0	14.0
Ուղղակի (փոփոխական) ծախսերի գումարն արտադրանքի միավորի հաշվով	8.58	8.46	8.40	8.34
«Մերժինալ օգուտը»	9.42	7.54	6.60	5.66
«Մերժինալ օգուտի» գումարը	3768	4528	5280	5094
Մշտական ծախսերն արտադրական կարողությունների 100 % օգտագործման դեպքում	3000	3000	3000	3000
Իրացված օգուտ	768	1524	2280	2094

Հաշվարկներից երևում է, որ առավելագույն օգուտ հնարավոր է ստանալ 800 միավոր արտադրանքի հաշվով 15 դոլար գնով վաճառքի դեպքում:

Գնագոյացման վրա ազդող գործոնները բազմազան են, և ընկերությունները չեն սահմանափակվում վերը նշված երկու մեթոդների կիրառումով:

7.2 Համաշխարհային շուկայական գների դասակարգումը

ՀՇ-ն շուկան բարդ համակարգ է: Այն ընդգրկում է տարբեր ապրանքների ու ծառայությունների ցյուղային շուկաները, որոնք ունեն

[51] Международные экономические отношения, под ред. Жукова Е. Ф., М., Юнити, 1999, стр. 78.

իրենց առանձնահատկությունները, գների մակարդակները և գնագոյացման սկզբունքները:

Համաշխարհային առևտրում կիրառվում են գների տարբեր տեսակներ՝ պայմանավորված շուկաների և գնորդների թվով, մենատերերի վարած քաղաքականությամբ, առևտրական գործառնությունների բնույթով, առևտրի և տնտեսական այլ հարաբերություններով, գործունեության ձևերով:

Կախված ապրանքաշրջանառության ոլորտից՝ գները լինում են.

- արդյունաբերական ապրանքների մեծածախ գներ,
- շինարարական արտադրանքների մեծածախ գներ,
- գնման գներ,
- մանրածախ գներ,
- արտաքին առևտրին սպասարկող գներ,
- մարդատար տրանսպորտի սակագներ,
- բնակչության վճարովի ծառայությունների սակագներ:

Արդյունաբերական ապրանքների մեծածախ գներով արտադրողներն ապրանքները վաճառում են այլ ձեռնարկությունների, կազմակերպությունների:

Շինարարական արտադրանքների գները լինում են.

- օբյեկտի շինարարության գներ՝ ծախսերի սահմանային չափով,
- գնացուցակային գներ՝ տիպային շինարարական օբյեկտի միավորի նախահաշվային արժեքի միջինացված գներ (1մ^2 բնակելի կամ օգտակար տարածության):

Պայմանագրային գները սահմանվում են պատվիրատուի և կապալառուի համաձայնությամբ:

Գնման գներով իրացվում են գյուղատնտեսական արտադրանքները: Դրանք կողմերի համաձայնությամբ սահմանված պայմանագրային գներն են և գների մյուս տեսակներից (մեծածախ, մանրածախ) տարբերվում են նրանով, որ դրանց մեջ չեն մտնում ավելացված արժեքի և ակցիզային հարկերը:

Բեռնատար և ***մարդատար*** տրանսպորտի սակագները բեռների և ուղևորների տեղափոխման համար տրանսպորտային կազմակերպություններին կատարվող վճարումներն են:

Պրակտիկ գործունեության մեջ գները դասակարգվում են ըստ տարածաշրջանային հատկանիշի և լինում են ***միասնական, գոտային՝*** կախված բեռների փոխադրման ծախսերից, ըստ պետական կարգավորման աստիճանի՝ կոչվելով ***ազատ գներ***, որ ձևավորվում են առաջարկի և պահանջարկի ազդեցությամբ: Գները լինում են նաև ***կարգավորող*** և սահմանվում են պետական օրգանների կողմից, ***ֆիքսվող՝*** դարձյալ սահմանված պետական օրգանների կողմից՝ մի շարք սահմանափակ ապրանքների վաճառքի համար:

Երկարամյա կյանքի փուլ ունեցող ապրանքների համար սահմանվում են.

- ***սահող*** կամ ***փոփոխվող գներ,*** որոնք ձևավորվում են առաջարկի ու պահանջարկի ազդեցությամբ, և շուկայի հագեցածության պայմաններում աստիճանաբար իջնում են,
- ***տևական գներ,*** որոնք երկար ժամանակ մնում են անփոփոխ,
- ***ճկուն գներ,*** որոնք փոփոխվում են առաջարկի և պահանջարկի ազդեցությամբ հարաբերական կարճ ժամանակում (դրանք բնորոշ են նաև երկարատև օգտագործվող ապրանքներին, որոնց որակին գնորդները ծանոթ են):

Հայտնի ընկերությունների բարձր որակի ապրանքների համար սահմանվում են ***հեղինակային գներ:***

Պետական գները շուկայական տնտեսության պայմաններում սահմանվում են պետական ոչ բոլոր ձեռնարկությունների արտադրանքների, այլ միայն.

- մենատերերի ձեռնարկությունների արտադրանքների,
- բազային ռեսուրսների (տվյալ երկրի տնտեսության համար),
- սոցիալական նշանակության ապրանքների համար:

Միջազգային առևտրում կիրառվում են նաև կոնտրակտային, բորսային, տեղեկատու, իրավիճակային, լիցենզային, պարիտետային, պայմանագրային, ֆրանկո, հաշվարկային, աճուրդային և այլ գներ:

Կոնտրակտային գներ սահմանվում են արտաքին առևտրի գործառնությունների ժամանակ: Դրանք կոնտրակտի գործարքների գներն են և չեն հրապարակվում: Կոնտրակտի պայմաններից ելնելով՝ այս գինը կարող է լինել ***կայուն,*** երբ կոնտրակտը ստորագրելու պահին գինը սահմանվում է փոխհամաձայնության հիման վրա և կոնտրակտի կատարման ընթացքում ենթակա չէ փոփոխման: Կարող է լինել նաև ***հետագա ֆիքսման գին,*** որը փոփոխվում է պայմանագրային ժամկետում կողմերի համաձայնությամբ: ***Սահող գները*** կոնտրակտը գործելու ընթացքում փոխվում են կողմերի համաձայնությամբ՝ կապված մատակարարման ընթացքում ապրանքների արտադրության տնտեսական պայմանների փոփոխությունների հետ:

Բորսային գներն այն ապրանքների գներն են, որոնց վաճառքն իրականացվում է ապրանքային բորսաներում, և գները սահմանվում են տեղում: Օրինակ՝ բնական կաուչուկի, շաքարի, հումքի, բամբակի, որոշ տեսակի գունավոր մետաղների և այլ ապրանքների գները սահմանվում են բորսաներում: Բորսային գնահատումն ավելի ռեալ է, քանի որ այն սահմանվում է կողմերի համաձայնությամբ, և անմիջապես նշվում են ապրանքի քանակը, ծավալը, մատակարարման ժամկետը և այլ պայմաններ: Բորսաներում ապրանքները գնահատելու ժամանակ հաշվի են առնվում նաև շուկայի իրավիճակի փոփոխությունները և այլ գործոնների ազդեցությունները:

Տեղեկատու գները հրապարակվում են տեղեկագրական մամուլում, ամսագրերում, թերթերում, հատուկ բյուլետեններում, տվյալ ընկերության կատալոգներում, գնացուցակներում: Համաշխարհային գների համակարգում կողմնորոշվելու համար ներմուծողները և արտահանողները բորսային, աճուրդային փաստացի գործարքների ժամանակ օգտագործում են տեղեկատու գներ (մատակարարների գներ), որոնք մեծ մասամբ դրվում են հումքային ապրանքների վրա և հրապարակվում են վաճառողի կողմից: Տեղեկատու գները չեն արտահայտում կոնտրակտային գների ռեալ մակարդակը:

Իրավիճակային (կոնյունկտուրային) գները սահմանվում են առանց զեղչի՝ ելնելով տվյալ իրավիճակից: Դրանք տատանվում են՝ կախված շուկայում ապրանքների առաջարկի և պահանջարկի հարաբերությունից:

Գնացուցակային գներն իրավիճակայինից տարբերվում են զեղչերով: Գնացուցակում ապրանքների գները կարող են նշվել և զեղչով, և առանց զեղչի:

Լիցենզային գները սպառողին լիցենզիայով տրվող տեխնոլոգիաների, սարքավորումների դիմաց վճարումներն են, որոնք լիցենզիայի տերը կարող է ստանալ արտադրության մեջ լիցենզիան օգտագործելու ժամանակ: Լիցենզիայի շուկայական գինը գնորդի ստացած լրացուցիչ շահույթի մի մասն է: Այն վաճառողին հիմնականում փոխանցվում է ոչ թե անմիջապես, այլ սարքավորումների շահագործումից հետո գնորդի ստացած եկամտից: Հետևաբար, լիցենզիայի գինը գոյանում է համաձայնագրի գործողության ընթացքում կատարվող մուծումներից:

Պարիտետային գները կարգավորում են գյուղատնտեսական արտադրանքի գները և կայունացվում պետության կողմից: Օրինակ՝ մինչև 1950 թ. ԱՄՆ պետական օրենսդրությամբ սահմանված էին ֆերմերների կողմից ձեռք բերվող գյուղատնտեսական մթերքների, ապրանքների և ծառայությունների գները: 1950 թ. հետո, առանձին գյուղմթերքների փոխանակման դեպքում, պարիտետային գները ձևավորվում էին նախորդ տասնամյակի գների միջին հարաբերությամբ: Այսինքն՝ տվյալ տարում արտադրված մթերքների գների ինդեքսը համեմատվում է անցած տարիներին իրացված գների ինդեքսի հետ, և որոշվում է նոր գին:

Պայմանագրային գները սահմանվում են արտադրողի (վաճառող) ու սպառողի (գնորդ) համաձայնությամբ: Ներքին և արտաքին ապրանքաշրջանառության մեջ պայմանագրային գները գնալով ավելի բազմազան են դառնում (տե՛ս կոնտրակտային գին): Պայմանագրային գներից է «ֆրանկո» գինը, որն ապրանքի առաքումը վերջնակետի հասցնելն է: Այդ պայմանի համաձայն՝ սպառողն ազատվում է բեռները տեղ հասցնելու ծախսերից, որոնք մտնում են ապրանքի գնի մեջ: «Ֆրանկո» կետը կարող է լինել մինչև վագոն, պահեստ, երկա-

թուղթ կայարան, պետական սահման, կոնկրետ նշված որևէ բնակավայր: Գործարքների ժամանակ փոխադրումների ծախսերին ավելանում են նաև ապահովագրական ծախսերը: Իսկ եթե առաքողն ապրանքն անցկացնում է պետական սահմանից, վճարում է նաև մաքսային տուրք:

Հաշվարկային գները կիրառվում են ոչ ստանդարտ, անհատական պատվերներով՝ հատուկ սարքավորումների մատակարարման ընթացքում:

Աճուրդային գները կիրառվում են աճուրդային ապրանքների վաճառքի ժամանակ:

Տրանսֆերտային գները կիրառվում են միջազգային միավորումների, ընկերությունների և անդրազգային կորպորացիաների շրջանակներում՝ տարբեր երկրներում գտնվող նրանց մասնաճյուղերին և բաժանմունքներին ապրանքների և ծառայությունների, կիսաֆաբրիկատների, հանգույցների, դետալների, կոմպլեկտային ապրանքների մատակարարման ժամանակ:

Վիճակագրական արտաքին առևտրային գները հրապարակվում են տարբեր ազգային, միջազգային վիճակագրական տեղեկագրերում, և հաշվվում է դրանց դինամիկան:

Դեմպինգային գներով (ցածր գին) ապրանքներն արտաքին շուկաներում վաճառվում են ավելի ցածր գներով, քան ներքին շուկայում: Այդ գները ցածր կարող են լինել ոչ միայն արտադրության գներից, այլև ինքնարժեքից, իսկ տարբերությունը, այսինքն՝ կորուստը, ծածկվում է մենաստիրական գերշահույթի հաշվին, որը ստացվում է ապրանքները ներքին շուկայում վաճառելուց: Դեմպինգի գլխավոր նպատակն արտասահմանյան նոր շուկաների նվաճումն է, արտահանման մրցակցային առավելության շահումը: Դեմպինգը կարող է հետապնդել նաև ***քաղաքական*** նպատակներ: Տնտեսապես հզոր պետությունը, թույլ զարգացած երկրների նկատմամբ դեմպինգ իրականացնելով, ձգտում է ներմուծող երկրի արտադրողների մրցակցությունը ճնշել և նրանց նկատմամբ սահմանել վերահսկողություն: Դեմպինգի դեմ պայքարի միջոցառումները կանոնակարգող օրենսդրությունը մշակել է ԱՀԿ-ն՝ անդամակցության պահանջներին համապատասխան: Դեմպինգի երկարատև կիրառումը սրում է երկրների միջև հակասությունները: Դեմպինգային գնով ապրանքներ արտահանողներն ավելացնում են իրենց օգուտները, սակայն աճում են ներքին գները, իջնում՝ բնակչության կենսամակարդակը: Պատահական չէ, որ 1967 թ. առևտրի և սակագների գլխավոր համաձայնության (ГАТТ) կոնֆերանսում ընդունվեց միջազգային հակադեմպինգային կոդեքս՝ ըստ որի դեմպինգի կիրառման դեպքում նախատեսվում է հատուկ սանկցիա:

7.3 Արժեզրկում, գների մակարդակի վրա ազդող գործոնները և պետական հսկողությունը

Արժեզրկումը գների ընդհանուր մակարդակի բարձրացումն է որևէ ժամանակահատվածում: Սակայն բոլոր գները միաժամանակ չեն բարձրանում: Արժեզրկման հիմնական պատճառը բյուջեի դեֆիցիտն է, որը ծածկելու համար պետությունը թողարկում է թղթադրամ կամ արժեթղթեր: Լինում է ***չափավոր արժեզրկում,*** երբ գների բարձրացումն էապես չի ազդում եկամուտների և գների հարաբերությունների վրա, ***սրընթաց արժեզրկում***, երբ գների տարեկան աճը կազմում է 50, 100, նույնիսկ՝ 200 տոկոս, և ***գերարժեզրկում,*** երբ գների տարեկան բարձրացումն անհամեմատ արագ է կատարվում, և դրամը լրիվ արժեզրկվում է: Ո՛չ արժեզրկումը և ո՛չ էլ դեֆլյացիան բոլոր ապրանքների ու ծառայությունների գները չեն փոխում: Գների մակարդակի հարաբերական փոփոխության և ամբողջական ծախսերի ավելացման հետևանքով արժեզրկման և դեֆլյացիայի ընթացքում տեղի են ունենում տարբեր բնույթի փոփոխություններ արտադրության ընդհանուր ծավալում, եկամուտների բաշխման ձևերում, տնտեսական կառավարման համակարգում և այլն: Օրինակ՝ 1970-1980 թթ. համաշխարհային շուկայում դիտվում էր արժեզրկման բարձր մակարդակ, սակայն տեսամագնիտոֆոնների, էլեկտրոնային ժամացույցների, համակարգիչների գները նույն ժամանակում իջնում էին: Սա նշանակում է, որ արժեզրկման պատճառը գների անհամաչափ փոփոխությունն է, որ չափվում է գների ինդեքսի միջոցով:

Պատմականորեն արժեզրկումն առաջանում է նաև այլ պատճառներով: Օրինակ՝ պատերազմների ժամանակ պետությունները ստիպված են լինում շրջանառության մեջ բաց թողնել ոչնչով չապահովված մեծ քանակով թղթադրամ: Արժեզրկման և գների արագ աճի պատճառ կարող են լինել նաև դրամաշրջանառության և դրամավարկային ոչ ճիշտ քաղաքականությունը, պետության արտաքին և ներքին պարտքերի, ոչ արտադրողական ծախսերի առկայությունը:

Զարգացած և զարգացող երկրների տնտեսությունում արժեզրկման պատճառները և ձևերը տարբեր են: Զարգացող երկրների դրամական զանգվածն ուղղակի կապվում է ֆինանսական միջոցների պետական պահանջի հետ: Այդ պայմաններում կառավարությունը թողարկում է անարժեք փող: Առաջանում է ***գների ազատականացում,*** որը կոչված է խթանելու ապրանքների արտադրությունը, ինչպես նաև ապահովելու պետական բյուջեի հավասարակշռությունը:

Համաշխարհային շուկայի գների մակարդակի վրա ազդում են տարբեր ***գործոններ,*** որոնք փոփոխում են միջազգային գները: Դրանք բաժանվում են 5 խմբի.

- ***ընդհանուր տնտեսական*** (ամբողջական առաջարկի և պահանջարկի իրավիճակ, արտադրական ծախսերի փոփոխություն, արտադրանքների տեսակներ, որակ, տնտեսական ճգնաժամի փուլեր (ճգնաժամ, անկում, աշխուժացում, վերելք), գնագոյացման գործոններ),
- **կոնկրետ *տնտեսական*** (եկամուտներ, ծախսեր, հարկեր, արտադրանքի որակ, հուսալիություն),
- ***յուրահատուկ*** (արտադրության սեզոնայնություն (ամառային, ձմեռային հագուստ, գյուղատնտեսական արտադրանք), շահագործման ծախսեր, սերվիսի պայմաններ),
- ***հատուկ*** (գործելակերպի մեխանիզմներ, պետական կարգավորման ձևեր, արժութային կուրսերի տատանումների ռիսկային գործոն, արտաքին առևտրի և արժութային սահմանափակումներ, միջպետական մատակարարման առանձնահատկություններ, բորսային սպեկուլյացիաներ և այլ տնտեսական և ոչ տնտեսական գործոններ),
- ***ոչ տնտեսական*** (միջազգային մենատերերի քաղաքական ազդեցություն, սոցիալական, ռազմական, կրոնական, էթնիկական գործոններ):

Վարկա-դրամական քաղաքականության միջոցներն ազդում են գների ընդհանուր մակարդակի վրա և կարող են նպաստել դրանց աճի կանխմանը: Այս խնդիրը լուծելու համար պետությունը ձգտում է կարգավորել դրամական զանգվածի, արժութային կուրսի արժեզրկումը:

Գների վրա տարբեր պլանային ազդեցություն են ունենում հարկաբյուջետային միջոցառումները: Հարկաբյուջետային օժանդակությունը չի փոխում շուկայական գները, բայց որոշ պայմաններում իջեցնում է ապրանքների արժեքը սպառողների համար կամ փոխհատուցում է արտադրողների ծախսերի մի մասը:

Առաջարկի և պահանջարկի ծավալների և շուկայի որոշակի գների վրա կարող են ազդել ձեռնարկատիրական գործունեության ***լիցենզավորումը*** և ***կարգավորումը***, եթե սահմանվում են անվտանգության ստանդարտներ, նորմեր: Կոնկրետ խնդիրներ լուծելու համար պետությունը ընտրում է հարկերի տեսակ, հարկային արտոնություններ, բյուջետային օժանդակություն և արտահայտում արտադրողների և սպառողների կախվածությունն ապրանքների արժեքից և գործունեության մեխանիզմից:

Որևէ երկրի արժույթի կուրսի իջեցումը հնարավորություն է տալիս ապրանք արտադրողին ստանալու լրացուցիչ եկամուտ: Օրինակ՝ ամերիկյան ընկերությունը Գերմանիա ապրանք է արտահանում 100 մարկ միավորի հաշվով: Եթե դոլարի կուրսն արժե 2.5 մարկ, ապա ամերիկյան ընկերությունն արտահանած ապրանքի միավորի դիմաց կստանա 40 դոլար (100:2.5): Եթե ամերիկյան դոլարի կուրսը դառնա 2

մարկ 2.5-ի փոխարեն, ապա ամերիկյան ընկերությունը նույն ապրանքի միավորի համար կստանա 50 դոլար (100:2):

Համաշխարհային շուկայի իրավիճակն անմիջապես ազդում է մյուս երկրների արտաքին տնտեսական գործունեության վրա: 1997 թ. Ռուսաստանի ներքին շուկայի բարձր գները և համաշխարհային շուկայում ապրանքների թույլ մրցակցությունն իրավիճակն ավելի վատացրին, ինչի հետևանքով կրճատվեցին արտահանման ծավալները: Այդ պատճառով արտահանման մեջ առաջնային դեր խաղացին հումքային ռեսուրսները, որոնք ընդհանուր արտահանման մեջ կազմեցին 46.8 տոկոս:

Տնտեսական զարգացած երկրների մեծ մասը պետական վերահսկողություն է սահմանում շուկաների վրա: Ընդ որում, կառավարությունը կարգավորում է մինչև անգամ ազատ մրցակցության շուկաները՝ ոչ միայն հարկեր մտցնելով, սուբսիդիաներ (դրամական օգնություններ) տալով: Նա արժեզրկման դեմ պայքարելու համար վարում է դրամական զանգվածի սահմանափակման քաղաքականություն (դեֆլյացիա), որով գները կարգավորվում են:

Արդյունաբերական արտադրանքների վրա պետական ազդեցությունն իրականացվում է գիտահետազոտական աշխատանքների, արտահանման բյուջետային ֆինանսավորման կարգավորման, ինչպես նաև համապատասխան մաքսային քաղաքականություն վարելու միջոցով: Եթե ներքին գները բարձր են արտահանման գներից, արտահանման և մրցունակության բարձրացման նպատակով կառավարությունը, որպես լրավճար, իր արտահանողներին տալիս է դրամական օժանդակություն արտահանման հասույթի համեմատ: Բացի դրանից կառավարությունը կարող է արտահանվող ապրանքների գներն իջեցնել կամ փոխել ապրանքների, հումքի, նյութերի հարկման ձևերը:

Ապրանքների արտահանումը և ներմուծումը, ոչ մեծ բացառությամբ, կատարվում են մաքսային սահմանով: Արտահանման և ներմուծման գները տարբերվում են՝ կախված նրանից, թե ինչ լրացուցիչ ծախսեր են հաշվարկվում ապրանքներն արտահանողից ներմուծողի մոտ տեղափոխելու ժամանակ, որովհետև արտահանումը կատարվում է ՖՕԲ (ֆրանկո-բորտ), իսկ ներմուծումը՝ ՍԻՖ գներով[52]: Բոլոր գումարները հաշվարկվում են ԱՄՆ դոլարով:

Արտահանման և ներմուծման միջին տարեկան աճի ծավալը հաշվարկվում է մշտական գներով՝ սահմանելով համապատասխան գների ինդեքս: Այն հարաբերական ցուցանիշ է, որն արտացոլում է գների դինամիկան, սակայն պատկերացում չի տալիս նրանց մակարդակի մասին: Համեմատումը բազիսի հետ ցույց է տալիս գների փոփոխման

[52] Ներառյալ ապրանքների գները, ապահովագրումը, փոխադրման արժեքը: Мировая экономика и международные отношения, наука, журнал, N 10, 2011, стр. 40-50

միտումը և օգտագործվում է գները համադրելի տեսքի բերելու համար:

Եկամտի ցածր և միջին մակարդակ ունեցող երկրների համար Համաշխարհային բանկը կիրառում է ՅՈՒՆԿՏԱԴ-ի կողմից հաշվարկված գների ինդեքս, իսկ բարձր եկամուտ ունեցող երկրների համար՝ ԱՄՀ տվյալները:

Ըստ Եվրոստատի որոշման՝ ապրանքների և ծառայությունների գների կարգավորումը վերաբերում է այն գներին, որոնք *լրիվ* սահմանվում են և *առավելապես* հսկվում պետության կողմից: Օրինակ՝ պետությունը կարող է *ուղղակի* սահմանել հասարակական տրանսպորտի փոխադրումների գները և վերանայել, կարգավորել ժամանակի ընթացքում: *Առավելապես* կարգավորվող գներին վերաբերում են սպառման ապրանքների և ծառայությունների գները, որոնց վրա պետությունն ունի նշանակալի ազդեցություն:

ԳԼՈՒԽ 8
ԱԶԱՏ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՏԻՆԵՐ

8.1 Ազատ տնտեսական գոտիների էությունը և կազմակերպման անհրաժեշտությունը

Ազատ տնտեսական գոտիները (ԱՏԳ) տնտեսական, արտաքին առևտրի, ինվեստիցիոն հատուկ արտոնյալ ռեժիմով երկրի տարածքներ են, որտեղ պայմաններ են ստեղծվում արտասահմանյան և ազգային ձեռնարկատիրության, ապրանքների ներմուծման և արտահանման համար: ՄԱԿ փորձագետների բնորոշմամբ՝ ***«ԱՏԳ-ն տարածությունների մասեր են, առանց մաքսատուրքի և առևտրական ռեժիմի սահմանափակ արդյունաբերական շուկա, որտեղ արտահանման համար արտադրանք թողարկող ընկերություններն օգտվում են տարբեր հարկային և ֆինանսական արտոնություններից»:*** ԱՏԳ-ն ՄՏՀ բազմաթիվ կարևոր ձևերից մեկն է:

1950-60-ական թվականներին համաշխարհային տնտեսության մեջ ԱՏԳ-ն դարձավ ՄՏՀ անբաժանելի մաս, որտեղ կիրառվում են տարբեր արտոնություններ և տնտեսական խրախուսման հատուկ համակարգեր: Ազգային տնտեսությունների միջազգայնացման խորացմամբ ԱՏԳ-ն ընդարձակվեցին, և էապես փոխվեց տնտեսական բովանդակությունը: Համաշխարհային տնտեսության համակարգում ԱՏԳ-ն հանդես է գալիս որպես տնտեսական աճի, միջազգային առևտրի ակտիվացման, ինվեստիցիաների մոբիլիզացման, տեխնոլոգիաների, տեղեկատվության փոխանակումների, ինտեգրացիոն պրոցեսների խորացման գործոն:

Արևելաեվրոպական երկրներում ԱՏԳ սկսեցին երևալ 1970-80 թթ.-ին: Համարյա բոլոր զարգացող երկրներում ստեղծվել են արտահանման ԱՏԳ, որոնք տեղաբաշխված են նավահանգիստներում և օդանավակայաններում: Դրանց քանակն ավելի մեծ է Ասիայի «նոր ինդուստրիալ երկրներում»: ԱՏԳ-ի թվով և նշանակությամբ առաջավոր տեղ է գրավում Լատինական Ամերիկան, հատկապես՝ Մեքսիկան, Բրազիլիան, Չիլին, Արգենտինան: Ոչ քիչ թվով ԱՏԳ են ստեղծվել Աֆրիկայի երկրներում (Եգիպտոս, Սենեգալ, Տոգո, Լիբերիա, Ալժիր և այլն):

ԱՏԳ տնտեսական նպատակն է.

- արտաքին առևտրի ակտիվացումը,
- արտաքին տնտեսական գործունեության ընդլայնումը,
- ազգային արդյունաբերության մրցունակության և արդյունավետության բարձրացումը,
- արտահանման և ներմուծման ավելացումը,
- ԱՏԳ հետագա զարգացումը:

Սոցիալական նպատակն է.

- ստեղծել նոր աշխատատեղեր,
- նպաստել զբաղվածության աճին,
- բարձրացնել աշխատողների որակավորման մակարդակը,
- ապահովել նորմալ կենսամակարդակ:

Արտադրական և ԳՏ նպատակն է.

- հայրենական և օտարերկրյա տեխնիկայի, տեխնոլոգիաների աճը,
- ԳՏ գործունեության ներդրումը,
- ԳՏ մասնագետների համակենտրոնացումը:

2000 թ. ավելի քան 10.0 հազար ԱՏԳ գտնվում էին զարգացող երկրներում, որտեղ աշխատողների թիվը, ՄԱԿ-ի տվյալներով, գերազանցում էր 3 մլրդը:

ԱՏԳ-ը լինում են ***աշխատանքային*** (պահեստային, տրանզիտ), ***արդյունաբերության, արտահանման, գիտատեխնիկական:*** Առաջին, առավել հստակ ձևավորված ԱՏԳ-ը նախատեսված էին առք ու վաճառքի, պահպանման, վերամշակման համար:

Ավելի լայն ազատ մաքսային և առանց մաքսային տուրքերի գործունեություն ծավալվել է 1930 թ. ԱՄՆ-ում արտաքին առևտրի գծով: Դա միջազգային տնտեսական ինտեգրացիայի հաջորդ փուլն էր, որը երկու և ավելի երկրների համաձայնություն էր առևտրում մաքսային տուրքերի վերացման համար:

Զարգացած և նոր ինդուստրիալ երկրներում աստիճանաբար ձևավորվեցին ***ազատ առևտրային***, ***ազատ արդյունաբերական***, ***արտադրական-արտահանող*** և այլ գոտիներ: Վերջին ժամանակներում ավելի շատ տարածված են ԳՏ ԱՏԳ-ը, տեխնոլոգիաների, տեխնիկաներդրումային գոտիները, տեխնոպարկերը (ԱՄՆ-ում), տեխնոպոլիսները (Ճապոնիայում), նևսև շատ գիտական, տեխնոլոգիական և գործառնային կենտրոններ:

21-րդ դարի սկզբին աշխարհում գործում էին 10 հազարից ավելի տարբեր տեսակի ԱՏԳ, որոնց բաժին էր ընկնում համաշխարհային ապրանքաշրջանառության 30 տոկոսը և ֆինանսական գործարքների կեսը: ՀՏ մեջ ներկայում հաշվարկվում են մոտ 30 տեսակի ԱՏԳ:

Տարբեր հրապարակումներում ԱՏԳ հասկացությունը լրիվ չի արտացոլում այդ գործունեության էությունը, քանի որ կիրառվող տնտեսական, վարչական օրենքները, կանոնները երկրներից շատերին չեն ազատում որոշ տնտեսական և իրավական ռեժիմից, այլ միայն խթանում են ձեռնարկատիրությունը, թեթևացնում գոտու գործունեությունը՝ նրան տալով որոշ արտոնություններ: ԱՏԳ-ը պետության ներսում կրճատում են պետության միջամտության մասշտաբները: Որոշ երկրների համար «ազատ գոտիները» նպաստում են միայն աշխատողների կենսամակարդակի բարձրացմանը, արտադրողական ուժերի կենտրոնացմանը:

ԱՏԳ էվոլյուցիան կապված է ԳՏ նվաճումների, արդյունաբերական զարգացած երկրների տնտեսությունների, կառուցվածքի փոփոխության, ինչպես նաև գաղութային համակարգի քայքայման հետ, ինչի հետևանքով ինչպես զարգացած, այնպես էլ զարգացող երկրներում բացվել են նոր ոլորտներ: ԱՏԳ-ը չեն պահանջում նախնական կապիտալ ներդրումներ, նախապատրաստության ժամանակ, գործունեության բարդ ծրագրեր:

1973 թ., Կիոտոյի (Ճապոնիա)[53] կոնֆերանսում ստորագրված համաձայնագրից հետո, ԱՏԳ-ը լայն տարածում են ստացել շատ երկրներում որպես սովորական մաքսային հսկողություն չպահանջող առևտուր:

Առևտրային գոտուն վերաբերում են այն տարածքները, որոնց գործառույթն ապրանքների ստացումը, պահպանումը, տեսակավորումը և փաթեթավորումն է:

Արդյունաբերա-արտադրական գոտիներն ավելի շատ տարածված են զարգացող երկրներում և զբաղվում են արտադրական գործունեությամբ:

Գիտա-արդյունաբերական պարկերը լինում են հետազոտական, գիտական տեխնոպարկեր, տեխնոպոլիսներ:

ԱՏԳ գործունեության կարգավորման համար ստեղծվել է տնտեսական գոտու կառավարման ***հատուկ ֆեդերալ գործակալություն***, որի գլխավոր խնդիրն է հետազոտել անհրաժեշտ գործընթացները տնտեսության զարգացման համար: Ամենատարածված հատուկ տնտեսական գոտիները լինում են.

- մաքսային և ազատ մաքսային,
- արտաքին առևտրային և առանց տուրքերի արտահանման,
- տեխնիկա-տնտեսական զարգացման,
- արտադրական, արդյունաբերական,
- համատեղ ձեռնարկատիրական,
- տեխնիկաներդրումային,
- բանկային ծառայությունների,
- գիտաարդյունաբերական, ապահովագրական,
- տարանցիկ ճանապարհների,
- զբոսաշրջության կենտրոնների,
- միջազգային օֆֆշորային և այլն:

ԱՏԳ-ում եկամտի նորմը միջին հաշվով կազմում է 30-35, իսկ ասիական գոտում՝ ավելի քան 40 տոկոս:

[53] Киото, 18.05.1973, в редакции Брюсельского протокола, от 26 июля 1999.

1980-ական թթ. շատ արդյունաբերական զարգացած երկրների (Մեծ Բրիտանիա, ԱՄՆ, Իտալիա, Ֆրանսիա) տարածաշրջաններում երևացին հատուկ տնտեսական՝ գիտատեխնիկական, ազատ բանկային, ազատ ապահովագրական գոտիներ, տեխնոպարկեր, որոնց 80-90 տոկոսը գտնվում է Արևմտյան Եվրոպայում: Օրինակ՝ Գերմանիայում գործում են 6 «ազատ նավահանգիստներ» (Համբուրգում, Բրեմենում, Քիլում և այլ քաղաքներում): Ռուսաստանում հայտնի են Վիբորգի տեխնոլոգիական, զբոսաշրջության, Նովգորոդի կենցաղային, էլեկտրասարքերի, Նախոդկայի նավթի վերամշակման, Սանկտ Պետերբուրգի, Կալինինգրադի, Մոսկվայի, Սոչիի, Սախալինի զբոսաշրջության գոտիները: Մեծ Բրիտանիային բնորոշ են ծեռնարկատիրական, Շվեյցարիային՝ ապահովագրական և բանկային գոտիները: Որոշ երկրներում գործում են նաև համաշխարհային առևտրի, միջազգային ֆինանսական հարաբերությունների, միջազգային արտադրական համագործակցության, միջազգային գիտատեխնիկական կապերի, միջազգային ծառայությունների և զբոսաշրջության գոտիներ:

Դեռևս 1972 թ. ՅՈՒՆԵՍԿՕ-ն ընդունեց համաշխարհային մշակույթի պահպանման մասին Կոնվենցիա, որտեղ նշվեցին 69 երկրների տարածքներում գտնվող 322 օբյեկտներ, որոնցից 234-ը պատմամշակութային արժեքներ են: Օրինակ՝ Տաուերը՝ Լոնդոնում, Ակրոպոլիսը՝ Աթենքում, Կարմիր հրապարակը և Կրեմլը՝ Մոսկվայում, Էրմիտաժը՝ Սանկտ Պետերբուրգում, Ազատության արձանը՝ Նյու Յորքում, Թաջ Մահալը՝ Ագրայում և այլն:

ԱՏԳ բոլոր տիպերի և տարատեսակների համար ընդհանուր ***սկզբունքներ են.***

- տարածքների, սարքավորումների, կիսաֆաբրիկատների և պատրաստի արտադրանքների ներկրման (արտահանման) վրա մաքսային տուրքերի բացակայությունը (կամ նվազագույն չափերը),
- հարկման արտոնյալ ռեժիմը,
- միջպետական ֆինանսական ընդհանուր ազատության պայմաններում փոխարկելի արժույթի ազատ շրջանառությունը:

Ըստ սեփականության բնույթի՝ ԱՏԳ-ը կարելի է բաժանել ***պետական, մասնավոր, խառը*** ձևերի: Համաշխարհային պրակտիկայում ամենաշատ տարածվածը խառը ձևն է:

ԱՏԳ ստեղծման անհրաժեշտությունը պայմանավորված է կազմակերպող երկրների սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակով, նրանց ռազմավարական պլաններով: Հետևաբար ԱՏԳ ստեղծման պատճառները և նպատակները կարող են տարբեր լինել: ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Մեծ Բրիտանիայում ԱՏԳ ստեղծվել են արտաքին տնտեսական կապերի տարածաշրջանային քաղաքականության ակտիվացման համար՝ նպատակ ունենալով աշխուժացնելու տնտեսապես թույլ շրջանների մանր և միջին բիզնեսը, հավասարեցնելու միջտարածքային տարբերությունները: Խնդիրներն իրականացնելու համար նման ծեռնարկություններին տրամադրվել են ազատ գործունեության հնարավորություններ և ֆինանսական արտոնություններ: 1997 թ. սկզբին Ֆրանսիայի 38 քաղաքները, Կորսիկան հայտարարվել են «ազատ գոտի»: Ստեղծված մանր և միջին ծեռնարկությունները ստացել են հարկային առավելագույն արտոնություններ: Հինգ տարով ազատվել են տարբեր հարկերի և այլ պարտադիր մասհանումների վճարումներից: Ընտրված 38 քաղաքներից 10-ը փարիզյան քաղաքամերձ բնակավայրեր էին, որտեղ գործազրկությունը կազմում էր 13.5 տոկոս, կրթություն չուներ երիտասարդների զգալի մասը: Կորսիկայում արտոնություններ տարածվում էին նաև գյուղատնտեսության, զբոսաշրջության, բնակարանային շինարարության վրա:

ԱՏԳ ստեղծվել են նաև մի շարք զարգացող երկրներում: Սակայն, ի տարբերություն զարգացածների, այստեղ ԱՏԳ ստեղծումը հենվում էր արտասահմանյան կապիտալի ներդրման, տեխնոլոգիաների, արդյունաբերության արդիականացման, աշխատուժի որակավորման բարձրացման վրա: Բացի նշված նպատակներից՝ ԱՏԳ ստեղծումը կապվում է երեք հիմնական խնդիրների հետ: Դրանք են.

- արդյունաբերական ապրանքների արտահանման խթանումը և արժութային միջոցների ստեղծումը,
- զբաղվածությունը և տնտեսական աճը,
- տնտեսավարման նոր մեթոդների փորձարկումը:

ԱՏԳ մաքսային, հարկային ռեժիմն անհրաժեշտ է արտաքին և ներքին ինվեստիցիաների համար: Միաժամանակ ԱՏԳ կազմավորումը չի կարող երկրի տնտեսությունը լրիվ բացել արտասահմանյան կապիտալի առջև, ամեն տեղ օգտագործել հատուկ ինվեստիցիոն կլիմա:

Վերջին տասնամյակում համաշխարհային տնտեսության մեջ հարկային և այլ արտոնությունների պայմաններում տարբեր երկրներից կապիտալ ներդրումների ներգրավման համար սուր մրցակցություն է ծավալվել: Ազգային օրենսդրությամբ սահմանված տարբեր հարկային արտոնությունների ալիքը ստացել է «հարկային հեղափոխություն» անվանումը, թեև համաշխարհային տնտեսության մասշտաբով ԱՏԳ-ը մեծ դեր է խաղացել կապիտալի տեղաշարժի գործում:

8.2 Ազատ տնտեսական գոտիների դասակարգումը և հատկանիշները

ԱՏԳ կազմակերպական-ֆունկցիոնալ կառուցվածքը բազմաձև է: Հաճախ դժվար է որոշել այս կամ այն գոտու առանձնահատկությունները, քանի որ դրանցից յուրաքանչյուրն իր մեջ ունենում է նաև մյուս գոտիների հատկանիշներից: ԱՏԳ հիմնական ***հատկանիշներն են*** համաշխարհային տնտեսության հետ սերտ կապերը և օտարերկրյա

կապիտալի ակտիվ ներգրավումը, հարկերի թեթևացումը, այդ գոտիները նավահանգիստների, միջազգային օդանավակայանների մոտ կազմակերպելը, համաշխարհային շուկաների հետ լայն կապեր ստեղծելը, առանց տուրքերի կամ արտոնյալ ռեժիմով ապրանքների արտահանումը և ներմուծումը: Ըստ մասնագիտական հատկանիշների, տարբեր կազմակերպչական ձևերի և նպատակային նշանակության՝ մշակվել է ԱՏԳ մոտավոր դասակարգումը, այն է՝ ***առևտրական, արդյունաբերական-արտադրական, տեխնիկաներդրումային, սերվիսային, կոմպլեքսային, միջազգային ԱՏԳ:***

Առևտրական գոտիներին վերաբերում են ազատ մաքսային գոտիները, որոնք տրանզիտային պահեստներ են և արտասահմանին ապրանք են վաճառում կոմիսիոն միջնորդների միջոցով: Այդպիսի գոտիները հաճախ անվանվում են մաքսային տարածություններ, որտեղ իրենց մասնաճյուղերն են բացում տվյալ երկրի համար ապրանք ներմուծող ոչ լիազոր ներկայացուցիչները: Ազատ մաքսային գոտիներն ազատվում են մաքսատուրքից: Դրանք հիմնականում տեղաբաշխված են ինդուստրիալ երկրներում: Առևտրական գոտիների մեջ մտնում են նաև ***ազատ առևտրի գոտիները (ԱԱԳ),*** որոնք վերաբերում են ԱՏԳ առաջին սերնդին: Դրանք առանձին տարածություններ են. որոնց գործառույթը հիմնականում ապրանքների ներկրումն է, պահպանումը, տեղավորումը, փաթեթավորումը, տեղափոխումն առանց լրացուցիչ մշակման: Առանձին դեպքերում վերարտահանման համար թույլատրվում է արտասահմանյան ապրանքների աննշան մշակում: ԱԱԳ-ը հիմնականում տեղաբաշխված է ԱՄՆ-ում, որտեղ ձևավորվել է 1934 թ. և նպատակը եղել է տրանզիտային առևտրի զարգացումը, գործարքների ծավալների ավելացումը քիչ ծախսերով: Ընդհանուր տնտեսական ռեժիմի համեմատ՝ այդ գոտիներում սահմանվել են արտոնություններ: Ներկայում ԱՄՆ-ում հաշվվում են 500, Եվրոպայում՝ 150, Ճապոնիայում՝ 23 ԱԱԳ: Դրանց մեծ մասը տեղաբաշխված է տրանսպորտային հանգույցներում՝ օդանավակայաններում, երկաթուղային կայարաններում, ավտոմայրուղիների մոտ, նավահանգիստներում: Օրինակ՝ ԳԴՀ-ում «ազատ նավահանգիստներ» են Համբուրգը, Բրեմենը, Քիլը և այլն: ***Արտոնյալ*** գոտու շրջանակներում սահմանվում է ապրանքների և ծառայությունների առևտրի մասնակցային և քանակական սահմանափակումից ազատում:

ԱՄՆ տարածքում գործող ԱԱԳ-ը բաժանվում են ***ընդհանուր նշանակման*** և ***մասնագիտացած գոտիների:***

Ընդհանուր նշանակման գոտիները գրավում են ոչ մեծ տարածություն և գտնվում են ազգային մաքսային տարածքից դուրս, որտեղ կատարում են պահեստավորում և ներկրված ապրանքների փաթեթավորում, տեսակավորում, մակնիշավորում:

Ենթագոտիները կազմակերպվում են առանձին խոշոր կորպորացիաների համար, որոնց գործունեությունը դուրս է գալիս գոտու ընդ-

հանուր նշանակման շրջանակներից: ԱԱԳ-ի թվին կարելի է դասել միջազգային խոշոր օդանավակայաններում գործող «դյութի ֆրի» և ազատ նավահանգիստներում գործող հատուկ խանութները:

Արդյունաբերական-արտադրական գոտիները պատկանում են ԱՏԳ երկրորդ սերնդին: Դրանք ***առաջացել են առևտրական գոտիների զարգացման հետևանքով,*** երբ այնտեղ բացի ապրանքից ներկրվել է նաև կապիտալ՝ զբաղվելու համար ոչ միայն առևտրով, այլև արտադրությամբ: Ի տարբերություն ԱԱԳ-ի, արդյունաբերական-արտադրական գոտիները նախատեսվում են ապրանքների արտահանման և արժութային մուտքերի ավելացման համար: 2000-ական թվականներին նման գոտիներ ունեին 120 երկիր՝ մոտ 300 միավոր քանակով: Դրանք ստեղծվում են հատուկ մաքսային ռեժիմով տարածություններում, որտեղ արտադրվում և արտահանվում է խառն արտադրանք: Այդ գոտիներն օգտվում են հարկային և ֆինանսական արտոնություններից: Հատկապես զարգացող երկրներում ամենաշատ տարածում ստացել են այս տիպի գոտիները, որոնց ժամանակակից մոդելը ստեղծվել է 1959 թ. Իռլանդիայի «Շենոն» օդանավակայանում ստեղծված գոտային կառուցվածքից: Նման գոտիները նպաստավոր են եղել հատկապես «նոր ինդուստրիալ երկրներում» (հիմնականում Ասիայում): Արդյունաբերական-արտադրական գոտիների ստեղծումը պայմանավորված է զարգացող երկրների տնտեսական ռազմավարությամբ, երբ 60-ական թվականներին անհրաժեշտություն եղավ արդյունաբերությունը զարգացնելու արտասահմանի կապիտալի ներհոսքի հաշվին:

Տեխնիկաներդրումային գոտիները վերաբերում են ԱՏԳ երրորդ սերնդին (1970-80 թթ.): Դրանք գոյացել են պետական հատուկ հովանավորությամբ՝ գիտական խոշոր կենտրոնների շուրջ: Նրանցում կենտրոնացվում են ազգային և արտասահմանյան հետազոտական, նախագծային, գիտաարտադրական ընկերությունները, որոնք օգտվում են հարկային և ֆինանսական արտոնությունների միասնական համակարգից: Ամենաշատ թվով տեխնիկաներդրումային գոտիներ ունեն ԱՄՆ-ը, Ճապոնիան, Չինաստանը: ԱՄՆ-ում դրանց անվանում են ***տեխնոպարկեր,*** Ճապոնիայում՝ ***տեխնոպոլիսներ,*** Չինաստանում՝ ***նոր և բարձր տեխնոլոգիաների զարգացման գոտիներ:*** Այդ գոտիները ստացել են նաև «գիտաարդյունաբերական պարկեր» անվանումը: 20-րդ դարի կեսերից մինչև այժմ աշխարհում ստեղծվել է ավելի քան 400 տեխնոպարկ: 1995 թ. ԱՄՆ-ում հաշվարկվում էր 100, Գերմանիայում՝ 60, Չինաստանում՝ 52, Մեծ Բրիտանիայում՝ 40, Ֆրանսիայում՝ 30, Ռուսաստանում՝ 27, Ճապոնիայում՝ 20, Հարավային Կորեայում և Սինգապուրում՝ 10-ական տեխնոպարկ[54]:

---

[54] Международные экономические отношения, учебник, Юнити, 1999, стр. 366.

Հայաստանում 2001 թ.-ից գործում է «Վիասֆեր տեխնոպարկը»՝ բարձր տեխնոլոգիաների ոլորտի 20 ձեռնարկություններով: Տեխնոպարկում հնարավոր է կազմակերպել մինչև 1000 տոննա մոնոբյուրեղային սիլիցիումի արտադրություն, ինչի արդյունքում հնարավոր կլինի տարեկան պատրաստել և տեղադրել մինչև 100 մգվտ գումարային հզորության արևային մոդուլներ: Ընկերությունը նախագծել է նաև հակակարկտային կայաններ և այլ մշակումներ:

ԱՄՆ-ի՝ աշխարհում ամենահայտնի «Սիլիկոն Վելլի» տեխնոպարկը տալիս է հաշվողական տեխնիկայի և համակարգչային միջոցների համաշխարհային արտադրության 20 տոկոսը: Նրանում զբաղված է մոտ 20 հազար աշխատող: Միայն ԱՄՆ-ում կա նման 20 գոտի: Ճապոնիայում, առաջատար գիտական կազմակերպությունների բազայի վրա ստեղծվել է երկու տասնյակ տեխնոպոլիս: 90-ական թվականների կեսերին Չինաստանում գործում էր նոր և բարձր տեխնոլոգիաների զարգացման 50 գոտի: Բնորոշ է, որ ասիական նոր ինդուստրիալ երկրներում տեխնիկաներդրումային գոտիները ձևավորվում են որպես արտահանման-կողմնորոշման գոտիներից կախված ինովացիոն կենտրոններ, որոնք արդեն գտնվում են զարգացման բավարար աստիճանի վրա, ինչպես ԱԱԳ-ը:

Սերվիսային գոտիները ընկերություններին և կազմակերպություններին արտոնյալ ռեժիմով ֆինանսական, ապահովագրական և այլ ծառայություններ մատուցող ձեռնարկատիրական գործունեության տարածություններ են, որոնց պատկանում են ***օֆֆշորային գոտիները (ՕԳ):*** Օֆֆշորային ընկերությունները հատուկ կազմակերպաիրավական կարգավիճակ ունեցող ձեռնարկություններ են, որոնք իրենք իրենց ապահովագրում են հարկային առավելագույն ծախսերից: ***Օֆֆշորային բիզնեսն*** արտասահմանում տնտեսական հարաբերությունների նոր սուբյեկտ է և գտնվում է արտասահմանի ինվեստորի հսկողության տակ: Օֆֆշորային ընկերության հիմնական առանձնահատկությունը կապված է նրա ոչ ներկայացուցչական կարգավիճակի հետ: Դա նշանակում է, որ օֆֆշորային ընկերությունը կառավարվում է արտասահմանից: Օֆֆշորային գոտում հարկային և այլ արտոնություն ունեցողները չպետք է լինեն այն երկրի լիազոր ներկայացուցիչը, որտեղ գտնվում է օֆֆշորային կենտրոնը, և վերջինիս եկամուտը տարածությունից չպետք է դուրս գա: ՕԳ-ում ներգրավվում են բարենպաստ արժութաֆինանսական ձեռնարկությունները: Ներկայում աշխարհում հաշվարկվում է ավելի քան 300 օֆֆշորային կենտրոն:

Օֆֆշորային ընկերությունները լինում են.

1. Հոլդինգային տիպի ընկերություններ,
2. Առևտրամիջնորդ արտահանման և ներմուծման ընկերություններ:

Օֆֆշորային ընկերություններ արդեն գործում են նաև Լիխտեյնշտեյնում, Պանամայում, Նորմանդյան և Անտիլյան կղզիներում, Հոնկոնգում, Իռլանդիայում, Շվեյցարիայում, Սինգապուրում, Լյուքսեմբուրգում, Մալթայում, Մավրիկինիայում, Իսրայելում, Մալայզիայում և այլուր: Իռլանդիայի, Լիբերիայի արդյունաբերական, առևտրական, բանկային, ապահովագրական ընկերություններն ընդհանրապես չեն հարկվում, իսկ Լիխտեյնշտեյնի, Նորմանդյան և Անտիլյան կղզիների, Պանամայի և մյուս երկրների ընկերությունները հարկվում են ցածր տոկոսով: Օֆֆշորային գոտիներում արտոնյալ ռեժիմը որոշվում է արժութային սահմանափակումների բացակայությամբ, սահմանադրական կապիտալի ցածր մակարդակով: Նման գոտիները երկրին ձեռնտու են օտարերկրյա կապիտալի ներգրավման, ընկերություններից եկամուտների ստացման, աշխատատեղերի ստեղծման համար:

Օֆֆշորային բիզնեսը կենտրոնացվում է արտահանման-ներմուծման բոլոր գործառնություններում, կոնսալտինգում: Դրան մասնակցում են մոտ 2 մլն ներդրող (իրավաբանական և ֆիզիկական անձինք): Օֆֆշորային բիզնեսում միջազգային պայքարը ստեղծվել է 1989 թ. «Մեծ յոթնյակի» երկրների կողմից, որոնք պայքարում են «կեղտոտ փողերի» լվացման դեմ:

Կոմպլեքսային գոտիները կազմակերպվում են առանձին վարչական կազմավորումների տարածքներում հատուկ սահմանված արտոնյալ պայմաններում: Նման ԱՏԳ ստեղծվել են 1980-ական թվականներին: Դրանց մեծ մասը ձևավորվել է արդյունաբերական-արտահանման գոտիների բազայի վրա և իրենից ներկայացնում է ավելի զարգացած կազմակերպություններ: Կոմպլեքսային գոտիների տարբերությունը մյուսներից տարածության մասշտաբների, արտադրության համակենտրոնացման, գործունեության ավելի լայն դաշտի առկայությունն է: Ընդհանուր նպատակը միջազգային առևտրի, արտադրության, ֆինանսական շուկայի, հաղորդակցության, զբոսաշրջության զարգացումն է: Կոմպլեքսային ԱՏԳ են Չինաստանի հատուկ տնտեսական 5 գոտիները, ԿԺՀ «բաց շրջանները», Բրազիլիայի «Մանաուս» գոտին, Արգենտինայի «Կրակե հող» տարածությունը, ինչպես նաև զարգացած երկրների կողմից հետամնաց տնտեսական շրջաններում ստեղծված ազատ ձեռնարկատիրական գոտիները:

1990-ական թվականներին ակտիվացավ ***միջազգային ԱՏԳ*** ձևավորման գործընթացը: Ռուսաստանի, Չինաստանի և ԿԺԴՀ սահմանագծին նախատեսվեց Տումանգանի հատուկ տնտեսական գոտու ստեղծումը: Այն հաշվարկված էր 20 տարվա համար, և արժեքն առաջին փուլում կազմում էր 90-110 մլրդ դոլար: Ենթադրվում է նաև Ճապոնիայի, Հարավային Կորեայի, Մոնղոլիայի մասնակցությունը նրա գործունեությանը:

Տարածաշրջանային մակարդակը հանգեցրել է ***եվրոտարածությունների*** առաջացմանը: Դրանք տարբեր պետությունների սահմանամերձ տարածքների տնտեսական միավորումներ են՝ արտաքին տնտեսական կապերի արդյունավետացման նպատակով: Եվրոտարածաշր-

ջանում գործունեություն իրականացնող յուրաքանչյուր երկիր ուղարկում է տվյալ բնագավառի լիազոր ներկայացուցչի: Այդ տարածաշրջանի ստեղծման գործում ակտիվ դեր են խաղում Լեհաստանը, Սլովակիան, Չեխիան, Հունգարիան, Ուկրաինան և Բելառուսը:

1990-ականների կեսերին ստեղծվեցին «Կարպատներ», «Բուգ», «Պոմերանիա» եվրոտարածաշրջանները: 1994 թ. ստորագրվել է համաձայնագիր չինական Սույֆենխե քաղաքի շրջանում ռուս-չինական սահմանամերձ առևտրական գոտու ստեղծման մասին: Ռուսաստանը մերձավոր և հեռավոր երկրների՝ Չինաստանի, Ֆինլանդիայի, Նորվեգիայի հետ սահմանամերձ գոտիների համատեղ կազմակերպումը կծառայեցնի սահմանամերձ առևտրի զարգացմանը, այլ նախագծերի իրականացմանը:

Ռուսաստանը և Չինաստանը 2009 թ. վերջին ստորագրեցին Ռուսաստանի Հեռավոր Արևելքի, Արևմտյան Սիբիրի և Հյուսիսարևելյան Չինաստանի միջև 2009-2018 թթ. համագործակցության Ծրագիր, որի գլխավոր խնդիրը հայտագրված է կողմերի՝ «Ռուսաստանի Հեռավոր Արևելքի և Բայկալյան սոցիալ-տնտեսական զարգացումը» և «Չինաստանի Հյուսիսարևելյան շրջանի վերածննդի ծրագիրը» տարածքային զարգացման երկու ռազմավարական գործունեությունների կոորդինացման ծրագրերում[55]:

8.3 Ազատ տնտեսական գոտիների առանձնահատկությունները

Տարբեր տեսակի ԱՏԳ-ին բնորոշ ընդհանուր գիծը մաքսային, հարկային, ֆինանսական արտոնությունները և տարբեր երկրներում ձեռնարկատերերի համար գոյություն ունեցող ընդհանուր ռեժիմի պահպանումն է: Սակայն արտոնություններն ու խթաններն ունեն որոշ քանակական տարբերություններ, որոնք բնորոշվում են.

- արտաքին առևտրական արտոնություններով (արտահանման-ներմուծման տուրքերի իջեցում կամ վերացում),
- հարկային արտոնություններով՝ կապված հարկային խրախուսումների կոնկրետ տեսակների կամ ձեռնարկատերերի վարքի հետ,
- նպաստների ձևով ֆինանսական արտոնություններով, որոնք տրվում են արտոնյալ վարկերի տեսքով հողատարածությունների և արդյունաբերական շինությունների օգտագործման վարձավճարների իջեցման նպատակով,
- վարչական արտոնություններով, որոնք տրվում են գոտիների վարչություններին, արտասահմանի քաղաքացիներին տարբեր ծառայություններ մատուցելու նպատակով:

[55] Вопросы экономики, 2011, N 11, стр. 115.

Նշված ծառայությունները կիրառվում են ամենատարբեր գործունեություններում: Այդ հարաբերություններում ավելի էական են երկրի քաղաքական կայունությունը, ինվեստիցիոն երաշխիքները, ենթակառուցվածքների որակը, աշխատուժի որակավորումը, վարչական ընթացակարգը:

Զարգացած երկրներում ԱՏԳ գործունեության հաջողությունների հիմքում կառավարման ճկունությունն է: Համաշխարհային տնտեսության մեջ փոփոխվող իրավիճակներն ազդում են գոտիների զարգացման վրա: Գոտիների կազմակերպման սոցիալ-տնտեսական օգուտները բավական ծանրակշիռ են: Ստեղծվում են մեծ թվով աշխատատեղեր, աշխուժանում են միջազգային առևտրական փոխանակումները, բարձրանում է արտաքին առևտրի արդյունավետությունը, հզորանում գիտատեխնիկական ներուժը: Զարգացած երկրների ԱՏԳ գործունեության մյուս ***առանձնահատկությունն*** էլ այն է, որ նա գործում է ոչ միայն համաշխարհային, այլև ներքին շուկաներում:

Զարգացող երկրներում ավելի շատ տարածում են գտել արտադրական-արտահանման գոտիները: Սակայն ԱՏԳ հատուկ ռեժիմն օտարերկրյա ձեռնարկատերերի համար ավելի ցածր է՝ կապված գոտիների միջև միջազգային մրցակցության հետ: ԱՏԳ գործընթացում տեղի են ունենում դրանց առևտրաարդյունաբերական գործունեության դիֆերենցում և համալիր զարգացում: Ժամանակակից ԳՏՀ-ն առաջ է մղում այն գոտիները, որոնք կիրառում են արտադրական նոր տեխնոլոգիական մշակումներ, գիտատար ճյուղեր:

Զարգացող երկրների մեջ նկատելի առաջընթաց է ապրում Չինաստանի ԱՏԳ-ը: 1980-ական թվականների սկզբին, միավորելով հատուկ գոտիների տարածությունները, չինական ղեկավարությունը ստեղծել է խոշոր գոտիներ: Բացի երկրում և արտասահմանյան հայտնի Շենչժեն, Չժուխայ, Սյամեն, Շանտոու, ինչպես նաև 1988 թ.-ից գործող Խայնան ԱՏԳ-ից՝ երկրում նկատելի զարգացել են ավելի քան երկու տասնյակ տեխնիկատնտեսական և նոր տեխնոլոգիաների զարգացման տեխնոպարկեր: Հատուկ դեր ունի Շանհայի «Պուդուն» տնտեսական զարգացման գոտին: Մի քանի տասնամյակի համար նախատեսված նախագիծը բնորոշ է նրանով, որ այս գոտին ապագայում ոչ միայն դառնալու է Չինաստանի արդյունաբերական խոշոր կենտրոնը, այլև Շանհայը վերածվելու է Ասիական-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի խոշոր առևտրական և ֆինանսական կենտրոնի:

1970-ական թվականների վերջին ԱՏԳ ստեղծումը դարձավ չինական ղեկավարության կողմից արտաքին տնտեսական բաց քաղաքականություն վարելու կարևոր քայլ: ԱՏԳ զարգացման մոդելն ընտրելիս՝ չինական ղեկավարությունը ելնում էր երկրի ընթացիկ պահանջներից և ուրիշ երկրների հատուկ գոտիների փորձից: Մանրամասն ուսումնասիրվեց ԱՄՆ-ի, Սինգապուրի, Թայվանի փորձը: Տնտեսական կառուցվածքների շրջանակներում ընտրվեց արտահանման, օտա-

ներկրյա կապիտալի ներգրավման ուղին: ԱՏԳ-ն սկսեց կապող օղակ հանդիսանալ երկրի շրջանների միջև:

Չինաստանի ԱՏԳ-ի և գործելու պրակտիկան հաջողություն ունեցավ տնտեսական աճի բարձր կայուն տեմպերի, արտասահմանյան ինվեստիցիաների ներգրավման, աշխատանքի արտադրողականության և բնակչության կենսամակարդակի բարձրացման գործում:

Առանձին երկրների սոցիալ-տնտեսական զարգացումը, արտադրության ճյուղերում օտարերկրյա կապիտալի ներգրավումը բավարար հիմքեր չեն տալիս ԱՏԳ-ն դիտելու որպես տնտեսության արդիականացման բազմակողմ եղանակ: Զարգացող շատ երկրների տնտեսություններում ԱՏԳ ազդեցությունը սահմանափակ է արդյունաբերական զարգացած երկրների համեմատ: Միաժամանակ ԱՏԳ-ն, զարգացող երկրներում չլինելով սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծման պայման, զգալի դեր է խաղում դրանց տնտեսություններում:

Ռուսաստանում ԱՏԳ ստեղծման առաջին փորձն արվել է 1980-ական թթ.: 1986 թ. ստեղծվել է «Նախոդկա» ԱՏԳ-ն, որի խնդիրներից էր օտարերկրյա կապիտալի և տեխնոլոգիաների ներդրումը՝ նավթի վերամշակման համար: ԱՏԳ գործում են Վիբորգում (նոր տեխնոլոգիա, զբոսաշրջություն), Նովգորոդում (կենցաղային էլեկտրասարքեր), Սախալինի, Ամուրի, Կալինինգրադի մարզերում, Սանկտ Պետերբուրգում, Զելենոգրադում և այլուր: Զբոսաշրջության, հանգստի ազատ գոտի կազմակերպվում է Սոչիում: ԱՏԳ համաշխարհային փորձը սկսել է կիրառվել 1990-ականներին, երբ Ռուսաստանի Գերագույն Խորհուրդը որոշում է ընդունել 13 ԱՏԳ ստեղծելու մասին: Յուրաքանչյուր գոտու տնտեսահրավական կարգավիճակն ամրապնդելու համար հաստատվել է առանձին դրույթ:

1991 թ. հունիսին Ռուսաստանում ընդունվեց «Օտարերկրյա ինվեստիցիաների մասին» օրենքը, որի մի գլուխը նվիրված էր ԱՏԳ գործունեությանը: Ըստ այդ օրենքի՝ ԱՏԳ-ն պետք է ստեղծվեր օտարերկրյա կապիտալի, տեխնիկայի-տեխնոլոգիայի ներգրավման, ներուժի զարգացման նպատակով: 1995 թ. նոյեմբերին ՌԴ Պետական դուման ընդունեց ֆեդերալ օրենք Կալինինգրադի մարզում հատուկ տնտեսական գոտի ստեղծելու մասին: Արդյունքում՝ Ռուսաստանում ստեղծվեցին օֆֆշորային տիպի հատուկ գոտիներ, որոնցից առաջինը՝ «Ինգուշետիա» ԱՏԳ-ն էր: ԱՏԳ զարգացման պրակտիկան վկայում է Ռուսաստանում դրա հեռանկարների մասին: Օրինակ՝ «Նախոդկա» ԱՏԳ տարածքի վրա գրանցվել է 3.3 հազար ձեռնարկություն, որոնցից 2054-ը պատկանում է մասնավոր անձանց: 1996 թ. գոտում աշխատում էր 386 ձեռնարկություն, որից 224-ը՝ օտարերկրյա ինվեստիցիաներով: 1998 թ. ԱՏԳ արտահանման ծավալը կազմեց 42.3 մլն դոլար և 3 անգամ գերազանցեց ներմուծմանը: Գոտում գործում է բանկային 15 ինստիտուտ: (Հայաստանի ԱՏԳ վերաբերյալ տե՛ս ԳԼՈՒԽ 14-ում):

ԳԼՈՒԽ 9
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ

9.1 Միջազգային տնտեսական գործարքների էությունը

Մարդու ստեղծած նյութական բարիքներն իրացվում են ոչ միայն պետության ներսում, այլև փոխանակվում են միջպետական մակարդակով: Երկրից երկիր տեղաշարժի ընթացքում ապրանքները մի քանի անգամ փոխում են տիրոջը: Երկրների միջև փոխանակման գործարքները նպաստում են ԱՄԲ-ին, առևտրի, կապիտալի շարժին, տեխնոլոգիական գիտելիքների արդյունավետ զարգացմանը, աշխատուժի, տեղեկատվության և մյուս բնագավառների փոխադարձ կապերի ամրապնդմանը:

Միջազգային առևտրի ***արտահանման-ներմուծման*** գործարքներն առանձին երկրների, ԱՄԲ սուբյեկտների միջև ընդգրկում են ապրանքների տեղափոխումը, պահպանումը, ապահովագրումը, վճարման գործընթացը և այլն: Այս գործարքներն իրականացնում են գործունեության առանձին գործառույթներ կատարող մասնագիտացած կազմակերպությունները (արտաքին տնտեսական ասոցիացիաներ, առևտրաարդյունաբերական պալատներ, տրանսպորտի կազմակերպություններ):

Արտահանողների և ներմուծողների միջև առքն ու վաճառքը ձևակերպվում են հատուկ պայմանագրով, որը միջազգային պրակտիկայում ստացել է միջազգային առևտրի ***կոնտրակտ*** անվանումը: Միջազգային կոնտրակտը երկու և ավելի կողմերի միջև առևտրի, մատակարարման, կատարվող աշխատանքների, ծառայությունների վերաբերյալ կնքված ***պայմանագիրն*** է: Բոլոր դեպքերում պետությունների միջև երկկողմանի գործարքները ձևակերպվում են պայմանագրով, իսկ միջազգային առևտրական հարաբերությունները՝ նաև կոնտրակտով (համաձայնագիր):

Կոնտրակտն արտաքին առևտրի՝ ապրանքների, ծառայությունների գործունեության առք ու վաճառքի ձևակերպման փաստաթուղթ է: Կոնտրակտի ձևակերպումը վերաբերում է արտաքին առևտրային գործընթացի հանգուցային փուլին: Կախված գործընթացի տեսակից և կոնկրետ պայմաններից՝ արտաքին առևտրային կոնտրակտները բազմազան են: Պրակտիկայում կոնտրակտների մեծ մասը կնքվում է երկու կողմերի միջև, որոնցից մեկը հանդես է գալիս որպես վաճառող, մյուսը՝ գնորդ: Որոշ դեպքերում կոնտրակտները կարող են կնքվել երկուսից ավելի կողմերի միջև: Օրինակ՝ լիցենզային պայմանագրում կողմերի հետ, որպես երրորդ կողմ, հանդես է գալիս ինտելեկտուալ սեփականատերը՝ գյուտարարը, պատենտի հեղինակային իրավունքի տերը (իրավական կամ ֆիզիկական անձը):

Կոնտրակտի իրավական և կոմերցիոն կողմերը կապված են իրար:

Միջազգային առևտրում իրավական հարաբերությունների սահմանման, դրանց փոփոխման կամ դադարեցման, պարտավորությունների կատարման գործընթացը կոչվում է միջազգային գործարք, որը ձևակերպվում է կոնտրակտով:

Կոնտրակտ-պայմանագիրը կնքված իրավաբանական փաստաթուղթ է, որով սահմանվում են մասնակիցների գործունեությունը, պատասխանատվությունը, իրավունքները և պարտավորությունները, նշվում է գործարքը փոփոխության ենթարկելու կամ դադարեցնելու մասին: Պայմանագրի ***նպատակն*** է պահպանել պետությունների հարաբերությունները, սահմանել միմյանց նկատմամբ պարտականությունների կատարումը, երկրների միջև զարգացնել միջազգային առևտուրը: Միջպետական պայմանագրի կնքումը նպաստում է ապրանքների առաջարկի և պահանջարկի գործընթացին, ձևակերպվում են նաև ապրանքային փոխանակումները, բեռների փոխադրումները, ապահովագրումը, մաքսային գործարքները, վճարումները և այլն:

Պետական կոնտրակտների կնքման և կատարման համար կարևոր նշանակություն ունի ***Միջազգային ինվեստիցիոն համաձայնագիրը (ՄԻՀ),*** քանի որ այն իրավական հիմք է օտարերկրյա ինվեստորների և ընդունող երկրների միջև:

Պետական կոնտրակտի հարցերը առնչվում են.

- պետական կոնտրակտում ՄԻՀ-ի կողմից որոշված պաշտոնական միջոցառումների,
- պետական կոնտրակտների կնքման և կատարման ընթացքում երկրների կողմից ընդունած իրենց իրավունքների պահպանման,
- պետական կոնտրակտների նյութական, իրավական ռեժիմի կիրառման հետ:

Պետական կոնտրակտային հարաբերություններում ՄԻՀ-ի օրենք համարվում են երկրների կողմից ընդունված իրենց իրավունքի պահպանումը և կողմերի միջև պարտավորությունների ընդունումը: Պետական կոնտրակտները, որպես իրավական նորմեր, ազդում են ընդունող երկրների քաղաքականության վրա: Իրավիճակի փոփոխության հետ կապված հարցերը լուծելու համար ՄԻՀ-ի պայմաններում ներառվում են ***պարբերական վերանայման պայմանները:*** Օրինակ՝ 1999 թ. կնքված Ադրբեջան-Վրաստան-Թուրքիա (Բաքու-Թբիլիսի-Ջեյհան) նավթարտահանման խողովակաշարի կառուցման Համաձայնագրի 6-րդ հոդվածում նախատեսվում է վերանայել նախագիծը, եթե հարկ լինի:

9.2 Միջազգային առևտրային կոնտրակտ-պայմանագրերի կնքումը

Միջազգային առևտրային պայմանագրերը կնքվելուց առաջ անցնում են որոշակի նախապատրաստական փուլեր: Դրանք են.

- մատակարարների կողմից գովազդների հրապարակումը,
- աշխատանքի մեթոդների և ձևերի ընտրությունը,
- առևտրական գործարքների մշակումը,
- շուկայի իրավիճակի ուսումնասիրումը,
- պայմանագրերի կնքումը և պարտականությունների կատարումը:

Պայմանագիրը կողմերին թույլ է տալիս հաջորդաբար իրականացնել գործարքները: Միջազգային պրակտիկայում կիրառվում են մատակարարների կողմից ապրանքներ առաջարկելու տարբեր ձևեր: Արտահանողը ներմուծողին ուղարկում է կայուն առաջարկ, որտեղ նշում է ապրանքի անվանումը, քանակը, ժամկետը, գինը: Եթե կողմերի միջև առաջին անգամ չէ, որ կնքվում է պայմանագիր, ապա առաջարկի մեջ նշվում է նախորդ պայմանագիրը նույնը թողնելու կամ փոփոխելու մասին: Առաջարկելիս մատակարարը գնորդ (օֆֆերտ) ընկերությանը ծանոթացնում է վաճառքի պայմաններին: Գործարքը կարող է լինել ***կայուն*** և ***ազատ:***

Կայուն գործարքը որոշակի քանակով ապրանքի վաճառքի գրավոր առաջարկություն է: Եթե գնորդը համաձայն է օֆֆերենտի առաջարկած բոլոր պայմաններին, նրան ուղարկում է գրավոր համաձայնագիր: Հակառակ դեպքում ներկայացնում է իր պայմանները: Եթե մատակարարը համաձայնում է գնորդի առաջարկած պայմաններին, գրավոր տեղեկացնում է: Այլապես գործարք չի կատարվում:

Ազատ գործարքի դեպքում հայտարարության մեջ չի նշվում պատասխան ստանալու ժամկետը: Ազատ ձևը հիմնականում կիրառվում է տոնավաճառներում, ցուցահանդեսներում՝ ապրանքային պայմանագրերի կնքման ժամանակ: Երկու ձևում էլ առաջարկության մեջ նշվում են առաջարկվող ապրանքների անվանումները, գները, քանակը, մատակարարման ձևերը, ժամկետները, վճարման կարգը, կողմերի հասցեները:

Պայմանագրի կնքման նախապատրաստման փուլում կողմերի հիմնական խնդիրը գործարքի ձևի ընտրությունն է, որի կնքման համար հիմք են.

- գործարքի վերաբերյալ միջկառավարական առևտրական համաձայնագրերի կամ արձանագրությունների առկայությունը,
- ընկերությունների հետ առևտրական հարաբերությունների տևողությունը և գործունեության բնութագիրը (նախապատվությունը տրվում է անցյալում իրենց դրական դրսևորած ընկերություններին և մատակարարներին):

Պայմանագրերը լինում են ***երկկողմ*** և ***միակողմ***: Երկրորդի դեպքում կողմերից մեկի համար այն պարտադիր չէ: Եթե պայմանագրերը կնքվում են գրավոր, ապա փաստաթուղթը կողմերի համար ընդհա-

նուր է: Ընկերությունների, կազմակերպությունների և առանձին անձանց անունից պայմանագիր կնքողները կոչվում են ***կոնտրիգենտներ:*** Նրանք պատասխանատվություն են կրում կնքած պայմանագրի բոլոր կետերի կատարման համար: Պայմանագրերը կնքվում են կողմերից մեկի կամ երրորդ երկրի լեզվով: Կարող են կնքվել նաև փաստաթղթերի միակողմանի ստորագրումով (նամակ, հեռագիր, ֆաքս): Հիմնականում պայմանագրերը կնքվում են կողմերի ստորագրումով և կնիքով: Տնտեսական պայմանագրերը կողմերի հաստատումից հետո դառնում են պաշտոնական փաստաթուղթ, և սկսվում է մատակարարումը:

Պայմանագրերում նշվում է կողմերի իրավունքների, պարտականությունների, անհրաժեշտության դեպքում՝ առանձին կետերի փոփոխման կամ վերանայման մասին: Պայմանագրերը լինում են մատակարարման, կոնտրակտային, կապիտալ շինարարության, բեռների փոխադրումների, գույքային վարձակալության և այլն: Պայմանագրային հարաբերություններն իրականացվում են նաև տիպային ձևով: Ըստ կատարման ընթացքի պայմանագրերը լինում են ***երկարաժամկետ, միջին ժամկետի*** և ***կարճաժամկետ:***

Պայմանագրերի պահանջների կատարումից կախված է համաշխարհային տնտեսության զարգացումը: Տնտեսական պայմանագրերի կատարումն ակտիվորեն ազդում է արտադրության վրա և կարգավորում է երկրի ապրանքադրամական հարաբերությունները: Պայմանագրի բաժիններում և ենթաբաժիններում նշվում են մատակարարման պայմանները, ապրանքների դիմաց գնորդի վճարման ձևերը և կարգը, բեռների ապահովագրումը, ապրանքաուղեկցող և վճարման փաստաթղթերի ձևակերպումները:

Մեքենասարքավորումների և տեխնոլոգիաների արտահանման, շինարարական աշխատանքների, բեռների փոխադրումների, տարբեր ծառայությունների պայմանագրերի բովանդակությունն ու բաժինները տարբեր են և ընդգրկում են իրենց բնորոշ պահանջները: Օրինակ՝ մեքենասարքավորումների և տեխնոլոգիաների մատակարարման պայմանագրում պետք է նշվի կողմերի միջև նախնական համաձայնությունը տեղադրման, շահագործման, տեխնիկական սպասարկման համար մասնագետներ ուղարկելու, տեխնիկական փորձարկումների, անվտանգության մասին: Շինարարական աշխատանքների պայմանագրերում նշվում է կատարվող աշխատանքների տեսակի, որակի, օգտագործվող շինանյութերի, կոնստրուկցիաների, կատարման ժամկետների, նախահաշվային արժեքների և այլնի մասին:

9.3 Միջազգային առևտրային կոնտրակտ-պայմանագրերի բովանդակությունը

Միջազգային առևտրային պայմանագրերն ընդգրկում են տարբեր բաժիններ և դասավորված են որոշակի հաջորդականությամբ, այն է՝

- ներածական,
- պայմանագրի առարկան,
- պայմանագրի գինը և գումարը,
- ապրանքների մատակարարման ժամկետները,
- վճարման պայմանները,
- ապրանքների փաթեթավորումը և դրոշմավորումը,
- ապրանքների որակը,
- ապրանքների ընդունումը և հանձնումը,
- ապրանքների տեխնիկական պայմանների ապահովումը,
- դիմում-բողոք,
- սանկցիաներ պարտավորությունները չկատարող կողմերի համար,
- ֆորս-մաժոր,
- արբիտրաժ,
- պայմանագիրը գործելու ժամկետը,
- հատուկ և այլ պայմաններ,
- կողմերի իրավաբանական հասցեները,
- պատասխանատու կամ լիազորված անձանց ստորագրությունները:

Միջազգային առևտրային պայմանագրերի հիմքում տիպային ձևն է, որն իրենից ներկայացնում է պայմանագրերի միասնական կառուցվածք: ***Ներածական*** բաժնում նշվում են ներկայացուցիչների անունները, պայմանագրի տեսակը (վարձակալություն, մատակարարում, համատեղ ձեռնարկություններ, ծառայություններ և այլն), գրանցման համարը: Արտաքին առևտրային կոնտրակտի տեքստում սովորաբար ընդգրկվում են հետևյալ տարրերը.

- ռեկվիզիտներ՝ կոնտրակտի համարը, կնքման վայրը, ամսաթիվը,
- ներածական մաս, որտեղ նշվում են կողմերի պաշտոնական անվանումները և այլ հաստատող փաստաթղթեր, երկրի (քաղաքի) անվանումը, ինչպես նաև գործընկերոջ ծածկագիրը:

Օրինակ՝ N 910-679-e3 24.12.2010 թ. «Ավերս» բաժնետիրական ընկերությունը, հետագայում որպես գնորդ մի կողմից, և «Իվեկո ՖԻԱՏՏ», «Ա» ք. Թուրին-Իտալիա, հետագայում որպես վաճառող մյուս կողմից, կնքեցին ներկա պայմանագիրը հետևյալի մասին:

Պայմանագրի առարկան բաժնում համառոտ նշվում են գործարքի տեսակը (գնում, վաճառք, կապալով աշխատանք, վարձակալություն, ծառայության մատուցում և այլն), ապրանքների անվանումը, քանակը: Մեքենասարքավորումների, երկարատև օգտագործման և սպառման ապրանքների քանակը նշվում է հատերով, զույգերով, կոմպլեկտ-

ներով: Մեքենասարքավորումների տեխնիկական բնութագիրը, որպես պայմանագրին կից հավելված, գրվում է առանձին բաժնով:

Պայմանագրերի գները բաժնում նշվում է ստացված ապրանքների և ծառայությունների դիմաց ներմուծողի վճարումների գումարը: Կողմերի համաձայնությամբ՝ նշվում է նաև որևէ երկրի կամ երրորդ կողմի արժույթով վճարման մասին: Պայմանագրերի գները (գումար) կարող են արտահայտվել մի արժույթով, սակայն վճարման համար կարող է ընտրվել մեկ այլ արժույթ:

Տարբեր որակի և տեսակի ապրանքների մատակարարման ժամանակ յուրաքանչյուր տեսակի, կարգի, մակնիշի, միավորի համար գները սահմանվում են առանձին, իսկ մեկ պայմանագրով տարբեր որակի, քանակի ապրանքներ մատակարարելիս՝ գները ցույց են տրվում անվանացուցակում: Կոմպլեկտավորվող սարքավորումներ մատակարարելիս՝ գները նշվում են պայմանագրին կից հավելվածում՝ առանձին մասով: Եթե գները սահմանվում են քաշային միավորի հաշվով, հաշվվում են տարայով կամ առանց դրա, և նախօրոք որոշվում է տարայի ու փաթեթավորման արժեքը գնի մեջ ընդգրկելու մասին: Կիրառվում է գների 2 տեսակ՝ ***հրապարակվող*** և ***հաշվարկային***:

Ապրանքների մատակարարման ժամկետները բաժնում նշվում է, որ ապրանքը պայմանավորված վայր պետք է հասցվի սահմանված ժամկետում: Եթե մատակարարումը կատարվելու է մաս-մաս, ապա պայմանագրում պետք է նշվի յուրաքանչյուր մասի մատակարարման ժամկետը: Տրանսպորտային բեռնագրերի ամսաթիվը համարվում է նաև ապրանքների մատակարարման ամսաթիվ:

Վճարման պայմանները բաժնում նշվում են հաշվարկների կարգը, պարտավորությունների կատարման փոխադարձ երաշխավորումը: Կիրառվում են հաշվարկների հետևյալ ձևերը.

1. ***Բանկային փոխանցումներ,*** որոնց դեպքում վաճառողը հաշիվ է ներկայացնում գնորդին: Վերջինս գումարը փոխանցում է և բանկի միջոցով տեղեկացնում այդ մասին: Անկախ կողմերի գտնվելու վայրից՝ փաստաթղթերն ուղարկվում են փոստով՝ մի քանի օրից մինչև մի քանի շաբաթ տևողությամբ:

2. Հաշվարկի ***ակրեդիտիվային*** ձև, որի դեպքում սահմանված ժամկետում պայմանավորված բանկում գնորդը պայմանագրի գումարի չափով վաճառողի օգտին բացում է ակրեդիտիվային հաշիվ:

3. Հաշվարկի ***ինկասո*** ձև, որն իրականացվում է երկու կողմերի բանկերի համաձայնությամբ:

Ապրանքների փաթեթավորում և դրոշմավորում բաժնում, ելնելով ապրանքների նշանակությունից և առանձնահատկություններից, գովազդի նպատակից, արտաքին միջավայրում դրանց պահպանման ապահովումից, բարձման և տեղափոխման ժամանակ մեխանիկական վնասվածքներից զերծ պահելուց, միջազգային առևտրում կիրառվում

են փաթեթավորման տարբեր ձևեր, որոնք նախօրոք որոշվում են պայմանագրով, օրինակ՝

- արտաքին տարայով մատակարարվող ապրանքներ (արկղ, տուփ, տակառ),
- ապրանքից չառանձնացված փաթեթավորմամբ մատակարարում,
- առանց տարայի մատակարարվող ապրանքներ:

Կախված տարայի բնույթից և նշանակությունից՝ փաթեթավորման արժեքը կարող է տատանվել ապրանքի արժեքի մի քանի տոկոսից մինչև նրա կեսը: Հետևաբար, փաթեթավորման համար կողմերը սահմանում են.

- փաթեթավորման գինը՝ տոկոսով ապրանքի գնի համեմատ,
- փաթեթավորման գինը՝ ապրանքի գնի մեջ,
- փաթեթավորման գինը՝ ապրանքի գնից դուրս:

Ապրանքների հանձնում-ընդունում բաժնում նախատեսվում է ապրանքների փաստացի հանձնման-ընդունման տեղը: Սահմանվում են նաև մատակարարված ապրանքների որակի անհամապատասխանության դեպքում կողմերի իրավունքները և պարտականությունները: Միջազգային առևտրում կիրառվում է փաստացի մատակարարված ապրանքների հանձնման-ընդունման երկու մեթոդ.

- ***ընտրական***, որը կիրառվում է տարայով և փաթեթավորված մատակարարվող ապրանքների համար,
- մատակարարվող ապրանքների ամբողջական ***ստուգման*** մեթոդ՝ քանակով ընդունվող ապրանքների համար:

Ապրանքների տեխնիկական պայմանների ապահովումը բաժնում նախատեսվում է ապրանքների անվտանգ տեղափոխում՝ ազգային և միջազգային ստանդարտներին համապատասխան: Պայմանագրով այն երաշխավորում է արտահանողը: Բարդ կոնստրուկցիաներով մեքենասարքավորումների մատակարարման դեպքում տարաձայնություններից խուսափելու համար արտահանողի կողմից երաշխավորված տեխնիկական բնութագրի հետ նշվում են նաև դրանց փորձարկման տվյալները: Բեռների ֆիզիկական անվտանգության ապահովման համար արտահանողի հետ միասին պատասխանատու է նաև փոխադրող կողմը:

Դիմում-բողոք բաժնի համաձայն՝ կողմերը միմյանց դիմում-բողոք են ներկայացնում մատակարարվող ապրանքների որակի, քանակի, փաթեթավորման անհամապատասխանության, մատակարարման ու վճարման ժամկետների, այլ խախտումների դեպքում:

Տուգանային սանկցիա և կորուստների փոխհատուցում բաժնում նախատեսվում է տուգանային սանկցիա պարտականությունների խախտման և կորուստների փոխհատուցման համար: Ներմուծողն արտահանողին տուգանային սանկցիա ներկայացնում է ապրանքների

մատակարարման ժամկետների, որակի և քանակի, փաթեթավորման և այլ խախտումների, իսկ արտահանողը ներմուծողին՝ ապրանքների դիմաց վճարումների ուշացման համար: Մեղավոր կողմը պետք է վճարի սահմանված չափի տուգանք, որի գումարը չպետք է գերազանցի պայմանագրի գումարի 10-15 տոկոսը:

Պարտականությունների կատարման ընթացքում կարող են պատահել չնախատեսված և անխուսափելի երևույթներ, արտակարգ իրադարձություններ (հեղափոխություն, գործադուլ, ռազմական գործողություն, երկրաշարժ, հրդեհ), կոնտրակտների կատարման արգելակներ, որոնց ազդեցությամբ կարող է ընդհատվել կամ լրիվ դադարեցվել պարտավորությունների կատարումը: Հետևաբար, պայմանագրի ***ֆորս-մաժոր*** բաժնում կողմերին հնարավորություն է տրվում պատասխանատվություն չկրելու պարտականությունների լրիվ կամ մասնակի չկատարման համար (բացառությամբ ժամկետանց վճարումների): Հնարավորության դեպքում կարելի է պայմանագրի ժամկետը տեղափոխել և գործարքը շարունակել: Հաճախ նշվում է ժամկետի սահմանը՝ 5-6 ամիս՝ ֆորս-մաժորային (անկանխելի) վիճակը վերացնելու համար:

Վիճելի հարցերի լուծումը. արբիտրաժ բաժնում նշվում է կողմերի միջև անհամաձայնությունների առաջացման դեպքում արբիտրաժին դիմելու մասին: Եթե կողմերը բանակցությունների միջոցով վիճելի հարցը չեն կարողանում լուծել, ապա, համաձայն միջազգային ընդունված կարգի, այն ներկայացվում է մշտական կամ ոչ մշտական գործող արբիտրաժին: Պայմանագրում կան հատուկ ցուցումներ հարցերի քննարկման կարգի և տեղի վերաբերյալ: Կոնտրագենտների համար արբիտրաժի որոշումը վերջնական է:

Կապված պարզաբանումների որոշակի բնույթի հետ՝ արբիտրաժային պարզաբանումները լինում են.

- վաճառողի, գնորդի կամ պատասխանատուի երկրում,
- կոնտրակտ ստորագրող երկրում,
- երրորդ երկրում:

Միջազգային պրակտիկայում օգտվում են արբիտրաժի երկու հիմնական տեսակներից.

- մշտական գործող արբիտրաժային հիմնարկությունից,
- հատուկ արբիտրաժից՝ նախատեսված կոնկրետ գործերի քննարկման համար (Առևտրի պալատին կից Ստոկհոլմի (Շվեդիա) արբիտրաժը):

Պայմանագրի գործունեության ժամկետը բաժնում կողմերը հաստատում են պայմանագրի ուժի մեջ մտնելու փաստը, ճշտվում են նրանց իրավունքները որևէ մեկի կողմից պարտականությունները լրիվ չկատարելու դեպքում այն խզելու մասին: Այս դեպքում հրաժարվողը գրավոր տեղեկացնում է մյուս կողմին՝ նշելով պատճառները:

Հատուկ և այլ պայմաններ բաժնում նշվում են վերարտահանման ծախսերի վերաբերյալ սահմանափակումները, տուգանային բնույթի հարցերը, ինչպես նաև պայմանագրերում փոփոխություններ մտցնելու կարգի և օրինաչափությունների մասին լրացումներ: Եթե ապրանքների փոխադրումների ժամանակ մատակարարման բազիսային պայմաններում չեն նախատեսվել ապահովագրական կանոններ, ապա կարելի է այս բաժնում ներառել նման լրացուցիչ կետեր:

Պայմանագրի վերջում նշվում են ***կողմերի իրավաբանական հասցեները,*** բանկային ռեկվիզիտները, հեռախոսահամարները, ֆաքսերը և այլ տեղեկություններ, որոնցով կողմերը գործարքի ընթացքում կարող են հարաբերությունների մեջ մտնել: Վերջում դրվում են կնքվող պայմանագրի իսկությունը հաստատող պատասխանատու անձանց եզրափակիչ ռեկվիզիտները, հասցեները, ստորագրությունները և ընկերությունների կնիքները, պայմանագրի կատարումն ուժի մեջ մտնելու ամսաթիվը կամ նշված որևէ ժամկետ:

9.4 Մատակարարման բազիսային պայմանները

Ապրանքների առք ու վաճառքի պայմանագրերի կնքումը պահանջում է տարբեր պայմանների վերաբերյալ նախնական մանրամասն համաձայնություն: Ապրանքների գները որոշվում են՝ կախված կողմերի միջև պարտավորությունների բաժանումից: Ինչպիսին էլ լինի պարտականությունների բաժանումը մատակարարի և գնորդի միջև, կլինեն տարաձայնություններ, կառաջանան տնտեսական, իրավական բնույթի լրացուցիչ բարդություններ: Մատակարարման բազիսային պայմանները (ՄԲՊ) մանրամասն պետք է նշվեն առք ու վաճառքի պայմանագրում (կոնտրակտ), հակառակ դեպքում անխուսափելի կլինեն արբիտրաժներում պարզաբանումները:

Վաճառողի և գնորդի պարտականությունները, ըստ բազիսային պայմանների, հետևյալն են.

- ապրանքների բարձում, փոխադրում, բեռնաթափում,
- արտահանման և ներմուծման փաստաթղթավորում,
- արտահանման և ներմուծման մաքսատուրքերի, մաքսային հաշիվների, գանձումների վճարումներ,
- փոխադրումների ժամանակ վնասված ապրանքների կամ կորուստների դիմաց գնորդին մատակարարից փոխհատուցում,
- ստացած ապրանքների համար գնորդի կողմից ժամանակին վճարում:

Մատակարարման պայմանների հստակ որոշումը կարևոր պայման է նաև մաքսային գործարքների ճիշտ կատարման համար: Եթե կոնտրակտը կրում է ընդհանուր տիպային բնույթ, մաքսատանն առաջանում են բարդություններ:

ՄԲՊ-ով որոշվում են բեռների տեղափոխման համար կողմերի կատարած ծախսերը: Տարբեր ապրանքատեսակների տեղափոխման ծախսերը տարբեր են և հաճախ կազմում են ապրանքների գների 40-50 տոկոսը: Դրանք են.

- ապրանքները բեռնման պատրաստելու (որակի և քանակի ստուգում, նմուշների ընտրություն, փաթեթավորում),
- ներքին և արտահանման կետերում փոխադրամիջոցների բեռնման (ավտոմոբիլային, երկաթուղային, ջրային),
- միջազգային տրանսպորտով բեռների տեղափոխման արժեքի վճարման,
- ծովային փոխադրումների ընթացքում բեռների ապահովագրման վճարման,
- ապրանքների վերաբարձման և պահպանման,
- նշանակման կետում ապրանքների բեռնաթափման,
- մաքսային տուրքերի, հարկերի վճարումների ծախսերը:

Աղյուսակ 9.1

Инкотермс-2000-ում ընդգրկված տերմինները

Խմբեր	Պայմանական տերմիններ	Պայմաններ
E	EXW	Ապրանքի մատակարարում գործարանից «ֆրանկո գործարան»
F	FCA	Ապրանքի հանձնում փոխադրողին՝ «ֆրանկո փոխադրող»
	FAS FOB	Ազատ բարձում նավի վրա
C	CFR	Արժեք և ֆրախտ (փոխադրավարձ)
	CIF	Ապահովագրում և ֆրախտ
	CPT	Փոխադրումը վճարված է մինչև...
	CIP	Փոխադրումը և ապահովագրումը վճարված են մինչև...
D	DAF	Փոխադրում մինչև սահման, մաքսակետ
	DES	Փոխադրում մինչև նավ և հանձնում գնորդին
	DEQ	Փոխադրում մինչև նավամատույց
	DDU	Փոխադրում առանց տուրքերը վճարելու
	DDP	Փոխադրում տուրքերը վճարված

Բազիսային պայմանների առևտրական տերմինները մշակել է ***Միջազգային առևտրի պալատը (ՄԱՊ):*** ՄԱՊ-ը տնտեսական կազմակերպություն է (կենտրոնը՝ Փարիզ), որը, սկսած 1936 թ., հրատարակում է միջազգային առևտրի տերմինների մեկնաբանման Инкотермс ժողովածուն՝ «Առևտրական տերմինների մեկնաբանման միջազգային կանոններ» պաշտոնական անվանումով: 1953, 1967, 1976, 1980, 1990 և 2000 թթ. ժողովածուն վերահրատարակվել է փոփոխություններով և լրացումներով: Վերջին հրատարակումը հավանության է արժանացել ՄԱԿ հանձնաժողովի կողմից: Инкотермс-ի պաշտոնական նպատակը մատակարարման միջազգային կանոնների ապահովումը և կիրառումն է: Ինչպես նախորդ՝ 1990 թ. ժողովածուն, 2000 թ.-ինը ևս ունի 13 տերմիններ 4 խմբերով՝ E, F, C, D, որոնցով տեղեկացվում է ապրանքների և ծառայությունների արտահանող-ներմուծողների հիմնական իրավունքների և պարտականությունների, պայմանների մասին: Տերմինները հասկանալու համար պետք է տարբերել դրանց կրճատ բացատրությունները, որոնք գրվում են սկզբնատառերով և արտահայտում են տրանսպորտի միջոցներով բեռների փոխադրումների պայմանները:

1. E խումբն ունի միայն 1 տերմին՝ EXW (նշանակման կետը՝ ֆրանկո գործարան, պահեստ): Եթե կոնտրակտում նշված է EXW տերմինը, նշանակում է, որ վաճառողի պարտականությունն է ապրանքը գնորդին հանձնել գործարանից, պահեստից: Մասնավորապես՝ նա պատասխանատու չէ գնորդի բերած տրանսպորտը բարձելու կամ արտահանման, մաքսային ձևակերպումները կատարելու համար, եթե այդ մասին լրացուցիչ համաձայնություն չկա: Գնորդը կատարում է ապրանքը տանելու հետ կապված բոլոր ծախսերը: Ապրանքի բեռնումը ևս չի մտնում վաճառողի պարտականությունների մեջ:

2. F խումբն ընդգրկում է 3 տերմին՝ FCA, FAS, FOB.

- FCA տերմինը նշանակում է, որ վաճառողը կատարում է արտահանման բոլոր պարտականությունները, մաքսային ձևակերպումները և ապրանքը հասցնում է գնորդի նշած փոխադրողին՝ նշանակման վայրում: Այս տերմինը կարող է օգտագործվել տրանսպորտի ցանկացած տեսակի համար՝ ներառյալ խառը փոխադրումները:
- FAS տերմինը նշանակում է նավահանգիստ (նշվում է բեռնման նավահանգիստը): Կիրառվում է միայն ծովային կամ ներքին ջրային փոխադրումների ժամանակ: Սա չի ենթադրում ապրանքի բարձում նավի վրա: Եթե նավի վրա ապրանքի բարձումը համարվում է մատակարարման վերջին փուլը, ապա օգտագործվում է FOB տերմինը (ֆրանկո նավ, նշվում է նավահանգիստը):
- FOB տերմինը նշանակում է, որ մատակարարումը կատարված է, եթե ապրանքը նշանակված նավահանգստում անցել է նավի սահմանը: Այդ պահից սկսած՝ գնորդը կրում է ապրանքի պատասխանատվությունը: FAS և FOB տերմինները կիրառվում են միայն ծովային և ներքին ջրային տրանսպորտով փոխադրումների ժամանակ:

3. C խումբն ունի 4 տերմին՝ CFR, CIF, CPT, CIP, որոնք արտահայտում են ապրանքների փոխադրումների վճարումը (վաճառողի, գնորդի, մաքսակետերի միջև): Ընդ որում, CFR-ը և CIF-ը կիրառվում

են միայն ծովային և ներքին ջրային, իսկ CPT և CIP տերմինները՝ ցանկացած տրանսպորտի, այդ թվում՝ խառը փոխադրումների ժամանակ:

• CFR տերմինի օգտագործման ժամանակ վաճառողը պարտավոր է անհրաժեշտ ծախսերը կատարել մինչև նշանակված նավահանգիստ հասնելը: Եթե ապրանքն անցել է բեռնման նավահանգստի տարածք, ապա ապրանքի կորստի կամ փչացման պատասխանատվությունը վաճառողից անցնում է գնորդին: Այս տերմինն օգտագործվում է միայն ծովային և ներքին ջրային փոխադրումների ժամանակ: Եթե կողմերը համաձայն են ապրանքը տեղափոխել տրանսպորտի այլ միջոցներով կամ խառը տեղափոխմամբ, ապա կիրառում են CPT տերմինը:

• CPT տերմինը ցույց է տալիս, որ, ըստ փոխադրման կնքված պայմանագրի, վաճառողը պարտավորվում է ապրանքների փոխադրումների ծախսերը վճարել մինչև նշանակման վայր: Դրանից հետո լրացուցիչ ծախսերի պարտականությունը վաճառողից անցնում է գնորդին, քանի որ ապրանքը փոխադրողի տրամադրության տակ է:

Այսպիսով, CFR և CPT տերմինների բովանդակության տարբերությունն այն է, որ ապրանքն ուղարկվում է տարբեր տրանսպորտներով: Մյուս երկու՝ CIF և CIP տերմինները ցույց են տալիս, որ ապրանքների փոխադրումի վճարումից բացի վաճառողը պարտավոր է կնքել նաև ապահովագրության պայմանագիր:

• CIF տերմինի դեպքում վաճառողը պարտավոր է կատարել նաև ծովային ապահովագրություն (նավի և բեռի)՝ ապրանքների հնարավոր կորստի կամ փչացման դիմաց: Վաճառողը կնքում է ապահովագրության պայմանագիր և վճարում ապահովագրական վճար: Նրանից պահանջվում է կատարել նաև մաքսատան ձևակերպումները: Այս տերմինը կարելի է օգտագործել միայն ծովային և ներքին ջրային տրանսպորտի ոլորտում: Հակառակ դեպքում կիրառվում է CIP տերմինը:

• CIP տերմինը ցույց է տալիս, որ ապրանքների տեղափոխումը և ապահովագրումը վաճառողի կողմից վճարված են մինչև նշանակման վայր, և գնորդի ու փոխադրողի նկատմամբ վերջինիս պարտավորությունները համարվում են կատարված, անվտանգությունը՝ ապահովված: Վաճառողից պահանջվում է կատարել նաև մաքսային ձևակերպումներ: Վճարային հաշվեկշռի կազմման ժամանակ CIF գներից հանվում են ապահովագրումը և փոխադրումների ծախսերը, այսինքն՝ ներմուծումը հաշվարկվում է FOB գներով: Այս տերմինը կարելի է օգտագործել տրանսպորտի բոլոր տեսակների դեպքում:

4. Инкотермс տերմինների մեջ հատուկ տեղ է գրավում D խումբը, որն ընդգրկում է DAF, DES, DEQ, DDU և DDP տերմինները (տես աղ. 9.1):

• DAF տերմինը նշանակում է մատակարարում մինչև սահմանային կետ (նշվում է անվանումը): Այն ցույց է տալիս, որ վաճառողն արտահանման և մաքսային գործարքների ժամանակ կատարել է իր պարտավորությունները: Այս տերմինը կարող է կիրառվել տրանսպորտի ցանկացած ձևի փոխադրումների ժամանակ, երբ ապրանքը մատակարարվում է մինչև ցամաքային սահման:

• DES տերմինը նշանակում է, որ գնորդն ապրանքը ստանում է նշանակված նավահանգստում նավի վրա: Վաճառողն իր պարտականությունները համարում է կատարված առանց մաքսածախսերի: Այս տերմինը կիրառվում է միայն ծովային և ներքին ջրային փոխադրումների ժամանակ:

• DEQ տերմինը նշանակում է ապրանքի հանձնում գնորդին նավամատույցում: Պետք է կատարված լինեն մաքսային անհրաժեշտ ձևակերպումները, որոնց, մաքսավճարների և հարկերի համար պատասխանատու է վաճառողը: Եթե մաքսավճարը կատարում է գնորդը, փաստաթղթում նշվում է՝ «մաքսավճարը մուծված չէ»: Այս տերմինը կիրառվում է ծովային և ներքին ջրային փոխադրումների ժամանակ:

• DDU տերմինը նշանակում է, որ վաճառողը կատարել է իր պարտականությունները՝ չհաշված ներմուծման վճարման ենթակա հարկերը, մաքսավճարները և պաշտոնական այլ ծախսեր: Այս տերմինը կարելի է օգտագործել տրանսպորտի բոլոր տեսակներով փոխադրումների ժամանակ:

• DDP տերմինը նշանակում է, որ վաճառողը բոլոր տուրքերը վճարել և իր պարտականությունները կատարել է մինչև ապրանքը գնորդին փոխանցելու պահը: Այս տերմինն արտահայտում է վաճառողի առավելագույն պարտավորությունները:

Այսպիսով, Инкотермс-2000 տերմինների ժողովածուի վերլուծությունը ցույց է տալիս, որ եթե EXW տերմինն արտահայտում է վաճառողի ոչ լրիվ պարտականությունները, ապա DDP տերմինը նրա առավելագույն պարտականությունների արտահայտումն է: Инкотермс-ը գործ չունի պայմանագրերի խախտման հետևանքների, պատասխանատվության հետ:

Վաճառողի պարտականությունների մեջ մտնում են նաև.

• ապրանքները բեռնման պատրաստ լինելու դեպքում գնորդին տեղեկացնելը,

• ապրանքների ստուգման անհրաժեշտ ծախսերը վճարելը,

• իր հաշվին ապրանքների սովորական փաթեթավորումն ապահովելը (բացի առանց փաթեթավորման բեռներից),

• համաձայնության պայմաններում գնորդին ապրանքների բեռնումը վկայող փաստաթղթեր տրամադրելը:

ՄԲՊ-ով գնորդի պարտականություններն են.

• ապրանքների ոչ ժամանակին ընդունման բոլոր ծախսերի վճարումները,

• ապրանքները պայմանագրում նշված վայրում տնօրինելը մինչև մուտքագրումը:

Տեխնոլոգիական սարքավորումների մատակարարման ժամանակ սահմանվում են վճարման արտոնյալ պայմաններ: Գնորդը հիմնական պարտքի մարումը կատարում է սարքավորումների շահագործումից հետո՝ թողարկված արտադրանքի իրացման հասույթից:

9.5 Միջազգային տնտեսական գործարքների փաստաթղթերը

ՄՏՀ-ում գործարքների փաստաթղթերը բազմատեսակ են: Դրանք, կախված կատարած դերից և գործառույթներից, լինում են ***ապրանքային, հաշվապահական, ֆինանսական, տրանսպորտաառաքման, ապահովագրական, պահեստային, տեղեկատվական, մաքսային, ուղեկցող*** և այլն: Առևտրական պայմանագրերի բոլոր բաժինները, ըստ իրենց բովանդակության և նշանակության, ունեն իրենց առանձնահատուկ փաստաթղթերը, որոնք բաժանվում են 6 հիմնական խմբի:

1. ***Օպերատիվ փաստաթղթեր*** (արտահանման, ներմուծման պայմանագրեր, պատվեր-նարյադներ, անվանացուցակ և ապրանքային գործարքներին բնորոշ այլ փաստաթղթեր):

2. ***Արտաքին առևտրի տրանսպորտային փաստաթղթեր*** և ծովային տրանսպորտի գործակալության կողմից բեռներ տեղափոխողին կամ ուղեկցողին տրվող ***նավաբեռնագիր,*** որը միաժամանակ համարվում է տեղափոխման պայմանագիր: Բեռնագրում նշվում են տեղափոխողի իրավահարաբերությունների մասին, բեռնված վագոնի, կոնտեյների, տրանսպորտի մյուս տեսակների համարը, բեռի քանակը (հատ, կշիռ, զույգ, կոմպլեկտ), բեռնման ամսաթիվը: Բեռնագիրը նաև տրանսպորտի կողմից թույլտվություն է բեռը բարձելու և ստանալու համար:

3. ***Ապրանքաուղեկցող փաստաթղթեր*** (անվանացուցակներ, փաթեթավորման թերթիկներ, որակի սերտիֆիկատներ և այլն):

4. ***Հաշվարկային փաստաթղթեր*** (հաշիվ ֆակտուրաներ):

5. ***Արտաքին առևտրի ապահովագրական տիպային փաստաթղթեր*** (օբյեկտների, գույքի, անձի ապահովագրական համաձայնագրեր, բաժնետիրական, ֆինանսական, իրավունքի և այլ ապահովագրություն):

6. ***Անասնամթերքի սանիտարական վիճակի մասին*** ուղեկցող փաստաթղթեր (ժամկետայնությունը հաստատող, երաշխավորող տեղեկություններ, ակտեր, արձանագրություններ և այլն):

Պայմանագրով և կոնտրակտով արտահանվող նախատեսված փաստաթղթերն ուղարկվում են բեռների հետ, իսկ առանձին խումբ

փաստաթղթեր՝ ապրանք ստացող գնորդների հասցեով: Բեռնափոխադրողը, ապրանքը բարձելով ծեռնարկությունից (պահեստից) ավտոմոբիլով կամ տրանսպորտի այլ տեսակներով, պարտավոր է անհապաղ ներմուծողին ուղարկել փաստաթղթերը և անհրաժեշտության դեպքում սահմանակետից վերցնել վկայագիր կատարած բեռնման մասին: Եթե ապրանքն արտահանվում է գնորդի միջոցով, ապա նա պարտավոր է ժամանակին հայտնել վաճառողին բարձման անհրաժեշտ կարգի մասին, նշելով ուղարկման կետը և ապրանք ստացողի ռեկվիզիտները:

Ներմուծվող ապրանքների մաքսային ձևակերպումները կարող են կատարվել մաքսակետի մուտքում կամ նշանակետում՝ կախված տրանսպորտի ձևից: Ներմուծվող ապրանքների մաքսային ձևակերպումների ընդհանուր կանոնները համընկնում են արտահանման կանոնների հետ:

Արտադրանքների արտահանման ժամանակ փոխադրման ծախսերը և ժամանակահատվածը նույնպես ազդում են արտադրանքի գնի վրա: Եվրոպական գործընկերները հաճախ պահանջում են փաթեթավորման և բեռնախցիկի (կոնտեյներ) հատուկ ձև: Այս համաձայնությունները նշվում են պայմանագրում գնորդի և վճարողի միջև: Ապրանքների ապահովագրումն առաջարկվում է փոխադրողի (տրանսպորտի) կողմից: Օրինակ՝ Երևանից Մարսել գնացքով կամ նավով 20 տոննա բեռնախցիկ ուղարկելը կտևի 25 օր, կարժենա մոտ 2 հազար ԱՄՆ դոլար՝ ավելացրած ապահովագրումը:

Արտահանման համար ապրանքը պետք է սերտիֆիկացվի: Անհրաժեշտ է արտահանող երկրի վկայականը, որում նշվում է արտահանվող արտադրանքի արտադրող երկրի անվանումը (Հայաստան, Ռուսաստան): Որոշ արտադրանքներ պետք է ունենան եվրոպականին համապատասխան CE նշանը և ISO-9000 սերտիֆիկատ (հավաստագիր): Սննդի արտահանումը պահանջում է արտադրանքի մանրամասն բժշկա-սանիտարական բաղադրամասերի վերլուծության ապահովումը և երաշխավորման ժամկետները:

Երկրի հավաստագիրը փաստաթուղթ է, որն ունի ներմուծվող ապրանքների որակի գրավոր ցուցումներ և օգտագործվում է մաքսային նպատակներով:

CE-ն ցույց է տալիս, որ նման նշան ունեցող արտադրանքը բավարարում է ԵՄ օրենսդրության պահանջներին և ունի մրցունակ լինելու հավաստագիր: Այս նշանը դրվում է.

• մեքենասարքավորումների ցանկացած տեսակի,
• էլեկտրատեխնիկական սարքավորումների,
• բժշկական սարքերի և սարքավորումների,
• տրանսպորտային և այլ տեխնիկական սարքավորումների

վրա:

Համաձայն օրենքի՝ միայն ՀՀ առևտրա-արդյունաբերական պալատին է լիազորված հաստատել և տրամադրել հավաստագրի վկայական:

Ստանդարտացման միջազգային կազմակերպությունը (ISO) գործում է 1947 թ.-ից: 1970 թ. վերջինս դարձել է ***Միջազգային ստանդարտների որակի միություն*** ՝ ստանալով ISO-9000 անվանումը: 2000 թ. նույն սերիան ստացել է նոր վերսիա՝ փոխելով և կատարելագործելով նախորդ՝ 1994 թ. մոդելը: ISO-9000-ի պահանջները բավարար են ցանկացած ընկերության համար և ընդունվել են աշխարհի ավելի քան 80 երկրներում:

ISO ստանդարտների կիրառումը կամավոր է, և միությունը, որպես ոչ կառավարական կազմակերպություն, դրա կիրառումը պարտադրելու իրավական ուժ չունի, թեև ստանդարտների կիրառումը դարձել է շուկայի պահանջ: ISO-9000 և ISO-14000 դասիչները հաջողված ստանդարտներ են[56]:

2009-2011թթ. Հայաստանն իրավունք է ստացել արտոնյալ պայմաններով սննդամթերքի ապրանքախմբեր (միրգ, բանջարեղեն, մեղր, ձկնեղեն, ծխախոտ) արտահանել ԵՄ GSP+ համաձայնագրի շրջանակներում՝ նախատեսված նվազեցված մաքսատուրքերով:

2011 թ. վերջին ընդունվել են ISO-17000-ի՝ որակի համապատասխանության բոլոր ստանդարտները: Կառավարությունը պետք է խրախուսի մասնավոր ձեռնարկատերերին ISO-9001, ISO-14001 և այլ ստանդարտների կառավարման համակարգեր ներդնելու հարցում:

[56] ՀՀ-ն ISO անդամ է, Հայաստանը ներկայացնում է Ստանդարտների և որակի ազգային ինստիտուտը:

ԳԼՈՒԽ 10
ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

10.1 Արժութային հարաբերությունների էությունը

1. Արժույթը երկրի դրամական միավորն է (դոլար, մարկ, ռուբլի և այլն), որն օգտագործվում է ապրանքի արժեքի մեծությունը չափելու համար: Դրա տարատեսակներն են ոսկին, արծաթը, թղթադրամը:

2. Արժույթն օտարերկրյա դրամանիշ է, ինչպես նաև վարկային և վճարային միջոց (մուրհակներ, չեկեր) միջազգային հաշվարկներ կատարելու համար:

3. Արժույթը, որպես ապրանք, հանդես է գալիս որպես կապիտալի սեփականության բաժնետոմս:

Արժութային հարաբերությունները դրամավարկային հարաբերությունների ամբողջություն են: Դրանք ձևավորվում են տնտեսական հարաբերությունների միջազգայնացման, միջազգային շուկայի զարգացման հիման վրա, նպաստում երկրների միջև տնտեսական կապերի ստեղծմանը և գործում արտադրության բաշխման, փոխանակման և սպառման ոլորտներում՝ ընդգրկելով միջազգային առևտուրը, կապիտալի արտահանումը, փոխառությունները, փոխանակումները, դրամական օգնությունները և այլն: Սակայն, ունենալով տարբեր արժեքներ, արժույթները տարբեր ներգործություններ են ունենում երկրների տնտեսությունների զարգացման տեմպերի, հասարակական վերարտադրության ընթացքի վրա: Համաշխարհային տնտեսական կապերի իրագործումն անհնար է առանց կարգավորված արժութային հարաբերությունների, որոնք իրականացվում և կատարելագործվում են երկրների դրամաշրջանառության օրենքներով: ***Համաշխարհային տնտեսության մեջ միջազգային դրամական հաշիվների համակարգը կազմում է արժութային հարաբերությունների էությունը:*** Արժութային հարաբերություններն ընդգրկում են բանկերի, ընկերությունների, անհատ իրավաբանական անձանց ամենօրյա հարաբերությունները, արժութային հաշվարկները: Մինչև 19-րդ դարը համընդհանուր տարածում ուներ բիմետալիզմը (ոսկի, արծաթ), իսկ 19-րդ դարի սկզբին Մեծ Բրիտանիայում, ապա նաև մյուս երկրներում օգտագործվեց մոնոմետալիզմը (ոսկյա արժույթ): Հետագայում շրջանառության մեջ մտավ թղթադրամը: Մինչև առաջին համաշխարհային պատերազմը կապիտալիստական երկրների արտաքին առևտրում իշխել է ոսկու ստանդարտը[57] և կազմել արժութային հարաբերությունների հիմնական մասը: Եթե արտաքին առևտրում առաջանում էր բացասական մնացորդ,

[57] Ոսկու ստանդարտը դրամաշրջանառության համակարգ է, որի ժամանակ, որպես արժեքի չափ և շրջանառության միջոց, ծառայում է ոսկին, և թղթադրամն ազատ փոխանակվում է ոսկով:

այն մարվում էր ոսկով: Երկրների միջև տնտեսական գործառնությունները սպասարկվում են արժութային հարաբերություններով:

Միջազգային արժութային հարաբերություններ իրականացնում են.

1. *Առևտրային և ինվեստիցիոն բանկերը* (անդրազգային բանկեր (ԱԱԲ), առևտրաարդյունաբերական ընկերությունների բանկեր), որոնց խմբին են պատկանում աշխարհի խոշորագույն 100 բանկեր, ինչպիսին են Ситигрупп-ը, Бэнк оф Америка-ն, Сакура Банк-ը և այլն:

2. *Երկրների կենտրոնական բանկերը,* որոնք իրականացնում են ազգային արժույթի կառավարումը, հսկողությունը, կարգավորում երկրի ոսկու, արժույթի պաշարները, պետական պարտքերը:

3. *Ոչ բանկային ինստիտուտները* (ապահովագրական, կենսաթոշակային ֆոնդեր):

4. *Միջազգային արժութավարկային կազմակերպությունները*, որոնք մասնակցում են արժույթի համաշխարհային շուկայի գործընթացներին:

5. *Բրոկերային ընկերությունները*, որոնք արժութային գործարքներ են կատարում առևտրային բանկերի հետ:

6. *Մասնավոր անձինք*, որոնք փոխանցումների միջոցով իրականացնում են արժույթով գործարքներ:

Համաշխարհային տնտեսությունը չի կարող գործել առանց մասնակից երկրների միջև արժութային հարաբերությունների:

10.2 Միջազգային արժութավարկային համակարգերը և նրանց զարգացման հիմնական փուլերը

Արժութային համակարգն արժութային հարաբերությունների կազմակերպման և կարգավորման պետական իրավական ձև է: Միջազգային արժութային համակարգն ընդգրկում է բոլոր երկրների ներքին դրամավարկային շրջանառությունը և միջազգային հաշվարկների ոլորտը, որի շրջանակներում ձևավորվում և օգտագործվում են արժութային ռեսուրսները, իրականացվում միջազգային վճարային գործարքներ: Միջազգային արժութային համակարգն ապահովում է միջազգային տնտեսական հարաբերություններ մասնակից երկրների միջև:

Ընդունված է առանձնացնել արժութային համակարգի երեք ձևեր՝ *ազգային*, *տարածքային* և *համաշխարհային*:

1. *Ազգային արժութային համակարգի* միջոցով կազմակերպվում է պետության և այլ երկրների միջև հաշվարկների որոշակի կարգ այդ երկրների համար: Ազգային արժութային համակարգը ներքին դրամական համակարգի շարունակությունն է:

2. *Տարածքային արժութային համակարգն* արժութային հարաբերությունների ամբողջություն է, որը ծառայում է տարածքային ինտեգրացիոն միավորումներին: Ազգային և տարածքային արժութային համակարգերը համաշխարհային արժութային համակարգի բաղկացուցիչ մասերն են:

3. *Համաշխարհային արժութային համակարգն* արժութային հարաբերությունների կոնկրետ ձև է, միջպետական համաձայնությունների կազմակերպում: Այս համակարգի նպատակը ՄՏՀ համագործակցության զարգացումն է: Համակարգի հիմնական տարրերն են.

- պահուստային արժույթները և միջազգային դրամական միավորները,
- փոխադարձ փոխարկելի արժույթի պայմանները,
- արժութային կուրսերի կարգավորման ռեժիմները,
- միջազգային հաշվարկների ձևերի միասնականացումը,
- համաշխարհային արժութային և ոսկու շուկաների ռեժիմը:

Էվոլյուցիոն զարգացման ընթացքում համակարգն անցել է մի քանի *փուլեր.*

1. *Փարիզյան արժութային համակարգ* (1816-1914): 1864 թ. Փարիզում ձևավորվել և ամրագրվել են համաշխարհային առաջին արժութային համակարգի կանոնները, որոնց հիման վրա սահմանվել է *ոսկյամոնետային ստանդարտը*: Դրա ստեղծման հիմնական պատճառը Եվրոպայում և Հյուսիսային Ամերիկայի արդյունաբերական զարգացած երկրների միջև առևտրի զարգացումը և դրա հաշվարկների ապահովումն էր:

Ոսկյամոնետային ստանդարտի *հիմնական կանոններն* են.

- յուրաքանչյուր արժույթ ունեցել է ոսկյա ստանդարտ,
- արժույթի կուրսը որոշվում էր ոսկու պարիտետի հարաբերությամբ,
- դրամական զանգվածն ապահովվում է ոսկու պաշարներով:

Ոսկու ստանդարտի հատկանիշներն էին.

- ապրանքների գների հաշվարկը ոսկով,
- վարկային փողերի ազատ փոխանակումը ոսկե դրամով,
- ոսկու արտահանման և ներմուծման սահմանափակումների բացակայությունը:

Փարիզյան արժութային համակարգը ոսկին ընդունեց որպես համաշխարհային փողի միակ ձև: Աստիճանաբար, ոսկուն զուգահեռ, միջազգային հաշվարկներում սկսեցին օգտագործվել ԱՄՆ դոլարը, անգլիական ֆունտ ստեռլինգը, ֆրանսիական ֆրանկը: 100 տարվա ընթացքում՝ 1815-1914 թթ., ԱՄՆ դոլարն արժեզրկվեց, իսկ անգլիական ֆունտը և ֆրանսիական ֆրանկը պահպանեցին ոսկու պարունակությունն անփոփոխ:

Ոսկու ստանդարտի անկման պատճառներն էին.

1.1 Ոսկին աստիճանաբար դուրս եկավ ներքին շրջանառությունից և դրամական զանգվածը կորցրեց ոսկու ապահովումը: Արդ-

յունքում՝ 1913 թ. դրամական զանգվածն ապահովված էր միայն 13 տոկոս ոսկու պաշարներով:

1.2 Առաջին համաշխարհային պատերազմը վերջնականապես ապակայունացրեց ոսկու ստանդարտի համակարգը, կենտրոնական բանկերը դադարեցրին ոսկու ազատ շարժը երկրների միջև:

Համաշխարհային կապիտալիստական շուկայի ստեղծմամբ առաջացավ ***համաշխարհային կապիտալիստական արժութային համակարգը,*** որն ընդգրկում էր բոլոր երկրների ներքին դրամավարկային համակարգերը և նրանց փոխադարձ վարկավորման ու վճարման հարաբերությունները: 20-րդ դարի սկզբին առաջավոր կապիտալիստական երկրներում հաստատվեց ոսկու դրամական ստանդարտը, որը կատարում էր փողի բոլոր գործառույթները: Հայտնի է միջազգային երեք ստանդարտ՝ ***ոսկու, ոսկյա արժութային և նշանաբանային (դևիզային):***

Աշխարհի շատ երկրներում ***ոսկու ստանդարտը*** գործել է մինչև 1914 թ. պատերազմը, ապա փոխարինվել է դրամականով: Այն երկրներում, որտեղ ընդունված էր ոսկու ստանդարտը, դրամական միավորը հավասար էր ոսկու որոշակի քաշի:

1914 թ. հետո կիրառվեց ***ոսկյա արժութային ստանդարտը,*** որի դեպքում երկրներն արտաքին հաշվարկների համար իրենց բանկերում պահում էին ոսկուն համարժեք որոշակի քանակով օտարերկրյա արժույթ: 1928-1933 թթ., համաշխարհային տնտեսական ճգնաժամի տարիներին, դադարեցվեց բանկնոտների փոխանակումը ոսկով, արգելվեց ոսկու ազատ արտահանումը: Ոսկու շրջանառությունը փոխարինվեց արժույթով:

Նշանաբանային ստանդարտի դեպքում ոսկին չի գործում: Այն երկրները, որոնք ընդունում են նշանաբանային ստանդարտը, իրենց դրամական միավորի և արժույթի միջև սահմանում են կայուն հարաբերություն, սեփական դրամն օգտագործում են որպես միջազգային վճարամիջոց: Արժութային այս համակարգին բնորոշ են.

- ազգային արժույթի միավորը, կուրսը և պարիտետը,
- միջազգային փոխհարաբերություններում ակտիվների կազմն ու կառուցվածքը,
- արժույթի սահմանափակումների չափը,
- միջազգային հաշվարկների ձևերը:

Փարիզյան արժութային համակարգը սկզբում ձևավորվել է ազգային տնտեսությունների շրջանակներում, ապա պետությունների միջև փոխհարաբերություններում կրել է որակական փոփոխություններ:

2. ***Գենեզյան համաշխարհային արժութային համակարգը*** գործել է 1922-1944 թթ.: Հիմքում դրվել է ոսկու նշանաբանային ստանդարտը և հիմնականում ունեցել է «ոսկու ծուլածո ստանդարտ»: Պրակտիկայում միայն դրամի մի մասն էր փոխարինվում ոսկով, հետևաբար, էմիսիոն բանկը չպետք է պահպաներ դրամական զանգվածի լրիվ ծածկույթը ոսկով: Ոսկու փոխարեն օգտագործվում էր նշանաբանային օտարերկրյա արժույթ, բայց ոսկու պարիտետը պահպանվեց: Որոշ ժամանակ ԱՄՆ-ում, Մեծ Բրիտանիայում, Ֆրանսիայում նույնպես օգտագործվեց ոսկու ծուլածո ստանդարտը: Այդ արժութային համակարգը պահպանվեց ոչ երկար: 1930 թ. կեսերին համաշխարհային արժութային համակարգը ցնցումներ ապրեց համաշխարհային տնտեսական ճգնաժամի և բարձր արժեզրկման, ինչպես նաև ազգային արժույթների փոխարինումների պատճառով: Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում համաշխարհային տնտեսությունն արմատապես փոխվեց: ԱՄՆ-ը մնաց ամենահզոր տերությունը: Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան թուլացան, իսկ Գերմանիան և Ճապոնիան կործանվեցին: Նոր արժութային համակարգն իրավաբանորեն ստեղծեց ԱՄՆ-ը:

Բրետտոն-Վուդսի նոր արժութային համակարգի (1944-1976 թթ.) ստեղծումն իրավաբանորեն ձևավորվեց Բրետտոն-Վուդսի միջազգային կոնֆերանսի որոշումով, 44 երկրների մասնակցությամբ, ԱՄՆ-ում: Այստեղ քննարկվեց հետպատերազմյան աշխարհի կարգավորման հարցը, և մշակվեցին համաշխարհային արժութային ***երրորդ*** համակարգի կանոնները: Այս արժութային համակարգում պահպանվեց ոսկու նշանաբանային ստանդարտը, բայց ոսկին օգտագործվեց տարբեր ձևերով: Միաժամանակ ԱՄՆ դոլարը և անգլիական ֆունտը դարձան փոխարկելի արժույթ: Դոլարն ուներ ուղղակի ոսկու պարիտետ, որը պարունակում էր 0.899 գրամ ոսկի: Կապված երկրների անհամաչափ զարգացման հետ՝ փոխվեցին տնտեսական հարաբերությունների ձևերը, ինչի սկիզբը եղավ Բրետտոն-Վուդսի (ԱՄՆ)՝ ՄԱԿ արժութաֆինանսական կոնֆերանսի համաձայնագիրը (1944 թ.), որն ուժի մեջ մտավ 1945 թ. դեկտեմբերին 35 երկրների անդամակցությամբ: Այս համակարգը, պահպանելով ոսկու նշանաբանային ստանդարտը, առանձնանում է նրանով, որ.

- ոսկու նշանաբանային ստանդարտը նախատեսված էր միայն կենտրոնական բանկերի համար,
- ոսկու նշանաբանային ստանդարտով, որպես առաջատար արժույթ[58], միայն ԱՄՆ դոլարն էր փոխանակվում ոսկով:

Բրետտոն-Վուդսի արժութային համակարգի սկզբունքներն էին.

- կայուն արժույթի կուրսի ընդունումը,
- միջազգային արժութավարկային համակարգի ստեղծումը,

---

[58] Այժմ ԱՄՆ դոլարը գլխի դեր է խաղում, որպես միջազգային պահուստային և վճարային միջոց: ԱՄՆ դոլարով են կատարվում միջազգային հաշվարկների մոտ 2/3-ը և երկրների պաշտոնական արժութային ռեզերվների 3/4-ը: Մոտ 40 երկիր իրենց արժութային կայուն հարաբերություններն են պահպանում ԱՄՆ դոլարի հետ:

• մասնակից երկրների արժույթների կուրսի փոփոխումը թույլատրելի չափերով (±2.25 տոկոս):

Համակարգում ստեղծվեցին Միջազգային արժութային հիմնադրամը (ԱՄՀ), Վերակառուցման և զարգացման միջազգային բանկը (ՎԶՄԲ), որը պետք է վարկեր տրամադրեր անդամ երկրների տնտեսությունների վերականգնման համար:

1960-ական թվականներին ստեղծվեցին ԱՄՀ մասնաճյուղերը՝ Միջազգային ֆինանսական ընկերությունը (1956 թ.), Զարգացման միջազգային ասոցիացիան (1960 թ.), Տարածքային զարգացման միջամերիկյան բանկը (1964 թ.), Զարգացման ասիական բանկը (1966 թ.): Ըստ ԱՄՀ սահմանած կարգի՝ բոլոր երկրները պետք է պահպանեն արժույթի կայունությունը ոսկու գնի միջոցով, իսկ ոսկու գնի փոփոխությունը հիմնավորվում է միայն անհավասարակշիռ վիճակի դեպքում: Ոսկու պաշտոնական գնի պահպանման համար համակարգի 8 առաջատար երկրները ստեղծեցին золотой пул (ոսկու միավոր), ըստ որի ոսկու գինը 1 տրոյան ունցիայի[59] համար սահմանվեց 35 դոլար: 1972 թ. այն կազմեց 38, 1973-ին՝ 42.22 դոլար: ԱՄՀ-ն արժույթի կուրսը փոփոխելու իրավունք չուներ: Սակայն քանի որ արտաքին առևտրական հարաբերություններում առանձին երկրների արժույթի փոփոխությունը միայն այդ երկրի գործը չէր, և այն շոշափում էր նաև մյուս երկրների շահերը, հետևաբար կուրսի փոփոխություն երկրները կատարում էին ՄՀ համաձայնությունն ստանալուց հետո:

3. ***Յամայկայի արժութային համակարգ:*** 1960-ական թթ.-ից ԱՄՆ դիրքերը թուլացան: ՄԱԿ-ի հաշվարկների համար 1969 թ. հուլիսի 28-ին ընդունվեց փոխառումների հատուկ իրավունք (СДР), և ոսկու նշանաբանային ստանդարտը փոխարինվեց СДР ստանդարտով: 1971 թ. օգոստոսին ԱՄՆ կառավարությունը պաշտոնապես դադարեցրեց ոսկու ծուլվածքների վաճառքը դոլարով, քանի որ 1970 թ. վերջին Բրետտոն-Վուդսի համակարգը թուլացավ: 1971 թ. ԱՄՆ վճարային հաշվեկշիռը դարձավ դեֆիցիտ, իսկ Գերմանիան և Ճապոնիան ունեցան վճարային ակտիվ հաշվեկշիռ: Դոլարը արժեզրկվեց 7.9 տոկոսով, ոսկու պաշտոնական գինը հասավ 38 դոլարի: Տվյալ արժութային համակարգն արդեն չէր համապատասխանում համաշխարհային տնտեսության պահանջներին: Հերթական արժութային ճգնաժամից դուրս գալու համար ԱՀՖ-ը ստեղծեց «Կոմիտետ-20», որը 1972-1974 թթ. մշակեց նոր արժութային համակարգ: 1976 թ. Յամայկայի խորհրդակցությունում առաջարկվեց ***համաշխարհային արժութային չորրորդ համակարգի պլանը,*** իսկ 1978 թ. Յամայկայի համաձայնագիրը ընդունվեց ՄՀ անդամ երկրների կողմից:

[59] 1 տրոյան ունցիան հավասար է 31,1035 գրամ ոսկու:

Յամայկայի կոնֆերանսում կատարվեց ՄՀ կանոնադրության երկրորդ փոփոխությունը: Վերացվեց ոսկու կարգավիճակը, և մտցվեց «լողացող» արժութային կուրս: Սա նշանակում է, որ արժույթի շուկայում կուրսերի տատանումները կախված են ոսկու պահանջարկից և առաջարկից: «Լողացող» արժութային կուրսերը բարդացնում են երկարաժամկետ պայմանագրային հաշիվների իրականացումը և նպաստում միջազգային շուկայում դրանց գների բարձրացմանը: Յամայկայի համակարգը Բրետտոն-Վուդսի համակարգից տարբերվում է կանոնակարգի կարգավորման ճկունությամբ:

ՄՀ-ը, որպես կոլեկտիվ պահուստային արժույթ, Յամայկայի կոնֆերանսում նույնպես ընդունեց СДР: Սկզբում այն ընդունվեց որպես հասարակ վարկային միջոց, սակայն ԱՄՀ-ը խնդիր դրեց СДР-ն վերածելու «միջազգային արժութային համակարգի գլխավոր ակտիվի», որպես վճարային հաշվեկշռի մնացորդ, ՄՀ-ի հետ պաշտոնական հաշվարկների և պահուստների լրացման միջոց, ազգային արժույթների արժեքի պահպանման կարգավորող: СДР արժույթի միավորի կուրսը որոշվում է «արժութային զամբյուղով», որը 1981 թ. ընդգրկում էր համաշխարհային հինգ հիմնական արժույթ:

Գծագիր 1

СДР «արժութային զամբյուղի» կառուցվածքը



«Արժութային զամբյուղի» հիման վրա ոսկու ստանդարտից տեղի ունեցավ անցում մուլտարժութային շուկայական ստանդարտի, պաշտոնապես ներդրվեց СДР ստանդարտը՝ 1 СДР=1.38 դոլար: Կոնֆերանսում որոշվեց.

• վերացնել ոսկու պաշտոնական գինը (ոսկին հանվեց ԱՄՀ անդամ երկրների միջև եղած հաշիվներից),

• աճուրդի միջոցով շուկայական գներով կատարել ոսկու պաշարների 1/6 մասի վաճառք, զարգացող երկրների համար եկամուտներից ձևավորել հատուկ ֆոնդ,

• ՄԱՀ ոսկու պաշարների 1/6 մասը հանձնել անդամ երկրներին՝ նախապես հաստատված գներով:

Որոշվեց նաև, որ միջազգային հաշվարկների բանկը կարող է ոսկու աճուրդին մասնակցել որպես գնորդ, և յուրաքանչյուր երկիր իրավունք ստացավ ազատ տնօրինելու իր արժութային պահուստները:

Միջազգային համագործակցությունը չի կարող վերացնել երկրների միջև եղած հակասությունները: Դրանք սրվում են ԱՄՆ-ի և «ընդհանուր շուկայի» երկրների, ԱՄՆ-ի և Ճապոնիայի միջև:

Արժութային համակարգերի ներսում ստեղծվեցին արժութային նոր խմբավորումներ: Այսպես կազմակերպվեց ***Միջազգային արժութային համաձայնությունը***, որում սահմանվեցին պայմանավորված երկրների արտաքին հաշվարկների կարգը, դրամի պարիտետը և կուրսը, վճարային հաշվեկշռի մնացորդի մարման կարգը և այլն:

Արժութային բազմակողմ համաձայնությունները բաժանվում են ***տարածքային համաձայնությունների***՝ ընդգրկելով որևէ տարածաշրջանի երկրները: Օրինակ՝ 1933 թ. կազմակերպված Բելգիայի, Հոլանդիայի, Ֆրանսիայի և Շվեյցարիայի «Ոսկե դաշինքի մասին համաձայնությունը», եռյակի (Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, ԱՄՆ) արժութային համաձայնությունը (1936 թ.), եվրոպական 17 երկրների վճարային միություն ստեղծելու համաձայնությունը (1950 թ.): ԳՖՀ-ի և Ֆրանսիայի կառավարությունների նախաձեռնությամբ 1979 թ. մարտի 13-ին ընդունվեց Եվրոպական արժութային համակարգը (ԵԱՀ), որը հանդես եկավ որպես Յամայկայի ՀԱՀ ենթահամակարգ: Սրա նպատակն ինտեգրացիոն գործընթացների խթանումը և ազգային արժույթների կուրսերի կայունացումն էր, ինչը ԵԱՀ-ը կվերածեր կայուն արժույթի գոտու, կհիմնվեր սեփական արժութային միջոցների ավելացման վրա և համակարգի երկրների միջազգային հաշվարկներում կսահմանափակեր ԱՄՆ դոլարի քանակը:

1992 թ. փետրվարին ստորագրվեց և 1993 թ. նոյեմբերի 1-ին ուժի մեջ մտավ Մաաստրիխտյան (Նիդեռլանդներ) պայմանագիրը, որի համաձայն ԵՄ անդամ երկրների կառավարությունները պայմանավորվեցին արժութային միություն ստեղծելու մասին: Միությունը որոշեց.

• մտցնել եվրոպական միասնական արժույթ,

• ուժեղացնել միասնական տնտեսական և բյուջետային քաղաքականությունը,

• պահպանել միասնական շուկան՝ ազատ մրցակցության սկզբունքների հիման վրա:

Այդ պատճառով անհրաժեշտ էր ստեղծել եվրոպական կոլեկտիվ արժույթ՝ ***էքյուն,*** որպես եվրոպական հատուկ հաշվարկների միավոր: Այն հիմնված էր ԵՄ 12 երկրների արժույթների վրա, որոնց առաջատարը գերմանական մարկն է:

Գծագիր 2

էքյուի արժութային կառուցվածքը, տոկոս



էքյուի մի մասն ապահովված է ոսկու և դոլարի պաշարներով, մյուսը՝ անդամ երկրների ազգային արժույթներով: Ոսկին օգտագործվում է որպես էքյուի մասնավոր ապահովագրում՝ ընդգրկելով անդամ երկրների ոսկյադոլարային պաշտոնական պահուստների 20 տոկոսը:

1994 թ. հունվարի 1-ից էքյուն փոխարինվեց «Եվրո» դրամով: Այս պայմաններում ոսկին օգտագործվում է որպես իրական պահուստային ակտիվ: Սահմանվում է արժութային կուրսի ռեժիմ «լողացող» արժույթի հետ միասին՝ կենտրոնական կուրսից ±1-10 տոկոս փոխադարձ տատանմամբ:

Եվրո արժույթով առաջին գործարքը կատարվել է 1999 թ. հունվարի 4-ին՝ եվրոպական կենտրոնական Մայնի Ֆրանկֆուրտի բանկի կողմից: Եվրոն պայմաններ է ստեղծում ԵՄ միասնական շուկայի, ապրանքների, ծառայությունների, կապիտալի և աշխատուժի համար, կարգավորում տնտեսական սուբյեկտների դրամավարկային, արժութային միասնությունն ամբողջ ԵՄ տարածքում: Սկզբում եվրոն կիրառվեց ոչ կանխիկ հաշվարկների գործարքներում, իսկ 2002 թվականից՝ բանկնոտների և միասնական նմուշի մոնետների օգտագործմամբ՝ 5, 10, 20, 50, 100 և 200 միավոր արժողությամբ: Այսպիսով, տնտեսական և արժութային միության ձևավորումը կատարվեց 3 փուլով: Առաջին փուլը սկսվեց 1990 թ. հուլիսի 1-ին և ավարտվեց 1996 թ. հունվարի 1-ին: Երկրորդ փուլը շարունակվեց մինչև 1998 թ. հունվարի 31-ը: Ստեղծվեց կենտրոնական բանկերի միասնական համակարգ, կազմակերպվեց եվրոպական արժութային ինստիտուտ: Երրորդ փուլը սկսվեց 1999 թ. հունվարի 1-ին և ավարտվեց 2002 թ. հուլիսին: ԵՄ շրջանակներում միասնական արժութային քաղաքականությանն անցնելն անհրաժեշտ էր, քանի որ.

• հնարավորություն է ստեղծվում ունենալու դոլարի կուրսին համապատասխան արժույթ, որը երկրների միջև կապահովի տնտեսական հավասարակշռվածություն,

• ԵՄ ամբողջ տարածքում տնտեսական սուբյեկտների համար եվրոն կկարգավորի դրամավարկային հարաբերությունները, կկառավարի երկրների սեփական ֆինանսները, կամրապնդի եվրոպական ընկերությունների մուտքը համաշխարհային շուկա,

• ԵՄ երկրները եվրո արժույթից սպասում են աշխատանքի շուկայի իրավիճակի բարելավում, եկամուտների աճ և ծախսերի հարաբերական կրճատում:

2002 թ. հունվարի 1-ից եվրոարժույթն օգտագործում են Ավստրիան, Բելգիան, Գերմանիան, Իսպանիան, Իռլանդիան, Իտալիան, Լյուքսեմբուրգը, Հոլանդիան, Պորտուգալիան, Ֆինլանդիան, Ֆրանսիան, Հունաստանը:

ԵՄ միասնական շուկան պետք է հենվի նաև ազգային դրամական համակարգերի վրա, քանի որ պահպանվում են վարկերի հաշվարկների, արժույթների կուրսերի տարբերությունները և, դրանց հետ կապված, գների, հարկերի, դրամական քաղաքականությունն ու այլ տարբերություններ:

Սոցիալիստական երկրներում ձևավորվել էր ***Համաշխարհային սոցիալիստական արժութային համակարգ (ՀՍԱՀ),*** որը դրամավարկային հարաբերությունների համակարգ էր սոցիալիստական երկրների միջև: Նյութական միջոցները և ծառայությունները փոխանակվում էին միջազգային արժեքով՝ համարժեքության սկզբունքով: 1962 թ. ստեղծվեց ՏՓԽ անդամ երկրների արժութաֆինանսական հարցերի մշտական հանձնաժողով, որի խնդիրն էր անդամ երկրների միջև արժութային հարաբերությունների կարգավորումը, բանկային կազմակերպությունների միջև համագործակցության խորացումը: ՀՍԱՀ ղեկավար օրգաններ էին ***Տնտեսական համագործակցության միջազգային բանկը (ՏՀՄԲ)*** և ***Միջազգային ինվեստիցիոն բանկը (ՄԻԲ):*** ՀՍԱՀ-ն արժույթի գոտի չէր համարվում:

Ազգային արժույթի համակարգի (ԱԱՀ) միջոցով իրականացվում են միջազգային վճարումներ: ԱԱՀ-ը որոշվում է ազգային օրենսդրությամբ: Ազգային արժույթի համակարգը համարվում է երկրների դրամական համակարգի մի մասը և ունի ինքնուրույն գործելու իրավունք: Յուրաքանչյուր երկրի դրամական միավոր վճարամիջոց է, որը ՄՏՀ-ում դառնում է արժույթ: Նրան բնորոշ են.

• ազգային արժույթի միավորը և կուրսի ձևավորման մեխանիզմը,

• արժույթի պահուստների պաշտոնական կազմը,

• արժույթի սահմանափակումները կամ դրանց բացակայությունը,

• արտաքին վճարումների կարգը և փոխադարձելիության պայմանները,

• ազգային արժույթի և ոսկու շուկայական արժեքը:

Ազգային արժույթի առանձնահատկությունները որոշվում են երկրի տնտեսության զարգացման աստիճանով և արտաքին տնտեսական հարաբերությունների մակարդակով: Համաձայն ԱՀՖ կանոնադրության՝ պետք է հսկողություն սահմանել ամբողջ համակարգի վրա.

• ՄԱՖ Դիրեկտորատի միջոցով,

• տարածքային հսկողություն ԵՄ, ԵԿԲ, Արևմտյան և Կենտրոնական Աֆրիկայի, Կարիբյան արժութային միությունների միջոցով:

Այսպիսով, ***միջազգային արժութային համակարգերը միջազգային հաշիվների հաշվարկման միջոցներ են՝*** կոչված սահմանելու արժույթի կուրսի ռեժիմը, փոխառելիության պայմանները: Դրանք դրամական համակարգի պետական կարգավորման ձևեր են, որոնք արտահայտվում են արժույթի տեսակներով՝ ոսկով, արծաթով, թղթադրամով:

10.3 Արժութային գործարքներ

Միջազգային արժութային գործարքներ են միջազգային վճարումները, արժութային կանխիկ փոխանակումները համապատասխան կուրսով: Արժութային գործարքները հիմնականում իրականացվում են վճարային փաստաթղթերով՝ բանկերի կողմից՝ կատարելով միջազգային վճարումներ, արժույթների առք ու վաճառք արտասահմանի բանկերում: Արժույթի առևտուր կատարում են նաև դրամարկղերը: Գործարքները կատարվում են փաստաթղթերով, որոնցով ապահովվում է գործարքի հուսալիությունը:

Արժույթները լինում են ***փոխարկելի*** (կոնվերսիայի ենթարկվող), ***սահմանափակ փոխարկելի***[60] և ***չփոխարկվող (ներփակ):***

Փոխարկելի են այն երկրների արժույթները, որոնք լրիվ փոխանակվում են օտարերկրյա բոլոր արժույթներով (դոլար, մարկ և այլն): Փոխարկելի արժույթները համարվում են ***ընդհանուր փոխարկելի,*** երբ ցանկացած տնտեսական սուբյեկտ կարող է ձեռք բերել ոսկի կամ օտարերկրյա արժույթ հաստատագրված կուրսով:

Սահմանափակ փոխարկելի են այն երկրների արժույթները, որոնք ոչ բոլոր գործարքների համար են (Ավստրիա, Բելգիա, Դանիա, Իտալիա, Նորվեգիա, Նիդեռլանդներ, Շվեդիա, Ֆրանսիա): Այդ երկրներն արժույթի սահմանափակումներ մտցրել են 1958 թ.: Արժութային սահմանափակումները որոշվում են ազգային օրենսդրությամբ և վարչական մեթոդներով:

---

[60] Արժութային սահմանափակումը երկրների կառավարությունների միջոցառում է, որով հսկողություն է սահմանվում օտարերկրյա արժույթով գործարքների և արժութային ռեզերվների վրա:

Չփոխարկվող են այն երկրների արժույթները, որոնք փոխարկելի չեն օտար երկրների իրավաբանական անձանց համար:

Արժույթի միջազգային փոխանակումներն իրականացվում են ***միջազգային ստանդարտներով, առանց միջազգային ստանդարտների և որոշակի սահմանափակ պայմաններով:***

Արտաքին փոխարկելի արժույթը ոչ լիազոր ներկայացուցիչներին (օտարերկրյա ձեռնարկություններ, քաղաքացիներ) հնարավորություն է տալիս ազգային արժույթը գործող կուրսով փոխանակելու օտարերկրյա արժույթով:

Ներքին փոխարկելի համարվում է երկրի ազգային արժույթը միայն ներքին շրջանառության համար:

Պետությունների միջև որքան մեծ են արժույթի սահմանափակումները, այնքան դժվար է կարգավորել վճարային հաշվեկշիռը, քանի որ մի երկրի հաշվեկշռի պասիվ մնացորդը չի կարող ծածկվել մյուս երկրների հետ հաշվարկների ակտիվ մնացորդով:

10.4 Արժույթի և արժեթղթերի համաշխարհային շուկա, ֆոնդային բորսաներ

Համաշխարհային տնտեսությունը չի կարող զարգանալ առանց ֆինանսական շուկայի, որը գործում է ԱՄՀ-ի և տարբեր միջազգային բանկերի, ընկերությունների, կազմակերպությունների միջոցով: Ֆինանսական շուկայի բաղկացուցիչ մասն արժութային շուկան է: ***Այն իրենից ներկայացնում է պաշտոնական ֆինանսական ոլորտ, որտեղ առաջարկի և պահանջարկի հիման վրա իրականացվում են արժույթի և արժեթղթերի առքն ու վաճառքը:*** Քանի որ յուրաքանչյուր երկիր օտարերկրյա ապրանքների և ծառայությունների դիմաց վճարելու համար արտաքին հաշվարկներում հաճախ օգտագործում է ոչ իր ազգային արժույթը, ապա երբեմն արժույթները փոխանակելու անհրաժեշտություն է առաջանում, ինչը (վաճառք, գնում) կատարվում է ***արտաքին շուկայում:***

Միջազգային արժութային շուկաներն առևտրային բանկեր են, որոնք արժույթների առքն ու վաճառքն իրականացնում են օտարերկրյա արժույթով, սպասարկում են դրամական և ֆինանսական հոսքերի շարժը, միջնորդում միջազգային ապրանքների, ծառայությունների վերաբաշխմանը: Արժույթի շուկաները ներկայացնում են տնտեսական հարաբերությունների ոլորտ, որն առաջանում է օտարերկրյա արժույթների, վարկային դեպոզիտների գործարքներից, օտարերկրյա ինվեստիցիոն կապիտալի շարժերից:

1990-2000-ական թթ. նշանավորվել են արժութային գործընթացների արագ աճով: Վերջին 10 տարիների համաշխարհային արժութային շուկաների օրական շրջանառությունն աճել է 1.2 անգամ: Եվրոպայում խոշոր տարածաշրջանային արժութային շուկաներ են Մայնի-

Ֆրանկֆուրտի, Ցյուրիխի, Փարիզի, Բրյուսելի, Ասիայում՝ Սինգապուրի, Հոնկոնգի շուկաները:

Արժույթի շուկաներում արժույթ ձեռք է բերվում.

- առևտրային և ոչ առևտրային ոլորտներից,
- կենտրոնական բանկերի գործառնությունների միջոցով ազգային և միջազգային արժութային քաղաքականություն իրականացնելիս,
- արժութային այլ գործարքներից:

Ֆունկցիոնալ տեսանկյունից արժութային շուկաներն ապահովում են օգուտների ստացում միջազգային հաշվարկներից և արժույթի կուրսերի տարբերությունից:

Ինստիտուցիոնալ տեսանկյունից արժութային շուկաները բանկերի, արժութային բորսաների և այլ ֆինանսական ինստիտուտների ամբողջություն են:

Կազմակերպական-տեխնիկական տեսանկյունից արժութային շուկաները հեռագրական, հեռախոսային, երկրների տարբեր բանկերը միմյանց կապող, միջազգային հաշվարկներ, վարկային և այլ արժութային գործարքներ իրականացնող էլեկտրոնային և հաղորդակցական միջոցների ամբողջություն են:

Միջազգային ֆինանսական շուկաները սերտաճում են նախ տարածաշրջանային, ապա համաշխարհային մակարդակով: Ազգային շուկաների հիմքի վրա առաջանում են միջազգային համակարգեր՝ եվրոպական, լատինամերիկյան, հարավասիական տարածաշրջանային ֆինանսական շուկաներ: Դրանց միջազգայնացումը բնութագրվում է օտարերկրյա ֆինանսական ծառայություններով: Ըստ Եվրոբանկի՝ ֆինանսական շուկան կհամարվի լիովին ինտեգրված, եթե նրա բոլոր մասնակիցները.

- գործարք կատարելիս առաջնորդվեն միևնույն օրենքներով և կանոններով,
- ունենան շուկա մուտք գործելու հավասար պայմաններ,
- գտնվեն կարգավորման միևնույն դաշտում:

Ֆինանսական և արժեթղթերի շուկայի ինտեգրացումն ու զարգացումը երկրի տնտեսական աճի ապահովման անհրաժեշտ նախապայմանն են: Ներկայում արժեթղթերի զարգացած շուկա ունեցող երկրներում ինստիտուցիոնալ ներդրումներ են.

- դեպոզիտային (ավանդային) միջոցները,
- խնայողական միջոցները,
- ներդրումային միջոցները (հիմնադրամներ):

Այժմ Հայաստանում ինստիտուցիոնալ ներդրողներ համարվում են բանկը, ապահովագրական և ներդրումային ընկերությունները, նաև այն անձինք, որոնք ՀՀ արժեթղթերի հանձնաժողովի որոշմամբ կհամարվեն ներդրողներ:

2008 թ. ԵՄ արժեթղթերի շուկաների շրջանառվող բաժնետոմսերի շուկայական շարժը կազմել է 1.79 տրլն եվրո: Հայաստանի ֆինանսական համակարգն ընդհանրապես և արժեթղթերի շուկան մասնավորապես դեռևս չեն համարվում ֆինանսական լիարժեք ու արդյունավետ մեխանիզմ, որին բնորոշ են փոքր ծավալները, ծառայությունների սահմանափակումները: Արժեթղթերի շուկայի թերզարգացումը հետևանք է այն բանի, որ շուկայում բացակայում են ինստիտուցիոնալ ներդրողները և ներդրումային հիմնադրամները, իսկ բանկերն ավանդների մոտ 60 տոկոսը տրամադրում են վարկերի տեսքով: Արժեթղթերից հիմնականը պետական պարտատոմսերն են, որոնց 70 տոկոսն իրացնում են բանկերը: Օրինակ՝ 2008 թ. արժեթղթերի շուկայի կողմից կատարվել է ընդամենը 33.6 մլն դրամի գործարք: Բաժնետոմսերի շուկայի կապիտալացումը դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 8641 մլն դրամ (17.8 մլն դոլար)[61]:

Բաժնետոմսերի շուկայի արդյունավետության չափանիշներից մեկն արժեթղթերի շուկայական արժեքն է: Պետք է կայացնել այնպիսի որոշումներ, որոնք շուկայական պայմաններում կապահովեն ինչպես նոր թողարկվող, այնպես էլ արդեն շրջանառության մեջ գտնվող արժեթղթերի շուկայական արժեքը:

Արժեթղթերի շուկայական արժեքը կախված է մի շարք գործոններից.

- երկրի ընդհանուր տնտեսական իրավիճակից,
- տվյալ ընկերության բիզնեսի դիրքից,
- տարբեր չափանիշներով արժեթղթեր թողարկելու շահագրգռվածությունից:

Արժութային շուկաները լինում են ***միջազգային, տարածաշրջանային*** և ***ազգային (ներքին): Միջազգային շուկաներն*** ընդգրկում են աշխարհի բոլոր երկրների արժութային շուկաները: Օրինակ՝ ասիական (Տոկիո, Հոնկոնգ, Սինգապուր, Մելբուռն), եվրոպական (Լոնդոն, Մայնի Ֆրանկֆուրտ, Ցյուրիխ, Փարիզ), ամերիկյան (Նյու Յորք, Չիկագո, Լոս Անջելես) շուկաները, որոնց միջև գոյություն ունի միջոցների հոսք՝ կախված առանձին պետությունների արժույթների կուրսից: Բացի կենտրոնական բանկերից, դրանց վրա ազդում են տարբեր առևտրական բանկեր և միջնորդներ: Առևտրական բանկերը կարող են հանդես գալ նաև միջնորդի դերում՝ կատարելով օտարերկրյա արժույթի գնման և վաճառքի պատվերներ: Արժութային շուկաներում հաշվարկներն իրականացվում են ***կանխիկ*** և ***ոչ կանխիկ*** ձևերով: Առաջինի դեպքում օգտագործվում են արժույթ կամ չեկեր: Ոչ կանխիկ վճարումներն իրականացվում են առևտրական բանկերի փոխանցումներ

[61] ՀՀ արժեթղթերի հանձնաժողովի 2004 թ. գործունեության տարեկան հաշվետվություն, էջ 55:

ների միջոցով, ինչպես նաև մուրհակների օգնությամբ, որոնց դիմաց կարելի է վճարել անմիջապես կամ հետո:

Ազգային (ներքին) շուկաները նույնպես ֆինանսական կենտրոններ են, որտեղ սահմանված կուրսով ազգային արժույթով կատարվում են օտարերկրյա արժույթների առք ու վաճառք բանկերի, կորպորացիաների, անձանց միջև: Ըստ գործունեության ռեժիմի՝ արժույթի շուկաները լինում են ***ազատ***, որտեղ ընթացիկ գործարքներում չկան արժույթի սահմանափակումներ, և ***ոչ ազատ***, որտեղ սահմանափակումներ կիրառվում են: Վերջինիս դեպքում արժույթի գործարքները կատարվում են միայն լիազորված կազմակերպությունների կողմից: Որոշ երկրներում գործում են և՛ պաշտոնական, և՛ ոչ պաշտոնական շուկաներ: Վերջինիս արժույթի կուրսը որոշ չափով շեղվում է պաշտոնականի կուրսից: Պաշտոնական շուկաների բացակայության դեպքում հաճախ կազմակերպվում են անօրինական՝ «սև շուկաներ», որոնց գործարքներն օրենքով արգելվում են:

ԵՄ երկրներում գործում է եվրոարժույթի շուկա: ***Եվրոարժույթի շուկան միջազգային դրամական շուկա է, որով իրականացվում են եվրոփոխառությունների առք ու վաճառքի գործարքներ, եվրոարժույթով տրամադրվում են վարկեր:*** Եվրոարժույթն ազատ դրամական միջոց է, որը պահվում է եվրոպական բանկերում և օգտագործվում վարկային գործարքներ կատարելիս: Այն ամերիկյան ֆինանսական կազմակերպությունների կողմից չի վերահսկվում: ԱՄՆ արժույթը, ամերիկյան բանկերից փոխանցվելով եվրոպական կամ Եվրոպայում ամերիկյան բանկեր, վերածվում է եվրոարժույթի ավանդների: Մյուս բանկերը կարող են նրանցից վարկ ստանալ և այդ միջոցները տրամադրել ավելի հարմար տոկոսադրույքներով: Եվրոարժույթի շուկան ստեղծվել է 1958 թ. և ընդգրկում է ավելի քան 500 խոշոր ու միջին առևտրական միջնորդ բանկեր: Միջազգային ֆինանսական կենտրոններում շուկաները բաժանված են եվրոդրամական, եվրովարկերի, եվրոարժույթի և արժեթղթերի շուկաների: 60-ական թվականներին եվրոշուկայի գործարքներում ավելացան եվրոմարկը, եվրոստեռլինգը, եվրոֆրանկը:

Ասիական արժույթի շուկան գործում է Հարավարևմտյան Ասիայում և համարվում է եվրոշուկայի մի մասը: Կազմավորվել է 60-ական թվականներին: Հիմնական կենտրոններն են Սինգապուրը և Հոնկոնգը, թեև ասիական արժույթով գործարքներ կատարվում են նաև Մանիլայում: Ասիական արժույթով գործող բանկերը գործառնությունների 90 տոկոսը կատարում են ԱՄՆ դոլարով, եվրոարժույթով, գերմանական մարկով, շվեյցարական ֆրանկով: 2008 թ. նման բանկերը 190 էին:

Տարածաշրջանային կարևոր շուկաներ են նաև ***եվրոավանդների, եվրոբանկերի*** և ***եվրոարժեթղթերի շուկաները***:

Ֆոնդային բորսաները որոշակի տեղում կազմակերպիչների կողմից հաստատված կանոններով արժեթղթերի գնման և վաճառքի մշ-

տական գործող հաստատություններ են, որոնք կատարում են ֆոնդային ապրանքների հրապարակային սակարկումներ: Դրանք առաջացել են կապիտալի նախասկզբնական կուտակման ժամանակաշրջանում: Առաջին ֆոնդային բորսան ստեղծվել է Նյու Յորքում 1782 թ. «Ուոլ Սթրիթ» անվանումով, որը դարձել է ԱՄՆ ֆինանսական գործընթացի խորհրդանիշ և խոշորագույնն է աշխարհում: 19-րդ դարի երկրորդ կեսին, բաժնետիրական ընկերությունների ստեղծման հետ, դրանց դերը կտրուկ բարձրացել է: Ներկայում արժեթղթերի առևտրի հիմնական կենտրոններ են Նյու Յորքը, Լոնդոնը, Մայնի Ֆրանկֆուրտը, Ցյուրիխը, Փարիզը, Միլանը, Տոկիոն: Ֆոնդային բորսաները ղեկավարում են բորսային կոմիտեները, իսկ անդամները հիմնականում միջնորդ ընկերություններն են և անհատ միջնորդները: Ցանկացած երկրում գործում են միասնական կենտրոնով և տարածքային բաժանումով ֆոնդային բորսաներ, որոնք ունեն ազգային առանձնահատկություններ՝ կախված փոխատվական կապիտալի ազգային շուկայի դերից, դրամական կուտակումների չափերից:

ԱՄՆ-ում գործում է ֆոնդային 13 բորսա, որոնք տեղաբաշխված են Նյու Յորքում, Չիկագոյում, Բոստոնում, Սան Ֆրանցիսկոյում, Լոս Անջելեսում, Նոր Օռլեանում, Դետրոիտում, Դալասում, Ֆիլադելֆիայում և այլուր: Գլխավորը Նյու Յորքի ֆոնդային բորսան է, որը կատարում է արժեթղթերի գործարքների 70 տոկոսը: Ունի 1366 անդամ, որից 1226-ը ներկայացնում են 523 մասնավոր ընկերություններ: Ֆոնդային բորսաների կարգավորման համար ընդունվել են օրենսդրական ակտեր՝ ուղղված սպեկուլյատիվ գործարքների սահմանափակումներին:

Անգլիայում գործում է ֆոնդային 12 բորսա: Առաջատարը Լոնդոնի բորսան է, որը կենտրոնացնում է երկրի ամբողջ արժեթղթերի ներքին գործարքների ավելի քան 60 տոկոսը: Սակայն գործարքների ավելի քան 50 տոկոսը բաժին է ընկնում արտասահմանյան արժեթղթերին, քանի որ Լոնդոնը համաշխարհային ֆինանսական կենտրոններից մեկն է: Մյուս բորսաները տեղաբաշխված են Գլազգոյում, Լիվերփուլում, Մանչեստրում, Բիրմինգհեմում և այլուր:

Ֆրանսիայում գործում է ֆոնդային 8 բորսա՝ Փարիզում, Բորդոյում, Լիլլում, Լիոնում, Մարսելում, Նանտում, Նանսում, Թուլուզում: Առաջատարը Փարիզի ֆոնդային բորսան է, որին բաժին է ընկնում ամբողջ արժեթղթերի գործարքների մոտ 98 տոկոսը: Մյուս բորսաներում շրջանառում են մասնավոր ընկերությունների բաժնետոմսերը և պետական փոխառության պարտատոմսերը: 1962 թ. իրականացվել է ֆոնդային բորսաների ռեֆորմ, որի համաձայն երկրի բոլոր բորսաների համար սահմանվել են արժեթղթերի միասնական գնացուցակ (կոտիրովկա), օտարերկրյա արժույթների և արժեթղթերի կուրսեր: Արդյունքում բարձրացել է Փարիզի բորսայի դերը, արժեթղթերի վրա՝ ուժեղացել պետական վերահսկողությունը:

Գերմանիայում գործում է ֆոնդային 8 բորսա՝ Մայնի Ֆրանկֆուրտում, Դյուսելդորֆում, Համբուրգում, Մյունխենում, Շտուրգարդում, Բրեմենում, Հանովերում, Բոննում: Առաջատար դերը պատկանում է Մայնի Ֆրանկֆուրտի բորսային, որը երկրի հիմնական ֆինանսական, առևտրաարդյունաբերական ընկերությունների և վարկաֆինանսական հիմնարկների ղեկավար կենտրոնն է:

Ճապոնիայի ֆոնդային բորսաների համակարգը բաղկացած է 9 կենտրոններից, որոնք գտնվում են Տոկիոյում, Օսակայում, Նագոյում, Նիիգատում, Կիոտոյում, Կոբեում, Հիրոսիմայում, Սապպորոյում, Ֆուկիեյում: Գլխավորը Տոկիոյի բորսան է, որն իր շրջանառությամբ երրորդն է Նյու Յորքից և Լոնդոնից հետո: Տոկիոյի բորսան հզորացավ 60-ական թվականներին, երբ Ճապոնիայի մենատիրական կապիտալը վերականգնեց դիրքերը և սկսեց մրցել ամերիկյան ու արևմտաեվրոպական կապիտալների հետ:

Կանադայում գործում է ֆոնդային 5 բորսա՝ Մոնրեալում, Տորոնտոյում, Կալգարիում, Վանկուվերում, Վիննիպեգում: Ամբողջ արժեթղթերի բորսային շրջանառության 90 տոկոսը կենտրոնացած է Մոնրեալում և Տորոնտոյում: Վերջին տարիներին Կանադայի բորսային գործարքներում տեղի է ունեցել աշխուժացում: Կանադական կապիտալը երկրի ներսում ամրապնդել է իր տնտեսական բազան և ոլորտն ընդլայնել երկրից դուրս, այդ թվում՝ ԱՄՆ-ում:

Իտալիայում ֆոնդային բորսաները գործում են որպես պետական հիմնարկություններ: Դրանց գործունեությունը որոշվում է օրենքով՝ սահմանելով արժեթղթերի շրջանառության ընդհանուր կանոնները և իրացման կարգը: Բորսաների գործունեությունը վերահսկում են Ֆինանսների նախարարությունը, տեղական առևտրական մարմինները և բորսային ընկերությունների գծով Ազգային հանձնաժողովը: Ամենախոշորը Միլանի բորսան է, որն ունի մոտ 130 բրոկեր և վաճառում է մինչև 500 տեսակ արժեթուղթ, որոնցից՝ 1/3-ը բաժնետոմսեր:

Ֆոնդային բորսաների հիմնական գործառույթներն են.

- արժեթղթերի թողարկումը և շուկայական արժեք սահմանելը,
- ժամանակավոր ազատ դրամական միջոցներն արժեթղթերի վաճառքի միջոցով շարժման մեջ դնելը,
- կապիտալն ընկերությունների և ոլորտների միջև վերաբաշխելը:

Ֆոնդային բորսաներին հիմնականում սպասարկում է արժեթղթերի շուկան՝ շրջանառության մեջ դնելով սերտիֆիկատներ, բաժնետոմսեր, պարտատոմսեր, գրավաթղթեր, մուրհակներ, չեկեր:

Արժեթղթերի միջազգային շուկան, որպես փոխատվական կապիտալի համաշխարհային շուկայի հատված, որպես ամբողջական սեփական և օտարերկրյա արժեթղթերի թողարկում (էմիսիա), իրացնում է նաև արժույթների և արժեթղթերի վաճառք այլ երկրների ազգային

շուկաներում: Արժեքների շուկան ընդլայնում և թեթևացնում է տնտեսության բոլոր սուբյեկտների մուտքերը և հնարավորություն է տալիս նրանց ստանալու անհրաժեշտ դրամական ռեսուրսներ: Արժեթղթերի միջազգային շուկան համաշխարհային ֆինանսական շուկայի մեկ հատվածն է:

Գծագիր 3

Համաշխարհային ֆինանսական շուկայի կառուցվածքը



Ներկայում արժեթղթերի միջազգային շուկան ընդգրկում է ինչպես բաժնետոմսերի, այնպես էլ փոխառությունների շուկան: 2008 թ. համաշխարհային շուկայի ընդհանուր ծավալը կազմել է մոտ 60 մլրդ դոլար: Ինչպես բաժնետոմսերի, այնպես էլ պարտավորությունների, համաշխարհային ամբողջ շուկայի կեսը պատկանում է ԱՄՆ-ին:

Միջազգային փոխառությունների շուկան կարելի է ներկայացնել որպես օտարերկրյա և սեփական փոխառությունների ամբողջություն:

Արժեթղթերի գնումը և վաճառքը կատարվում են բորսայական կուրսերի հիման վրա, ինչը տատանվում է՝ կախված առաջարկի և պահանջարկի հարաբերությունից: Իրենց գործունեության բնույթով արժեթղթերի բորսաներն ունեն որոշակի առանձնահատկություններ: Բորսաներում ներդրողները կարող են տեղեկություններ ստանալ վաճառված և գնված արժեթղթերի քանակի և գների մասին: Եկամուտների 50 տոկոսն ընկերությունը հատկացնում է բաժնետերերին: Եթե նա մեկ տարում վաստակել է 20 մլն դոլար, ապա պետք է հայտարարի 10 մլն դոլարի շահութաբաժին, որից 5-ը բաժնետերերի բաժնետոմսերն են, մյուս 5-ը ծառայում է ընկերության ընդլայնմանը:

Տարբեր երկրներում պատմականորեն ձևավորվել են արժեթղթերի շուկայի պետական կարգավորման և վերահսկողության տարբեր մոդելներ, որոնք լինում են ***կենտրոնացած***, երբ կարգավորումն ու վերահսկումն իրականացվում են պետական կառավարման լիազորված մարմինների միջոցով, ***ապակենտրոնացած,*** երբ կարգավորման և

վերահսկողության իրավունքները տրվում են ինքնակարգավորվող ընկերություններին, միավորումներին և ***խառը կարգավորման ու վերահսկման:***

Արժեթղթերի շուկան լինում է նաև ***բորսային*** և ***ոչ բորսային*** (դրսում իրացվող): Առաջինը մշտական գործող շուկա է: Շուկաների խոշորացումը պայմանավորված է օտարերկրյա ընկերությունների բաժնետոմսեր ներգրավելով, գնելով: Միջազգային արժութային հարաբերություններում բորսային գործունեությունը ղեկավարում է ֆոնդային բորսաների ***Միջազգային ֆեդերացիան***, որն ստեղծվել է 1961 թ.: Շտաբ-բնակարանը Փարիզում է: Հիմնական նպատակն է կոորդինացնել բորսաների գործունեությունը, հրապարակել տեղեկատվություն, քննարկել, լուծել հիմնահարցեր: Այսպիսով, ***արժեթղթերի շուկան*** արժեթղթերի թողարկման, տեղաբաշխման, իրացման համակարգ է:

10.5 Արժութային գոտիներ, արժույթի կուրս և նրա վրա ազդող գործոններ, արժեզրկում

Արժութային գոտիները պետությունների արժութային խմբավորումներ են, որոնք միջազգային արժութային հարաբերություններում վարում են համաձայնեցված քաղաքականություն: Միևնույն արժույթն օգտագործող երկրները կազմում են արժույթի գոտի: Արժութային գոտիները կազմավորվել են 30-40-ական թվականներին: Հիմնական հատկանիշներն են.

- առաջատար երկրի արժույթի նկատմամբ գոտու անդամ երկրների արժույթների կայուն կուրսերի պահպանումը,
- գոտու անդամ երկրների ազգային արժույթի կուրսը փոխելը միայն առաջատար երկրի համաձայնությամբ,
- գոտու անդամ երկրների միջև արժույթների փոխանակումը:

Առավել խոշոր են ***դոլարի*** (ԱՄՆ), ***ստեռլինգի*** (Մեծ Բրիտանիա) և ***ֆրանկի*** (Ֆրանսիա) արժութային գոտիները:

Դոլարի գոտին կազմավորվել է 1940-ական թվականներին: Դրա մեջ մտնում էին ԱՄՆ-ը, Գվատեմալան, Բոլիվիան, Դոմինիկյան Հանրապետությունը, Կանադան, Կոլումբիան, Կոստա-Ռիկան, Հաիթին, Վենեսուելան և այլ երկրներ:

Ստեռլինգի գոտին ստեղծվել է 1931 թ., ֆունտ ստեռլինգի դևալվացիայից հետո, երբ մի շարք երկրներ որոշեցին կայունացնել իրենց արժույթները ոչ թե ոսկու, այլ ֆունտ ստեռլինգի համեմատ: Գոտու կազմի մեջ մտան բրիտանական երկրները, Պորտուգալիան և Իրաքը: Այնուհետև, նրանց միացան սկանդինավյան երկրները, Իրանը, Լատվիան: 1938 թ. ավելացավ ևս 17 երկիր:

Ֆրանկի գոտին ստեղծվել է 1945 թ. Ֆրանսիայի գաղութային կայսրության բազայի վրա: Հետագայում գոտու անդամ երկրները բա-

ժանվեցին երեք ենթախմբի: Առաջին ենթախմբում ընդգրկվում են Ֆրանսիան և ֆրանսիական անդրծովյան 4 դեպարտամենտը, այլ տարածքներ: Երկրորդ ենթախումբն ընդգրկում է Մադագասկարը և աֆրիկյան պետությունների մեծ մասը, որոնցից 7-ն ընդգրկված են Արևմտյան Աֆրիկայի արժութային միության մեջ (դրամական միավորը՝ ֆրանկ): Երրորդ ենթախմբում ընդգրկված են Ալժիրը, Թունիսը, Մարոկկոն, որոնց արժույթները ֆրանսիական արժույթի հետ փոխանակվում են կայուն կուրսով:

Արժույթի գործունեության համար կարևոր նշանակություն ունի արժույթի ճիշտ քաղաքականություն վարելը: ***Արժույթի քաղաքականությունը տնտեսական միջոցառումների ամբողջություն է, որը կյանքի է կոչվում պետական և միջպետական մարմինների, բանկային և ֆինանսական հաստատությունների կողմից՝ նրանց ծրագրանպատակային դիրքորոշումներին համապատասխան:*** Համաշխարհային շուկայում արժույթի քաղաքականության մեջ առկա են երկու հակադիր միտում՝ ***գործողությունների կոորդինացումը*** և ***հակասությունները:*** Արժութային քաղաքականությունը բխում է երկրի վարած քաղաքականությունից, տնտեսական իրավիճակից, զարգացածության մակարդակից: Պետությունների միջև իրականացվող դրամաշրջանառությունն ազդում է արժութային հարաբերությունների, փողի գնողունակության, երկրի տնտեսության, արժույթի կուրսի վրա: Արժույթի քաղաքականությունը հիմնականում գործում է երեք ձևով.

1. Արժույթի ***հաշվարկային քաղաքականություն,*** որի նպատակը ցածր տոկոսադրույք տվող բանկերում պահվող կապիտալը բարձր տոկոսադրույքով բանկեր տեղափոխելով, արժույթի կուրսի կարգավորումն է:

2. Արժույթի ***նշանաբանային քաղաքականություն,*** որի նպատակն օտարերկրյա արժույթի վաճառքի միջոցով սեփական արժույթի կուրսը կարգավորելն է:

3. Արժույթի ***դիսկոնտ քաղաքականություն***, որը ԿԲ կողմից իրականացվող արժութային փոխարժեքի և վճարային հաշվեկշռի կարգավորման միջոցառումներ է:

Եթե երկրի կենտրոնական բանկը վաճառում է օտարերկրյա արժույթ, ապա ազգային արժույթի կուրսը բարձրանում է, իսկ օտարերկրյա արժույթի գնմամբ ազգային արժույթի կուրսն ընկնում է:

Արժույթի առաջարկը և պահանջարկը կախված են նրա կուրսից: ***Արժույթի փոխանակման կուրսը մի պետության դրամական միավորի գինն է ուրիշ պետության դրամական միավորով արտահայտված: Երկու արժույթների հարաբերությունը, որը սահմանվում է շուկայում առաջարկի և պահանջարկի ազդեցությամբ, կոչվում է արժույթի կուրս:*** Օրինակ, 1 ֆունտ ստեռլինգն արժե 1.48 դոլար, 1 ԱՄՆ դոլարը՝ 1.77 գերմանական մարկ, 1.64 ֆրանկ, 1 եվրո՝ 1.18 դոլար: Արժույթի կուրսը շուկաներում երբեմն որոշվում է առաջարկով և պահանջարկով: Անվանական կուրսն օտարերկրյա արժույթի հետ կամ հակառակը, փոխանակման ժամանակ ազգային արժույթի կոնկրետ «գինն» է: Օրինակ, 2007 թ. հունիսի 20-ին 1 դոլարը հավասար էր 25 ռուբլի 61 կոպեկի, 1 եվրոն՝ 34 ռուբլի 62 կոպեկի: 2012 թ. փետրվարի 10-ին 1 դոլարն արժեր 27 ռուբլի 16 կոպեկ, եվրոն՝ 36 ռուբլի 87 կոպեկ:

Աղյուսակ 10.1

Որոշ արժույթների միջին փոխարժեքները[62]

Միավոր	Արտարժույթ	ՀՀ դրամ		
		29.06.2011 թ. դրությամբ	03.10.2011 թ. դրությամբ	31.12.2011. թ. դրությամբ
1	ԱՄՆ դոլար	386.86	379.59	385.77
1	Եվրո	534.26	530.67	498.72
1	Ռուսական ռուբլի	13.24	12.60	11.98
1	Մեծ Բրիտանիայի ֆունտ ստեռլինգ	607.65	593.32	594.93
1	Եգիպտական ֆունտ	62.35	63.11	63.96
1	Իսրայելական շեքել	107.76	105.32	101.06
1	Կանադական դոլար	376.15	380.58	377.56
1	Շվեյցարական ֆրանկ	445.59	435.71	410.22
10	Ճապոնական իեն	46.00	48.69	49.77
1	Ավստրիական դոլար	388.59	387.68	386.80
1	Քուվեյթի դինար	1378.00	1382.00	1384.00
1	Ուկրաինական գրիվնյա	47.61	47.41	47.99
1	Վրացական լարի	230.24	228.78	230.82
1	Նորվեգական կրոն	67.95	67.67	67.18
1	Շվեդական կրոն	57.26	57.15	57.24
1	Չինական յուան	57.43	57.45	57.38
100	Իրանական ռեալ	3.38	3.54	3.45

Կուրսագոյացման գործոններից են նաև դրամական զանգվածի աճի տեմպերը և արժեզրկման ցուցանիշները: Եթե ազգային դրամական միավորի կուրսն իջնում է, ապա երկիրն ապրանքներ արտահանելով օտարերկրյա արժույթից շահույթ է ստանում: Արժույթի կուրսը տատանվում է զուգահեռ, փոխվում են նաև միջազգային գործարքները: Արժույթի տարբեր կենտրոններում (Նյու Յորք, Լոնդոն, Մոսկվա) միևնույն արժույթն ունի տարբեր կուրսեր (գնողունակություն):

Ոսկու ստանդարտի պայմաններում ***արժույթի*** կուրսը որոշվում է արժույթի միավորի մեջ ոսկու պարունակությամբ, ինչը կախված է

[62] ՀՀ ԿԲ-ի և ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2011 թ., Երևան, 2012, էջ 127:

երկրի վճարային հաշվեկշռի վիճակից և ապրանքների նկատմամբ արժույթի ապահովվածության աստիճանից: Արժույթի կուրսերը տարբեր են նաև կանխիկ և շտապ գործարքներում: Վերջինս ավելի խրախուսելի է, քանի որ հնարավորություն է տալիս ավելի շատ արժույթ գնելու, քան կանխիկ գործարքի ժամանակ: Արժույթի կուրսերը տարբեր են նաև գնման և վաճառքի ժամանակ: Բանկն արժույթ գնում է առաջարկողի և վաճառում՝ բանկի կողմից սահմանված կուրսով: Ոսկով փոխանակելու ժամանակ արժույթի կուրսը որոշվում է դրամի միավորի մեջ ոսկու պարունակությամբ, իսկ թղթադրամների փոխանակության ժամանակ՝ ***արժույթի պարիտետով:***

Արժույթի պարիտետն ազգային արժույթների հարաբերությունն է, որը միաժամանակ արժույթի կուրսի հիմքն է:

Դրամի միավորի մեջ ոսկու պարունակության նվազումը կամ օտարերկրյա արժույթի նկատմամբ նրա պաշտոնական կուրսի իջեցումը կոչվում է ***արժեզրկում (դևալվացիա):*** Գոյություն ունի նաև ***ընդհանուր արժեզրկում***, որն առաջ է բերում.

- ոսկու պահուստների բաշխման անհամաչափություն,
- պետական միջամտություն միջազգային հաշվարկներին և ներքին դրամաշրջանառությանը,
- արտատնտեսական գործունեությունների (քաղաքական, դիվանագիտական) ճնշումների ուժեղացում:

Կախված գների աճի չափերից՝ միջազգային պրակտիկայում ընդունված է արժեզրկման երեք տեսակ՝ ***սահող,*** եթե գների միջին տարեկան աճը կազմում է 5-10, ***արագ***՝ 10-50 տոկոս, և՝ ***հիպերարժեզրկում*** 100 տոկոսից ավելի: Արժեզրկման պատճառներ են տնտեսական անհամաչափ զարգացումը, բացասական վճարային հաշվեկշիռները: Դրա վերացման համար պետությունը վարում է հակաարժեզրկման քաղաքականություն: Առանձին երկրների արժույթների նկատմամբ դոլարի կուրսի կարգավորման նպատակով ԱՄՆ-ում կիրառվում է արժեզրկման վերացման երկու մեթոդ՝ ***դեֆլյացիոն*** և ***եկամուտների***:

Դեֆլյացիոն մեթոդը դրամավարկային և հարկային մեխանիզմի միջոցով դրամական պահանջարկի սահմանափակումն է պետական ծախսերի կրճատման, վարկերի տոկոսադրույքների բարձրացման, հարկերի ավելացման, դրամի սահմանափակման ճանապարհով: ***Եկամուտների մեթոդի*** դեպքում կիրառվում են գների և աշխատավարձերի սառեցման կամ աճի սահմանափակման միջոցառումներ: ***Դևալվացիայի դեպքում*** դրամի միավորի մեջ ոսկու պարունակությունն ավելանում է մյուս արժույթների համեմատ, իսկ ***դևալվացիայի դեպքում*** կարգավորվում են երկրի վճարային հաշվեկշիռը, տնտեսությունը: Որպեսզի պետությունը պահպանի արժութային քաղաքականությունը, կատարում է ***արժույթի վերահսկողություն և կարգավորում***, այսինքն՝

- կապիտալի արտահանման ժամանակ պահպանում է ազգային արժույթի կուրսը,
- մյուս երկրների նկատմամբ պահպանում է վճարային հաշվեկշռի հավասարակշռվածությունը,
- արտահանման տուրքերի փոխարեն արտահանողներից գնում է արժույթ՝ շուկայականից ցածր գնով,
- ներմուծումներ կատարվում են պետության կողմից տրվող լիցենզիաներով,
- արգելվում է ոսկով առևտուրը և այլն:

Արժութային վերահսկողություն սահմանվում է նաև երկրների միջև փոխադարձ հաշվարկներում: Ապրանքափոխանակման ժամանակ կողմերն արժույթի սալդոյի հնարավոր գոյացումից խուսափելու համար պետք է փոխադարձ մատակարարումները կատարեն արժույթի կուրսին համարժեք գումարով: Արժութային վերահսկողության ռեժիմի պայմաններում երկիրը մեկուսացվում է դրսի ազդեցությունից, կրճատվում են ներմուծումները: Արժութային գործարքները կարգավորվում են միջազգային տարբեր ֆինանսական կազմակերպությունների (ԱՄՀ, ՎԶՄԲ) կողմից: ԱՄՀ-ը երկրներում ժամանակավոր դժվարությունները վերացնելու համար արտոնյալ պայմաններով տրամադրում է կարճաժամկետ և միջին ժամկետի վարկեր: Զարգացած երկրների արժույթը նպաստում է կապիտալի միջազգային տեղաշարժին, ոսկու և այլ արժութային գործարքների կատարմանը: Զարգացող երկրների արժույթի կարգավորումը դիտվում է որպես արտաքին պետություններից պաշտպանվելու և արժութային ռեսուրսները սեփական երկրի զարգացմանը ծառայեցնելու միջոց:

Երկրների ներսում արժութային հարաբերությունները ***կարգավորվում են*** ազգային օրենսդրությամբ: Սահմանվում է քաղաքացիների և կազմակերպությունների կողմից արժույթի ներմուծման և արտահանման, փոխադրումների և առաքման փոխհարաբերությունների կարգ: Արժույթի շուկայական կուրսի ***ուղղակի*** կարգավորումն իրականացվում է կառավարության համաձայնությամբ: Պետության կողմից արժույթի կուրսի ***անուղղակի*** կարգավորումը կատարվում է արտահանման խրախուսման և ներմուծման սահմանափակման միջոցով:

10.6 Արժութային հիմնադրամ, արժութային պահուստներ

Արժութային հիմնադրամը պետության տրամադրության տակ գտնվող ոսկու, ազգային և օտարերկրյա արժույթներն են, որոնք պահվում են երկրի կենտրոնական բանկում: Դրանք նախատեսվում է օգտագործել և՛ արտաքին, և՛ ներքին հարաբերություններում՝ երկրի տնտեսությունը կարգավորելու համար: Առաջին անգամ ***արժութային հիմնադրամ*** ստեղծվել է համաշխարհային տնտեսության ճգնաժամի

տարիներին (1929-1933 թթ.) ԱՄՆ-ում, Կանադայում, Մեծ Բրիտանիայում, Ֆրանսիայում, Շվեյցարիայում և այլն: Հիմնադրամի նպատակն արժութային քաղաքականություն վարելն էր: ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Շվեյցարիայում արժութային հիմնադրամը հիմնականում կազմավորվել է ոսկով և օգտագործվել արտահանման ու վճարային պասիվ հաշվեկշռի կարգավորման համար: Պետության տրամադրության տակ գտնվելով՝ արժութային հիմնադրամը կարևոր միջոց է ինվեստիցիաների համար:

Ընդհանուր արժութային պահուստները կազմված են փոխառումների հատուկ իրավունքով (CDP) ոսկու պաշարներից, ԱՄՀ անդամ երկրների պահուստներից, ինչպես նաև արժութավարկային կազմակերպությունների հսկողության տակ գտնվող օտարերկրյա արժութային պաշարներից: Երկրի արժութային պահուստներում բացի ոսկուց հաշվարկվում են եղած օտարերկրյա արժութային միջոցները: Արժութային պահուստներ ստեղծվում են, որպեսզի երկիրը կարողանա ծածկել միջազգային հաշվարկներով ստացած վճարումները: Արժութային հիմնական պահուստը ոսկին է, քանի որ այն ազատ կարող է փոխանակվել ցանկացած արժույթի հետ: Արժութային պահուստներում եղած ոսկու պաշարը գնահատվում է տարվա վերջին (դեկտեմբերի 31-ին) Լոնդոնի գունավոր մետաղների բորսայի գներով: Երկրում կապիտալի ներհոսքը բերում է օտարերկրյա արժույթի ավելացում: Երբ արժութային փոխարժեքը կայուն է, կապիտալի ներհոսքն է ավելանում, երբ անկայուն է՝ արտահոսքը: Ուղղակի ներդրումների ավելացումն աշխուժացնում է տնտեսությունը և ստեղծում արժութային փոխարժեքի կարգավորման իրական հիմք: Արժութային փոխարժեքը կարգավորելու հիմնական միջոց է ինտերվենցիան: ***Արժութային ինտերվենցիան կենտրոնական բանկի կողմից իր երկրի արժույթի առքը կամ վաճառքն է՝ նրա կուրսը պահպանելու համար:*** Վճարային հաշվեկշռի հավասարակշռման մեթոդ է ոսկու արժութային պաշտոնական պաշարների օգտագործումը: ԱՄՆ-ը, ոսկու արտահանման շնորհիվ, բազմիցս մարել է իր վճարային հաշվեկշռի մնացորդը: Շատ երկրներ (Իտալիա, Պորտուգալիա և այլն) ոսկին օգտագործում են որպես երաշխիք, գրավ՝ օտարերկրյա պարտքերի դիմաց: Պաշարներ են համարվում նաև CDP-ը, եվրոն: Ըստ ՀՀ ԿԲ տվյալների՝ ՀՀ արտաքին պահուստները դասակարգվում են հետևյալ կերպ.

- արժույթներ, արժույթով ավանդներ օտարերկրյա բանկերում՝ 68 տոկոս,
- CDP արժույթով համաշխարհային հիմնադրամում՝ 12 տոկոս,
- արժեթղթեր արժույթով՝ 9 տոկոս,
- թղթակցային հաշիվներ օտարերկրյա բանկերում՝ 6 տոկոս,
- ոսկի, ոսկով ավանդներ օտարերկրյա բանկերում՝ 4 տոկոս,
- արժույթով այլ ակտիվներ՝ 1 տոկոս:

Ոսկու պաշարը պետությանը պաշտպանող ծույլ ոսկու և ոսկեդրամի պահուստային հիմնադրամն է՝ պահված գանձարանում: Տնտեսական վիճակից ելնելով՝ դրանք ավելանում կամ սպառվում են: Ոսկու մեծ խմբերով առք ու վաճառքը կատարվում է պետությունների միջև: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո (1948 թ.) կապիտալիստական աշխարհի ոսկու պահուստների մեծ մասը (34.5 մլրդ դոլար) կենտրոնացած էր ԱՄՆ-ում, և, կապված ԱՄՆ վճարային հաշվեկշռի դեֆիցիտի և երկրների միջև արժութային վերաբաշխման հետ, նվազեց: Միայն ԱՄՀ ոսկու պաշարները 1980 թ. կազմում էին մոտ 100 մլն տրոյան ունցիա: Ըստ ոսկու ամերիկյան ինստիտուտի տվյալների՝ ոսկու արդյունահանման ծավալը 1989 թ. կազմել է 57.979 մլն տրոյան ունցիա: Նույն թվականին աշխարհում ոսկի արդյունահանող երկրներից ամենախոշորը Հարավ-Աֆրիկյան Հանրապետությունն էր՝ համաշխարհային ոսկու արդյունահանման 33.8 տոկոսը կազմող մոտ 19.6 մլն ունցիայով: ԽՍՀՄ-ը երկրորդն էր (9 մլն ունցիա), ԱՄՆ-ը՝ երրորդը (մոտ 5.8 մլն ունցիա), ապա Կանադան էր (4.4 մլն ունցիա) և Ավստրալիան (4.2 մլն ունցիա): Այս երկրները միասին արդյունահանում էին կորզվող ամբողջ ոսկու մոտ 3/4-ը: Ըստ Ոսկու համաշխարհային խորհրդի (ՈՀԽ) տվյալների՝ ոսկու գնումների ծավալը (սպառումը) հիմնական ներմուծող երկրներում 1995 թ. վերջին 1992 թ. համեմատ աճել է 10 տոկոսով և կազմել 2746 տոննա:

Աղյուսակ 10.2

Ոսկի ներմուծող հիմնական երկրների պաշարները 1992-1995 թթ.

Հիմնական ներմուծող երկրները	Գնումների ծավալի աճը, %	Պաշարները, տոննա	
		1992 թ.	1995 թ.
Ընդհանուրը	10	2496	2746
Հնդկաստան	14	415.7	473.9
ԱՄՆ	5	311.4	327
Ճապոնիա	26	2294	289.1
Չինաստան	-	-	224

Շնորհիվ Գերմանիայի ներդրումների և Մեծ Բրիտանիայի ոսկու վաճառքի ավելացման՝ Եվրոպայում ոսկու պահանջարկն ավելացել է 7 տոկոսով: Այն պակասել է Հոնկոնգում, Թաիլանդում, Թայվանում[63]: Յամայկայի համակարգի գործունեության ընթացքում բոլոր երկրների կենտրոնական բանկերի ոսկու պաշարները կրճատվել են 10.3 տոկոսով (1978 թ. 1037.98 մլն ունցիայից 2002 թ. նվազել են մինչև 930.56 ունցիա): Ոսկու վաճառքի քվոտավորման մասին ստորագրվել է 5-ամյա համաձայնագիր (2004 թ. սեպտեմբերի 8-ից մինչև 2009 թ. սեպ-

[63] Լոնդոն, 29 փետրվարի, 1996, Ազգ, 1-ը մարտի 1996:

տեմբեր): Տարեկան վաճառքի լիմիտն ավելացել է 500, իսկ ընդհանուր ծավալը՝ 2500 տոննայով[64]: Ներկայում Կենտրոնական բանկերը մնում են ոսկու համաշխարհային շուկայի կարևոր մասնակիցներ: Ոսկու ամբողջական պաշարի ծավալը հասնում է 30.5 հազար տոննայի: Երկու տասնամյակների ընթացքում Կենտրոնական բանկերում նկատվում է ոսկու պաշտոնական պաշարների կրճատման միտում՝ տարեկան միջինը 1 տոկոսով:

Համաշխարհային արժութային համակարգի վերադարձը ոսկու ստանդարտին քիչ հավանական է, քանի որ ոսկին պահպանում է պահուստային ակտիվի կարգավիճակ: Ոսկու հիմնական տիրակալներ համարվում են ուժեղ երկրները, որոնց բաժին է ընկնում համաշխարհային պաշարների 69 տոկոսը (այդ թվում՝ 35.4 տոկոսը եվրո համակարգում, 26.7 տոկոսը՝ ԱՄՆ-ի): Ներկայում համաշխարհային ոսկու կուտակումների 69.3 տոկոսը կենտրոնացած է 10 երկրներում:

2009 թ. Հնդկաստանի և Չինաստանի Կենտրոնական բանկերը էապես ավելացրեցին իրենց ոսկու պաշարները: Հնդկաստանը ձեռք բերեց ՄԱՖ պաշարների վաճառքի մի մասը, ինչի արդյունքում ոսկու պաշարներն աճեցին 357.75-557.75 տոննա: Չինաստանը ևս ՄԱՖ-ի պաշարներից 454 տոննայով ավելացրեց ոսկու պաշարները: Հնդկաստանի և Չինաստանի բանկերի ոսկու խոշոր ծավալների ձեռք բերումը, ամենայն հավանականությամբ, պայմանավորված է պահուստային ակտիվների դիվերսիֆիկացման ձգտումով: 2008-2009 թթ. համաշխարհային ֆինանսական ճգնաժամն էական ազդեցություն չի թողել ասիական երկրների պահուստային ակտիվների ծավալի վրա[65]: Ռուսաստանի ոսկու պահուստների ծավալը 2011 թ. հունվարի 1-ի դրությամբ հաշվարկված 788.6 տոննայից մինչև 2012 թ. հունվարի 1-ն աճել է 94.4 տոննայով և կազմել 883 տոննա[66]:

Միջազգային արժութաֆինանսական կազմակերպություններ են ***ոսկու շուկաները:*** Դրանք տարբեր երկրներում ոսկու առևտրի կենտրոններ են, որտեղ ոսկու արդյունաբերության, սպառման, մասնավոր գանձագոյացման, սպեկուլյացիայի և դրամահատման նպատակով կատարվում է ոսկու կանոնավոր առուծախ: Շուկաներում ոսկի վաճառում են հիմնականում արդյունահանող երկրները և դրանց պաշարների մասնավոր տերերը, գնում՝ մասնավոր ընկերություններն ու առանձին անձինք, որոշ դեպքերում՝ նաև կենտրոնական բանկերը: Ոսկու շուկաներ (օրինական և ոչ օրինական՝ «սև») գործում են բոլոր երկրներում: Դրանց մեծ մասը բավարարում է տվյալ երկրի ներքին պահանջարկը:

[64] Международные экономические отношения, уч. под ред. Ливенцева Н. Н., М., 2005.
[65] Мировая экономика и международные отношения, журнал, 2011, N 1, стр. 35.
[66] Экономист, журнал, 2012, N 3, стр. 15.

Գոյություն ունեն ***ոսկու միջազգային շուկաներ***: 19-րդ դարից մինչև 20-րդ դարի 20-ական թվականները ոսկու համաշխարհային առևտրի միակ կենտրոնը Լոնդոնն էր: Հետագայում ավելացավ նաև Ցյուրիխը: Այս շուկաները ոսկու առևտրի միջազգային մյուս կենտրոնների (Ֆրանսիա, Ճապոնիա) ներքին շուկաների միջոցով ոսկին արտադրողներից ուղարկում են սպառողներին: Միջազգային տարածաշրջանային գլխավոր շուկաներից են Մերձավոր Արևելքում Դուբայը (Սաուդյան Արաբիան), Ջիդան, Բեյրութը, Քուվեյթը, Հեռավոր Արևելքում՝ Սինգապուրը, Հոնկոնգը (Սյանգան), Արևմտյան կիսագնդում՝ Տորոնտոն (Կանադա), Նյու Յորքը և Չիկագոն: Ոսկու ներքին խոշոր շուկաներից են Եվրոպայում Փարիզի, Միլանի, Մայնի Ֆրանկֆուրտի, Ասիայում՝ Տոկիոյի, Բոմբեյի (սև շուկա), Դաքայի, Կարաչիի, Աֆրիկայում՝ Կասաբլանկայի, Ալեքսանդրիայի, Կահիրեի, Լատինական Ամերիկայում՝ Բուենոս Այրեսի, Ռիո դե Ժանեյրոյի և Մոնտեվիդեոյի շուկաները: Միջազգային շուկաներում ոսկին վաճառվում է ստանդարտ՝ 12.5 կգ կշռով և 995 կամ 999 հարգ ծուլակտորներով: Ներքին շուկաներում ոսկին վաճառվում է 5-10 գրամից մինչև 1 կգ ծուլակտորների, թերթիկների, թիթեղների, սկավառակների, մեդալների, լարերի, ոսկու սերտի-ֆիկատների տեսքով: 1978 թ. ապրիլի 1-ից ՄԱՖ-ի կողմից ոսկու պաշտոնական գնի փոփոխումից և, որպես դրամամիջոց, արգելումից հետո մասնավոր անձանց և բանկերի հետ, որպես ոսկու գնորդներ և վաճառողներ, հանդես եկան նաև որոշ կենտրոնական բանկեր, որոնց իրավունք էր վերապահվում գործարքներ կատարելու ոսկու մասնավոր շուկաներում:

Լոնդոնի ոսկու շուկան տնօրինում են անգլիական 5 ընկերություն, Շվեյցարիայում ոսկու գործարք կատարում՝ 3 խոշոր բանկեր: Ոսկու գինը սահմանվում է ամեն օր՝ երկու կենտրոնների՝ Լոնդոնի և Ցյուրիխի շուկաների փոխպայմանավորվածությամբ: Վերջիններս ոսկու համաշխարհային շուկաներ են: Հաշվարկները կատարվում են ԱՄՆ դոլարով՝ 1 տրոյան ունցիա (31.1035 գ) զուտ ոսկու համար: Միջազգային տարածքային շուկաներում ոսկու գինը հաշվարկվում է նույն ձևով, ներքին շուկաներում՝ տեղական արժույթի միավորի հաշվով: Բոլոր շուկաներում, կապված տեղափոխումների, ապահովագրական վճարումների հետ, գներն ավելի բարձր են, քան Լոնդոնի և Ցյուրիխի շուկաներում: Կախված պետությունների կողմից սահմանված ռեժիմից՝ ոսկու շուկաները լինում են.

- միջազգային ազատ շուկաներ (Լոնդոնի, Ցյուրիխի, Նյու Յորքի, Դուբայի, Բեյրութի, Քուվեյթի, Սինգապուրի, Հոնկոնգի (Սյանգան)),
- տեղական (ներքին) ազատ շուկաներ (Փարիզի, Միլանի, Ստամբուլի, Ռիո դե Ժանեյրոյի),
- վերահսկող տեղական շուկաներ (Աբենքի, Կահիրեի),
- «սև շուկաներ» (Բոմբեյի, Թայբեյի (Թաիվան) և այլն):

ԳԼՈՒԽ 11
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅՈՒՄ

11.1 Կապիտալի միջազգային շարժի էությունը և ձևերը

Կապիտալի միջազգային շարժը կապված է համաշխարհային տնտեսության մեջ ֆինանսական միջոցների անհրաժեշտությունից: Շարժերը երկրների միջև ունեն մի շարք առանձնահատկություններ.

1. «Կապիտալ» գործոնի տակ ենթադրվում է *հիմնական* և *շրջանառու* կապիտալի ամբողջություն, իսկ նրա շարժերը երկրների միջև իրականացվում են ֆինանսական առանձին հոսքերի տեսքով:

2. Կապիտալի շարժը կարելի է ընդունել ընդունող երկրի ինվեստիցիոն եղանակով՝ կիրառելով արժութային սահմանափակում, քաղաքական ռիսկեր:

Ըստ բնույթի միջազգային կապիտալի ներդրումները կարող են լինել *ըստ աղբյուրների՝* պետական և մասնավոր:

Պետական կապիտալը միջազգային շարժի պաշտոնական ձև է, որն իրենից ներկայացնում է պետական միջոցներ, որոնք ուղարկվում են այլ երկիր կամ այնտեղից ընդունում են անմիջապես կառավարության կամ միջկառավարական կազմակերպությունների որոշմամբ:

Մասնավոր կապիտալը ոչ պետական աղբյուրներից դեպի արտասահման գնացող միջոց է կամ միջոց՝ ընդունված արտասահմանի մասնավոր անձանցից: Դրան վերաբերում են ինվեստիցիաները, առևտրային և միջբանկային վարկերը: Այդ միջոցները կապված չեն ուղղակի բյուջեի հետ, բայց կառավարությունն այն պահում է տեղաշարժման տեսադաշտում:

Կապիտալի արտահանումը կապիտալի մի մասի դուրս բերումն է ազգային շրջանառությունից, ապրանքային կամ դրամական ձևով տեղափոխումն այլ երկրներ: Այն առաջացել է դեռևս կապիտալիզմի փուլում, երբ զարգացած երկրներն այլ երկրներում ստեղծում էին արդյունաբերական ձեռնարկություններ, առևտրային ընկերություններ, բանկեր, որոնք նպաստում էին ֆինանսական կապիտալի արտահանմանը: Արտահանողների համար դա եկամտի միջոց էր:

Վերջին տարիներին նկատվում է կապիտալի արտահանման զգալի աճ, քանի որ.

- տնտեսական աճը բերում է կապիտալի պահանջարկի աճ,
- զարգացած երկրների հումքատար արտադրության կրճատումն իր հետ բերում է արտադրության ծախսերի կրճատում աշխատուժի հաշվին:

1990-ական թթ. կապիտալի արտահանումն անցել է 1.2 տրլն դոլարը և կազմել համաշխարհային արտահանման մոտ 20 տոկոսը:

Պետական կապիտալն արտահանվում է տարբեր ձևերով.

- անհատույց և դրամական նպաստ (սուբսիդիա), դոտացիա,
- պետական երկարաժամկետ վարկեր զարգացող երկրներին,
- պետական կոմերցիոն վարկեր:

Միջազգային կապերի բոլոր ձևերը և տեսակները ընդգրկում են արժութային հաշվարկները, որոնք էական ազդեցություն ունեն ՄԱՀ-ի վրա: Միջազգային արժութային հարաբերությունների նոր սկզբունքները հաստատվել են ՄՏՀ-ի 1976 թ. Յամայկայի կոնֆերանսում: Առաջատար երկրների մեծամասնությունը գերադասում է լողացող կուրսը: Համաշխարհային արժութային համակարգում առաջնային ԱՄՆ դոլարն է:

Իր բնույթով կապիտալի շարժը տարբերվում է ապրանքայինից: Ապրանքների արտահանումը դիտվում է որպես սպառողական արժեքների փոխանակում, իսկ կապիտալի արտահանումն ունի վարկային, ներդրումային ձեռնարկությունների կառուցման նպատակ: Կապիտալ արտահանում են և՛ զարգացած, և՛ միջին զարգացած, և՛ զարգացող երկրները: Դա կապված չէ բյուջետային միջոցների «ավելցուկի» հետ և արտահանվում է նաև կապիտալի դեֆիցիտի պայմաններում: Շատ երկրներ միաժամանակ համարվում են և՛ ներմուծողներ, և՛ արտահանողներ: Եթե նախկինում արտասահմանյան ինվեստիցիաներն ուղղված էին հետամնաց երկրների տնտեսության զարգացմանը, ապա երկրորդ համաշխարհային պատերազմից հետո կապիտալի արտահանումն առավելապես իրականանում էր զարգացած երկրների միջև: Արդյունքում առաջացան արդյունաբերության և կապիտալի միջազգայնացումը, ինչպես նաև անդրազգային և միջազգային կորպորացիաներ:

1950-ական թթ. լատինաամերիկյան երկրներում օտարերկրյա ներդրումների ընդհանուր ծավալում ԱՄՆ կապիտալը կազմեց մոտ 60, Կանադայինը՝ մոտ 80 տոկոս: 1970-ական թթ. ավելի ուժեղացավ կապիտալի արտահանումը զարգացած երկրների միջև: Ներկայում կապիտալի արտահանման արդյունավետությունը պայմանավորված է.

- համաշխարհային շուկայի զարգացումով և արտահանման գործընթացում բազմաթիվ երկրներ ներգրավելով,
- ազգային տնտեսությունների ավելացումով, կապիտալի կենտրոնացումով և համակենտրոնացումով,
- ռազմական, քաղաքական իրավիճակներով, անդրազգային ընկերությունների ուժեղացումով և այլն:

Համաձայն ՕԵՀԿ [67] գնահատման՝ 1980-ական թթ. ուղղակի ինվեստիցիաների միջին տարեկան տեմպերը կազմել են 34 տոկոս՝ մոտ

[67] Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն:

4 անգամ գերազանցելով համաշխարհային առևտրի աճը: Կապիտալի արտահանման պատճառներ եղել են.

- համաշխարհային տնտեսության տարբեր օղակներում կապիտալի առաջարկի և պահանջարկի ավելացումը,
- կապիտալ արտահանող երկրների կողմից ավելի էժան հումք և աշխատուժ ձեռք բերելը,
- երկրների տնտեսական և քաղաքական անհամաչափ զարգացումը:

Կապիտալի արտահանումն ունի խթանիչ գործոններ, այն է՝ զարգանում են ազգային տնտեսությունների փոխադարձ կապը, արտադրության միջազգայնացումը և օտարերկրյա կապիտալի ներդրման ձգտումը, խորանում արտադրական միջազգային մասնագիտացումը, կոոպերացումը:

Զարգացած երկրների վարած՝ կապիտալի արտահանման քաղաքականությունը մի կողմից նպաստում է երկրների տնտեսական զարգացմանը, մյուս կողմից սրում է պետությունների միջև հակասությունները: Մի կողմից ուժեղանում է մենատիրության իշխանությունը, մյուս կողմից՝ դանդաղում թույլ զարգացած երկրների տնտեսական վերելքը: Հետևաբար, կապիտալի արտահանումը ծնում է նաև երկրների միջև խորը և անհաշտ հակասություններ, նպաստում ուժեղ երկրների էքսպանսիայի ընդլայնմանը և կապիտալ ներմուծող երկրների հետագա կախվածությանն առաջիններից:

Համաշխարհային տնտեսության մեջ, որպես կապիտալի շարժի սուբյեկտներ, հանդես են գալիս պետական և միջազգային ֆինանսական կազմակերպությունները, մասնավոր առևտրական կառույցները: Կապիտալի արտահանումը կատարվում է ***ձեռնարկատիրական և փոխատվական կապիտալի*** արտահանման ձևերով:

Արտահանվող ***ձեռնարկատիրական կապիտալը*** ներդրվում է ներմուծող երկրի տնտեսության ճյուղերում, բանկային գործունեության մեջ, ստեղծում մասնաճյուղեր:

Արտահանվող ***փոխատվական կապիտալը*** փոխառությունների ձևով տոկոսավճարով տրամադրվում է ներմուծող երկրի տեղական ձեռնարկություններին, կառավարությանը: Սակայն կապիտալի արտահանման նպատակը դառնում է ոչ միայն շահույթը, այլև բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործումը, տեղական ձեռնարկությունների ակտիվացումը և այլն:

Կապիտալի միջազգային շարժն ըստ ժամկետների լինում է.

- երկարաժամկետ (7-10 տարի և ավելի),
- միջին ժամկետի (2-7 տարի),
- կարճաժամկետ (մինչև 1 տարի),
- կարճաժամկետից ցածր (մինչև 3 ամիս):

Եթե մինչև 1950 թ. փոխատվական կապիտալի արտահանումը հիմնականում կապված էր պատերազմից տուժած երկրների վերականգնման հետ, ապա 60-ականներին զարգացավ կապիտալի արտահանման ներդրումային ձևը: Եթե փոխատվական կապիտալի արտահանումն ունի կոնկրետ ժամկետներ, ապա ձեռնարկատիրական կապիտալի ներդրումները ժամկետներով պայմանավորված չեն: ***Փոխատվական կապիտալն*** իրականացվում է միջազգային փոխառությունների, արժեթղթերի ներդրումների ձևով ինչպես պետությունների, այնպես էլ մասնավոր սեկտորի կողմից: Արտահանվող կապիտալն օգտագործվում է արդյունաբերական և առևտրական կորպորացիաների, բանկերի և ֆինանսական այլ հիմնարկների վարկավորման, տնտեսական օգնությունների անվճար և արտոնյալ վարկերի (անտոկոս կամ ցածր տոկոսով) տրամադրման համար:

Կապիտալի տեղափոխումներն ընդգրկում են օտարերկրյա գործընկերների հետ գործարքների վճարումները, փոխառությունների տրամադրումը, բաժնետոմսերի ձեռք բերումը, ընկերությունների միջև կապիտալի և արժեթղթերի փոխանակումները, իսկ օտարերկրյա ինվեստիցիաները[68] նպատակ ունեն մասնակցելու ներմուծող կողմի ընկերությունների կառավարմանը: Ինվեստիցիաներն արտահանվում են ***ուղղակի, պորտֆելային*** և այլ ձևերով: ***Ուղղակի ինվեստիցիաներ*** ներդրող ձեռնարկությունները, ընկերությունները, բանկերն արտասահմանում պայմանագրով բացում են ձեռնարկություններ, օգտագործում տեղական ռեսուրսները, ձեռք բերում արտասահմանյան ընկերության բաժնետիրական կապիտալի 25 կամ ավել տոկոս բաժնեմաս, հսկելու իրավունք: ԱՄՆ-ի, Գերմանիայի, Ճապոնիայի վիճակագրությունն ուղղակի ինվեստիցիաներ համարում է բաժնեմասը 10 և ավելի տոկոս կազմելու դեպքում, ինչը ձեռնարկության գործունեությունը հսկելու իրավունք է տալիս: Ուղղակի ինվեստիցիաների ծավալը 2000 թ. կազմել է 6.3 տրլն ԱՄՆ դոլար, որը 1990 թ. համեմատ աճել է 3 անգամ: 2002 թ. այն կազմել է 7.12 տրլն դոլար, որը համաշխարհային ՀՆԱ 14.3 տոկոսն էր: Ամենախոշոր գործարքն իրականացվել է 2000 թ., երբ Манесман ընկերությունը Водафон Эйр Тач ընկերությունից ստացել է 208.8 մլրդ դոլար: Ինվեստիցիոն գործարքների միջոցով երկրներն ունենում են ֆինանսավորման կայուն աղբյուր, ստանում տեխնոլոգիաներ, նորություններ, արտոնագրեր, մակնիշներ, արտահանման հնարավորություններ, բարձրանում է աշխատողների որակավորումը, ընդլայնվում են կապերն արտաքին շուկայի հետ:

Օտարերկրյա ուղղակի ինվեստիցիաների աճին նպաստում են.

- տեխնոլոգիաների արագ փոփոխությունները,
- առևտրի և ինվեստիցիաների ազատականացումը,

[68] Ինվեստիցիան կապիտալի երկարաժամկետ ներդրում է տնտեսության տարբեր ճյուղերում՝ շահույթ ստանալու նպատակով:

- արժեթղթերի և արժույթի շուկայի ընդլայնումը:

2002 թ. աշխարհում օտարերկրյա ինվեստիցիաների արտահանումը կազմել է 630.3, ներմուծումը՝ 651.2 մլրդ դոլար: Համաշխարհային ուղղակի ինվեստիցիաների զարգացումը միտում ունի գերազանցելու առևտրի և ՀՆԱ աճի տեմպերը: 1996-2000 թթ. այն աճել է 40.2, առևտուրը՝ 6.0, ՀՆԱ-ը՝ 2.9, արդյունաբերական արտադրանքը՝ 3.6 տոկոսով: Վերջին 2 տասնամյակում բարձրացել է զարգացող երկրների դերը, փոխվել կապիտալ ներդրումների ծյուղային կառուցվածքը, կրճատվել վերամշակող, արդյունահանող ճյուղերի բաժինը, ավելացել են քիմիական, պլաստմասսաների, տրանսպորտի, մեքենաշինության, սննդարդյունաբերության ներդրումները:

Պետությունն ուղղակի ինվեստիցիաները հովանավորում է.

- տրամադրելով պետական երաշխավորում,
- ապահովագրելով ինվեստիցիաները,
- կարգավորելով վիճելի հարցերը:

Ինվեստիցիաներն ունեն նաև ***բացասական*** կողմեր: Տեղական ընկերությունները կորցնում են ազգային արտադրության վրա հսկողությունը, քանի որ տնտեսության ռազմավարական ընտրությունը կատարում են ներդրողները:

Պորտֆելային ինվեստիցիաներն արտասահմանյան ընկերություններում արժեթղթերի ներդրումներ են: Սրանք փոքր են, ուստի այդ ընկերություններում կապիտալ արտահանողին վերահսկելու հնարավորություն չի տրվում: Ներդրումներն իրականացնում են միայն տոկոսային եկամուտ ստանալու նպատակով: 1960 թ. ԱՄՆ պորտֆելային ինվեստիցիաները կազմել են 12.6 մլրդ դոլար կամ արտասահմանյան բոլոր մասնավոր ինվեստիցիաների 22 տոկոսը: 2010 թ. Ռուսաստանում ներդրումների մեջ երկրների ինվեստորների բաժինը կազմում էր Շվեյցարիայից 17, Մեծ Բրիտանիայից 14, Նիդեռլանդներից 30, ԱՄՆ-ից 20, այլ երկրներից 19 տոկոս:

Այլ ինվեստիցիաներ են կարճաժամկետ և երկարաժամկետ առևտրային վարկերը, բանկային փոխառությունները, ֆինանսական լիզինգը, ինժինիրինգը:

Լիզինգը մեքենաների, սարքավորումների, տրանսպորտային միջոցների, արտադրական սարքավորումների երկարաժամկետ վարձակալությունն է:

Ինժինիրինգը ծառայությունների արտահանման որոշակի ձև է արտադրող երկրից պատվիրատու երկիր:

Ինվեստիցիոն եղանակ ասելով՝ հասկանում ենք ինվեստավորման համալիր օբյեկտիվ պայմաններ՝ ներառյալ երկրի տնտեսական, քաղաքական և սոցիալական բնութագիրը որպես օտարերկրյա կապիտալի գործադրման օբյեկտ: Իր հերթին ***ինվեստիցիոն միջոց*** իրենից

ներկայացնում է ինվեստիցիոն եղանակի խմբավորում ինվեստորներին ներկայացնելու համար: Այն ձևավորում է.

- ինվեստիցիոն եղանակի փաստացի իրավիճակը,
- ինվեստորների պահանջները և նախապատվությունը,
- երկրում տեղեկատվական բնույթի հաղորդագրությունը:

Վերջին 10 տարում օտարերկրյա կապիտալի միջազգային շարժը զգալի աճել է և դարձել տնտեսության գլոբալացման հիմնական գործոններից:

Աղյուսակ 11.1

Ուղղակի ինվեստիցիաների գումարային ծավալը 1980-2000 թթ.[69] (մլրդ դոլար)

Տարածաշրջաններ-երկրներ	Ներհոսք			Արտահոսք		
	1980 թ.	1990 թ.	2000 թ.	1980 թ.	1990 թ.	2000 թ.
Աշխարհ	615.8	1898.7	6314.3	523.8	1717.4	5976.2
Զարգացած շուկայական տնտեսությամբ երկրներ	374.9	1397.9	4210.3	507.4	1637.3	5248.5
ԱՄՆ	83.0	394.9	1238.6	220.2	430.5	1244.6
ԵՄ	185.7	739.6	2376.2	213.0	790.3	3110.9
Ճապոնիա	3.3	9.8	54.3	19.6	201.4	281.6
Զարգացող երկրներ	240.8	487.7	1979.3	16.5	79.8	710.3
Աֆրիկա (առանց ՀԱՀ)	16.2	39.4	95.4	1.1	12.5	19.4
Ասիա	173.3	328.2	1261.8	6.2	47.5	577.9
Չինաստան	6.3	27.8	346.7	0.04	2.5	27.2
Հոնկոնգ	138.8	162.7	469.8	0.15	11.9	384.7
Սինգապուր	6.2	28.6	89.2	3.7	7.9	53.2
Լատինական Ամերիկա	49.7	116.7	606.9	9.1	19.5	111.0
Կենտրոնական և Արևմտյան Եվրոպայի երկրներ	-	3.0	124.7	-	0.4	17.4
Հունգարիա	..	0.6	19.9	..	0.2	2.0
Լեհաստան	..	0.1	36.5	-	0.1	1.5
Ռուսաստան	..	..	19.2	..	..	11.6
Չեխական Հանրապետություն	..	1.4	21.1	..	..	0.8

[69] Международные экономические отношения, уч. под ред. Смитиенко Б. М., М., ИНФРА 2005, стр. 240.

-հաշվարկված չէ

..թվեր չկան

Ըստ ՄԱԿ-ի անդրազգային կորպորացիաների կենտրոնի տվյալների՝ աշխարհի 329 արդյունաբերական խոշոր ընկերությունների արտասահմանյան ուղղակի ներդրումները կենտրոնացած են գիտատար ճյուղերում: Ըստ Եվրոպամերիկյան առևտրաարդյունաբերական պալատի տվյալների՝ ԱՄՆ-ի և Եվրոպայի փոխադարձ ինվեստիցիաները 2000 թ. հասել են 800 մլրդ դոլարի: Միջազգային ուղղակի ինվեստիցիաների մասին վկայում են ՅՈՒՆԿՏԱԴ-ի «Համաշխարհային ինվեստիցիաների մասին» զեկույցի տվյալները: Ըստ համաշխարհային դասակարգման՝ 1990-ական թթ. կապիտալի խոշոր արտահանողներ էին Ասիայում Ճապոնիան և Թայվանը, Եվրոպայում՝ ԵՄ-ը, Շվեյցարիան, Մեծ Բրիտանիան, ինչպես նաև ԱՄՆ-ը, Մեքսիկան և այլն:

Վերջին երկու տասնամյակում արդյունաբերության համեմատ ծառայությունների ոլորտում ինվեստիցիաներն ավելացել են: Արտասահմանյան ինվեստիցիաների ծավալով երկրորդ և երրորդ տեղը գրավող Ճապոնիայի և Գերմանիայի այդ ցուցանիշները մոտեցել են 50 տոկոսի: Ներկա փուլի առանձնահատկությունն այն է, որ կապիտալը երկրներին չի պարտադրվում, այլ տեղի է ունենում կոշտ մրցակցություն նրա ներդրման համար: 2000-ական թվականներին ուժեղացել է օտարերկրյա կապիտալի հոսքն Արևմտյան Եվրոպա, Ասիա, ԱՊՀ երկրներ, Հունգարիա, Լեհաստան, Չեխիա և այլն:

Կապիտալի արտահանումը կապված է նաև զարգացման պաշտոնական օգնության (ԶՊՕ, ՕՊՐ) հետ, որը ֆինանսական և տեխնիկական օգնության միջոցով բարելավում է զարգացող երկրների սոցիալ-տնտեսական վիճակը: Օգնության մեջ մտնում են նվիրատվությունները, փոխառությունները, վարկերը, սուբսիդիաները: ՅՈՒՆԿՏԱԴ-ի 2000 թ. կոնֆերանսում երկրների ֆինանսական ինստիտուտների ուշադրությունը հրավիրվեց ԶՊՕ չափերն ավելացնելու վրա:

Բացի կապիտալի սովորական ձևերով արտահանումից՝ գոյություն ունի նաև կապիտալի «արտահոսք»՝ այսպես կոչված, «կեղտոտ փողերի» լվացման ձևով: Խոսքն անլեգալ ձևով կապիտալը երկրից արտահանելու մասին է: Երկրներից կապիտալի «արտահոսքի» անլեգալ ձևերից են.

- արտահանման կեղծ կոնտրակտները, անհիմն արտահանվող ավանսները և դրանց չմարելը,
- ապրանքների արտահանման վճարումները, որոնք ընդհանրապես չեն արտահանվում,
- արտասահմանյան գործընկերների հետ պայմանավորվելով՝ արտահանվող ապրանքների գների արհեստական իջեցումը և ներմուծվող ապրանքների գների բարձրացումը,
- հայրենական արտադրանքի անլեգալ արտահանումը, երբ շրջանցվում է մաքսային հսկողությունը,

- մասնավոր անձանց կողմից արտասահմանյան արժույթի անլեգալ արտահանումը:

Կապիտալի արտահանումն ավելի քիչ է կարգավորվում, քան ներմուծումը: Պետությունը կիրառում է կապիտալի կարգավորման տարբեր մեթոդներ:

1. ***Ֆինանսական ազդեցության մեթոդներ***՝ հարկային արտոնություններ, դրամական օժանդակություն, փոխառությունների, վարկերի տրամադրում և երաշխավորում:
2. ***Ոչ ֆինանսական մեթոդներ***՝ հողային տարածքների տրամադրում, անհրաժեշտ ենթակառուցվածքների ապահովում, տեխնիկական օգնությունների ցուցաբերում:

11.2 Փոխատվական կապիտալի համաշխարհային շուկա

Փոխատվական կապիտալի համաշխարհային շուկան ստեղծվել է ազգային շուկաների բազայի վրա և ընդգրկում է տարբեր բանկեր, ընկերություններ, արժութա-վարկային հիմնարկներ, փոխատվական կապիտալի ազգային շուկաներ: Այն զարգացում ապրեց 20-րդ դարի վերջին քառորդին և դարձավ ՄՏՀ զարգացման կարևոր գործոններից մեկը: Փոխատվական կապիտալի համաշխարհային շուկան պետք է դիտարկել ***նեղ*** և ***լայն*** իմաստներով: ***Նեղ իմաստով*** այն իրականացնում է միջազգային վարկային գործարքներ և ընդգրկում է.

- ազգային շուկաներում արտասահմանյան վարկերի և փոխառությունների ներդրումները,
- եվրոշուկայում կատարվող ոչ կանխիկ ավանդային փոխատվական գործարքները:

Լայն իմաստով փոխատվական կապիտալի համաշխարհային շուկան փոխատվական կապիտալի կենտրոնացման և վերաբաշխման տնտեսական մեխանիզմ է, փոխատվական կապիտալի ազգային շուկաների և եվրոշուկայի ամբողջություն:

Փոխատվական կապիտալի համաշխարհային շուկան լինում է ինստիտուցիոնալ գործարքային և ընդգրկում է կենտրոնական բանկերը, միջազգային ֆինանսավարկային կազմակերպությունները, մասնավոր ֆինանսական հիմնարկները (առևտրային բանկեր, ապահովագրական ընկերություններ, կենսաթոշակային ֆոնդեր), բորսաները: Փոխատվական կապիտալի շուկան բաժանվում է 3 հատվածի:

1. ***Համաշխարհային դրամական շուկա*** (եվրովարկերի, ավանդային գործարքների, արժույթի):
2. ***Համաշխարհային ֆինանսական շուկա*** (փոխառությունների, պարտատոմսերի):
3. ***Միջազգային ֆինանսական կենտրոնների մասնագիտացում*** ըստ վարկաֆինանսական գործունեության տեսակների: Այսպես, Լոն-

դոնը հայտնի է եվրոարժութային գործարքների, Լյուքսեմբուրգը՝ ֆոնդային, Ցյուրիխը՝ միջազգային կապիտալի բորսաներով, ոսկու շուկաներով: Առավել խոշոր են Նյու Յորքի, Լոնդոնի, Տոկիոյի, Փարիզի, Ցյուրիխի, Լյուքսեմբուրգի, Հոնկոնգի, Սինգապուրի միջազգային ֆինանսական կենտրոնները: Միջազգային արժութային գործարքների 50 տոկոսը կատարում են Լոնդոնի, Նյու Յորքի, Տոկիոյի արժութային շուկաները: Իսկ Լոնդոնի շուկան առաջին տեղն է գրավում արժութային, ավանդների գործարքներով: Առաջատար դեր ունի Ճապոնիան: 1990-2000 թթ. նրա կապիտալի արտահանման ծավալը Եվրոպայում կրկնապատկվեց: Եվրոպայում գործող ոչ եվրոպական 50 խոշոր արդյունաբերական կոնցեռնից 42-ը ճապոնական էին, 4-ը՝ հարավկորեական, 2-ը՝ ավստրալիական, 1-ականը՝ ամերիկյան և Թայվանի: Արտասահմանյան 25 խոշոր բանկերից 23-ը ճապոնական էին, 1-ը՝ չինական, 1-ը՝ Հոնկոնգի:

ԵՄ երկրներն ԱՄՆ-ի և Ճապոնիայի նկատմամբ վարում են միասնական առևտրական քաղաքականություն՝ միաժամանակ կիրառելով բավարար հովանավորչություն: Սակայն տնտեսական հակասությունները սրվում են ինչպես Արևմտյան Եվրոպայի երկրների, այնպես էլ ԱՄՆ-ի և Ճապոնիայի միջև: 1995 թ. Ճապոնիայի հաշվեկշիռն ԱՄՆ-ի հետ ակտիվ էր և կազմում էր 40.1, իսկ ԵՀԵ-ի հետ՝ 12.1 մլրդ դոլար: 2000 թ. այն, համապատասխանաբար, կազմում էր 38.2 և 18.8 մլրդ դոլար:

ԱՄՆ-ի, Արևմտյան Եվրոպայի և Ճապոնիայի միջև հակասությունները կապիտալի արտահանման և ներմուծման ոլորտում ուժեղանում են: Եթե 1960-ական թվականներին բնորոշ էր ամերիկյան կապիտալի ակտիվ հոսքն Արևմտյան Եվրոպա, ապա 1971-1980 թթ. ԱՄՆ-ից Եվրոպա արտահանվեցին 134.4, իսկ Արևմտյան Եվրոպայից՝ 138.5 մլրդ դոլար ուղղակի ինվեստիցիաներ: 1980-ական թվականներին արևմտաեվրոպական երկրների կապիտալի հոսքն ԱՄՆ ուժեղացավ և առաջին անգամ գերազանցեց ԱՄՆ ինվեստիցիաների գումարին: 1995 թ. ԱՄՆ ուղիղ ինվեստիցիաների ընդհանուր գումարը դեպի արևմտաեվրոպական երկրներ կազմեց 106.8, իսկ Արևմտյան Եվրոպայի երկրներից ԱՄՆ՝ 120.9 մլրդ դոլար:

Կապիտալի շուկաների ընդլայնումն ավելացնում է արժեթղթերի առաջարկն ու պահանջարկը և գործարքների կատարման ինստիտուցիոնալ ծավալները: Ներկայում ուղղակի ինվեստիցիաների ձևով կապիտալի արտահանումը զարգացած երկրների միջև կազմում է արտասահմանյան ինվեստիցիաների մոտ 30 տոկոսը: Սակայն իրենց միջոցները ոչ լրիվ օգտագործելու և օգուտների կրճատման վախից արևմտյան երկրների առևտրային բանկերն իրենց ռեսուրսների մի մասը տրամադրում են զարգացող երկրներին:

11.3 Միջազգային վարկային համակարգ, դասակարգումը և տեսակները

Վարկային համակարգը ֆինանսական կապիտալ հավաքագրող, մոբիլացնող և իրացնող ինստիտուտների ամբողջություն է, որը կառավարվում է վարկային մեխանիզմի միջոցով: Այն իրականացնում է.

- դրամական միջոցների կենտրոնացման և մոբիլացման գործընթաց,
- վարկային ինստիտուտների և օտարերկրյա հաճախորդների միջև դրամական կապիտալի վերաբաշխում:

Վարկային համակարգն ընդգրկում է հետևյալ օղակները.

- Կենտրոնական բանկ, պետական և կիսապետական բանկեր,
- բանկային սեկտորներ՝ առևտրային, խնայողական, ինվեստիցիոն, հիպոթեքային, մասնագիտացած բանկեր,
- ապահովագրական սեկտորներ, ընկերություններ, կենսաթոշակային ֆոնդեր,
- մասնագիտացած ոչ բանկային վարկաֆինանսական ինստիտուտներ՝ ինվեստիցիոն և ֆինանսական ընկերություններ, բարեգործական ֆոնդեր, փոխատվական, խնայողական և վարկային միություններ:

Ավելի զարգացած է ԱՄՆ վարկային համակարգը: Արևմտյան Եվրոպայի երկրների (Ֆրանսիա, Իտալիա, Իսպանիա, սկանդինավյան երկրներ) վարկային համակարգում զարգանում են բանկային և ապահովագրական սեկտորները և քիչ պակաս՝ մասնագիտացած սեկտորը: Այստեղ ձևավորվել է պետական և կիսապետական ինստիտուտների լայն ցանց, որն ընդգրկում է առևտրային և խնայողական բանկերը, ապահովագրական ընկերությունները:

Գերմանիայում բանկային սեկտորը հիմնվում է առևտրային, խնայողական և հիպոթեքային բանկերի վրա: Ինվեստիցիոն բանկերի համակարգն այստեղ ավելի քիչ է զարգացած, քան ԱՄՆ-ում, Անգլիայում, Կանադայում, և առևտրային բանկերը կատարում են նաև ինվեստիցիոն բանկերի գործառույթ:

Ֆրանսիային բնորոշ են ավանդային, գործառնային բանկերը, որոնք կատարում են ինվեստիցիոն և խնայողական բանկերի գործառույթներ:

Ճապոնիայի բանկային համակարգը ձևավորվել է ամերիկյան տիպի հիման վրա և ունի Կենտրոնական բանկ, բանկային և մասնագիտացած սեկտորներ: Մասնագիտացած վարկաֆինանսական ինստիտուտների սեկտորում զարգացել են ապահովագրական և ինվեստիցիոն ընկերությունները:

Զարգացող երկրների վարկային համակարգը թույլ է զարգացած: Այստեղ հիմնականում գործում է երկշարք համակարգ՝ Կենտրոնական

և առևտրային բանկեր: Ասիական մի շարք երկրներում (Հարավային Կորեա, Սինգապուր, Հոնկոնգ, Հնդկաստան, Ինդոնեզիա և այլն) վարկային համակարգը բավարար զարգացած է:

Ռուսաստանի Դաշնության վարկային համակարգը ևս երկշարք է՝ Կենտրոնական բանկ և խնայողական ու առևտրային բանկեր: ՌԴ-ում գործում է մոտ 2400 առևտրային բանկ, ավելի քան 2000 ապահովագրական ընկերություն, մեծ քանակով ինվեստիցիոն ֆոնդեր:

Այսպիսով, վարկային համակարգի զարգացումը կապիտալի կուտակման կարևոր նախադրյալներից էր, որը նպաստում է արդյունաբերության աճին և ԳՏՀ իրականացմանը բոլոր երկրներում:

Միջազգային վարկերն իրենցից ներկայացնում են փոխատվական կապիտալի շարժ ՍՏՀ ոլորտում: Դրանք տրվում են որևէ պետության բանկերի, ինչպես նաև իրավական և ֆիզիկական անձանց կողմից այլ պետությունների, բանկերի, իրավական անձանց: Վարկերը տրամադրվում են ժամկետով, վերադարձնելու և տոկոսներ վճարելու պայմանով: Օտարերկրյա վարկերը ընդլայնում են սպառումը, զարգացնում տնտեսությունը, ապահովում տնտեսական աճ, վճարունակություն, արտադրանքի արտահանում: Միջազգային վարկերի համար միջոցները մոբիլացվում են պետական և միջազգային կազմակերպությունների ռեսուրսների հաշվին: Միջազգային վարկերի ***գլխավոր գործառույթը*** փոխատվական կապիտալի վերաբաշխումն է երկրների միջև:

Վարկային ***քաղաքականությունը*** բանկերի կողմից իրականացվող տնտեսվարող սուբյեկտների միջև ապրանքների և ծառայությունների պարտավորությունների ստանձնումն է:

Միջազգային վարկերը ***դասակարգվում*** են.

- ըստ գոյացման աղբյուրների,
- ըստ նշանակության՝ առևտրային արտադրական և ոչ արտադրական,
- ըստ ծախսման նշանակության՝ ուղղակի կապիտալ ներդրումների, շինարարական օբյեկտների, արժեթղթերի ձեռք բերման, արտաքին պարտքերի մարման, ինվեստիցիաների, խառը կապիտալների, ապրանքների և ծառայությունների արտահանման սպասարկման համար:

Ըստ ***տեսակների***՝ միջազգային վարկերը լինում են.

- ապրանքային, որը տրվում է արտահանողների կողմից ներմուծողներին,
- արժութային, որը տրվում է բանկերի կողմից դրամական ձևով, պարտապան, կրեդիտոր կամ երրորդ երկրի արժույթով՝ միջազգային հաշվարկային դրամական միավորով արտահայտված (դոլար, էքյու և այլն):

Ըստ ***տևողության***՝ միջազգային վարկերը լինում են.

- ***կարճաժամկետ*** (մինչև մեկ տարի),

- ***միջին ժամկետի*** (երկուսից հինգ տարի),
- ***երկարաժամկետ*** (հինգ տարուց ավելի):

Երկարաժամկետ վարկավորման հիմնական ձևը միջազգային փոխառությունն է:

Ըստ ***ապահովվածության*** վարկերը լինում են.

- ***ապահովված*** (ապրանքներով, արժեթղթերով, անշարժ գույքով),
- ***ոչ ապահովված:***

Ըստ ***տրամադրման ձևի***՝ վարկերը լինում են.

- ***կանխիկ***՝ անմիջապես վճարելու պայմանով,
- ***ակցեպտային***՝ բանկերի կողմից տրվող ավանդային սերտիֆիկատներով:

Ըստ ***վարկատուների բնույթի***՝ լինում են ***մասնավոր, կառավարական, միջազգային, տարածաշրջանային կազմակերպությունների վարկեր:***

Արտաքին առևտրի վարկավորումը լինում է ***արտահանման*** և ***ներմուծման: Արտահանման*** վարկավորում կատարվում է, երբ ներմուծողի կողմից օտարերկրյա արտադրողներին տրվում է ավանսային վճար: Ապրանքների դիմաց վարկերի վճարումը կատարվում է ներմուծողի երկրում, ինչն արտահանողին հնարավորություն է տալիս շարունակելու ապրանքների արտահանման գործընթացը՝ չսպասելով ապրանքների ուղարկմանը:

Ներմուծվող վարկերը լինում են ***առևտրային*** և ***բանկային:*** Առևտրային վարկը տրվում է ձեռնարկությունների, միավորումների և տնտեսական սուբյեկտների կողմից: Նպատակն ապրանքների իրացումն արագացնելն է: Առևտրային վարկի գումարը կախված է ընկերությունների ունեցած պահուստային կապիտալի մեծությունից:

Բանկային վարկերը բանկերի և վարկաֆինանսական ինստիտուտների կողմից դրամական փոխատվության ձևով տրվում են իրավաբանական անձանց, պետությանը, արտասահմանյան գործընկերներին, արդյունաբերական, տրանսպորտային, շինարարական, առևտրական ընկերություններին: Դրանք ունեն կիրառման ավելի լայն ոլորտ, քան առևտրային վարկերը: Բանկային վարկն ունի լայն մասշտաբներ, բարձր ապահովվածություն:

Գոյություն ունեն բանկային վարկերի մի քանի ձևեր:

1. Սպառողական վարկ: Սա վարկաֆինանսական ինստիտուտների կողմից տրվում է առևտրական ընկերություններին՝ ապրանքներ և ծառայություններ ձեռք բերելու համար՝ 3 տարով, 10-25 տոկոսադրույքով:

2. Հիպոթեքային վարկ: Սա տրվում է բնակելի շինություններ կամ հող գնելու համար: Այդպիսի վարկ տալիս են բանկերը և մասնագիտացած վարկաֆինանսական ինստիտուտները տարբեր ժամկետ-

ներով: Հիպոթեքային վարկն ավելի մեծ կիրառում ունի ԱՄՆ-ում, Կանադայում, Անգլիայում: Վարկի դիմաց վճարվում է 15-30 և ավել տոկոսադրույք:

3. Պետական վարկ: Սա պետք է բաժանել պետական վարկի և պետական պարտքի: Առաջինի դեպքում պետական վարկային ինստիտուտները վարկավորում են տնտեսության տարբեր հատվածների, երկրորդի դեպքում պետությունը բանկերից դրամական միջոցներ է փոխառում բյուջետային դեֆիցիտի և պարտքերի ֆինանսավորման համար:

1940-50 թթ. խոշոր դրամական կապիտալ փոխանցվեց Եվրոպայից ԱՄՆ, Լատինական Ամերիկա, Ֆրանսիայից՝ Շվեյցարիա և ԱՄՆ: Միայն 1961 թ. շվեյցարական բանկում արտասահմանյան ավանդների գումարը կազմեց 2.7 մլրդ դոլար: Գաղութային շատ երկրներ 1940-1950-ական թվականներին իրենց ընթացիկ հաշիվներն ունեին Լոնդոնի բանկերում: Սակայն Անգլիան «սառեցրեց» իր գաղութների և մյուս երկրների հաշիվները:

Արտասահմանյան բանկերում ընթացիկ հաշիվներ ունենալու համար.

- պետությունը պետք է բաժնային մասնակցություն ունենա վարկային գործունեության մեջ,
- պետության կողմից պետք է սահմանվի առևտրային բանկերի պարտադիր պահուստների գումար, որպեսզի դրանց մի մասը պահվի սեփական Կենտրոնական բանկում,
- պետք է իրականացվի վարկային ճիշտ քաղաքականություն:

Պետությունների կողմից միջազգային կապիտալի շարժի կարգավորումը կատարվում է որոշ հակասություններով: Պետությունը ձգտում է հանել միջազգային կապիտալի շարժի սահմանափակումները: Միջազգային կապիտալի շարժի պետական կարգավորման համար հիմք են ազգային օրենքները, ազգային ռեժիմի կիրառումը:

11.4 Միջազգային հաշվարկներ

Միջազգային հաշվարկներն իրենցից ներկայացնում են վճարումների կազմակերպում և կարգավորում: Դրանք հանդես են գալիս որպես բանկերի ամենօրյա գործունեություն՝ կատարելով հաշվարկներ օտար երկրների հետ միջազգային հաշվարկների հիման վրա: Միջազգային հաշվարկների ոլորտում բանկերի գործունեությունը նաև պետական կարգավորման գործընթաց է:

Միջազգային հաշվարկները տարբեր երկրների տնտեսական, ԳՏ և ծառայողական հարաբերությունների հետևանքով գոյացած դրամական պահանջների և պարտավորությունների վճարումներ են: Այդ հաշվարկներն ընդգրկում են արտաքին առևտրի և ծառայությունների,

ոչ առևտրական գործարքների, երկրների միջև վարկերի և կապիտալի շարժի հաշվեկշիռները: Միջազգային բազմաձև հաշվարկները լինում են ***առևտրային*** և ***ոչ առևտրային:***

Առևտրային հաշվարկներն ընդգրկում են.

- արտաքին առևտրային գործարքների,
- միջազգային վարկերի,
- տրանսպորտի տարբեր տեսակներով բեռների միջազգային փոխադրումների վճարումները և մուտքերը:

Ոչ առևտրային հաշվարկներն ընդգրկում են.

- դիվանագիտական, ներկայացուցչական և միջազգային կազմակերպություններին վճարումները,
- պատգամավորական, մասնագետների խմբերին, այլ երկրների քաղաքացիներին մատուցված ծառայությունների ծախսերը,
- դրամական փոխանցումներն արտասահման:

Միջազգային հաշվարկները լինում են ***փաստաթղթային*** (չեկեր, գրություններ և այլն) և ***առևտրային*** (հաշիվ ֆակտուրաներ, տրանսպորտային բեռնագրեր, ապահովագրական վկայականներ, սերտիֆիկատներ և այլն) բնույթի: Համաշխարհային պրակտիկան մշակել է միջազգային հաշվարկների այնպիսի ձևեր և մեթոդներ, ինչպիսիք են ***ինկասոն, ակրեդիտիվը, բանկային փոխանցումները, ավանսային հաշվարկները,*** ինչպես նաև ***պարտատոմսերի, մուրհակների*** և ***չեկերի*** հաշվարկները:

Հաշվարկների ձևերի ընտրությունը կատարվում է գործոնների պահանջով: Ընտրված ձևերը համաձայնություններ են, որոնց դեպքում հաշվի են առնվում կոնտրագենտների տնտեսական դիրքը, միմյանց նկատմամբ վստահության աստիճանը, քաղաքական իրավիճակը:

Ինկասոյի դեպքում բանկն իր հաճախորդների հանձնարարությամբ ստանում է վճարում ներմուծողներից ապրանքների բեռնման և ծառայություններից հետո:

Հաշվարկների ***ակրեդիտիվային*** ձևն ավելի նպատակահարմար է արտահանողների համար: Ակրեդիտիվի հաշվարկում բանկը հաճախորդի խնդրանքով հանձնարարություն է կատարում երրորդ անձի օգտին՝ վճարելով ակրեդիտիվի գումարի 0.2-0.6 տոկոսի չափով: Ակրեդիտիվը կարող է ապահովել նաև կարճաժամկետ վարկ, բանկի համաձայնությամբ կատարել գնումների հաշվարկ: Արտահանողը և ներմուծողը կնքում են համաձայնագիր ապրանքների մատակարարման և ծառայությունների համար՝ նշելով, որ հաշվարկը կատարվում է ակրեդիտիվի ձևով:

Արտահանողին ձեռնտու է վճարը ստանալ ***ավանսի*** ձևով մինչև ապրանքի մատակարարումը համաձայնագրի ընդհանուր գումարի 1/3-ի չափով: Այս ձևը կարող է կիրառվել այն դեպքում, երբ ներմուծո-

ղը շահագրգռված է ապրանք ստանալու համար կամ ունի հակադրվելու պատճառներ:

Վերջին տարիներին միջազգային հաշվարկներում լայնորեն կիրառվում են ***վարկային քարտերը, պարտատոմսերը, մուրհակները, չեկերը*** որպես դրամական փաստաթուղթ, որը հնարավորություն է տալիս ձեռք բերելու ապրանքներ, ծառայություններ առանց կանխիկ վճարումների:

Կապի էլեկտրոնային միջոցների զարգացումը միջազգային հարաբերություններում հնարավորություն է տալիս վճարումներ կատարելու համացանցի միջոցով: Միջազգային բոլոր ֆինանսական հարաբերություններն ընդհանրացվում են միջազգային ֆինանսական հաշվարկների հաշվեկշիռներում: Միջազգային հաշվեկշիռները լինում են ***հաշվարկային, վճարային*** և ***պետության արտաքին պարտքեր***:

Հաշվարկային հաշվեկշիռը (ՀՀ) մի երկրի պարտավորությունների և պահանջների հարաբերությունն է մյուս երկրների հետ (մեկ տարում): Օրինակ՝ ապրանքների և ծառայությունների արտահանման (ներմուծման) համար վճարումները: Հաշվեկշռի ակտիվ հոդվածները ցույց են տալիս, որ երկիրն ավելի շատ արտահանել է, քան ներմուծել: Հաշվեկշռի պասիվ հոդվածներն արտացոլում են օտարերկրյա վարկերի և ինվեստիցիաների դիմաց երկրի պարտքերի գումարը:

Միջազգային ***հաշվարկների հաշվեկշիռն*** ընդգրկում է առևտրային հաշվեկշիռը, ոսկու արտահանումը և ներմուծումը, ծառայություններից, զբոսաշրջությունից, օտարերկրյա ինվեստիցիաներից ստացվող եկամուտները և ծախսերը: Այս հոդվածներն ընդգրկվում են նաև վճարային հաշվեկշիռների ընթացիկ հաշիվներում: ՀՀ-ը ցույց է տալիս տվյալ երկրի՝ որոշակի ժամանակում ունեցած կամ ստանալիք պարտքի գումարը:

Պետության հաշվարկային հաշվեկշիռ

Ակտիվ	Պասիվ
Բաժնետոմսեր, փոխառություններ, ընթացիկ հաշիվներ, մուրհակներ, անշարժ գույք, ներդրումներ արտասահմանյան բանկերում	Երկրից դուրս եղած բոլոր պարտավորությունները

Երկրների միջև տնտեսական, քաղաքական և մշակութային կապերի ստեղծման, արտաքին առևտրի, վարկերի, տրանսպորտային ծառայությունների, զբոսաշրջության, դիվանագիտական ներկայացուցչության պահպանման և այլ ֆինանսական գործարքները ձևակերպվում են ***միջազգային հաշվարկներով***: Փոխադարձ հաշվարկները հիմնականում կատարվում են բանկերի միջոցով: Միջազգային վճարումների մոտ 90 տոկոսն իրականացվում է փոխատվական կապիտալի շարժով: Տարբեր երկրների բանկերը պահպանում են փոխադարձ թղթակցական կապեր, բացում ընթացիկ հաշիվներ: Դա հնարավորություն է տալիս հաշվարկների մեծ մասն իրականացնելու ոչ կանխիկ ձևով: Միջազգային հաշվարկներում կանխիկ գումարով վճարում հիմնականում կատարվում է որևէ պատվիրակության՝ արտասահման մեկնելու ժամանակ, երբ սեփական երկրի բանկից համապատասխան գումար է փոխանցվում պատվիրակությանն ընդունող երկրին: Երկրների միջև պահանջները և պարտավորությունները հիմնականում փոխհատուցվում են վարկային միջոցներով, մուրհակներով, չեկերով, վճարման հանձնարարականներով:

Վճարային հաշվեկշիռը (ՎՀ) մեկ տարում երկրի կողմից արտասահմանին կատարած վճարումների և արտասահմանից ստացած մուտքերի գումարների հարաբերությունն է: Այն, որպես հաշվարկ, օգտագործվում է ***«շուկայական վճարման հաշվեկշիռ»*** և ***«հաշվարկային վճարային հաշվեկշիռ»*** ձևերով: Առաջինը վճարումն է ստացած ապրանքների դիմաց, երկրորդը՝ հաշվետվություն, որը թույլ է տալիս պատկերացում ստանալ մյուս երկրների հետ տվյալ երկրի հարաբերությունների մասին:

Վճարային հաշվեկշիռը կազմված է ընթացիկ, կապիտալի ու ֆինանսական հաշիվներից: ***Ընթացիկ*** հաշվում գրանցվում են ապրանքների, ծառայությունների, եկամուտների և ընթացիկ տրանսֆերտների հետ կատարված գործառնությունները: ***Կապիտալի ու ֆինանսական*** հաշվում գրանցվում են ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների շարժը և տրանսֆերտները: ՎՀ կազմման ժամանակ օգտվում են Ազգային հաշիվների համակարգից, որը մշակվել է ՄԱԿ-ի և ԱՀԿ-ի կողմից: Ըստ ԱՄՀ-ի՝ ՎՀ-ը վիճակագրական հաշվետվություն է, որը պարունակում է երկրի արտաքին տնտեսական գործունեության քանակական և որակական գնահատումները, արտաքին ֆինանսական աղբյուրներից կախվածության աստիճանը: Երկրի վճարային հաշվեկշռում մեծ տեսակարար կշիռ ունեն գործոնային եկամուտները և տրանսֆերտները:

2011 թ. եվրագոտու 17 երկրների (Բելգիա, Գերմանիա, Իռլանդիա, Իսպանիա, Իտալիա, Ավստրիա, Կիպրոս, Լյուքսեմբուրգ, Մալթա, Նիդեռլանդներ, Պորտուգալիա, Սլովենիա, Սլովակիա, Էստոնիա, Ֆրանսիա, ֆինլանդիա, Հունաստան) վճարային հաշվեկշիռների ընթացիկ գործարքների դեֆիցիտը նույն թվականի ապրիլին կազմել է 5.1 մլրդ եվրո, ինչը 70 տոկոսով գերազանցում է մարտյան ցուցանիշը[70]: Համաշխարհային տնտեսության աճի դանդաղումը պայմանավորված է եվրագոտում պարտքային խնդիրներով: ՀՏ-ի վրա բացասական ազդեցություն ունեցող գործոններից են Մերձավոր Արևելքի

[70] Եվրոպական ԿԲ փաստաթղթեր

քաղաքական անկայունությունը, հումքատեսակների գների բարձրացումը, ԱՄՆ բյուջետային խնդիրները, Ճապոնիայի երկրաշարժը:

Հաշվարկային և վճարային հաշվեկշիռների միջև հիմնական տարբերությունն այն է, որ հաշվարկային հաշվեկշիռն ընդգրկում է արտասահմանի նկատմամբ տվյալ երկրի պահանջները և պարտավորությունները՝ ներառյալ չմարվածները, իսկ վճարային հաշվեկշռում արտացոլվում են միայն փաստացի կատարված մուտքերը և վճարումները:

Հաշվարկային և վճարային հաշվեկշիռների ակտիվ կամ պասիվ վերջնական մնացորդները (սալդո) չեն համընկնում, քանի որ վարկատու երկրների ՎՀ-ն ակտիվ է, իսկ հատկապես ընթացիկ գործարքների վճարային հաշվեկշիռները պարբերաբար պասիվանում են: Պարտապան երկրների ՀՀ պասիվները հաճախ համընկնում են ՎՀ ակտիվների հետ: ՎՀ հրապարակման համար ՄԱԿ-ը, ԱՄՀ-ը, ՅՈՒՆԿՏԱԴ-ն ունեն հատուկ կարգավիճակ:

Ըստ հրապարակված գործարքների բնույթի՝ վճարային հաշվեկշիռներն ունեն.

1. ***Կապիտալի և վարկերի շարժի բաժին*** (կարճաժամկետ և երկարաժամկետ գործարքներ, միջազգային պաշտոնական պահուստներ):
2. ***Ընթացիկ գործարքների բաժին,*** որն ընդգրկում է.

- առևտրի հաշվեկշիռը (գործարքների վճարումներ և մուտքեր),
- ծառայությունների և ոչ առևտրական վճարումների հաշվեկշիռը (միջազգային փոխադրումներ, ապահովագրում, արտոնագրեր),
- տեխնիկական օգնությունների հաշվարկները,
- եկամուտները և վճարումներն ըստ ինվեստիցիաների,
- ընթացիկ տրանսֆերտները:

Ընթացիկ գործարքների հաշվեկշիռն ընդգրկում է ապրանքների արտահանումը և ներմուծումը, ապրանքների և ծառայությունների առևտրի եկամուտները, մասնավոր և պետական տրանսֆերտները (առևտրի հաշվեկշիռը):

Առևտրի հաշվեկշիռը որոշակի ժամանակում երկրի արտահանած և ներմուծած ապրանքների գումարի հարաբերությունն է: Եթե արտահանված ապրանքների գումարը գերազանցում է ներմուծման գումարին, ապա առևտրի հաշվեկշիռն ակտիվ է: Հակառակ դեպքում այն պասիվ է: Արտահանման և ներմուծման գումարները համընկնելու դեպքում առաջանում է մաքուր (նետտո) հաշվեկշիռ:

Առևտրի հաշվեկշռի դեֆիցիտը պետք է ծածկել.

- վճարային հաշվեկշռի մուտքերի հաշվին,
- սեփական տրանսպորտի ծառայությունների միջոցներով,
- արտասահմանում կապիտալ ներդրումների և սեփական երկրում օտարերկրյա կապիտալի, վարկերի տոկոսներով և դիվիդենտով,

- օտարերկրյա արժութային պահուստներով և ոսկու արտահանումով:

Առևտրի հաշվեկշիռը բնութագրում է.

- երկրի տնտեսական վիճակը և արտասահմանից կախման աստիճանը,
- արտահանման և ներմուծման գումարի տարբերությունը,
- ծառայությունների մուտքերը և վճարումները (զբոսաշրջություն, փոխադրումներ),
- եկամուտները՝ արտասահմանում կապիտալ ներդրումներից,
- լիցենզային վճարումները և մուտքերը,
- օգնությունն արտասահմանից կամ հակառակը,
- ռազմական ծախսերն արտասահմանում կամ նման այլ մուտքեր,
- միջազգային բարեգործական ներդրումների վճարումները:

Կապիտալի և վարկերի հաշվեկշիռն արտացոլում է միջպետական կապիտալների շարժը՝ երկարաժամկետ ներդրումները բիզնեսում, բաժնետոմսերի և փոխառությունների գնումը: Կապիտալի կարճաժամկետ շարժը կատարվում է միջբանկային գործարքների հաշվին: Միջազգային վճարային հաշվեկշիռներում արտացոլվում են նաև.

- հիմնական ֆինանսական միջոցների (մասնավոր և պետական) հաշիվները,
- պետական պաշտոնական կարգավորումների (կառավարության կողմից ոսկու արտահանման կամ ներմուծման) տվյալները:

Վճարային հաշվեկշռի կազմման սկզբունքը կրկնակի գրանցումն է: Գրանցումներից մեկը համարվում է կրեդիտ (+ նշանով), որը ցույց է տալիս ակտիվների նվազում կամ պասիվների աճ, մյուսը՝ դեբետ (- նշանով), որը նշանակում է ակտիվների աճ կամ պասիվների նվազում: Տեսականորեն բոլոր կրեդիտային գրանցումների գումարը պետք է հավասար լինի բոլոր դեբետային գրանցումների գումարին: Սակայն պրակտիկայում վճարային հաշվեկշիռը ոչ միշտ է լինում զրոյական՝ կապված տարբեր պատճառների հետ: Շատ երկրներում ՎՀ-ը կազմում են Կենտրոնական բանկերը: ՀՀ-ում ՎՀ-ը 1993 թ.-ից պաշտոնապես կազմում է ՀՀ Ազգային վիճակագրական ծառայությունը, իսկ 1996թ.-ից այն կազմվում է ԱՄՀ առաջարկած տարբերակով: Արտաքին առևտրի տեղեկատվությունը հավաքագրվում է Պետական մաքսային կոմիտեից, Կենտրոնական բանկից, արտաքին պարտավորությունների վերաբերյալ՝ Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունից և այլ գերատեսչություններից: ՀՀ-ում, որպես վճարային հաշվեկշռի հաշվարկային միավոր, կիրառվում է ԱՄՆ դոլարը:

ՄՏՀ-ը բնութագրող մյուս ցուցանիշը միջազգային ներդրումային դիրքն է, որն արտացոլում է երկրի արտաքին ֆինանսական ակտիվները և պարտավորությունները:

Աղյուսակ 11.2

Վճարային հաշվեկշռում գործառնությունների գրանցման սխեմա

Գործառնություններ	Կրեդիտ (+)	Դեբետ (-)
Ապրանքներ և ծառայություններ	Ապրանքների և ծառայությունների արտահանում	Ապրանքների և ծառայությունների ներմուծում
Եկամուտներ	Ստացված եկամուտներ ոչ ռեզիդենտներից	Վճարված եկամուտներ ոչ ռեզիդենտներին
Ընթացիկ և կապիտալ տրանսֆերտներ	Ստացված միջոցներ	Տրված միջոցներ
Ոչ արտադրական և ոչ ֆինանսական ակտիվների ձեռք բերում կամ վաճառք	Ակտիվների վաճառք	Ակտիվների ձեռք բերում
Գործառնություններ ֆինանսական ակտիվների կամ պարտավորությունների հետ	Ոչ ռեզիդենտների նկատմամբ պահանջների նվազում կամ պարտավորությունների աճ	Ոչ ռեզիդենտների նկատմամբ պահանջների աճ կամ պարտավորությունների նվազում

11.5 Վճարային հաշվեկշռի կարգավորումը և պետության ընդհանուր պարտքերը

Միջպետական Վճարային հաշվեկշռի (ՎՀ) կարգավորումը պետական ֆինանսական կարգավորման քաղաքականություն է: Իր բնույթով ՎՀ-ը չի կարող լինել մշտապես ակտիվ կամ պասիվ: Վերջինը բերում է արժույթի կուրսի անկայունություն, բացասաբար է ազդում երկրի տնտեսության վրա: Միջազգային հաշվարկների հավասարակշռվածության պահպանումը պահանջում է տնտեսական աճի ապահովման, արժեզրկման և գործազրկության դեմ պայքարի պետական միջոցառումներ:

Կախված երկրի միջազգային հաշվարկների տնտեսական իրավիճակից՝ ՎՀ կարգավորման մեթոդներն ուղղված են արտաքին տնտեսական գործարքների խթանմանը: Դեֆիցիտային վճարային հաշվեկշիռ ունեցող երկրներն արտահանումը խթանելու, ներմուծումը սահմանափակելու, արտաքին կապիտալ ներգրավելու համար կիրառում են հետևյալ կարգավորող միջոցառումները.

- վարում են դեֆլյացիոն քաղաքականություն,
- կատարում են դևալվացիա,
- մտցնում են արժութային սահմանափակումներ,
- վարում են ֆինանսական և դրամավարկային քաղաքականություն,

- իրականացնում են վճարային հաշվեկշռի վրա ազդող միջոցառումներ:

Ակտիվ վճարային հաշվեկշռի դեպքում կարգավորումն ուղղված է չափազանց ակտիվ սալդոյի (հաշվեմնացորդ) վերացմանը: Այդ նպատակով ֆինանսական, վարկային, արժութային ռևալվացիան օգտագործվում է ապրանքների ներմուծման ընդլայնման և արտահանման սահմանափակման, կապիտալի արտահանման և ներմուծման սահմանափակման համար: Ակտիվ սալդոն օգտագործվում է երկրի արտաքին պարտքերի մարման, այլ երկրներին վարկեր տրամադրելու, ոսկեարժութային պահուստների ավելացման համար:

Վճարային հաշվեկշռի կարգավորումը կատարվում է վերլուծության հիման վրա, որի նպատակն է պարզել եկամուտների և ծախսերի հավասարակշռությունը: Հաշվեկշռի հոդվածները պետք է ուսումնասիրել առանձին-առանձին, բացահայտել յուրաքանչյուրի մնացորդը և միմյանց հետ կապերը: Հաշվեկշռի վերլուծությունը կատարվում է.

- դիտարկելով առևտրի (արտահանում-ներմուծում), ծառայությունների, ինվեստիցիաների և միակողմանի տրանսֆերտային վճարումների մնացորդները, եկամուտների գոյացման աղբյուրները և ծախսերի ուղղությունները, բացահայտելով ազգային եկամտի ձևավորման և նրա օգտագործման ցուցանիշները, դրանց ազդեցությունը պետության արտաքին գործարքների վրա,
- վերլուծելով ապրանքների, ծառայությունների տրանսֆերտային գործարքների և մասնավոր կապիտալի շարժը և որոշելով դեֆիցիտի կամ դրական մնացորդի ծավալը:

Պետության արտաքին պարտքն ԱՄՀ-ին, Համաշխարհային բանկին, միջազգային տարածաշրջանային և մասնավոր բանկերին, կառավարություններին և այլ ֆինանսական կազմակերպություններին պետության կողմից երաշխավորված և մասնակիորեն չերաշխավորված երկարաժամկետ և կարճաժամկետ վարկերի ու պետական այլ պարտքերի գումար է: Պարտքերի մեջ մտնում են նաև չմարված արտաքին փոխառությունները և նրանց չվճարված տոկոսները: Պետության արտաքին պարտքը պետության դեբիտորների գումարն է՝ ներառյալ ազգային կառավարության, նրա գործակալությունների և պետական ավտոնոմ օրգանների, ինչպես նաև պետության կողմից երաշխավորված արժույթի, փոխառությունների, մասնավոր դեբիտորների արտաքին պարտավորությունները, որոնցով երաշխավորվում է պետական այս կամ այն հիմնարկությունը:

Միջազգային վարկային միջոցների ներգրավումը հնարավորություն է տալիս ընդլայնելու մասնավոր սեկտորի պահանջները, ստեղծելու համատեղ ձեռնարկություններ, ծածկելու երկրի պետբյուջեի դեֆիցիտը, իրականացնելու ռազմավարական ծրագրեր:

ԱՄՀ վարկերը ժամանակին չվճարելու դեպքում տարվա վերջին պարտքի գումարը հաշվարկվում է ԱՄՆ դոլարով՝ փոխարկելի կուրսով: Եթե պետության արտաքին պարտքի ժամկետը լրանում է ընթացիկ բյուջետային տարում, կոչվում է պետական ***ընթացիկ պարտք***, իսկ եթե վճարման ժամկետը դեռ չի մոտեցել՝ ***կապիտալ պարտք:***

Միջազգային վարկերի արագ աճը, ազգային բյուջեների դեֆիցիտն ավելացրել են մի շարք պետությունների արտաքին պարտքերը, որոնց հետևանքով վերջիններս կախման մեջ են ընկել վարկատու երկրներից: Աշխարհում չկա մի պետություն, որ չունենա ինչպես արտաքին, այնպես էլ ներքին պարտք: Օրինակ՝ Ռուսաստանի արտաքին պարտքի մեծ մասը բաժին է ընկնում պետական կառավարման սեկտորին, որը 1990 թ. հետո ունի ամենամյա բյուջետային դեֆիցիտ: Ռուսաստանի արտաքին պարտքը 2009 թ. հունվարի 1-ին եղել է 182 մլրդ դոլար, որից պետական կառավարման սեկտորինը՝ 106.9, միջազգային ֆինանսական կազմակերպություններինը՝ 15.9, մյուս կազմակերպություններինը՝ 59.2 մլրդ դոլար: ԱՊՀ արտաքին պարտքը կազմել է 328 մլրդ դոլար: Զարգացող երկրների պարտքի նորմը 1990 թ. 18.6-ից 2005 թ. հասել է 22.5 տոկոսի:

Ներկայում միջազգային պրակտիկայում գոյություն ունեն արտաքին պարտքի տարբեր բացատրություններ: Նախ արտաքին պարտքն օտարերկրյա արժույթով արտահայտված պարտավորությունների գումարն է (ներքին պարտքն ազգային արժույթով): Մյուս դեպքում այն դիտվում է որպես ոչ ռեզիդենտների պարտք:

Պետական պաշտոնական պարտքն արտաքին պարտքի այն մասն է, որի համար պատասխանատու են պետական պաշտոնական օրգանները:

Պետական մասնավոր արտաքին պարտքն ընկերությունների, բանկային և տեղական իշխանության օրգանների, պետական չերաշխավորված պարտքային պարտավորությունն է:

Զարգացող և անցումային երկրներում պետության արտաքին պարտքը մեծ է մասնավոր պարտքից: ԵՄ երկրներից ամենամեծ պարտքն ունեն Բելգիան (ՀՆԱ-ի նկատմամբ՝ 132 տոկոս), Իտալիան (124.4 տոկոս), Հունաստանը (111.8 տոկոս), Իռլանդիան (81.3 տոկոս): ԱՄՆ արտաքին պարտքը 2000 թ. կազմում էր 700 մլրդ դոլար (ՀՆԱ 65 տոկոսը): Մեծ պարտքեր ունեն նաև Մեքսիկան, Բրազիլիան, Արգենտինան, Ինդոնեզիան, Հնդկաստանը, Ֆիլիպինները, Հարավային Կորեան, Չինաստանը:

Ըստ ՀԲ կանոնների՝ արտաքին պարտքն ընդգրկում է երկրի կառավարության և ԿԲ վարկային պարտավորությունները, ինչպես նաև կառավարության և ԿԲ երաշխիքներն ու ստանձնած երկարաժամկետ վարկերը: Միջազգային վարկերի ֆինանսական պայմանների որոշման ժամանակ վարկատուն հաշվի է առնում վարկառուի հնարավորությունը և վճարունակությունը: Քանի որ միջազգային վարկի պայ-

մանները կախված են տնտեսության վիճակից, ուստի վարկի կարևոր պայմաններից է վարկային, արժութային և այլ ռիսկերի ապահովագրումը: Պարտավորությունները չկատարող երկրների համար ստեղծվել են պարտքի ձևակերպման մեխանիզմներ՝ վերամշակված «Փարիզյան ակումբ» կազմակերպության կողմից: Այդ ակումբը վարկատու երկրների հատուկ կազմակերպություն է, որը զբաղվում է պետական երաշխիք ունեցող միջպետական փոխառությունների և արտահանման վարկերի վերաձևակերպման դիմումների վերանայման հարցերով: Քանի որ վարկառու երկրները տնտեսապես անկայուն են, Փարիզյան ակումբը և Բանկային կոմիտեները երկրների արտաքին պարտքի վերաձևակերպման համար պայման են դնում, որ Միջազգային արժութային հիմնադրամի վարկային միջոցները պետք է օգտագործվեն վարկային հաշվեկշռի կայունացման նպատակով: Մեկ շնչի հաշվով ցածր եկամուտ ունեցող երկրներին կարող են տրամադրվել պարտքի վերաձևակերպման «Տորոնտոյի պայմանները»: Այն կիրառվել է 1988 թ. և նպատակն է առավել մեծ պարտք ունեցող երկրներին վերաձևակերպման զանազան տարբերակներ առաջարկելը: Օրինակ՝ 25 տարվա պարտքից 14 տարին ձևակերպվում է արտոնյալ պայմաններով, սկզբնականից ցածր տոկոսադրույքով: 1988 թ. հետո մոտ 20 երկիր օգտվել է «Տորոնտոյի պայմաններից»:

11.6 Միջազգային պարտքային ճգնաժամ

Միջազգային պարտքային ճգնաժամը սկսվել է 1982 թ., երբ մի շարք լատինաամերիկյան երկրներ ունակ չէին վճարելու իրենց պարտքերը արտասահմանյան բանկերին: Այն տարածվեց նաև շատ երկրներում և դարձավ տարածքային, ապա՝ համաշխարհային:

Ճգնաժամի պատճառներն էին.

1. Զարգացող և թույլ երկրների վարկավորմանը 1970-ական թթ. նպաստող ոսկու դոլարային ստանդարտի, արժութային կուրսերի փոփոխությունները, թույլ կարգավորումը:

2. Փոխատվական կապիտալի հարաբերական անկումը, միջազգային շուկաներում հումքի, ապրանքների գների բարձրացումը:

3. Աշխարհում տնտեսական իրավիճակի փոփոխության հետևանքով 1980-ական թթ. դոլարի կուրսի և մարման տոկոսների բարձրացումը:

4. Երկրների ներքին պարտքային ճգնաժամի պայմաններում կապիտալի երկրներից դուրս գալը (1976-1988 թթ. երկրները կորցրին 200 մլրդ դոլար):

Բանկային վարկերի և պարտքերի հիմնական բաժինը՝ ընդհանուր ծավալի 50 տոկոսը, հասնում է Լատինական Ամերիկայի, 25 տոկոսը՝ Արևելյան Ասիայի և խաղաղօվկիանոսյան, 10 տոկոսը՝ Աֆրիկայի երկրներին: Եթե 1982 թ. ժամկետանց վճարումներ ունեին 34 երկիր,

ապա 1986 թ. այս ցուցանիշը դարձավ 57, 1990-ական թթ.՝ 72, որոնց բաժին էր ընկնում արտաքին պարտքերի 60 տոկոսը, ինչի հետևանքով այդ երկրների տնտեսական աճը խիստ կրճատվեց, իսկ արժեզրկման մակարդակը կազմեց 9-22 տոկոս: Նավթարդյունահանողների եկամուտը կրճատվեց 25 տոկոսով: Պակասեց արտադրության միջոցների տեղաշարժը, ԳՏ նվաճումների մակարդակը, ինչն ավելացրեց կապիտալի կրճատումը:

Համաշխարհային տնտեսական ճգնաժամը սկզբում ընդգրկեց ֆինանսական, ապա՝ տնտեսական, սոցիալական ոլորտները և քաղաքականությունը: 2008-2010 թթ. ճգնաժամն ունեցավ երկարաժամկետ հետևանքներ և չկանխեց ներկայի ցնցումները: Այն իր հերթին բերեց ֆինանսական, տնտեսական և այլ ոլորտներում նոր անկայունություններ:

2011 թ. հունվարին ԱՄՆ պետական պարտքի մակարդակը կազմել է 14 տրիլիոն դոլար (ԱՄՆ յուրաքանչյուր քաղաքացուն բաժին է ընկնում 45 հազար դոլար պետական պարտք): ԱՄՆ Ֆինանսների նախարարությունը հայտնել է, որ մինչև 2015 թ. երկրի պետպարտքը կհասնի 19.6 տրիլիոն դոլարի, ինչը կկազմի երկրի ՀՆԱ 102 տոկոսը: Ռուսաստանի արտաքին պարտքը 2009 թ. կազմել է 467, 2010 թ.՝ 489, իսկ 2011 թ.՝ 519 մլրդ դոլար[71]:

Միջազգային պարտքային ճգնաժամի կարգավորումը բարդ պրոցես է, որը ձեռնարկում են ՄԱՀ-ի, ՀԲ-ի, երկրների կառավարությունները, մասնավոր բանկերը: Վերանայվել են արտաքին պարտքերի կանոնները և ձեռնարկվել նոր միջոցառումներ, որոնք են.

- պարտքերի ժամկետների երկարումը,
- պարտքերի զիջումը (կրճատում):

Պետական պարտքերի վերանայումը քննարկվել է ***Փարիզի վարկային ոչ պաշտոնական խմբի*** կողմից: Մասնակի պարտքերը վերաձևակերպվել են ***Լոնդոնի բանկային ակումբի*** շրջանակներում:

[71] Вопросы экономики, журнал, 2011, N 2, стр. 19.

ԳԼՈՒԽ 12
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

12.1 Միջազգային ֆինանսավարկային կազմակերպություններ

Երկրների միջև ֆինանսավարկային հարաբերություններ կազմակերպելու համար անհրաժեշտություն է առաջանում ստեղծելու ֆինանսավարկային, արժութային և տնտեսական տարբեր կազմակերպություններ: Դրանք ինստիտուտներ են, որոնք ստեղծվում են միջպետական համաձայնագրերի հիման վրա: Այժմ աշխարհում գոյություն ունեն տարբեր բնույթի շուրջ 2.5 հազար միջազգային կազմակերպություններ, որոնք լինում են ***միջպետական,*** երբ անդամ կարող են լինել միայն պետությունները, և ***ոչ կառավարական,*** երբ անդամ կարող են լինել ընկերությունները, միությունները, միավորումները: Միջազգային կազմակերպությունները լինում են ***ընդհանուր, տարածաշրջանային:*** ՄԱԿ-ի համակարգի միջազգային արժութավարկային, միջազգային ֆինանսական և բանկային կազմակերպությունները կարևոր տեղ են գրավում ՄՏՀ համակարգում:

Համաշխարհային բանկը (ՀԲ) միջազգային ֆինանսավարկային կազմակերպություն է: Ստեղծվել է 1944 թ. Բրետտոն-Վուդսի միջազգային արժութաֆինանսական կոնֆերանսում[72]: Բանկի նպատակը զարգացող երկրների տնտեսական հզորացմանը նպաստելն է: Վարկեր տրամադրելիս բանկն ուսումնասիրում է երկրի տնտեսական վիճակը, որոշում տնտեսության բարելավման ուղղությունները, մշակում օգնության հատուկ ծրագրեր՝ արդյունաբերության, գյուղատնտեսության, էներգետիկայի, ենթակառուցվածքների, սոցիալական ոլորտների համար:

Համաշխարհային բանկն ունի 5 հաստատություններ.

1. Վերակառուցման և զարգացման միջազգային բանկ (ՎԶՄԲ):
2. Միջազգային ֆինանսական ընկերություն (ՄՖԸ):
3. Զարգացման միջազգային ասոցիացիա (ԶՄԱ):
4. Բազմակողմ ներդրումների երաշխիքային գործակալություն (ԲՆԵԳ):
5. Ներդրումների հետ կապված բանավեճերի կարգավորման միջազգային կենտրոն (ՆԲԿՄԿ): Կենտրոնական գրասենյակը Վաշինգտոնում է:

[72] Հայաստանը Համաշխարհային բանկի անդամ դարձել է 1992 թ.: Բանկի ներկայացուցչությունը Հայաստանում իր գործունեությունը սկսել է 1993 թ. ապրիլի 2-ին: 1993 թ. մայիսի 25-ին Փարիզում կազմակերպված՝ Համաշխարհային բանկի համաժողովում քննարկվել է Հայաստանին տրվող տնտեսական օգնության հարցը: Բանկն առաջին միջազգային կազմակերպություններից է, որ Հայաստանին վարկեր է տրամադրել:

Վերակառուցման և զարգացման միջազգային բանկը (ՎԶՄԲ, ՄԲՐՐ) ՄԱԿ-ի միջպետական ֆինանսավարկային մասնագիտացած կազմակերպություն է: Հիմնադրվել է ՄԱՀ-ի հետ միաժամանակ՝ 1944 թ. Բրետտոն-Վուդսի միջազգային արժութաֆինանսական կոնֆերանսի որոշմամբ: Գործունեության մասին համաձայնագիրը, որը միաժամանակ բանկի կանոնադրությունն է, պաշտոնապես ուժի մեջ է մտել 1945 թ. և սկսել է գործել 1946 թ. Վաշինգտոնում: ՎԶՄԲ անդամներ կարող են դառնալ միայն ՄԱՀ-ի կողմից ընդունված երկրները: Նախապես բանկի նպատակն էր երկարաժամկետ վարկերով օգնել պատերազմից տուժած երկրների տնտեսությունները վերականգնելուն: 1960-ական թթ. հետո բանկն աջակցում էր անդամ երկրների տնտեսության զարգացմանը՝ երկարաժամկետ վարկեր և փոխառություններ տրամադրելով: Բանկի կապիտալը գոյանում է քվոտայով որոշված անդամ երկրների անդամավճարներից, բաժնետոմսերի վաճառքից և սեփական գործունեության եկամուտներից՝ համապատասխան ստորագրություններով, հաշվի առնելով յուրաքանչյուրի տնտեսական կարողությունը:

ՎԶՄԲ-ը երկրների կառավարությունների երաշխավորությամբ անդամ երկրների բանկերին, պետական և մասնավոր ձեռնարկություններին վարկեր տրամադրում է մինչև 20 տարի ժամկետով, նախագծային օբյեկտների արժեքի 30 տոկոսի չափով: Վարկի մի մասը տրվում է էներգետիկայի, տրանսպորտի, կապի ճյուղերի, տեղական բանկերի խոշորացման, տնտեսական զարգացման նախագծերի ֆինանսավորման, իսկ մյուս մասը՝ արդյունաբերության զարգացման համար:

Բանկի բարձրագույն օրգանը ***խորհուրդն*** է, գործադիր օրգանը՝ ***դիրեկտորատը***, ղեկավարը՝ ***նախագահը***: Դիրեկտորատը կազմված է առավել քվոտաներ ունեցող 6 երկրների և աշխարհագրական տեղաբաշխմամբ ընտրված 16 անդամներից: Անդամ երկրների կառավարիչներից կազմված խորհրդի նիստը գումարվում է Միջազգային արժութային հիմնադրամի (ՄԱՀ) հետ միասին տարին մեկ անգամ: Ձայների քանակը որոշվում է բանկի կապիտալում երկրների քվոտաներով: Երկրներն ունեն 250 ներկայացուցչական (բազիսային) ձայն, որին գումարվում է յուրաքանչյուր մեկ ձայնի դիմաց 100 հազար դոլար:

ՄԱՀ կապիտալի ամենաշատ քվոտաներ և համապատասխան շատ ձայներ ունեն ԱՄՆ-ը՝ ձայների ընդհանուր քանակի 17.7 տոկոսը, Մեծ Բրիտանիան՝ 6.2, Գերմանիան և Ճապոնիան՝ 5.5-ական, ԵՄ երկրները՝ 26, Ֆրանսիան՝ 4.8, Ռուսաստանը՝ 2.9, մյուս երկրները՝ ավելի քիչ տոկոս: Եկամտի միջին տարեկան չափը կազմում է 6-7 տոկոս: 1946-2010 թթ. բանկը կնքել է ավելի քան 3500 վարկային համաձայնագիր: ՄԱՀ անդամները 2012 թ. տվյալներով ՄԱԿ անդամ 193 երկրներն են:

ՎԶՄԲ-ին զուգահեռ ստեղծվել են ֆինանսական ինստիտուտներ (մասնաճյուղեր)՝ ***Զարգացման միջազգային ասոցիացիան (ԶՄԱ),***

Միջազգային ֆինանսական ընկերությունը (կորպորացիա, ՄՖԸ, ՄՖԿ), բազմակողմ ինվեստիցիաների երաշխավորման գործակալությունը (ՄԻԳԱ):

Զարգացման միջազգային ասոցիացիան ստեղծվել է 1960 թ. զարգացող երկրներին վարկեր տրամադրելու, համագործակցելու համար, 0.75 տոկոս տարեկան վճարով: Գրասենյակը գտնվում է Վաշինգտոնում: Ասոցիացիայի կապիտալը գոյանում է անդամ երկրների մուծումներից: Տնտեսապես զարգացած 25 երկրներ վճարում են հիմնադրամի 90 տոկոսը՝ կոնվերսիայի ենթարկված դոլարով, իսկ մնացած մասը վճարում են մյուս անդամ երկրները: 2010 թ. անդամ երկրների թիվը 164 էր:

ԶՄԱ-ն օգնություն է ցուցաբերում այն երկրներին, որոնց տարեկան եկամուտը մեկ շնչի հաշվով 450 դոլարը չի գերազանցում: Առավել մեծ քվոտաներ ունեն ԱՄՆ-ը, Գերմանիան, Մեծ Բրիտանիան, Ճապոնիան, Կանադան, Նիդեռլանդները, Իտալիան, Ֆրանսիան:

Միջազգային ֆինանսական ընկերությունը (ՄՖԸ) ստեղծվել է 1956 թ. ԱՄՆ նախաձեռնությամբ՝ զարգացող երկրների արդյունաբերությունում մասնավոր կապիտալ ներդրումները խրախուսելու համար: Ի տարբերություն ՎԶՄԲ-ի, ՄՖԸ-ը վարկեր տրամադրում է առանց կառավարությունների երաշխավորության, մինչև 15 տարի ժամկետով, մասնավոր ձեռնարկությունների նախագծային արժեքի մինչև 20 տոկոսի չափով:

Բազմակողմ ինվեստիցիաների երաշխավորման գործակալությունը (ՄԻԳԱ) Համաշխարհային բանկի խմբում ստեղծվել է 1988 թ.: Նրա նպատակն էր խրախուսել անդամ երկրների ինվեստիցիաները՝ տրամադրելով երաշխիք կորուստներից և տեխնիկական օգնություն: Իրականացնում է պատերազմների, պայմանագրերի խզման հետևանքով սեփականությունը կորցրած անդամ երկրների կապիտալ ներդրումների ապահովագրում:

Ներդրումների հետ կապված բանավեճերի կարգավորման միջազգային կենտրոնը (ՆԲԿՄԿ) ստեղծվել է 1966 թ. պետությունների քաղաքացիների միջև ներդրումների հարցերով ծագած բանավեճերի կարգավորման մասին կոնվենցիայի հիման վրա, որը վավերացրել են 131 անդամ երկրները: Այն անկախ կառույց է, բայց կապված է ՀԲ-ի հետ:

Միջազգային արժութային հիմնադրամը (ՄԱՀ) միջազգային արժութավարկային կազմակերպություն է, ունի ՄԱԿ-ի մասնագիտացած հաստատության կարգավիճակ: Ստեղծվել է 1944 թ. հունիսին Բրետտոն-Վուդսի (ԱՄՆ) միջազգային արժութաֆինանսական կոնֆերանսում՝ 44 երկրների ներկայացուցիչների համաձայնությամբ: Գործել սկսել է 1947 թ. մարտից: Հիմնադրամի բաժանմունքները գտնվում են Փարիզում և Ժնևում: Ունի 5 գլխավոր դեպարտամենտ Եվրոպայում,

Ասիայում, Աֆրիկայում, Ամերիկայում և Միջին Արևելքում: ԱՄՀ գործունեության նպատակն է.

- անդամ երկրների արժութաֆինանսական գործունեության կոորդինացումը,
- արժույթների կուրսերի կարգավորումը և կայուն պարիտետի սահմանումը,
- վճարային համակարգի կատարելագործումը և արժույթների սահմանափակումների վերացումը,
- ժամանակավոր ֆինանսական վճարային հաշվեկշիռների կարգավորումը:

ՄԱՀ ծրագրերը նախատեսվում են երկրների վարկերի մարման, բյուջետային ծախսերի ծածկման համար: Հիմնադրամը մեծ դեր է խաղում միջպետական արժութավարկային հարաբերությունների կարգավորման գործում: Առանց հիմնադրամի սանկցիայի երկրներն իրավունք չունեն փոխելու արժույթի պարիտետը ոչ ավել, քան 10 տոկոսով: Հիմնադրամի ղեկավարությանը պետք է տեղյակ պահել սեփական արժութային պահուստներում ոսկու պաշարների, տնտեսության վիճակի, վճարային հաշվեկշռի, ինվեստիցիաների մասին:

ՄԱՀ ***կանոնադրությունը*** փոփոխվել է երկու անգամ: 1968-1969 թթ. ուղղումներ են մտցվել ՀԴՐ կիրառելու և 1976-1978 թթ.՝ Բրետտոն-Վուդսի արժութային համակարգը յամայկյան արժութային համակարգով փոխելու համար: ԱՄՀ վարկերը տրվում են երկրների պահուստների սահմաններում վճարային հաշվեկշռի դեֆիցիտը ծածկելու և այլ նպատակներով: Վարկեր տրվում են երկրի տնտեսությունն ուսումնասիրելուց հետո՝ 3-5, առանձին դեպքերում՝ 7-10 տարով՝ 6 տոկոս գանձումով: Գործարքներն իրականացվում են միայն անդամ երկրների կենտրոնական բանկերի, գանձատների արժույթի հիմնադրամի ղեկավարների հետ[73]: Անդամ երկրներն իրավունք ունեն վարկ ստանալու առանց սահմանափակումների՝ սկսած հիմնադրամի շահույթից իրենց բաժնային մասնակցության 25 տոկոսից:

1947 թ. ԱՄՀ անդամ էր 49 երկիր՝ 7.7 մլրդ դոլար հիմնական կապիտալով: 1980 թ. այս թիվը կազմում էր 138, 1989 թ.՝ 152, 1997 թ.՝ 180, 2003 թ.՝ 187, 2006 թ.՝ 191 և 2012 թ. մարտի 1-ի դրությամբ՝ 193 երկիր՝ մոտ 220 մլրդ դոլար հիմնական կապիտալով:

ՄԱՀ ստեղծման նպատակն էր.

- նպաստել միջազգային առևտրի հաշվեկշռային աճին,
- պահպանել արժութային կուրսի կայունությունը,
- նպաստել ֆոնդի անդամ երկրների միջև բազմակողմ հաշվարկների համակարգի ստեղծմանը և արժութային սահմանափակումների վերացմանը:

[73] Հայաստանը ՄԱՀ անդամ է դարձել 1992 թ.:

Ֆինանսական միջոցները գոյանում են 193 անդամների քվոտաներից: Ղեկավար մարմինը ***Կառավարիչների խորհուրդն*** է: Կենտրոնական գրասենյակը Նյու Յորքում է:

1950-ական թվականներին ստեղծվեցին զարգացման տարածաշրջանային բանկեր, որոնք գործում են որոշակի տարածքներում:

Աղյուսակ 12.1

Զարգացման տարածաշրջանային բանկեր

Բանկերի պաշտոնական անվանումը	Ստեղծման տարեթիվը	Գտնվելու վայրը
Զարգացման Միջամերիկյան բանկ	1959	Վաշինգտոն
Զարգացման Աֆրիկյան բանկ	1962	Աբիջան (Փղոսկրյա ափ)
Զարգացման Ասիական բանկ	1966	Մանիլա (Ֆիլիպիններ)
Վերակառուցման և զարգացման Եվրոպական բանկ	1991	Փարիզ
Եվրոպական ինվեստիցիոն բանկ	1958	Լյուքսեմբուրգ
Զարգացման իսլամական բանկ	1975	Ֆիդդա (Սաուդյան Արաբիա)
Առևտրի և զարգացման Սևծովյան բանկ	1991	Բուխարեստ
Զարգացման միջազգային բանկ	1959	Վաշինգտոն
Եվրոպական զարգացման հիմնադրամ	1959	Բազել (Շվեյցարիա)
Միջազգային հաշվարկների բանկ	1930	Բազել (Շվեյցարիա)
Միջազգային ֆինանսական կորպորացիա	1956	Վաշինգտոն
Արաբական արժույթի հիմնադրամ	1976	Աբու-Դաբի (ԱՄԷ)

Զարգացման Միջամերիկյան բանկը (ԶՄԲ) ստեղծվել է 1959 թ. ամերիկյան աշխարհամասի երկրների նախաձեռնությամբ տնտեսական և քաղաքական միտումներով: Դա Լատինական Ամերիկայի և Կարիբյան ավազանի ամենախոշոր բանկն է: 2008 թ. բանկի անդամ էր 28 լատինաամերիկյան և 18 եվրոպական երկիր, որոնք բանկից վարկեր վերցնել չեն կարող: Բանկի կապիտալը կազմում է 101.0 մլրդ դոլար, որից 50.0 տոկոսը լատինաամերիկյան երկրների բաժինն է, 30.0-ը՝ ԱՄՆ-ինը, 5.0-ը՝ Ճապոնիայինը, 4-ը՝ Կանադայինը և այլն: Հետևաբար, երկրներն ունեն ոչ հավասար թվով ձայներ՝ ԱՄՆ-ը՝ 34.5, Կանադան՝ 4.56 և այլն: ***Սովորական*** պայմաններով բանկը վարկ է բաց թողնում 10-15 տարի ժամկետով, ***հատուկ պայմաններով*** գործունեության հատուկ ֆոնդից՝ 40 տարով: Փոխառությունները կազմում են նախագծերի ընդհանուր արժեքի 50 տոկոսը:

Զարգացման Աֆրիկյան բանկը (ԶԱԲ) ստեղծվել է 1962 թ. փետրվարին ՄԱԿ-ի տնտեսական հանձնաժողովի 32 երկրների ներկայա-

ցուցիչների որոշմամբ: Որոշումն ուժի մեջ է մտել 1964 թ. սեպտեմբերի 10-ին, իսկ բանկը սկսել է գործել 1965 թ. հուլիսի 1-ին: Այն աֆրիկյան պետությունների առաջին ֆինանսական կազմակերպությունն է: Բանկի գործունեությունը կոչված է նպաստելու աֆրիկյան երկրների ինդուստրացմանը, ինչպես նաև համաշխարհային շուկայից կախվածության թուլացմանը: 2011 թ. բանկի անդամ էին աֆրիկյան 53 և ոչ աֆրիկյան 22 երկիր 4 մայր ցամաքներից (բացի Ավստրալիայից): Սկսած 1977 թ.՝ բանկի հաշվարկային միավորը ՀԴՐ-ն է: Աֆրիկյան երկրների բաժնեմասը կազմում է 60.0, մնացած երկրներինը՝ 40.0 տոկոս: Բանկը վարկ է տրամադրում գյուղատնտեսությանը, սոցիալական ենթակառուցվածքներին: Այն ղեկավարվում է ***կառավարող խորհրդի*** կողմից, որն ընտրում է նախագահ և բանկի վարչություն: Լրացուցիչ միջոցներ ձեռք բերելու համար ստեղծվել է ***Զարգացման աֆրիկյան հիմնադրամը***, որի անդամներն են Արգենտինան, Բելգիան, Բրազիլիան, Դանիան, Իսպանիան, Իտալիան, ԱՄՆ-ը, Կանադան, Հոլանդիան, Մեծ Բրիտանիան, Նորվեգիան, Շվեդիան, Շվեյցարիան, Սաուդյան Արաբիան, Քուվեյթը, Ճապոնիան, Ֆինլանդիան և ՀԱՄԷ-ը:

Զարգացման Ասիական բանկը (ԱՅԲԲ-ՀԱսԲ) ստեղծվել է 1962 թ.: 2002 թ. ուներ 61 անդամ երկիր, որոնց կազմում էին ԱՄՆ-ը, Կանադան, 44 տարածաշրջանի, 15 եվրոպական պետություն: Բանկն իր գործունեությունն իրականացնում է ՎՀՄԲ-ի սկզբունքներով: Նրա կապիտալը կազմում է 47.2 մլրդ դոլար, որից տարածաշրջանի բաժինը 30.0 մլրդ դոլար է (63.5 տոկոս), ԱՄՆ-ի, Ճապոնիայի բաժինը՝ 15.8 տոկոս: Վարկավորումը ծառայում է ավտոմայրուղիների, նավամատույցների, օդանավակայանների կառուցմանը կամ վերակառուցմանը:

Զարգացման միջազգային բանկը (ՀՄԲ) կազմավորվել է 1959 թ. և գործել սկսել է 1960 թ. Վաշինգտոնում: Անդամներն են ԱՄՆ-ը, Կանադան, լատինաամերիկյան 25 և «ոչ ամերիկյան» 16 երկիր, այդ թվում՝ Ավստրալիան, Մեծ Բրիտանիան, Ճապոնիան: Բանկի նպատակն անդամ երկրներին և մասնավոր արտադրողներին երաշխավորված վարկեր տրամադրելն է: Ֆինանսական միջոցները գոյանում են հիմնադիր ֆոնդից և մասնավոր մուծումներից: Վարկեր տրամադրվում են 15-25 տարի ժամկետով: Ղեկավար օրգանը ***խորհուրդն*** է՝ 12 անդամով՝ ***նախագահի և դիրեկտորի*** գլխավորությամբ: Ըստ կանոնադրության՝ որոշումներ ընդունելու համար անհրաժեշտ է ձայների 2/3-ը: Քանի որ ձայների 35 տոկոսն ԱՄՆ-ինն է, հետևաբար նա դիրեկտորատում ունի վետոյի իրավունք:

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը (ՎՀԵԲ) կազմավորվել է 1990 թ. մայիսի 29-ին Փարիզում և գործել սկսել է 1991 թ. ապրիլից: Բանկի անդամներ են Եվրոպայի 27 երկրները, ինչպես նաև ԱՄՆ-ը, Ավստրալիան, Եգիպտոսը, Իսրայելը, Կանադան, Հարավային Կորեան, Ճապոնիան, Մարոկկոն, Նոր Զելանդիան, Մեքսիկան, Վենեսուելան և միջազգային երկու կազմակերպություն՝ Եվրոպական տնտեսական ընկերությունը և Եվրոպական ինվեստիցիոն բանկը: Անդամներ են 61 երկիր: Բաժնետիրական կապիտալը կազմում է 20 մլրդ եվրո: Կապիտալի բաժնեմասի 10 տոկոսն ԱՄՆ-ին է, Մեծ Բրիտանիայի, Գերմանիայի, Իտալիայի, Ֆրանսիայի և Ճապոնիայի բաժինները կազմում են 8.5-ական, Ռուսաստանինը՝ 4 տոկոս: Հիմնադիր կապիտալը 70 մլրդ ֆրանկ է, որից Եվրոպական տնտեսական ընկերության բաժինը կազմում է 50, ԵՄ երկրներինը՝ 12, եվրոպական մյուս երկրներինը՝ 11.3, ոչ եվրոպական երկրներինը՝ 24 տոկոս և այլն: Ոչ մի երկիր չունի կապիտալի և ձայների 15 տոկոսից բարձր բաժնեմաս: Բանկի նպատակը Կենտրոնական և Արևմտյան Եվրոպայի երկրների տնտեսական ճյուղերում ներդրումների խթանումն է:

Եվրոպական զարգացման հիմնադրամը (ԵՀՀ) եվրոարժույթի ֆինանսական կազմակերպություն է: Հիմնադրվել է 1959 թ.: Հիմնադիր միջոցները գոյանում են անդամ երկրների անդամավճարներից, որոնք ֆինանսավորում են ոչ շահութաբեր և քիչ եկամտաբեր օբյեկտներին: Մուծումներ կատարում են Ֆրանսիան և Գերմանիան՝ 34-ական, Իտալիան՝ 12, Բելգիան և Նիդեռլանդները՝ 9-ական, Լյուքսեմբուրգը՝ 2 տոկոս:

ԵՏՀ համակարգում 1960 թ. ստեղծվեց ***Եվրոպական սոցիալական հիմնադրամը,*** որը ֆինանսավորում է աշխատուժի զբաղվածության ապահովման ծախսերը:

Միջազգային հաշվարկների բանկը (ՄՀԲ) առաջին միջպետական բանկն է, որը ստեղծվել է 1930 թ. մայիսի 17-ին Բազելում (Շվեյցարիա): Բանկի անդամներ են Անգլիայի, Բելգիայի, Գերմանիայի, Իտալիայի, Ֆրանսիայի, Ճապոնիայի էմիսիոն բանկերը, Թուրքիայի, Հարավ-Աֆրիկյան Հանրապետության, Ավստրալիայի, Կանադայի և ամերիկյան (Նյու Յորքի, Չիկագոյի, Մորգանի) բանկային ընկերությունները, մի խումբ մասնավոր բանկեր: Միավորում է հիմնականում եվրոպական 30 երկրների կենտրոնական բանկերը: Պարտադիր չէ, որ ՄՀԲ-ի բաժնետերերն ունենան ձայների իրավունք: Գլխավոր խորհրդում հաշվի են առնվում միայն առանձին երկրների կենտրոնական բանկերի ձայները, իսկ վետոյի իրավունք ունեն բոլոր բանկերը: Նրա կապիտալը կազմում է 3 մլրդ ՀԴՐ: ՄՀԲ-ը կոչված է նպաստելու կենտրոնական բանկերի համագործակցությանը և կատարում է հետևյալ գործարքները.

- իր կամ կենտրոնական բանկերի հաշվին գնում, վաճառում և պահում է ոսկի, արժույթ (բացի բաժնետոմսերից),
- փոխատվություն է տալիս կենտրոնական բանկերին և նրանցից ընդունում է ավանդներ,
- հանդես է գալիս որպես կենտրոնական բանկերի գործակալ,

• կարգավորում է միջպետական արժութավարկային հարաբերությունները:

ՄՀԲ գործառույթն արժեթղթերով, օտարերկրյա արժույթով միջազգային վճարումները, ոսկով գործարքները հսկելն է: Հանդես է գալիս որպես ԱՄՀ և Զարգացման միջազգային բանկի եվրոպական օժանդակ օրգան: Բանկի նպատակը միջազգային ֆինանսական գործընթացների համար բարենպաստ պայմաններ ստեղծելն է: Ըստ կանոնադրության՝ բանկն իրավունք չունի թողարկելու վճարման բանկնոտներ, բաց թողնելու փոխատվություն, սահմանելու հսկողություն ձեռնարկատիրական ընկերությունների վրա: Բանկը ղեկավարում է ***ընդհանուր ժողովը***, որը հաստատում է ամենամյա հաշվետվությունը, ֆինանսական հաշվեկշիռը, հաշիվները, որոշում պահուստային և հատուկ հիմնադրամների մասհանումների չափերը:

Եվրոպական ինվեստիցիոն բանկը (ԵԻԲ), որպես վարկային ինստիտուտ, ստեղծվել է 1958 թ. Հռոմի՝ 1957 թ. մարտի 25-ի պայմանագրով ԵՏՀ համաձայնագրի հիման վրա: Գործունեությունը սկսել է 1959 թ. հունվարից: Բանկի հիմնադիր անդամ եղել են Գերմանիան, Բելգիան, Իտալիան, Իռլանդիան, Լյուքսեմբուրգը, Ֆրանսիան: Ավելի ուշ կազմը համալրել են Դանիան, Հոլանդիան, Հունաստանը, Մեծ Բրիտանիան: Բանկի անդամ են ԵՄ բոլոր երկրները: ԵԻԲ հիմնական խնդիրն է անդամ երկրների տնտեսության զարգացման, աշխատատեղերի ստեղծման, արտադրական ձեռնարկությունների վերազինման և տնտեսապես թույլ զարգացած շրջանների յուրացման, համատեղ նախագծերի իրականացման համար երկարատև (20-25 տարի) վարկերի տրամադրումը: 2008 թ. բանկի կանոնադիր ֆոնդը կազմել է 100 մլրդ եվրո, որից բաց է թողնվել 35 մլրդ եվրո վարկ: Բանկը ղեկավարում է ***կառավարող և վարչական խորհուրդը***: Գործունեությունը կապված է եվրոպական «ընդհանուր շուկայի» հետ: Գերմանիայի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի բաժինը կազմում է 18.7 մլրդ եվրո:

ԵԻԲ անդամ երկրների անդամավճարների հաշվին 2000 թ. ստեղծվեց Եվրոինվեստիցիոն ֆոնդը, որի նպատակը դեֆիցիտ հաշվեկշիռ ունեցող երկրներին օգնելը և բիզնեսի զարգացմանը հովանավորելն է: Բանկը վարկավորում է նաև ոչ ԵՄ երկրներին:

Արժութային համագործակցության եվրոպական հիմնադրամը ստեղծվել է 1973 թ. եվրոարժույթի համակարգի շրջանակներում: Այն ԵՏՀ անդամ երկրների վճարային հաշվեկշռի դեֆիցիտը ծածկելու միջոց է:

Միջազգային ֆինանսական կորպորացիան (ՄՖԿ) միջկառավարական մասնագիտացած հիմնարկություն է: Հիմնադրվել է 1956 թ., որպես ՎԶՄԲ մասնաճյուղ Վաշինգտոնում: Կորպորացիայի անդամ են 133 երկիր 3427 մլն դոլար կապիտալով, ինչը գոյանում է անդամ երկրների վճարումներից, կորպորացիայի օգուտներից և ՎԶՄԲ դոտա-

ցիայից: Առավել մեծ գումար մուծել են ԱՄՆ-ը՝ 201, Գերմանիան՝ 56.9, Մեծ Բրիտանիան՝ 56.2, Ֆրանսիան՝ 50.7, Ճապոնիան՝ 43.9, Կանադան՝ 36.1 մլն դոլար: Ձայների թիվը կախված է մուծումների գումարից: ԱՄՆ բաժինը կազմում է 22.9 տոկոս: Առավել խոշոր գումարներ տրամադրվել են Բրազիլիային՝ 284, Թուրքիային՝ 129 մլն դոլար: Կորպորացիան ֆինանսավորում է տնտեսության մասնավոր և խառը հատվածներին: Փոխառություններ տրվում են 2-10 տարով, մարումը կատարվում է այն արժույթով, որով փոխառությունը ստացվել է:

Արաբական արժույթի հիմնադրամը (ԱԱՀ) ստեղծվել է 1976 թ.: Կենտրոնը գտնվում է Աբու-Դաբիում (Արաբական Միացյալ Էմիրություններ): Հիմնադրամն Արաբական լիգայի երկրների հարկային կազմակերպություն է: Գործում է 1977 թ.-ից: Հիմնադիր կապիտալը կազմում է 236 մլն արաբական դինար: Կապիտալում առավել բաժին ունեն Ալժիրը, Եգիպտոսը, Իրաքը, Սաուդյան Արաբիան, Քուվեյթը: Գնված բաժնետոմսերի 50 տոկոսը վճարվում է փոխարկելի արժույթով: Հիմնադրամի նպատակն է վարկեր տրամադրել մասնակից երկրներին՝ իրենց արժույթի կուրսի կայունացման և վճարային հաշվեկշիռների դեֆիցիտը ծածկելու համար: Փոխառություններ տրվում են արաբական դինարով մինչև 7 տարի ժամկետով:

Զարգացման իսլամական բանկը (ԶԻԲ) ստեղծվել է 1975 թ. Սաուդյան Արաբիայում (Ֆիդդա): Կատարում է Իսլամական կազմակերպության կոնֆերանսի պահանջները: Ստեղծում է հատուկ ֆոնդեր, այդ թվում՝ նաև ոչ բանկի անդամ մուսուլմանական երկրների համար: Բանկի անդամ է 54 երկիր: Կապիտալը կազմում է 6 մլրդ իսլամական դինար: Ֆոնդի ամենամեծ բաժնետերը Սաուդյան Արաբիան է: Բանկը կատարում է ներդրումներ արդյունաբերության, գյուղատնտեսության օբյեկտներում, ծավալում լիզինգային գործունեություն:

Առևտրի և զարգացման Սևծովյան բանկը (ԱԶՄԲ) տարածաշրջանային բանկ է, որի անդամ են Սևծովյան տնտեսական համագործակցության 11 երկրներ: Բանկի կապիտալը կազմում է 1 մլրդ СДР: Ամենամեծ բաժինը՝ 16.5 տոկոս, ունի Ռուսաստանը:

1966 թ. ստեղծվել է ***Ինվեստիցիոն վեճերի կարգավորման միջազգային կենտրոնը***: Նման վեճերը կարգավորվում են արբիտրաժային կարգով: Կենտրոնը զբաղվում է նաև հետազոտական աշխատանքով:

Գոյություն ունեն ***Միջազգային ֆինանսական կենտրոններ*** (ՄՖԿ), որոնք իրականացնում են միջազգային բանկային և ֆինանսական, արժութային, վարկային, արժեթղթերի և ոսկու գործարքներ: ՄՖԿ-ը խոշոր միջազգային ֆինանսական ծառայությունների, ժամանակակից հաշվարկային և վճարային համակարգ է, որը ձևավորվել է կապիտալ արտահանող երկրների կենտրոններում (Լոնդոն, Նյու Յորք, Փարիզ, Լյուքսեմբուրգ, Սինգապուր, Տոկիո, Ֆրանկֆուրտ և այլն)[74]:

[74] Мировая экономика и международные отношения, журнал, 2012, N 1, стр. 33.

Գծագիր 12.1

Աշխարհի ֆինանսական ռեսուրսների վերաբաշխման մեխանիզմը[75]



12.2 Միջազգային տնտեսական կազմակերպություններ

ՄՏՀ կառավարումը համաշխարհային տնտեսության զարգացման ներկա փուլում պահանջում է ոչ միայն պետական, այլև միջազգային մակարդակով կազմակերպում: ***Միջազգային տնտեսական կազմակերպությունները (ՄՏԿ) միջպետական և միջկառավարական տնտեսական միավորումներ են, որոնք ստեղծվում են պետությունների միջև պայմանագրերի և համաձայնագրերի հիման վրա:*** ՄՏԿ հիմնական գործառույթը գործընկեր երկրների առևտրական, արտադրական, ֆինանսական, գիտական և այլ ոլորտների գործունեությունների կոորդինացումն է, ինչի անմիջական կազմակերպիչներն են Միավորված ազգերի կազմակերպությունը (ՄԱԿ), Առևտրի համաշխարհային կազմակերպությունը (ԱՀԿ), Եվրամիությունը (ԵՄ), միջազգային տարբեր տնտեսական կազմակերպություններ, միավորումներ, ընկերություններ:

21-րդ դարի սկզբին աշխարհում գործում էին տարբեր միջազգային, տարածաշրջանային տնտեսական կազմակերպություններ, միություններ, որոնք ինտեգրացիոն խմբավորումներ են: Համաձայն ՄԱԿ-ի տվյալների՝ 2010 թ. համաշխարհային տնտեսությունում գործում էր 70 հազար անդրազգային կազմակերպություն (ԱԱԿ)՝ 900 հազար մասնաճյուղերով: ՄՏՀ զարգացումն անմիջապես կապված է ՄԱԿ-ի

[75] Мировая экономика и международные экономические отношения, под. ред. Булатова А. С. и Ливенцева Н. Н., М., 2010, с. 98.

հետ, որն ունի նաև միջազգային տարբեր կազմակերպություններ, ինստիտուցիոնալ կառույցներ: Համաձայն ՄԱԿ-ի կանոնադրության՝ համաշխարհային մասշտաբի բազմաթիվ խնդիրների լուծման, միջազգային տնտեսական համագործակցության հետ միասին կազմակերպվում են նաև կոորդինացիոն բնույթի միջոցառումներ, որոնք աջակցում են ՄՏՀ ընդլայնմանն ու զարգացմանը: Միջազգային առևտրի հիմնախնդիրները քննարկելիս՝ ՄԱԿ-ն ակտիվ մասնակցություն է ունենում պետությունների տնտեսական համագործակցության սկզբունքների մշակմանը և իրագործմանը:

Միջազգային տնտեսական կազմակերպությունների մի մասը ՄԱԿ մասնագիտացած հիմնարկություն չէ:

Առևտրի համաշխարհային կազմակերպությունը (ԱՀԿ, WTO) հիմնվել է 1995 թ.՝ փոխարինելով Տարիֆների և առևտրի համաշխարհային համակարգին (ԳATT), որպես ԳATT իրավահաջորդ: ԳATT-ը ստեղծվել է 1947 թ.: 1948 թ. ԳATT անդամ էին 22, 1994 թ.՝ 123, 2004 թ.՝ 147, 2011 թ.՝ 164 երկրներ: Պահպանելով ԳATT-ի բոլոր հիմնական դրույթները՝ ԱՀԿ փաստաթղթային ծրարն ամփոփում է 56 իրավական փաստաթղթեր՝ կազմված մի քանի խմբերից: 1947 թ. ԳATT-ին վերաբերում էր միայն ապրանքային առևտուրը, իսկ ԱՀԿ-ն ընդգրկում է ապրանքների և ծառայությունների ոլորտները: ԱՀԿ հիմնական խնդիրներն են ԱՀԿ-ի մեջ ընդգրկված բազմակողմ առևտրային համաձայնագրերի իրականացումն ու վերահսկումը: ԱՀԿ Կանոնադրությունը, ընդունված ԳATT-ի կողմից Հավանայում, մասնակից երկրներին չի երաշխավորում օգտվել քվոտաներից, ինչպես նաև արտահանման և ներմուծման լիցենզիաներից, նաև չի հաստատում առանձին պետությունների հարկային իրավունքը: Ամերիկյան առաջարկության համաձայն մշակվել է ԱՀԿ Կանոնադրության նախագիծը, որի խնդիրը համաշխարհային առևտրի կարգավորումը և աստիճանաբար լիբերալացումն է:

Դեռևս 1986 թ. ԽՍՀՄ-ը ընդունեց ԳATT-ի առաջարկն Ուրուգվայի ռաունդին մասնակցելու և հետո նաև այդ կազմակերպությանն անդամագրվելու համար: Սակայն ԱՄՆ-ը հակադրվեց առաջարկին, և միայն 1990 թ. ԽՍՀՄ-ը ստացավ անդամագրվելու իրավունք, բայց 1992 թ. դուրս մնաց անդամությունից սոցիալիստական համակարգի փլուզման պատճառով: Անդամներ չէին նաև Չինաստանը և Ուկրաինան: Ռուսաստանի, Բելառուսի և Ղազախստանի ***Մաքսային միության*** ստեղծումը հնարավորություն կտա Ռուսաստանին անդամագրվելու ԱՀԿ-ին, ինչը նոր փուլի սկիզբ կդառնա առևտրի քաղաքականության իրականացման համար: Պետք է ստեղծվի Մաքսային միության Հանձնաժողով, որում կընդգրկվեն երեք երկրների կառավարությունների ներկայացուցիչները: Որոշումները կընդունվեն ձայների 2/3 մասով:

Ռուսաստանը կունենա 57, Բելառուսը և Ղազախստանը՝ 21.5-ական տոկոս ձայներ[76]:

Համաձայն ԱՀԿ կանոնների՝ Ռուսաստանի ներմուծման տարիֆները ԱՀՀ-ին անդամագրվելուց հետո կկրճատվեն մինչև 7.8 տոկոսով, 2011 թ. համեմատ գյուղատնտեսական արտադրանքների տուրքերը 13.2 տոկոսից կնվազեն մինչև 10.8 տոկոս, կլինեն նաև այլ զիջումներ: ԱՀԿ-ը 2011 թ. դեկտեմբերի 16-ին ողջունել է Ռուսաստանին իր կազմում ընդգրկվելու փաստը, որի հաստատումը սպասվում է 2012 թ.:

Աղյուսակ 12.2

Խորհրդակցությունները ԳATT-ի կառավարման սահմաններում
(8 պաշտոնական հավաք-ռաունդ)

Խորհրդակցությունների անցկացման վայրը	Տարեթվեր	Խորհրդակցությունների ծրագրերը
Ժնև (Շվեյցարիա)	1947	Մաքսային տարիֆների իջեցում
Աննեսի (Ֆրանսիա)	1949	Մաքսային տարիֆների իջեցում
Տորկի (Անգլիա)	1950	Մաքսային տարիֆների իջեցում
Ժնև (Շվեյցարիա)	1956	Մաքսային տարիֆների իջեցում
Ժնև (Շվեյցարիա)	1960-1961	Մաքսային տարիֆների իջեցում
Ժնև (Շվեյցարիա)	1964-1967	Մաքսային տարիֆների իջեցում, հակադեմպինգային (ցածրագին) կոդեքսի մշակում
Տոկիո (Ճապոնիա), աշխատանքը շարունակվել է Ժնևում	1973-1979	Տարիֆների իջեցում, ԳATT ոչ տարիֆային արգելքների ոլորտում փոխհատուցումների ավելացում
Մոնտեվիդեո (Ուրուգվայ), աշխատանքը շարունակվել է Ժնևում	1986-1994	Մաքսային արգելքների թուլացում, ԳATT-ի մեխանիզմների կատարելագործում, ԱՀԿ ստեղծման համաձայնություն, համաձայնագրի մշակում

ԳATT հիմնական գործունեությունը ***բազմակողմ ռաունդ հանդիպումների*** անցկացումն է, որոնց ընթացքում քննարկվում են օրակարգի հարցերը՝ կապված մասնակից երկրների արտաքին առևտրի կարգավորման հետ: ԳATT-ի ստեղծումից մինչև նրա վերափոխումն ԱՀԿ-ն կազմակերպել է 8 պաշտոնական հավաք (ռաունդ)՝ մաքսատուրքերի, դրույքաչափերի և այլ հարցերի քննարկման համար: Օրինակ՝ 1990 թ. խորհրդակցությունը վերաբերում էր մաքսատուրքերի կրճատմանը, ինչը 1947 թ. 40-60 տոկոսից 1990 թ. նվազեց մինչև 3-5 տոկոս:

Ուրուգվայի ռաունդը ամենախոշոր խորհրդակցությունն էր 1980-1990 թթ.: Սրա կարևորությունն առևտրի զարգացման վերաբերյալ 13 հարցերի քննարկումն էր: Արդյունքում կառավարությունները (հիմնա-

[76] Мировая экономика и международные отношения, журнал, 2011, N 12, стр. 23.

կանում զարգացած երկրների) հնարավորություն ստացան անարգել իրականացնելու հովանավորում և պաշտպանություն ազգային արտադրողներին գյուղատնտեսության սեկտորում: Զարգացող երկրների արտահանողներն այս իրավիճակում վնասներ կրեցին:

ԱՀԿ-ն իրականացնում է վարչական և կազմակերպական գործունեություն, առևտրային խորհրդակցություններ, անդամ երկրների միջև ծագած վեճերի պարզաբանում, անդամ երկրների առևտրի զարգացման աջակցում:

ԱՀԿ գործունեության հիմնական սկզբունքներն են.

- արտահանման, ներմուծման, տրանզիտ գործարքների բարենպաստ ռեժիմի ստեղծումը,
- համաձայնագրերի միջոցով մաքսային սակագների իջեցումը,
- ներմուծման կրճատումը և արտահանման իրավունքից օգտվելը:

ԱՀԿ կառավարման մարմիններն են անդամ երկրների ներկայացուցիչներից կազմված ***Նախարարների կոնֆերանսը, Գլխավոր խորհուրդը, Ծառայությունների առևտրի գլխավոր համաձայնությունը (ԳATC), Ծառայությունների առևտրի խորհուրդը, Ինտելեկտուալ սեփականության իրավունքի խորհուրդը:*** ԱՀԿ-ը գործում է քարտուղարության միջոցով, որը ֆինանսավորվում է անդամ երկրների միջազգային առևտրի բաժնային վճարումներից:

Ինտելեկտուալ (մտավոր) սեփականության համաշխարհային կազմակերպությունը (ՎՕՍՀ) հիմնադրվել է 1967 թ. հուլիսի 14-ին Ստոկհոլմի միջազգային կոնֆերանսում: Միաժամանակ ստորագրվել է նաև ինտելեկտուալ սեփականության համաձայնագիրը: Հայաստանը, ԱՀԿ անդամ դառնալով, ստանձնել է մտավոր սեփականության իրավունքների խախտման դեմ պայքարի ծավալման պարտավորություն: ՀՀ քրեական օրենսգիրքը պատասխանատվություն է նախատեսել հեղինակային իրավունքի խախտման համար:

Միջազգային առևտրի պալատը (ՄԱՊ) գործարար մարդկանց, միավորումների միություն է, միջազգային ոչ կառավարական կազմակերպություն: Հիմնադրվել է 1919 թ. Միջազգային առևտրական կոնֆեդերացիայում՝ Ատլանտիկ Սիթիում (ԱՄՆ): Պաշտոնական նպատակն է կարգավորել ՄՏՀ-ը, նպաստել միջազգային տնտեսական հիմնախնդիրների լուծմանը, բարելավել առևտրի պայմանները, ապահովել տարբեր երկրների գործարարների փոխշահավետ համագործակցությունը, գտնել վաճառահանման շուկաներ: 1990 թ. ՄԱՊ անդամ էր 90 երկիր: ՄԱՊ-ն ընդգրկում է նաև խառը կազմակերպություններ: Տարբեր երկրներում պալատը միավորում է առևտրա-արդյունաբերական շրջանները: ՄԱՊ անդամ կարող են լինել կամ կամավոր կազմակերպվող ասոցիացիաները (մասնավոր) կամ պետական կազմակերպությունները (հանրային-իրավական): ՄԱՊ-ն աջակցում է ար-

տադրական ձեռնարկություններին: Նրա ղեկավար օրգաններն են ***Կոնգրեսը,*** որը գումարվում է երկու տարին մեկ անգամ, ***Խորհուրդը,*** որը գլխավորում է ՄԱՊ նախագահությունը, ***Գործադիր կոմիտեն,*** որն ընտրվում է Կոնգրեսում և որի կազմում ընդգրկվում են նախագահը, փոխնախագահը, բյուջետային հանձնաժողովի նախագահը, գանձապահը և 6 ներկայացուցիչ այն երկրներից, որոնք ՄԱՊ-ին ավելի մեծ անդամավճար են մուծում: ***Գլխավոր քարտուղարությունը*** համագործակցում է ՄԱԿ-ի տարածքային հանձնաժողովների և մասնագիտացած հիմնարկների հետ: Այն գործում է Փարիզում: ՄԱՊ-ն ունի 46 ազգային կոմիտե, 1500 կոլեկտիվ և մոտ 6000 անհատ անդամ:

Տնտեսության համագործակցության և զարգացման կազմակերպությունը (ՏՀԶԿ, ՕԷՀՐ) միջազգային միջկառավարական կազմակերպություն է, որը ստեղծվել է 1960 թ. դեկտեմբերի 14-ին ԱՄՆ նախաձեռնությամբ: Այժմ ՏՀԶԿ անդամ են 30 երկիր՝ զարգացած երկրներ ԱՄՆ-ը, Գերմանիան, Ճապոնիան, Ֆրանսիան, Կանադան, Իտալիան, Մեծ Բրիտանիան, Բելգիան, Ավստրիան, Նիդեռլանդները, ինչպես նաև զարգացող երկրներ Դանիան, Թուրքիան, Իսպանիան, Լյուքսեմբուրգը, Հունգարիան, Իռլանդիան, Հունաստանը, Նոր Զելանդիան, Շվեդիան, Պորտուգալիան, Հարավսլավիան և այլն: Կազմակերպության նպատակն է աջակցել անդամ երկրների տնտեսական և սոցիալական զարգացմանը, օգնություն տրամադրել զարգացող երկրներին, հասնել տնտեսությունների բարձր և կայուն աճի, զբաղվածության ավելացման, բնակչության կենսամակարդակի բարձրացման, միջազգային առևտրի ընդլայնման: Կազմակերպության տարեկան բյուջեն 200 մլն դոլար է, որը ձևավորվում է անդամավճարներից՝ հաշվի առնելով անդամ երկրների ՀՆԱ չափերը: Ամենաշատ մուծումներ կատարում են ԱՄՆ-ը, Ճապոնիան, Գերմանիան: ՏՀԶԿ բարձրագույն օրգանը ***Խորհուրդն*** է, որին առընթեր գործում են տնտեսական, քաղաքական ծրագրերի ուսումնասիրման կոմիտեներ:

Բալթիկ ծովի պետությունների խորհուրդը ստեղծվել է 1992 թ. մարտի 5-ին Դանիայի նախաձեռնությամբ Հյուսիսային 10 երկրների (բացի Իսլանդիայից) և բալթյան 3 պետությունների արտաքին գործերի նախարարների՝ Կոպենհագենում կայացած հանդիպման ժամանակ: Ընտրվել է քարտուղարություն, որպես մշտական գործող օրգան, հրավիրվել մասնակից երկրների պառլամենտների կոնֆերանս, որը Բալթիկայի տարածքային համագործակցության ինստիտուցիոնալ օրգան է:

1993 թ. հունվարին ստեղծվել է ***Բարենցի ծովի խորհուրդը***՝ Ֆինլանդիայի, Շվեդիայի, Դանիայի, Ռուսաստանի, Իսլանդիայի և եվրոպական մյուս երկրների ներկայացուցիչների մասնակցությամբ: Նպատակն է աջակցել երկրների տնտեսությունների, շրջակա միջավայրի պահպանության և անվտանգության հարցերի կարգավորմանը:

Ստանդարտների միջազգային կազմակերպությունը (ИСО) ստեղծվել է 1946 թ. Լոնդոնում: Այն մշակում է միջազգային ստանդարտները, բարելավում տնտեսական, ԳՏ և ինտելեկտուալ գործընթացները (տե՛ս Գլուխ 3):

Համաշխարհային էներգետիկ խորհուրդը (ВЭС) ստեղծվել է 1923 թ. Լոնդոնում: Ընդգրկում է 90 ազգային կոմիտեներ: Նպատակն էներգիայի կայուն մատակարարում և սպառում ապահովելն է: Բյուջեն գոյանում է ազգային էներգետիկ կոմիտեների անդամավճարներից: Խորհուրդը հրավիրում է էներգետիկների համաշխարհային կոնգրես:

Միջազգային էներգետիկ գործակալությունը (МЭА) ստեղծվել է 1974 թ. էներգետիկ ճգնաժամը կարգավորելու համար: Անդամ 26 երկրների հետ իրականացնում է համատեղ միջոցառումներ:

Ատոմային էներգիայի միջազգային գործակալությունը (МАГАТЭ) հիմնվել է 1957 թ. Վիեննայում: Այն գիտատեխնիկական համագործակցության օրգան է միջուկային էներգիայի օգտագործման և անվտանգության ոլորտում:

Զարգացող երկրների տարածաշրջաններում ստեղծվել են մի շարք տնտեսական կազմակերպություններ, ՄՏՀ իրականացնող դաշինքներ, ազատ տնտեսական գոտիներ: Այժմ տարածաշրջանային հայտնի կազմակերպություններ են ԵՄ-ը (27 պետություն), ՀԱՓԹԱ-ն (ԱՄՆ, Կանադա, Մեքսիկա), Կենտրոնական ասիական պետությունների (Իրան, Պակիստան, Թուրքիա) տնտեսական համագործակցությունը (1992 թ.), Տարածաշրջանային համագործակցության հարավասիական ասոցիացիան (ՏԱԱՐԿ, Հնդկաստան, Պակիստան, Շրի-Լանկա, Բանգլադեշ, Նեպալ), Ասիական և Խաղաղ օվկիանոսի տնտեսական հանձնաժողովը (ԷՍԿԱԹՕ, 51 երկիր, 1947 թ.), Աֆրիկայի տնտեսական հանձնաժողովը (ԷԿԱ, 53 երկիր, 1958 թ.), Հարավ-Աֆրիկյան զարգացման կոմիտեն (ՍԱԴԿ, Անգոլա, Բոտսվանա, Լեսոտո, Մալավի, Մոզամբիկ, Մավրիկիոս, Նամիբիա, ՀԱՀ, Տանզանիա, Զիմբաբվե), Նավթ արտահանող երկրների միջազգային կազմակերպությունը (ՕՊԵԿ, 1960 թ., 3 աշխարհամասի 14 երկիր, Ալժիր, ԱՄԷ, Գաբոն, Էկվադոր, Ինդոնեզիա, Լիբանան, Իրաք, Իրան, Նիգերիա, Սաուդյան Արաբիա, Քուվեյթ, Կատար, Օման, Բրունեյ (գրասենյակը գտնվում է Վիեննայում)), Լատինական Ամերիկայի և Կարիբյան ավազանի տնտեսական հանձնաժողովը (ԷԿԼԱԴ, 55 երկիր, 1948 թ.), ինչպես նաև ՄԵՐԿՈՍՈՒՐ-ը, ԱՍԵԱՆ-ը, ԱԹԷՏ-ը, ՍՆԳ-ն և այլն:

12.3 Միջազգային տնտեսական հարաբերությունների կառավարման կազմակերպումը և մեխանիզմի կատարելագործումը

ՄՏՀ-ը, որպես տնտեսական գործունեության համակարգ, ընդգրկում է երկրների միջև կազմակերպվող բազմաթիվ գործարքներ և ունի կառավարման բարդ մեխանիզմ: Ելնելով երկրների պետական կա-

ռույցներից, հասարակության սոցիալ-տնտեսական իրավիճակից, քաղաքական իշխանությունների դերից, այլ երկրների հետ տնտեսական հարաբերությունների կազմակերպման մակարդակից՝ տարբեր երկրներում տնտեսական հարաբերությունները կառավարվում են տարբեր օրգանների կողմից տարբեր ձևերով:

Երկրների միջև տնտեսական կապերում գերակշռում է արտաքին առևտուրը, որը շատ երկրներում համարվում է տվյալ երկրի պետական մենաշնորհը: Պետական մենաշնորհներ են նաև արժույթը, թանկարժեք մետաղները: Վերջինիս մենաշնորհը պատկանում է Կենտրոնական բանկին, որին և իրավունք է տրվում այլ երկրների հետ իրականացնելու գործարքներ:

ՄՏՀ կառավարմանը մասնակցում են նաև միջազգային մյուս կազմակերպությունները՝ Առևտրաարդյունաբերական պալատը, Արտաքին առևտրի բանկը, Ստանդարտների և սակագների գլխավոր համաձայնությունը, իրավական-դատական արբիտրաժային կազմակերպությունները: ՄՏՀ գործընթացը պահանջում է ունենալ կառավարման հատուկ մեխանիզմ, որը կկարողանա բարձրացնել ՄՏՀ արդյունավետությունը, կատարելագործել արտահանման ներուժի կառավարումը հետևյալ կերպ.

- կառավարման ռազմավարական հարցերի լուծման ճիշտ կողմնորոշման,
- կառավարման օրգանների իրավունքների ընդլայնման և նրանց պատասխանատվության բարձրացման,
- կառավարման կազմակերպությունների գործունեության վրա տնտեսական մեթոդների ազդեցության ուժեղացման միջոցով:

Տնտեսապես զարգացած երկրներում արտաքին հարաբերությունների պետական կառավարումն իրականացնում է.

- արտաքին տնտեսական քաղաքականության և արտաքին առևտրական գործարքների վերահսկում,
- արտահանող մասնավոր ձեռնարկություններին անհրաժեշտ աջակցություն:

Զարգացած երկրներում արտաքին առևտրի պետական կառավարումն իրականացնում են բարձրագույն օրենսդիր օրգանները՝ ԱՄՆ-ում՝ Կոնգրեսը, Անգլիայում՝ Պառլամենտը, Գերմանիայում՝ Բունդեստագը, Ֆրանսիայում՝ Ազգային ժողովը, նաև պետական մասնագիտացած կազմակերպությունները: Օրենսդիր օրգանները մշակում և ընդունում են երկրի տնտեսական քաղաքականության մասին օրենքներ, որոնցով կառավարվում են պետական ֆինանսները, մաքսատուրքերը: Արտասահմանյան երկրների հետ կնքվում, վավերացվում են պայմանագրեր:

Միջազգային առևտրի կառավարման գործառույթներից է ապրանքների արտահանումից և ներմուծումից պետբյուջե մուտք գործող

վճարումների, մաքսատուրքերի, հարկերի գանձումների վերահսկումը: Որոշ երկրներում (Իտալիա) վերահսկող-կառավարող գործառույթ կատարում են Արտաքին առևտրի նախարարությունը, ԱՄՆ-ում, Շվեդիայում՝ Առևտրի նախարարությունների համապատասխան բաժինները, Գերմանիայում Արտաքին առևտրի կառավարչությունը, Ֆրանսիայում՝ էկոնոմիկայի և ֆինանսների, Հոլանդիայում և Շվեյցարիայում՝ էկոնոմիկայի, Ճապոնիայում, Անգլիայում՝ Արտաքին առևտրի և արդյունաբերության, Բելգիայում՝ Արտաքին գործերի նախարարությունները:

ՀՀ-ում արտաքին տնտեսական հարաբերությունների համակարգը հետևյալն է.

- ՀՀ Կառավարություն,
- Ինվեստիցիաների խթանման պետական խորհուրդ,
- Նախարարների և գերատեսչությունների արտաքին տնտեսական կապերի բաժին,
- Սփյուռքի հետ կապերի միություն,
- ՀՀ Ազգային ժողովի արտաքին հարաբերությունների խմբակցություն,
- ՀՀ-ում օտարերկրյա ընկերություններ, կազմակերպություններ,
- ՀՀ Առևտրա-արդյունաբերական պալատ,
- ՀՀ արդյունաբերողների, կոոպերատիվների միություն:

Արտահանող մասնավոր ձեռնարկություններին աջակցում են տեղերի տնտեսական, առևտրական, հյուպատոսական, դիվանագիտական օրգանները, արտասահմանյան պետական ներկայացուցիչները՝ ցույց տալով տնտեսական, առևտրական, քաղաքական, վարչական օգնություն, արտադրանքի իրացմանը վերաբերող տեղեկատվություն:

ՄՏՀ կառավարման հիմնական նորմերը նշվում են քաղաքացիական օրենսդրության հիմունքներում: Օրինակ՝ ՀՀ «Ձեռնարկությունների և ձեռնարկատիրական գործունեության մասին», «ՀՀ ինվեստիցիոն գործունեության մասին» օրենքներում սահմանվում են արտաքին տնտեսական գործունեություն իրականացնողների իրավունքներն ու պարտականությունները, գործունեության տեսակները և պայմանները: ՄՏՀ պետական կարգավորման օպերատիվ միջոցներից են մաքսային ռեժիմի պահպանումը, որն ընդգրկում է մաքսային սակագները, ապրանքները պետական սահմանով անցկացնելու կարգը, մաքսանենգության դեմ պայքարի միջոցառումները:

ՄՏՀ-ն անընդհատ փոփոխվում, ***կատարելագործվում է:*** Երկրի մասշտաբով կատարվող ցանկացած տնտեսական վերափոխում պահանջում է նոր մոտեցում: Վերջին երկու տասնամյակում ՄՏՀ զարգացման վրա էական ազդեցություն է գործել ԳՏՀ-ը: Ամերիկայի ընկերությունների կողմից մատակարարված բարդ տեխնոլոգիաներն Արև-

մտյան Եվրոպայի երկրներին, և վերջիններիս կողմից դրանց լրիվ լիցենզավորումը, ինչպես նաև ամերիկյան ուղղակի ինվեստիցիաները հնարավորություն տվեցին եվրոպական երկրների մի շարք արդյունաբերական ճյուղերում (էլեկտրոնային, մեքենաշինական, ատոմակայանների կառուցում և այլն) ստեղծել խոշոր տեխնոլոգիաների բազա:

ՄՏՀ-ը հիմնականում կապված է էլեկտրահաշվիչ մեքենաների, ապրանքագովազդային կատալոգների, տեսահոլովակների, ցուցանմուշների, համակարգիչների, այլ սարքավորումների տեղեկատվության ստացման և հաղորդման կառավարման մեխանիզմի կատարելագործման հետ: ՄՏՀ կառավարման մեխանիզմում անհրաժեշտ են ՄՏՀ տեղեկատվական նոր տեխնոլոգիաների ներդրում, տվյալների հաղորդման էլեկտրոնային սարքերի, տեղեկատվության մշակման ավտոմատացում, էլեկտրոնային-մաթեմատիկական մոդելների կիրառում: Տնտեսական հարաբերությունների մեխանիզմի կատարելագործումը կապված է նաև համակարգչային միջոցների կտրուկ աճի և ներդրման հետ: Նման բնույթի աշխատանքներ կատարում է Global Electronic Market համակարգը, որը ստեղծել են ամերիկյան Citibank-ը և Մակբրոյ-Հիլլ հրատարակչական կոնցեռնը: Citibank բանկը ստեղծվել է սեփական մասնագիտացած ցանց տեղեկատվության էլեկտրոնային փոխանակման համար, որը միմյանց հետ կապում է ծառայողական բոլոր բանկերը:

Ամերիկյան General Motors ընկերությունը մշակել է էլեկտրոնային համակարգ, որն ընդգրկում է տեղեկատվություն հաղորդելու 500 հազար տերմին: Ֆրանսիական Кредит лионе բանկը հաղորդում է արտաքին առևտրով զբաղվող Export Lyon բանկի տվյալները: Վերջինս կապված է արտաքին առևտրի ֆինանսական գործարքներ կատարող ավելի քան 70 պետությունների հետ: Կարևոր նշանակություն ունի փոխանցումային համակարգիչների գործունեությունը, որոնց օգնությամբ ընկերությունների առևտրական ներկայացուցիչները կարող են հեռախոսային կապ հաստատել տվյալ ընկերության հետ և օգտագործել տեղեկատվության համակարգի հնարավորությունները: Այսպես, գերմանական հայտնի «Ադիդաս» ընկերությունը, որն արտադրում է մարզական հագուստ, մշակել է հատուկ փոխանցումային սարք, տեղադրված պորտֆել-դիպլոմատում, որն ունի միկրոհամակարգիչ՝ 13 սմ անկյունագծով մոնիտորով, ճկուն սկավառակով և այլ հարմարանքներով: Դրանով կարելի է ցանկացած գործարքի վերաբերյալ ստանալ հաղորդակցություն, պատվիրել ապրանք և սպառողին հաղորդել մատակարարման ժամկետների և պայմանների մասին: ՄՏՀ կառավարման զարգացումը տեղեկատվությունների հաղորդման, ստացման, մշակման կատարելագործումը, տնտեսական և գիտատեխնիկական համագործակցության խորացումը կնպաստեն գիտական նվաճումների համատեղ մշակմանը, առաջավոր տեխնոլոգիաների ստեղծմանը, առևտրական գործարքներ կնքելուն:

ԳԼՈՒԽ 13
ԱՇԽԱՏՈՒԺԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԻԳՐԱՑԻԱ

13.1 Աշխատուժի միգրացիայի բնորոշումը

Երկրների միջև տնտեսական հարաբերությունները պատմականորեն ձևավորել են աշխատուժի տեղաշարժ մի տեղից մյուսը, որն անվանվել է միգրացիա: ***Միգրացիա*** նշանակում է վերաբնակեցում, բնակչության տեղաշարժ մի երկրից մյուսը (արտաքին) կամ նույն երկրի ներսում (ներքին): Աշխատուժի միջազգային միգրացիան (ԱՄՄ) ՄՏՀ կարևոր ձևերից է, որը դարձել է համաշխարհային տնտեսության անբաժանելի մասը: Մարդն իր կամ այլ երկրում որոնում է իր աշխատուժն առավել արդյունավետ օգտագործողին և ընդունող երկրի համար դառնում աշխատուժի համալրման աղբյուր: Միգրացիան կապվում է մարդկանց մշտական բնակության վայրի փոփոխման հետ, ինչն ունի տարբեր պատճառներ:

Ներքին միգրացիան աշխատուժի տեղաբաշխում է երկրի ներսում, երբ աշխատանք գտնելու նպատակով գյուղական աշխատողները տեղափոխվում են քաղաք կամ այլ բնակավայր: Այս դեպքում երկրի բնակչության թիվը, ազգային կազմը, կառուցվածքը չեն փոխվում: ***Արտաքին միգրացիան*** ավելացնում կամ նվազեցնում է երկրի բնակչության թիվը՝ երկրից մեկնողների և ժամանողների թվի տարբերության չափով: Բնակչության զանգվածային տեղաշարժեր եղել են հասարակության զարգացման բոլոր փուլերում, նաև՝ կապիտալի նախասկզբնական կուտակման շրջանում՝ արտադրության զարգացմանը զուգընթաց:

19-րդ դարի երկրորդ կեսին, կապիտալիզմի զարգացմանը զուգահեռ, ավելացան բնակչության միջպետական տեղաշարժերը: Դրանք որոշ երկրներում գյուղացիության և արհեստագործության քայքայման, գործազրկության, այլ երկրներում բանվորական ուժի պակասի հետևանք էին: Աշխատուժ հիմնականում հավաքագրում էին ԱՄՆ-ը, Կանադան, այլ երկրներ: Խոշոր արտագաղթ դեպի ԱՄՆ տեղի ունեցավ Իռլանդիայից, 80-ականներին՝ Իտալիայից, Արևմտյան Եվրոպայի երկրներից: Հիմնական պատճառն ագրարային վերափոխումները, գործազրկությունը և ԱՄՆ-ի բարենպաստ պայմաններն էին: 20-րդ դարի երկրորդ կեսին ԱՄՆ-ը դարձավ տնտեսական կյանքի հիմնական կենտրոն, ուր արտագաղթում էին Անգլիայից, Գերմանիայից, Իսպանիայից, սկանդինավյան երկրներից, հետագայում նաև՝ Հունգարիայից, Լեհաստանից, Ռումինիայից և այլն: 20-րդ դարի 30-ական թվականներին, կապված զարգացած երկրների կողմից էժան աշխատուժի հավաքագրման հետ, տեղաշարժեր սկսվեցին Չինաստանից, Հնդկաստանից, ասիական մյուս երկրներից:

Միգրացիան ուսումնասիրվում է ժողովրդագրական, տնտեսական գործոնների, գիտատեխնիկական, բնակլիմայական տեսանկյուններից: Բնակչության խիտ բնակեցումը միգրացիայի պատճառ չի կարող դառնալ: Դրան նպաստում են արտադրողական ուժերի ցածր մակարդակը, հումքային ռեսուրսների պակասը, բնակլիմայական անբավարար պայմանները: Միգրացիայի վրա էապես ազդում է անդրազգային կազմակերպությունների գործունեությունը: Համաձայն ՅՈՒՆԿՏԱԴ-ի զեկույցի՝ 2003 թ. ԱԱԿ-ն աշխատանքով բավարարել է 53 մլն մարդու:

Միջազգային միգրացիային բնորոշ է.

- ցածր որակավորում ունեցող աշխատուժի տեղաշարժն Ասիայի, Աֆրիկայի երկրներից Արևմտյան Եվրոպա, Լատինական Ամերիկայի երկրներից՝ ԱՄՆ, Հարավային Եվրոպայի երկրներից՝ Արևմտյան Եվրոպա,
- որակյալ մասնագետների տեղաշարժն Արևմտյան Եվրոպայից ԱՄՆ, զարգացող երկրներից՝ զարգացած երկրներ և հակառակը:

Միգրացիան լինում է.

- տնտեսական,
- սոցիալ-քաղաքական:

Տնտեսական միգրացիան տեղի է ունենում կամավոր վերաբնակության միջոցով՝ կենսապայմանները բարելավելու նպատակով՝ ցածր կենսամակարդակ ունեցող երկրներից բարձր կենսամակարդակ ունեցող երկրներ մեկնելով: Դրան նպաստում են արդյունաբերության ճյուղերի տեխնիկական զինվածությունը, գյուղատնտեսական աշխատանքների մեքենայացումը, խոշոր բնակավայրերի վերաճումն արդյունաբերական կենտրոնների և այլն:

Սոցիալ-քաղաքական ԱՄՄ-ն կապված է երկրների պետական սահմանների փոփոխության, ազգերի վերամիավորման, բռնի տարանջատումների, քաղաքական, ազգային, կրոնական, ռասայական և այլ երևույթների հետ:

Աշխատուժի միգրացիան ունի ***օբյեկտիվ*** և ***սուբյեկտիվ*** գործոններ:

Օբյեկտիվ գործոններ են տնտեսական շրջանների արտադրողական ուժերի զարգացումը, վերարտադրության էքստենսիվ և ինտենսիվ ուղիների միջև հարաբերությունների փոփոխությունը, արտադրության աճի տեմպերի և աշխատուժի պահանջի բավարարումը, ազատ աշխատուժի գոյացումը: ***Սուբյեկտիվ*** գործոններ են տարբեր տարածքների և կենսապայմանների միջև տարբերությունները, բնական պայմանները, բնակչության հարկադրական միգրացիան: Տարածքային իմաստով ԱՄՄ-ն լինում է ***միջմայրցամաքային, միջպետական:*** Ըստ տևողության՝ այն լինում է ***հիմնական,*** երբ բնակությունը մշտական է, և ***սեզոնային,*** երբ բնակությունը ժամանակավոր է: Միգրացիոն հոսքի հիմնական մասը կազմում են բանվորները, ծառայողները, գիտնականները: ԱՄՄ-ն լինում է տարերային, անկազմակերպ, այնուհետև պետությունն այն ընդգրկում է իր կարգավորման ծրագրերում:

Ներկա փուլում գործազրկությունը դրսևորվում է տարբեր ձևերով: Մի կողմից, երբ արտադրությունը մեքենայացվում և ավտոմատացվում է, կրճատվում է ֆիզիկական աշխատանքը, ավելանում՝ գործազուրկների թիվը, մյուս կողմից՝ արտադրության նոր եղանակին անցնելը պայմաններ է ստեղծում գործազրկության ավելացման համար: Տնտեսական օրինաչափություն է նաև աշխատուժի՝ մշտապես շարժման մեջ գտնվելը, որը նպաստում է աշխատուժի որակավորման բարձրացմանը և օգտագործմանը:

Ըստ աշխատանքի միջազգային կազմակերպության մեթոդիկայի՝ միգրանտները լինում են.

- մշտական ապրելատեղ տեղափոխվող վերաբնակներ,
- պայմանագրով աշխատողներ, որոնց համար երկրի կողմից սահմանվել է ընդունման ժամկետ,
- կրթության բարձր մակարդակ, մասնագիտություն, աշխատանքի փորձ ունեցողներ,
- ոչ լեգալ միգրանտներ (ժամկետանց վիզաներով),
- իրենց երկրներից ստիպողաբար էմիգրացված անձինք (փախստականներ):

Աշխատուժի տեղաշարժի տեսակներն են.

- ***էմիգրացիան*** (վտարանդիություն), երբ քաղաքացիները մի երկրից մեկնում են այլ երկիր աշխատանք գտնելու կամ վերաբնակվելու,
- ***ռեէմիգրացիան*** (վերադարձ վտարանդիությունից),
- ***իմիգրացիան*** (ներգաղթում), երբ քաղաքացիները մի երկրից մեկնում են այլ երկիր միջազգային համաձայնությամբ և կոնտրակտով:

Տեղաշարժերը լինում են.

1. Տնտեսական բնույթի (աշխատավարձի մակարդակ, կրթություն, սոցիալական պայմաններ):

2. Ոչ տնտեսական բնույթի (էթնիկական, ընտանեկան, կլիմայական):

3. Ըստ ուղղությունների (զարգացող երկրներից՝ զարգացած երկրներ, զարգացած երկրներից՝ թույլ երկրներ):

4. Ըստ տարածքային հատկանիշի (միջաշխարհամասերի և ներաշխարհամասերի միջև):

5. Ըստ ժամկետի (մշտապես, ժամանակավոր):

Միգրացիոն ***քաղաքականությունը*** պետության քաղաքականությունն է բնակչության և աշխատանքային ռեսուրսների բնագավառում, պետության ազդեցության չափորոշիչ՝ ուղղված աշխատուժի արտա-

հանման և ներմուծման կարգավորմանը: Միգրացիոն քաղաքակա-նություն իրականացնելու համար ստեղծվում են պետական հատուկ օրգաններ, որոնց հանձնարարվում է աշխատուժի տեղաշարժման հարցերի լուծումը և ***կարգավորումը***:

Աշխատուժի միգրացիայի ***դրական կողմերից է*** այն, որ նպաստում է գործազրկության կրճատմանը, երկրին բերում է դրամական եկամուտ մուտքերի ձևով, միգրանտներն արտասահմանում ձեռք են բերում գիտելիք, փորձ: Աշխատուժի միգրացիայի ***բացասական երևույթն*** արտահանող երկրի համար այն է, որ փոխվում է բնակչության ժողովրդագրական կառուցվածքը:

13.2 Աշխատուժի միջազգային միգրացիայի առանձնահատկությունները

Ժամանակակից ԱՄՄ-ն բնութագրվում է.

- ցածր որակավորում ունեցող գյուղական ազատ աշխատուժի և ծառայողների արտահոսքով,
- որակյալ աշխատուժի՝ գիտնականների, բժիշկների և այլ մասնագետների արտահոսքով:

Միգրացիան առանձնահատուկ է նաև տարածքային տեսակետից, երբ միգրացիոն կենտրոնները սահմանակից կամ մոտ են աշխատուժ արտահանող երկրներին: Օրինակ՝ ԱՄՆ-ը, Կանադան աշխատուժ ընդունում են Մեքսիկայից, Կարիբյան ավազանի երկրներից, Գերմանիան՝ Թուրքիայից, Ռուսաստանը՝ Անդրկովկասից, Միջին Ասիայից և այլն: Ներհոսքը լինում է ***օրինական (լեգալ)*** և ***ոչ օրինական***: ԱՄՆ-ը տարեկան ընդունում է 4 մլն, Արևմտյան Եվրոպան՝ 3 մլն ոչ օրինական ներգաղթողների:

Աշխատուժի միգրացիայում իրենց բաժինն ունեն փախստականները և բռնի վերաբնակեցվածները: Ըստ ՄԱԿ-ի փորձագետների տվյալների՝ 1991-1994 թթ. ԽՍՀՄ հանրապետություններից մշտական բնակավայրերը թողել է 7 մլն մարդ: Ռուսաստանում ապրում է 500-700 հազար փախստական (հիմնականում՝ անօրինական): ԱՊՀ երկրներում ապրում է մոտ 25 մլն ռուս:

Աշխատուժ ***ընդունող երկրին*** միգրացիան անհրաժեշտ է, քանի որ.

- օտարերկրացի աշխատողներին տրվող ցածր աշխատավարձը կրճատում է տվյալ երկրի արտադրական ծախսերը,
- օտարերկրացի աշխատողները, սպառելով ապրանքներ, ծառայություններ, առաջ են բերում լրացուցիչ պահանջարկ և խթանում են արտադրության աճը,
- որակյալ աշխատուժ ընդունող երկիրը տնտեսում է կրթության, պրոֆեսիոնալ մասնագետների պատրաստման ծախսերը (ԱՄՆ-ում տեղեկատվական տեխնոլոգիաների աշխատակիցների 18 տոկոսն օտարերկրացի են),
- ճգնաժամի և գործազրկության դեպքում առաջինն էմիգրանտներն են զրկվում աշխատանքից,
- էմիգրանտները թոշակով չեն ապահովվում, տարբեր սոցիալական ծրագրերից, արտոնություններից չեն օգտվում:

Ըստ մասնագետների՝ էմիգրանտները բարելավում են ընդունող երկրի «ծերացող» ժողովրդագրական ցուցանիշը: Ֆրանսիայում, Գերմանիայում, Շվեդիայում էմիգրանտների ընտանիքներում ծնվում են նորածինների 10, Շվեյցարիայում՝ 24, Լյուքսեմբուրգում՝ մոտ 38 տոկոսը[77]: Թեև բնակչության ծերացման տեմպերը դանդաղում են, այդուհանդերձ հիմնական բնակչության ծննդի և մահացության հարաբերության վրա այդ ցուցանիշները չեն ազդում:

Աշխատուժ ***արտահանող երկրի*** համար արդյունավետ է այն, որ միգրացիոն հարաբերությունն ուղեկցվում է ապրանքների և կապիտալի ներհոսքով, աշխատուժ արտահանող երկրներին փոխհատուցումներ վճարելով: Կրճատվում է արտահանող երկրի գործազուրկների թիվը:

Աշխատուժի արտահանումը եկամտի աղբյուր է, որովհետև.

- միջնորդ ընկերությունների օգուտներից գանձվում են հարկեր,
- մեկնողները կատարում են դրամական փոխանցումներ իրենց ընտանիքներին, հարազատներին,
- հայրենիք են բերվում արտադրության միջոցներ, մեքենաներ, երկարատև օգտագործման իրեր և այլն:

Բացասականն այն է, որ մեկնողները ՀՆԱ ստեղծում են ոչ թե իրենց, այլ օտար երկրում, մեկնող մասնագետները թուլացնում են ազգային տնտեսությունը, փոխվում է ժողովրդավարությունը:

Ըստ ՄԱՖ-ի տվյալների՝ ապրանքների արտահանման օգուտի տարեկան միջին նորմը կազմում է 20, ծառայությանը՝ 50 տոկոս: Հարավսլավիան 80-ական թվականներին ապրանքների և ծառայությունների արտահանումից տարեկան ստանում էր մոտ 10 մլրդ դոլար մուտքեր, գործնական օգուտը կազմում էր 2.5 մլրդ դոլար: Միայն փոխանցումներով երկիրը ստացավ 3.5 մլրդ դոլար, ևս այսքան ստացան աշխատողները տուն դառնալիս: Արդյունքում՝ փաստացի մուտքերը հասան 7 մլրդ դոլարի: Ըստ որոշ ռուս տնտեսագետների հաշվարկների՝ աշխատուժի արտահանման արդյունավետությունը 5 անգամ բարձր է ապրանքային արտահանման արդյունավետությունից[78]: Ըստ մասնագետների հաշվարկների՝ էմիգրանտների մասնավոր փոխանցումների դերն ավելի մեծ է միջին մակարդակի զարգացած երկրների

---

[77] Авдокушин Е. Ф., Международные экономические отношения, М., Юрист, 1999, стр.189.
[78] Տե՛ս Правила рынка, М., 1994., стр. 307.

համար, ինչն առանձին տարիների գերազանցել է արտաքին տնտեսական հարաբերությունների մնացած մուտքերը: Օրինակ՝ Պակիստանում վերջին 15 տարիներին արտասահմանում աշխատողների մուտքերի գումարը 5 անգամ գերազանցել է ապրանքների և ծառայությունների արտահանման մուտքերի գումարը: Իսկ ընդհանուր մակարդակով 90-ական թվականներին աշխատուժի արտահանումից զարգացող երկրների արժութային մուտքերն աճել են 10 տոկոսով: Եմենի, Արաբական Հանրապետության էմիգրանտների տարեկան փոխանցումները կազմում են ավելի քան 3 մլրդ դոլար, ինչն առանձին տարիների 30 անգամ գերազանցել է ապրանքների արտահանման մուտքերը:

90-ական թվականների սկզբին աշխարհի մոտ 40 երկիր արտասահմանում աշխատող իր քաղաքացիներից ստացել է մոտ 100 մլն, իսկ 10 երկիր՝ ավելի քան 1 մլրդ դոլար եկամուտ: Ըստ ԱՄՀ-ի տվյալների՝ վճարային հաշվեկշիռների եկամուտների 90 տոկոսը կազմում են վաստակելու մեկնած քաղաքացիների մասնավոր փոխանցումների մուտքերը:

13.3 Աշխատուժի միգրացիայի հիմնական ուղղությունները

Միգրացիայի հոսքերի ուղղությունները տարբեր են: Հաճախ միևնույն երկիրը միաժամանակ ընդունում և արտահանում է աշխատուժ: Դա կախված է ընդունող երկրների տնտեսական հնարավորություններից, համաշխարհային տնտեսության մեջ նրանց գրաված դիրքից, պատմական, աշխարհագրական պայմաններից, էթնիկական արմատներից: ԱՄՄ-ն տեղի է ունենում.

- զարգացած երկրների,
- զարգացող երկրների,
- զարգացող և զարգացած երկրների միջև:

Միգրացիայի խոշոր կենտրոն է ԱՄՆ-ը, որի աշխատանքային ռեսուրսները պատմականորեն ձևավորվել են ներգաղթողների հաշվին: Եվրոպայից ԱՄՆ միգրացիայի ալիք սկսվել է 1920-ական թվականներին՝ կապված հեղափոխության դժվարությունների հետ: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո տեղի է ունեցել որակյալ մասնագետների և նրանց ընտանիքների հոսք ԱՄՆ, Կանադա: 1956 թ. հակակոմունիստական ապստամբության ճնշումից հետո փախստականների արտահոսք է եղել Հունգարիայից, 1974-1975 թթ.՝ Վիետնամից:

ԱՄՆ-ը մշտապես կիրառել է կադրերի ներգրավման քաղաքականություն, թեև ընդունում է նաև կիսաորակյալ, ցածրորակ աշխատողների: 1960-ական թվականներին Արևելյան Եվրոպայից ԱՄՆ մեկնել է 7 մլն մարդ: Երկրի աշխատուժի 5 տոկոսը միգրանտներն էին: 70-ականներին օրինական ներգաղթողների թիվը կազմել է 4.5 մլն մարդ

(բնակչության աճի 20 տոկոսը)՝ 30 տոկոսով ավելի, քան նախորդ տասնամյակներում: 1980-ական թվականներին երկիր մուտք է գործել 6 մլն օրինական և 2 մլն անօրինական ներգաղթող, որոնք կազմել են երկրի բնակչության աճի 39 տոկոսը: 90-ականներին ներգաղթողների 84 տոկոսը վերը նշված երկրներից էր և Մեքսիկայից: 90-ական թվականների կեսերին ԱՄՆ-ում աշխատում էր գիտական աստիճան ունեցող մոտ 1.5 հազար հարավկորեացի մասնագետ, որոնց թիվը գերազանցում էր Կորեայի բուհերում աշխատող գիտական կոչում ունեցողների թվին: Նման իրավիճակը բացատրվում է նրանով, որ կորեացի շատ ուսանողներ, ուսումն ավարտելով ԱՄՆ-ում, չեն վերադարձել հայրենիք: Մաթեմատիկայի հատուկ ծրագրերի բնագավառի մասնագետների մոտ կեսն օտարերկրացի է:

Զարգացած երկրների ԱՄՄ-ն հիմնականում կապված չէ տնտեսական գործոնների հետ: Օրինակ, 1940-1950-ական թվականներին մեծ թվով մասնագետներ, գիտնականներ Արևմտյան Եվրոպայի երկրներից տեղափոխվեցին ԱՄՆ, ինչի հետևանքով ԳՖՀ-ում, Ֆրանսիայում, Իտալիայում տուժեցին մի շարք գիտական ուղղություններ: Հիմնական հոսքն ԱՄՆ լինում է Լատինական Ամերիկայի, Կարիբյան ավազանի երկրներից, Մեքսիկայից: 90-ականներին ԱՄՆ,Կանադա ներգաղթեց տարեկան 900 հազար մարդ, որոնց 740 հազարը՝ օրինական կերպով: Բայց ԱՄՆ գլխավոր հիմնախնդիրը մտավոր կարողության մասնագետների պակասն էր, որը լրացվեց ներգաղթի հաշվին: 20-րդ դարի վերջին ԱՄՆ արդյունաբերության ոլորտում զբաղված գիտության դոկտորների 1/3-ը, ինժեներների 40 տոկոսը ծնվել և ձևավորվել են ԱՄՆ սահմաններից դուրս: Երիտասարդ գիտնականների 24 տոկոսը ներգաղթածներ են:

Ըստ ՄԱԿ ժողովրդագրական բաժնի տվյալների՝ 1990 թ. աշխարհում կար 154, 2000-ին՝ 175, իսկ 2009 թ. հաշվարկվում էր մոտ 200 մլն միջազգային միգրանտ, որը կազմում էր աշխարհի բնակչության 3 տոկոսը[79]: Դրանց թիվը, համեմատած 1980 թ. հետ, 30 տարում ավելացել է 2 անգամ: Միջազգային միգրանտների ընդհանուր թիվը 1990 թ. համեմատ ավելացել է 36 մլն մարդով կամ 23.2 տոկոսով: Դրանց 60 տոկոսը՝ 115 մլն մարդ, բնակվում է զարգացած երկրներում, 39.5 տոկոսը կամ 75 մլն մարդ՝ զարգացող երկրներում, մոտ 14 տոկոսը կամ 10.5 մլն մարդ՝ թույլ զարգացած երկրներում:

Ռուսաստանն այսօր ԱՄՆ-ից հետո գրավում է երկրորդ տեղը: Հետազոտությունների համաձայն, ՌԴ-ին բաժին է ընկնում Եվրոպայի միգրանտների թվի 48 տոկոսը, որը կազմում է երկրի բնակչության 10 տոկոսը: ԽՍՀՄ փլուզումից հետո ՌԴ տարածքում հայտնվեցին հազարավոր մարդիկ ոչ միայն ԱՊՀ և բալթյան երկրներից, այլև Չինաս-

[79] Стрельцова Я., Мировая экономика и международные отношения, журнал, 2011, N 1, стр. 55.

տանից, Աֆղանստանից, Վիետնամից, Մոնղոլիայից, Ճապոնիայից, Հնդկաստանից և այլ երկրներից:

2010 թ., ըստ վիճակագրական տվյալների, ՌԴ-ում աշխատել է 3-4 մլն օրինական ներգաղթող: Իսկ տարվա վերջին կանխագուշակվում էր մինչև 19 մլն մարդ՝ ներառյալ ոչ օրինական միգրանտները:[80] Համաձայն ՌԴ վիճակագրական տվյալների՝ միգրանտների 37-38 տոկոս, աշխատում է շինարարությունում, 26-ը՝ առևտրում, 9-ը՝ տրանսպորտում, 8-ը՝ անտառային տնտեսությունում, 5-7 տոկոսը՝ գյուղատնտեսության ոլորտում, 6-8-ը՝ այլ ոլորտներում: Տնտեսական ճգնաժամը հանգեցրել է օտարերկրյա աշխատուժի թվի փոփոխման:

1990-2000 թթ. ՌԴ բնակչության թիվը կրճատվեց 4.2 տոկոսով: Բացարձակ կրճատումները բոլոր օկրուգներում համարյա միատեսակ են. Հեռավոր Արևելքում, Սիբիրում, Մերձվոլգյան շրջաններում այդ թիվը կազմել է 1.6-ական, հյուսիս-արևմուտքում՝ 1.8, կենտրոնում՝ 1.0 մլն մարդ[81]:

Աշխատուժի միգրացիայի մյուս խոշոր կենտրոնն ***Արևմտյան Եվրոպան է:*** Աշխատանքի միջազգային կազմակերպության գնահատմամբ՝ Արևմտյան Եվրոպայում աշխատում է օտարերկրյա միգրացված աշխատուժի քառորդից ավելին, որի տարեկան միջին աճը կազմում է 600 հազար մարդ, իսկ ընտանիքների հետ միասին՝ ոչ պակաս, քան 1.3 մլն մարդ: Իսպանիայի, Պորտուգալիայի, Թուրքիայի, Հարավսլավիայի աշխատուժը տեղափոխվում էր Եվրոպայի զարգացած երկրներ: Միայն ԵՄ երկրներում հաշվվում է 13 մլն ներգաղթող, այդ թվում՝ 8 մլն-ը ոչ ԵՄ անդամ երկրներից: 2000 թ. օտարերկրյա աշխատուժն Ավստրալիայում կազմում էր ընդհանուր զբաղվածների 9.9, Գերմանիայում՝ 9.1, Բելգիայում՝ 8.8, Ֆրանսիայում՝ 7.0, Շվեյցարիայում, Լյուքսեմբուրգում՝ մինչև 30.0, Կանադայում՝ 19.1, ԱՄՆ-ում՝ 12.4 տոկոսը: 1995 թ. աշխարհում մոտ 125 մլն մարդ գտնվում էր իր երկրից դուրս: Երկրից երկիր էր տեղափոխվում տարին մոտ 20-25 մլն մարդ:

Օտարերկրյա աշխատողներն Արևմտյան Եվրոպայում կազմում են 4-6.5, ԱՄՆ-ում՝ 5-5.6, Լատինական Ամերիկայում՝ 3.5-4 մլն մարդ: 1990-ական թվականներին ԱՄՆ-ն ընդունել է 12 մլն միգրանտի (տարեկան միջին հաշվով 230 հազար օրինական և 300 հազար անօրինական աշխատող): 1970-1980 թթ. այլ երկրներում աշխատում էր մոտ 300 հազար խորհրդային քաղաքացի: 1990-ականների սկզբին ԽՍՀՄ-ում աշխատում էր մոտ 200 հազար մարդ սոցիալիստական երկրներից, այդ թվում՝ 82 հազար վիետնամցի, 53 հազար ռումինացի, 37 հազար բուլղարացի, 20 հազար կորեացի և այլն: 1992-2002 թթ. ԱՄՆ տարեկան գալիս էր 924, Գերմանիա՝ 865, Ռուսաստան՝ 609 հազար

[80] Экономист, журнал, 2011, N 9, стр. 41.

[81] Միգրացիա և մարդկային զարգացում, Մարդկային զարգացման ազգային զեկույց Հայաստան, 2009:

մարդ: 2005 թ. վերջին աշխարհում էմիգրանտների թիվը հասավ 191 միլիոն մարդու, որոնց 60 տոկոսը բնակվում է զարգացած երկրներում, այդ թվում՝ 20 տոկոսը՝ ԱՄՆ-ում: 20 երկրների ցանկում առաջինն ԱՄՆ-ն է (38.4 մլն մարդ), ապա՝ Ռուսաստանը (12 մլն մարդ), Գերմանիան (7 մլն մարդ), Ուկրաինան (6.8 մլն մարդ), Ղազախստանը (2.5 մլն մարդ): 1990-2005 թթ. Հյուսիսային Ամերիկայում միգրանտները կազմեցին 17, Եվրոպայում՝ 15 մլն մարդ: 2004 թ. միգրանտների՝ իրենց երկրներ պաշտոնապես փոխանցած գումարը կազմել է 226 մլրդ դոլար[82]:

Միգրացիայի հոսքերը դարձան ԵՄ անդամ երկրների զարգացման կարևոր գործոն, ինչի մասին վկայում է ԵՄ վիճակագրական գերատեսչությունը (Եվրոստատ): Այժմ Գերմանիայում ապրում է 6.5 մլն օտարերկրացի իր ընտանիքով: Օտարերկրացիների 30 տոկոսը թուրքեր են, 12-ը՝ հարավսլավացիներ, 10-ը՝ իտալացիներ և այլն:

2010 թ. միջազգային միգրանտների նշանակալի մասը կենտրոնացած էր Եվրոպայում (64.1 մլն մարդ կամ 28 տոկոս), Ասիայում (53.3 մլն մարդ կամ 23.3 տոկոս), Հյուսիսային Ամերիկայում (44.5 մլն մարդ կամ 22 տոկոս), Աֆրիկայում (17.1 մլն մարդ կամ 9 տոկոս), Լատինական Սմերիկայում (6.8 մլն մարդ կամ 3.6 տոկոս), Օվկիանիայում (5 մլն մարդ կամ 2.6 տոկոս)[83]:

Բնակչության արտագաղթը կարող է էապես ազդել երկրների կամ ամբողջ տարածաշրջանների բնակչության թվի վրա՝ առաջացնելով բնակչության մեխանիկական ավելացում կամ պակասում: Մինչև երկրորդ համաշխարհային պատերազմը Եվրոպայից մեկնել է 60 մլն մարդ: ԱՄՆ-ի, Կանադայի, Ավստրալիայի և այլ երկրների մեխանիկական աճը գերազանցել է բնական աճին: 1989 թ. Արևելյան Եվրոպայի երկրներից և ԽՍՀՄ-ից մոտ մեկ մլն մարդ տեղափոխվել է Գերմանիա: 1990 թ. ԽՍՀՄ-ից արտագաղթել է 452 հազար մարդ, որոնցից 70 հազարը գիտնականներ էին:

Արագ աճում է քաղաքային բնակչության թիվը: 1900 թ. այն կազմում էր 14, 1950 թ.՝ 48, 2010 թ.՝ 53 տոկոս: Հայաստանի քաղաքային բնակչությունը կազմում է 63 տոկոս:

Ըստ ՄԱԿ-ի տվյալների՝ 2009 թ. աշխարհում հաշվարկվում էին 214 մլն միջազգային և 740 մլն ներքին միգրանտներ: Այսօր Եվրոպայում ապրում է 18.4 մլն ներգաղթող: Սակայն ըստ եվրոպական կենտրոնի՝ աշխարհում միգրանտների թիվը հասնում է 25-29, իսկ ԵՄ երկրներում՝ 15-24 մլն-ի:

[82] ՄԱԿ գլխավոր քարտուղար Քոֆի Անանի զեկուցագիրը ՄԱԿ-ի՝ ազգաբնակչության և զարգացման հանձնաժողովի 39-րդ նստաշրջանում:

[83] Միգրացիա և մարդկային զարգացում, Մարդկային զարգացման ազգային զեկույց, Հայաստան, 2009, էջ 26:

Ֆրանսիայում ներգաղթողների թիվը, համաձայն բնակչության հաշվառման, 1991 թ. եղել է 4.1 մլն մարդ (բնակչության 6.8 տոկոսը), 2004 թ.՝ 4.5 մլն մարդ (7.1 տոկոս): Այսօր ներգաղթողներից 4 մլն-ը (42 տոկոս) Աֆրիկայից են: 2007 թ. Ֆրանսիայում 1 մլն երեխա ծնվել է ներգաղթողներից: Ոչ լեգալ ներգաղթողները 1990-2010 թթ. կազմել են 300 հազար-1մլն մարդ: 1990 թ. երկրում կատարվել է 3493 հանցագործություն, 2005-ին՝ 3776: Աշխատող ներգաղթողներին և նրանց ընտանիքներին տրվող տարեկան սոցիալական ֆոնդը կազմել է 1.5 մլրդ ֆրանկ[84]:

Ներգաղթողների հոսքն ***Ուկրաինայից*** Իսպանիա սկսվել է 1990-ական թթ.: Ներգաղթողների ընդհանուր թիվը 1991 թ. հասել է 846, 2001 թ.՝ 2172, 2009 թ.՝ 6466 հազար մարդու:

Ներկայում Իսպանիան Եվրոպայում 4-րդ տեղն է գրավում Ուկրաինայից արտագաղթող բնակչության տարեկան թվով (82.3 հազար մարդ): Ուկրաինայից արտագաղթողների մեծ մասն ապրում է Իտալիայում (154 հազար մարդ), Գերմանիայում՝ (137 հազար մարդ) և Չեխիայում (123.2 հազար մարդ)[85]:

1990-2010 թթ. ***Հայաստանից*** հեռացել և այլ երկրներում բնակություն է հաստատել մոտ 1.3 մլն մարդ՝ երկրի բնակչության 35 տոկոսը: Միայն 2008 թ. Հայաստանից մեկնել և չի վերադարձել 23, 2009 թ.՝ 25 և 2010 թ.՝ 30 հազար մարդ: Մեկնողները հիմնականում 20-50 տարեկան են: Այսօր Հայաստանի բնակչության աճը կազմում է ընդամենը 2.1 տոկոս, իսկ 1960-ական թթ. այն 12-13 տոկոս էր: Հարցումները ցույց են տալիս, որ հարցվածների 46 տոկոսը 1-ից ավելի երեխա ունենալ չի ուզում[86]:

Հետպատերազմյան շրջանում միգրանտների ինտենսիվ հոսքը ***Միացյալ Թագավորությունից*** Մեծ Բրիտանիա երկրին ստիպեց «պաշտպանվել», կանխատեսել պայմաններ: Երկրում միգրանտների ներհոսքի վրա ավելի կոշտ սահմանափակումներ սահմանեց Մարգարետ Թեթչերը՝ ձգտելով զրոյական ներգաղթի:

1988 թ. ներգաղթի ակտը զգալի թեթևացրեց ընթացքը: 1999 թ., ըստ Շենգենյան Կոնվենցիայի համաձայնագրի 5-րդ բաժնի, ուժի մեջ մտավ Ամստերդամի պայմանագիրը, ընդգրկվեց ԵՄ Օրենսդրության մեջ և ստացավ Շենգենյան Օրենսդրություն: Այդ պահից Մեծ Բրիտանիայի առջև բացվեց ներգաղթի ձևավորման ԵՄ քաղաքականությունը՝ սահմանների պահպանման ինքնուրույնության հնարավորությամբ: Ամստերդամի պայմանագիրը դարձավ ներգաղթողների և փախստականների արգելակումը:

[84] Мировая экономика и международные отношения, журнал, 2011, N 9, стр 81-94.
[85] Мировая экономика и международные отношения, журнал, 2011, N 9, стр. 95-99.
[86] 168 ժամ, N 91, 29.09.2011:

2001 թ. Եվրոհանձնաժողովը ԵՄ միգրացիոն քաղաքականության հիման վրա դիտարկեց մի քանի կարևոր փաստաթղթեր: 2002 թ. ուժի մեջ մտավ որակյալ մասնագետների նոր ծրագիրը, որի նպատակն էր Մեծ Բրիտանիայում ներգրավել գիտնականների, դոկտորների, բիզնեսմենների և պրոֆեսիոնալ ֆինանսիստների: 2006 թ. «բարձրագույն կրթության» միգրանտների ծրագրում փոփոխություն մտցվեց: Նոր պայմաններում միգրանտները պետք է ներկայացնեին անգլերենի իմացության մասին վկայագիր: 2010 թ. մայիսին ներգաղթի քաղաքականությունը դարձավ ավելի խիստ, քանի որ 2010 թ. փետրվարին Մեծ Բրիտանիան ձեռնպահ մնաց մասնակցելու փախստականներին տրվող կարգի մասին ԵՄ Դիրեկտիվին[87]:

1960-1970 թթ. Մերձավոր Արևելքում աշխատուժի նոր տարածաշրջանային կենտրոններ դարձան Արաբական Միացյալ Էմիրությունները, Քուվեյթը և նավթարդյունահանող մյուս երկրները:

1990-ական թվականների կեսերին Սաուդյան Արաբիայի, ԱՄԷ-ի, Քուվեյթի աշխատողների կեսն օտարերկրյա բանվորներ էին: Միայն Քուվեյթում և Սաուդյան Արաբիայում աշխատում էր 1 մլն եմենցի բանվոր: Այդ տարածաշրջանում աշխատուժի հիմնական արտահանող են Եգիպտոսը, Հարավ-Արևելյան Ասիայի և արաբական երկրները: Եմենը, Իրաքը, Լիբանանը միաժամանակ նաև աշխատուժ ներմուծողներ են: 1990-ական թվականներին Մերձավոր Արևելք եկել է մոտ 4.5 մլն օտարերկրացի: ԱՄԷ-ում օտարերկրյա բանվորները կազմում էին 96.0, Կատարում՝ 95.5, Սաուդյան Արաբիայում՝ 40.0, Քուվեյթում՝ 86.5, Օմանում՝ 34.0 տոկոս: Այս երկրները մշտապես զգում են ցածրորակ աշխատուժի կարիք:

Աշխատուժի հավաքագրման կարևոր կենտրոն է ***Հարավային Աֆրիկան:*** ՀԱՀ-ն աֆրիկյան մյուս երկրներից աշխատուժ ներմուծում էր դեռևս 1950-ականներից: 1970-ական թվականներին միջազգային մոնոպոլիաների ներթափանցումը Հարավային Աֆրիկայում և Նամիբիայում աշխատուժի միգրացիան դարձրեց կայուն: Աֆրիկայի ներքին միգրացիան կազմեց 2 մլն մարդ: Հարավային Աֆրիկան աշխատողների ընդունում է նաև աշխարհի մյուս երկրներից: Վերջին տարիներին աշխատուժի միգրացիան ավելացել է հատկապես ՕՊԵԿ-ի անդամ և զարգացող երկրների միջև:

Աշխատուժի ներգրավման կենտրոններ են ***Ասիական-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի ասիական «նոր ինդուստրիալ երկրները»*** (Հարավային Կորեա, Մալայզիա, Հոնկոնգ, Սինգապուր, Թայվան), որոնք աշխատուժ ընդունում են հիմնականում Չինաստանից, Վիետնամից, Հարավային Ասիայի մյուս երկրներից: Ըստ Թայվանի մամուլի՝ 90-ականների կեսերին երկրին անհրաժեշտ էին 100 հազար բանվոր և 20 հազար ինժեներատեխնիկական աշխատող:

[87] Мировая экономика и международные отношения, журнал, 2011, N 9, стр. 100-113.

Աշխատուժ ընդունում է նաև ***Ավստրալիան***, որտեղ աշխատում են մինչև 200 հազար օտարերկրացի: Վերջիններս զբաղվում են հիմնականում գյուղատնտեսությամբ և անասնապահությամբ:

1960-ական թվականներից հետո աշխատուժի ընդունման կենտրոն դարձավ ***Լատինական Ամերիկան:*** Ասիական և աֆրիկյան երկրներից մոտ 3 մլն աշխատողի ընդունեցին ***Արգենտինան, Վենեսուելան, Բրազիլիան:***

13.4 Աշխատուժի միջազգային շուկա

Համաշխարհային մասշտաբով տեղի ունեցող տնտեսական երևույթները (ԱՄԲ, ԳՏԱ, ԳՏՀ, արտադրության միջազգայնացում, միջազգային տնտեսական միավորումների, ընկերությունների ձևավորում, կապիտալի, արժույթի, արժեթղթերի առկայություն) ձևավորեցին նաև աշխատուժի միջազգային շուկա (ԱՄՇ) և կենտրոններ: Պատմականորեն ԱՄՇ-ն ձևավորվել է թույլ զարգացած երկրներում, որտեղ էժան աշխատուժն ավելի հեշտությամբ է գնվել: Հետագայում այն ձևավորվել է նաև զարգացած երկրներում: Մարքսիստական տեսության մեջ ԱՄՄ և աշխատուժի շուկաների ձևավորման համար հիմք է հանդիսացել գործազրկությունը: Սակայն հարկ է նշել, որ այս շուկաներն ունեն նաև սոցիալ-քաղաքական բնույթ, և դրանց առաջացումը վերագրել միայն գործազրկությանը տնտեսագիտորեն ճիշտ չէ: Աշխատուժի միգրացիան բխում է հասարակության պահանջներից, քանի որ այն վերաբաշխում է աշխատանքային ռեսուրսները: Երկրների միջև համագործակցությունը պայմաններ է ստեղծում ԱՄՄ մեծացման համար, հետևաբար այն ավելի կազմակերպված է դառնում:

Համաշխարհային տնտեսության երեք կենտրոնները (ԱՄՆ, Արևմտյան Եվրոպա, Ճապոնիա) կազմավորեցին նաև ԱՄՇ երեք կենտրոնները: ԵՄ-ը 1960 թ. ստեղծեց «Եվրոպական սոցիալական հիմնադրամ», որի նպատակն է ապահովել աշխատուժի միգրացիա ԵՄ երկրների միջև և զբաղվել աշխատուժի վերարտադրման հարցերով: ԵՄ բազայի վրա ձևավորված աշխատուժի «ընդհանուր շուկան» կարգավորում է միգրացիայի գործընթացը:

ԱՄՇ հիմնական ***նպատակը*** բարձրորակ աշխատուժի հավաքագրումն է: Նման քաղաքականություն վարում են ԱՄՆ-ը, ԳՖՀ-ը, Անգլիան և այլն: Զարգացած երկրներում առաջնային է հաշվողական տեխնիկայի, տեղեկատվական միջոցների, համակարգչային ծառայությունների օգտագործումը, իսկ դրանց շահագործումը հնարավոր է միայն բարձրորակ մասնագետների միջոցով: ԱՄՇ-ն միավորում է աշխատուժի ազգային և տարածաշրջանային շուկաները, որտեղ ընդգրկվում է վարձու աշխատողների այն մասը, որը ստիպված է աշխատուժը վաճառել արտասահմանում: Շատ երկրներում ներգաղթողներն ընդգրկված են տնտեսության առանձին ճյուղերում: Օրինակ,

Ֆրանսիայում շինարարությամբ զբաղվողների 25 տոկոսը, ավտոարտադրողների 1/3-ը, Բելգիայի լեռնագործների կեսը, Շվեյցարիայում շինարարությունում աշխատողների 40 տոկոսը ներգաղթողներ են[88]:

«Ռուսաստանի դաշնության բնակչության զբաղվածության մասին» օրենքի[89] ընդունումով (1991 թ.) Ռուսաստանի բոլոր քաղաքացիներին իրավունք տրվեց աշխատանքի մեկնելու արտասահման: 1990-1995 թթ. վտարանդիների միջին տարեկան թիվը կազմեց 100-105 հազար մարդ (բացի ժամանակավոր աշխատանքի մեկնողներից):

ԱՄՇ-ի արդյունավետ յուրացման համար անհրաժեշտ է աշխատուժի արտահանման միասնական պետական կոնցեպցիա: Հետագայում Ռուսաստանը կարող է արտասահմանում պահել 1-1.5 մլն աշխատողի՝ տարեկան ստանալով 10-20 մլն դոլար: 1989-1992 թթ. Ռուսաստանից արտասահման մշտական բնակության մեկնեց երկրի գիտական աշխատողների 10 տոկոսը (75 հազար մարդ): Ըստ ՌԴ անվտանգության խորհրդի տվյալների՝ 1997 թ. Ռուսաստանում հայտնի 100 գիտնականից 50-ը մշտապես մեկնել է երկրից: Միայն ԱՊՀ-ից մեկնել է պրոֆեսորադասախոսական անձնակազմի 10 տոկոսը, այդ թվում՝ մաթեմատիկոսներ (70-80 տոկոս), ֆիզիկոս տեսաբաններ (50 տոկոս): Մտավոր զանգվածի 96.3 տոկոսը մեկնել է ԱՄՆ, Գերմանիա, Իսրայել: Մեկնում են հատկապես քիմիկոսները, ծրագրավորողները, էլեկտրոնային աշխատողները, կիրառական մեխանիկները, կենսաբանները, բնագետները, բժիշկները, ռազմական արդյունաբերության մասնագետները և ուրիշներ: Ըստ ռուս մասնագետների գնահատումների՝ 2000 թ. արտագաղթողների ընդհանուր թիվը մոտեցել է 1.5 մլն-ի, ինչի հետևանքով կորուստը կազմել է մոտ 3, իսկ ընդունող երկրների օգուտը մոտ՝ 50-60 մլրդ դոլար: Վերջին տասնամյակներում նախկին Խորհրդային Միության միգրացիոն ընդհանուր միտումը եղել է բնակչության արտահոսքը գյուղական վայրերից:

Երկրների ներսում աշխատուժի զբաղվածության հարցերով զբաղվում են ***աշխատանքի բորսաները:*** Դրանք ձեռնարկությունների և աշխատողների միջև աշխատուժի առք ու վաճառք իրականացնող միջնորդ հիմնարկներ են: Բնորոշ առանձնահատկությունն աշխատուժի առաջարկի մշտական գերազանցումն է պահանջարկին: Ներկայում աշխարհի շատ երկրներում աշխատուժ վարձելու միջնորդի դերը հիմնականում կատարում են աշխատանքի նախարարություններին ենթակա աշխատանքի բորսաները: Դրանք միջնորդական ծառայություններ են մատուցում գործազուրկներին, ինչպես նաև աշխատատեղը փոխել ցանկացողներին, ուսումնասիրում են աշխատանքի առաջարկն ու պահանջարկը, տեղեկություններ հայտնում պահանջվող մասնագի-

[88] Киреев А. П., Международная экономика, М., 2000.

[89] Օրենքի նոր մշակումն ընդունվել է 1996 թ. ապրիլի 20-ին,տես Российская газета, 6 мая, 1996.

տությունների մասին, կատարում մասնագիտական կողմնորոշման գործառույթ: Աշխատանքի միջնորդության հարցերով զբաղվում են նաև մասնավոր վճարովի գործակալությունները (գրասենյակներ), որոնք օգնում են արհմիություններին, աշխատանքի տեղավորման միջնորդ բյուրոներին:

2000 թ. ԱՄՆ-ում հաշվարկվում էր աշխատանքի ավելի քան 1900 բորսա: Մի շարք երկրներում (Անգլիա, Ֆրանսիա, Իտալիա) աշխատանքի բորսաները հաշվառում են գործազուրկներին և վճարում գործազրկության նպաստ: Ասիայի, Աֆրիկայի, Լատինական Ամերիկայի զարգացող երկրներում աշխատանքի բորսաներ ստեղծվել են 1945 թ.-ից հետո:

Ռուսաստանում աշխատանքի բորսաներ ստեղծվել են 20-րդ դարի սկզբին արդյունաբերության խոշոր կենտրոններում: Բորսաների միջոցով աշխատանքի տեղավորման կազմակերպմանն արհմիությունները չեն մասնակցել:

ԽՍՀՄ-ում աշխատանքի բորսաներ եղել են պետության ստեղծման առաջին տարիներին՝ անցումային շրջանում առաջացած անգործությունը վերացնելու նպատակով, և գոյատևել են մինչև 1930 թ.: Կատարում էին բանվորների հաշվառում և պլանաչափ բաշխում՝ ըստ տնտեսության ճյուղերի: Բորսաների կառավարմանը մասնակցում էին նաև արհմիությունները: 1930 թ. ԽՍՀՄ-ում գործազրկությանն վերացման հետ գործունեությունը դադարեցրին նաև աշխատանքի բորսաները: Դրանից հետո աշխատուժի հավաքագրման, մասնագիտական կողմնորոշման հարցերով զբաղվեցին հանրապետությունների նախարարների խորհուրդների աշխատանքի կոմիտեները և նրանց տեղական օրգանները, արտադրական ձեռնարկությունները: Հայաստանում աշխատանքի բորսաներ եղել են 1921-1930 թթ.: Գործազրկության վերացման հետ փակվել են նաև աշխատանքի բորսաները:

13.5 Աշխատուժի միգրացիայի կարգավորումը

ԱՄՄ գործընթացը կազմավորվում է ինչպես պետությունների կողմից, այնպես էլ միջազգային իրավական ակտերով: Կարգավորման հիմքում երկու հակադիր միտումներ են: Մի կողմից, բաց տնտեսության սկզբունքների համաձայն, պետություններից պահանջվում է բնակչության ազատ տեղաշարժերի պահպանում, մյուս կողմից երկրում իրական դրությունն ստիպում է կիրառել արգելքներ և սահմանափակումներ: Հիմնախնդիրները պահանջում են ստեղծել պետական և միջպետական կարգավորման համակարգ: Դեռևս 17-րդ դարում Անգլիայում օրենք ընդունվեց արդյունաբերությունում աշխատող բանվորների՝ արտասահման մեկնելն արգելելու մասին: 19-րդ դարում եվրոպական շատ երկրներ օրենք ընդունեցին մարդկանց արտահոսքն

արտասահման սահմանափակելու մասին՝ միաժամանակ միմյանց հետ կնքելով միգրացիայի կարգավորման երկկողմ կոնվենցիաներ:

Աշխատանքային և սոցիալական համագործակցության զարգացման Աշխատանքի միջազգային կազմակերպությունը (ԱՄԿ, MOT) հաստատվել է 1919 թ. Ազգերի լիգայի Վերսալի համաձայնագրով:

1924 թ. աշխատուժի միջազգային հարցերին անդրադարձել է Հռոմի միգրացիայի կոնֆերանսը: ԱՄԿ սկզբունքները և խնդիրները վերածնավորվել են 1944 թ. Ֆիլադելֆիայի (ԱՄՆ) հռչակագրով:

1946 թ. ԱՄԿ-ին տրվեց ՄԱԿ-ի մասնագիտացած կազմակերպության կարգավիճակ, որն իրավական հիմք հանդիսացավ 1948 թ. դեկտեմբերի 10-ին ՄԱԿ-ի ընդունած՝ բնակության և աշխատանքի վայրի ազատ ընտրության մարդու իրավունքների հռչակագրի, 1966 թ. ընդունած քաղաքացիական իրավունքների մասին միջազգային պայմանագրի համար:

1975 թ. ընդունվեց անվտանգության և համագործակցության խորհրդակցության ակտ, 1986-ին Վիեննայում՝ միգրանտների իրավունքների մասին փաստաթուղթ: ԱՄԿ ղեկավար օրգաններն են ***Քարտուղարությունը*** և ***Աշխատանքի միջազգային բյուրոն***: Գրասենյակը ժնևում է (Շվեյցարիա): Տարբեր երկրներում գործում են բաժանմունքներ: Կազմակերպության անդամ է 150 երկիր: Հիմնական ***խնդիրներն*** են.

- մշակել և կիրառել միջազգային կոնվենցիաների և արհմիությունների աշխատանքի իրավունքը,
- հետևել աշխատուժի հավաքագրմանը և աշխատաժամանակի կարգավորմանը,
- պայքարել գործազրկության վերացման համար և տալ նորմալ կենսապայմաններ ապահովող աշխատավարձի երաշխիքներ,
- պաշտպանել էմիգրանտների իրավունքները, ապահովել բուժսպասարկումը, կանխել գների աճը, բարձրացնել արհմիությունների դերը և լուծել սոցիալական այլ խնդիրներ,
- ապահովել միգրանտների հայրենիք վերադարձը,
- սահմանափակել մասնագետների արտահոսքը:

ԱՄԿ ֆինանսական միջոցները գոյանում են անդամավճարներից: Գործադիր օրգանը ***Վարչական խորհուրդն*** է՝ կազմված 56 անդամներից: ԱՄԿ ղեկավարը Գլխավոր դիրեկտորն է:

Միգրանտների կարգավիճակը որոշվում է միջպետական պայմանագրերով, ԱՄԿ կոնվենցիաներով: Նման կոնվենցիաներ ընդունվել են 1949 և 1975 թթ.: Դրանցում սահմանվում են միգրացված աշխատողների տեղափոխության և վարձակալության պայմանները, աշխատանքի և կրթության իրավունքը, սոցիալական ապահովվածությունը: Ըստ կոնվենցիայի՝ միգրացված աշխատողները, նրանց ընտանիքի անդամները և տվյալ երկրի հիմնական բնակչությունը պետք է ունենան հավասար իրավունքներ: Դա նշանակում է, որ էմիգրանտն իրավունք

ունի աշխատելու իր մասնագիտությամբ, ստանալու հավասար վարձատրություն, օգտվելու սոցիալական ապահովությունից:

Առանձին պետությունների կողմից ԱՄՄ կարգավորումը զուգակցվում է ՄԱԿ և ԱՄԿ կարգավորման հետ: Սակայն յուրաքանչյուր երկրի իրական պայմանները թելադրում են, որ երկիրն ինքը մշակի իր միգրացիոն քաղաքականությունը՝ ներառյալ երկիր մուտք գործելու և երկրից գնալու մասին օրենքները: Միգրացիոն քաղաքականության հիմքում աշխատուժի արտահանման, արտասահման մեկնելու և հայրենիք վերադառնալու կանոններն են: Առաջ են քաշվում.

- աշխատողների աշխատանքի տեղավորման իրավունքի ապահովման,
- մեկնողների հայրենիք վերադառնալու երաշխավորման,
- մեկնողների արժութային փոխանցումները մուտքագրելու և արդյունավետ օգտագործելու երաշխավորման,
- պահանջարկ չունեցող գործազուրկ մասնագետներին աջակցելու,
- տնտեսության առանձին ճյուղերում սեփական պահանջարկը չբավարարած մասնագետների արտահանումը սահմանափակելու,
- արտասահմանում մասնագիտություն ստացած և հայրենիք վերադարձած աշխատուժի պահանջի բավարարման,
- մեկնողների սոցիալական երաշխիքների ապահովման և այլ սկզբունքների կիրառման հարցերը:

Զարգացած երկրները մեծ մասամբ վարում են միգրացիայի պրոտեկցիոնիստական քաղաքականություն՝ պաշտպանելով սեփական բնակչության և ազգային տնտեսության շահերը: Այսպես, ըստ ներգաղթողների մասին ԱՄՆ օրենքի, սկսած 1955 թ., երկիր մուտք գործող աշխատողների թիվը սահմանվել է տարեկան 140 հազար մարդ: Ներգաղթի օրենսդրությունը խստացվել է նաև եվրոպական երկրներում: 1993 թ. Ֆրանսիան սահմանափակեց ներգաղթողների մուտքը, իսկ Գերմանիան որոշում ընդունեց նրանց բնակության պայմաններ չտրամադրելու և պայմանագրով աշխատողների երեխաների քաղաքացիության իրավունքը չճանաչելու մասին:

«Ընդհանուր շուկայի» կազմավորման մասին Հռոմի՝ 1957 թ. պայմանագրի (ուժի մեջ է մտել 1958 թ.) 52-րդ կետը ԵՄ անդամ երկրների քաղաքացիներին իրավունք է տալիս աշխատանք որոնելու ԵՄ ողջ տարածաշրջանում: Շենգենյան գոտու երկրները՝ Ֆրանսիան, Գերմանիան, Իտալիան, 1993 թ. Շենգենյան համաձայնագրով սահմանեցին խմբային կանչերով իրավունք: Դուբլինյան կոնվենցիան 1990 թ. սահմանեց ներգաղթողներին ապաստան տրամադրելու իրավունք: 1989 թ. դեկտեմբերին սահմանվեց ԵՄ-ում աշխատողների հիմնական սոցիալական իրավունքների խարտիա, որտեղ նշվում է, որ յուրաքանչյուր աշխատող այդ երկրներում պետք է ունենա ազատ տեղափոխման իրավունք՝ ենթարկվելով միայն հասարակական կարգի, անվտանգության և առողջության պահպանման իրավունքներին և սահմանափակումներին: Ըստ խարտիայի՝ ազատ տեղափոխությունները յուրաքանչյուր աշխատողի պետք է իրավունք տան ԵՄ երկրներում աշխատանքի տեղավորման, աշխատանքային պայմանների, սոցիալական պաշտպանվածության, իրավահավասարության սկզբունքների հիման վրա ընտրելու ցանկացած զբաղմունք կամ մասնագիտություն:

Ըստ որոշ մասնագետների՝ ԵՄ շրջանակներում ազատ տեղափոխությունները կարող են առաջ բերել բարձրորակ մասնագետների կենտրոնացում ավելի զարգացած երկրներում, քանի որ ցածրորակ աշխատողները քիչ մոբիլային են: Այս պատճառով կարող է առաջանալ աշխատուժի էժան վաճառք: Այսպես, պորտուգալական աշխատուժը Ֆրանսիայում և Գերմանիայում շինարարական աշխատանքներ կատարում է ազգային ստանդարտներից ցածր վճարով: Ռուսաստանի իշխանությունները երկիր մուտք գործած օտարերկրյա աշխատուժի կարգավորման համար նույնպես կիրառում են որոշ միջոցառումներ: Հաշվի առնելով աշխատանքի տարածաշրջանային շուկայի վիճակը՝ աշխատուժի թվի քվոտավորումը կարգավորում է պետությունը: 1993 թ. դեկտեմբերին ՌԴ նախագահի հրամանով հաստատվեց օտարերկրյա աշխատուժի ներգրավման և օգտագործման մասին հրահանգը, որով սահմանվում է ներգաղթողների աշխատանքային գործունեության կարգը Ռուսաստանի տարածքում: Արտասահմանից աշխատուժի ընդունման թույլտվություն կարող է տրվել Ռուսաստանի տարածքում արտասահմանյան ինվեստիցիաներով գործող ձեռնարկությունների կողմից:

Օտարերկրյա աշխատուժի մուտքը Ռուսաստանի տարածք երբեմն առաջ է բերում անօրինական ներհոսք: Ապօրինի ներգաղթողների թիվը տարեկան կազմում է մոտ 100 հազար մարդ: Միգրացիայի կարգավորման համար ՌԴ կառավարությունը ձեռնարկել է մի շարք քայլեր: Կնքվել են միջկառավարական համաձայնություններ Գերմանիայի, Լեհաստանի, Շվեյցարիայի, Ֆինլանդիայի, Սլովակիայի, Չինաստանի և ԱՊՀ պետությունների հետ:

Զարգացած երկրներին բնորոշ է գործազրկությունը, ուստի աշխատուժի շուկան ապահովում է զբաղվածություն և կենսամակարդակ: ԱՄՄ կարգավորման համար ԵՄ երկրները ստեղծում են աշխատուժի շուկային և սոցիալական ապահովությանը համապատասխան մեխանիզմ: Ի տարբերություն Արևմտյան Եվրոպայի, ԱՄՆ-ում, Ճապոնիայում վարձատրությունը կենտրոնացած չէ: Ընդունված օրենքները թույլ ազդեցություն ունեն աշխատավարձի վճարման վրա:

Միգրացիան կարգավորվում է ***օրենսդրությամբ*** (Արևմտյան Եվրոպայի աշխատուժի շուկա) և ***ազատ*** (ԱՄՆ) սկզբունքով: Աշխատուժի և զբաղվածության կարգավորման ճապոնական համակարգին բնորոշ են ընկերություններում ընդգրկված աշխատողների պարտադիր հա-

ճախումը տվյալ ընկերության դպրոց, մասնագիտական լրացուցիչ պատրաստվածություն, սոցիալ-հոգեբանական դաստիարակություն ստանալը:

Աշխատուժի համար կարևոր է ընկերության կամ պետության կողմից գործազրկության նպաստ տալը: ԱՄՆ-ում 9 ամիս տրվում է գործազրկության նպաստ, որը կազմում է տվյալ աշխատողի նախկին աշխատավարձի 50 տոկոսը: Արևմտյան Եվրոպայի երկրներում նպաստ տրվում է 60-90 տոկոսի չափով՝ 1-3 տարի ժամանակով: Աշխատուժ ընդունող երկրների մեծ մասը կիրառում է տարբեր օրենքներ և օրենսդրական ակտեր:

Ներգաղթի մասին օրենսդրության հիմնական պահանջներն են.

- ***պրոֆեսիոնալ որակավորումը*** (կրթություն, մասնագիտական ստաժ),
- ***անձնական բնույթի սահմանափակումները*** (երկիր չեն թողնում թմրամոլներին, հոգեկան և այլ հիվանդներին),
- ***տարիքային կազմը*** (20-40 տարեկան)՝ կախված արդյունաբերության այն ճյուղերի պահանջից, որտեղ նրանք պիտի աշխատեն (օրենքով արգելվում է նաև նախկինում դատվածների, ահաբեկչական կազմակերպությունների անդամների մուտքը երկիր),
- ***քանակական քվոտավորումը*** (երկրների մեծ մասն ընդունում է սահմանված թվով ներգաղթողների),
- ***տնտեսական կարգավորումը*** (կիրառվում են որոշակի ֆինանսական սահմանափակումներ),
- ***ժամանակի սահմանափակումը*** (օտարերկրացի աշխատողների համար սահմանվում է տվյալ երկրում մնալու կոնկրետ ժամկետ, որը լրանալիս կամ պետք է հեռանալ կամ ստանալ ժամկետը երկարեցնելու թույլտվություն):

Արգելքները լինում են ***բացահայտ*** և ***գաղտնի***. ***Բացահայտ*** արգելքների դեպքում առանձին ճյուղերում կամ մասնագիտություններով օտարերկրացիներն իրավունք չունեն աշխատելու: ***Գաղտնի*** արգելքների դեպքում սահմանվում է ճյուղերի և մասնագիտությունների ցանկ, որտեղ կարող են աշխատել միայն տվյալ երկրի քաղաքացիները: Արևմտյան երկրներում գործում են նաև այլ արգելքներ: Ըստ զբաղվածության գերմանական ֆեդերալ ինստիտուտի կանխագուշակման՝ պետք է դժվարացնել արտասահմանցիների մուտքը ԵՄ երկրներ:

ԳԼՈՒԽ 14
ՀԱՅԱՍՏԱՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

14.1 Հայաստանի միջպետական առևտրային կապերի ձևավորումը

Հնագույն ժամանակներից Հայաստանը եղել է տարանցիկ առևտրի կենտրոն: Տարբեր երկրների միջև առևտրում ակտիվ մասնակցություն է ունեցել Կիլիկիայի վաճառականությունը, որը ճենովա, Ֆլորենցիա, Վենետիկ և այլ քաղաքներ արտահանել է բուրդ, կաշի, գործվածք, երկաթ, պղինձ, անասուն, բրուտագործական իրեր, չոր մրգեր, ցորեն, գինի, փայտանյութ, ներկ, աղ և այլն:

13-րդ դարի սկզբում առևտուր կատարվում էր Հայաստանի և Փոքր Ասիայի խոշոր կենտրոնների միջև: Հատկապես աչքի են ընկել Նոր Ջուղայի վաճառականները, որոնք հիմնականում արտահանում էին մետաքսյա գործվածք, ուղտի բուրդ, գորգեր, թանկարժեք քարեր, ոսկյա զարդեր, խունկ և այլն:

17-րդ դարի կեսերին պատմական Հայաստանի գրեթե բոլոր քաղաքներում՝ Բիթլիսում, Շոռոթում, Ագուլիսում, Երզնկայում, Կարինում, Վանում, ինչպես նաև Անդրկովկասի, Իրանի, Թուրքիայի հայաբնակ կենտրոններում՝ Թիֆլիսում, Շամախիում, Համադանում, Զմյուռնիայում, Տրապիզոնում, Նոր Ջուղայում և այլուր գործել են Շարիմաենց, Խոջա-Մինասենց, Աղազարենց և այլ առևտրական ընկերություններ: Հայ վաճառականները թանկարժեք քարեր են գնել Իրանից և արտահանել եվրոպական երկրներ: Էրզրումի վաճառականներն Անգլիա, Ֆրանսիա, Հոլանդիա առաքում էին այծի բուրդ, Իրան՝ պղնձե ամանեղեն, Մոսկվա՝ ջրային կենդանիների մորթիներ, իսկ Ռուսաստանից ներմուծում էին երկաթ, հացահատիկ, արդյունաբերական ապրանքներ: Նույն տարիներին կապ է հաստատվել Ղրիմի հայ և ճենովայի ու Ռուսաստանի առևտրականների միջև, իսկ ռուս-իրանական առևտրում իրենց դերն են ունեցել նաև Աստրախանի հայ առևտրականները:

1717 թ. Ռուսաստանում արտոնյալ պայմաններով հաստատվելու իրավեր են ստացել Զմյուռնիայի վաճառականներ Պետրոս, Աբրահամ, Ստեփան, Ապրո եղբայրները: 18-րդ դարի երկրորդ կեսին հայ վաճառականներից շատերը (Շիրվանով, Շարիման, Մանուիլով, Բունիաթովներ, Լազարյաններ) իրենց կապիտալը ներդրել են Ռուսաստանի մանուֆակտուրային արտադրության մեջ:

1758 թ. հայ վաճառականներ Իսախանով եղբայրների գլխավորությամբ ստեղծվել է ռուս-իրանական առևտրական բաժնետիրական ընկերություն: Ռուս-թուրքական առևտրական գործընթացում Պետրոս Մեծը Թուրքիայի հայ վաճառականությանը շնորհել է տարբեր արտո-

նություններ: Ղրիմի հայ առևտրականները Թուրքիայից ներմուծում էին սուրճ, մեղրամոմ, ձեթ, մերձարևադարձային պտուղներ և արտահանում հացահատիկ, բուրդ, աղ, կաշի և այլն:

Չնայած 1804-1813 թթ. ռուս-պարսկական երկարատև պատերազմին՝ առևտուրը Ռուսաստանի և Հայաստանի միջև ավելի ընդլայնվեց, ինչին նպաստեց Գյուլիստանի հաշտության պայմանագրով ապրանքների արժեքի 5 տոկոսի չափով ընդհանուր մաքսի սահմանումը: Ապրանք արտահանում էին Զմյուռնիան, Սեբաստիան, Կեսարիան, Դիարբեքիրը, Տրապիզոնը, Վանը, Մարաշը, Հաճնը, Ադանան, Երևանը, Շուշին: Վերջին երկուսը կապված էին Թավրիզի, Թիֆլիսի, Բաքվի, Կարսի, Կարինի, Բայազետի հետ և արտահանում էին տեղական արտադրության ապրանքներ:

Արևելյան Հայաստանի և Պարսկաստանի միջև առևտրին ակտիվ մասնակցում էր Թիֆլիսի հայ վաճառականությունը: Ռուսաստանի կառավարությունը շահագրգռված էր դրանով, քանի որ առևտուրը նպաստում էր մանուֆակտուրային արտադրությանը: Հայ առևտրական բուրժուազիան իր համար բարենպաստ պայմաններ ստեղծելու նպատակով աջակցում էր Ռուսաստանի առևտրի ծավալմանը հարավում: Դրան նպաստում էր այն, որ Արևմտյան Հայաստանի մի շարք բնակավայրերում (Կաղզվան, Ալաշկերտ, Խնուս, Երզնկա, Բասեն, Խլաթ, Արճեշ, Սվազ, Ամասիա, Արաբկիր) արտադրվում էր մեծ քանակով հացահատիկ, Կիլիկիայում՝ բամբակ, Տրապիզոնի և Ադանայի տարածքում՝ ծխախոտ, Դիարբեքիրում՝ շերամի թել: Մշակվում էին խաղող, միրգ, ձիթապտուղ և մերձարևադարձային այլ կուլտուրաներ:

Լայն տարածում ունեին անասնապահությունը, գյուղատնտեսությունը: Եվդոկիայում, Էրզրումում, Երզնկայում, Խարբերդում, Սեբաստիայում զարգացած էին արհեստագործությունը, պղնձագործությունը, Վանում՝ ոսկերչությունը, Սասունում, Վանում, Զեյթունում՝ զինագործությունը: Էրզրումը հայտնի էր նաև բամբակյա, բրդյա, մետաքսյա գործվածքներով, գորգագործությամբ: Տարածված էին կաշեգործությունը, բրուտագործությունը, մուշտակագործությունը, որոնց մի մասն արտահանվում էր այլ երկրներ: Զարգացան մանուֆակտուրան, մահուդագործությունը: 1828 թ., Արևելյան Հայաստանը Ռուսաստանի կազմում ընդգրկվելուց հետո, ռուսական կառավարության աջակցությամբ 1868 թ. Երևանում հիմնվեց բամբակ զտող և հակավորող գործարան: Անդրկովկասը դարձավ Ռուսաստանի բամբակի և մետաքսի հումքի մատակարար:

19-րդ դարի կեսերին հայ առևտրականների ձեռքում էր կենտրոնացած Անդրկովկասի առևտրի մեծ մասը: Երևանի և Ալեքսանդրապոլի առևտրականներն ակտիվ գործունեություն էին ծավալում Ռուսաստանում, Պարսկաստանում, Թուրքիայում: Ալեքսանդրապոլի արհեստավորներն իրենց արտադրանքը Թիֆլիսով արտահանում էին Թուրքիա: Միայն 1868 թ. այդ ճանապարհով արտահանվել է 350 հազար

ռուբլի (արծաթ) արժողության ապրանք: Առևտուրը և առևտրականները ստանում էին պետական հովանավորություն: Վերացվեցին ներքին մաքսային արգելքները: Ռուսաստանի իշխանությունները խրախուսում էին հայ առևտրականներին: 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին Արևելյան Հայաստանում՝ Նախիջևանում (1869 թ.), Երևանում (1870 թ.), Մեղրիում (1901 թ.), Վաղարշապատում (1903 թ.), Ղամարլուում (1907 թ.) և այլուր ձևավորվում են սպառողական կոոպերատիվ ընկերություններ, որոնց թիվն անցնում է 270-ից:

Նույն ժամանակամիջոցում կապիտալիզմը զարգացավ նաև Անդրկովկասում: Առաջացան արդյունաբերական կենտրոններ: Պարսկաստանի և Թուրքիայի տիրապետության տարիներին օգտագործվում էր Նախիջևանի, Կողբի, Կաղզվանի աղի հանքերի չնչին մասը: 1830 թ. Կողբի աղի հանքերից արտահանվում էր տարեկան 250 հազար փութ աղ, որը բավարարում էր Երևանի նահանգի, Վրաստանի, Օսեթիայի, Ղարաբաղի առանձին հատվածների 540 հազար բնակչության պահանջները: Բոլոր հանքերը միասին արտադրում էին 0.5 մլն փութ աղ: 1850 թ. աղի արտադրանքը հասավ 1 մլն փթի: 1886 թ. Կողբի աղի հանքերում արտադրվում էր 1 մլն, Նախիջևանի աղի հանքերում՝ 295.6, Կաղզվանի հանքերում՝ 710.0 հազար փութ աղ[90]:

Թեև Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատն աշխատում է 1952 թ.-ից, բայց Քաջարանի հանքավայրի պատմությունը սկսվում է 19-րդ դարի կեսից, գերմանացի երկրաբան Հերման Աբիխի ուսումնասիրությունից: Այնուհետև դրանով զբաղվում են երկրաբաններ Ա. Արխիպովը, Գ. Խալաթովը, Ա. Կոնշինը և այլք: Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալուց հետո 1830-1840 թթ. պղնձի արտադրությունը 2.5 անգամ ավելացավ: 1840 թ. արտադրվում էր 500 փութ մաքուր պղինձ: 1886 թ. Ալավերդու հանքերում արտադրվեց 2318, Շամլուղում՝ 3640 փութ պղինձ: Հայաստանը Ռուսաստանին տալիս էր արտադրվող պղնձի 30-35 տոկոսը[91]: Առևտրական գործընթացին մասնակցեց նաև գյուղացիությունը և 1865 թ. ստացավ 305 վկայական:

Արևելյան Հայաստանի տնտեսության մեջ կարևոր տեղ էր գրավում գյուղատնտեսական հումքի վերամշակման բազայի վրա զարգացած սննդարդյունաբերության ճյուղը (կոնյակ, սպիրտ, օղի, գինի), որում իշխում էին հայ և ռուս կապիտալիստները: Հայկական կոնյակի արտադրությունը սկսվում է 1887 թ. Երևանում՝ վաճառական Ն. Թահիրովի գինու գործարանում: 1889 թ. Ն. Թահիրովն իր գործարանը վաճառում է ռուսաստանցի Ն. Շուստովին: Վերջինս վերասարքավորում է այն և կոնյակի արտադրությունը դնում նոր հիմքերի վրա: 1899 թ. Երևանի նահանգում գործող կոնյակի 6 ձեռնարկություններում (Գյոզալովի (1892 թ.), Սարաջևի (1894 թ.), Սողոմոնովի-Խուբլարովի (1897

[90] Խոջաբեկյան Վ. Ե., Հայաստան, «Ֆինանսներ և էկոնոմիկա» հանդես, 2006, էջ 6-9:
[91] Խոջաբեկյան Վ. Ե., Հայաստան, «Ֆինանսներ և էկոնոմիկա» հանդես, 2006, էջ 6-9:

թ.), Աֆրիկովի, Տեր-Մկրտչյանի (1899 թ.), Թահիրովի (հետագայում՝ Շուստովի)) արտադրված կոնյակի մեծ մասը վաճառվում է Մոսկվայում, Թիֆլիսում, Բաքվում, Ելիզավետպոլում, Կարսի մարզում: 1914 թ. Երևանի նահանգում գործում էր 15 ձեռնարկություն, որոնք արտադրում էին տարեկան 220 հազար դեկալիտր կոնյակ, որից 89 հազարը՝ Ն. Շուստովի գործարանում: 1921 թ. սկզբին Ն. Շուստովի գործարանը վերանվանվեց «Արարատ»: Այնուհետև, 1922 թ., գինու 6 և կոնյակի 5 գործարանները միավորվեցին և հիմնվեց գինու և կոնյակի «Արարատ» տրեստը: 1953 թ. սկսեց գործել Երևանի կոնյակի գործարանը: 1960-1980 թթ. կառուցվեցին նաև Արմավիրի, Այգավանի, Բուրաստանի, Պռոշյանի կոնյակի գործարանները: Այսօր Հայաստանում գործում են կոնյակ արտադրող 13 ընկերություններ:

Կիրառում գտան նաև գյուղատնտեսական հումքի վերամշակումը, բամբակազտիչ, բրնձամաքրիչ, մետաքսագործական, կաշվի, օճառի արհեստանոցները, ծիթհանները, ջրաղացները և այլն: 1882 թ. Արևելյան Հայաստանում հաշվվում էր 589 ձեռնարկություն՝ 2518 աշխատողներով: Ցարական վիճակագրության տվյալներով՝ 1890 թ. Երևանի նահանգում կար 2781, այսպես կոչված, «արդյունաբերական ձեռնարկություն», որոնցից 1932-ը ջրաղացներ էին, 273-ը՝ բամբակազտիչ, 165-ը՝ խաղողի օղեթորման, 117-ը՝ սպանդանոցներ, 3-ը՝ գարեջրի, 3-ը՝ աղի հանք, 1-ը՝ պղնձածուլարան: Դրանցում զբաղված էր 4783 աշխատող[92]:

Արևելյան Հայաստանում զարգացած էին տարատեսակ արհեստներ: Երևանում բոլոր արհեստավորները 19-րդ դարի վերջին միավորված էին 26 համքարություններում: Կային արծաթագործներ, ատաղձագործներ, ոսկերիչներ, պղնձագործներ, դարբիններ, կաշեգործներ, կոշկակարներ, ծխախոտագործներ, ներկարարներ, մոմագործներ, դերձակներ, պայտարներ, արդուզարդ, կենցաղային իրեր, գյուղգործիքներ պատրաստող վարպետներ և այլն:

Մինչև 19-րդ դարի վերջն առևտուրը հիմնականում սպասարկում էր տեղական շուկային: Հետո կարևոր դեր խաղաց նաև արտաքին առևտուրը, որը սկսեց սպասարկել արտաքին կապիտալին: Դրան նպաստեցին ռուսական տեքստիլ արդյունաբերության զարգացումը և բամբակի, բրդի նկատմամբ պահանջարկի մեծացումը, հետևաբար՝ ապրանքաշրջանառության մեջ դրանց չափերի աճը:

Ռուսաստանի միջոցներով Հայաստանում սկսվեց երկաթուղու շինարարությունը: 1899 թ. փետրվարի 7-ին շահագործման հանձնվեց Թիֆլիս-Ալեքսանդրապոլ երկաթուղին, հունիսին՝ Ալեքսանդրապոլ-Կարս ուղեմասը, իսկ հուլիսի 2-ին սկսվեց գնացքների կանոնավոր երթևեկությունը Թիֆլիս-Կարս 300 կմ երկարությամբ երկաթուղով: 1902 թ. դեկտեմբերի 6-ին շահագործման հանձնվեց Ալեքսանդրապոլ-

[92] Խոջաբեկյան Վ. Ե., Հայաստան, «Ֆինանսներ և էկոնոմիկա» հանդես, 2006, էջ 6-9:

Երևան-Ջուլֆա երկաթուղին, որի կառուցումը նպաստեց հատկապես պղնձի արտահանմանը և առևտրի զարգացմանը: Մինչև Թիֆլիս-Երևան երկաթուղու կառուցումն առևտրային քարավանները ծգվում էին Երևան-Ջուլֆա, Երևան-Կարս-Էրզրում խճուղիներով: 1914 թ. բեռնափոխադրումներով զբաղվում էին Երևանի նահանգի 408 գյուղերի 6000-ից ավելի ընտանիքներ՝ իրենց սայլերով, ձիերով, ուղտերով, ջորիներով, էշերով:

Կապված կոնյակի, գինու արդյունաբերության ընդլայնման հետ՝ արագորեն զարգանում էր խաղողագործությունը: Որոշ չափով զարգացան նաև կաթնամշակումը, անասնապահությունը, բամբակագործությունը, մետաքսագործությունը, կաշեգործությունը: Ռուսաստան էին արտահանվում բամբակ, բուրդ, բրինձ, կաշի, կաթնամթերք, պտուղ-բանջարեղեն, իսկ այնտեղից ներմուծվում էին շաքար, գործվածք, հացահատիկ, պողպատ, թուջ, ածուխ, փայտանյութ, լուցկի, օճառ, ապակի, ցեմենտ և այլն:

Հայ խոշոր կապիտալիստներ Մանթաշովը, Ղուկասովը, Միրզոևը, Արամյանցը, Մայիլովը, Ադիլխանովը և ուրիշներ առաջատար դիրքեր ունեին Բաքվում, Թիֆլիսում, Բաթումում: Հայաստանում գործում էին միջին մեծության ձեռնարկություններ:

Կապիտալիզմի զարգացումով էր պայմանավորված 1887 թ. «Ախթալայի հանքերի ֆրանսիական ընկերության» ստեղծումը: 1911 թ. վերջինս միավորեց նաև Զանգեզուրի պղնձարդյունաբերական ձեռնարկությունները, ինչի արդյունքում նրա բաժինը Հայաստանի պղնձարդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալում 1913 թ. կազմեց 85 տոկոս:

Արևելյան Հայաստանում ընդարձակվեցին նաև բանկային և վարկային հարաբերությունները: Դրամաշրջանառության ոլորտում տիրապետող էին ռուսական բանկերը: 1913 թ. Երևանում գործում էին Ռուսաստանի պետական և Ազով-Դոնյան բանկերի բաժանմունքները: Միայն վերջինիս միջոցները կազմում էին Հայաստանի վարկային համակարգի բոլոր միջոցների 56 տոկոսը: Գործում էին նաև Վոլգա-Կամայի բաժնետիրական բանկի լիազորությունը, Թիֆլիսի առևտրային բանկի բաժանմունքը և փոխադարձ վարկի ընկերությունը:

14.2 Հայաստանի տնտեսական հարաբերությունները 1920-1990 թթ.

1920 թ.-ից հետո Հայաստանի տնտեսական կապերը նոր հիմքերի վրա են դրվում: 1921 թ. հունիսի 2-ին Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի միջև ստորագրվում է համաձայնագիր Անդրկովկասի արտաքին առևտուրը միավորելու վերաբերյալ: Ձևակերպվում են երեք հանրապետությունների՝ արտաքին շուկաներում միասնաբար հանդես գալու հիմնական սկզբունքները: Այս շրջանում Հայաստանը ղեկա-

վարվում էր սուվերեն իրավունքի, միջազգային պայմանագրերից բխող պարտավորությունների կատարման սկզբունքով: Տնտեսական հարաբերությունների մեջ էր մտնում արտասահմանյան երկրների հետ, կնքում պայմանագրեր, փոխանակում դիվանագիտական ներկայացուցիչների, մասնակցում միջազգային կազմակերպությունների գործունեությանը, վավերացնում և դենոնսացնում (չեղյալ համարել) միջազգային պայմանագրեր:

Հայաստանում ինդուստրիայի մի շարք ճյուղեր հիմնադրվում են Ռուսաստանի, Ուկրաինայի և միութենական մյուս հանրապետությունների օգնությամբ, որոնց հետ Հայաստանի տնտեսական կապերն իրականացվում են արտադրատեսակների փոխադարձ մատակարարման, ձեռնարկությունների համատեղ կառուցման, ԳՏ համագործակցության, արտադրության, շինարարության, առաջավոր փորձի փոխանակման, կադրերի պատրաստման միջոցով:

1930-1940-ականներին Հայաստանը միութենական հանրապետություններին մատակարարում էր հումք և կիսաֆաբրիկատներ: 1950-ական թվականներին հայկական շատ արտադրատեսակներ լայն ճանաչման արժանացան միությունում և նրա սահմաններից դուրս: Հայաստանը սոցիալիստական և կապիտալիստական 32 երկիր արտահանում էր 104 անուն արդյունաբերական ապրանք: Միութենական հանրապետություններին մատակարարում էր պղինձ, մոլիբդենի խտանյութ, ալյումինի գլանվածք, մետաղահատ հաստոցներ, շարժական էլեկտրակայաններ, հիդրոպոմպեր, ուժային տրանսֆորմատորներ, գեներատորներ, կոմպրեսորներ, էլեկտրաճշգրիտ չափիչ գործիքներ, էլեկտրալամպեր, ավտոդողեր, սինթետիկ կաուչուկ, տեխնիկական սարքեր, պոլիմերային իրեր, բյուրեղապակյա արտադրանքներ, քիմիական նյութեր, գործվածք, կոշկեղեն, ոգելից խմիչքներ, հանքային ջրեր, բանջարեղենի և մրգերի պահածոներ, եթերային յուղ, ծխախոտ, կաբելային արտադրանք, ժամացույցներ և այլն:

1960-ական թթ. Հայաստանն էլեկտրատեխնիկական արդյունաբերության արտադրանքի ծավալով միության մեջ գրավում էր 3-րդ տեղը: Այդ ճյուղի արտադրանքի 80 տոկոսն առաքվում էր այլ հանրապետություններ: Հայաստանը տուֆաքարի, հրաբխային խարամի, պեռլիտի, բազալտի, գունավոր մարմարների հիմնական մատակարարներից էր: Մյուս հանրապետություններից Հայաստան էին ներմուծվում սև և գունավոր մետաղներ, ապակե տարաներ, նավթամթերք, գազ, տրանսպորտային, գյուղատնտեսական մեքենաներ, փայտանյութ, թուղթ, շինարարական ապակի, տեխնոլոգիական, լեռնաքարային, սննդի և թեթև արդյունաբերությանն անհրաժեշտ սարքավորումներ, այլ արտադրատեսակներ: Հայաստան ներմուծվող մեքենաշինական արտադրանքի 53, անտառանյութի և թղթի 95, սև մետաղների 45, թեթև արդյունաբերական ապրանքների 80 տոկոսը ստացվում էր Ռուսաստանից: Սև մետաղներ, քարածուխ, տրանսպորտ, գյուղատնտեսական և այլ մեքենաներ, տրակտորներ, շաքար, կենդանական և բուսական յուղ, ապակի, հրակայուն իրեր ստացվում էին Ուկրաինայից, նավթի 80 տոկոսը՝ Ադրբեջանից, սև մետաղ, տրանսպորտ, սննդարդյունաբերության սարքավորումներ, թեյ և այլ ապրանքներ՝ Վրաստանից: Բազմաբնույթ էին Հայաստանի և Բելառուսի, Մոլդովայի, մերձբալթյան, միջինասիական հանրապետությունների միջև տնտեսական կապերը:

Հայաստանում արդյունաբերական խոշոր ձեռնարկությունների՝ երկաթուղու, էլեկտրակայանների, Արփա-Սևան ջրատարի և մյուս խոշոր շինարարական օբյեկտների կառուցման աշխատանքներին մասնակցել են միության բոլոր հանրապետությունների մասնագետները: Հայաստանի մասնագետներն ակտիվորեն մասնակցել են Ուրալի, Սիբիրի, Հեռավոր Արևելքի, Ուկրաինայի, Ղազախստանի, Միջին Ասիայի մետալուրգիական գործարանների, էլեկտրակայանների, քաղաքների, երկաթուղու մայրուղիների, գազամուղների, նավթամուղների կառուցմանը: Հայաստանը մասնակցում էր նաև սոցիալիստական երկրների՝ աշխատանքի միջազգային բաժանման գործընթացին:

Հայաստանը տնտեսական հարաբերությունների մեջ էր զարգացած երկրների հետ: Կնքելով տնտեսական համագործակցության պայմանագրեր՝ մասնակցում էր արտաքին առևտրին, միջազգային տոնավաճառներին և ցուցահանդեսներին, գիտատեխնիկական համագործակցությանը, մասնագետների պատրաստմանը: 1980-ական թվականներին Հայաստանից աշխարհի մոտ 80 երկիր արտահանվում էր ավելի քան 200 անուն արդյունաբերական արտադրանք: Տնտեսական հարաբերություններին մասնակցում էր Հայաստանի մոտ 160 արդյունաբերական, գիտահետազոտական, շինարարական, առևտրական ձեռնարկություն և կազմակերպություն: Ստեղծվել էր գիտատեխնիկական համագործակցություն Հայաստանի և սոցիալիստական երկրների միջև: Համագործակցում էին Երևանի «Նաիրիտ» գիտաարտադրական, «Հայէլեկտրաշարժիչ» արտադրական միավորումները, Չեխոսլովակիայի քիմիագործները և էլեկտրաշինարարները, Երևան և Բռնո քաղաքների, Հունգարիայի սննդարդյունաբերական ձեռնարկությունները: Տնտեսական հարաբերություններ էին ստեղծվել նաև Հայաստանի և ԳԴՀ-ի, Լեհաստանի, Հարավսլավիայի, Ռումինիայի, Վիետնամի և սոցիալիստական մյուս երկրների միջև:

1960 թ. տնտեսական կապեր հաստատվեցին Հայաստանի և զարգացող երկրների միջև: Հայկական էլեկտրատեխնիկական սարքաշինության, հաստոցաշինության բազմատեսակ արտադրանքներ արտահանվում էին Անգոլա, Եթովպիա, Ալժիր, Լիբանան, Սուդան, Սենեգալ, Գվինեա, Մալի, Եգիպտոս և աֆրիկյան այլ երկրներ, ինչպես նաև Հնդկաստան, Աֆղանստան, Իրաք, Ինդոնեզիա, Արգենտինա, Բրազիլիա, Բոլիվիա, Պերու, Մեքսիկա և այլուր: Հայ մասնագետները մասնակցել են Եգիպտոսում, Նեղոսի վրա Ասուանի հիդրոէլեկտրակայանի և

ջրամբարի, Գանայի ՀԷԿ-ի, Նիգերիայի մետալուրգիական գործարանի, ինչպես նաև աֆրիկյան մյուս երկրների սննդի և թեթև արդյունաբերության, գյուղատնտեսական օբյեկտների կառուցմանը: Հայաստանի նախագծային ինստիտուտների մասնագետները նախագծել և կառուցել են Բաղդադի էլեկտրատեխնիկական գործարանը, մասնակցել Աֆղանստանի Ջալալաբադի ջրանցքի և Հինդիկուշի ավտոխճուղու, Իրանի, Նեպալի, Շրի-Լանկայի ձեռնարկությունների կառուցմանը, Բենգալայա քաղաքի համալսարանի հաշվողական կենտրոնի կազմակերպմանը:

Հայաստանը տնտեսական կապեր ուներ նաև զարգացած երկրների հետ: ԳՖՀ, Անգլիա, Իտալիա, Ավստրիա, Ֆրանսիա, Ֆինլանդիա, Դանիա, Նիդեռլանդներ, Նորվեգիա, Շվեդիա, Կանադա, Ավստրալիա, Ճապոնիա արտահանվում էին հայկական ճշգրիտ սարքեր, հիդրոպոմպեր, գորգեր, դարբնոցամամլիչային սարքեր, քիմիկատներ, ոգելից խմիչքներ: Հայաստանը 1965 թ.-ից տնտեսական համագործակցություն սկսեց Ֆրանսիայի, Անգլիայի, ԳՖՀ-ի քիմիագործների, Իտալիայի մարմարագործների հետ: Չեխոսլովակիայից, ԳՖՀ-ից, Ֆրանսիայից, Իտալիայից Հայաստան ներմուծվում էին քիմիական, մետաղամշակման, լեռնահանքային, մետալուրգիայի, փայտամշակման, թեթև, սննդի արդյունաբերությանն անհրաժեշտ սարքավորումներ, Ճապոնիայից, Ֆրանսիայից, Անգլիայից՝ բժշկական սարքավորումներ, Բրազիլիայից, Պերուից, Մեքսիկայից, Կուբայից, Անգոլայից՝ հրուշակեղենի արտադրության հումք (սուրճ, կակաո), արևադարձային կուլտուրաներ և այլ ապրանքներ: Հայաստանը բաժին ուներ ԽՍՀՄ-ից արտահանվող և ներմուծվող արտադրատեսակների մեջ, ակտիվորեն մասնակցում էր նաև միջազգային տոնավաճառներին և ցուցահանդեսներին: Առաջին անգամ 1921 թ. մասնակցել է Նիժնի Նովգորոդում կազմակերպված միջազգային տոնավաճառին, որտեղ ցուցադրել է մորթի, մուշտակ, կաշի, բուրդ, կոնյակ, տնայնագործական արտադրանքներ: 1923 թ. Լիոնի միջազգային տոնավաճառին Հայաստանը մասնակցել է ազգային գորգերով, 1928 թ. Փարիզի տոնավաճառին՝ տուֆաքարի նմուշներով, 1937 թ. Փարիզի և 1939 թ. Նյու Յորքի միջազգային տոնավաճառներին՝ հայկական գորգերով: 1961 թ.-ից հետո Հայաստանի արտադրանքները ցուցադրվել են միջազգային 26 տոնավաճառներում, այդ թվում՝ Լայպցիգի, Պրահայի, Բելգրադի, Բուդապեշտի, Դամասկոսի, Պոզնանի, Զագրեբի, Նիկոզիայի, Իզմիրի, Թունիսի, Բռնոյի, Վիեննայի, Փարիզի, Պլովդիվի, Աքրայի, Թեհրանի, Բաղդադի, Մոնրեալի և այլ քաղաքների տոնավաճառներում և ցուցահանդեսներում:

1966 թ. Լայպցիգի միջազգային տոնավաճառում ճանաչվեցին նաև հայկական «Հրազդան» և «Նաիրի» էլեկտրոնային հաշվիչ մեքենաները, Վանաձորի հաստոցաշինական գործարանում արտադրված «էլեկտրակայծային» և «Ուլտրաձայնային» ճշգրիտ հաստոցները,

Չարենցավանի, Երևանի մեքենաշինական և հաստոցաշինական գործարանների շատ արտադրատեսակներ: 1965 թ. Թեհրանի, 1967 թ. Դամասկոսի, Մոնրեալի, 1973 թ. Սան Պաուլոյի, 1983 թ. Բաղդադի, 1984 թ. Բարսելոնի տոնավաճառներում Հայաստանին տրամադրվել է առանձին տաղավար, որտեղ արդյունաբերական արտադրանքներից բացի ցուցադրվել են նաև հանրապետության գիտության, մշակույթի և մյուս բնագավառների նվաճումները: Հետագայում ցուցահանդեսներում և տոնավաճառներում ավելանում էին Հայաստանի մեքենասարքավորումների, էլեկտրոնային, արդյունաբերական ապրանքների (կապի միջոցներ, միկրոէլեկտրոնիկա, ռադիոտեխնիկա և այլն) ծավալը և անվանացանկը:

ՄՏՀ-ում կարևոր դեր է խաղում ***Հայաստանի Առևտրաարդյունաբերական պալատը (ԱԱՊ),*** որը ստեղծվել է 1960 թ.: Մինչև 1972 թ. կոչվում էր Հայկական Հանրապետական առևտրի պալատ: ԱԱՊ-ն արտասահմանյան երկրների հետ առևտրական, տնտեսական և գիտատեխնիկական կապերի զարգացմանն աջակցող կազմակերպություն է: Արտաքին առևտրի նախարարության, գիտության և տեխնիկայի պետական կոմիտեի, նախարարությունների ու գերատեսչությունների, արդյունաբերական ձեռնարկությունների հետ ընտրում և միջազգային տոնավաճառներ, ցուցահանդեսներ էր ուղարկում մեքենասարքավորումներ, գիտության նվաճումներ, հայտնագործություններ, ժողովրդական սպառման ապրանքներ:

Հայաստանում կազմակերպվում են արտասահմանյան տարբեր ընկերությունների միջազգային ցուցահանդեսներ, տոնավաճառներ, աճուրդներ: Պալատն աջակցում է արտասահմանյան գյուտերի և արդյունաբերական նմուշների արտոնագրմանը, արտասահմանում մեր հանրապետության ձեռնարկությունների ցուցանմուշների գրանցմանը: 1990-ական թվականներին Հայաստանի ԱԱՊ անդամ էին 118 արդյունաբերական ձեռնարկություն, գիտահետազոտական 27 հիմնարկ, առևտրական 41, շինարարական 6 կազմակերպություն:

14.3 Հայաստանի միջազգային տնտեսական հարաբերությունները 1991 թ.-ից հետո

ՄՏՀ-ը Հայաստանի Հանրապետության տնտեսական աճի հիմնական գործոններից է: Այն նախադրյալներ է ստեղծում հանրապետության տնտեսությունը համաշխարհային տնտեսության համակարգում ինտեգրելու համար: ԽՍՀՄ փլուզումից հետո, 1990-ական թվականներից սկսած, Հայաստանի տնտեսությունը կազմալուծվել է, և այժմ էլ ԱՏԿ-ը պասիվ է (ներմուծումը մեծ չափով գերազանցում է արտահանմանը): Հետևաբար, դժվարանում է միջազգային շուկաներում ապրանքների, ծառայությունների, աշխատուժի մրցակցությանը դիմանալը: Այժմ համաշխարհային տնտեսության համակարգում Հայաստանի

տնտեսության ինտեգրացման ցածր մակարդակը պայմանավորված է նրանով, որ նա ներգրավված է եղել պետական տնտեսական փակ համակարգի մեջ: Վերջին 20 տարիներին Հայաստանը կորցրել է իր տնտեսական հզորության մեծ մասը:

Եթե Հայաստանն անկախացումից առաջ համարվում էր առավելապես ինդուստրիալ զարգացած հանրապետություն հզոր կարողությամբ, ապա անկախացումից հետո երկիրը կանգնեց ձևափոխումների դժվարությունների առջև, ինչին նպաստեցին 1988 թ. կործանիչ երկրաշարժի հետևանքները և միջազգամիջյան զինված հակամարտությունները: 1990 թ. սկզբում տարածաշրջանում ստեղծված լարվածությունից Հայաստանը մնաց շրջափակման մեջ: Դադարեցին գործելուց ավտոմոբիլային և երկաթուղային հարաբերությունները երկրների հետ, իսկ վրաց-աբխազական հակասությունները փակեցին Ռուսաստան-Հայաստան երկաթուղային կապը: Էլեկտրաէներգիայի արտադրությունը մեկ շնչի հաշվով կրճատվեց 53 տոկոսով, ինչը հանգեցրեց արդյունաբերության, շինարարության, գյուղատնտեսության անկման: Սոցիալական ոլորտում պակասեցին աշխատատեղերը, աշխատավարձը, ավելացավ բնակչության, աշխատուժի արտահոսքը:

1996 թ. արտադրված ՀՆԱ-ը կազմեց 1588 մլն դոլար (1990 թ. արտադրվածի 16 տոկոսը), 2000 թ.՝ 1032629.9, 2003 թ.՝ 1618577.0, 2005 թ.՝ 2228027.5, 2010 թ.՝ 3509624.8 մլն դրամ[93]: ՀՆԱ ծավալի նվազման, խնայողությունների արժեզրկման հետևանքով հանրապետության կորուստներն այդ նույն տարիներին ավելացան: Այժմ էլ ՀՀ-ը չի կարող ունենալ զարգացած պետություններին բնորոշ միջազգային հարաբերություններ, քանի որ ունի սահմանափակ ներքին շուկա: Հետևաբար, զարգացման հեռանկարները կապված են արտաքին շուկայի հետ: Տնտեսական հարաբերություններ ձևավորելու համար արգելք են տնտեսական և քաղաքական զարգացման միտումները:

Հայաստանի, ԱՊՀ և աշխարհի շատ երկրների հետ սերտ կապերի ձևավորումը պետք է կատարվի նոր հիմունքներով: Սակայն նման հարաբերություններ արագորեն ստեղծել հնարավոր չէ, քանի որ արտադրվող արդյունքի տեսականին միջազգային շուկաներում անմրցունակ է, ցածր է աշխատողների մասնագիտական որակավորումը: Արտադրական և առևտրական կապերի հետագա զարգացումն ԱՊՀ և մյուս երկրների, առաջին հերթին ՌԴ հետ կդառնա Հայաստանի տնտեսության զարգացման, էներգետիկ և տնտեսական ճգնաժամի հաղթահարման, սոցիալական լարվածության մեղմացման կարևոր պայմաններից մեկը:

Արտաքին առևտուրը պայմանավորված է օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններով, մասնավորապես.

[93] ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 1999, 2001, 2004, 2006, 2010 թթ., հունվար-դեկտեմբեր, տեղեկատվական վերլուծություն, էջեր 8, 10, 7, 9:

- տրանսպորտի միջոցների անբավարար աշխատանքով,
- էներգետիկ ռեսուրսների պակասով և դրանց ձեռք բերման դժվարություններով,
- արտադրության ենթակառուցվածքների և տարբեր ծառայությունների ցածր մակարդակով և այլն:

Երկրի սոցիալ-տնտեսական վիճակը, զարգացման մակարդակը, տնտեսական կախվածությունն այլ երկրներից և բնակչության սոցիալական պայմանները բնութագրվում են արտահանման և ներմուծման հաշվեկշռով: Մինչև 1992 թ. արտահանման մեջ մեծ բաժին ունեին մեքենաշինական և մետաղամշակման (40.4 տոկոս), քիմիական (22.6 տոկոս), գունավոր մետալուրգիայի (15.7 տոկոս) արտադրանքները: 1992 թ.-ից ներմուծվել է հացահատիկի 50-53, էներգառեսուրսների, սննդամթերքի 80-85 տոկոսը: Ընդ որում, ներմուծվել են այնպիսի ապրանքներ, որոնք եղել են հայրենական արտադրության հիմնական տեսակները՝ հրուշակեղեն, մակարոնեղեն, մսամթերք, ծխախոտ, կաթնամթերք, կահույք, օճառ, ձեթ, ոգելից խմիչք, բանջարեղեն:

2000 թ. առևտրական հաշվեկշիռը դրական էր միայն կիսաթանկարժեք և թանկարժեք քարերի, թանկարժեք մետաղների և դրանցից պատրաստված իրերի, ոչ թանկարժեք մետաղների և դրանցից պատրաստված իրերի, արվեստի ստեղծագործությունների գծով: Իսկ 2005 թ. այդ ապրանքների արտահանումը կազմեց 336.4, ներմուծումը՝ 347.6 հազար դոլար: 2003-2005 թթ. արտահանման և ներմուծման հաշվեկշիռը համարյա բոլոր ապրանքների գծով բացասական էր:

Իր արտադրանքն արտասահմանյան 80 երկիր արտահանող Խորհրդային Հայաստանն այժմ կապեր է պահպանում մոտ 60 երկրի հետ, այն էլ՝ արտահանման քիչ ծավալներով: Ներկայում ազատ առևտրի ռեժիմով կապեր են հաստատվել Ռուսաստանի, Ուկրաինայի, Վրաստանի, Թուրքմենստանի, Մոլդովայի, Բելառուսի, Ղազախստանի և այլ, բարենպաստ ռեժիմով՝ ԵՄ (Ավստրիա, Բելգիա, Գերմանիա, Դանիա, Իսպանիա, Իռլանդիա, Իտալիա, Լյուքսեմբուրգ, Մեծ Բրիտանիա, Նիդեռլանդներ, Պորտուգալիա, Շվեդիա, Ֆինլանդիա, Ֆրանսիա), ԱՄՆ, Արգենտինայի, Կանադայի, Բուլղարիայի, Չինաստանի, Կիպրոսի, Իրանի, Հունգարիայի, Լեհաստանի, Լիբանանի, Սիրիայի, Ռումինիայի, Շվեյցարիայի, Հարավային Կորեայի, Ճապոնիայի, աֆրիկյան (Եգիպտոս, Սուդան, ՀԱՀ, Անգոլա) և այլ երկրների հետ: Տարբեր երկրների հետ ապրանքաշրջանառության ծավալները, արտահանման և ներմուծման հարաբերությունը ևս փոխվել են: ԵՄ երկրներ արտահանված արտադրանքի արժեքի 60-70 տոկոսը բաժին է ընկնում Բելգիային՝ պայմանավորված ադամանդագործական արտադրանքի արտահանման ծավալով: Մեծ տոկոս է կազմում Գերմանիայի, Նիդեռլանդների, Ֆրանսիայի հետ առևտուրը: 2005 թ. Հայաստանի

ապրանքաշրջանառությունը ԵՄ երկրների հետ կազմել է 946.2 մլն դոլար, ինչը նախորդ տարվա համեմատ աճել է 58.0 տոկոսով:

Աղյուսակ 14.1

Հայաստանի արտաքին առևտրի ցուցանիշները 2000-2011 թթ.[94]

	2000 թ.		2005 թ.		2011 թ.	
	մլն դոլար	տոկոս	մլն դոլար	տոկոս	մլն դոլար	տոկոս
Արտաքին առևտուր	1182.7	100	2718.3	100	5481.0	100
Արտահանում	297.5	25.16	950.4	35.0	1329.5	24.0
Ներմուծում	885.2	74.84	1767.9	65.0	4151.5	76.0
Հաշվեկշռի դեֆիցիտը	-587.7	-49.68	-817.5	-30.0	-2822.0	-51.0
Ապրանքաշրջանառություն ԱՊՀ երկրների հետ	241.1	100	574.5	100	1473.2	100
Արտահանում	72.8	30.30	179.7	31.3	263.1	18.0
Ներմուծում	168.3	69.70	394.8	68.7	1210.1	82.0
Հաշվեկշռի դեֆիցիտը	-95.5	-39.38	-215.1	-37.4	-947.0	-64.2
Ապրանքաշրջանառությունն այլ երկրների հետ	941.6	100	1110.5	100	2230.8	100
Արտահանում	224.8	23.84	328.0	29.5	458.9	20.6
Ներմուծում	716.9	76.16	782.5	70.5	1771.9	79.4
Հաշվեկշռի դեֆիցիտը	-492.1	-68.69	-454.5	-40.9	-1313.0	-58.9
ԵՄ երկրներ	409.6	100	1043.0	100	1776.9	100
Արտահանում	108.0	26.36	442.5	43.4	607.4	34.2
Ներմուծում	301.6	73.64	590.5	56.6	1169.5	65.8
Հաշվեկշռի դեֆիցիտը	-193.6	-47.18	-148.0	-14.2	-562.1	-31.6

Արտաքին առևտրի շրջանառության ծավալը 2011 թ. հունվար-դեկտեմբեր ամիսներին կազմել է 5481.0 մլն ԱՄՆ դոլար, այդ թվում՝ ապրանքների արտահանումը՝ 1329.5 մլն դոլար (ՖՈԲ գներով) և ներմուծումը՝ 4151.5 մլն դոլար (ՍԻՖ գներով): Արտաքին առևտրի հաշվեկշիռը բացասական է 2822.0, իսկ առանց մարդասիրական օգնության ստացված բեռներինը՝ 2761.5 մլն դոլարով:

2011 թ. արտաքին առևտրի հաշվեկշիռը կազմել է 2182.6 մլն դոլար: 2011 թ. 2010 թ. համեմատ ապրանքաշրջանառությունն աճել է 14.4 տոկոսով, այդ թվում՝ արտահանումը՝ 27.7, ներմուծումը՝ 10.7 տոկոսով[95]:

1989 թ. եվրոպական համայնքի և ԽՍՀՄ միջև կնքվեց Առևտրի և տնտեսական զարգացման պայմանագիր, որով հիմք դրվեց ԵՄ-Հայաստան հարաբերություններին: Համագործակցությունը սկսվեց 1991 թ. ԽՍՀՄ փլուզումից հետո TACIS ծրագրի շրջանակներում և գործում էր երկկողմանի համագործակցության հիման վրա:

[94] ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2000-2011 թթ., էջեր 110, 122, 136, 148, 117, 119:
[95] ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը, 2012, էջ 7:

Աղյուսակ 14.2

Արտաքին առևտրի և ապրանքների կառուցվածքը[96]

Արտահանման և ներմուծման ծավալներն ըստ ապրանքախմբերի

(հազար դոլար)

	Արտահանում			Ներմուծում		
	2010 թ. հունվար-դեկտեմբեր	2011 թ. հունվար-դեկտեմբեր	Աճի տեմպը, %	2010 թ. հունվար-դեկտեմբեր	2011 թ. հունվար-դեկտեմբեր	Աճի տեմպը, %
Ընդամենը	**1041056.6**	**1329501.2**	**127.7**	**3748953.5**	**4151472.7**	110.7
այդ թվում՝						
կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք	23552.1	30070.6	127.7	101448.5	133495.7	131.6
բուսական ծագման արտադրանք	15845.0	23509.6	148.4	214070.2	242302.6	113.2
կենդանական և բուսական ծագման յուղեր և ճարպեր	29.1	25.3	86.9	49217.1	57987.0	117.8
պատրաստի սննդի արտադրանք	131065.6	183915.7	140.3	308810.4	348468.9	112.8
հանքահումքային արտադրանք	306752.7	398783.6	130.0	666021.6	821611.8	123.4
քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք	9137.8	11140.0	121.9	273514.6	303078.3	110.8
պլաստմասսա և դրանից իրեր, կաուչուկ և ռետինե իրեր	15484.5	8685.2	56.1	148135.8	173079.6	116.8
կաշվի հումք, կաշի, մորթի և դրանցից պատրաստված իրեր	2242.5	3446.8	153.7	9168.2	12118.4	132.2
փայտ և փայտյա իրեր	710.8	634.6	89.3	56545.5	68591.8	121.3
թուղթ և թղթից իրեր	706.5	729.3	103.2	68348.7	80353.2	117.6
մանածագործական իրեր	6751.2	8372.3	124.0	122558.5	160928.6	131.3
կոշկեղեն, գլխարկներ, հովանոցներ	1423.4	1470.7	103.3	31994.2	33666.4	105.2
իրեր քարից, գիպսից, ցեմենտից	16108.3	16894.7	104.9	82482.9	86999.1	105.5

[96] Ապրանքների դասակարգումն իրականացվել է ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի (ԱՏԳ ԱԱ) բաժինների:

թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր	134049.4	196441.4	146.5	158867.6	214963.4	135.3
ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր	332428.9	364728.5	109.7	368197.7	326871.3	88.8
մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ	30078.2	33525.1	111.5	651810.4	567457.5	87.1
վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ	4999.2	30078.1	6.0 անգ.	297132.6	371180.9	124.9
սարքեր և ապարատներ	7344.5	14840.7	2.0 անգ.	69638.8	59090.2	84.9
տարբեր արդյունաբերական ապրանքներ	1623.0	1368.9	84.3	69542.2	88169.7	126.8
արվեստի ստեղծագործություններ	723.8	840.2	116.1	1448.2	1058.3	73.1

1996 թ. ապրիլի 22-ին ստորագրվեց համաձայնագիր, որն ընդգրկում էր ԵՄ-Հայաստան հարաբերությունների գրեթե ամբողջ համալիրը: Այն ուժի մեջ մտավ 1999 թ. հուլիսի 1-ին:

1991 թ. ի վեր Հայաստանում իրականացվել են շուկայական բարեփոխումներ, որոնք հիմնականում ուղղված են առևտրի ազատականացման և տնտեսության կայունության հիմնախնդիրներին: Եթե 1993-1997 թթ. ՀՀ արտաքին առևտրի ծավալների մեծ մասը բաժին էր ընկնում ԱՊՀ երկրներին, ապա 1998 թ. հետո ՀՀ արտաքին առևտրի գլխավոր գործընկերը ԵՄ-ն է:

2007 թ. ԱՊՀ երկրներին բաժին էր ընկնում ՀՀ ընդհանուր արտաքին ապրանքաշրջանառության 32.5, ԵՄ երկրներին՝ 38.4 տոկոսը: 2008 թ. ԱՊՀ երկրների հետ ՀՀ արտահանումը նվազեց 4.4, իսկ ԵՄ երկրների հետ ավելացավ 2.4 տոկոսով: 2011 թ. ԱՊՀ երկրներին բաժին ընկավ ՀՀ համախառն ապրանքաշրջանառության 29.5, իսկ ԵՄ երկրներին՝ 30.2 տոկոսը:

Հայաստանն Առևտրային համաշխարհային կազմակերպությանը (ԱՀԿ) անդամագրվել է 2003 թ. փետրվարի 5-ին և պարտավորվել է ազատականացնել մի շարք ճյուղերի (գործարար և սոցիալական ծառայություններ, հաղորդակցություն, կրթություն, առողջապահություն, օդային տրանսպորտ, ֆինանսական գործարքներ) իրավական դաշտը: Խնդիր է դրվում նաև ապահովելու արտաքին ապրանքաշրջանառության ստանդարտացման և սերտիֆիկացման ցուցանիշները:

Աղյուսակ 14.3

Ստանդարտացման, սերտիֆիկացման հիմնական ցուցանիշները (միավոր)[97]

	2006 թ.	2007 թ.	2008 թ.	2009 թ.	2010 թ.	2011 թ.
Պետական գրանցում ստացած ազգային *ստանդարտների* քանակը	167	322	289	97	145	121
այդ թվում՝						
ՀՀ ստանդարտներ	35	60	35	12	29	9
Միջպետական ստանդարտներ	116	214	130	56	20	54
Միջազգային և եվրոպական ստանդարտ	16	48	124	29	96	58
Տրված *սերտիֆիկատների* քանակը	10837	10811	12235	4959	5907	4535
այդ թվում՝						
Ներմուծվող արտադրանքի համար	9250	10137	10655	3502	4747	3306
Արտահանվող արտադրանքի համար	115	118	71	46	209	90

ՀՀ արտաքին առևտրի շրջանառության ծավալը 2010 թ. ընթացիկ գներով կազմել է 4794.3 մլն դոլար, այդ թվում՝ ապրանքների արտահանումը՝ 1011.4 (ՖՕԲ գներով) և ներմուծումը՝ 3782.9 (ՍԻՖ գներով) մլն դոլար: Արտաքին Առևտրի հաշվեկշիռը բացասական է 2771.5 մլն դոլարով, իսկ առանց մարդասիրական օգնության ստացված բեռների՝ 2725.1 մլն դոլարով:

Աղյուսակ 14.4

ՀՀ արտաքին առևտրաշրջանառության և առևտրի հաշվեկշռի ցուցանիշներն ըստ առանձին երկրների (հազար դոլար)

	Արտաքին առևտրաշրջանառությունը				
	2010 թ.	Տեսակարար կշիռը, %	2011 թ.	Տեսակարար կշիռը,%	Աճի տեմպը, %
ընդամենը, *որից*	4790010.2	100	5480974.0	100	114.4
ԱՊՀ երկրներ	1340934.1	28.0	1473245.6	26.9	109.9
ԵՄ երկրներ	1528065.4	31.9	1776902.8	32.4	116.3
Այլ երկրներ	1921010.7	40.1	2230825.5	40.7	116.1

[97] ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2010 թ., հունվար-դեկտեմբեր, Երևան, 2011, էջ 161, 2012, էջ 167:

Աղյուսակ 14.5

ՀՀ արտաքին առևտուրն ըստ առանձին երկրների
(հազար դոլար)

	Արտահանում			Ներմուծում		
	2010 թ.	2011 թ.	Աճի տեմպը, %	2010 թ.	2011 թ.	Աճի տեմպը, %
ընդամենը, *որից*	1041056.6	1329501.2	127.7	3748953.5	4151472.7	110.7
ԱՊՀ երկրներ	198773.9	263155.8	132.4	851715.0	940277.2	110.4
ԵՄ երկրներ	501120.0	607439.9	121.2	864499.2	1000744.7	115.8
Այլ երկրներ	341162.7	458905.5	134.5	2032739.3	2210450.8	108.7

Աղյուսակ 14.6

ՀՀ արտաքին առևտրի կառուցվածքը (տոկոս)[98]

	Արտահանում		Ներմուծում	
	2009 թ.	2010 թ.	2009 թ.	2010 թ.
ընդամենը, *որից*	100	100	100	100
ԱՊՀ երկրներ	18.9	19.1	22.4	22.7
ԵՄ երկրներ	44.8	48.1	22.6	23.1
Այլ երկրներ	36.3	32.8	55.0	54.2

Ըստ ներմուծման ապրանքաշրջանառության ծավալի՝ առաջատար երկրներն են Գերմանիան, Ռուսաստանը, Իտալիան, Ուկրաինան, Բուլղարիան, Ֆրանսիան: Ներմուծվող հիմնական ապրանքներից են դեղորայքը, էլեկտրական սարքավորումները, շոկոլադի արտադրանքը, անվադողերը, կոսմետիկան: Արտահանվող հիմնական ապրանքներից են մոլիբդենը, կաուչուկը, լաբորատոր սարքավորումները, դեղորայքը, էլեկտրական շարժիչները, թանկարժեք մետաղները, մեխանիզմները, որոնք արտահանվում են հիմնականում Նիդեռլանդներ, Գերմանիա, Իտալիա, Ռուսաստան, Ուկրաինա, Էստոնիա, Լեհաստան: Ավելացել են նաև թարմ մրգերի, պահածոյացված միրգ-բանջարեղենի, հանքային ջրերի ու բնական հյութերի արտահանման ծավալները:

Արտաքին առևտուրը 2011 թ. 2009 թ. համեմատ ավելացել է 30 տոկոսով: Արտահանման ընդհանուր աճը կազմել է 56.0 տոկոս, այդ թվում՝ հումքային արտադրանքն ավելացել է 2.5 անգամ, պատրաստի սննդամթերքը՝ 30, քիմիական արտադրանքը՝ 48.8, շինարարական

[98] ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2010 թ., հունվար-դեկտեմբեր, Երևան, 2010, էջ 120, 121, 123:

նյութերը՝ 55.3, թանկարժեք և կիսաթանկարժեք քարերը՝ 57.2 տոկոսով:

Աղյուսակ 14.7

ՀՀ-ի հետ մեծ ծավալի շրջանառություն ունեցող երկրները
(մլն դոլար)[99]

	2000 թ.	2003 թ.	2006 թ.	2011 թ.
Ռուսաստան	176.6	257.5	352.9	1114.5
Արտահանում	44.5	64.6	119.1	222.7
Ներմուծում	132.1	192.9	233.8	891.8
Բելգիա	159.3	183.4	268.8	135.1
Արտահանում	75.0	92.3	124.6	70.5
Ներմուծում	84.3	91.1	144.2	64.6
Իսրայել	-	170.4	216.0	30.4
Արտահանում	-	87.7	112.2	3.0
Ներմուծում	-	82.7	103.8	27.4
Գերմանիա	49.4	71.0	287.3	403.7
Արտահանում	12.9	28.1	147.2	158.0
Ներմուծում	36.5	42.9	140.1	245.7
ԱՄՆ	140.4	98.9	173.1	248.7
Արտահանում	37.8	46.2	62.1	100.7
Ներմուծում	102.6	52.7	111.0	148.0
Թուրքմենստան	6.6	27.7	114.2	30.1
Արտահանում	5.5	2.8	1.0	4.6
Ներմուծում	1.1	24.9	113.0	25.5
Շվեյցարիա	31.7	18.2	80.4	111.9
Արտահանում	8.8	7.7	34.6	33.7
Ներմուծում	22.9	10.5	45.8	78.2
Իրան	110.7	94.0	109.2	323.4
Արտահանում	27.7	31.4	25.3	106.2
Ներմուծում	83.0	62.6	83.9	217.2
Ուկրաինա	15.5	53.8	137.7	243.9
Արտահանում	3.2	8.1	13.7	111.3
Ներմուծում	12.3	45.7	124.0	132.6
Չինաստան	-	14.2	73.4	421.6
Արտահանում	-	4.0	9.2	16.2
Ներմուծում	-	10.2	64.2	405.4

[99] ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2000-2011 թթ., էջեր 110, 122, 136, 148, 117, 119:

Աղյուսակ 14.8

ՀՀ արտահանումն ու ներմուծումը ԿԱԵ (Կենտրոնական և Արևելյան Եվրոպա) երկրների հետ 2004-2009 թթ. (մլն ԱՄՆ դոլար)[100]

Երկրներ	2004 թ.		2006 թ.		2008 թ.		2009 թ.	
	Արտ.	Ներմ.	Արտ.	Ներմ.	Արտ.	Ներմ.	Արտ.	Ներմ.
Հունգարիա	0.7	5.7	0.2	7.0	0.2	38.9	0.4	30.8
Չեխիա	0.05	1.89	0.3	8.6	1.6	22.5	1.53	15.1
Սլովենիա	0	1.8	0.01	4.7	0.2	20.4	0.12	10.3
Սլովակիա	0.03	3.54	0.005	5.01	0.24	20.4	-	-
Լեհաստան	0.07	9.2	7.86	9.94	5.59	31.4	0.65	33.9
Բուլղարիա	4.71	53.05	1.28	41.6	59.5	118.6	60.2	87.08
Ռումինիա	0.25	34.0	0.04	83.8	0.21	100.1	0.06	72.8
Մալթա	0.005	0.05	0.01	0.002	0	0.003	-	-
Կիպրոս	0.059	1.65	0.9	0.81	0.3	1.5	0.09	1.70
Լատվիա	0.83	0.312	1.38	0.75	1.17	10.1	-	-
Լիտվա	0.13	0.34	0.09	0.47	0.4	0.9	-	-
Էստոնիա	0.075	0.35	1.02	1.06	0.7	0.4	-	-
Ընդամենը	6.89	111.9	163.8	163.8	70.11	365.2	61.34	251.68

Հայաստանը լայն տեսականի արտահանում է միայն ԱՄՆ և ԱՊՀ երկրներ: Մնացած գործընկերների հետ առևտուրն ընդգրկում է 1-3 ապրանքատեսակ: Օրինակ, Բելգիա և Իսրայել արտահանվող արտադրատեսակների 99.7 տոկոսը կազմում է ադամանդը, Գերմանիա արտահանվում է 88 տոկոս մոլիբդենի հումք, 79 տոկոս երկաթածուլվածք, 9.0 տոկոս չզտված պղինձ, Իտալիա՝ 96.0 տոկոս տրիկոտաժի արտադրանք, Մեծ Բրիտանիա՝ 86.0 տոկոս ժամացույցի մասեր, Շվեյցարիա՝ 70.0 տոկոս անմշակ ոսկի և պղինձ, Չինաստան՝ 95.0 տոկոս մոլիբդենի հանքանյութ: 2004 թ. ադամանդե քարերի արտահանումը կրճատվել է 66.6, չմշակված ալյումինինը՝ 15.1, հեռուստառադիոդետալներինը՝ 10.0, ժամացույցի մասերինը՝ 10.0 մլն դոլարով: 17-25 մլն դոլարով աճել են տրիկոտաժի արտադրանքի, 140-180 մլն դոլարով՝ հիմնական հումքի և ջարդոնի, 5-10 մլն դոլարով՝ էլեկտրաէներգիայի արտահանումները[101]:

ՀՀ-ում արտադրված ապրանքներից արտահանվում են.

- ադամանդի 30,
- պատրաստի արտադրանքի 27,
- հանքանյութի, չմշակված մետաղների 22.3,
- Հայաստանում չարտադրված ապրանքների 19.7,

[100] Աղյուսակը կազմվել է «Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2008» և «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2009 թ.» վիճակագրական տեղեկագրերի տվյալների հիման վրա:

[101] Բոլոր նյութերը վերցված են ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեի 2004 թ. պետական տեղեկագրից:

- ժամացույցների և ժամագործական մասերի 13.7,
- խտանյութերի 14.4,
- ալկոհոլային խմիչքի, ծխախոտի 7.9,
- անմշակ կամ մշակված ոսկու 6.0,
- չզտված պղնձի 6.0,
- տրիկոտաժի և տեքստիլ արտադրանքի 4.9,
- ոսկերչական արտադրանքի 4.6,
- սննդի և գյուղատնտեսական արտադրանքի 2.6,
- էլեկտրաէներգիայի 1.6,
- քիմիական արտադրանքի 1.4,
- այլ արտադրանքների 1.7 տոկոսը:

Ներմուծման մեջ մեծ տեսակարար կշիռ ունեն սննդապրանքները, կենդանական և բուսական ծագման (24.3 տոկոս), հանքահումքային (21.1 տոկոս) արտադրանքները, մշակված և անմշակ ալմաստը, թանկարժեք մետաղները, ոսկերչական իրերը (12.2 տոկոս), մեքենաները, մեխանիզմները, սարքավորումները (10.1 տոկոս):

Մսի և ***մսամթերքի*** ներմուծումը հանրապետություն կատարվում է 20 երկրից (ԱՄՆ, ԱՄԷ, Իրան, Կանադա, Ֆրանսիա, Հնդկաստան, Շվեյցարիա, Ռուսաստան, Բելգիա, Գերմանիա և այլն) և կազմում է մոտ 25 հազար տոննա՝ ներառյալ հավի միսը: Մսամթերք արտահանում են հայկական «Աթենք», «Գեղարդ» մսամթերքի ընկերությունները և անհատ ձեռնարկատերերը:

Հայաստան ներմուծվող և արտահանվող սննդամթերքի մեջ զգալի մաս է կազմում ***ծուկը***: Գերմանիա, Բելգիա, Ռուսաստան, Ֆրանսիա, Նիդեռլանդներ և այլուր արտահանվում է հիմնականում արհեստական լճային տնտեսություններում աճեցրած իշխան տեսակի ծուկ: Չկնապրանք ներմուծվում է հիմնականում Կանադայից, Իրանից, Ուկրաինայից, Ֆրանսիայից, Լատվիայից:

Զգալի ծավալ են կազմում արտահանվող և ներմուծվող ***կաթի*** և ***կաթնամթերքի, ծվի, կենդանական ծագման*** այլ ապրանքները: Հիմնական արտահանողներն են «Աշտարակ կաթ»-ը, «Արզնի» ֆերմերային տնտեսությունը, պանիր արտադրող «Նոթեմ» ընկերությունը և անհատ ձեռնարկատերերը: Համեմատաբար պակասել է ծվի և հավի ներմուծումը: Ներմուծումը գերազանցում է արտահանմանը: Ներմուծվել է մոտ 8040 տոննա արտադրանք հիմնականում Իրանից, ԱՄԷ-ից, ԱՄՆ-ից, Ֆինլանդիայից, Գերմանիայից, Նոր Զելանդիայից, Բելգիայից, Լիտվայից, Իտալիայից, Ուկրաինայից, Ռուսաստանից և այլն:

Հանրապետությունից արտահանվել են մոտ 250 տոննա բանջարեղեն, պտուղ-բանջարեղենի պահածոներ, որոնց արտահանումը գերազանցում է ներմուծմանը: Հիմնական արտահանողներն են «Նոյան» բնական հյութեր, «Գամմա» պահածոներ, կոմպոտներ, մուրաբաներ, ջեմեր արտադրող ձեռնարկությունները: Պատրաստի արտադրանք

արտահանվում է Ռուսաստան, ԱՄՆ, Իսրայել, Լիբանան, ներմուծվում՝ Բուլղարիայից, Իրանից, ԱՄԷ-ից, Թուրքիայից, Կիպրոսից, Հունաստանից, Ֆրանսիայից, Իտալիայից, Վրաստանից, Ուկրաինայից, Մոլդովայից: Հատապտուղների, ընկույզի, ցիտրուսների, բոստանային կուլտուրաների ներմուծումը տարեկան կազմում է մոտ 8 հազար տոննա, որի կեսից ավելին ներմուծվում է Իրանից, Թուրքիայից, Սիրիայից, Վրաստանից, ԱՄԷ-ից: Մեծ թիվ է կազմում ***սուրճի, թեյի, համեմունքների, կակաոյի*** և դրանից արտադրված մթերքների ներմուծումն աշխարհի մոտ 30 երկրներից՝ Թուրքիայից, Նիդեռլանդներից, Ռուսաստանից, Գերմանիայից, Ուկրաինայից, Իրանից, Լիբանանից, Մալայզիայից, Բուլղարիայից և սուրճ, կակաո արտադրող երկրներից:

Հայաստան ներմուծվող ապրանքների մեջ մեծ բաժին ունի ***հացահատիկը,*** որը ներմուծվում է աշխարհի 25 երկրներից (Գերմանիա, Մեծ Բրիտանիա, Նիդեռլանդներ, ԱՄՆ, Ռուսաստան, Ուկրաինա և այլն) տարեկան մոտ 420 հազար տոննա: ***Ալյուր, ձավարեղեն*** ներմուծվում են մոտ 20 երկրներից (Իտալիա, Ֆրանսիա, Հունաստան, Ռուսաստան, Ուկրաինա, Հունգարիա, ԱՄՆ և այլն) տարեկան շուրջ 40 հազար տոննա:

Շաքարի և ***հրուշակեղենի*** ներմուծումն իրականացվում է 30 երկրներից (Մեծ Բրիտանիա, Իտալիա, Շվեյցարիա, Ֆրանսիա, Ռուսաստան, Ուկրաինա, Բելգիա, Գերմանիա, Իրան և այլն) և տարեկան կազմում է մոտ 70 հազար տոննա:

Հայաստանի արտաքին առևտրի հաշվեկշռում, հատկապես արտահանման բնագավառում, մեծ տեղ ունեն ***ոգելից*** և ***ոչ ոգելից*** խմիչքները (կոնյակ, օղի, գինի), որոնք արտահանվում են 35-40 երկիր՝ Ռուսաստան, ԱՄՆ, Ֆրանսիա, Գերմանիա, Ուկրաինա, Վրաստան, Ղազախստան, Նիդեռլանդներ, Շվեյցարիա, Լատվիա, Լիբանան, Էստոնիա, Ուզբեկստան, Բելառուս և այլն: Հիմնական արտահանողներն են «Արենի» գինիներ, «Վեդի ալկո» ոգելից խմիչքներ արտադրող ձեռնարկությունները, կոնյակ արտադրող 13 ընկերություններ: Արտահանվում են նաև «Կոտայք» և «Կիլիկիա» գարեջրերը: Խմիչքներ ներմուծվում են Ֆրանսիայից, Գերմանիայից, Իտալիայից, Ռուսաստանից, Թուրքիայից, Կիպրոսից, Ավստրիայից, ԱՄՆ-ից և այլ երկրներից:

Հանրապետության արտաքին ապրանքաշրջանառության համակարգում զգալի բաժին ունի ***ծխախոտը***: Հայաստանից տարեկան արտահանվում է մոտ 220 տոննա ծխախոտ հիմնականում ԱՄՆ, Ռուսաստան, Թուրքմենիա, Նիդեռլանդներ, Ֆրանսիա, Գերմանիա, Իրան, Վրաստան և այլն: Ծխախոտ ներմուծվում է աշխարհի 26 երկրներից: Մոտ 12 տեսակ ներմուծվում է Նորվեգիայից, Հունաստանից, Ուկրաինայից, Գերմանիայից, ԱՄՆ-ից, Մեծ Բրիտանիայից, Բուլղարիայից, Պանամայից:

Էլեկտրոնային բիզնեսի կարևոր մաս է ***էլեկտրոնային*** առևտուրը: Էլեկտրոնային գործընթացն այսօրվա պայմաններում ներթափանցել է

կյանքի բոլոր ոլորտներ: Այս առևտրի զարգացման հեռանկարներն անմիջականորեն կապված են ***համացանցի,*** տեխնոլոգիաների զարգացման, համացանցից օգտվողների թվի ավելացման հետ:

ՀՀ էլեկտրոնային գործարարության և էլեկտրոնային առևտրի ներդրումն ու ծավալումն ապահովելու համար կարևորվում են համակարգչային ցանցերի ստեղծման անհրաժեշտությունը և դրանցում տնտեսվարող սուբյեկտների լայն շրջանակների ընդգրկումը: Ակնհայտ է, որ էլեկտրոնային առևտուրը, ինչպես նաև համացանցը դարձել են քաղաքակրթության անբաժանելի մասը:

Նախկին հանրապետությունների տնտեսական կապերը ձեռք են բերել միջազգային կարգավիճակ, և 1991-2011 թթ. արդյունքները բնութագրվում են Ռուսաստանի հետ ապրանքաշրջանառության ծավալով:

Աղյուսակ 14.9

Ռուսաստանի առևտուրը ԱՊՀ և Բալթիկայի երկրների հետ (ապրանքաշրջանառությունը, մլն դոլար)[102]

	1991 թ.		2011 թ.		Ապրանքաշրջանառության փոփոխությունը 2011 թ. 1991 թ. համեմատ (անգամ)
	Ապրանքաշրջանառություն	Այդ թվում՝ արտահանում Ռուսաստան	Ապրանքաշրջանառություն	Այդ թվում՝ արտահանում Ռուսաստան	
Ադրբեջան	6904	3400	1948	1562	-3.5
Հայաստան	4270	2890	859	701	-4.9
Բելառուս	18750	11900	27874	18058	1.5
Վրաստան	5450	3495	249	211	-21.8
Ղազախստան	18085	11820	15274	10796	-1.2
Ղրղզստան	3028	1700	1379	992	-2.2
Մոլդովա	5736	2975	1532	1111	-3.7
Տաջիկստան	2847	1785	886	673	-3.2
Թուրքմենստան	3600	1530	906	759	-3.7
Ուզբեկստան	14723	7820	3446	1890	-4.3
Ուկրաինա	54705	35700	37187	23143	-1.5
ԱՊՀ	138096	85005	91291	59685	-1.5
Բալթյան երկրներ					
Լիտվա	1690	1010	4521.8	3559.1	2.6
Լատվիա	1786	1100	6565.1	5892.9	3.7
Էստոնիա	1030	695	22.74.2	1715.6	2.2

[102] Экономист, журнал, 2011, N1, стр. 80, 81.

14.4 Ֆինանսավարկային հարաբերությունների զարգացումը Հայաստանում

Հայաստանի տնտեսությունը ճգնաժամային վիճակից դուրս բերելու տնտեսական ծրագրերի իրականացման, սոցիալական հիմնախնդիրներ լուծելու համար անհրաժեշտ են ֆինանսական միջոցներ, կապիտալ ներդրումներ, վարկեր: Միջազգային վարկային միջոցների ներդրումները պետք է դիտել որպես արտադրություն կազմակերպելու, տնտեսություն զարգացնելու և վճարային հաշվեկշռի կարգավորման կարևոր աղբյուրներից մեկը:

Հայաստանում տնտեսական բարեփոխումներ սկսվել են 1991 թ., իսկ 1992 թ. ՀՀ-ը դարձել է Համաշխարհային բանկի և ԱՄՀ անդամ: Ինստիտուցիոնալ բարեփոխումները սկսվել են 1994 թ. Արժույթի Միջազգային Հիմնադրամի (ԱՄՀ), Համաշխարհային բանկի (ՀԲ) տրամադրած վարկային և Եվրամիության տեխնիկական օգնության ծրագրերի շրջանակներում: 1993-1996 թթ. ՀԲ-ի կողմից Հայաստանին տրամադրված գումարը կազմել է 262 մլն դոլար: 1996 թ. փետրվարին Հայաստանի կառավարությունը ստորագրել է համաձայնագիր ԱՄՀ-ի հետ՝ Հայաստանի Կենտրոնական բանկում 150 մլն դոլար պահելու, վճարային հաշվեկշիռն ապահովելու համար: ԱՄՀ վարկային գործարքները հիմնականում կարճաժամկետ ու միջին ժամկետի են և ուղղված են անդամ երկրների վճարային հաշվեկշիռների ժամանակավոր դեֆիցիտի ծածկմանը:

Եվրոհամայնքի հանձնաժողովի և Հայաստանի Հանրապետության կառավարության միջև 1997 թ. հունիսի 30-ին ստորագրվել է «ՏԱՍԻՍ 1996» ծրագրի ֆինանսավորման Հուշագիրը, ըստ որի Եվրոպական համայնքը ԵՄ «ՏԱՍԻՍ» ծրագրի շրջանակներում 1996-1999 թթ., որպես անհատույց օգնություն, տրամադրել է 8 մլն 650 հազար էքյու գումար:

1997 թ. դեկտեմբերի 5-ին Հռոմում ՀՀ-ի և Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի միջև ստորագրվեց համաձայնագիր, ըստ որի հիմնադրամը Հայաստանին տրամադրեց 9.5 մլն СДР գումար:

1998 թ. փետրվարի 4-ին Վաշինգտոնում Զարգացման միջազգային ընկերության և Հայաստանի միջև ստորագրվեց համաձայնագիր, ըստ որի ընկերությունը Հայաստանին պարտքով տրամադրեց 11 մլն 100 հազար СДР գումար՝ կրթության համակարգում ծրագրերի իրականացման նպատակով:

Գյուղատնտեսության համալիր միջոցառումների իրականացման նպատակով մինչև 2000 թ.-ի վերջը ծախսվել է Համաշխարհային բանկի հատկացրած 57 մլն դոլարը: Հայաստանի բնակավայրերի սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման նպատակով 1997 թ. Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի (IFAD) հաշվին ի-

րականացվել է ՀՀ «Գյուղատնտեսական զարգացման ծրագիրը», որը գործունեության մեջ դրվել է 1998 թ. ապրիլից՝ 12.9 մլն դոլարով: 2000 թ. դեկտեմբերի 14-ին Համաշխարհային բանկի Միջազգային զարգացման գործակալության և Հայաստանի միջև ստորագրվեց Հայաստանում դատաիրավական բարեփոխումների անցկացմանն աջակցող վարկային համաձայնագիր, ըստ որի 2001-2004 թթ. ՀԲ-ը տրամադրեց 8 մլն 600 հազար դոլար վարկ:

ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան 1992 թ. մարտի 2-ին 46-րդ նստաշրջանում որոշեց ՀՀ-ին ընդունել ՄԱԿ-ի անդամ (ԳԱ 46/227 բանաձև): 1992 թ. դեկտեմբերին ՄԱԿ-ը Հայաստանում հիմնեց գրասենյակ, որտեղ գործում են.

- ՄԱԿ Զարգացման ծրագիրը,
- ՄԱԿ՝ փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակը,
- Մանկական հիմնադրամը,
- Հանրային տեղեկատվության վարչությունը,
- Բնակչության հիմնադրամը,
- Միգրացիայի միջազգային կազմակերպությունը:

ՄԱԿ զարգացման ծրագրի նպատակն է վերացնել չքավորությունը, ստեղծել աշխատատեղեր, զբաղվել բնապահպանության, տնտեսության, քաղաքների և բնակավայրերի զարգացմանն անհրաժեշտ միջոցների ապահովման, այլ ծրագրերի իրականացման հարցերով: Ավելի ուշ սկսել են գործել Պարենի համաշխարհային ծրագիրը, Մարդասիրական օգնության վարչությունը, ՀԲ-ը, ԱՄՀ-ը: ՀԲ և Լինսի հիմնադրամի կողմից տրամադրվել է 18.4 մլն դոլար վարկ փոքր և միջին բիզնեսի զարգացման ծրագրերի համար:

«Պարենի ապահովությունը Հայաստանում» ծրագրի շրջանակներում 1999 թ. ՀՀ-ին տրամադրվել է 11.0 , իսկ 2000 թ.՝ 9.5 մլն եվրո դրամաշնորհ: Հայաստանի վարկերի ստացումը կատարվում է ***ձեռնարկատիրական*** և ***փոխատվական կապիտալի*** ձևով: Առաջինը տրվում է տնտեսության ճյուղերին, երկրորդը՝ տեղական ձեռնարկություններին կամ կառավարությանը փոխառության ձևով:

ԱՄՀ-ի կողմից ՀՀ ԿԲ-ին հատկացված 201.231 մլն դոլարը նախատեսվել է արժույթի պաշարների համալրման համար: ԵՄ-ի, ՌԴ-ի, ԱՄՆ-ի հատկացրած 29.736 մլն դոլարը, որպես ապրանքային վարկ, տրվել է հացահատիկի և վառելիքի ձեռք բերման, իսկ ՀԲ, Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի և արևմտյան երկրների 70 մլն դոլարը՝ ինստիտուցիոնալ բարեփոխումների իրականացման համար: Մնացած գումարը հատկացվել է սոցիալական ենթակառույցների զարգացման, էներգետիկայի, ավտոճանապարհների, ոռոգման, Երևանի խմելու ջրի ցանցի նորոգման, կրթության, առողջա-

պահության ոլորտի, աղետի գոտու ուղղակի ներդրումների, կառուցվածքային բարեփոխումների համար:

Օտարերկրյա վարկերով կարգավորվում է նաև երկրի ***վճարային հաշվեկշիռը***, որը վիճակագրական հաշվետվություն է և որում արտացոլվում են հաշվետու ժամանակաշրջանում այլ երկրների և միջազգային կազմակերպությունների հետ Հայաստանի արտաքին տնտեսական գործառնությունների ամփոփ տվյալները: Այն նպաստում է արտահանման ավելացմանը և ներմուծման կրճատմանը: ՀՀ վճարային հաշվեկշիռն առաջին անգամ կազմվել է 1993 թ. համար: Սկսած 1996 թ.՝ կազմվել է Արժույթի Միջազգային հիմնադրամի մշակված վճարային հաշվեկշռի միասնականացված հոդվածներին համապատասխան:

ՀՀ վճարային հաշվեկշիռը կազմված է երկու հիմնական հաշիվներից՝ ***ընթացիկ*** և ***կապիտալի ու ֆինանսական***: Ընթացիկում գրանցվում են ապրանքների, ծառայությունների և ընթացիկ տրանսֆերտների հետ կատարված գործառնությունները, իսկ ***կապիտալի*** և ***ֆինանսական*** հաշվում՝ ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների հոսքերը, կապիտալ տրանսֆերտները: Ֆինանսական հաշիվը կազմված է չորս հոդվածներից՝ ***օտարերկրյա ուղղակի, պորտֆելային, այլ ներդրումներ*** և ***պահուստային ակտիվներ***:

Օտարերկրյա ներդրում է համարվում գույքի ցանկացած տեսակ, որը շահույթ ստանալու նպատակով օտարերկրյա ներդրողի կողմից անմիջականորեն ներդրվում է ՀՀ տարածքում իրականացվող ձեռնարկատիրական գործունեության ոլորտում:

Ուղղակի ներդրումը կատարվում է արտասահմանյան ուղղակի ներդրողի կողմից՝ բաժնետիրական և այլ կապիտալի տեսքով:

Պորտֆելային ներդրումն օտարերկրյա կապիտալ ներդրում է, որն ունի սահմանափակ ազդեցություն և ստանալու որոշակի շահույթ: Հաստատվում է կողմերի միջև կնքվող պայմանագրով: Պորտֆելային ներդրումները լինում են բաժնետոմսերի և արժեթղթերի տեսքով:

Այլ ներդրումը ներառում է բոլոր տեսակի ֆինանսական գործառնությունները, որոնք չեն ընդգրկվել ուղղակի և պորտֆելային ներդրումներում: Դրանք լինում են վարկերի և ավանդների տեսքով: ՀՀ վճարային հաշվեկշռի ֆինանսական հաշվում գրանցվում են արտաքին ակտիվների և պարտավորությունների գործառնությունները: Այս տեսակետից կարևոր նշանակություն ունեն հանրապետության պետական բյուջեն, նրա եկամուտները և ծախսերը:

Պետական բյուջեն, որպես ֆինանսական համակարգի հիմնական օղակ, ստեղծում է որոշակի հարաբերություններ պետության, ֆիզիկական և իրավաբանական անձանց միջև՝ երկրի կենտրոնացած դրամական ֆոնդերի ստեղծման և օգտագործման նպատակով:

Պետական բյուջեն առաջատար դեր է կատարում հասարակական վերարտադրությունը ֆինանսապես ապահովելու, ԳՏԱ-ն արագացնելու գործում, նպաստում է հասարակական սպառման ֆոնդերի կազմավորմանը, երկրի պաշտպանության ամրապնդմանը և սոցիալ-տնտեսական խնդիրների լուծմանը:

Տեղական բյուջեները կոչված են ապահովելու, սպասարկելու տեղական իշխանությունների կողմից իրականացվող ֆունկցիաները: Դրանք իրենց մեջ ընդգրկում են ***հատուկ ֆոնդեր, հարկերի մեծ խմբեր, տեղական վարկավորման համակարգը:***

Պետական ձեռնարկությունները նույնպես ունեն իրենց ամրացված հիմնական և շրջանառու ֆոնդերը, արտադրական և ֆինանսական որոշակի ինքնուրույնություն:

Կառավարման հատուկ ֆոնդերը տրամադրվում են պետական բյուջեից: Դրանք են ***սոցիալական ապահովագրության նպատակային ֆոնդերը, պետական և ոչ պետական ֆինանսավարկային կազմակերպությունների միջոցները:***

Պետական բյուջեն իրականացնում է երեք գործառույթ՝ ***բաշխողական, վերահսկողության և կարգավորող***:

Բաշխողական գործառույթի էությունն այն է, որ ազգային եկամտի բաշխման ժամանակ նյութական արտադրության ոլորտում զբաղված աշխատողները ստանում են իրենց եկամուտներն աշխատավարձի և այլ դրամական վճարումների տեսքով:

Վերահսկողության գործառույթն ակտիվ ներգործություն է ունենում դրամաշրջանառության կարգավորման գործընթացի վրա:

Բյուջեի կարգավորման գործառույթը նպաստում է երկրի տնտեսական կյանքի կարգավորմանը՝ բյուջետային միջոցներն ուղղելով տնտեսական, ճյուղային զարգացմանը: Պետությունը կարող է արագացնել արտադրության տեմպերը, կապիտալի աճը, սպառման կառուցվածքը:

Բյուջեի դեֆիցիտի դեպքում պետության ծախսերի ընդհանուր գումարը գերազանցում է պետության եկամուտների ընդհանուր գումարին: Զարգացած երկրների փորձը ցույց է տալիս, որ բյուջեի դեֆիցիտի թույլատրելի նորմ կարելի է համարել տվյալ երկրի ՀՆԱ-ի մոտ 3 տոկոսը:

Պետական բյուջեն կազմված է ***եկամուտներից*** և ***ծախսերից***:

Եկամտային մասը կազմում են պետական բյուջեի ֆինանսավորման համար ստացվող դրամական միջոցները՝ հարկային եկամուտներ, պետական տուրքեր, պարտադիր սոցիալական ապահովման վճարներ և այլ եկամուտներ:

Ծախսային մասը ցույց է տալիս հավաքագրված պետական դրամական միջոցների օգտագործման ոլորտները:

Պետական բյուջեի եկամուտների աղբյուրներ են ***ուղղակի և անուղղակի*** հարկերը, որոնց տեսակարար կշիռը բյուջեի եկամուտների մեջ հասնում է 80-90 տոկոսի: Ամենագլխավորը շահութահարկը, եկամտահարկը և ավելացված արժեքի հարկերն են:

2011 թ. ՀՀ պետական բյուջեի եկամուտները կազմել են 911.6 մլրդ դրամ, ծախսերը՝ 1 տրիլիոն 441 մլրդ դրամ, պակասորդը՝ 132.5 մլրդ դրամ: Պետբյուջեի եկամուտը ՀՆԱ-ի նկատմամբ 2009 թ. եղել է 21.8, 2010 թ.՝ 21.5 տոկոս:

Փողի բազան ներառում է ՀՀ ԿԲ-ից դուրս կանխիկ դրամը, ՀՀ ԿԲ-ում առևտրային բանկերի պարտադիր պահուստները և ոչ բանկային կազմակերպությունների ավանդները: Կամ դրամական բազան զուտ արտաքին և զուտ ներքին ակտիվների գումարն է: Ըստ ՀՀ ԿԲ տվյալների՝ 2010 թ. վերջին փողի զանգվածը նախորդ տարվա նկատմամբ աճել է 8.6 տոկոսով: Ըստ ՀՀ ԿԲ նախնական տվյալների՝ փողի բազան 2011 թ. վերջին կազմել է 671271 մլն դրամ[103]:

Ընդհանուր ***արժութային պահուստները*** կազմված են միջազգային արժութային հիմնադրամի անդամ երկրների պահուստներից, օտարերկրյա արժութային պաշարներից: Երկրի արժութային պահուստներում, առևտրային բանկերում հաշվարկում են եղած օտարերկրյա արժութային միջոցները: Արժութային պահուստներ ստեղծվում են, որպեսզի երկիրը կարողանա ծածկել միջազգային հաշվարկներով ստացած գերնորմատիվային վճարումները: Հայաստանի միջազգային պահուստները 2010 թ. վերջին եղել են 1.86, 2011 թ. հուլիսին՝ 1.78, սեպտեմբերի վերջին՝ 1.95 մլրդ դոլար: Դրանց 74 տոկոսը (1.44 մլրդ դոլար) պահվում է արժեթղթերի, 495 մլն դոլարը՝ կանխիկ արժույթի կամ ավանդների տեսքով (բոլոր միջոցները Հայաստանից դուրս են)[104]:

Գոյություն ունեն պետության ***արտաքին*** և ***ներքին պարտքեր:***

Պետության արտաքին պարտքը ԱՄՀ-ին, ՀԲ-ին, միջազգային տարածաշրջանային և ազգային բանկերին, ֆինանսական այլ կազմակերպություններին պետության կողմից երաշխավորված երկարաժամկետ ու կարճաժամկետ վարկերի, պետության այլ պարտքերի գումարն է: Պարտքերի մեջ մտնում են նաև չմարված արտաքին փոխառությունները և դրանց չվճարված տոկոսները:

ՀՀ ***արտաքին պետական պարտքը*** ներառում է այլ պետություններից և միջազգային կազմակերպություններից ՀՀ կառավարությանը և ՀՀ ԿԲ-ին տրամադրված, ինչպես նաև երաշխիքներով տրված վարկերը:

ՀՀ ԿԲ-ի՝ այլ երկրներից վարկերի ***ստացման նպատակներն են.***

- պետբյուջեի դեֆիցիտի ֆինանսավորումը,
- պահուստների համալրումը,
- տնտեսության ոլորտների զարգացումը,
- վարկային պարտավորությունների իրագործումը,

[103] ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2011 թ. հունվար-դեկտեմբերին, Երևան, 2012, էջ 109:
[104] Հայոց աշխարհ, օրաթերթ, 3-ը դեկտեմբերի, 2011:

- նախկին պարտքերի վերադարձը,
- ռազմավարական ծրագրերի իրականացումը:

ՀՀ պետական արտաքին պարտքը, ըստ Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության տվյալների, 2006 թ. հունվարի 1-ի դրությամբ կազմում էր 1183 մլն ԱՄՆ դոլար, որից 960.1 մլն դոլարը (81.2 տոկոս) կազմում էին ՀՀ կառավարության, 217.6 մլն դոլարը (18.4 տոկոս)՝ ԿԲ արտաքին պարտքերը, 5.3 մլն դոլարը (0.44 տոկոս)՝ կառավարության տրամադրած երաշխիքները:

Աղյուսակ 14.10

ՀՀ պետական պարտքը (մլն ԱՄՆ դոլար)[105]

	2008 թ.	2009 թ.	2010 թ.
Արտաքին պետական պարտք	1577.106	2966.677	3299.021
այդ թվում՝			
ՀՀ կառավարության պարտքը	1401.077	2465.921	2736.394
ՀՀ ԿԲ պարտքը	176.029	500.756	562.627

Արտաքին պարտքի մեջ մտնում են նաև պետության կողմից երաշխավորված արժույթի, փոխառությունների, մասնավոր դեբիտորների արտաքին պարտավորությունները: Չվճարվելու դեպքում տարեվերջում արտաքին պարտքը հաշվարկվում է ԱՄՆ դոլարի փոխարկելի կուրսով:

Հայաստանի արտաքին պարտքը ձևավորվել է անկախության առաջին տարիներից: Բոլոր վարկատուները վարկեր տրամադրում են СДР (հատուկ փոխատվական իրավունք) արժույթով, որի փոխարժեքի մեջ ԱՄՆ դոլարը կազմում է 45, եվրոն՝ 29, ճապոնական իենը՝ 15, անգլիական ֆունտ ստեռլինգը՝ 11 տոկոս:

Հայաստանի արտաքին պետական պարտքի վարկատուներն են.

- Համաշխարհային բանկը,
- Վերակառուցման և զարգացման Եվրոբանկը,
- ԱՊՀ միջպետական բանկը,
- Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամը,
- Ազգային բանկերը,
- Արժույթի միջազգային հիմնադրամը:

Հայաստանի պետական պարտքերը կառավարում և իրականացնում է ՀՀ Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը: Հայաստանի և ՀԲ համագործակցության ընթացքում տարբեր ոլորտներում՝ պետական կառավարման, բնապահպանության, դատաիրավական, կրթության, առողջապահության, մասնավոր հատվածի, սոցիալական ա-

[105] Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2011, էջ 346:

պահովության, տրանսպորտի, էներգահամակարգի, գյուղատնտեսության, երկրաշարժի գոտու, իրականացվում են վարկային ծրագրեր: Ներկայում Հայաստանում գործող 25 առևտրային բանկերը հարյուրավոր մասնաճյուղերով և արժույթի փոխանակման կետերով գործառնություններն իրականացնում են արտարժույթով:

Գծանկար 14.1

ՀՀ արտաքին պարտքի դինամիկան 2000-2009 թթ. (մլն դոլար)[106]



Գծանկար 14.2

ԱՄՆ դոլար-ՀՀ դրամ փոխարժեքի դինամիկան 2001-2009 թթ.[107]



[106] Աղբյուր՝ ՀՀ ֆինանսների նախարարության, www.mfe.am
[107] Աղբյուր՝ ՀՀ ֆինանսների նախարարության, www.mfe.am

Ըստ վարկառուների՝ Հայաստանի արտաքին պարտքի կառուցվածքը հետևյալն է.

- Կառավարություն (78 տոկոս),
- Կենտրոնական բանկ (20 տոկոս),
- Երաշխիքներ (2 տոկոս):

Ըստ ստացման աղբյուրների՝ պարտքի կառուցվածքը հետևյալն է.

- բազմակողմ (56 տոկոս),
- երկկողմ (23 տոկոս),
- արժույթի միջազգային հիմնադրամ (21 տոկոս):

Արտոնյալ վարկերը կազմում են ընդհանուրի 74, ոչ արտոնյալ վարկերը՝ 26 տոկոսը:

Ներքին պարտքը պետության պարտքն է իր քաղաքացիներին:

2010 թ. Հայաստանի ներքին պետական պարտքը եղել է 180.3 մլրդ դրամ, որից շրջանառելի պարտատոմսերի ծավալը կազմել է 173.0, իսկ, որպես ներքին պարտք, ստացված վարկի ծավալը՝ 7.3 մլրդ դրամ: 2010 թ. Հայաստանի ներքին պետական պարտքը կազմում էր ՀՆԱ 39.8 տոկոսը:

2011 թ. ներքին պետական պարտքի ծավալն անվանական արժեքով կազմել է 216.3 մլրդ դրամ, որից շրջանառելի պարտատոմսերի ծավալը 210.5 մլրդ դրամ էր, իսկ, որպես ներքին պարտք, ստացված վարկի ծավալը՝ 5.8 մլրդ դրամ:

2012 թ. պետության ներքին պարտքի ծավալը նախատեսվում է 241 մլրդ դրամ, որը 2011 թ. համեմատ կավելանա 25 մլրդ դրամով:

Ներքին պարտքի ձևավորման աղբյուրներն են.

- ազգային արժույթով պետական արժեթղթերի տեղաբաշխումից ստացված հասույթը,
- ՀՀ ԿԲ-ի կողմից Հայաստանի կառավարությանը տրված վարկերը,
- ՀՀ առևտրային բանկերից վարկերը:

Կրեդիտորական պարտքը կազմակերպությունների կողմից ժամանակավորապես ներգրավված միջոց է, որը ենթակա է վերադարձման համապատասխան իրավաբանական կամ ֆիզիկական անձանց (կրեդիտորներին):

Դեբիտորական պարտքը կազմակերպությանն իրավաբանական կամ ֆիզիկական անձանց կողմից վճարման ենթակա պարտքի գումարն է, որը ձևավորվել է վերջիններիս միջև տնտեսական փոխհարաբերությունների հետևանքով:

14.5 Հայաստանի ֆոնդային բորսաները

ՄՏՀ զարգացման համար Հայաստանին անհրաժեշտ են ֆոնդային բորսաներ, որոնք կզարգացնեն բորսային առևտուրը: Հայաստանի

ֆոնդային բորսան, որպես ինքնուրույն կազմակերպություն, գրանցվել է 2001 թ. փետրվարի 13-ին: 2001 թ. գրանցված էր 37 ընկերություն: Ներկայում փոքր ծավալներով գործում է միայն արժեթղթերի բորսան: ՀՖԲ-ը և արժեթղթերի շուկան ձևավորման փուլում են, ինչի հետևանքով բաժնետոմսերի կապիտալացման ցուցանիշը ցածր է: Օրինակ՝ 2004 թ. իրացման միջին աճն էապես պայմանավորված էր «Սելենա» ԲԲԸ-ի սովորական բաժնետոմսերի իրացումով, որը 2004 թ. կազմեց 1245 միավոր գործարք: ՀՖԲ հիմնական գործունեությունն է արժեթղթերի հաշվառումը, բորսայական առևտրի կազմակերպումը: Ըստ «Արժեթղթերի շուկայի կարգավորման ՀՀ օրենքի»՝ բորսան իրականացնում է նաև արժեթղթերի գրանցում:

2002 թ.-ից ՀՖԲ-ը հանդիսանում են Եվրասիական ֆոնդային բորսաների դաշնության (FEAS) և ԱՊՀ երկրների ֆոնդային բորսաների միջազգային ֆեդերացիայի լիիրավ անդամ, որը 2004 թ. համագործակցության հուշագիր է ստորագրել Սալոնիկի (Հունաստան) բորսայական կենտրոնի և Վրաստանի ֆոնդային բորսայի հետ: Ներկայում ՀՖԲ-ը կատարում են արժեթղթերի և արտարժույթի առք ու վաճառք, որն իրականացվում է օրենքով սահմանված կարգով գրանցված բրոքերային ընկերությունների կողմից: ՀՖԲ-ի կառավարման մարմինը բորսայի անդամների ընդհանուր ժողովն է: Բորսան գործում է մեկ անդամ-մեկ ձայն սկզբունքով, որն ապահովում է անդամության իրավահավասարությունը: Բորսայի ներքին վերահսկողությունն իրականացնում է ***Վերահսկիչ ծառայությունը***՝ նշանակված ընդհանուր ժողովի կողմից: Վեճերը քննարկում է ***Կարգապահական հանձնաժողովը***: Գործարքները հաշվարկվում են տարվա հաշվով, եռամսյակային կտրվածքով:

ՀՖԲ-ի նպատակը հայկական ընկերությունների համար կապիտալի ներգրավման պայմանների ստեղծումն է, ինչպես նաև Հայաստանում հայրենական և օտարերկրյա ներդրողների կողմից ներդրումներ կատարելու հնարավորությունների ապահովումն արժեթղթերի շուկայի ձևավորման միջոցով:

ՀՖԲ հիմնական գործառույթն արժեթղթերի բորսայական առևտրի կազմակերպումն է, ինչպես նաև առևտրային գործարքների մասին տեղեկատվության բացահայտումը: Ըստ «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին ՀՀ օրենքի»՝ բորսան իրականացնում է նաև թողարկողների արժեթղթերի գրանցման գործընթացը:

ՀՖԲ-ում տեղադրված առևտրային համակարգի տեխնիկական հնարավորությունները թույլ են տալիս սպասարկել նաև պետական պարտատոմսերի առևտուրը: Ըստ «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին ՀՀ օրենքի»՝ բորսայում ցանկացած գործարք կարող է իրականացվել միայն բորսայի անդամ անձի միջոցով: ՀՖԲ-ում արժեթղթեր գնել-վաճառելու համար անհրաժեշտ է կնքել համապատաս-

խան պայմանագիր: Քննարկումները տեղի են ունենում յուրաքանչյուր աշխատանքային օր:

Բորսային առևտրում թույլատրելի են միայն ֆոնդային բորսայի կանոններով սահմանված չափանիշներին և պահանջներին համապատասխանող արժեթղթերը, ինչը զգալի առավելություններ ունի ինչպես ներդրողների, այնպես էլ արժեթղթեր թողարկող ընկերությունների համար: Համաձայն վերոնշյալ օրենքի՝ ընկերությունը համարվում է թողարկող, եթե նրա արժեթղթերը գրանցված են որևէ ֆոնդային բորսայում կամ ունի 50 գրանցված սեփականատեր:

ՀՖԲ կառավարման բարձրագույն մարմինը բորսայի անդամների ***ընդհանուր ժողովն*** է: ՀՖԲ ***Դիտորդ խորհուրդը*** կազմված է 12 անդամներից և խորհրդի նախագահից, որն ընդունվում է խորհրդի անդամների կողմից մեկ տարի ժամկետով: ՀՖԲ ***Կանոնադրությամբ*** Դիտորդ խորհրդին են վերապահված բորսայի ընթացիկ և հեռանկարային ծրագրերի հաստատման, տարեկան և արտահերթ ժողովների գումարման, դրանց օրակարգերի հաստատման, նոր անդամների ընդունման, որոշումների կայացման իրավասությունները:

Ներքին վերահսկողությունն իրականացվում է վերահսկիչ ծառայության կողմից, որին նշանակում է ընդհանուր ժողովը: Եթե գործունեության ընթացքում որևէ մակարդակում որևէ արժեթուղթ չի բավարարում ՀՖԲ պահանջին, ապա ՀՖԲ-ը որոշում է կասեցնել արժեթղթերի առևտուրը:

Աղյուսակ 14.11

Հայկական ֆոնդային բորսայի գործարքների քանակը 2008 թ. (ըստ Հայաստանի Արժեթղթերի հանձնաժողովի տրամադրած տվյալների)

Արժեթղթեր թողարկող հաստատություններ	Գործարքների քանակը	Արժեթղթերի քանակը	Գործարքների գումարը (հազար դրամ)
Հայավտո	2	52	260.0
Հայբիզնես ընկերություն	1	7	350.0
Արդշինբանկ	4	89	222.5
Երևանի ժամացույցի գործարան	21	7542	16031.0
Խարբերդ	4	39	76.0
Ինտերհաստոց ԳԱՄ	4	3094	154.7
Հայէլեկտրոմաշ	3	2281	112.0
Մաքուր երկաթի գործարան	3	80	465.0
Այլ թողարկողներ	28	1840	1105.5
Ընդամենը	70	15024	18776.7

Հայաստանում արժեթղթերի վաճառքի աճուրդային գործարքներին կարող են մասնակցել միայն գրանցված բրոքերային ընկերությունները: Ըստ ՀՀ Պետական գույքի կառավարման նախարարության տվյալների՝ 2003 թ. հունվարի 1-ի դրությամբ մասնավորեցվել է 32 օբյեկտ, որոնցից 12-ը՝ 2002 թ.: Լոտային աճուրդով մասնավորեցվել է 62 օբյեկտ: 2004 թ. հունվարի 1-ի դրությամբ աճուրդով մասնավորեցվել է 31, 2006 թ. հունվարի 1-ի դրությամբ՝ 48 օբյեկտ:

Ապրանքներ արտադրող հայկական ընկերությունները մասնակցում են նաև միջազգային ***տոնավաճառների*** և ***ցուցահանդեսների:***

2003 թ. Դուբայում ACME ծրագրով տեղի ունեցավ սննդային ապրանքների ցուցահանդես, որտեղ իրենց արտադրանքը ցուցադրեցին նաև հայկական «Աշտարակ կաթ», «Գամմա» (պահածոներ, կոմպոտներ), «Ակվատեխ» (ձկնապրանքներ), «Գեղարդ» (մսամթերք) ընկերությունները: Հայկական սննդամթերք արտադրողների մի մասը մասնակցել է նաև Մոսկվայում կազմակերպված «Պրոդէքսպո 2003» ցուցահանդեսին, որտեղ պայմանավորվածություն է ձեռք բերվել պարենամթերքի Ռուսաստան արտահանման մասին: Արտահանվում են նաև «Նոյան» բնական հյութերը: 2005 թ. Սոչիում կազմակերպված միջազգային ցուցահանդեսին մասնակցել են գարեջուր արտադրող «Կոտայք» և «Կիլիկիա» ձեռնարկությունները, ինչը նպաստել է մեր հանրապետությունից գարեջրի արտահանմանը: 2006 թ. սեպտեմբերին Երևանում բացվեց «Հայաստան էքսպո-2006» ունիվերսալ առևտրաարդյունաբերական միջազգային ցուցահանդեսը, որին մասնակցում էին 170 արդյունաբերական, առևտրային կազմակերպություններ, ընկերություններ ԼՂՀ-ից, Հայաստանից, Ռուսաստանից, Ուկրաինայից, Բելառուսից, Վրաստանից, Ֆրանսիայից, Լեհաստանից, Ռումինիայից, Սիրիայից, Լիբանանից, Իրանից: Ցուցահանդեսին մասնակցում էին «Արդյունաբերական Հայաստան», «Սնունդ և ըմպելիք», «Կահույք», «ՇինՀայաստան», «Տրանս», «Տպագրություն, հրատարակչություն, գովազդ» և այլ բնագավառների գիտական, տեխնոլոգիական նմուշներ: 2006 թ. նոյեմբերին Երևանում բացվեց իրանական շինանյութի և քաղաքաշինական սարքավորումների ցուցահանդես, որտեղ ներկայացված էր 22 ընկերությունների արտադրանք:

14.6 Միջազգային համատեղ ձեռնարկատիրական գործունեությունը և մաքսային համակարգը Հայաստանի Հանրապետությունում

Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման կարևոր ուղղություններից է հայրենական արտադրությունում օտարերկրյա ներդրումներ կատարելը: Ներմուծման սովորական գործընթացը փոխարինվում է արտադրական համագործակցությամբ: Քանի որ տնտեսության զարգացման համար առաջանում են դժվարություն-

ներ՝ կապված արտադրության կազմակերպման, արդյունքի իրացման, ծառայությունների և կառավարման մյուս հարցերի հետ, ուստի նպատակահարմար է ստեղծել ազգային և արտասահմանյան արտադրական կազմակերպություններ՝ ներմուծելով հումք, ապրանք, ներգրավելով ինվեստիցիաներ, գիտատեխնիկական ներուժ: Համատեղ ձեռնարկատիրության ստեղծումը հնարավորություն է տալիս ավելի ռացիոնալ օգտագործելու հանրապետության բնական և աշխատանքային ռեսուրսները, գիտատեխնիկական ներուժը, ընդլայնելու ապրանքադրամական հարաբերությունների ոլորտը, հաղթահարելու ներքին շուկայի սահմանափակումները: Նման ձեռնարկություններ կազմակերպելու համար Հայաստանից պահանջվում են ավելի ցածր արտադրական ծախսեր, էժան հումք: Հանրապետության Կառավարության խնդիրն է արդյունավետությունը բարձրացնելու համար կոորդինացնել արտադրական, գիտական և տնտեսական գործունեությունը:

Հայաստանում համատեղ ձեռնարկություններ ստեղծվել են բարձր պահանջարկ վայելող արտադրանքների համար, ինչը կրճատել է այլ երկրներից նույն ապրանքների ներմուծումը: Հետևաբար, անհրաժեշտ է բավարար պայմաններ ստեղծել արտասահմանյան ձեռնարկությունների ներդրումների համար, ինչը կնպաստի մանր ու միջին արտադրողների հասարակական արտադրության մեջ ընդգրկվելուն:

Համաձայն ՀՀ Վիճակագրության ազգային ծառայության տվյալների՝ 1988-ից մինչև 2000 թ.-ի կեսերը Հայաստանում իրականացված օտարերկրյա ուղղակի ներդրումների ծավալները կազմել են մոտ 540 մլն ԱՄՆ դոլար: 1991 թ. օտարերկրյա ներդրումներով գրանցվել են 38, 1992 թ.՝ 50, 1993 թ.՝ 59, 1994 թ.՝ 68, 1995 թ.՝ 220, 1996 թ.՝ 209, 1997 թ.՝ 326, 1998 թ.՝ 340, 1999 թ.՝ 309 ձեռնարկություններ[108]: Ներդրումների ծավալով գերակշռում է արդյունաբերության ոլորտը՝ չնայած, որ գրանցված ձեռնարկությունների 53 տոկոսն առևտրի ոլորտում են, 13-ը՝ արդյունաբերության, 9-ը՝ հեռահաղորդակցության և այլն: Եթե մինչև 1998 թ. Հայաստանում կատարված ներդրումների մեծ մասն արտահանման ուղղվածություն չունեին և բավարարում էին միայն ներքին շուկայի պահանջը, ապա վերջին 2-3 տարիներին կատարված ներդրումներն արտահանման ուղղվածություն ունեն: Այժմ ներդրումային գործընթացն ընդգրկում է առևտրային, բանկային, թեթև և սննդի արդյունաբերության, հյուրանոցային համակարգի, կապի, տրանսպորտի ոլորտները: Ներդրվող միջոցների ծավալը համեմատաբար մեծ է կապի ոլորտում:

2001 թ. հունվարի 1-ի դրությամբ ՀՀ-ում օտարերկրյա անձանց ստորաբաժանումները կազմում էին 270, իսկ 2006 թ. հունվարի 1-ի

[108] Դարբինյան Ա. Վ., Հայաստանը միջազգային տնտեսական ինտեգրացման գործընթացում, Երևան, 2000, էջ 222:

դրությամբ՝ 412 միավոր: Արտասահմանյան 36 երկրների ներդրումներով ստեղծված 259 ձեռնարկությունից 129-ի կազմում կան և տեղացի, և օտարերկրացի, իսկ 130-ում՝ միայն օտարերկրացի իրավաբանական անձինք կամ քաղաքացիներ: Ներդրումային ձեռնարկությունների մոտ կեսը համատեղ է: Դրանց կանոնադրական հիմնադրամի 16 տոկոսը կազմում են տեղի կազմակերպությունների, իսկ 84-ը՝ օտարերկրյա ներդրումները: Համեմատաբար մեծ մաս են կազմում Ռուսաստանի (34 տոկոս), Իրանի Իսլամական Հանրապետության (21 տոկոս), Ֆրանսիայի (26 տոկոս), ԱՄՆ-ի (13 տոկոս) ընկերությունները:

Այժմ գործում են «Ջերմուկ» հայ-ամերիկյան, «Գրանդ Տոբակո» հայ-կանադական, «Կոտայք» գարեջրի հայ-ֆրանսիական, «Արմբրիտ» և «Աֆինա Գոլդ» մակարոնեղենի արտադրության հայ-բրիտանական, 2000 թ. ստեղծված «Արմենալ» հայ-ռուսական (2003 թ.-ից պատկանում է «Ռուսալին» և վերանվանվել է Российский алюмин) և այլ համատեղ ձեռնարկություններ: «Գրանդ Տոբակո» ՀՁ-ին շնորհվել է եվրոպական ԻՍՕ-9002 միջազգային չափանիշների հավաստագիր[109]: Հայաստանի արդյունաբերության մեջ համեմատաբար խոշոր ներդրումներ կատարել են «Կոկա-Կոլան», «Գրանդ Տոբակոն», «Պեռնո Ռիկարը», «Արմենթելը», «Արմենիա» և «Անի» հյուրանոցային համալիրները:

Աղյուսակ 14.12

Տվյալներ ՀՀ-ում օտարերկրյա առևտրային իրավաբանական անձանց և ձեռնարկությունների վերաբերյալ[110]

Ամենաշատ ստորաբաժանում ունեցող երկրներ	01.01.2002	01.01.2003	01.01.2004	01.01.2006
ԱՄՆ	85	93	98	145
Ռուսաստան	78	83	85	107
Մեծ Բրիտանիա	15	16	16	24
Գերմանիա	10	11	10	12
Ֆրանսիա	10	10	10	14
Կիպրոս	9	9	9	9
Իտալիա	5	5	2	2
Մնացած երկրներ	58	65	73	99
Ընդամենը	270	292	303	412

Օրինակ, Հայաստանի և Գերմանիայի միջև ստորագրվել է 25 համաձայնագիր: Վերջին 5 տարում ապրանքաշրջանառությունը կազմել

[109] ԻՍՕ-ն չափորոշիչների կազմակերպություն է, ինչպես ԳՈՍՏ-ը:
[110] ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2005 թ., Երևան, 2006, էջ 114:

է 625 մլն դոլար, որից արտահանումը՝ 314, ներմուծումը՝ 311 մլն դոլար: 2006 թ. հունվարի 1-ի դրությամբ գրանցված է գերմանական կապիտալով գործող 61 ձեռնարկություն: Տեղեկատվության տեխնոլոգիաների ոլորտում գործում է գերմանական LYCOS ընկերությունը: Վերջին 14 տարում գերմանական ներդրումների գումարը կազմել է 100 մլն դոլար: Հայաստանում ֆրանսիական կապիտալով գործում է 111 ընկերություն, այդ թվում՝ «Պեռնո Ռիկարը», «Կաստելը», «Կրեդիտ Ագրիկոլը» և այլն: Կատարվել է մոտ 160 մլն դոլարի ներդրում:

Հայաստանի հետ համատեղ ձեռնարկություններ գործում են նաև այլ երկրներում: 2005 թ. վերջին գործում էին հայ-ռումինական 37 համատեղ ձեռնարկություններ Ռումինիայում, որի տնտեսության մեջ կատարվել է զգալի ներդրում:

1994 թ. մարտի 21-ին Երևանում պաշտոնապես գրանցվեց «Հայ գործարարների կորպորացիան»՝ 200 հազար դոլար նախնական դրամագլխով: Գործարարների հավաքն ստեղծեց նաև 12 մլն դոլար հիմնադրամով բանկ, որի ղեկավարությունը ստանձնել է ԵվՁԲ-ը՝ 33.3 տոկոս բաժնեմասով: 1994 թ. մայիսի 30-ին Երևանում կազմակերպվել է Գործարարների 4-րդ կոնֆերանսը, որին մասնակցում էր 12 երկրի 120 ներկայացուցիչ:

ՄՏՀ անբաժանելի մաս է երկրի ***մաքսային համակարգը***: ՀՀ մաքսային վարչությունը ստեղծվել է 1992 թ. հունվարի 4-ին ՀՀ նախագահի հրամանագրով:

1992 թ. հունիսից Հայաստանը միացել է Համաշխարհային մաքսային կազմակերպությանը: Մաքսային հարցերով Հայաստանն ընդունել է մի շարք միջազգային կոնվենցիաներ: Տասնյակ պետությունների հետ (Ռուսաստան, Ուկրաինա, Վրաստան, Ղազախստան, ԱՊՀ և այլն) ստորագրվել են երկկողմ և բազմակողմ համաձայնագրեր:

1999 թ. հուլիսից մաքսային վարչությունն ընդգրկվել է ՀՀ Պետական եկամուտների նախարարության կազմում: 2008 թ. օգոստոսի 20-ին ՀՀ նախագահի հրամանով հարկային պետական ծառայությունն ու մաքսային ծառայությունը միացել և դարձել են ՀՀ կառավարությանն առընթեր Պետական եկամուտների կոմիտե:

Ըստ Հայաստանի աշխարհագրական դիրքի՝ պետական սահմանի ընդհանուր երկարությունը 1728 կմ է, որից Ադրբեջանի հետ սահմանը 1090 կմ է (այդ թվում՝ Նախիջևանի սահմանը՝ 288 կմ), Վրաստանի Հանրապետության հետ՝ 265, Իրանի հետ՝ 45, Թուրքիայի հետ՝ 328 կմ: Հայաստանում գործում են սահմանի հատման 12 հսկիչ անցագրային կետեր: Թուրքիայի հետ գործում է 2 կետ՝ Ախուրիկը և Մարգարան, Իրանի հետ՝ մեկ՝ Կարճևանը (Մեղրի): Հայաստան-Վրաստան սահմանի վրա գործում են Բավրա, Գոգավան, Բագրատաշեն, Պրիվոլնոյե, Ջիլիզա և Այրումի երկաթուղային կայարան-սահմանակետերը: Մաքսակետեր են նաև Երևանի «Զվարթնոց», «Էրեբունի», Գյումրի «Շիրակ» օդանավակայանները: Պրիվոլնոյեն և Ջիլիզան ձգվում են

լեռնային տարածքներով, ասֆալտապատ չեն և քիչ են օգտագործվում:

Հայաստանի մաքսային համակարգը բաժանվում է 4 մաքսային բաժանմունքի.

1. ***Արարատյան*** (Երևան) - Երևանի «Զվարթնոց», «Էրեբունի» օդանավակայանների և Մարգարայի մաքսային կետեր:
2. ***Շիրակի*** (Գյումրի) - «Շիրակ» օդանավակայան, Բավրայի և Ախուրիկի մաքսային կետեր:
3. ***Գուգարքի*** (Վանաձոր) - Գոգավանի, Պրիվոլնոյե, Այրումի, Ջիլիզայի, Բագրատաշենի, Ստեփանավանի մաքսային կետեր:
4. ***Սյունիքի*** (Սիսիան) - Մեղրու Կարճևան մաքսակետ:

Առայժմ չեն գործում հայ-թուրքական սահմանի Մարգարայի և Ախուրիկի մաքսային կետերը:

Հայաստանի Մաքսային օրենսդրությունն ընդունվել է միջազգային չափանիշներին համապատասխան: 1997 թ. հունվարի 1-ից Հայաստանն անցել է ապրանքների կոդավորման նոր համակարգի, իսկ 1996 թ. մայիսից ապրանքների արտահանման մաքսային ձևակերպումները կատարվում են ըստ համակարգչային ԱՍԻԿՈՒԴԱ ծրագրի: Միջազգային ճանապարհային փոխադրումների (ՄՃՓ, TIR) տարածաշրջանային մաքսատունը գործում է 2001 թ.-ից: ՄՃՓ-ը հիմնականում սպասարկում է եվրոպական երկրներից ապրանքներ ներմուծող ընկերություններին: Մաքսային փոխադրումների միության գրասենյակը գտնվում է Ժնևում:

Արտաքին առևտուրը կարգավորելու համար գոյություն ունեն ***սակագնային*** և ***ոչ սակագնային*** ռեժիմներ: Դրանք բավականին ազատականացված են:

Սակագնային կարգավորումը նպաստում է Հայաստանի արտաքին առևտրի զարգացմանը: Ապրանքների արտահանման մաքսատուրքերը սահմանվում են 0, իսկ ներմուծման մաքսատուրքերը՝ 10 և 0 տոկոս: Քաղաքացիների կողմից ապրանքների արտահանումն ազատված է մաքսատուրքերից, իսկ առանց մաքսի ներմուծում թույլատրվում է մինչև 500 ԱՄՆ դոլարին համարժեք ապրանքների ներմուծման դեպքում: Դրանից ավելիի դեպքում գանձվում է ավելացված արժեքի հարկ: Ներմուծման մաքսատուրքերից ազատվում են նաև այն երկրները, որոնց հետ Հայաստանն ունի ազատ առևտրի համաձայնագիր:

Ոչ սակագնային կարգավորումը, քվոտավորումը և լիցենզավորումը կանոնակարգվում են ՀՀ կառավարության որոշմամբ: ***Դեղամիջոցների*** ներմուծումը և արտահանումը կատարվում են ՀՀ առողջապահության, ***բույսերի*** պահպանության համար ***քիմիական միջոցների*** ներմուծումը՝ ՀՀ Գյուղատնտեսության, ***տեքստիլ*** ապրանքների արտահանումը՝ ՀՀ Արդյունաբերության և առևտրի նախարարությունների որոշումների հիման վրա:

Ապրանքների մաքսային ձևակերպումը տարբեր բնույթ ունի: 1989 թ.-ից կիրառվում է ***բեռնատար մաքսային դեկլարացիայի*** միասնական ձևը, որը մշակվել է Եվրամիության կողմից ընդունված բազմաֆունկցիոնալ միասնական ադմինիստրատիվ փաստաթղթերի հիման վրա:

Ապրանքների չափման միավորները համապատասխանում են չափման միավորներ նշանակող համակարգին: Մաքսային դեկլարացիայի հաղորդման ժամանակ մաքսային օրգանները ներկայացնում են նաև կոմպլեքս փաստաթղթեր, հաստատող վկայական, մաքսային դեկլարացիայի հայտարարություն, այսինքն՝

- միջազգային առք ու վաճառքի պայմանագիր (արտաքին առևտրի կոնտրակտ),
- տրանսպորտային փաստաթղթեր,
- կոմերցիոն փաստաթղթեր,
- թույլտվություն, լիցենզիա, սերտիֆիկատներ և այլ փաստաթղթեր՝ հաստատված համապատասխան օրենսդրության կողմից,
- վճարային և հաշվարկային փաստաթղթեր:

Հաշվի առնելով համաշխարհային փորձը՝ կիրառվում են մաքսատուրքերի հետևյալ տեսակները.

- ***անհատական***՝ հարկադրումը հաշվարկվում է մաքսային ապրանքների հաշվով, տոկոսով,
- ***յուրահատուկ***՝ հաշվարկվում է սահմանված կարգով հարկ՝ միավոր ապրանքի հաշվով,
- ***կոմբինացված***՝ վերը նշված երկու հարկադրումների համատեղում:

Մաքսային հսկողության հիմնական նպատակն ապրանքների բացթողնման իրականացումն է առանց մաքսային կանոնների խախտումների: Օրինակ՝ 2010 թ. ՀՀ մաքսային մարմինների իրականացրած ստուգումների ժամանակ հայտնաբերվել են բազմաթիվ խախտումներ: Պետբյուջե լրացուցիչ մուծվել է 291.1 մլն դրամ, հարուցվել է շուրջ 160 քրեական գործ: ԱՄՆ-ում արտաքին առևտրի գործարքների 72 տոկոսը սպասարկվում է անսխալ, 26 տոկոսը՝ որոշ խախտումներով և միայն 2 տոկոսը՝ կեղծ ճանապարհով: Մաքսային հսկողության հիմքը պետք է լինեն ԱՏ գործունեության ճիշտ կազմակերպումը, մաքսային հսկողության համար սուբյեկտիվ գործոնների ազդեցության բացառումը:

ՀՀ կառավարության կողմից սահմանված է արտահանման և ներմուծման, ինչպես նաև տարանցիկ փոխադրումների համար ***արգելված ապրանքների*** ցանկ: Հատուկ տեխնիկայի և սարքավորումների որոշ տեսակների արտահանման համար պահանջվում է ՀՀ Պաշտպանության նախարարության եզրակացությունը:

Հայաստանը մասնակցում է նաև ՏՐԱՍԵԿԱ ծրագրի շրջանակներում կատարվող աշխատանքներին: Ծրագիրը ֆինանսավորվում ու

իրականացվում է ԵՄ-ի կողմից և նպատակ ունի վերականգնելու Եվրոպա-Կովկաս-Միջին Ասիա տրանսպորտային միջանցքները:

Մաքսային գործունեության ընթացքում կիրառվում է ԵՄ շուկայի ուղեցույցը: ԵՄ Առևտրի Պալատը Հայաստանում հիմնադրվել է 2002 թ., որպես Եվրոպական Առևտրային ընկերությունների միություն: Այն եկամուտ չհետապնդող կազմակերպություն է, աջակցություն է ստանում ԵՄ գրասենյակից և Հայաստանում ԵՄ անդամ պետությունների դեսպանություններից: Հայաստանում ԵՄ Առևտրի Պալատը ղեկավարում է Հոգաբարձուների խորհուրդը և կառավարում՝ Գործադիր տնօրենն իր աշխատակազմով:

Արտահանումը հիմնականում կատարվում է Չեխիայի օրինակով.

1. Մաքսային տուրքերի և հարկերի վճարումներ.

- տուրք, ներմուծման, ավելացված արժեքի, ակցիզային, սպառողական հարկեր,
- հարկային և մաքսային արտոնություններ:

2. Ներմուծման հետ կազմվող փաստաթղթեր.

- առևտրային ապրանքագիր, բեռնագիր,
- հայտարարագիր ապրանքների համար (պահանջվում է արտահանման արտոնագիր, եթե ապրանքի արժեքը գերազանցում է 2500 ԱՄՆ դոլարը):

3. Քվոտաներ, ներմուծման լիցենզիաներ, ստանդարտների և որակի վերահսկում, պիտակավորման և մակնիշավորման պահանջներ:

1997 թ. մարտից Հայաստանում գործում են «մաքսային պահեստներ», որտեղ հայկական և օտարերկրյա ընկերությունները կարող են պահեստավորել ապրանքները «կոնսիգնացիա ռեժիմով»[111]:

14.7 Աշխատուժի միգրացիան Հայաստանում

Նոր տնտեսական համակարգ ստեղծելու համար կարևոր նշանակություն ունի աշխատանքի շուկայի ձևավորումը: Ելնելով սեփականության ձևերի բազմազանությունից՝ անհրաժեշտ է ունենալ համապատասխան աշխատուժի վերարտադրության եղանակ, հասարակության մեջ սոցիալական ապահովվածության սկզբունքներ: Աշխատուժի շուկայի խնդիրն է ապահովել աշխատանքի և կապիտալի համատեղ գործընթացը, համամասնություն ստեղծել դրանց միջև: Աշխատուժի շուկայի միջոցով կատարվում է ազգային աշխատանքային ռեսուրսների բաշխում ըստ ձևերի, տնտեսական ճյուղերի, մասնագիտությունների և տարածաշրջանների: Աշխատանքի շուկայում ձևավորվում են աշխատուժի առաջարկը և պահանջարկը:

[111] Գրավոր ապացույց-փաստաթուղթ՝ ապրանքի վաճառքի կոմիսիոն ձև, համաձայն որի տերն ապրանքը հանձնում է կոմիսիոն՝ պահեստից վաճառելու համար:

Հայաստանի Հանրապետության աշխատանքի շուկայի ձևավորման վրա ազդել են բազմասեփականության ձևերի երևան գալը, արտադրության կառուցվածքային փոփոխությունները, շուկայական հարաբերությունների մեջ ներքաշվելը, անհրաժեշտ շահութաբերություն չապահովող արտադրական օղակների լրիվ կամ մասնակի լուծարումը, տնտեսական կապերի խզումը:

Հայաստանում աշխատուժի միգրացիայի մեծ տեղաշարժ արձանագրվել է անկախացումից հետո՝ կապված երկրում տնտեսական պայմանների վատթարացման, աշխատանքի բացակայության, ցածր վարձատրության, բարձր գների հետ:

ՀՀ աշխատանքի, ինչպես նաև նախկին սոցիալիստական երկրների շուկաները լուրջ փոփոխություններ կրեցին 1990 թ.-ից սկիզբ առած քաղաքական, տնտեսական և սոցիալական բարեփոխումների պատճառով: Անցումային բոլոր երկրներում զբաղվածության և գործազրկության դինամիկան ու կառուցվածքը զարգացած երկրների համեմատ ունեն առանձնահատուկ բնույթ: Անցումային փոփոխությունները հանգեցրին ձեռնարկությունների մասնավորեցման միջոցով տնտեսությունների, աշխատատեղերի կառուցվածքների, ճյուղային կազմի վերափոխումների: Այդ ընթացքում երկրները չկարողացան խուսափել պետական և մասնավոր սպառման, կապիտալ ներդրումների պահանջարկի արագ անկումից, ինչն իր հետ բերեց զանգվածային գործազրկություն: Աշխատանքի շուկան տնտեսական արդյունավետության վրա ազդեցություն ունեցող գլխավոր գործոններից մեկն է, հետևաբար Հայաստանում քիչ աշխատատեղերի պայմաններում աշխատունակ բնակչության մեծ մասը դուրս է մնում աշխատանքի շուկայից:

Գյուղատնտեսության ազատականացման քաղաքականությունը, անբավարար ներդրումների և արտադրական ենթակառուցվածքների անմխիթար վիճակը հանգեցրեցին ավելցուկային զբաղվածության, ցածր արտադրողականության, երկրի տնտեսությունից գյուղերի և գյուղական բնակչության մեկուսացման: Լուրջ խնդիր է նաև գյուղատնտեսական աշխատանքների սեզոնային զբաղվածությունը:

Սեփականության ձևերի փոփոխությունը փոխեց նաև աշխատուժի զբաղվածության կառուցվածքը: Եթե մինչև 1991 թ. Հայաստանում աշխատուժի հիմնական մասը (87 տոկոս) զբաղված էր պետական սեկտորում, և գրեթե բացակայում էր մասնավորը, ապա հետագա տարիներին իրավիճակը փոփոխվեց:

Հայաստանի աշխատուժի վրա բացասաբար ազդեց նաև ձեռնարկությունների չափերի փոքրացումը: 1996 թ. դրանց 37 տոկոսն ուներ 10, 20 տոկոսը՝ 11-50, 17 տոկոսը՝ 51-200, իսկ 25 տոկոսը, որը համարվում է խոշոր՝ 200-ից ավելի աշխատող: Զբաղվածների 72.3 տոկոսն ընդգրկված էր մասնավոր, 26.9-ը՝ պետական հատվածում և կառավարման համակարգում:

Աղյուսակ 14.13

Աշխատուժի տեղաբաշխումն ըստ սեկտորների (տոկոս)

	1998 թ.	2004 թ.	2005 թ.	2006 թ.
Պետական ձեռնարկություններ	42.0	0.7	0.7	0.6
Մասնավոր բիզնես	27.1	52.1	53.4	53.7
ՓԲԸ	21.5	6.4	5.9	5.8
ԲԲԸ	5.7	2.2	2.1	1.9
Այլ	2.7	38.6	37.9	38.0

2000 թ. սպասարկման ոլորտում ընդգրկված էր ՀՀ աշխատուժի 37.9, արդյունաբերության ոլորտում՝ 14.1 տոկոսը: Աշխատուժն ավելացավ նաև առևտրի, սննդի և ծառայությունների ոլորտում: Կառավարման համակարգում 1990 թ. ընդգրկված էր զբաղվածների 1.7, 1998 թ.՝ 2.15, 2008 թ.՝ 3.1, իսկ 2011 թ.՝ մոտ 5.0 տոկոսը: 2005 թ. գյուղատնտեսության ոլորտում զբաղվածների թիվը կազմում էր աշխատուժի 45.3, սպասարկման ոլորտում՝ 38.5, արդյունաբերության ոլորտում՝ 12.0 տոկոս:

2001 թ. պետական ռեգիստրում գրանցված էր 42703, 2005 թ.՝ 51480 մարդ: 2012 թ. հունվարի 1-ի դրությամբ անհատ ձեռնարկատերերի թիվը կազմում էր 7719, սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններինը՝ 2036 միավոր[112]:

Տնտեսության կառուցվածքային փոփոխությունների հետևանքով արդյունաբերության, գիտության, շինարարության ոլորտի շատ մասնագետներ ստիպված ընդգրկվեցին այլ ոլորտներում կամ մեկնեցին հանրապետությունից: Աշխատուժի զբաղվածության կառուցվածքը փոխվեց, ինչին նպաստեցին հաշվողական տեխնիկայի կիրառումը, ադամանդի, ոսկերչական իրերի արտադրության աճը, մանր ու միջին մասնավոր ձեռնարկությունների կողմից աշխատուժի ներգրավումը:

Պաշտոնական տվյալներով 1990-1995 թթ. զբաղվածների թիվը նվազել է 153.7 հազար մարդով: 1996 թ. այդ թիվը կազմել է 159.3, 2004 թ.՝ 108.6, 2006 թ. հունվարի 1-ի դրությամբ՝ 89.0 հազար մարդ: 1992 թ. Հայաստանում գործազուրկի կարգավիճակ ուներ 56.3, 1995 թ.՝ 131.7, 1997 թ.՝ 174.0, 2006 թ. հունվարի 1-ի դրությամբ՝ 98.0 հազար մարդ:

Հայաստանի աշխատանքի շուկայի լարվածության պատճառներից է այն, որ նվազել է հետաքրքրությունը որակյալ մասնագետների և մասնագիտությունների նկատմամբ: Աշխատանքի շուկայի վիճակը կապված է նաև նոր սահմանափակումների առաջացման, որակյալ

[112] ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2011 թ. հունվար-դեկտեմբերին, Երևան, 2012, էջ 99:

աշխատուժ պահանջող աշխատանքի ոլորտը նեղանալու և որակավորում չպահանջող աշխատանքի ոլորտն ընդլայնվելու հետ:

ՀՀ-ը Միգրացիայի միջազգային կազմակերպությանը (ՄՄԿ) անդամագրվել է 1993 թ. նոյեմբերի 30-ին կազմակերպության թ. 601 որոշմամբ: Հայաստանը ստորագրել է ՄԱԿ-ի՝ միգրացիային վերաբերող մի շարք միջազգային կարևոր փաստաթղթեր:

Բնակչության արտագաղթն ուսումնասիրելու նպատակով Հայաստանի և ԵՄ վիճակագրական ծառայությունների (Եվրոստատ) կողմից իրականացվող «Միգրացիայի հետազոտության» շրջանակներում 1998 թ. մայիսից մինչև 1999 թ. հունիսը երկու փուլով անցկացվել է Հայաստանի արտաքին միգրացիայի ընտրանքային հետազոտություն, որը ցույց է տվել Հայաստանում միգրացիայի հաշվառման անկատար լինելը: Եթե օդային ուղևորափոխադրումները վերահսկելի են ըստ վաճառված տոմսերի քանակի, ապա ավտոմոբիլային ուղևորափոխադրումների մասին տվյալներ չկան: Վերջին տարիներին զգալի թիվ են կազմել ավտոբուսային երթուղիներով հիմնականում զբոսաշրջության մեկնող չվերադարձողները: Ըստ Հայաստանի քաղաքացիական ավիացիայի Գլխավոր վարչության կողմից իրականացվող «Մեկնողների և ժամանողների հաշվառման» տվյալների՝ 1992-2000 թթ. օդային տրանսպորտով հանրապետությունից մեկնողների թիվը ժամանողների թվին գերազանցել է 618.4 հազար մարդով: 2006 թ. հունվարի 1-ի դրությամբ Հայաստանի մշտական բնակչության թիվը 2005 թ. նույն ժամանակի համեմատ աճել է 3.6, իսկ 2004 թ. համեմատ՝ 7.2 հազար մարդով: Միգրացիոն գործակալության տվյալներով՝ 2005 թ. ժամանել է 845.8, մեկնել՝ 833.3 հազար մարդ: Տարբերությունը կազմել է +12.5 հազար մարդ՝ նախորդ տարվա +2.1 հազարի փոխարեն:

Արտագաղթը սոցիալական երևույթ է, որը ծագում է տնտեսական վիճակի անկայունությունից և որին նպաստում են ընդունող երկրների համեմատաբար լավ պայմանները: Հայաստանում տնտեսական աճը չի կրճատում գործազրկությունը և չի վերացնում աղքատությունը: Անհրաժեշտ է պետական ուղղակի միջամտություն: Սկսած 1980 թ.-ից՝ ավելացել է արտագաղթող բնակչության թիվը, խախտվել՝ միգրացիոն հոսքերի միջև հավասարակշռվածությունը: Բացառություն են 1989-1991 թթ. տեղի ունեցած հայտնի իրադարձությունների հետևանքով Հայաստան ներգաղթած փախստականների հոսքերը:

Պաշտոնական տվյալները ցույց են տալիս, որ, 1991 թ. սկսած, Հայաստանից արտագաղթել է 800 հազարից մինչև 1 մլն մարդ: Միգրանտների 92.9 տոկոսը մեկնել է Ռուսաստան, 1.8-ը՝ ԱՄՆ, 1.6-ը՝ Ուկրաինա, 1.1-ը՝ Իսպանիա, 0.9-ը՝ Ղազախստան, 0.7-ը՝ Ֆրանսիա, 0.4-ը՝ Հունաստան, 0.6-ը՝ այլ երկրներ[113]:

[113] ՀՀ միգրացիայի կառավարման ոլորտի ուսումնասիրություն, Երևան, 2008, մարտ, էջ 28:

Հայաստանի տնտեսական շահերը պահանջում են, որ պետությունը կարգավորի աշխատուժի միգրացիան: Ելնելով երկրի ընթացիկ և հեռանկարային շահերից՝ պետությունը պետք է միջամտի, սատարի աշխատանքային պայմանագրով երկրից ժամանակավոր արտագաղթող բնակչությանը, պետք է հավաքագրի ցանկացողներին և ուղարկի աշխատուժ պահանջող երկրներ՝ հետևելով ընդունող երկրում նրանց անվտանգությանը, կրթությանը, վարձատրությանը, քաղաքացիական իրավունքների, սոցիալական շահերի պաշտպանությանը, հայրենիք վերադառնալու խնդիրների կատարմանը: Հետևաբար, աշխատանքի շուկան կարգավորելու համար Հայաստանը պետք է վարի ինտեգրացիոն քաղաքականություն, կարողանա միջազգային ասպարեզում աշխատուժի որակական մակարդակը մոտեցնել միջազգային չափանիշներին: Պաշտպանելով հայրենական արտադրողների շահերը՝ պետությունը պետք է նպաստի երկրի տնտեսական տարբեր ճյուղերի զարգացմանը, տնտեսական ինտեգրացիայի ծավալմանը:

ՀՀ աշխատանքի շուկայի վերլուծությունը ցույց է տալիս, որ ակտիվ բնակչության միջին թիվը 2008 թ. կազմել է 1194.6 հազար մարդ, որից զբաղված եղել է 1119.7 հազարը: Պաշտոնապես գրանցված գործազուրկների թիվը կազմել է 74.9 հազար մարդ կամ 6.4 տոկոս: 2009 թ. ակտիվ բնակչության միջին թիվը կազմել է 1149.7 հազար մարդ, որից զբաղված է եղել 1074.5 հազարը: Գործազուրկների թիվը կազմել է 75.2 հազար մարդ կամ 6.5 տոկոս՝ պայմանավորված համաշխարհային տնտեսական ճգնաժամի երկրորդ փուլով: Գործազրկության մակարդակը 2010 թ. վերջին եղել է 6.7, 2011 թ. վերջին՝ 5.9 տոկոս, որից գործազուրկ կանայք կազմել են 9.3, տղամարդիկ՝ 4.1 տոկոս: 2010 թ. վերջին զբաղված եղել է ՀՀ բնակչության 33.9, 2011 թ.՝ 34.3 տոկոսը, այդ թվում՝ կանայք կազմել են համապատասխանաբար 32.5 և 3.6, տղամարդիկ՝ 35.4 և 36.1 տոկոս[114]: Այսպիսով, գործազրկության ամենաբարձր տոկոսը եղել է 2000 թ.՝ 11.7, իսկ ամենացածրը՝ 2011 թ.՝ 5.9 տոկոս:

Աղյուսակ 14.14

Հայաստանի մշտական բնակչության թվի փոփոխությունը
(հազար մարդ)

	2009 թ.	2010 թ.	2011 թ.
Ընդամենը	**3238.0**	**3249.5**	**3262.2**
Տղամարդ	1568.3	1575.8	1583.7
Կին	1669.7	1673.7	1678.5

[114] ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, 2008, 2009, էջ 22 և 2012, էջ 129:

Աղյուսակ 14.15

Հայաստան ժամանողների և Հայաստանից մեկնողների թիվը
(հազար ուղևոր)

	Ժամանում	Մեկնում	Տարբերություն
2008 թ.	1397.1	1420.2	-23.1
2009 թ.	1432.0	1457.0	-25.0
2010 թ.	1754.2	1800.9	-46.7
2011 թ.	1945.1	1988.9	-43.8

Ինչպես ժամանողների, այնպես էլ մեկնողների մեջ տղամարդիկ կազմել են 65, կանայք՝ 35 տոկոս:

Աղյուսակ 14.16

Հայաստանի ակտիվ բնակչության թիվը և տեղաբաշխումը
(հազար մարդ)[115]

	2006 թ.	2010 թ.	Շեղումը
Զբաղվածների թիվը	1092.4	1104.8	12.4
Պաշտոնապես գրանցված գործազուրկներ	84.6	78.8	-5.6
Արտագաղթողներ	8.0	3.3	-4.7
Ներգաղթողներ	1.3	0.9	-0.4

Աղյուսակ 14.17

Տնտեսապես ակտիվ բնակչության կազմը (հազար մարդ)

	Տնտեսապես ակտիվ բնակչություն (հազար մարդ)	այդ թվում՝		Գործազրկության մակարդակը, %
		Զբաղվածներ	Պաշտոնապես գործազուրկներ	
2008 թ.	1192.5	1117.6	74.9	6.3
2009 թ.	1170.8	1089.4	81.4	7.0
2010 թ.	1186.8	1103.5	83.3	7.0

Հայաստանի աշխատուժի արտահոսքը բացասական երևույթների հետ միասին ունի նաև ***դրական կողմեր:*** Այն նպաստում է գործազրկության կրճատմանը, երկրին բերում է դրամական եկամուտ մուտքերի ձևով: Մեկնողները կատարում են դրամական փոխանցումներ իրենց ընտանիքներին:

Երկրի բնակչությունն ստանում է մեծ ծավալի ***տրանսֆերտներ***, որոնց աղբյուր են արտասահմանում ժամանակավոր աշխատող միգրանտները, ինչպես նաև այլ երկրներում մշտական բնակություն

[115] Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2011, էջ 15, 76:

հաստատած հայերը: Տրանսֆերտների ծավալը 2003 թ. պաշտոնապես կազմել է 289 մլն ԱՄՆ դոլար, սակայն, ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության փորձագետների գնահատմամբ, տրանսֆերտների տարեկան ծավալը հասնում է մոտ 900 մլն ԱՄՆ դոլարի: Տրանսֆերտները կարևոր դեր են ունեցել տնտեսական զարգացման և տնային տնտեսությունների կենսամակարդակի վրա՝ մեղմելով անցումային շրջանի բացասական ազդեցությունները:

Համաձայն ՀՀ ԿԲ տվյալների՝ օտարերկրյա դրամական փոխանցումները կազմում են ՀՆԱ 20 տոկոսը: Հայաստան ուղարկվող դրամական փոխանցումների 70 տոկոսը ստացվում է Ռուսաստանից, այդ թվում՝ 55-85 տոկոսը՝ բանկերի միջոցով[116]: Դրամական փոխանցումների 90 տոկոսը կատարվում է դոլարով:

Հայաստան մտնող արտաքին դրամական փոխանցումները պարբերաբար աճում են: Ըստ ԿԲ տվյալների՝ 2011 թ. հունվար-ապրիլ ամիսներին ոչ առևտրային նպատակով Հայաստան փոխանցված տրանսֆերտների ծավալը 2010 թ. նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 24 տոկոսով և կազմել 357 մլն դոլար: Ռուսաստանին բաժին է ընկնում ընդհանուր փոխանցումների 78.7 տոկոսը, որը կազմում է 281 մլն դոլար: Հատկապես հուլիս և դեկտեմբեր ամիսներին տրանսֆերտների ծավալները գերազանցում են 120 մլն դոլարը:

14.8 Ծառայությունների գործընթացը Հայաստանում

Ծառայությունների գործընթացը ՀՀ-ում ապրանքների, կապիտալի, աշխատուժի համաշխարհային շուկայի հետ ՄՏՀ անբաժան մասն է, որն ուղղված է տնտեսության բոլոր ոլորտների պահանջների բավարարմանը: Շատ ծառայություններ համարվում են միջազգային օբյեկտներ և արտացոլվում են միջազգային հաշվեկշռում: Տվյալները ցույց են տալիս, որ վերջին երկու տասնամյակում ապրանքային արտահանման համեմատ ծառայությունների արտահանումն ավելի արագ է զարգացել: Դրան նպաստել են ազգային տնտեսության զարգացումը, բնակչության սպառման կառուցվածքի և պահանջարկի փոփոխությունները, տեղեկատվության նոր միջոցների ավելացումը:

ՀՀ-ում ծյուղային կառուցվածքում գերակշռել է ***տրանսպորտի ծառայությունը***, իսկ վերջին 10 տարիներին՝ ***զբոսաշրջությունը:*** Ծառայության այս ձևը կապված է բնակչության սոցիալ-տնտեսական զարգացման հետ: Զբոսաշրջությունը Հայաստանում աշխատանքով ապահովում է բավական թվով մարդկանց, իսկ երկիրը ստանում է զգալի եկամուտներ: Զարգանում են հյուրանոցային տնտեսությունը, կապի միջոցները, սննդի և սպառման մյուս օբյեկտների գործունեությունը, ավելանում են բժշկական սպասարկումը, աշխատատեղերը: ՀՀ

[116] ՀՀ Միգրացիայի կառավարման ոլորտի ուսումնասիրություն, Երևան, 2008, էջ 31:

կառավարությանն առընթեր միգրացիայի և փախստականների վարչության տվյալներով՝ 2000 թ. Հայաստան են եկել 45, 2005 թ.՝ 318.5 հազար զբոսաշրջիկներ, որոնց մի մասը սփյուռքահայեր են, որոնք եկել են հայրենիքը տեսնելու և միջոցառումներին մասնակցելու: 2005 թ. հանրապետությունից մեկնել է 268.6 հազար զբոսաշրջիկ: 2005 թ. զբոսաշրջիկների 48.3 տոկոսը ժամանել է Ռուսաստանից, 27.5-ը՝ ԱՊՀ այլ երկրներից, 3.8-ը՝ ԱՄՆ-ից, 12.4-ը՝ եվրոպական երկրներից, 8.0-ը՝ այլ երկրներից[117]: 2009 թ. ՀՀ ժամանել է 575.3, 2010 թ.՝ 684.0, 2011 թ.՝ 758 հազար զբոսաշրջիկ:

2010 թ. 2009-ի համեմատ աճի տեմպը կազմել է 18.9, իսկ 2011 թ. 2010-ի համեմատ՝ 10.3 տոկոս: Զբոսաշրջության նպատակով 2011 թ. հանրապետությունից մեկնել է մոտ 715 հազար մարդ: Այս ցուցանիշը 2010 թ.-ի համեմատ աճել է 10.2, իսկ 2010 թ.-ի ցուցանիշը 2009-ի համեմատ՝ 21.6 տոկոսով[118]:

ՀՀ զբոսաշրջության միջին աճը 2003-2010 թթ. կազմում է տարեկան 20 տոկոս: Հայաստան այցելող զբոսաշրջիկների 44.8 տոկոսը հարազատներին այցելության եկածներն են: Գործնական և համաժողովներին մասնակցելու նպատակով այցելողների թիվը 22.4 է, հանգստի և ժամանցի նպատակով այցելողներինը՝ 13.1, կրթության, վերապատրաստման և այլ նպատակով եկածներինը՝ 5.4: Հանգստի և զբոսաշրջության նպատակով 11-12 օր տևողությամբ տարեկան միջին հաշվով Հայաստան է այցելում 40-60 հազար մարդ, ինչը կազմում է 14.3 տոկոս[119]:

Ըստ ՄԱԿ-ի Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության (ԶՀԿ) մեթոդաբանության՝ ***զբոսաշրջիկ*** համարվում է ցանկացած անձ, որը հանգստանալու, բուժվելու, հարազատներին այցելելու, գործնական կամ այլ նպատակներով ճանապարհորդում է իր հիմնական բնակության վայրից մեկ այլ վայր ոչ պակաս, քան 24 ժամով և ոչ ավել, քան մեկ տարի անընդմեջ ժամկետով, այսինքն՝ զբոսաշրջիկի հիմնական նպատակը ճանապարհորդելն է և ոչ թե աշխատանքային գործունեությամբ զբաղվելը:

Ծառայությունների կառուցվածքը 2010 թ.

1. Տեղեկատվության և կապի - 24.3 տոկոս
2. Տրանսպորտի - 21.6 տոկոս
3. Ֆինանսական և ապահովագրական - 20.8 տոկոս
4. Մասնագիտական, գիտատեխնիկական - 6.7 տոկոս
5. Վարչական և օժանդակ - 5.2 տոկոս

[117] Տվյալները վերաբերում են միայն հյուրանոցներում, առողջարաններում, հանգստյան տներում տեղավորված զբոսաշրջիկներին:
[118] ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2011 թ., 2012, էջ 125:
[119] Հայաստան, Ֆինանսներ, էկոնոմիկա, ամսագիր, 2012 թ., N1, էջ 9:

6. Կրթության - 5.2 տոկոս
7. Կացության և հանրային սննդի - 5.0 տոկոս
8. Մշակույթ, զվարճություն, հանգիստ - 3.4 տոկոս
9. Անշարժ գույքի հետ կապված - 3.2 տոկոս
10. Առողջապահություն և բնակչության սպասարկում - 2.8 տոկոս
11. Սպասարկման այլ ծառայություններ - 1.8 տոկոս [120]:

14.9 Տրանսպորտային ծառայությունները Հայաստանում

Հայաստանում տրանսպորտն իրականացնում է բեռների և ուղևորների փոխադրում հանրապետությունից դուրս և հանրապետության ներսում: Այն համարվում է միջպետական հարաբերությունների կապող օղակ: Տրանսպորտային ծառայությունն ինքնուրույն ոլորտ է, որը մի կողմից ապահովում է մարդկանց և ապրանքների տեղաշարժը, մյուս կողմից հանդես է գալիս որպես արտահանման և ներմուծման կարևոր պայման:

Աղյուսակ 14.18

Բեռնափոխադրումների ծավալն ըստ ընդհանուր օգտագործման տրանսպորտի տեսակների [121]

	2010 թ.	2010 թ. 2009 թ. նկատմամբ, %	2011 թ.	2011 թ. 2010 թ. նկատմամբ, %
Տրանսպորտը, ընդամենը հազար տոննա	10577.5	107.9	9715.7	92.0
այդ թվում՝				
Երկաթուղային, որից	3063.3	104.1	3269.4	106.7
արտահանվել են	340.8	98.6	449.8	132.8
ներկրվել են	1425.9	107.3	1351.1	94.8
ներհանրապետական	1296.6	102.2	1468.5	113.3
Ավտոմոբիլային, որից	6196.0	109.9	4944.2	79.8
արտահանվել են	210.3	126.9	242.5	115.3
ներկրվել են	779.3	117.3	819.4	105.1
ներհանրապետական	5206.4	108.3	3882.3	74.6
Օդային, որից	8.8	104.8	10.0	113.6
արտահանվել են	3.3	103.1	4.7	142.4
ներկրվել են	5.5	105.8	5.3	96.0
Մայրուղային, խողովակաշարային, որից	1309.4	107.4	1492.0	115.8
ներկրվել են	1309.4	107.4	1492.0	115.8

[120] ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2010 թ., Երևան, 2011, էջ 54, 129:
[121] ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2010 թ., Երևան, 2011, էջ 7, 32 և 2012, էջ 31:

Հայաստանի արտաքին առևտրի զարգացման վրա կարևոր ազդեցություն ունի տրանսպորտի ներկա վիճակը, որը նաև ուղղակի և անուղղակի ձևով ազդում է ապրանքների գների ձևավորման վրա: 1990-ական թթ. հետո Հայաստանում դադարել են գործելուց ավտոմոբիլային, երկաթուղային հարաբերություններն արտաքին աշխարհի հետ, իսկ վրաց-աբխազական հարաբերությունները փակել են Ռուսաստան-Հայաստան երկաթուղային կապը, հետևաբար Հայաստանի արտաքին տնտեսական հարաբերությունները պայմանավորված են տրանսպորտի միջոցների անբավարար աշխատանքով:

Աղյուսակ 14.19

Արտահանված, ներկրված և ներհանրապետական բեռնափոխադրումների տեսակարար կշիռներն ըստ տրանսպորտի տեսակների, % [122]

	2006 թ.	2009 թ.	2010 թ.
Երկաթուղային	100	100	100
այդ թվում՝			
արտահանվել են	18.8	11.7	11.1
ներկրվել են	46.9	45.2	46.6
ներհանրապետական	34.3	43.1	42.3
Ավտոմոբիլային	100	100	100
այդ թվում՝			
արտահանվել են	4.3	2.9	3.4
ներկրվել են	10.4	11.8	12.6
ներհանրապետական	85.3	85.3	84.0
Օդային	100	100	100
այդ թվում՝			
արտահանվել են	44.1	38.1	37.5
ներկրվել են	55.9	61.9	62.5
Խողովակաշարային	100	100	100
ներկրվել են	100	100	100

Հաղորդակցության ուղիների խտությունը հանրապետությունում այսպիսի պատկեր ունի. 1000 կմ տարածքին 2006 թ. բաժին էր ընկնում 30 կմ երկաթուղի և 275.3 կմ ավտոմոբիլային ճանապարհ, 2010 թ.՝ 29.3 կմ երկաթուղի և 308.6 կմ ավտոմոբիլային ճանապարհ [123]:

[122] Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2011, էջ 336:
[123] Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2011, էջ 341:

Աղյուսակ 14.20
Բեռնափոխադրումների և ուղևորափոխադրումների ընդհանուր ծավալում տրանսպորտի առանձին տեսակների տեսակարար կշիռը, %[124]

	2006 թ.		2010 թ.	
	Բեռնափոխ.	Ուղևորափոխ.	Բեռնափոխ.	Ուղևորափոխ.
Տրանսպորտ	100	100	100	100
այդ թվում՝				
Երկաթուղային	28.1	0.2	29.0	0.3
Ավտոմոբիլային	59.2	87.0	58.5	81.8
Օդային	0.1	0.5	0.1	0.7
Թեթև մարդատար	-	4.2	-	7.2
Էլեկտրոնային	-	8.1	-	10.0
Խողովակաշարային	12.6	-	12.4	-

14.10 Հայաստանի միջազգային տնտեսական հարաբերությունների հետագա զարգացումը

Հայաստանի ՄՏՀ-ը մտնում է զարգացման նոր փուլ: Ավելանում են ոչ միայն տնտեսական կապերի ծավալները, այլև տեղի են ունենում որակական փոփոխություններ: Տնտեսական զարգացմանը խոչընդոտում է երկրի նեղ շուկան, որի առկայության դեպքում ձեռնարկությունները չեն կարողանում նորացնել, վերազինել արտադրությունը, հետևաբար նպատակաուղղվում են դեպի արտաքին շուկաներ:

Կենտրոնացված կառավարման համակարգի վերափոխումն առաջ է բերում նոր դժվարություններ՝ կապված կառավարման օղակների ձևավորման, վերահսկողության և այլ հարցերի հետ: Անցումային տնտեսության երկրներին բնորոշ է օրենսդրական դաշտի անկայուն վիճակը: Այստեղ ֆինանսական շուկայի մակարդակը ցածր է, ինչը միջազգային ասպարեզում հանգեցնում է պետության վարկանիշի անկման: Թեև երկրների միջև գործում է ազատ առևտրի ռեժիմ, սակայն, ի տարբերություն ԱՊՀ որոշ երկրների, Հայաստանում մեծ է ներդրողների անհանգստությունը՝ կապված տնտեսության անկայուն վիճակի հետ:

Հայաստանն արտաքին տնտեսական նոր հարաբերություններ ձևավորելու նպատակով գործունեություն է ծավալում ոչ միայն ԱՊՀ շրջանակներում: 1996 թ. ապրիլին ԵՄ-ի հետ Հայաստանը կնքել է գործընկերության և համագործակցության համաձայնագիր, որն ուժի մեջ է մտել 1999 թ.:

[124] Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2011, էջ 335:

ՀՀ տնտեսական զարգացման հիմնախնդիրների համալիր լուծման համար հարկավոր է հաշվի առնել ՀՏ ազդեցությունը և կողմնորոշումը: Միայն այս դեպքում տնտեսական հարաբերություններն օգուտ կբերեն:

Գոյություն ունեցող ինտեգրացման բազմաթիվ մոդելներից ամենահաջողվածը եվրոպականն է: Հայաստանում ներդրումների, տնտեսական աճի կայուն և բարձր տեմպեր ապահովելու, բնակչության կենսամակարդակը բարձրացնելու համար անհրաժեշտ է ավելի շատ համագործակցել ԵՄ-ի հետ, ինչը հնարավորություն կընձեռի.

- ապահովագրվելու առկա արտաքին տնտեսական և քաղաքական ցնցումներից,
- ապահովելու սոցիալ-տնտեսական խնդիրների լուծումը,
- նպաստավոր պայմաններ ստեղծելու օտարերկրյա ներդրումների ավելի մեծ ներհոսք ապահովելու և արտահանումն ավելացնելու համար,
- մատչելի դարձնելու ԵՄ ֆոնդերը, ինչը կխթանի տնտեսության զարգացմանը,
- ապահովելու անդամ երկրների տնտեսական օպտիմալ կառուցվածքի ձևավորումն ու զարգացումը:

Տնտեսական զարգացման համար կարևոր պայման է ներդրումային ոլորտի գործունեությունը: 2005 թ. ՀՀ Ֆինանսների նախարարության և Հայաստանում ՀԲ լիազոր ներկայացուցիչները ստորագրել են ***Հոլանդական դրամաշնորհային համաձայնագիրը***, ըստ որի Հոլանդիան տրամադրել է 390 հազար ԱՄՆ դոլար «Վիճակագրական կարողությունների զարգացման» նպատակով: Ընդունվել է ***«Գործողությունների ծրագիր»***, ըստ որի Հայաստանն իրավասու է մասնակցելու «Հազարամյակի մարտահրավերներ» հիմնադրամի ծրագրին: Հայաստանի և ԳԴՀ կառավարությունների միջև կնքվել են ***«Բնապահպանական ծրագիր Հարավային Կովկաս-Հայաստան»*** և ***«Վերականգնվող էներգիայի աջակցության ծրագիր»*** համաձայնագրերը: Հայաստանի և ՀԲ հայաստանյան գրասենյակի միջև ստորագրվել է ***Երևանի ջրամատակարարման և ջրահեռացման ծրագրի 20 մլն դոլարի վարկային համաձայնագիրը***, իսկ Նիդեռլանդների թագավորության Ֆինանսների նախարարի կողմից՝ Նիդեռլանդների թագավորության և ՀՀ կառավարության միջև ***համագործակցության ծրագրի վերաբերյալ փոխըմբռնման հուշագիրը***, որի նպատակը երկու գործարար հատվածների միջև տնտեսական փոխշահավետ համագործակցության ստեղծումն է: 2005 թ. փետրվարի 24-ին Երևանում ստորագրվել է ***Հայաստանի և ՄԱԿ-ի համագործակցության ծրագիրը***:

Օտարերկրյա ներդրումներն ունեն ***դրական*** և ***բացասական*** կողմեր: ***Դրական է,*** երբ ներդրումները և սպառումն աճում են, բնակչությունն օգտվում է դրանից, տնային տնտեսությունները հնարավորութ-

յուն են ունենում իրենց եկամուտները փոխանակելու ներմուծվող ապրանքների ու ծառայությունների հետ: ***Բացասական է,*** երբ վերանում է երկրի արտաքին տնտեսական մրցակցությունը, ավելանում՝ արտաքին առևտրի հաշվեկշռի դեֆիցիտը, սահմանափակվում՝ տնտեսական աճը: Նման երևույթները կարգավորելու համար նպատակահարմար է խուսափել կայուն փոխարժեքի քաղաքականությունից և իրականացնել ցածր տոկոսադրույքների քաղաքականություն, որի արդյունքում կածի սեփական արժույթի պահանջարկը:

Յուրաքանչյուր երկիր մասնագիտանում է այն ապրանքների արտադրության և արտահանման գծով, որոնց փոխարկման ծախսերը ցածր են: Հայաստանում մասնագիտացած արտադրական բնագավառներ կարող են դառնալ բարձր տեխնոլոգիաների, պղնձի, ոսկերչական, շինարարական սալիկների, հանքային ջրերի և այլ արտադրություններ: Պղնձի հանքանյութում պղնձի պարունակությունը 34, երկաթինը՝ 30, ծծմբինը՝ 40, մոլիբդենինը՝ 60 տոկոս է: Արտադրանքի միայն 32 տոկոսն է վերամշակվում Հայաստանում, 68 տոկոսն արտահանվում է: Հայաստանի համար շահավետ է պատրաստի արտադրանք արտահանելու միջոցով համաշխարհային շուկայում բարձր դիրք ունենալը: Զանգեզուրի, Սևանի ավազանի, Ապարանի, Արագածի, Աշոցքի, Տաշիրի տարածաշրջաններում բոլոր պայմանները ստեղծված են անասնապահության ոլորտում առավելության հասնելու համար: Ջեռնտու է նաև բանջարաբոստանային մշակաբույսերի վերամշակումից ստացվող ապրանքատեսակների, գինու, կոնյակի արտադրությունը: Գյուղատնտեսությունը տնտեսական առաջընթացի կարևոր ճյուղ է, որը կարիք ունի պետության հոգացության:

Այսօր Հայաստանում գործում է մսի վերամշակման խոշոր, միջին և մանր 30 ձեռնարկություն, որոնք աշխատում են ներկրվող հումքով: Զգալի զարգացած են նաև ոչ արդյունաբերական եղանակով՝ տնային պայմաններում բաստուրմայի, խոզապուխտի, սուջուխի, սալի արտադրությունը, պանրագործությունը, ձկնարդյունաբերությունը: Հանրապետության մսամթերքը, երշիկեղենը ներմուծվում են հիմնականում ԱՄՆ-ից, ՌԴ-ից, Կանադայից, Բրազիլիայից և այլ երկրներից: Տեղական արտադրության զարգացումը կնվազեցնի սննդամթերքի առանձին տեսակների ներմուծումը:

Զարգացած երկրների փորձը հաստատում է արտաքին առևտրի ոլորտում պետության ակտիվ միջամտության, արտահանման գործունեության խթանման լավագույն ձևերի կիրառումը: Մշակված համակարգի միջոցով անհրաժեշտ է աջակցել ձեռնարկությունների զարգացմանը: Նախատեսվում է «Արտերկրում Հայաստանի Հանրապետության առևտրական ներկայացուցչության մասին» որոշման ընդունումը, որը թույլ կտա ընդլայնել Հայաստանի տնտեսական կապերն արտերկրի հետ:

Հայաստանի տնտեսական զարգացման համար կարևոր դեր ունի «Կորպորասիոն Ամերիկա ՍԱ» ընկերության (հավատարմագրային) հետ համատեղ ***Ազատ տնտեսական գոտու (ԱՏԳ)*** ստեղծումը, ինչն անհրաժեշտ է մեր գյուղմթերքներն արտահանելու համար: Ազատ գոտին թույլ կտա, որ տեղական գյուղմթերքները մրցունակ լինեն արտաքին շուկայում: Քանի որ Թուրքիայի, Ադրբեջանի սահմանները փակ են, Հայաստանից ապրանքներ արտահանվում են օդային ճանապարհով՝ «Զվարթնոց» օդանավակայանի միջոցով: Արևմտյան երկրների և Կովկասի համար միջազգային կենտրոնների և ՏՐԱՍԵԿԱ-ի (Եվրոպա-Կովկաս-Ասիա ճանապարհային միջանցք) ծրագիրը հովանավորվում է ԵՄ կողմից, և դրա մի օղակն էլ պետք է լինի Հայաստանի ԱՏԳ-ն:

ԱՏԳ տարածքում կգործեն նաև գյուղմթերքների տեսակավորման, փաթեթավորման, պահեստավորման, սառնարանային միջոցների, լաբորատոր ստուգման, սերտիֆիկացման և այլ ենթակառույցներ: Տարեկան կապահովվի մոտ 20 տոկոս արտահանման աճ: Գոտու ***նպատակն*** է արտաքին առևտրի գործունեության ընդլայնումը, օտարերկրյա և հայրենական կապիտալի ընդգրկումը, նոր աշխատատեղերի ստեղծումը և աշխատողների կենսամակարդակի աճը, օտարերկրյա տեխնիկայի և տեխնոլոգիաների ներհոսքը, արտադրական, տրանսպորտային ենթակառուցվածքների զարգացումը: Այս ծրագրով հանրապետության գյուղական շրջաններում կստեղծվեն գյուղմթերքների հավաքագրման կետեր:

Գյուղատնտեսության համախառն բերքը 2010 թ. կազմել է՝ հացահատիկը՝ 375.0, կարտոֆիլը՝ 593.5, բանջարեղենը՝ 819.8, բոստանային կուլտուրաները՝ 332.1, պտուղները և հատապտուղները՝ 327.1, խաղողը՝ 208.7 հազար տոննա: Անասնաբուծական մթերքների արտադրությունը կազմել է՝ անասունները, թռչունները՝ 126.2, կաթը՝ 653.0 հազար տոննա, ձուն՝ 630.1 մլն հատ[125]:

Հայաստանի գյուղատնտեսության հետագա զարգացումը պահանջում է բազմաբնույթ ծրագիր, պետության տնտեսական քաղաքականության մշակում: Ըստ հանրապետության գյուղնախարարի հայտարարության՝ հակակարկտային կայանների տեղադրումը 2012 թ. կհասնի 250-ի: Դրա գործարկումից հետո հնարավոր կլինի նվազեցնել բերքի կորուստը[126]:

Անհրաժեշտ է ստեղծել Արտաքին առևտրի աջակցության և արտահանման խթանման կոմիտե, որի հիմնական խնդիրը պետք է լինի ձեռնարկությունների և կազմակերպությունների գործունեության համակարգումը: Այն պետք է ընդգրկի ցուցահանդեսների, առևտրական գործարքների կազմակերպումը, տարբեր հետազոտական, տեղեկատ-

[125] ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2010 թ., Երևան, 2011, էջ 22, 23:
[126] Ագրոլրատու թ. 1, 2010:

վական, խորհրդատվական ծառայությունների տրամադրումը: Արտահանողներին օգնելու համար անհրաժեշտ է կիրառել սարքավորումների և նյութերի ներմուծման արտոնություններ, իսկ խթանման քաղաքականությունը պետք է հիմնվի հարկային, մաքսային, դրամական արտոնությունների կիրառման վրա:

Միջոցառումներ են ձեռնարկվում «Հայաստանի Հանրապետության մաքսային սակագների դրույքաչափերի մասին» Հայաստանի կառավարության որոշումն իրագործելու համար: Բանակցություններ են վարվում Հայաստանի և Եվրամիության միջև համաձայնագիր ստորագրելու մասին, որի արդյունքում կընդլայնվեն Հայաստանի կապերը միջազգային առևտրական կազմակերպությունների՝ Առևտրի և Գործարար կապերի կենտրոնների հետ:

2003 թ.-ից ՀՀ-ն ԱՀԿ անդամ է, ինչը հնարավորություն է տալիս.

- ավելացնելու ապրանքային արտահանումների և օտարերկրյա ուղղակի ներդրումների ծավալները, քանի որ անդամ երկրների հետ ԱՀԿ-ը հաստատում է առևտրի և ներդրումների «բարենպաստ ռեժիմ»,
- օգտվելու այդ կազմակերպության շրջանակներում սակագնային արգելքների սահմանափակման համաձայնագրերից՝ ապահովագրվելով նաև այլ երկրների կողմից միակողմանի արգելքներից,
- օգտվելու ԱՀԿ-ի կողմից նախատեսված ներքին արտադրողների շահերը պաշտպանելու համաձայնագրերից և այլ միջոցառումներից,
- զարգացնելու ԵՄ-ի հետ առևտրատնտեսական հարաբերությունները:

ԱՀԿ-ում ստեղծվել է ՀՀ մշտական ներկայացուցչություն, սկսվել՝ ԵՄ կողմից ՀՀ-ին շուկայական տնտեսության կարգավիճակ շնորհելու գործընթացը:

ՍՏՀ-ի պետական կայուն համակարգի ձևավորման հիմքում պետությունը պետք է հանդես գա որպես միջազգային տնտեսական պայմանագրերի, արժութային և վարկային համաձայնագրերի սուբյեկտ: Այդ շրջանակներում պետական քաղաքականություն իրականացնող հիմնական օղակները պետք է լինեն հանրապետության Նախարարների խորհրդի, էկոնոմիկայի և Ֆինանսների նախարարությունների համապատասխան օղակները, Արտաքին առևտրային բանկը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Бабин Э. П., Исаченко Т. М., Внешнеэкономическая политика, М., Экономика, 2006.
2. Буглай В. Б., Ливенцев Н. Х, Международные экономические отношения, М., Финансы и статистика, 2004.
3. Вавилова В. Е., Основы международного туризма, М., 2005.
4. Внешнеэкономическая деятельность, под ред. Ростовского Ю. М., М., 2009.
5. Гладкий Ю. Н., Сухоруков В. Д., Общая экономическая и социальная география зарубежных стран, М., 2006.
6. Глобализация экономики и внешнеэкономические связи России, под ред. Фоминского И. П., М., 2004.
7. Годовой доклад ЮНКТАД, 2005, Конференция ООН по торговле и развитию, Нью Йорк, Женева, ООН, 2006, 100 стр..
8. Государственные контракты: Серия документов ЮНКТАД по проблематике международных инвестиционных соглашений, Женева, ООН, 2004, 76 стр..
9. Дайнеко А. Е., Забавский Г. В. и др., Расширение Европейского союза: экономические и правовые аспекты, М., 2004.
10. Доклад конференции по вопросу о мировом финансого-экономическом кризисе и его последствия для развития, Нью Йорк, 24-30 июля, 2009, 60 стр..
11. Ивахнюк И. В., Международная трудовая миграция, М., 2005.
12. Клинов В. Г., Мировой рынок высокотехнологичной продукции. Тенденцы, развития и особенности формирования конъюктуры и цен, М., 2006.
13. Костюнина Г. М., Азиатско-Тихоокеанская интеграция, М., 2004.
14. Котелкин С. В., Международная финансовая система, М., 2004.
15. Ливенцев Н. Н., Костюнина Г. М., Международное движение капитала, М., Экономисть, 2004.
16. Люкянович Н. В., Морской транспорт в мировой эконо-мике, М., 2004.
17. Международные рекомендации по статистике розничной и оптовой торговли (МРСРОТ), М., 2008, 198 стр..
18. Международная экономика под ред. Волгина Н. В., М., 2010.
19. Международные валютные отношения и ковертируе-мость валют, под ред. Ситнина В. В., Гусева А. В., М., 2006.
20. Международные экономические отношения под ред. Архипова А. Ю. и Пузаковой Е. П., Ростов-на-Дону, 2009. 571 стр..

21. Международные экономические отношения под ред. Рыбалкина В. Е. и др., М., 2008, 591 стр..
22. Международные экономические отношения: уч., под ред. Ливенцева А. Н., М., 2005.
23. Международные экономические отношения: уч., под ред. Смитиенко Б. М., М., 2005.
24. Международные валютно-кредитные отношения: уч., под ред. Красавиной Л. Н., М., 2006.
25. Мировая экономика и международные экономические отношения, под ред. Булатова А. С. и Ливенцева Н. Н., М., 2010.
26. Мировая экономика: уч., под ред. Булатова А. С., М., 2010.
27. Мировая экономика: уч., под ред. Спиридонова И. А., М., 2010.
28. Мировая экономика и международные экономические отношения, под ред. Хасбулатова Р. И., ч. II, М., 2006.
29. ООН. Управление верховного комиссара по правам человека, Женева, 2006, 242 стр..
30. Покровская В. В., Внешнеэкономическая деятельность, уч., М., Экономика, 2006.
31. Ростовский Ю. М., Гречков В. Ю., Внешнеэкономическая деятельность, уч., Магистр, М., 2009, 591 стр..
32. Страны и регионы мира. Экономико-политический справочник, М., 2007.
33. Статитические документы, Серия, М., N 89, Нью Йорк, 2010.
34. Свинухов В. Г., Таможенно-тарифное регулирование внешнеэкономической деятельности, М., Экономисть, 2004.
35. Фомичев Б. М., Международная торговля, М., ИНФРА, 2005.
36. Шемятенко В. Г., Европейская интеграция, уч., М., 2004.
37. Экономика, уч., под ред. Булатова А. С., М., 2005.
38. ՄԱԿ-ի մասին. Հիմնական փաստեր, տեղեկագիր, Երևան, 2002:
39. ՀՀ միգրացիայի կառավարման ոլորտի ուսումնասիրություն, Երևան, 2008, 118 էջ:
40. Միգրանտների տեղեկատվական ուղեցույց Հայաստան-Գերմանիա, Հայաստան-Թուրքիա, 2009, 44 և 36 էջ:
41. Եվրամիության շուկայի ուղեցույց, Երևան, 2005, 100 էջ:
42. ՀՀ ԱՎԾ, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը, Երևան, 2000-2012 թթ. վիճակագրական տարեկան տեղեկություններ:
43. Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Երևան, 2000-2012 թթ.:
44. Հովակիմյան Ա. Մ., Միջազգային տնտեսական հարաբերություններ, Երևան, 2007:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ.....3
ԲԱԺԻՆ I ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԷԿՈՆՈՄԻԿԱ
ԳԼՈՒԽ 1 ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ, ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ
1.1 Դասընթացի ուսումնասիրման առարկան և խնդիրները.....6
1.2 Համաշխարհային տնտեսության ձևավորումը և փուլերը.....8
1.3 Համաշխարհային տնտեսության ներուժը.....10
1.4 Համաշխարհային տնտեսության մեխանիզմները և բաղադրիչ մասերը.....11
ԳԼՈՒԽ 2 ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ
2.1 Համաշխարհային տնտեսության կառուցվածքը.....13
2.2 Միացյալ Ազգերի Կազմակերպություն.....16
2.3 Եվրոպական միությունը համաշխարհային տնտեսական համակարգում.....25
2.4 Եվրոպայի երկրների տնտեսությունները.....30
2.5 Անկախ պետությունների համագործակցություն.....32
ԳԼՈՒԽ 3 ԱՇԽԱՐՀԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ
3.1 Աշխարհի առաջատար զարգացած երկրները.....36
3.2 ԱՄՆ-ը համաշխարհային տնտեսությունում.....37
3.3 Ճապոնիան համաշխարհային տնտեսությունում.....38
3.4 Գերմանիայի Դաշնությունը համաշխարհային տնտեսությունում.....41
3.5 Ֆրանսիան համաշխարհային տնտեսությունում.....43
3.6 Մեծ Բրիտանիան համաշխարհային տնտեսությունում.....45
3.7 Իտալիան համաշխարհային տնտեսությունում.....46
3.8 Կանադան համաշխարհային տնտեսությունում.....47
3.9 Ռուսաստանի Դաշնությունը համաշխարհային տնտեսությունում.....49
3.10 Չինաստանը համաշխարհային տնտեսությունում.....51
3.11 Զարգացող երկրները համաշխարհային տնտեսությունում.....54
ԳԼՈՒԽ 4 ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԻՆՏԵԳՐԱՑԻԱ
4.1 Տնտեսական ինտեգրացման նախադրյալները, էությունը և զարգացման ուղղությունները.....57
4.2 Տնտեսական ինտեգրացիայի փուլերը.....63
4.3 Աշխարհի ինտեգրացիոն գլխավոր միավորումները.....66
4.4 Անդրազգային կազմակերպությունները ՍՏՀ-ում.....71
4.5 Միջազգային համատեղ ձեռնարկությունները որպես Անդրազգային կազմակերպությունների (ԱԱԿ) բաղկացուցիչ մաս.....73
ԳԼՈՒԽ 5 ԳԼՈԲԱԼԱՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԳԼԽԱՎՈՐ ՄԻՏՈՒՄ
5.1 Գլոբալացման գործընթացի էությունը, հիմնախնդիրները և տնտեսական տեսակետները.....80

5.2 Էկոնոմիկայի գլոբալացում.....
ԲԱԺԻՆ II ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԳԼՈՒԽ 1 ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ
1.1 Միջազգային տնտեսական հարաբերությունների ուսումնասիրման առարկան, էությունը, փուլերը.....
1.2 Միջազգային տնտեսական հարաբերությունների կառավարման մեթոդները, խնդիրները, գործառույթները, միտումները.
1.3 Միջազգային տնտեսական հարաբերությունների զարգացման հիմնական գծերը և գործոնները.....
1.4 Միջազգային տնտեսական հարաբերությունների դերը երկրների սոցիալ-տնտեսական զարգացման գործում.....
1.5 Միջազգային տնտեսական հարաբերությունների տեսությունները.....101
ԳԼՈՒԽ 2 ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱԺԱՆՈՒՄ
2.1 Աշխատանքի միջազգային բաժանման էությունը, տեղը և դերը համաշխարհային տնտեսությունում.....105
2.2 Աշխատանքի միջազգային բաժանման սկզբունքները, գործոնները, ցուցանիշները և փուլերը.....109
2.3 Աշխատանքի միջազգային բաժանման առանձնահատկությունները ներկա փուլում.....112
2.4 Արտադրության միջազգային մասնագիտացում և կոոպերացում.....114
ԳԼՈՒԽ 3 ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ
3.1 Համաշխարհային առևտուրը ՄՏՀ համակարգում.....120
3.2 Համաշխարհային առևտրի կառուցվածքը, դինամիկան և փոփոխման գործոնները: Համաշխարհային առևտրի քաղաքականությունը.....126
3.3 Առանձին երկրների տեղը և առանձնահատկությունները համաշխարհային առևտրում.....134
3.4 Միջազգային առևտրի անհամաչափ զարգացումը և կարգավորումը.....141
3.5 Առևտրի համաշխարհային շուկա.....145
3.6 Համաշխարհային շուկայի դասակարգումը.....147
ԳԼՈՒԽ 4 ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲՈՐՍԱՆԵՐ, ԱՃՈՒՐԴՆԵՐ, ՏՈՆԱՎԱՃԱՌՆԵՐ ԵՎ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍՆԵՐ
4.1 Միջազգային առևտրային բորսաներ.....153
4.2 Միջազգային առևտրային աճուրդներ.....155
4.3 Առևտրաարդյունաբերական տոնավաճառներ և ցուցահանդեսներ.....158
ԳԼՈՒԽ 5 ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ
5.1 Տեխնոլոգիաների իրացման էությունը, նախադրյալները.....161
5.2 Տեխնոլոգիաների առևտրի տեսակները և ձևերը.....163
5.3 Միջազգային արտոնագրային-լիցենզային գործունեություն.....167
5.4 Տեխնոլոգիաների միջազգային շուկա.....170
5.5 Տեխնոլոգիաների միջազգային շուկայի կարգավորումը.....174

ԳԼՈՒԽ 6 ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ
6.1 Ծառայությունների համաշխարհային շուկայի էությունը.....177
6.2 Ծառայությունների համաշխարհային շուկայի կառուցվածքը, դասակարգումը և դինամիկան.....180
6.3 Միջազգային զբոսաշրջություն. էությունը և դասակարգումը.....182
6.4 Տեղեկատվական և կապի ծառայություններ.....186
6.5 Տրանսպորտային միջազգային ծառայություններ.....189
6.6 Ապահովագրական ծառայություններ.....196
6.7 Միջազգային այլ ծառայություններ.....198
6.8 Միջազգային տրանսպորտային կազմակերպություններ և կոնվենցիաներ.....206
6.9 Ծառայությունների համաշխարհային շուկայի կարգավորումը....208
ԳԼՈՒԽ 7 ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ԳՆԵՐ
7.1 Համաշխարհային շուկայական գների էությունը և ձևավորումը.....211
7.2 Համաշխարհային շուկայական գների դասակարգումը.....216
7.3 Արժեզրկում, գների մակարդակի վրա ազդող գործոնները և պետական հսկողությունը.....221
ԳԼՈՒԽ 8 ԱԶԱՏ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՏԻՆԵՐ
8.1 Ազատ տնտեսական գոտիների էությունը և կազմակերպման անհրաժեշտությունը.....225
8.2 Ազատ տնտեսական գոտիների դասակարգումը և հատկանիշները.....229
8.3 Ազատ տնտեսական գոտիների առանձնահատկությունները.....234
ԳԼՈՒԽ 9 ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ
9.1 Միջազգային տնտեսական գործարքների էությունը.....237
9.2 Միջազգային առևտրային կոնտրակտ-պայմանագրերի կնքումը.....228
9.3 Միջազգային առևտրային կոնտրակտ-պայմանագրերի բովանդակությունը.....240
9.4 Մատակարարման բազիսային պայմանները.....245
9.5 Միջազգային տնտեսական գործարքների փաստաթղթերը.....250
ԳԼՈՒԽ 10 ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
10.1 Արժութային հարաբերությունների էությունը.....253
10.2 Միջազգային արժութային համակարգերը և նրանց զարգացման հիմնական փուլերը.....254
10.3 Արժութային գործարքներ.....263
10.4 Արժույթի և արժեթղթերի համաշխարհային շուկա, ֆոնդային բորսաներ.....264
10.5 Արժութային գոտիներ, արժույթի կուրս և նրա վրա ազդող գործոններ, արժեզրկում.....271
10.6 Արժութային հիմնադրամ, արժութային պահուստներ.....275
ԳԼՈՒԽ 11 ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅՈՒՄ
11.1 Կապիտալի միջազգային շարժի էությունը և ձևերը.....280

11.2 Փոխատվական կապիտալի համաշխարհային շուկա.....287
11.3 Միջազգային վարկային համակարգ, դասակարգումը
և տեսակները.....289
11.4 Միջազգային հաշվարկներ.....292
11.5 Վճարային հաշվեկշռի կարգավորումը
և պետության ընդհանուր պարտքերը.....298
11.6 Միջազգային պարտքային ճգնաժամ.....301
ԳԼՈՒԽ 12 ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ
12.1 Միջազգային ֆինանսավարկային կազմակերպություններ.....303
12.2 Միջազգային տնտեսական կազմակերպություններ.....312
12.3 Միջազգային տնտեսական հարաբերությունների կառավարման կազմակերպումը և մեխանիզմի կատարելագործումը.....317
ԳԼՈՒԽ 13 ԱՇԽԱՏՈՒԺԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԻԳՐԱՑԻԱ
13.1 Աշխատուժի միգրացիայի բնորոշումը.....321
13.2 Աշխատուժի միջազգային միգրացիայի
առանձնահատկությունները.....324
13.3 Աշխատուժի միգրացիայի հիմնական ուղղությունները.....326
13.4 Աշխատուժի միջազգային շուկա.....332
13.5 Աշխատուժի միգրացիայի կարգավորումը.....334
ԳԼՈՒԽ 14 ՀԱՅԱՍՏԱՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ
14. 1 Հայաստանի միջպետական առևտրային կապերի
ձևավորումը.....339
14.2 Հայաստանի տնտեսական հարաբերությունները
1920-1990 թթ. 343
14.3 Հայաստանի միջազգային տնտեսական
հարաբերությունները 1991 թ.-ից հետո.....347
14.4 Ֆինանսավարկային հարաբերությունների զարգացումը
Հայաստանում.....360
14.5 Հայաստանի ֆոնդային բորսաները.....367
14.6 Միջազգային համատեղ ձեռնարկատիրական
գործունեությունը և մաքսային համակարգը
Հայաստանի Հանրապետությունում.....370
14.7 Աշխատուժի միգրացիան Հայաստանում.....376
14.8 Ծառայությունների գործընթացը Հայաստանում.....382
14.9 Տրանսպորտային ծառայությունները Հայաստանում.....384
14.10 Հայաստանի միջազգային տնտեսական
հարաբերությունների հետագա զարգացումը.....386
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.....391
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ.....393

ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ԱՂԱՍԻ ՄՈՒՇԵՂԻ

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԷԿՈՆՈՄԻԿԱ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուսումնական ձեռնարկ
(դասագիրք)

Երրորդ լրամշակված հրատարակություն

ОВАКИМЯН АГАСИ МУШЕГОВИЧ

МИРОВАЯ ЭКОНОМИКА И МЕЖДУНАРОДНЫЕ ЭКОНОМИЧЕСКИЕ ОТНОШЕНИЯ

Учебник на армянском языке